ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ներկայումս հայ ժողովրդի կեսից ավելին ցրված է աշխարհի տարբեր մասերում։ Պատմության չար թելադրանքով նա բեկվել, բաժանվել է մայր հատվածից և ցրվել հայրենիքից դուրս՝ ստանալով չարաբաստ «Սփյուռք» կամ «Ցրոնք» անունը։ Կարելի է ասել, որ չկա Հայաստանից հեռու կամ մոտ գտնվող մի երկիր, բնակչաշատ մի խոշոր կենտրոն, ուր կարելի չլինի գտնել հայ մարած գաղթօջախի մամռոտ հետքեր և կամ ներկայումս հևիհև ապրող ու գործող հայ գաղթօջախներ։

Հայության գաղթը իր հայրենի երկրից հին պատմություն ունի։ Ստեղծված քաղաքական և տնտեսական ծանր պայմանների հետևանքով, դարեր շարունակ հայ բնակչությունը մեծաթիվ զանգվածներով թողել է մայրենի հողը և թափառական ցուպ վերցրել ձեռքը։ Հեռացող հայությունը, սակայն, աշխատել է չխզել իր կապերը հայրենիքից և չօտարանալ։ Նա ձգտել է հոգեպես կապված մնալ հայրենի երկրին և սերտ հարաբերություններ պահպանել իր հայրենակիցների հետ։ Սփյուռքահայերը Հայաստանի հեռանկարների մեջ իրենց սեփական բախտն են որոնել և հույսով ու հավատքով սպասել այն երջանիկ օրվան, երբ հայրենի երկրում կստեղծվեն նպաստավոր պայմաններ, հնարավորություն կունենան վերադառնալու լքած օջախը և ապրելու իրենց հարազատների շրջապատում։

Տարագրության ցուպը վերցրած հայ գաղթականի այդ հոգեբանությունը շատ պատկերավոր ներկայացրել է ժամանակին «Մեղու» թերթը. «Գաղթականներն իրենց հայրենիքը թողած,— գրում է նա,— իրենց արտերն ու այգիները ձգած, տուներնին մերկացու-

ցած և գուցե բանալին էլ վրան, կրկին հեռավոր աշխարհներ կփախչեն. արտասուքով լցված աչերին հազարավոր անգամ կդարձնեն նորեն նայելու իրենց հայրենյաց վրա, որ կկարծեն թե զիրենք կկանչե, իրենց հետևեն կուլա ու կպոռա, կաղաղակի, կհառաչե... ահա այս ատենին մեջ է, որ հայերն իրենց հայրենիքը թողուլ ու փախչել կփորձեն, հայրենիքն ալ իրենց պատսպարելու անկարող»[1]։

Ցրված հայությանը հայրենի երկիր հավաքելու երազանքն այնքան է հուզել հայերին, որ այն աղոթքի է վերածվել և XII դարի հայ գիտնական Հովհաննես Իմաստասերի կողմից մուծվել «Ղևոնդեանց» հոգևոր երգի մեջ։ Հավատացյալ հայը դարեր շարունակ աղոթել, խնդրել է աստծուց. «Ծրուեալ մանկունս ժողովեա յուրախութիւն, զվարատեալս տրտմութեամբ և արտասուաց յորդահոս բղխմամբ փրկութեան մերոյ բաշխող»[2]։ Այսինքն՝ հայ ժողովրդի ցրված զավակներին, տրտմությամբ և հորդահոս արտասուքով վարատվածներին (երկրից քշված, ցիրուցան եղածներին) ժողովի ուրախությամբ և փրկի։

Հայ գաղթականներն օտար երկնքի տակ բնակություն են հաստատել ամբողջական համայնքներով։ Նրանք աշխատել են ամուր պահել իրենց հայրենի սովորությունները և մայրենի լեզուն։ Օտար հորիզոններում ևս սփյուռքահայությունը աշխատել է զարգացնել իր ազգային գրականությունը և մշակույթը՝ անխզելի կապված մնալով հայրենի գրականության և մշակույթի դարավոր ավանդույթներին։ Հնարավոր չէ ուշ միջնադարյան պատմության մեջ մատնացույց անել Հայաստանում տեղի ունեցող կարևոր մի իրադարձություն կամ աչքառու մշակութային մի երևույթ, որը զգայուն երակներով կապված չլինի հայ գաղթօջախների հետ և անուղղակի ստացած չլինի նրանից։

Անվիճելի է, որ սփյուռքահայության պատմությունն անխզելիորեն կապված է հայրենիքում ապրող ժողովրդի պատմության հետ և նրա անբաժանելի մասն է կազմում։ Իրավացի է Լեոն, որ խոսելով Հայաստանում առաջացած առաջին գաղթականական հոսանքների մասին, գտնում է, որ Հայոց պատմությունը VI դարից այլևս Հայաստանի պատմություն չէ միայն, այլ պիտի իր էջերի մեջ առնի թափառիկ հայության պատմությունը ևս[3]։

[1] «Մեղու», 1859, էջ 204—205։

[2] Մ. Աբեղյան, Հայոց հին գրականության պատմություն, գիրք II, Երևան, 1946, էջ 51։

[3] Լեո, Հայոց պատմություն, հ. II, Երևան, 1947, էջ 181։

Ցավալի է ասել, որ հայագիտության մեջ մինչև այժմ պատշաճ ուշադրություն չի դարձվել արտասահմանում ապրող սփյուռքահայության պատմության ուսումնասիրության վրա։ Փաստորեն, եթե չհաշվենք հանգուցյալ Ա. Ալպոյաճյանի եռահատոր «Պատմություն հայ գաղթականության» աշխատությունը, որը լույս է տեսել Կահիրեում 1941—1960 թվականներին, ապա հայ գաղթօջախների ամբողջական պատմությանը նվիրված այլ աշխատություն գոյություն չունի, չնայած առանձին գաղթօջախների մասին բազմաթիվ և արժեքավոր ուսումնասիրություններ են լույս տեսել ինչպես մեզ մոտ, այնպես և արտասահմանում։

Հայագետների այս թերացումը, իհարկե, չկամության և կամ հայ գաղթավայրերի նկատմամբ ունեցած ինչ-որ անուշադրության արդյունք չէ։ Խնդիրը նրանում է, որ արտասահմանում ապրող հայության մասին եղած պատմական նյութերը կցկտուր են, իսկ եղածներն էլ՝ գիտական լուրջ մշակման չեն ենթարկվել։ Բացի այդ, լուրջ ուսումնասիրության համար անհրաժեշտ է նախ մշակել և հրապարակել առանձին գաղթօջախների գիտական պատմությունը և հետո միայն ամփոփել նրանք մի ամբողջության մեջ։

Ուրախալի է նշել, որ վերջերս Սովետական Հայաստանում որոշ աշխատանքներ կատարվում են այդ ուղղությամբ։ Հինգերորդ տարին է, որ հայ գաղթավայրերի պատմությունը մշակվում և դասավանդվում է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետի հայ ժողովրդի պատմության բաժնում։ 1962 թվականին լույս տեսավ Ս. Գասպարյանի ուսումնասիրությունը «Սփյուռքահայության գաղթօջախներն այսօր» վերնագրով։ Հայկ. ՍՍՌ ԳԱ պատմության ինստիտուտի և Արևելագիտական սեկտորի մի խումբ գիտական աշխատողներ այժմ ձեռնարկել են հայկական առանձին գաղթավայրերի մանրակրկիտ ուսումնասիրությունը, և նրանց առանձին հոդվածներն սկսել են երևալ պարբերական մամուլի էջերում։

Բավականին մեծ աշխատանք կատարվել և ներկայումս կատարվում է Սփյուռքում։ Կարելի է ասել, որ յուրաքանչյուր գաղթօջախ ունի իր հրապարակված համառոտ և կամ ընդարձակ պատմությունը։ Սակայն բավարարվել միայն դրանով չի կարելի, որովհետև դեռ կան մեծ թվով ձեռագրեր, վիմագիր արձանագրություններ և վավերագրեր, որոնց պարունակած նյութերը սփյուռքահայության մասին դեռ չեն հրապարակված և գիտական շրջանառության մեջ չեն դրված։ Անհրաժեշտ է եռանդուն ջանքեր և պրպտումներ ծավալել այդ նյութերի օգտագործման ուղղությամբ։

Պատմագիտության մեջ սփյուռքահայության պատմությանը քաղաքացիություն է տրվել տարբեր անուններով։ Ալպոյաճյանն այն անվանել է «Հայ գաղթականության պատմություն»։ Մեր ներկա աշխատության մեջ այդ վերնագիրն անհամապատասխան էր, որովհետև մեր նպատակն է եղել շարադրել ո՛չ միայն գաղթի պատմությունը, այսինքն՝ թե ինչպես են հայերը դուրս եկել հայրենի երկրից և ցրվել «ի Սփիւռս աշխարհի», այլև իրենց՝ գաղթօջախների պատմությունը։

Ջուզեցինք քաղաքացիություն տալ նաև «Հայ գաղթօջախների պատմություն» անվանը, որը վերջերս հաճախ է գործածվում սովետահայ պատմական գրականության մեջ և առաջինի համեմատությամբ մյուս ծայրահեղությունն է, քանի որ մեր ուսումնասիրության առարկան միայն այն օջախների պատմությունը չէ, ուր հաստատվել ու գործել են հայ համախմբները, այլ նաև հայ բնակչության գաղթի, ինչպես և իրեն բնակավայրի ներքին պատմությունը։

Սփյուռքահայության պատմությունը քաղաքացիություն ունի նաև «Հայ գաղութների պատմություն» անվան տակ։ «Գաղութ» բառը նորագույն գրականության մեջ ունի երկու իմաստ. օտարազգի մի հատվածի մի այլ երկրում բնակություն հաստատած համախմբի և գաղութարար որևէ երկրի կողմից բռնի զավթված և շահագործման ենթարկված երկրի նշանակությամբ։ Հայկական գաղթօջախները դրանց հակապատկերն են եղել։

Մեր ներկա աշխատության բովանդակությանն ավելի համապատասխանում էր Հայ գաղթավայրերի պատմության անվանումը, ուստի այդպես էլ վերնագրեցինք։ Ճիշտ է, մեզ մոտ բավականաչափ տեղ է տրված հայ բնակչության գաղթի պատմությանը, սակայն այն կապված է գլխավորապես հայ գաղթօջախների սկզբնավորման և տևաբարացման պատմության հետ, ուստի ավելորդ համարեցինք «գաղթոնք» բառին տեղ հատկացնել աշխատության վերնագրում։

Հայ գաղթօջախները սփռված են աշխարհով մեկ։ Միջին դարերում հայկական գաղթավայրեր են եղել ավելի քան 25 երկրներում, որոնցից մի քանիսը հազարամյակի պատմություն ունեն։ Նրանց պատմությունը հանգամանորեն շարադրելու համար հարկավոր կլիներ գուցե յուրաքանչյուրին հատկացնել մեկական հատոր։ Իսկ մեր նպատակը հայ գաղթավայրերի պատմության համառոտ ուրվագիծ կազմելն է՝ ամեն մի վայրին հատկացնելով ոչ ավելի քան մեկ կամ մեկուկես մամուլ, ուստի հարմար համարեցինք ընդհանուր վերնագրին ավելացնել նաև «Համառոտ ուրվագիծ» բառերը։

Ընտրած վերնագրից ինքնին բխում է մեր որդեգրած ծրագիրը։ Մենք ցանկություն ունենք ներկայացնել համառոտակի սփյուռքահայության պատմությունը իր քաղաքական-հասարակական կյանքով, սոցիալական տարբեր խավերի զբաղմունքներով, հայ գաղթօջախներում ստեղծված մշակութային աչքառու արժեքներով և այլն։ Անընդունելի է այն ուսումնասիրողների գիտական մեթոդը, երբ այս կամ այն գաղթօջախի բազմակողմանի պատմությունը վեր է ածվում տվյալ վայրերում հանդես եկող միայն մեծատունների, քաղաքական բարձր դիրքի հասած առանձին անհատների, խոջաների և բարձրաստիճան այլ անձնավորությունների պատմության՝ տվերի տակ թողնելով գաղթօջախի ամբողջական պատմությունը։ Նման դեպքերում ստացվում է այն տպավորությունը, որ կարծեք հայկական գաղթօջախներում սոցիալական շերտավորություն գոյություն չունի, որ գաղթավայրերի հայ բնակչությունը բաղկացած է մեծ ու փոքր վաճառականներից, բոլորը մեծահարուստ մարդիկ են և ապրել ու ներկայումս էլ ապրում են անհոգ, անկարոտ կյանքով։

Որոշ պատմաբաններ հաճախ, ազգային սնապարծության հիվանդոտ շեշտով, գերագնահատում են գաղթահայերի խաղացած դերը ապաստան գտած երկրի քաղաքական, տնտեսական և կուլտուրական կյանքում։ Իսկ մի քանի հեղինակներ՝ հայ գաղթօջախների մասին խոսելիս, անում են միանգամայն չափազանցված ընդհանրացումներ։ Տեղին է այստեղ հիշել այն դիտողությունը, որ արել է ակադ. Ա. Կարինյանը այդ կարգի պատմաբաններին։ «Գաղութահայ օջախների իդեալականացված նկարագրությունը,— գրում է նա,—գաղութահայերի դերի գերագնահատությունը... հայ «մեծատուններ»-ի յուրահատուկ կուլտը սկզբնական շրջանում ամիրա-մեծատունների, իսկ հետագայում բուրժուա-մեծատունների կուլտի հետ կապված «պատրիոտիկան»— այս ամենը շատ որոշակի արտահայտություն են գտել հայ կուլտուրայի և մանավանդ պարբերական մամուլի պատմաբանների աշխատությունների մեջ»[1]։

Մենք անձամբ տարբեր ժամանակներում եղել ենք ներկայումս գոյություն ունեցող Պարսկաստանի, Սիրիայի, Լիբանանի, Իրաքի, Պակիստանի, Հնդկաստանի, Պաղեստինի, Եգիպտոսի,

[1] Ա. Կարինյան, Ակնարկներ հայ պարբերական մամուլի պատմության, Երևան, 1956, էջ 47։

Ֆրանսիայի, Հորդանանի, Իտալիայի, Իսրայելի, Հոլանդիայի և այլ երկրների հայկական գաղթավայրերում, մոտիկից ծանոթացել գաղթօջախների հայ համայնքների հետ, խորապես զգացել նրանց հայրենասեր և հայրենակարոտ վառ զգացմունքները և սիրել նրանց: Գուցե և այդ հանգամանքը շատ կարևոր դեր է կատարել մեզ համար սփյուռքահայության պատմությամբ զբաղվելու գործում:

Կարծում ենք, հարկ չկա ապացուցելու հայ գաղթավայրերի պատմության ուսումնասիրության կարևորությունը: Ամենից առաջ այն ունի կարևոր նշանակություն հայրենի երկրի պատմության համար. առանց սփյուռքահայության պատմության ուսումնասիրության, անկարելի է բազմակողմանիորեն լուսաբանել Հայաստանի հետ կապված այնպիսի կարևոր հարցեր, ինչպիսիք սոցիալական և ազատագրական շարժումների, հայ և մյուս ժողովուրդների փոխհարաբերությունների, կուլտուրական և գրական փոխազդեցությունների հարցերն և այլն, որոնց մեջ իրենց մասն ու բաժինն ունեն նաև գաղթահայերը:

Սփյուռքահայ պատմության ուսումնասիրությունը կարևոր է և մի այլ տեսանկյունից. XI—XVII դարերում, երբ Հայաստանում ստեղծված ծանր դրության հետևանքով հայ ժողովուրդը զրկվում է մշակույթի որևէ բնագավառում խիզախ նախաձեռնություն ցուցաբերելու հնարավորությունից, ապա սփյուռքահայությունն է, որ կարողանում է ծավալել իր ստեղծագործական ունակությունները: Ուստի հայ ժողովրդին լավ ճանաչելու, նրա ստեղծագործական վաստակները վեր հանելու և ճիշտ գնահատելու համար անհրաժեշտ է միջնադարյան Հայաստանի պատմության հարցերի մշակման հետ մեկտեղ վեր հանել ու բազմակողմանիորեն մշակել նաև հայ գաղթականության պատմությունը:

Սփյուռքահայության պատմության ուսումնասիրությունը, սակայն, կարևոր է նաև մի այլ տեսակետից: Ներկա ժամանակներում, երբ մարդկային հասարակության զարգացումն ընթանում է ժողովուրդների մերձեցման ուղիով, պատմական գիտության առաջնահերթ խնդիրն է դառնում ուսումնասիրության շեշտը դնել ո՛չ թե անցյալում ժողովուրդներին բաժանող սահմանագծերի, այլ նրանց իրար կապող տնտեսական, քաղաքական և մշակութային հարաբերությունների վրա և բացահայտել դրանք: Սփյուռքահայության պատմությունը այս հարցում, պետք է ասել, ունի շատ հարուստ և ուսանելի ժառանգություն: Հայտնի է, որ հայ գաղթօջախները խոշոր դեր են խաղացել Արևելքի և Արևմուտքի միջև

տնտեսական կապերի ստեղծման ու զարգացման գործում: Այս տեսանկյունով, սփյուռքահայության պատմությունը հանդիսանում է նաև կարևոր ուղեցույց հայ ու հարևան ժողովուրդների հարաբերությունների պատմության համար և զգալի ավանդ ունի մուծելու ընդհանուր պատմության մեջ:

Հայագիտության մեջ վաղուց ի վեր վիճաբանության նյութ է հանդիսացել հայ գաղթականության առաջացման պատճառների հարցը: Ինչո՞վ բացատրել հայերի արտագաղթը, ինչո՞ւ են հայերը լքել իրենց հայրենի երկիրը և դիմել պանդխտության: Կանգ առնենք այս հարցում գոյություն ունեցող կարևոր տեսություններ վրա և փորձենք գտնել այդ մեծ ողբերգության իրական պատճառները:

Հայ ավատական պատմագրությունը Հայաստանի քաղաքական անկախության անկման և հայ բնակչության արտագաղթի պատճառը հայ ժողովրդի աստծու առջև թույլ տված «օրինազանցությամբ», նրա գործած «ծովացեալ մեղքեր»-ով է բացատրել: Այսպես, օրինակ, լեհահայ պատմիչ Հովհաննես Ավագերեցը անդրադառնալով հայ գաղթականության առաջացման պատճառներին, գրում է. «Եւ մեք թշուառացեալքս ազգս հայոց՝ զոր կամք զրկեալ ի թագաւորութենէ գահոյից և ի պերճութենէ իշխանացն, և մնացեալ կամք իբրև ճնճղուկ մի ի տանիս և իբրև բու աւերակի, և տարագիր եղեալ պանդխտեալ և նժդեհեալ կամք ի այսմ օտար աշխարհս և օտար ջուրս և ի հողս, յաղագս օրինազանց և անկարգ գնացից մերոց»[1]: Այս տեսության գործնական հետևությունն այն է, որ հայերը պարտավոր են հնազանդ լինել աստվածային օրենքներին, խոստովանել իրենց մեղքերը, որից հետո աստված «ողորմեսցի ըստ մեծի ողորմութեան իւրում և ժողովեսցէ որպէս հաւ զձագս իւր ընդ թեւօք, և սեպհականեսցէ ի հայրենի աշխարհն, և հաստատեսցէ թագաւորաւ և հայրապետիւ...»[2]:

XVII դարի պատմիչ Առաքել Դավրիժեցին հայ գաղթականության առաջացման պատճառը կապում է հայ պետականության անկման հետ. «Ազգս Հայոց,— գրում է նա,— որք մատամբն և կամօքն իւրեանց կուրացուցին զաչս իւրեանց, զի ինքեանք կործանեցին զթագաւորութիւնն իւրեանց՝ նենգութեամբ և անհնազանդութեամբ իւրեանց»: Ահա այս, ինչպես և ջալալիների վայրագությունների ու երկրում մոլեգնող սովի պատճառներով, եզրակաց-

[1] Ղ. Ալիշան, Կամենից, տարեգիրք Հայոց, Վենետիկ, 1896, էջ 48:
[2] Նույն տեղը, էջ 169:

նում է Դավրիժեցին, «Ամենայն ազգն Հայոց ելեալ վտարանդիք եղեն յիւրաքանչիւր տեղեաց, ի հայրենի բնակութեանց և յաշխարհաց, և տարադէմ գնացեալ ընդդեմ երեսաց՝ ցիր և ցան եղեալ ափուեցան ընդ ամենայն աշխարհս»[1]։

Անցյալի հայ հասարակական մտքի խոշոր դեմքերից մեկը, Մովսես Բաղրամյանը, իր «Նոր տետրակ, որ կոչի յորդորակ» խորագիրը կրող աշխատության մեջ, կտրականապես մերժում է գաղթականության առաջացման պատճառը «ծովացեալ» մեղքերով բացատրելու տեսությունը և հետևյալ նոր բացատրությունն է տալիս. «Սիրո և միաբանության փոխարեն մեր ժողովրդի մեջ օրեցօր ավելի և ավելի շատացավ տեսությունը և անմիաբանությունը, որի պատճառով նա ճղակտոր և ցիրուցան եղավ իր հայրենիքից՝ ափովելով երկրի երեսը, ինչպես ցրվում են ծառի չոր ճյուղերը կամ եղեգները ուժեղ քամուց...[2]» (բերում ենք թարգմանաբար)։

Այսպիսով, ըստ Բաղրամյանի, հայ գաղթականության առաջացման պատճառը ժողովրդի մեջ առաջացած անմիաբանությունը և անհամերաշխությունն է։ Դրանից էլ հետևում է հնդկահայ ազատամիտ հայրենասերների գործնական նոր եզրակացությունը. պետք է վերջ տալ անմիաբանությանը, համախմբվել և համատեղ ջանքերով վերականգնել հայերի կորցրած անկախությունը ու ցրված հայությունը հավաքել իր հայրենիքում։

Համեմատաբար ավելի լայն քաղաքացիություն ունի հայերի արտագաղթը առևտրական կապիտալի շահերի հետ կապելու դրույթը։ Ըստ այդ տեսության, միջին դարերում, երբ առևտրական տարանցիկ մայրուղին փոխում է իր նախկին ուղղությունը և հեռանում Հայաստանից, ապա երկրում հայ առևտրականների գործունեության համար ստեղծվում են անբարենպաստ պայմաններ, որը ստիպում է նրանց գաղթելու արտասահման և իրենց գործունեության համար նպաստավոր հող փնտրելու այնտեղ։ Այսպիսով, ըստ այդ տեսության, հայ գաղթականները հայ առևտրականներն են, և հայ գաղթօջախները՝ առևտրական ֆակտորիաներ (կայաններ)։

Այս տեսությունը սխալ է այն պարզ պատճառով, որ Հայաստանից կատարվող զանգվածային գաղթերի մեծ մասը տեղի է ունեցել կռիվների ու ասպատակությունների և կամ տիրակալների փոփոխությունների ժամանակ, իսկ այդպիսի դեպքերում գաղթել են

[1] Առաքել Դաւրիժեցի, Պատմութիւն, Վաղարշապատ, 1896, էջ 147։
[2] «Նոր տետրակ, որ կոչի յորդորակ», Մադրաս, 1772, էջ 163—164։

հասարակության բոլոր խավերն անխտիր։ Ըստ որում, հայ բնակչությունը արտասահման է գաղթել ո՛չ դրսում ոսկու ինչ-որ գանձեր փնտրելու դիտավորությամբ, այլ իր ֆիզիկական գոյությունը պաշտպանելու, իր և իր ընտանիքի պատիվը փրկելու նպատակով, որը վտանգված է եղել մայր հայրենիքում։

Չպետք է ժխտել, որ արտագաղթող հայության մեջ եղել են որոշ թվով նաև հարուստ մարդիկ, հայ վաճառականներ։ Սակայն բազմահազար գաղթականության մեջ նրանք որակ չեն կազմել։

Գաղթականության առաջացման հարցում հայագետներից ոմանք մեծ տեղ են տալիս Հայաստանի աշխարհագրական դիրքին։ Այս տեսակետը վերջերս պաշտպանել է սփյուռքահայության պատմության մեծավաստակ պատմաբան Ա. Ալպոյաճյանը։ Նա իր «Պատմություն հայ գաղթականության» առաջին հատորում հետևյալն է գրել. «Հայաստանի աշխարհագրական նկարագիրը խորունկ ազդեցություն մը ունեցած է մեր քաղաքական և քաղաքակրթության պատմության վրա և ինքն է աղբյուրը մեր ցեղային տկարությունները և ուժին միանգամայն, ինչպես նաև պատճառը գլխավոր աղետներուն, որոնց ենթակա եղած է հայ ժողովուրդը...։ ուրեմն Հայաստանի աշխարհագրությունը «պատճառաց պատճառ» կներկայանա հայ գաղթականության»[1]։

Պատմության փիլիսոփայությունը չի ժխտում աշխարհագրական գործոնի ազդեցությունը հասարակության պատմության վրա, մանավանդ՝ նրա վաղ շրջանում։ Հայաստանը մի լեռնաստան է, մի կատարյալ «լեռ կղզի», ինչպես պատկերավոր բնորոշել է եվրոպացի ճանապարհորդներից մեկը՝ Կարլ Ռիտերը։ Հայաստանը բարձրաբերձ լեռնաշղթաներով կտրատված է անջատ և մեկուսացված մասերի։ Երկրի նման լանդշաֆտը մեծ չափով խանգարում է միասնական կենտրոնական ուժեղ պետության ստեղծմանը։ Անմատչելի լեռներով պատսպարված գավառատեր նախարարներն իրենց ավելի են ինքնուրույն զգում և ավելի քիչ են հակում ցուցաբերում ենթարկվելու կենտրոնական իշխանությանը։ Կենտրոնախույս ուժերի առկայությունն իր բացասական ազդեցությունն է ունենում կազմակերպված պետության ստեղծման գործում, իսկ ուժեղ պետության բացակայությունը իր հերթին բացասաբար է անդրադառնում երկրի պաշտպանության վրա և դուռ բաց անում դրսի թշնամու առջև։ Դրա հետևանքը լինում է այն, որ Հայաստանի

[1] Ա. Ալպոյաճյան, Պատմութիւն հայ գաղթականութեան, Փարիզ, 1941, էջ 7։ (Այսուհետև այս աշխատությունից մեջբերումները է տրվելու կրճատ՝ «ՊՀԳ» ձևով)։

խուժած օտարերկրյա թշնամին ավերում է երկիրը, կոտորում բնակչությանը, կողոպտում, գերեվարում կամ ծանր հարկեր դնում ժողովրդի վրա։ Այստեղից էլ, ըստ այդ տեսության, առաջանում է մասսայական գաղթը։

Հայ բնակչությանը գաղթելու մղող հիմնական պատճառներից մեկը, անշուշտ, երկրի անապահով վիճակն է հանդիսացել։ Հայաստանն ընկնելով Արևելքում մրցակցող խոշոր պետությունների աքցանի մեջ, դարեր շարունակ կովախնձոր է դարձել մրցող պետությունների համար։ Կողմերից ամեն մեկն աշխատել է իր տիրապետությունը հաստատել Հայաստանում և ամրացնել իր ռազմա-ստրատեգիական դիրքերը։ Անվերջ պատերազմները ստեղծել են անտանելի ծանր վիճակ՝ վասալական կախվածության մեջ ընկած Հայաստանի համար։

Ռուս գիտնական Գուրկո-Կրյաժինը, որը հատուկ ուսումնասիրություն ունի նվիրած Հայաստանի բնական պայմաններին, գտնում է, որ «Հայաստանը շնորհիվ իր ֆիզիկա-աշխարհագրական պայմանների, միշտ եղել է իբր հսկայական բնական մի միջնաբերդ և իշխել է շրջակա երկրների վրա...»[1]։

Ակադ. Հ. Մանանդյանը, անդրադառնալով Հայաստանի բուֆերային այս վիճակին, գտնում է, որ այդ նրա դժբախտության հիմնական պատճառն է հանդիսացել։ «Հին Հայաստանի բուֆերային չարաբաստիկ այս դրությունը Արևելքի և Արևմուտքի միջև,— գրում է նա,— որը շարունակվել է նաև բյուզանդական-սասանյան, բյուզանդական-արաբական շրջաններում, գլխավոր վենց պատճառներից մեկն է, որ անդրադարձել է նրա բարեկեցության վրա և խիստ անբարեհաջող ազդեցություն ունեցել նրա քաղաքական ու ներքին զարգացման վրա»[2]։

Հայաստան խուժած մրցակից պետությունների բանակների ոտքերի տակ, փաստորեն, տրորվել է բազմաչարչար հայ ժողովուրդը։ Թշնամական բանակները ավերել են երկիրը և հազարներով գերի տարել նրա բնակիչներից։ Արաբ աշխարհագիրներից մեկը՝ Իբն-ալ-Ֆաքիհ ալ-Համադանին Հայաստանի անհրապույր այս վիճակը ներկայացրել է հետևյալ պատկերավոր արտահայտությամբ. «Մահկուլ Սիրիացին ասաց,— Հայաստանը մշտապես

[1] В. Гурко-Кряжин, Прошлое и настоящее Советской Армении (տե՛ս. „Новый Восток", 1927, кн. 16—17):

[2] Հ. Մանանդյան, Ֆեոդալիզմը հին Հայաստանում, Երևան, 1934, էջ 258—259։

ավերակների մեջ է։ Հարցրին,— Ի՞նչն է նրան ավերում։ Պատասխանեց.— Կովող զորաբանակների ձիաների սմբակները»[1]։

Ժողովուրդն այս անմխիթար վիճակում, բնական է, պիտի նախընտրեր և նախընտրել է սրտի կսկիծով թողնել իր հայրենի օջախը և գաղթել համեմատաբար ավելի ապահով միջավայր։

Հայ ժողովուրդը մի քանի անգամ ճաշակել է բռնագաղթի դառը պտուղները։ Մենք նկատի ունենք Շապուհ Երկրորդի 364 թվականի բռնագաղթը, պավլիկյանների մասսայական բռնագաղթը Արևմտյան Հայաստանից դեպի Թրակիա, շահ Աբասի բռնագաղթը 1604—5 թվականներին, առաջին համաշխարհային պատերազմի տարիների բռնագաղթը, որը աննախադեպ մի ողբերգություն էր ո՛չ միայն հայ ժողովրդի, այլև մարդկային ցեղի պատմության մեջ։

Արտաքին ձևով հրապուրիչ, բայց հետևանքներով շատ ծանր են եղել մասնավորապես բյուզանդական կայսրության՝ հայ ժողովրդի նկատմամբ վարած քաղաքականության հետևանքով առաջացած գաղթերը։ Բյուզանդական գահի վրա բազմած ծագումով հայ կայսրերը, իրենց ոտքի տակի հողն ամուր պահելու համար, աշխատել են իրենց շրջապատել հայ ազնվականներով, արքունի պաշտպան զորամասերը կազմել հայերից և ձգտել երկրի հեռավոր սահմաններում գտնվող զորամասերի մեջ մեծ տեղ տալ հայերին։ Այդ նպատակով նրանք Հայաստանից պարբերաբար հավաքել են հայ երիտասարդներին՝ հասարակության ամենից կենսունակ ուժերին, և տեղափոխել Բյուզանդիայի հեռավոր շրջանները։

Թվարկված բոլոր տեսակի գաղթականությունն էլ, այս կամ այն չափով, կորստաբեր է եղել փոքրաթիվ հայ ժողովրդի համար։ Սակայն նշված գաղթականության բոլոր ձևերի մեջ ամենից ահռելին, ամենից կորստաբերը՝ օտար տիրակալների Հայաստանում ստեղծած անտանելի ծանր դրության հետևանքով առաջացած մասսայական գաղթն է եղել, որի ժամանակ հարյուր հազարավոր հայ բնակչություն հարկադրված է եղել գնալ և բնակություն հաստատել օտար հորիզոններում։

Հայ գաղթականության տխուր հոսանքներ առաջանում են նոր ժամանակաշրջանում. կապիտալիստական հարաբերությունների առաջացման հետևանքով քայքայվում է գյուղը և ընչազուրկ բնակչությունը սկսում է հոսել դեպի արդյունաբերական կենտրոնները՝ «մշակության» համար։ Տվյալ դեպքում, մենք նկատի

[1] Goeje, Biblath. Geograph. arab. V, 1855, էջ 257։

ունենք Արևմտյան Հայաստանից դեպի Պոլիս, Զմյուռնիա, Ամերիկայի քաղաքները և այլուր, Արևելյան Հայաստանից՝ Թբիլիսի, Բաքու, Աստրախան, Մոսկվա և Ռուսաստանի այլ քաղաքները գնացող գաղթականական հոսանքները։

Ներկա հատորի մեջ չենք զետեղել հայկական այն գաղթավայրերի պատմությունը, որոնք հանդես են եկել նոր և նորագույն շրջանում (Հյուսիսային և Հարավային Ամերիկաներ, Անգլիա, Գերմանիա և այլն)։ Հատորի մեջ չեն մտել նաև այն վայրերը, որոնց պատմությունը թեկուզ սկզբում է միջին դարերում, բայց հիմնականը՝ հանդիսացել են նոր և նորագույն ժամանակաշրջաններ։ Մենք նպատակահարմար ենք համարել այդ կարգի գաղթօջախների միջնադարյան պատմությունը չկտրել հիմնական մասից, շարադրել նոր շրջանի պատմության հետ իբրև նոր պատմության ներածություն։ Մենք նկատի ունենք Թուրքիայի, Իրաքի և մի քանի այլ երկրների հայ գաղթավայրերի պատմությունը։

Անշափ դժվար է եղել մեր ուսումնասիրության թեման։ Հայկական գաղթօջախների պատմությունը պետք էր ուսումնասիրել իրենց շրջապատի հետ սերտորեն կապված, իսկ քանի որ հայերը ցրված են եղել ամբողջ աշխարհով մեկ, ուստի և անհրաժեշտ էր ուսումնասիրել գրեթե ամբողջ աշխարհի պատմությունը։ Իսկ այդ՝ մեկ մարդու ուժերից վեր է։ Հայկական գաղթավայրերի մասին, ինչպես հայտնի է, մենագրություններ են լույս տեսել ո՛չ միայն հայերեն, այլև այն լեզուներով, որոնք տվյալ երկրի պետական լեզուներն են հանդիսացել, ուստի և պահանջվում էր ուսումնասիրել աշխարհի բազմաթիվ լեզուները։

Պետք է խոստովանենք, որ եղել են պահեր, որ հանդիպելով այս կարգի դժվարությունների, որոշել ենք ընդմիջել աշխատանքը, լքել թեման՝ ռազմաճակատը դասալքող վախկոտ զինվորի նման։ Բայց հետո մտածելով, որ այդպիսին չեն եղել մեր այն հայրենակիցները, որոնց պատմությունը գրելու պատիվն է վիճակվել մեզ, նրանց հատուկ է եղել դժվարությունները հաղթահարելու աննկուն կամքը և համառ ոգին,— այդ զգացմունքի հարկադրանքով նորից ձեռք ենք վերցրել գրիչը։

Նման պայմաններում, բնական է, որ այս աշխատության մեջ պետք է որ սպրդած լինեն սխալներ և անճշտություններ, բաց թողնված լինեն պատմական կարևոր դեմքեր և իրադարձություններ։ Մենք հաճույքով կուզենանք լսել մեր բարեմիտ քննադատների դիտողությունները։

Հայ գաղթավայրի պատմության կապակցությամբ չի կարելի լռությամբ անցնել պատմական այն խոշոր շրջադարձի վրայով, որ տեղի է ունեցել հայ ժողովրդի կյանքում։

Հայ ժողովրդի ազատասեր զավակները դարեր շարունակ տենչացել են քաղաքական ազատություն ձեռք բերելու և ցրված հայությունը հայրենի երկիրը հավաքելու մասին։ Բայց այդ մնացել է լոկ չիրագործված երազանք։ Հայրենի երկիրը պատկերվել է ավերակների վրա լաց լինող հերարձակ մոր նման, իսկ օտարության մեջ թախծող պանդուխտի սիրած երգը «Կռունկն» է եղել։ Բայց ահա բազմաչարչար հայ ժողովրդի կյանքում տեղի ունեցավ շրջադարձային մեծ բեկում. մեծ հոկտեմբերը ազատություն բերեց նաև հայ ժողովրդին և ստեղծեց բարենպաստ պայմաններ նրա աննախընթաց զարգացման և բարգավաճման համար ու հնարավորություն տվեց պատմության չար բախտով հալածված և աշխարհով մեկ ցրված տարագիրներին վերադառնալու իրենց նվիրական հայրենիքը՝ Սովետական Հայաստան։

ՀՆԱԳՈՒՅՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ ԴՈՒՐՍ ԳՏՆՎԱԾ ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ

A 36148

Հայաստանից դուրս գտնվող հայկական զորամասերը:

Հայկական հնագույն գաղթավայրերի մասին մեր ունեցած պատմական նյութերը աղքատ են և մշուշապատ: Դրանք հաճախ այնքան կցկտուր են և առասպելախառն, որ դժվար են ենթարկվում գիտական ընդհանրացման: Այդ է պատճառը, որ երբեմն հարկադրված ենք լինում այդպիսիների մասին խոսել եռաստիճան ենթադրություններով:

Պատմական աղբյուրներում արտասահմանում գտնվող զանգվածային հայ բնակչության մասին ունեցած նախնական տեղեկությունները վերաբերում են ո՛չ թե սովորական գաղթականությանը, այլ զինվորական ծառայության մեջ գտնվող հայ զորամասերին, որոնց հայկական իշխանությունները, ըստ վասալական պարտավորության, տրամադրում էին հարևան այս կամ այն երկրին:

Հայաստանից դուրս գտնվող հայկական նման զորամասերի մասին տեղեկություն է հասել մեզ դեռևս VI դ. մ. թ. ա.: Այդ մասին է հաղորդում հույն պատմիչ Քսենոֆոնն իր «Կյուրոպեդիա» աշխատության մեջ: Նա նկարագրում է Կյուրոսի արշավանքը դեպի Հայաստան, նրա նվաճումը և բանակցությունները Արմենիայի թագավորի հետ, որպեսզի նա կատարի իր վասալական պարտականությունները, զորք ուղարկի Մարաստան, վճարի սահմանված հարկը և այլն: Կյուրոսի և Արմենիայի թագավորի միջև վարվող բանակցությունների կապակցությամբ նա բերել է այն խոսակցությունը, որ տեղի է ունեցել Կյուրոսի և արմենների թագավորի միջև. Կյուրոսը հայկական թագավորից հարցնում է, թե նա ինչո՞ւ չի կատարում իր պարտականությունը, ինչո՞ւ չի վճարում սահ-

մանված հարկը և չի ուղարկում խոստացած հայկական զորամասը։ Վերջինս պատասխանում է. «Ես ազատության էի ձգտում, որովհետև լավ էի համարում, որպեսզի ինքս ազատ լինեմ, և քեզ որդիներիս ազատություն թողնեմ»[1]։ Վեճը վերջանում է նրանով, որ արմենների թագավորը պարտավորվում է իր զորքի կեսը՝ 20000 հետևակազոր և 4000 հեծյալ տրամադրել Կյուրոսին։

Հայկական զորամասերից մասնավորապես հեծելազորը (այրուձին) հնում համարվել է մարտական և լավ կոփված զորքի տեսակ։

Հայկական զորքը, որպես պարսկական բանակին օժանդակող զինական ուժ, հիշված է նաև Հերոդոտի մոտ 480 թ. (մ. թ. ա.) հույն-պարսկական պատերազմի կապակցությամբ։ Ըստ նրա տեղեկության, հույների դեմ կռվող Քսերքսեսի բանակում, ի թիվս հպատակ մի քանի այլ ժողովուրդների զորամասերի, գտնվում էր նաև հայկականը, որի հրամանատարն էր Արտոքմեսը։ Հայ զինվորները կրում էին յուրահատուկ տարազ և զենք. նրանք իրենց գլխին ունեին սաղավարտ, իսկ ոտներին՝ ճոկավոր կոշիկներ, զինված էին փոքր վահաններով, կարճ նիզակներով, սեգերով և սրերով[2]։

Հայկական զորամասերի երկրից դուրս գտնվելու մասին տեղեկություններ կան նաև IV դ. (մ. թ. ա.)։ Այսպես, Կուրտիուս Ռուֆոսը հայտնում է, որ 331 թ. (մ. թ. ա.) Գավգամելայի ճակատամարտում Ալեքսանդր Մակեդոնացու դեմ կռվող Դարեհ III Կոդոմայի զորաբանակում գտնվել է արմենական երկու զորամաս՝ բաղկացած 40.000 հետևակազորից և 7.000 հեծելազորից[3]։ Արմենական զորամասերի հրամանատարներն են եղել Օրոնտեսը (Երվանդը) և Միթրաուստեսը։

Հավանական է, որ հայկական զորամասեր եղել են նաև Սելևկյան զորաբանակում։ Ինչպես հայտնի է, 190 թվականին (մ. թ. ա.) Մագնեզիայում, Անտիոքոս Մեծի խայտառակ պարտությունից հետո, իրենց անկախ հայտարարեցին Մեծ Հայքը՝ Արտաշեսի գլխավորությամբ և Ծոփաց աշխարհը՝ Զարեհի գլխավորությամբ։

[1] Xenophontis, Cyropaedia, IV. 10 (*Օգտվել ենք Հ. Մանանդյանի թարգմանությունից, որը զետեղված է նրա «Հին աշխարհի տեսություն հայ ժողովրդի պատմության» I հատորի հավելվածում*)։

[2] Herodoti, Historiarum libri, IX, VII, 73 (*Օգտվել ենք Ֆ. Գ. Միշչենկոյի թարգմանությունից*)։

[3] *Տես* Curtius Rufus, III, 2, 6 (*Օգտվել ենք Հ. Մանանդյանի «Հին աշխարհի տեսություն հայ ժողովրդի պատմության» I հատորի էջ 94-ից*)։

Ստրաբոնը որոշակի հայտնում է, որ Արտաշեսը և Զարեհը «նախապես Անտիոքոս Մեծի զորավարներն էին»[1]։ Նշված զորահրամանատարներն, անշուշտ, Սելևկյան բանակում պաշտոնավարելու ժամանակ ղեկավարում էին հայկական զորամասերը, որոնց օգնությամբ և Մեծ Հայքն ու Ծոփքը անկախ հայտարարվեցին։

Պետք է նկատի ունենալ, որ հայկական այս զորամասերը Հայաստանի սահմաններից դուրս էին գտնվում ժամանակավորապես միայն, կռիվների ժամանակ, իսկ հետո նորից վերադառնում հայրենիք։ Այնպես որ՝ արտասահմանում նրանք կայուն բնակության համար և մշտական օբյեկտներ չէին ստեղծում։ Չի բացառված, իհարկե, որ Պարսկաստանում Աքեմենյան շրջանում գոյություն ունեցած լինեին հայկական փոքրիկ գաղթօջախներ՝ բաղկացած գլխավորապես հայ առևտրականներից և արհեստավորներից։

Ի դեպ՝ Պարսկաստանում հայ ստվարաթիվ բնակչության գոյության օգտին է խոսում Բաբելոնում Դարեհի (522—486 թթ.) դեմ բունկված մի ապստամբություն, որի ղեկավարը ծագումով հայ Արախան էր։ Այս ապստամբությունն այնպիսի մեծ ցնցումի տեղիք է տվել Պարսկաստանում, որ ապստամբությունը ճնշելուց հետո Դարեհը պատվիրել է Բիհիսթունի քարաժայռի վրա արձանագրել խռովարարի դեմ իր տարած հաղթանակի պատմությունը[2]։ Ամենայն հավանականությամբ Արախանը միակ հայը չի եղել Բաբելոնում, այլ ունեցել է նաև աջակիցներ իր հայրենակիցներից։

Մեր ունեցած տեղեկությունները հայոց պատմության մասին հարստանում և պատմական տեսադաշտը համեմատաբար ընդարձակվում է Արտաշեսյանների շրջանում։ Այժմ, օտար աղբյուրներից բացի, այդ մասին տեղեկություններ են հաղորդում նաև հայկական աղբյուրները։

Այդ տեղեկությունները իրավունք են տալիս հաստատապես ասելու, որ Արտաշեսյան շրջանում հայ ժողովուրդը ո՛չ միայն արտագաղթ չի տվել, այլև ինքն է գաղթականություն ընդունել դրսից։ Հունա-հռոմեական պատմիչները մանրամասն տեղեկություններ են հաղորդում հազարավոր այն գաղթականների մասին, որոնց քշում բերում են Տիգրան II-ը (95—55 թթ.) և Արտավազդ II-ը (55—34 թթ) իրենց ռազմական գործողությունների ժամանակ Միջագետքից, Կապադովկիայից և փոքրասիական այլ երկրներից։ Այսպես օրինակ, Ստրաբոնը խոսելով Տիգրան II-ի Տիգ-

[1] Strabo, XXV. 2,12 (*Հմմտ. «Ստրաբոն», քազեց և թարգմանեց Հ. Աճառյան, էջ 57*)։

[2] *Տես* Г. А. Халатьянц, Очерк истории Арменин, М., 1910, *էջ 85*։

բանակներ բերած գերիների մասին, գրում է. «Այս քաղաքում (այսինքն՝ Տիգրանակերտում.— Ա. Ա.) կային շատ հելլեններ ինչպես Կիլիկիայի գաղթականներից, այնպես և նրանց բախտակից բարբարոս ասորիներ, կորդվացիներ և կապադովկիացիներ, որոնց հայրենիքը քանդել և այնտեղից գաղթեցրել էր Տիգրան II-ը»։ Ըստ Ապիանոսի տեղեկության, Տիգրանի բերած գերիների թիվը հասնում էր մինչև 300.000-ի[1]։ Որքան էլ չափազանցած լինի Ապիանոսն այս թիվը, այնուամենայնիվ, այն վկայում է, որ դրսից բավականին մեծ թվով գերիներ են բերվել Հայաստան։

Հիմնավորապես սխալ է հայագիտության մեջ քաղաքացիություն ստացած այն վարկածը, որ իբր թե Տիգրանի բերած գերիները հանդիսացել են առևտրականներ։ Մեր մի ուսումնասիրության մեջ՝ «Հայ ժողովրդի պերիոդիզացիայի հարցի շուրջը», պատմական փաստերով ցույց ենք տվել, որ Տիգրանի բերած գերիները հանդիսացել են ո՛չ թե առևտրականներ, այլ սովորական ստրուկներ, որոնք բերվել և օգտագործվել են ստրկական աշխատանքներում։ Այլ հարց է, որ հետագա դարերում այդ ստրուկներից ոմանք կարող էին ազատություն ձեռք բերել և դառնալ նաև առևտրականներ։

II—I դարերում զգալիորեն ընդարձակվում են Հայաստանի սահմաններն ի հաշիվ հարևան երկրների։ Հայտնի է, որ Տիգրանը նվաճեց Ասորիքը, Կապադովկիան, Կիլիկիան և հարևան այլ երկրներ։ Նվաճումներից հետո այդ երկրներում տեղավորվեցին բավականին թվով հայ վաճառականներ, պետական պաշտոնյաներ և զինվորականներ։

Հայ ժողովրդի դրությունն զգալիորեն փոխվում է Արտաշեսյան հարստությունից հետո, երբ քաղաքականապես թուլացած Հայաստանը ներգրավվում է պարսկա-հռոմեական արյունոտ մրցակցության մեջ և մրցակցող կողմերը, գաղտնի կամ բացահայտ, սկսում են միջամտել Հայաստանի ներքին գործերին։ Ե՛վ Հռոմը, և՛ Պարսկաստանը Հայաստանի նկատմամբ վարում էին երկրի քաղաքական ուժերը չլատելու և ներքին երկպառակություններ սերմանելու քաղաքականություն։

Հռոմի և Պարսկաստանի այս քաղաքականությունը որոշ չափով նպաստավոր հող է գտնում Հայաստանի ձևավորված սոցիալ-տնտեսական նոր հարաբերությունների պայմաններում։

Հայաստանում I—II դարերում վերջնականապես ձևավորվում է ֆեոդալական հասարակություն։ Հայաստանի տնտեսական

[1] AOP., Mithrid , 84.

կյանքն սկսում է մասնատվել, իսկ դրան զուգընթաց մասնատվում է նաև քաղաքական կյանքը։

Պետք է նշել, որ մինչև IV դարի սկզբները, այսինքն՝ մինչև քրիստոնեության մուտքը Հայաստան, հայ քաղաքական վերնախավի համակրանքը, համեմատաբար, ավելի դեպի պարթևների, քան հռոմեացիների կողմն է եղել[1]։ Քաղաքական այս կողմնորոշումը մասամբ փոխվում է, երբ հայերն ընդունում են քրիստոնեություն և հավատակից դառնում հռոմեացիներին։ Այժմ հայ քաղաքական վերնախավերի համակրանքն սկսում է թեքվել դեպի հռոմեացիները։

Հավաստի տեղեկություններ կան այն մասին, որ հռոմեացիներն իրենց մոտ գտնված քաղաքական փախստականներից և իրենց իշխանության տակ ընկած հայկական գավառներից զորամասեր էին կազմում և ուղարկում Դանուբ՝ գերմանացիների դեմ կռվելու։

233 թվականին Սևերիոս Աղեքսանդր կայսրը Արևելքից Հռոմ վերադառնալիս իր հետ տանում է հայկական աղեղնաձիգ գնդեր՝ կայսրության հյուսիսային սահմանը գերմանացիներից պաշտպանելու համար։ Եվ հայկական այդ զորամասերը 238 թվականին Մաքսիմիանոսի ժամանակ մասնակցում են գերմանացիների դեմ մղվող ռազմական գործողություններին։

350 թվականին, երբ հռոմեական արևելյան բանակն ապրստամբություն բարձրացրեց Կոստաս կայսեր դեմ և կայսր հռչակեց Կոստանդիոսին, վերջինիս աջակցող զորաբանակում գտնվում էին հայ աղեղնաձիգ հեծելազոր գնդեր, որոնք վճռական դեր կատարեցին այս հեղաշրջման ժամանակ[2]։

Հայոց Արշակ Երրորդի ժամանակ (378—386), երբ Հռոմի հյուսիսային սահմանը վտանգված էր գերմանացիների հարձակումների հետևանքներով, Թշնամու դեմ ուղարկվեցին նաև հայկական գնդեր, որոնք և մասնակցեցին ռազմական գործողություններին[3]։

387 թվականից հետո, երբ Հայաստանը բաժանվել էր Պարսկաստանի և Հռոմի միջև, հայերից զորահավաք կատարելու, զորամասեր ստեղծելու և այդ զորամասերը Հռոմի ու Պարսկաստանի հեռավոր սահմաններն ուղարկելն ավելի հաճախակի դարձավ։ Այդ

[1] Հ. Աստուրյան, Քաղաքական վերաբերություններ ընդմեջ Հայաստանի և Հռոմա, Վենետիկ, 1912, էջ 239—240։

[2] Ա. Ալպոյաճյան, ՊՀԴ, էջ 127։

[3] Նույն տեղում, էջ 314 (Համմա. Թեմիստոսի ճառը, 207)։

միջոցառումը նպատակ ուներ. մի կողմից՝ հայ քաջարի զինվորներով պաշտպանել հեռավոր և վտանգավոր սահմանները, իսկ մյուս կողմից՝ երկրից դուրս հանելով կռվող ուժը, աշխատել քաղաքականապես ավելի թուլացնել Հայաստանը՝ հայ ժողովրդի ներքին անկախությունը վերացնելու և ասիմիլյացիայի ենթարկելու համար։

Օտար հարստահարիչների այդ ձգտումը շատ ցայտուն երևում է պարսից Հազկերտ թագավորի հայկական զորքերի նկատմամբ ցուցաբերած միջոցառումներից, որոնք հանգամանորեն նկարագրված են հայ երկու պատմիչների՝ Եղիշեի և Ղազար Փարպեցու մոտ։ Վարդանանց հերոսական պատերազմից առաջ, երբ պարսից արքունիքում ծրագրվում էին անդրկովկասյան երեք ժողովուրդների ներքին անկախությունը վերացնելու համար նախատեսված միջոցառումները, պարսկական արքունիքի հրամանով հայկական այրուձին դուրս է հանվում երկրից և ուղարկվում Պարսկաստանի հեռավոր սահմանները։ Հիշենք Եղիշեի հետևյալ տեղեկությունը. «Եւ գունդս գունդս դարձեալ գումարէին ի նոցանէ (այսինքն՝ հայերից, վրացիներից և աղվանքներից—Ա. Ա.) յերկիր հեռաւոր՝ յամուրս անապատին՝ ի մարտ պատերազմի թշնամեացն արքայի. և բազմաց իսկ անդէն հասանէր վախճան մահու սրով։ Եւ զամենեցուն զկարգեալ թոշակն նուազեցուցանէին, և քաղցիւ և ծարաւով տառապեցուցանէին զնոսա, և ամերոցի տեղիս զդժնեայ վայրսն հրամայէին նոցա և անարգս և վատթարս յաշս ամենեցուն զնոսա ցուցանէին»[1]։

Հայ զինվորական մասերի դրությունը մխիթարական չէր նաև Արևմտյան Հայաստանում, որն ընկել էր Հռոմի գերիշխանության տակ։ Այդ մենք կտեսնենք քիչ հետո՝ Բյուզանդիայի հայ գաղթավայրի մասին խոսելիս։

Հայ վտարանդիներից և հայ զինվորականությունից բացի, Հայաստանից դուրս գտնվող բնակչության շարքում պետք է հիշել նաև հայ պատանդներին։ Պարսիկները և հռոմեացիները, իրենց ազդեցությունը հայ ավատական շրջանի վրա ավելի ուժեղացնելու և նրանց ստրկական հնազանդության մեջ պահելու համար, սովորություն ունեին հայ նախարարական տներից պատանդներ վերցնել, որոնց պահում էին իրենց արքունիքներում և դաստիարակում հավատարմությամբ ծառայելու ոգով։ Հայտնի է, օրինակ, որ IV դարում հայոց Արշակ թագավորի եղբոր որդիները՝ Գնելը և Տիրիթը, պատանդներ էին Բյուզանդիոնում, նրանց ազատեց և հայրենիք բերեց Ներսես կաթողիկոսը՝ իր բանագնացության ժամանակ։ 449 թվականին Անդրկովկասի ժողովուրդների ժողովրդա-ազատագրական պատերազմի նախօրյակին, երբ Անդրկովկասի երեք ժողովուրդների ղեկավարները հրավիրվում են Տիզբոն Հազկերտի մոտ և խոստումներ տալիս նպաստելու զրադաշտականության տարածմանն Անդրկովկասում, Հազկերտը նրանցից պատանդ է պահում վրաց Աշուշա բդեշխին և Վասակ Սյունեցու որդիներին։

Արտասահմանում սովորող հայ ուսանողական խմբերը:

Պատմական հետաքրքիր տեղեկություններ են հասել մեզ Հռոմում, Անտիոքում, Եդեսիայում, Աղեքսանդրիայում, Աթենքում, իսկ հետագայում նաև՝ Բյուզանդիոնում, սովորող հայ ուսանողական խմբերի մասին, ուսանողներ, որոնք զգալի դեր են կատարել անտիկ առաջավոր մշակույթը Հայաստան բերելու և ստեղծագործորեն մշակելու ու զարգացնելու ուղղությամբ։

Արտասահմանի գիտական կենտրոնները սովորելու գնացող այս ուսանողների մեջ քիչ չեն եղել այնպիսիները, որոնք հաջողությամբ ավարտելով բարձրագույն կրթությունը և աչքի ընկնելով իրենց արտակարգ ընդունակություններով, մնացել են աշխատելու իրենց իսկ ավարտած վայրերում՝ դառնալով այդ նույն բարձրագույն հաստատությունների փայլուն աստղերը։

Նման դեմքերից, օրինակ, կարելի է հիշատակել Տիրան Հայկազնին (I դար մ. թ. ա.), որը Փոքր Հայքից էր, Լուկուլլոսի Հռոմ տարած հայ գերիներից։ Տիրանն աշակերտում է համաշխարհային հռչակ ունեցող քերական Դիոնիսիոս Թրակացուն և այնքան խորը մասնագիտանում անտիկ լեզուների մեջ, որ դառնում է իր ժամանակի աչքի ընկնող լեզվաբաններից ու քերականներից մեկը։ Նա հավաքում է գիտության տարբեր բնագավառներին վերաբերող անտիկ հեղինակների աշխատությունները և կազմում հարուստ մի գրադարան, որը, ըստ ժամանակակիցների վկայության, բաղկացած է եղել 3.000 հատորներից, իսկ ոմանք հասցնում են մինչև 30.000-ի։ Հռոմեական պատմիչ Սվիդասը վկայում է, որ Կիկերոնը Տիրան Հայկազնին է հանձնարարում իր ունեցած գրականությունը կարգավորելը և իր բնակարանում բաց անում դրպրոց, ուր Հռոմեացի երիտասարդները գալիս էին սովորելու հայ գիտնականի մոտ[1]։

[1] Եղիշէ, Վասն Վարդանայ և հայոց պատերազմին, Երևան, 1957, էջ 21։

[1] «Բազմավէպ», 1932, էջ 196։

IV դարում մեծ հռչակ է ստեղծում իր շուրջը Պարույր Հայկազնը, որը հունական մատենագրության մեջ հայտնի է Պրոերեսիոս անունով։ Մեզ է հասել նրա կենսագրությունը՝ գրված իր հույն աշակերտներից մեկի՝ Եվնաբիոսի կողմից։

Պրոերեսիոսը Փոքր Հայքից էր, հայ ծնողների զավակ։ Նա իր կրթությունը ստացել է Անտիոքում Հուլիանոս Ճարտասանի մոտ։ Աչքի ընկնելով իր արտակարգ ընդունակություններով, 308 թվականին նա մեկնում է Աթենք և շարունակում իր ուսումը Հուլիանոս հռետորի մոտ։ Այստեղ նա այնքան է աչքի ընկնում ճարտասանության մեջ, որ իր ուսուցչի մահից հետո նրան է վստահվում Աթենքի ճարտասանական դպրոցի ղեկավարությունը։ Ըստ կենսագրի տեղեկության, Պարույրն աշխատում և ապրում է նյութական սուղ պայմաններում, աղքատության մեջ[1]։ Նա իր շուրջն է հավաքում բազմաթիվ աշակերտներ, այդ թվում նաև շատերին իր հայրենակիցներից։ Աթենքում գտնվում են հայ գիտնականի փառքին նախանձող հակառակորդներ, որոնք ամբաստանում են նրան իշխանության առջև և աքսորում Աթենքից։ Շուտով, սակայն, Պարույրը արդարանալով մեղադրանքից, վերադառնում է Աթենք և նոր թափով վերսկսում իր դասախոսությունները։ Կոստանդ կայսրը լսելով Պարույրի հռչակը, հրավիրում է նրան Գալիա (Ֆրանսիա), իսկ այնտեղից՝ Հռոմ։ Մայրաքաղաքի բնակիչների համար նա այստեղ դասախոսություններ է կարդում։ Եվ Հռոմի բնակիչներն այնքան բարձր են գնահատում հայ ճարտասանի ատենախոսությունը, որ ի պատիվ նրա կանգնեցնում են պղնձյա արձան՝ «Regina rerum Roma, regi eloguentiae» («Թագուհի Հռոմից՝ նվեր ճարտասանության թագավորին») մակագրությամբ։

Հետագայում Պարույրը նորից գալիս է Աթենք և երկար տարիներ աշխատում այստեղ՝ շարունակելով դասախոսությունները իր ճարտասանական դպրոցում։ Մերության հասակում մի տհաճ միջադեպ ստիպում է նրան հրաժարվել դասախոսությունից. Հուլիանոս կայսրը առաջարկում է նրան ներբող գրել և գովերգել իր ոաղմական չունեցած տաղանդը։ Պարույր Հայկազնը չի ուզում իր խղճին դեմ գնալ և քծնանքով զբաղվել և նախընտրում է հեռանալ աշխատանքից, քան ընդունել կայսեր առաջարկը։ Պարույրը մահանում է 95 տարեկան, խորը ծերության հասակում։ Ժամանակակից գրեթե բոլոր մատենագիրները մեծ գովեստով են խոսում Պարույրի մասին։ Նույնիսկ իր կատաղի հակառակորդ Լիբանոս հռետորը իր նամակներից մեկում ընդունում է, որ Պարույրը, շնորհիվ իր արտակարգ տաղանդի, կարողացել է շահել ժամանակակիցների սերը և համակրանքը[1]։

V դարում Անտիոքի Լիբիանոսի դպրոցում սովորող հայ ուսանողներից աչքի է ընկնում Ղևոնդիոս Հայկազնը, որը հայտնի է եղել որպես նշանավոր փիլիսոփա և բանաստեղծ։ Նա Անտիոքից տեղափոխվում է Աթենք և ստանձնում այնտեղ Աթենքի համալսարանի ուսուցչապետության բարձր պաշտոնը[2]։

Ավելորդ ենք համարում այստեղ խոսել V դարում Անտիոքում, Աղեքսանդրիայում, Աթենքում, Բյուզանդիոնում և գիտության աչքի ընկնող այլ օջախներում իրենց կրթությունը ստացած հայ ուսանողների մասին, որոնք իրենց ուսումն ավարտելուց հետո վերադարձել են Հայաստան և գործուն մասնակցություն ունեցել Սահակ Պարթևի և Մեսրոպ Մաշտոցի գլխավորած թարգմանական մեծ գործին։

Հայագիր տառերը Մեսրոպ Մաշտոցի կողմից 406 թվականին ստեղծվելուց հետո, հավանական է արքունի միջոցներով, մեծ թվով ուսանողներ ուղարկվեցին սովորելու Միջագետք, Հռոմ, Եգիպտոս և Հունաստան։ Հայկական արքունիքը և հայ եկեղեցին ցանկանում էին հունարեն և ասորերեն լեզուները լավ գիտցող մասնագետներ ունենալ հունական և ասորական լեզուներով եղած գրականությունը թարգմանելու համար։ Ուսանելու գնացող երիտասարդությունը, իհարկե, հանձն է առնում մեծ դժվարություններ, որոնք կապված էին ճանապարհների, օտար շրջապատին ծանոթանալու, նյութական կարիքի հետ և այլն։ Սակայն գրասեր երիտասարդությունը կանգ չի առնում ոչ մի դժվարության առջև։ Հեռավոր երկրներ սովորելու մեկնող այդ հայ ուսանողների անձնազոհությունը պատկերացնելու համար հին հայկական մի մատենագիր հետևյալն է գրում... «գումարէին, հանդերձէին, կազմէին, պատրաստէին, յուղի անկանէին յերկայնածիգ ճանապարհորդէին, ի ծովս ընթանային, ի թևս թռչէին, յերիվարս փայտակերտս ելանէին... ի սասանուտ դաշտս անհաստատս արշաւէին, զմահ քան զկեանս միշտ ընտրէին. աներևոյթ նպատակեալ ունէին»[3]։ Մատենագիրը խոսելով օտար համալսարաններում սովորող հայ ուսանողների ջանասիրության և մասնագիտական թեքումների մա-

[1] Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. Դ. էջ 233։

[1] В. Чалоян, История армянской философии, Ереван, 1959, էջ 38։
[2] Christ, Geschichte der Griechischen Litteratur, II, 2, էջ 1212։
[3] Ղ. Ալիշան, Հայապատում, էջ 148։

սին, շարունակում է. «(հայ ուսանողները)... ժրանային, տքնէին, աշխատէին, հարցասէր լինէին՝ ուսանելով, կրթելով, վարժելով, վաստակելով, պատրաստելով զանձինս՝ ի յերկս օգտակարս, և ի գործս շահաւէտս։ Ոմանք զտառից գծագրութիւնս շահաւորեալ, ոմանք զիմաստս հաւաքեալ, զհամարողականն, զերաժշտականն, զաստեղաբաշխականն, զբերականն և զբերդողականն, զգործնականն և զտեսական իմաստասիրութիւն և զմասունս նոցա, որք են թուով երկոտասան։ Ոմանց հաւասարէին գիտութեամբ, քան զոմանս վեհագոյնք երևէին, ոմանց զարմանալիք թուէին»[1]։

Մի այլ հիշատակագիր, խոսելով օտար համալսարաններում իրենց ուսումն ավարտած և հայրենիք վերադարձող հայ ուսանողների մասին, գրում է. «Յետ փոխման սրբոյն (այսինքն՝ Մաշտոցի և Սահակ Պարթևի մահվանից հետո— Ա. Ա.) եկին աշակերտք նոցա յԱթենայ, ճոխացեալ և փարթամացեալ ուսմամբ. Մովսէս Քերթողն, և Դաւիթ Անյաղթն, Մամբրէ Վերածնողն, և Եղիշէ Պատմագիր, Ղազար Փարպեցի և Եզնակ Կողբացի, Ստեփանոս Ասողիկն և այլք ոմանք»[2]։

Հունական և հռոմեական մատենագիրներն ընդհանրապես դրական են արտահայտվում իրենց մոտ սովորող հայ ուսանողների վերաբերյալ։ Ըստ նրանց ներկայացման, հայ ուսանողները աշխատասեր են, ուշիմ և ընդունակ, միայն նրանք դժգոհում են այն բանում, որ իրենց մոտ սովորող այդ ուսանողները հայրենիք վերադառնալիս չեն տանում հռոմեական ազդեցությունը։

Հայ բնակչության առաջին բռնագաղթը։

Հայ ժողովրդի զանգվածային խոշոր գերեվարությունը կապված է Սասանյան շրջանի հետ։ 226 թվականից հետո, երբ Պարսկաստանում իշխանության գլուխ անցան Սասանյանները, պարսկական արքունիքը Հայաստանի նկատմամբ սկսեց վարել բացահայտ թշնամական քաղաքականություն։ Պատճառն այն էր, որ Հայաստանում իշխանության գլուխ էին կանգնած Արշակունիների ազգակիցները, որոնք հովանավորում էին Սասանյանների հակառակորդներին։

Հայաստանի և Պարսկաստանի միջև բացված անջրպետն ավելի է խորանում մանավանդ քրիստոնեությունը Հայաստանում պաշտոնապես ճանաչելուց և հայերի պարսկական հավատակցությունից հեռանալուց հետո։ Սասանյան արքունիքի համար այժմ

[1] Ղ. Ալիշան, Հայապատում, էջ 148։

[2] Գ. Զարբհանելյան, Հայկական հին գպրություն, Վենետիկ, 1897, էջ 288։

առաջնահերթ հարց է դառնում Հայաստանի քաղաքական անկախությունը վերացնելու և հայ ժողովրդին ասիմիլյացիայի ենթարկելու խնդիրը։ Իրենց ծրագիրն իրագործելու համար Սասանյանները դիմում են բռնի ուժի։ Հայ ժողովրդի համար սկսվում է մահառումների ծանր մի շրջան։ Թշնամական խոշոր բանակները պարբերաբար հարձակվում են Հայաստանի վրա, ավերում երկիրը, կողոպտում բնակչությանը և հազարներով գերի տանում։

Առաջին տեղեկությունը Սասանյանների՝ Հայաստանից տարած մեծ թվով գերիների մասին հաղորդում է Ագաթանգեղոսը։ Նա հայտնում է, որ Պարսկաստանի Արտաշիր թագավորը (226—241) հարձակվելով Հայաստանի վրա «...խաղայր գնայր, սուպատակ սփռէր զկողմամբք Հայաստան աշխարհին, զխօսուն և զանխօսուն, զծեր և զտղայ, զերիտասարդ և զմանուկ առհասարակ խաղացուցանէր ի գերութիւն»[1]։ Ագաթանգեղոսի այս տեղեկությունը որքան էլ չափազանցություն լինի, այնուամենայնիվ, պետք է ենթադրել, որ Հայաստանից խոշոր թվով գաղթականություն է տարվել Արտաշիրի՝ Սասանյան դինաստիայի առաջին հիմնադիրի կողմից, թեպետև հայկական մյուս պատմիչներն Արտաշիրին ներկայացնում են Հայաստան ձեռնարկած այս արշավանքի մեջ պարտված կողմ։ Հավանական է այս դեպքը տեղի ունեցած լինի 228 թվականին։

Սասանյանները Հայաստանից գերիներ տանելու մի նոր փորձ կատարել են IV դարում։ Փավստոս Բուզանդը հայտնում է, որ Շապուհ II-ի ժամանակ պարսկական զորքը, հայ դավաճան իշխաններ Մերուժան Արծրունու և Վահան Մամիկոնյանի ուղեկցությամբ, հարձակվում է Հայաստանի վրա, ավերում երկիրը և ահագին գերիներով ետ վերադառնում։ Սակայն հայոց սպարապետ Վասակ Մամիկոնյանը հայկական զորքերով կտրում է դավաճանների փախուստի ճանապարհը և գերիներին խլում թշնամու ձեռքից[2]։

Սակայն այս հաջողությունը հայերի համար տևական չեղավ։ Շուտով նրա կյանքում տեղի ունեցավ աննախընթաց մի ողբերգություն՝ իր ամենածանր հետևանքներով։ Մենք նկատի ունենք Շապուհի կատարած բռնագաղթը Հայաստանից, որը տեղի է ունեցել հետևյալ պայմաններում։

Շապուհին հաջողվում է խաբեության ճանապարհով 360 թվականին Տիզբոն կանչել և Անհուշ բերդում բանտարկել հայոց Արշակ թագավորին։ Այնուհետև նա մի խոշոր զորաբանակ է ու-

[1] Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1909, էջ 24։

[2] Փաւստոսի Բուզանդացւոյ Պատմութիւն Հայոց, Վենետիկ, 1933, էջ 148։

զարկում Հայաստան և շրջապատում Արտագերս ամրոցը, ուր ամրացել էին Փառանձեմ թագուհին և հավատարիմ մնացած հայ զորավարներն իրենց զորքով։ Երկար պաշարումից հետո վերջապես Շապուհին հաջողվում է գրավել Արտագերսը և դաժան հաշվեհարդար կատարել բերդի պաշտպանների հետ։ Այնուհետև պարսիկները ասպատակում են Հայաստանը, ավերում երկիրը և բնակչությունը հազարներով գերի տանում։

Ըստ Փավստոս Բուզանդի տեղեկության, ավարի, գերեվարության առաջին մեծ հարվածը ստանում է Արտաշատ առևտրաշատ քաղաքը։ Արտագերսը գրավելուց հետո, գրում է պատմիչը, պարսկական զորքերը «...եկին ի քաղաքն մեծ յԱրտաշատ, և առին զնա, և կործանեցին զպարիսպ նորա. առին անտի զգանձս մեծս բազումս՝ որ կային, և գերեցին զամենայն քաղաքն»։ Ըստ պատմիչի տեղեկության, Շապուհը Արտաշատից գերի է տանում 40.000 ընտանիք, որից 31.000-ը հայ, իսկ 9.000-ը՝ հրեա։ Պարսկական զորքերը, վայրագության մոլուցքով լցված, հիմնահատակ կործանում են քաղաքի բնակելի բոլոր շենքերը, նրա պարիսպները։ «...և ոչ թողին՝ բնաւ քար ի քարի վերայ, անմարդի և թափուր յամենայն բնակչաց իւրոց կացուցանէին»[1]։

Արտաշատից հետո պարսկական զորքերը շարժվում են Վաղարշապատի վրա։ «...քանդէին, բրէին զքաղաքն ի հիմանց տապալէին,— գրում է Փավստոսը,— և խաղացուցանէին յայնմ ևս քաղաքէ իննևտասան երդս հազարս։ Ընդ ամենայն քաղաքս ոչ թողին ամենևին շինած, զի զամենայն տապալէին, քակեալ քանդէին. և ընդ ամենայն երկիրն ասպատակ սփռեալ՝ զամենայն այր ի չափ հասեալ կոտորէին, զկանայս և զորդիս ի գերութիւն վարէին»[2]։

Պարսկական զորքերը, այնուհետև գրավում են Հայաստանի մյուս քաղաքները և նրանց բնակչությունը քշում գերության։ Նրանք գերի են տանում Երվանդաշատից 50.000 ընտանիք, որից 20.000-ը հայեր, 30.000-ը հրեաներ, Բագրեւանդի Ջարեհավանից 13.000 ընտանիք, որից 5.000-ը հայեր, 8.000-ը հրեաներ, Ջարիշատից՝ 24.000 ընտանիք, որից 14.000-ը հրեաներ, 10.000-ը հայեր, Վանից՝ 23.000 ընտանիք, որից 5.000-ը հայեր, 18.000-ը հրեաներ, Նախիջևանից՝ 18.000 ընտանիք, որից 2.000-ը հայեր, 16.000-ը հրեաներ, Տիգրանակերտից գերության են քշում 40.000 ընտանիք և այլն։

[1] Փաւստոս, էջ 178։

[2] Նույն տեղը, էջ 179։

Փավստոսը թվարկում է միայն քաղաքներից տարված գերիները, իսկ գավառներինը չի հիշատակում, նրանց հիշում է միայն նախիջևան հավաքելու և կենտրոնացնելու կապակցությամբ, որտեղից պիտի քշեին Պարսկաստան։ «...և զամենայն երկիրն Հայոց և զամենայն գաւառն ընդ նմին գերեալ,— գրում է նա,— խաղացուցեալ և զայլ գերութիւնս գաւառաց գաւառաց, կողմանց կողմանց, փորի փորի, զաշխարհի աշխարհի, ածին ժողովեցին ի քաղաքն Նախճաւան»[1]։

Շապուհի Հայաստանից տարած գերիների թիվը Փավստոսի մոտ, անշուշտ, չափազանցված է. այդքան քաղաքային բնակչություն անհնար է որ լիներ Հայաստանում։ Բայց ինչքան էլ այդ թվերը չափազանցված լինեն, եթե նույնիսկ ընդունենք, որ չափազանցված է տասնապատիկ անգամ, այնուամենայնիվ, այդ անչափ մեծ հարված էր փոքրիկ Հայաստանի համար վաղ ֆեոդալիզմի ժամանակաշրջանում։

Այս տեղեկության մեջ ուշագրավ է Հայաստանի քաղաքային բնակչության կազմում մեծ թվով հրեաների հիշատակությունը որոնք, հավանական է, բնակվում էին Հայաստանում Տիգրանի ժամանակներից սկսած։

Փավստոսի հաղորդած վերոհիշյալ տեղեկությունը Շապուհի՝ Հայաստանից տարած գերիների մասին, հաստատում է նաև պատմահայր Մովսես Խորենացին։ Նա ևս վկայում է, որ Շապուհը մեծ բանակով մտնելով Հայաստան, ասպատակել է երկիրը և մեծ թվով գերիներ տարել[2]։

Շապուհի Հայաստանից տարած այս գերիներին, ըստ Փավստոսի տեղեկության, բնակեցնում են Խուժաստանում, Եփրատ-Տիգրիսյան շրջաններում և օգտագործում շինարարական աշխատանքներում։

Շապուհի բռնագաղթը հայ ժողովրդի պատմության մեջ առաջին մեծագույն ողբերգություններից մեկն էր։ Նա զգալի չափով խափանեց հայ ժողովրդի բնականոն զարգացման ընթացքը և թուլացրեց Հայաստանի քաղաքական հզորությունը։ Շապուհի ավերածություններն ու գերեվարությունը նախորդեց հայ ժողովրդի քաղաքական անկախության վերացմանը և Հայաստանի երկու մասի բաժանվելուն, որը տեղի ունեցավ 387 թվականին։

[1] Փաւստոս, էջ 179։

[2] Մովսէսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1913, էջ 300—301։

ԲՅՈՒԶԱՆԴԻԱՅԻ ՀԱՅ ԳԱՂԹԱՎԱՅՐԸ

Պատմական աղբյուրները և ուսումնասիրությունները:

Սկսած IV դարի վերջերից հայ բնակչության մեծաթիվ զանգվածներ թողնում են հայրենի երկիրը և գաղթում Բյուզանդիա: Հայ գաղթականության այդ հոսանքը անընդմեջ շարունակվում է մինչև XIII դարը: Հայ տարագիրները Բյուզանդիայի տարբեր բնակավայրերում ստեղծում են ստվար գաղթօջախներ և գործուն դեր կատարում կայսրության կյանքում՝ տալով աչքի ընկնող բազմաթիվ ներկայացուցիչներ քաղաքականության, զինվորականության, տնտեսության և գիտության բնագավառներում: Բյուզանդիայի բնակչության հիմնական տարրը, հույներից հետո, փաստորեն հանդիսացել են հայերը: Բյուզանդիայում այդ ժամանակաշրջանում հիշվում են երեսունի մոտ հայազգի կայսրերի և հարյուրավոր զորահրամանատարների անուններ: Բյուզանդական բանակներում հայկական ամբողջական լեգեոններ են գործել: Երկրի կյանքում մեծ դեր են ունեցել նաև հայ վաճառականները և արհեստավորները:

Թվում է, թե նման աչքառու գործունեություն ունեցող բյուզանդահայ բնակչության մասին պատմական աղբյուրները պիտի առատ տեղեկություններ հաղորդեին: Սակայն իրական պատկերը միանգամայն հակառակն է և անմխիթարական:

Բյուզանդահայ գաղթավայրի պատմական աղբյուրների առաջին խումբը՝ հայ պատմիչների ու ժամանակագիրների գործերն են: Ցավով պետք է ասենք, որ մեր ուսումնասիրած շրջանի մոտ երկու տասնյակ հայ պատմիչների և տարեգիրների մեջ չկա մի հեղինակ, որը նպատակ դրած լինի շարադրելու Բյուզանդիայի հայ գաղթօջախների որևէ ժամանակաշրջանի պատմությունը: Հայ պատմիչները Բյուզանդիայի հայ գաղթօջախների մասին խոսում

են գլխավորապես Հայաստանի նկատմամբ կայսրության վարած քաղաքականության և հայ բնակչության դեմ Բյուզանդիա կատարած գաղթի կապակցությամբ. հայկական սկզբնաղբյուրների տեղեկություններն ավելի վերաբերում են հայ բնակչության գաղթերին, քան հայ գաղթօջախներին:

Առաջին հայ հեղինակը, որն անդրադարձել է Բյուզանդիայի հայությանը, հայ բնակչության գաղթի կապակցությամբ, հանդիսացել է VII դարի հայ պատմիչ Սեբեոսը: Նրա «Պատմութիւն Հայոց»-ը, հիմնականում, ընդգրկում է Հերակլ կայսրի գահակալության շրջանը (610—641) և որոշ ձեռագիր ընդօրինակություններում անգամ վերնագրված է «Պատմութիւն ի Հերակլն»:

Բյուզանդիայի հայ գաղթականության և գաղթավայրի մասին տեղեկություն հաղորդող հաջորդ հայ հեղինակը Ղևոնդն է (VIII դար), որն իր «Պատմութիւն Հայոց»-ի մեջ հայ գաղթականության և Բյուզանդիայի մի շարք գործիչների մասին խոսում է Բյուզանդիայի խալիֆայության դեմ արևելքում վարած պատերազմների կապակցությամբ:

X—XIII դարերի հայ պատմիչներից Բյուզանդիայի հայ գաղթօջախների մասին տեղեկություններ գտնում ենք Հովհաննես Դրասխանակերտցու (X դար) «Պատմութիւն Հայոց»-ի, Ստեփանոս Ասողիկի «Պատմութիւն տիեզերական»-ի, Մատթեոս Ուռհայեցու (XII դար) «Ժամանակագրութեան», Արիստակես Լաստիվերտցու (XI դար) «Պատմութեան», Կիրակոս Գանձակեցու (XIII դար) «Հայոց պատմութեան» և այլ հեղինակների մոտ: Բացի այդ, բյուզանդահայ գրչության օջախներից մեզ են հասել մի քանի հիշատակարաններ և հիշատակագրություններ, որոնք նույնպես պատմական որոշ արժեք են ներկայացնում:

Աղբյուրների մյուս խումբը՝ այդ բյուզանդական պատմիչները և ժամանակագիրներն են, որոնք նույնպես հայ գաղթավայրի նկատմամբ ժլատ են: Հայերին նրանք համարում են Բյուզանդիայի տեղաբնակներ և նրանց գործունեությունը չեն առանձնացնում տեղացիների պատմությունից: Այդ է պատճառը, որ բյուզանդական ոչ մի հեղինակի մոտ մենք չենք հանդիպում հայ գաղթավայրերի պատմությանը նվիրված որևէ աշխատություն: Բյուզանդական պատմիչները և ժամանակագիրները հայ գաղթօջախների կամ առանձին հայ գործիչների վրա կանգ են առնում միջանկյալ ձևով՝ այս կամ այն պատմական իրադարձության կապակցությամբ:

VI դարի բյուզանդական պատմիչներից հայ գաղթավայրի մասին արժեքավոր տեղեկություններ է հաղորդում Պրոկոպիոս Կեսարացին իր երեք աշխատությունների մեջ՝ «Պատերազմների պատմություն» (գրված է 550—555 թվականներին), «Գաղտնի պատմություն» (գրված է 550 թ.) և «Կառուցումների պատմություն» (գրված է 558—560 թվականներին)։ Պրոկոպիոսը ականատես և ստուգախոս հեղինակ է, նա մոտիկից շփվել է բյուզանդահայ շրջանի հետ և ընդհանրապես գովեստով է խոսում հայերի, մասնավորապես՝ հայ զինվորականների մասին։

Բյուզանդահայ զինվորականության մասին ուշագրավ տեղեկություններ է հաղորդում Պրոկոպիոսին ժամանակակից Ագաթիոս Միրինացին, որը հանդիսացել է բյուզանդական բանակի հայ զորավար Ներսես Պատրիկի անձնական քարտուղարը։ Նա իր «Հուստինիանոսի գահակալությունը» խորագրով աշխատության մեջ կանգ է առել գլխավորապես Ներսես Պատրիկի՝ 552—558 թվականներին վանդալների, ֆրանկների և պարսիկների դեմ վարած ռազմական գործողությունների վրա, որին մասնակցել են նաև հայկական զորամասերը։

VII—IX դարերի բյուզանդական սկզբնաղբյուրներից հայ գաղթօջախների պատմության համար կարևոր սկզբնաղբյուրներ են Թեոփիլակտես Սիմոկատտեսի (VII դար) «Պատմությունը», որն ամբողջապես ընդգրկում է Մորիկի գահակալության շրջանը, Թեոֆանեսի (VIII դարի վերջերը, IX դարի սկիզբները) «Ժամանակագրություն»-ը, Պետրոս Սիցիլացու (IX դար) «Մանիքեականների պատմությունը», որն արժեքավոր տեղեկություններ է պարունակում պավլիկյան շարժումների և նրանց գաղափարախոսության մասին, Գեորգի Ամարտոլի (IX դար) «Ժամանակագրությունը», Կոստանդին Սիրանածինի (912—959 թթ.), «Հռոմեական կայսր Վասիլ Առաջինի պատմությունը», «Կայսրության կառավարման մասին» և «Թեմերի մասին» և Հովսեփ Գեներեհոսի (X դար) «Հինգ կայսրերի պատմությունը» աշխատությունները։

XI—XIII դարերի բյուզանդական պատմիչներից հայ գաղթօջախների մասին որոշ տեղեկությունների հանդիպում ենք Թեոֆանի շարունակողի մոտ (XI դար), Լեոն Դրակոնի (XI դար) «Պատմության», Գեորգի Կեդրենոսի (XI դ. վերջերը, XII դ. սկիզբները) «Համաշխարհային ժամանակագրության», Աննա Կոմնինի (XII դար) «Ալեքսիադիս» և այլ աշխատությունների մեջ։

Ասորական պատմական սկզբնաղբյուրներից Բյուզանդիայի հայ գաղթօջախների պատմության համար կարևոր են երկուսը՝

Հովհաննես Եփեսացու «Եկեղեցական պատմություն»-ը (VI դար) և Միքայել Ասորու (XII դար) «Ժամանակագրություն»-ը։

Բյուզանդական պատմիչների և ժամանակագրիչների մասին խոսելիս պետք է նկատի ունենալ, որ նրանց մեծ մասը եկեղեցականներ են եղել և կամ արքունական բարձր շրջանի հետ կապված մարդիկ, որոնք պատմական փաստերը հիշում ու մեկնաբանում են ըստ իրենց նախասիրության։ Որպես ավատական պատմագրության ներկայացուցիչներ, նրանք աշխատում են դրդվատել, գունազարդել այն ամենը, ինչ կապված է մեծահարուստ և կառավարող շրջանների հետ և, հակառակը, նշավակել սոցիալական և օպոզիցիոն շարժումները և ծուռ հայելու մեջ ներկայացնել աշխատավոր մասսայի առաջադեմ գաղափարախոսությունը։

Պետք է ասել, որ թվարկված հայկական, բյուզանդական և ասորական պատմիչների ու ժամանակագրիչների աշխատություններում Բյուզանդիայի հայերի մասին եղած տեղեկությունները անբավարար են գաղթօջախների կյանքի մասին ամբողջական և հստակ պատկերացում կազմելու համար։ Անչափ աղքատիկ են մանավանդ գաղթավայրի ներքին կյանքի, սոցիալական կառուցվածքի, հասարակական կյանքի, մշակույթի և այլ հարցերի մասին եղած տեղեկությունները։

Բյուզանդիայում հայ համայնքների խաղացած դերի մասին կայսրության ընդհանուր պատմության կապակցությամբ խոսել են աշքի ընկնող մի շարք բյուզանդագետներ՝ պրոֆ. Ա. Վասիլևը, ակադ. Ֆ. Ուսպենսկին, պրոֆ. Հ. Գելցերը, պրոֆ. Շ. Դիլը, պրոֆ. Ֆ. Բիսըլը և ուրիշներ։ Սակայն նրանցից ոչ մեկը նպատակ չի ունեցել Բյուզանդիայի հայ համայնքների պատմությունն ուսումնասիրել ըստ էության, այլ նրան անդրադարձել են միայն այն չափով, ինչ չափով այդ անհրաժեշտ է եղել Բյուզանդիայի ընդհանուր պատմության այս կամ այն հարցը լուսաբանելու համար։

Բյուզանդիայի հայ գաղթօջախների պատմության վերաբերող մասնագիտական առաջին լուրջ ուսումնասիրությունը պատկանում է պրոֆ. Ն. Ադոնցի գրչին։ Նա հրապարակել է հայերեն և ֆրանսերեն լեզուներով մի շարք մենագրություններ, որոնք նախ՝ լույս են տեսել պարբերական մամուլում, իսկ հետագայում այն հավաքվել է առանձին հատորի մեջ և հրատարակվել Փարիզում 1948 թվականին՝ «Պատմական ուսումնասիրություններ» ընդհանուր խորագրի տակ։

Բյուզանդիայի հայ գաղթօջախների պատմության վերաբերյալ ուշագրավ ուսումնասիրություններ են հանդիսանում բանա-

սեր Գ. Ֆնտրկլյանի «Հայազգիներ ի Բյուզանդիոն» խորագրով հոդվածաշարը, որը տպագրվել է «Հայաստանի կոչնակ»-ի 1935 թվականի համարներում և «Հայ իշխանավորք ի Ռավեննա» Թեոդիկի «Ամենուն տարեցույց»-ի 1926 թվականի մեջ (էջ 355—367)։

Արժեքավոր է Գ. Կ. Հովսեփյանի «Հայոց դերը բյուզանդական կայսրության մեջ» վերնագրով փոքրիկ ուսումնասիրությունը, որը լույս է տեսել «Հասկ» ամսագրում 1953 թվականի հունիս-հուլիս ամիսների համարներում։

Բյուզանդիայի հայկական գաղթօջախների վերաբերյալ, համեմատաբար, ավելի ամբողջական ու փաստական նյութերով հարուստ ուսումնասիրություն է հանդիսանում մեղվաջան հայագետ Ա. Ալպոյաճյանի «Պատմություն հայ գաղթականության» խորագրով աշխատությունը, որի առաջին հատորում ընդարձակ գլուխ է հատկացված Բյուզանդիայի հայ գաղթավայրի պատմությանը՝ «Սասան-բյուզանդական տիրապետության շրջանի հայերու գաղթը» ընդհանուր վերնագրի տակ։

Նշված աշխատությունները, փաստական արժեքավոր նյութեր պարունակելով հանդերձ, այնուամենայնիվ, հեռու են Բյուզանդիայի հայ գաղթօջախների ամբողջական և գիտական պատմությունը լինելուց։ Նրանց մեջ գլխավոր ուշադրությունը դարձված է Բյուզանդիայի աչքի ընկնող հայ գործիչների, հայազգի կայսրերի, ականավոր հայ զորահրամանատարների, հաջողակ հայ դիվանագետների վրա և այլն, իսկ ժողովուրդը, ստեղծագործող մասսան՝ իր աշխատանքով և ձգտումներով, Բյուզանդիայում շահագործողների դեմ մղած իր պայքարով ու առաջադեմ գաղափարներով և այլն, նշված աշխատություններից դուրս են մնացել։ Ջենք ուզում ասել, որ պետք չէր կանգ առնել հայազգի կայսրերի կամ զորահրամանատարների գործունեության վրա, որը սերտորեն կապված է գաղթօջախների պատմության հետ, բայց վերջիններիս պատմությունը չի կարելի վեր ածել առանձին անհատների պատմության։

Բյուզանդիայի հայ գաղթօջախի պատմությանն ունի մի շարք մութ և չլուսաբանված հարցեր։ Ներկա ուսումնասիրության մեջ, հասկանալի է, մենք նպատակ չունենք լուծելու այդ բոլոր կնճռոտ հարցերը։ Մեր խնդիրը համեստ է՝ հայտնի և հրատարակված նյութերի հիման վրա կազմել Բյուզանդիայի հայկական գաղթօջախի պատմության համառոտ և որքան հնարավոր է ամբողջական ուրվագիծը։

Հայ գաղթականության առաջին հոսանքները դեպի Բյուզանդիա։

Հայ բնակչության զանգվածային արտագաղթի առաջին հոսանքը դեպի Բյուզանդիա, ինչպես ասացինք, սկսել է IV դարի վերջերից, այսինքն՝ այն ժամանակից, երբ Արևմտյան Հայաստանը ընկել էր Բյուզանդիայի գերիշխանության տակ և ջնջվել Հայաստանը Բյուզանդիայից բաժանող սահմանագիծը։ Հա այդ ժամանակից իսկ սկսել է հայ բնակչության դանդաղ և առանց ընդհատման հոսքը դեպի Արևմուտք։

Հայ բնակչությանը գաղթականության մղող հիմնական պատճառներից մեկը հանդիսացել է երկրի անապահով վիճակը։ Հայաստանն ընկնելով Բյուզանդիայի և Պարսկաստանի աքցանի մեջ, դարեր շարունակ կռվահրաձեր է դարձել ախոյան երկու պետությունների միջև։ Կողմերից ամեն մեկն աշխատել է իր տիրապետությունը հաստատել Հայաստանում և ամրացնել իր ռազմաստրատեգիական դիրքերը։ Եվ այսպիսով, անվերջ պատերազմները ստեղծել են անտանելի ծանր վիճակ։ Վասալական կախվածության մեջ ընկած և երկփեղկված Հայաստանի համար։ Այս անմխիթար վիճակում ժողովուրդը, բնական է, պիտի նախընտրեր և նախընտրում էր սրտի կսկիծով թողնել իր հայրենի օջախը և գաղթել, համեմատաբար, ավելի ապահով միջավայր։

Հայ ժողովրդի տարագրության մյուս կարևոր պատճառներից մեկը դա Բյուզանդիայի, մասնավորապես Կոստանդնուպոլիս քաղաքի գրավչությունն է եղել։ Պոլիսը՝ Արևելքը Արևմուտքի հետ կապող այդ «ոսկե կամուրջը», կայսրության բոլոր մասերից դեպի իրեն էր քաշում խելք, ուժ և նախաձեռնություն ունեցող բոլոր տարրերին, այդ թվում նաև հայերին։

Պետք է ասել, որ Հայաստանից դեպի Բյուզանդիա կատարվող այս գաղթը մեծ մասամբ տեղի է ունեցել շատ լուռ, անաղմուկ և աննկատ, այնքան աննկատ, որ հաճախ այդ չեն տեսնում և իրենց մոտ չեն արձանագրում անգամ ժամանակակից շրջահայաց պատմիչները և ժամանակագիրները։ Փաստորեն այդ տարերային, մասսայական շարժում էր. հայ բնակչությունը սկզբում չէր գաղթում որևէ հարկադրանքի տակ, նա գնում էր կամովին, փնտում էր՝ օտարության մեջ ապահովություն ու բախտ փնտրելու անհայտ հեռանկարներով։

Հայերի «կամավոր» գաղթերին սակայն զուգակցել են նաև կայսրության ծրագրով իրագործվող բռնի գաղթերը։ Պատմիչների տեղեկություններից երևում է, որ բյուզանդական արքունիքը դարեր շարունակ սիստեմատիկաբար բռնի գաղթեցրել է հայերին

դեպի Թրակիա և Մակեդոնիա։ Դրանով նա ցանկացել է լուծել կայսրության համար կարևոր նշանակություն ունեցող երկու հարց— մի կողմից՝ ապահովել կայսրության հյուսիսային սահմանները քշնամական հարձակումներից, իսկ մյուս կողմից՝ Հայաստանից զուրս հանելով երիտասարդությանը՝ թուլացնել տեղի քաղաքական ըմբոստ և օպոզիցիոն ուժերը՝ երկիրը հանգիստ տիրելու համար։

Ի դեպ, Բյուզանդիան այս քաղաքականությունը կիրառել է նաև իր տիրապետության տակ գտնվող մյուս ժողովուրդների նկատմամբ։ Ռուս բյուզանդագետ Ա. Վասիլևն, անդրադառնալով կայսրության որդեգրած բռնագաղթի այս քաղաքականությանը, շատ ճիշտ նկատել է. «Ինչպես հայտնի է, բյուզանդական պետության շատ սիրած միջոցառումներից մեկը տարբեր ժողովուրդների մի շրջանից մյուսը գաղթեցնելն է հանդիսացել, այսպես, օրինակ՝ սլավոններին փոխադրելն է Փոքր Ասիա, իսկ հայերին՝ Բալկանյան թերակղզին»[1]։

Պատմական աղբյուրներում պահված հայկական գաղթի մասին հնագույն տեղեկությունը վերաբերում է V դարի վաթսունական թվականներին։ Ըստ այդ տեղեկությունների, Ավարայրի ճակատամարտից հետո, երբ դրությունը Հայաստանում անհուսալի է դառնում, երկու հայ իշխաններ՝ Արտավանը ու Գազրիկը, իրենց քնտանիքներով և հետևորդներով, 460-ական թվականներին փախչում և ապաստանում են Բյուզանդիայում։ Լևոն I կայսրը (457—474) նրանց թույլ է տալիս բնակություն հաստատել Մակեդոնիայի Նիկիա քաղաքում։ Հետագայում հայ Արշակունիների այս ճյուղը տեղափոխվում է Ֆիլիպոպոլիս, իսկ այնտեղից՝ Ադրիանապոլիս։ Մակեդոնիայում հաստատված այս հայ արշակունիներից է սերվել Բարսել I կայսրը, որը հանդիսացավ հայկական դինաստիայի հարստության հիմնադիրը Բյուզանդիայում[2]։

Արտավան-Գազրիկով փաստորեն բացվում է հայ գաղթականության դժբախտ դարբասը դեպի Բյուզանդիա և այնուհետև չի փակվում մինչև XIII դարը։ Հայ տարագիրների քարավանները անդադրում սկսում են հոսել և հոսել դեպի Բյուզանդիա։

Քաղաքական փախստականների մի այլ խոշոր խումբ Արևելյան Հայաստանից Բյուզանդիա է տեղափոխվել 573—578 թվականներին՝ Հայաստանում Վարդան Մամիկոնյանի ղեկավարությամբ պարսիկ նվաճողների դեմ բռնկված ապստամբության անհաջող վախճանից հետո։ Ստեփանոս Ասողիկն այս մասին գրում է. «Իսկ Վարդանայ առեալ զընտանիս իւր և զայլ պայազատան՝ փախստեայ անկանի յաշխարհն Յունաց ի թագաւորեալ քաղաքն Կոստանդնուպօլիս»[1]։

Արևելյան Հայաստանից Բյուզանդիա փախած վտարանդիների թիվն այնքան մեծ է եղել, որ 578 թվականին երբ հաշտության բանակցություններ են տեղի ունեցել Պարսկաստանի և Բյուզանդիայի միջև, պարսիկները հարց են առաջադրել փախածներին վերադարձնելու մասին[2]։ Ըստ Հովհաննես Եփեսացու տեղեկության, բյուզանդական բանակը 576 թվականին պարսիկների դեմ վարած պատերազմի ժամանակ, Աղձնիքից տարել է մեծ թվով հայ բնակչություն և տեղավորել Կիպրոսում[3]։ Պրոկոպիոսը ևս վկայում է, որ մեծ թվով հայ բնակչություն է գերեվարվել բյուզանդիացիների կողմից Հուստինիանոս Առաջինի ժամանակ. «Հուստինիանոսը,— գրում է նա,—Սիտտայի և Բելասարիոսի գլխավորությամբ մտավ պարսիկների գերիշխանության տակ գտնվող Հայաստանը, ամայացրեց լայնածավալ երկիրը, գերի վերցրեց բազմաթիվ հայերի և նոր վերադարձավ»[4]։ Կայսրության որդեգրած բռնագաղթի այս քաղաքականության նպատակը ճիշտ հասկանալու համար անհրաժեշտ է ծանոթանալ Արևմտյան Հայաստանի քաղաքական վիճակի հետ, որը Բյուզանդիայի գերիշխանության տակ էր գտնվում։

Արևմտյան Հայաստանը, ինչպես հայտնի է, Բյուզանդիայի կողմից նվաճվելուց հետո մինչև V դարի 80-ական թվականները պահպանում էր իր ներքին անկախությունը։ Բյուզանդական գերիշխանության տակ անցած Մեծ Հայքի հարավ-արևմտյան նահանգների նախարարությունները, որոնք մի ընդհանուր անունով կոչվում էին «Սատրապական Հայաստան», գրեթե անկախ էին։ Նրանց նախարարներն իրենց տիրույթներում փոքրիկ թագավորներ էին. իրենք էին հայկական զորքերի և՛ հրամանատարները, և՛ վարչական կառավարիչները։ Նրանց վասալական կախվածությունը Բյուզանդիոնից արտահայտվում էր նրանով, որ վճարում էին նախապես սահ-

---

[1] A. A. Васильев, Византия и крестоносцы, СПБ, 1923, էջ 17։

[2] Georgii Cedreni, Historiarum compendium, էջ 437, 557 (հմմտ. Մ. Չամչյան, Պատմություն հայոց, հ. II, էջ 148)։

[1] Ստեփանոսի Ասողկան Պատմութիւն տիեզերական, Պետերբուրգ 1885, էջ 85։

[2] «Հանդէս ամսօրեայ», 1911, էջ 154։

[3] Հովհ. Եփեսացի, Եկեղեցական պատմություն, հ. VI, ժբ, 34 (Հմմտ. ՊՀԳ, հ. I, էջ 164)։

[4] Прокопий Кесарийский, История войн римлян с персами, СПБ 1876, I, 12.

մանված հարկը և պատերազմի ժամանակ պարտավոր էին կայսրության տրամադրության տակ դնել իրենց զորամասերը։

Հայ նախարարների իրավական այս վիճակը շարունակվեց մինչև Զենոն կայսրը (474—491)։ Սակայն կամաց-կամաց բյուզանդական արքունիքը որդեգրեց հայ նախարարությունների ներքին անկախությունը վերացնելու վճռական քաղաքականություն։ Պրոկոպիոս Կեսարացին վկայում է, որ Զենոն կայսրը զրկեց հայ նախարարներին ժառանգական իրավունքից և կարգադրեց, որ նախարարությունների կառավարչությունը հանձնվի Բյուզանդիայի պետական տնօրինությանը[1]։

Հայ նախարարությունները վերացնելու համար վճռական միջոցառումների դիմեց Հուստինիանոս Առաջինը։ Նա 529 թվականին Արևմտյան Հայաստանում զինվորական ռեֆորմ կատարեց. Մեծ Հայքի, Սատրապական Հայաստանի և Փոքր Հայքի իշխանությունները միավորելով կազմվեց զինվորական մի շրջան՝ մագիստրոսի հրամանատարության տակ։ 536 թվականին Արևմտյան Հայաստանում կատարվեց նաև վարչական բաժանում. Արևմտյան Հայաստանը բաժանվեց չորս վարչական միավորների՝ Առաջին Հայք, Երկրորդ Հայք, Երրորդ Հայք և Չորրորդ Հայք, որտեղ Հուստինիանոսը կառավարիչներ նշանակեց բյուզանդիային հավատարիմ պետական պաշտոնյաներին։ Այս ռեֆորմների վերջնական նպատակն էր, ինչպես իրավացի նկատել է պրոֆ. Ն. Ադոնցը, «Փշրել երկրի առանձնահատուկ հասարակարգը և հռոմեականացնել»[2]։

Բյուզանդիայի կիրառած այս քաղաքականությունը, բնական է, չէր կարող չառաջացնել հայ նախարարների դժգոհությունը. Երանցից ոմանք փորձեցին 548 թվականին Կոստանդնուպոլսում կազմակերպել Հուստինիանոսի սպանությունը։

Հայ դժգոհ խավերի վերաբերմունքը դեպի կայսրության վարած քաղաքականությունը հասկանալու համար ցուցանշական է այն խոսակցությունը երկու հայ իշխանների միջև, որը գրի է առել ժամանակակից և արքունիքի ներքին կյանքին լավատեղյակ պատմիչ Պրոկոպիոս Կեսարացին։ Իշխաններից մեկը՝ Արշակը, դատապարտում է իշխան Արտավան Արշակունուն այն բանի համար, որ նա ձեռքը ծալել, նստել է, այնինչ իր հայրենի երկիրը քարուքանդ են անում բյուզանդացիները։ «Այժմ քաջությունդ կորցրած նստել ես այստեղ վեհերոտ,— ասում է նա,— այնինչ մեր հայրենի երկիրը, բռնված ամենուրեք բյուզանդական պահնորդ զորքերով, հեծում է անլուր հարկերի ծանրության տակ»[1]։

Արևմտյան Հայաստանում VI դարում տեղի են ունենում մի շարք ապստամբություններ ընդդեմ Բյուզանդիայի։ Հայտնի է, որ 536 թվականին Փոքր Հայքի բնակչությունը հարձակվում է բյուզանդական պաշտոնեության վրա, սպանում պրոկոնսուլ Ակակիոսին և Փոքր Հայքն անկախ հայտարարում։ Բյուզանդացիների դեմ ապստամբություններ են տեղի ունենում Արևմտյան Հայաստանի այլ վայրերում ևս։ Բյուզանդական արքունիքը, սակայն, արյան մեջ ճնշում է այս ապստամբությունները և աշխատում հիմնովին ջնջել հայերի ներքին անկախության վերջին մնացորդները։

Ռազմական և քաղաքական ասպարեզներից մեկուսացած հայ նախարարները, բնական է, անգործ չէին կարող նստել իրենց տեղում, մանավանդ որ նրանց գործունեության համար լայն հեռանկարներ էին բացվել բյուզանդական բանակում և վարչական ապարատներում։ Ահա թե ինչու նրանցից շատերը, իրենց հետևորդներով և զորաբաժիններով, տեղափոխվում են Բյուզանդիայի բազուկ կենտրոնները և այդ նոր բնակավայրերում իրենց համար նոր հեռանկարներ փնտրում։

Այսպիսով, Հայաստանում ստեղծված անապահով վիճակը, Բյուզանդիայի կյանքի գրավչությունը, կայսրության՝ հայերի նկատմամբ վարած բռնագաղթի քաղաքականությունը, Սասանյան արքունիքի անլուր հալածանքները և այլն, ստիպում են հայ ժողովրդի մեծաթիվ զանգվածներին թողնել իրենց հայրենի բնակավայրը և գաղթել Բյուզանդիա, ուր համեմատաբար ավելի նպաստավոր պայմաններ կային՝ և՛ ֆիզիկական գոյությունը պահպանելու, և՛ աշխատելու ու հնարավոր նախաձեռնություն ցուցաբերելու համար։

Համենայն դեպս, IV դարի վերջերից սկսած հայ բնակչությունը մաս առ մաս սկսում է հեռանալ հայրենի երկրից։ Պրոֆ. Ն. Ադոնցն ուսումնասիրելով հայ ժողովրդի համար աղետաբեր այս երևույթը, վշտով արձանագրում է, որ «Հայությունը դանդաղ և կամաց շարժվում էր դեպի Արևմուտք»[2]։

Պրոֆ. Ն. Ադոնցն առաջին լուրջ ուսումնասիրողն է, որ նկատել է գաղթի այդ ողբերգական նշանակությունը հայ ժողովրդի

[1] Прокопий Кесарийский, О постройках (տես „ВДИ", 1939, № 4) III, I.
[2] Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, СПБ, 1908, էջ 201։

[1] Прокопий, Война римлян с готами, СПБ, 1876, VII. 32.
[2] Լեո, Հայոց պատմություն, հ. II, Երևան, 1947. էջ 181։

կյանքում. վերլուծելով հայ գաղթականությանը վերաբերող պատմական փաստերը, նա հանգել է հետևյալ եզրակացության. «Հայերի ցրվելը կայսրության մեջ, հայրենիքի տեսանկյունով, հասկանալի է, չի կարելի ընդունել որպես դրական երևույթ։ Արտագաղթը նորմալ և անվնաս է այն երկրի համար, երբ նա առաջանում է բնակչության խտացման կամ բնական աճի հետևանքով, իսկ կայսրությունը հայերից խլում էր ոչ թե ժողովրդի ուժերի ավելցուկը, այլ հակառակը, այն տարրերին, որոնք ավելի էին հարկավոր երկրի համար։ Այստեղ էին գալիս ավելի նախաձեռնող, կենսունակ ուժերը՝ այն մարդիկ, ովքեր օժտված էին այնպիսի շնորհքով, որ կարողանում էին կայսրության կյանքի տագնապալի ծովի մեջ իրենց պահել ակնառու բարձրության վրա»[1]։

Բյուզանդիայի առաջին հայ գաղթօջախները։ Բյուզանդիա գաղթած հայ բնակչության որոշ մասն առաջին հերթին զինվորագրվում էր։ Այս ուներ իր պատճառները. նրշված բնագավառը մասնագիտական առանձին դժվարությունների հետ չէր կապված, լեզու գիտնալու անհրաժեշտությունը չկար և այս աշխատանքը Բյուզանդիայում համեմատաբար ավելի բարձր էր գնահատվում և վարձատրվում, քան աշխատանքի մի այլ տեսակ։

Նշված պատճառներից բացի, հայ բնակչության զինվորականության ասպարեզ քաշողն այն հողակտորներն էին, որոնք որպես ծառայության վարձատրություն հատկացվում էին նրանց իրենց բանակաթեմերում։ Ստացած այդ հողակտորների վրա հայ զինվորականները բերում և տեղավորում էին յուրայիններին։ Այնպես որ, սխալված չենք լինի, եթե ասենք, որ Բյուզանդիա եկած հայ բնակչության զգալի մասը հողի հետ կապված այն զինվորականներն էին, որոնք Բյուզանդիայում կոչվում էին «ստրատիոտներ»։

Կայսրությունը գրկաբաց էր ընդունում իր բանակում հայ եղբայրասպանների և ամեն կերպ աշխատում հովանավորել նրանց։ Նրա այդ սիրալիրությունը բխում էր նրանից, որ հայ աղեղնավոր և հեծյալ զորամասերը մեծ հռչակ ունեին որպես մարտունակ և խիզախ զորամասեր, մի հանգամանք, որ հաստատում են բյուզանդական և հայկական բազմաթիվ հեղինակներ։ IV դարի բյուզանդական անանուն մի պատմիչ խոսելով հայերի մասին որպես ռազմիկ ժողովրդի, նշում է, որ նրանք կայսրությանը տալիս են «պատերազմական անփոխարինելի ձիավոր և աղեղնավոր մարտիկներ»[1]։ Հեթում պատմիչը ևս վկայում է, որ Միջագետքի հայ բնակչությունը բյուզանդական բանակին տալիս է հեծյալ և հետևակ քաջ զինվորականներ[2]։

Ֆրանսիացի բյուզանդագետ Շարլ Դիլը, հիմնվելով Բյուզանդիայում պաշտոնավարող հայ զինվորականների և վարչական աշխատողների մասին աղբյուրների տեղեկությունների վրա, նշում է հետևյալը. «Նախաձեռնող հայ ազնվականությունը կամովին ծառայության էր մտնում բյուզանդական բանակում... Բյուզանդիան Հայաստանից ստացել է հրաշալի շատ զորահրամանատարներ և գերազանց վարչական աշխատողներ։ Հայկական ծագում ունեին նույնիսկ որոշ կայսրեր. Հերակլը՝ VII դարում, Լեոն Հայկազնը՝ IX դարում, Ռոմանոս Լեկաբենոսը և Հովհաննես Ձմշկիկը՝ X դարում։ Բյուզանդիան Հայաստանին է պարտական այդ ժամանակ իր հրաշալի զինվորների համար, որովհետև հայկական ջոկատները X դարում համարվում էին բյուզանդական բանակի լավագույն զորամասերը։ Ուստի դժվար չէ հասկանալ, թե ինչո՞ւ կայսրության կառավարությունը երազում էր այդ բնակչությանը, որն ամբողջապես գտնվում էր բյուզանդական ազդեցության տակ, իր հպատակը դարձնել»[3]։

Հայկական խոշոր զորամասեր գտնվում էին Սիրիայում, Կիլիկիայում, Կապադովկիայում և Պոնտոսում՝ խնդիր ունենալով պաշտպանել կայսրության արևելյան սահմանները պարսիկներից։ Հայ բնակչության խոշոր կենտրոնացումներ առանձնապես կատարվել էին «Արմենիկոն» և «Անատոլիական» բանակաթեմերում։ Բանասեր Գ. Ֆնտրկլյանը, որ հանգամանորեն ուսումնասիրել է հայ զինվորական այդ բանակաթեմերը, հետևյալ եզրակացության է հանգել. «Հայ մարտավարժ նախարարները, ազատականներն իրենց զորականներով, հետևողներով, շինականներով կուգային հաստատվելու Արմանյակ և Անատոլիկ բանակաթեմերուն հողերը։ Հայաստանն ամենեն արդյունատու հողն էր զորք հավաքելու համար և ամենից քաջամարտիկ տեսակեն»[4]։

Ժամանակի ընթացքում, ինչպես կտեսնենք, այնքան շատ հայ բնակչություն է կենտրոնանում նշված վայրերում, որ բնակչության ճնշող մեծամասնությունը դառնում է հայությունը։

---

[1] И. Адонц, Армения в эпоху Юстиниана, էջ 205։

[1] „Византийский временник", № 8, էջ 293։

[2] Հեթում պատմիչ Թաթարաց, Վենետիկ, 1842, էջ 17։

[3] Ш. Диль, Основные проблемы византийской истории, М., 1947, էջ 140։

[4] Գ. Ֆնտրկլյան, Հայազգիներ ի Բյուզանդիոն (տես «Հայաստանի կոչնակ», 1935, էջ 354)։

Հայկական խոշոր մի զորամաս մշտապես գտնվում էր Կոստանդնուպոլսում։ Ըստ պատմիչների հաղորդած տեղեկության, մինչև Զենոն կայսրը (471—491) արքունի պահակազորն ամբողջապես կազմված է եղել հայ զինվորականներից։ Պրոկոպիոսն այդ մասին հետևյալ ուշագրավ տեղեկությունն է հաղորդում. «Կ. Պոլսի մյուս զինվորները, որոնց թիվը 3500 հոգուց պակաս չէր, հենց սկզբից ունեին արքունի պալատի պաշտպանության պաշտոն։ Նրանք կոչվում են սքուլարիոս։ Անցյալ ժամանակներում նրանք, սովորաբար, պետական գանձարանից ավելի բարձր ռոճիկ էին ստանում, քան մյուսները։ Նախկին կայսրերը նրանց ընտրում էին հայերից՝ ըստ քաջության և զինվորական վաստակի։ Բայց սկսած այն ժամանակից, երբ կայսերական իշխանության գլուխն անցավ Զենոնը (471—491), բոլորն էլ, նույնիսկ վախկոտները և ոչ զինվորականները, իրավունք ստացան այդ պահակազորի մեջ մտնելու։ Նրա մեջ դրամի ուժով մուտք գործեցին նույնիսկ ռազմագերիները»[1]։ Սակայն Զենոնի ժամանակ ևս սքուլարիոս կոչվող արքունական այս պահակազորում, որը բաղկացած էր 4000 հոգուց, հայերը դարձյալ զգալի թիվ էին կազմում։ Հետագայում, ինչպես կտեսնենք, երբ բյուզանդական գահի վրա սկսեցին բազմել ծագումով հայ կայսրեր, նրանք իրենց շրջապատեցին հայ ազգակիցներով՝ մեծ ուշադրություն դարձնելով նաև արքունի պահակազորի և Պոլսում գտնվող այլ զորաբաժինների վրա՝ աշխատելով այն համալրել հայ զինվորականներով։ Պետք է նկատի ունենալ, որ Կ. Պոլսում գտնվող զորամասերը վճռական դեր էին կատարում արքունիքի գահակալական ներքին խռովությունների ժամանակ։

Հայ զինվորական մի այլ օջախ VI դարում գտնվել է Իտալիայի Ռավեննա քաղաքում, որը Իտալիայի էկզարխության կենտրոնն էր հանդիսանում։ Հայկական այդ զորամասերը, հավանական է, Իտալիա են տեղափոխվել բյուզանդական հայ զորահրամանատար Ներսեսի հետ միասին, որին Հուստինիանոս Առաջինը 550 թվականին նշանակել էր բյուզանդական բանակի գլխավոր հրամանատար Իտալիայում՝ գոթերի դեմ վարվող ռազմական գործողությունների ժամանակ[2]։ Ներսեսին, ինչպես հայտնի է, հաջողվեց հաղթանակ տանել գոթերի դեմ, դուրս անել նրանց Իտալիայից և նշանակվել Իտալիայի կառավարիչ։ «552—553 թվականներից,— գրում է Մարքսը,— Իտալիան դարձավ Արևելյան Հռոմեական կայսրության պրովինցիա, նրան կառավարում էր Ներսեսը ընդհանրապես այնպես, ինչպես առաջներում կառավարում էին Օդոկրը և Թեոդորիխը»[1]։

Իտալիայի նվաճումից հետո Ռավեննայում գտնվել է հայկական երեք հեծելազոր գունդ, որոնք կոչվել են «Numerus Armeniorum»։ Նրանք խնդիր ունեին պահպանել Իտալիան «բարբարոսների» հարձակումներից[2]։ Հայկական այդ զորամասերի հայ հեծելազորի այս երեք գնդերը Ռավեննայում մնացել են ավելի քան երկու դար և ունեցել են իրենց հատուկ եկեղեցին ու պանթեոնը[3]։

Ամենից խոշոր հայկական զինվորական գաղթօջախները գտնվել են Թրակիայում։ Կայսրությունը, ինչպես տեսանք, ջանք ու եռանդ չէր խնայում հայ գաղթականությունն այստեղ բերելու և ռազմական խոշոր ճամբարներ ստեղծելու ուղղությամբ։ Բուլղարիայի խոշոր մասնագետներից մեկը, պրոֆ. Գ. Իբիշքը, գտնում է, որ VI դարում Ֆիլիպոպոլսի բյուզանդական զորամասի մեջ զգալի թիվ էին կազմում հայերը[4]։

Պրոկոպիոսի մի տեղեկությունից երևում է, որ VI դարում հայկական մի զորամաս գտնվել է Սիցիլիայում։ Այդ զորամասը, ըստ պատմիչի հաղորդած տեղեկության, ղեկավարել է Դորիֆեյ անունով բարձրաստիճան մի զինվորական[5]։

Հայ զինվորականների մի մեծ խումբ երկար ժամանակ գտնվել է Աֆրիկայի հյուսիսային շրջաններում և Եգիպտոսում։ Այդ մասին են վկայում մեզ հասած հունական և լատինական մի շարք արձանագրություններ, որոնք թողել են հայ բարերարները՝ իրենց կառուցած եկեղեցիների և կամ հասարակական այլ շինությունների վրա[6]։

Հայկական գաղթօջախների մասին տեղեկություններ կան նաև Պերգամում, Կրետե կղզում և այլ վայրերում։ «Հայ հեծելազորը,— գրում է Ն. Ադոնցը,— կռվում էր պետության հեռավոր մասերում կայսրության փառքի և ռազմական ձեռնարկումների հաջողությունների համար»[7]։

---

[1] Прокопий Кесарийский, Тайная история, XXIV (տես „ВДИ", 1938 № 4, էջ 16—18).

[2] Прокопий Кесарийский, Война римлян с готами, VIII, 15, 25.

[1] Архив Маркса и Энгельса, т. V, էջ 24։

[2] Ղ. Ալիշան, Հայ—Վենետ, Վենետիկ, 1896, էջ 13։

[3] Գ. Ֆնտոքլյան, Հայ իշխանազունք ի Ռավեննա (տես «Ամենուն տարեցույց»-ը, 1926, էջ 357—360)։

[4] «Փարոս», 1929 թ., տետր. 29, № 21։

[5] Прокопий, История войн римлян с вандалами, СПБ, 1891, I. 14:

[6] Հ. Հապեչյան, Աֆրիկեն արաբական տիրապետության նախընթացին (տես «Անահտի հուշարձան» Ա, էջ 113—116)։

[7] Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, էջ 204։

Քիչ չեն եղել հայ այն զինվորականների թիվը, որոնք կարողացել են բյուզանդական հողի վրա հասնել մինչև բանակի հրամանատարի և կամ ծովակալի պաշտոններին։ Մեր խնդրից դուրս է այդ զինվորականներով առանձին-առանձին զբաղվելը, սակայն նրանց գործունեության մասին որոշ պատկերացում տալու համար անհրաժեշտ ենք համարում միայն Հուստինիանոս I-ի ժամանակակից մի քանի անունների վրա կանգ առնել։

Հուստինիանոսի կայսրության վերջին տարիներին կազմված բանակացուցակից երևում է, որ բյուզանդական բանակի բարձր պաշտոններում առաջ են քաշված եղել մեծ թվով հայ զորահրամանատարներ, որոնք իրենց մոտ ունեցել են հայկական զորամասեր։ Հուստինիանոս Առաջինի գահակալության տարիներին Պրոկոպիոս պատմիչը հիշում է մի շարք հայ զորահրամանատարների անուններ, որոնք ունեցել են իրենց հայրենակիցներից կազմված անձնապահ զորամասեր[1]։

Ընկար ժամանակ բյուզանդական բանակի հրամանատարն է եղել Ներսես Պատրիկը։ Բյուզանդական պատմիչները նրան համարում են հանճարեղ զինվորական։ Այսպես, պարսիկների, գոթերի, վանդալների և ֆրանկների դեմ նրա վարած ռազմական գործողությունների պատմությունը գրի առնող հեղինակը՝ Ագաթիոս Միրինեցին, գրում է. «Դժվար է ինձ հավատալ, թե նախորդ դարերում քաջերից որևէ մեկն այնպիսի փառավոր, հրաշալի և մեծահռչակ հաղթություն տարած լինի, ինչպիսին Ներսեսն է»[2]։

543 թվականին, երբ բյուզանդական Արևելյան բանակի հրամանատար Վելիսարիոսը կայսրից նոր նշանակում ստացավ, իր փոխարեն բանակի հրամանատար նշանակեց Ագուլիս անունով մի հայի։ Վերջինս զինվորական բարձր պաշտոններում առաջ քաշեց մի շարք հայերի, որոնք իրենց հրամանատարության տակ ունեին հայկական զորամասեր. այսպես, օրինակ, կարելի է հիշատակել Սահակին, որը Ագուլիսի եղբայրն էր, Ներսես Կամսարականին, Գլակին, որի զորամասը, ըստ Պրոկոպիոսի տեղեկության, «Բնիկ իր մայրենի հայերեն լեզվից զատ ոչինչ չգիտեր» և այլն։

Աֆրիկայում գտնվող բյուզանդական բանակում հայկական փոքրիկ զորամասեր են ունեցել հայ բարձրաստիճան զինվորականներ Հովհաննես և Արտավան Արշակունիները, Հովհաննես Տրոգլիտը (Կրեսկոնիոս Կոիպպոսի դյուցազնավեպի հերոսը) և նրա

[1] Прокопий Кесарийский, Война римлян с готами, VII, 6, 16:
Օգտվել ենք Մ. Ջամչյանի «Հայոց պատմության» II հատորից, էջ 278։

եղբայր Պապոսը։ Հայկական զորամաս է ունեցել 557 թվականին Կովկասում գործող բյուզանդական բանակի հայ հրամանատար Հովհաննես Կամսարականը և ուրիշներ։

Պրոկոպիոսի մոտ հիշվում են հայ զորահրամանատարներ Ատարիոսը և իր եղբայր Ներսեսը, որոնք նոր են տեղափոխված եղել Բյուզանդիա Հայաստանից։ Նրանք ղեկավարելիս են եղել «Տասը հազարից ոչ պակաս քաջ և ռազմական գործում բացառիկ փորձ ունեցող մարտիկներից բաղկացած մի զորամաս»[1]։

Պրոկոպիոսը բարձր է գնահատում Արտավազդ անունով մի հայ զինվորականի սխրագործությունը, որն աչքի է ընկել «իր բացառիկ քաջությամբ» և «կատարել զարմանալի սխրագործություն»[2] մի ճակատամարտում։

Շարլ Դիլը ուշ շրջանում հանդես եկող հայ զինվորականներից արտակարգ գովեստով է խոսում Հովհաննես Գուրգենի մասին (X դ.), որին որպես զինվորական հանճար բյուզանդական պատմիչները համեմատում են Տրոյանոսի և Վելիսարիոսի հետ[3]։

Բյուզանդական հայ գաղթօջախների բնակչությունը միայն զինվորականներից չէր բաղկացած, այնտեղ եղել են նաև մեծ թվով գյուղացիներ, արհեստավորներ, առևտրականներ և սոցիալական այլ խավերի ներկայացուցիչներ։ Անգլիացի բյուզանդագետ Ռենսիմանը, իր «Բյուզանդիայի քաղաքակրթությունը» խորագրով աշխատության մեջ նկատել է, որ «Հայերը ոչ միայն իրեն (այսինքն՝ Բյուզանդիային—Ա. Ա.) պարգևել են բազմաթիվ կորովի հայեր, այլև՝ իրենց լավագույն գործի մարդկանց մեծ մասը)»[4]։

Հայ գյուղացիության մասին (դժբախտաբար մեր ունեցած) տեղեկությունները շատ կցկտուր են։ Նրանք գլխավորապես տեղավորված են եղել Կապադովկիայում, Պոնտոսում և Թրակիայում։ Այս մասին ավելի մանրամասն կխոսենք առջևում։

Կցկտուր տեղեկություններ են հասել մեզ նաև արհեստավորների մասին, որոնք հաստատված լինելով գլխավորապես քաղաքներում, ներգրավվեցին Բյուզանդիայի ներքին և արտաքին առևտրի մեջ։ Հայ արհեստավորները երևում են մետաքսագործության, ոսկերչության, քարակոփության և այլ բնագավառներում։

Գործունեության ավելի լայն ասպարեզ են ունեցել Բյուզան-

[1] Прокопий, Война римлян с готами, VI, 8, 6.
[2] Նույն տեղը, VII, 3, 10 և 18։
[3] Ш. Диль, Основные проблемы византийской истории, М.-ва, 1947, էջ 86։
[4] Steven Runciman (օգտվել ենք ՀԳԳ, հ. I, էջ 319)։

դիայում հայ առևտրականները։ Նրանք բնակվելիս են եղել գլխավորապես Բյուզանդիայի առևտրաշատ կենտրոններում և գործուն դեր կատարել մասնավորապես տարանցիկ առևտրի ասպարեզում։ Հայ խոշոր առևտրականների մեծ մասը կենտրոնացած է եղել Կ. Պոլսում, որը «Մինչ Հնդկաստանի ուղղագիծ ճանապարհի հայտնագործությունը, հանդիսանում էր հսկայական առևտրական շուկա»[1]։

Անանիա Շիրակացու ինքնակենսագրության մեջ բերած մի տեղեկությունից երևում է, որ Բյուզանդիան Արևելքի հետ կապող բանուկ ուղիներից մեկը հանդիսացել է Սև ծովը, որի ափին գտնվող Սինոպ նավահանգստային քաղաքում Շիրակացին հանդիպել է Պոլսից եկող իր հայրենակից մի խումբ առևտրականների[2]։

Ըստ Պրոկոպիոսի տեղեկության, VI դարում միջազգային առևտրի խոշոր կենտրոն էր հանդիսանում նաև Դվին քաղաքը։ «Այստեղ,— գրում է նա,— դաշտերը հարթ են և հարմար ձիու երթևեկության համար։ Բազմամարդ գյուղերը, որոնք գտնվում են իրար շատ մոտիկ, զբաղեցված են առևտրականներով, որովհետև Հնդկաստանից, Հարևան Իբերիայից և Պարսկաստանի գերիշխանության տակ գտնվող գրեթե բոլոր ժողովուրդներից, նույնիսկ հռոմեացիներից, բերում են այստեղ իրենց ապրանքները, որոնցով առևտուր են անում»[3]։

Տարանցիկ առևտրի բնագավառում մեծ դեր ունեին հայ առևտրականները, մասնավորապես բյուզանդահայ առևտրականները։ Բյուզանդագետ Շարլ Դիլը գտնում է, որ VI—VII դարերում Բյուզանդիայում գործող սիրիացի և հայ վաճառականները ընդարձակելով իրենց գործունեության բնագավառը, սկսել էին մուտք գործել նաև Աֆրիկա, Իտալիա, Սպանիա և Ֆրանսիա։ Հայ արհեստավորներից, ծառայողներից և առևտրականներից բաղկացած մի խոշոր համայնք գտնվել է Կ. Պոլսում։ Այստեղ հայ բնակչությունը կենտրոնացած է եղել Ս. Սոֆիայի տաճարի մոտ գտնվող թաղամասում, որի պատճառով տաճարի դռները կոչվել են «Հայկականք»։

Ստեփանոս Ասողիկն այդ մասին հետևյալ ուշագրավ տեղեկությունն է հաղորդում. «Ծու (Վարդան) երթեալ յանդիման լինէր թագաւորին Յուստիանոսի, որ զսուրբն Սոփիա շինեաց. և հաղորդի ընդ նմա օրինաց, և յիւր անուն անուանէ զաւագ դուռն սուրբ Սոփիայ, որ մինչև ցայսօր կոչի դուռն Հայոց»[1]։ (Հայկական մեծ ու փոքր քաղաքացիական գաղթավայրեր գոյություն ունեին Բյուզանդիայի մյուս քաղաքներում, որոնց վրա մենք հնարավորություն չունենք կանգ առնելու։

Հովհաննես Եփեսացի պատմիչը՝ խոսելով բյուզանդիայի հայ գաղթականության մասին, հայտնում է, որ Բյուզանդիա եկող հայ գաղթականները հաստատվել էին կայսրության բոլոր մասերում, և «Գլխավոր քաղաքներից շատերը հայկական գաղթօջախներ և եկեղեցական համայնքներ ունեին»[2]։

7 Բյուզանդիայի գաղթօջախները VIII—IX դարերում։

Խալիֆայության և Սասանյան Պարսկաստանի միջև Քադեսիայում 637 և Նահավենդում 642 թվականին տեղի ունեցող արյունահեղ պատերազմից հետո, երբ Սասանյան բանակները պարտություն կրեցին և երբեմնի հզոր Պարսկաստանն ընկավ խալիֆայության գերիշխանության տակ, բուֆերային վիճակ ունեցող Հայաստանի համար մրցակցող ախոյանների կազմը փոխվեց. նախկին պարսկա-բյուզանդական մրցակցությունը փոխարինելու եկավ արաբ-բյուզանդական մրցակցությունը։

Բյուզանդական բանակները առաջին անգամ բախվելով արաբական զորքերի հետ, պարտություն կրեցին։ Արաբական բանակի առջև բացվեցին Փոքր Ասիայի դարբասները։ Շուտով խալիֆայության զորաբանակները նվաճեցին փոքրասիական մի շարք երկրներ, այդ թվում՝ նաև Հայաստանը։

Խալիֆայության կողմից Փոքր Ասիան նվաճվելուց հետո, սկսվեցին արյունահեղ պատերազմները, որոնք տեղի էին ունենում կա՛մ Հայաստանում կա՛մ նրա հարևան երկրներում։ Արաբները ցանկանում էին ամրանալ Փոքր Ասիայում, իսկ բյուզանդացիները՝ տարբեր հաջողություններով, աշխատում էին կտրել արաբական զորքերի շարժման ճանապարհները։ Այս մրցակցության մեջ մինչև IX դարի 80-ական թվականները, հաջողությունը հիմնականում խալիֆայության կողմում էր։ Արաբները քայլ առ քայլ խորանում էին Բյուզանդիայի տիրապետության մեջ և նորանոր նվաճումներ կատարում։ Սակայն IX դարի ութսունական թվականներից սկսած բյուզանդական բանակների հուժկու հարվածների տակ արաբները սկսում են դանդաղորեն ետ նահանջել՝ ճիշտ այն ուղիով, որով առաջացել էին։

[1] К. Маркс и Ф. Энгельс. Сочинения, т. IX, էջ 382։

[2] Անանիայի Շիրակացւոյ համարոտի մատենագրութիւնք, Երևան, 1944, էջ 2։

[3] Прокопий Кесарийский, Война римлян с персами, II, 25.

[1] Ստեփանոս Ասողիկ, էջ 85։

[2] Հովհաննես Եփեսացի, Եկեղեցական պատմություն, II, էջ 18—24։

Բյուզանդիայի և խալիֆայության միջև տեղի ունեցող անընդմեջ պատերազմների ընթացքում տուժում էին փոքրասիական բոլոր ժողովուրդները։ Այս պատերազմների ընթացքում հայ ժողովուրդը տուժում էր կրկնակի չափով, որովհետև նախ՝ կռիվները մեծ մասամբ տեղի էին ունենում Հայաստանում և ապա հայ երիտասարդությունը, որը վարձվում էր բյուզանդական բանակներում, կռվի ընթացքում հսկայական կորուստներ էր տալիս։

Հայաստանի խալիֆայության գերիշխանության տակ ընկնելուց հետո ևս շարունակեց մեծ թվով գաղթականության հոսքը դեպի Բյուզանդիա։ Հայ ժողովրդի այդ նոր գաղթականության առաջացման պատճառը կապված էր գլխավորապես Հայաստանի նկատմամբ խալիֆայության վարած դաժան քաղաքականության հետ։

Խալիֆայությունը Հայաստանը նվաճելուց հետո, սկզբնական շրջանում, վարեց համեմատաբար մեղմ քաղաքականություն. նա պահպանեց հայ նախարարների ներքին անկախությունը, ժողովրդի վրա չափավոր հարկեր նշանակեց և ի հաշիվ վճարելիք հարկերի թույլ տվեց Հայաստանում պահել 15.000 հոգուց բաղկացած հայկական հեծելազոր։ Խալիֆ Մոավիան հայ նախարարների հետ նույնիսկ պայմանագիր կնքեց և խոստացավ ռազմական օգնություն ցույց տալ Հայաստանին, եթե նա հարձակման ենթարկվի։

Խալիֆայության սիրաշահելու այս քաղաքականությունը, իհարկե, աննպատակ չէր. նա ցանկանում էր հայերի զինական ուժն օգտագործել իր երկու ախոյանների՝ հյուսիս-արևմուտքում՝ Բյուզանդիայի և հյուսիս-արևելքում՝ խազարական խաքանատի դեմ։ Սակայն, հետագայում երբ չարդարացան այդ հույսերը, արաբներն իրենց քաղաքականության մեջ շրջադարձ կատարեցին և որդեգրեցին հայ նախարարների ներքին անկախությունը վերացնելու և ծանր հարկերով հայ ժողովրդին կեղեքելու քաղաքականությունը։

Խալիֆայության ձեռնարկած այս դաժան քաղաքականության կիրառողներից մեկը հանդիսացավ Հերթ ոստիկանը, որը 725 թվականին աշխարհագիր կատարեց Հայաստանում և ծանրացրեց հարկերը։ Ըստ Ղևոնդ պատմիչի հաղորդած տեղեկության, հարկերը վճարելու համար ժողովուրդը հարկադրված եղավ վաճառել իր լծկան անասունները և գույքը։ Չվճարող հարկատուի վզից կապարյա կնիք էին կախում և տանջում անասելի չարչարանքներով[1]։

[1] Պատմութիւն Ղևոնդեայ, ՍՊԲ, 1887, էջ 127։

Հարաբ ոստիկանները սկսեցին կիրառել Հայաստանի ներքին անկախությունը վերացնելու և նախարարներին ֆիզիկապես ոչնչացնելու դաժան քաղաքականություն։ Թե ինչպիսի անգութ միջոցների դիմեցին նրանք իրենց նպատակին հասնելու համար, բավական է բերել միայն մեկ օրինակ։ Հայաստանի արաբական ոստիկանը, խալիֆի հատուկ հրամանով, հայ նախարարներին հրավիրեց Նախիջևան՝ նրանց ցուցակները կազմելու և աշխատավարձ նշանակելու նպատակով, և բոլորին նա լցրեց Նախիջևանի ու նրան մոտիկ խրամի եկեղեցիները և կենդանի-կենդանի այրեց։ Այդ ոճիրը տեղի է ունեցել 706 թվականին։ Եվ այդ թվականը հայ ժողովրդի պատմության մեջ հայտնի է «կրակի թվականն» անունով։ Ազատասեր հայ ժողովուրդը, հասկանալի է, չէր կարող ստորև տանել խալիֆայության արյունոտ լուծը։ Նա մի շարք անգամներ ընդվզեց իր հարստահարիչների դեմ, զենքի դիմեց, սակայն հաջողություն չունեցավ։ Եվ ամեն անգամ այսպիսի ապրստամբությունների անհաջող վախճանից հետո, բազմաթիվ հայեր թողնում էին իրենց բնակավայրերը և գաղթում դեպի Բյուզանդիա։ Հարկ չկա այստեղ մեկ-մեկ թվարկել մեծ ու փոքր այն բոլոր գաղթերը, որոնք տեղի են ունեցել Հայաստանից դեպի Բյուզանդիա։ Խալիֆայության տիրապետության շրջանում, սակայն, այդ գաղթի ընդհանուր պատկերացումը տալու համար կանգ կառնենք մի քանի փաստի վրա։

Ստեփանոս Ասողիկը հայտնում է, որ բյուզանդական բանակը 688 թվականին, երբ մտել է Անդրկովկաս, վերադառնալիս ասպատակել է Հայաստանի 25 գավառները և 8000 ընտանիք գերի տարել ու վաճառել բյուզանդական շուկաներում՝ որպես ստրուկներ[1]։

Պետք է ասել, որ հայերին Հայաստանից դուրս հանելու այս քաղաքականությունը լիովին համապատասխանում էր նաև խալիֆայության ցանկությանը, որովհետև նա ևս շահագրգռված էր, որ Հայաստանը դատարկվի հայ բնակչությունից, որպեսզի հնարավոր լինի ազատված տարածությունների վրա արաբ բնակչություն բնակեցնել, որը ավելի վստահելի քաղաքական հենարան կարող էր հանդիսանալ իր համար։ Ի դեպ, 693 թվականին խալիֆայությունը Հուստինիանոս Երկրորդի հետ կնքած պայմանագրում հատուկ կետ է մտցրել այն մասին, որ Բյուզանդիան հանձն առնի արաբական տիրապետության տակ գտնվող քրիստոնյա բնակչությանը փոխադրել Փոքր Ասիա և Թրակիա՝ հնարավորություն տալով խալի-

[1] Ստեփանոս Ասողիկ, էջ 100։

ֆայուիյանն իր ցանկացած բնակչությանը բերել և բնակեցնել նրանց տեղը[1]։

VII դարի առաջին տասնամյակում գաղթականության մի մեծ խումբ Հայաստանից Մելիտինե, իսկ այնտեղից Ջորրորդ Հայք է փոխադրել Ֆիլիպիկ կայսրը (711—713)։ Այդ մասին Թեոֆան պատմիչը հետևյալ տեղեկությունն է հաղորդում. «Ֆիլիպիկը քշեց հայերին իրենց սեփական երկրից և հարկադրեց նրանց վերաբնակվել Մելիտինեում և Ջորրորդ Հայքում»[2]։ Այս գաղթականության մասին խոսում է նաև Միքայել Ասորին։ «Այդ ժամանակ հռոմեական կայսր Ֆիլիպիկը դուրս քշեց երկրից հայերին։ Նրանք դուրս եկան և ապաստան գտան արաբների մոտ։ Վերջիններս նրանց բնակեցրին Մելիտինեում, նրա մոտակայքում և Ջորրորդ Հայքում»։

752 թվականին Կոստանդին կայսրը արաբներից խլեց Կարինը և նրա մոտի գավառները, բայց չկարողացավ դրանք իր ձեռքում պահել և հարկադրված եղավ ետ նահանջել. այդ ժամանակ տեղի հայ բնակչությունը, վախենալով արաբների վրեժխնդրությունից, դիմեց կայսրին և խնդրեց իրեն բյուզանդական հպատակության տակ առնել ու տանել արևմուտք. «Եւ բազումք ի բնակչաց գաւառացն խնդրեալ յարքայէն, զի ընկենցեն զանուր յծոյ ծառայութեանն Իսմայելի յանձանց և գնասցեն զկնի նորա»[3]։ Կայսրը համաձայնվեց և բյուզանդական բանակը նահանջելիս հայ բնակչության մի մեծ զանգված գաղթեցրեց Բյուզանդիա։ «Թողին զերկիր ծննդեան իւրեանց,—վշտով շարունակում է Ղևոնդը—և հատուածեալք անկան ի կողմն արքային բարեպաշտի»[4]։

Սկզբնաղբյուրներում տեղեկություններ կան, որ 778 թվականին արաբա-բյուզանդական պատերազմի ժամանակ Լևոն Երրորդը հայ գաղթականության մի խոշոր խումբ Մարաշից տեղափոխել է Թրակիա[5]։

Ղևոնդը վկայում է, որ 775—780 թվականներին, երբ խալիֆայության՝ Հայաստանում կատարած կեղեքումներն այնպիսի չափերի հասան, որ ապրուստը Հայաստանում անտանելի դարձավ, ապա բազմաթիվ հայեր իրենց ֆիզիկական գոյությունը պահպանելու

1 Theophanis, I, *6185 (հմմտ. ՊՀԳ, հ. I, էջ 288)*։
2 „Византийский временник", VIII, *էջ 127*։
3 *Ղևոնդ, էջ 129*։
4 *Նույն տեղը*։
5 Никефор, Краткая история *(տես* „Византийский временник", *հ. III, էջ 377)*։

համար հարկադրված եղան գաղթել և ապաստանել Բյուզանդիայում[1]։

Այս գաղթականության ղեկավարներն են եղել Շապուհ Ամատունին և նրա որդին՝ Համամը։ Կոստանդին կայսրը գաղթող հայ բնակչությանը ընդունել է մեծ սիրով և բնակություն հատկացրել «ի բարւոք և յարգաւանդ երկրի»[2]։ Այս տեղեկությունները մեզ համար կարևոր են այն տեսակետից, որ այնտեղ հիշվում են հեծյալներն ու հասարակ ժողովուրդը, որոնց բնակություն է հատկացվում արգուվանդ մի շրջանում։

Բյուզանդական իշխանությունները VIII դարի վերջին քաոտրդում ստեղծված նոր իրադրության մեջ, գաղթող հայ բնակչությանը հողամասեր են հատկացնում գլխավորապես արաբական սահմանգլխի վրա։ Ընդանք ցանկանում էին հայ բնակչությունից պաշտպանողական հզոր թումբ ստեղծել խալիֆայության դեմ։ Բյուզանդիայի վարած այս քաղաքականության շնորհիվ VIII դարում հայ գաղթականության այնքան մեծ խմբեր կենտրոնացան Կապադովկիայում, Պոնտոսում և Տավրոսում, որ շուտով այդ վայրերի բնակչության մեծամասնությունը կազմեցին հայերը։ Բյունական պատմիչ Կեդրենոսը հայտնում է, որ Պոնտոսում այնքան շատ հայեր էին կենտրոնացել, որ այդ երկրի նախկին անունը մոռացության էր տրված և այժմ «Հայաստան է կոչվում»[3]։ Այս և այլ պատմիչների տեղեկությունների հիման վրա անգլիացի բյուզանդագետ Բիսըլը հանգել է այն եզրակացության, որ VIII—IX դարերում Փոքր Ասիայի բնակչության «իրական մեծամասնությունը հայեր են եղել»[4]։

Հայկական, ինչպես և սլավոնական խոշոր գաղթականական օջախների առկայությունը Բյուզանդիայում պարտավորեցնում էր կայսրությանը օրենսդրական որոշ պարզություն մտցնել հողօգտագործության իրավունքի մեջ, կարգավորել գյուղական ազատ համայնքների և վարձակալների հարաբերությունները։ Ահա այս նպատակն էր հետապնդում Լևոն Երրորդի հրապարակած «Nomos georgikos»-ը («Երկրագործության օրենքները»)։ Ըստ այդ նոր օրենքի, գաղթականները հողին ամրացված ազատ համայնքներ են ճանաչվում ի տարբերություն բնիկների, որոնց զգալի մասը զուրկ

1 *Ղևոնդ, էջ 168—169*։
2 *Ստեփանոս Ասողիկ, էջ 134*։
3 Georgii Cedrini *(հմմտ. ՊՀԳ, հ. I, էջ 249)*։
4 F. N. Bussell, The Roman Empire from 81 to 1081, *340*։

էին անձնական ազատությունից, և հողատիրության իրավունք են ստանում։

VIII դարում ևս Բյուզանդիայի հայ բնակչությունը սկսում է ավելի մեծ չափերով զինվորներ մատակարարել բյուզանդական բանակներին։ Հայ զորամասերը Բյուզանդիայի ներքին կյանքում վճռական ուժ են դառնում և սկսում ակտիվ միջամտություններ կատարել քաղաքական կյանքում։ Բյուզանդագետ Շլյումբերժեն, հիմնվելով Աբու-Ֆարաջի տեղեկության վրա, գտնում է, որ «այդ դարաշրջանում բյուզանդական լավագույն գնդերը հայերից էին կազմված»[1]։

Առանձնապես մեծ է եղել հայ զինվորականների դերը բյուզանդական բանակի հրամանատարության մեջ։ Բյուզանդական պատմագրությունը պահել է բազմաթիվ հայ բարձրաստիճան զինվորականների անուններ, որոնք խոշոր դեր են կատարել բյուզանդական իրականության մեջ։ Հայ այդ զինվորականների մեջ եղել են և այնպիսիները, որոնք իրավունք են համարել իրենց բյուզանդական գահի թեկնածուներ դառնալ և պայքարել դրա համար։

Բյուզանդական բանակում գործող հայ հրամանատարների մասին որոշ պատկերացում կազմելու համար ցուցանշական է հետևյալ փաստը. 778 թվականին, երբ բյուզանդական բանակները ռազմական գործողություններ սկսեցին խալիֆայության դեմ, Բյուզանդիայի փոքրասիական հինգ զորախմբերից չորսի հրամանատարները հայեր էին՝ Արտավազդ Մամիկոնյան, Տաճատ Անձևացի, Վարազտիրոց Բագրատունի և Գրիգոր-Մուշեղիկ Մամիկոնյան[2]։ Բյուզանդական բանակում ծառայող հայ զինվորականությունն այնքան մեծ դիրք ուներ, որ հաճախ նա միջամտում էր կայսրության գահակալության վեճերում և իր կամքը թելադրում։ Հայերը իշխող դիրքեր էին գրավում նաև արքունիքի վարչական ապարատներում, տնտեսության մեջ և այլն։ VIII դարում հայերը Բյուզանդիայում այնքան բարձր դիրքեր էին գրավում, որ անգլիացի հայագետ Բիսըլը Բյուզանդիայի պատմության այդ դարը համարում է «հայկական դար»[3]։ Մի այլ պատմաբան, Ֆինլեյը, մանրամասն ուսումնասիրելով Բյուզանդիայում ապրող հայերի կատարած գործունեությունը, հետևյալն է գրում. «Հելլենական ցեղը երկրորդական դիրք ուներ կայսրության մեջ։ Քաղաքական վար-

[1] Schlumberger, L'E'popée Byzantine, I, 115 (Հմմտ. Պ2Գ, հ. I, էջ 239)։
[2] Ն. Ադոնց, Պատմական ուսումնասիրություններ, Փարիզ, 1948, էջ 361-362։
[3] Bussell, The Roman Empire, էջ 340։

չության մեջ գերակշիռ դեր ունեին ասիացիները, մասնավորապես հայերը, որոնք ստանձնել էին նաև զինվորական բարձրագույն հրամանատարությունը։ Լևոն Իսավրացու (717—741) ընտանիքը, ասում են թե՝ հայկական ծագում ուներ... Լևոն Հինգերորդը (813—820) հայ էր... Ալեքս Մուշեղ, որ խեղդամահ եղավ 790 թվականին Կոստանդին Հինգերորդի հրամանով (780—797)՝ հայ էր, վարդան «Թուրք» կոչվածը, որ ըմբոստացավ Նիկոփորոս Առաջինի դեմ (802—811), հայ էր... Արշավիր, Լևոն Հինգերորդի աներհայրը հայեր էին...»[1]։

Բյուզանդական հայկական գաղթօջախները X—XI դարերում։

IX դարի 60-ական թվականներից սկսած արաբա-բյուզանդական պատերազմները թեվակոխում են մի նոր փուլ. Բյուզանդիան պաշտպանողական կռիվներից անցնում է հարձակողականի և քայլ առ քայլ արաբներին դուրս շպրտում Փոքր Ասիայից։ Բյուզանդիայի հարձակողական պատերազմների այս նոր շրջանը որոշ բյուզանդագետներ կապում են կայսրության Մակեդոնական կամ Հայկական դինաստիայի հետ, որը սկսում է Վասիլ, կամ, ինչպես հայերն էին նրան անվանում, Բարսեղ Առաջինից (867—886)։ Այս շրջանին է զուգադիպում նաև Բագրատունիների թագավորության հիմնումը Արևելյան Հայաստանում, որի առաջին գահակալն է հանդիսացել Աշոտ Առաջինը՝ 887 թվականից։

Բյուզանդացիներն իրենց լուրջ հարվածը խալիֆայությանը հասցրին 873 թվականին։ Բյուզանդական բանակը ռազմական իր այդ գործողությունների ժամանակ խորտակիչ հարված հասցրեց խալիֆաթի բանակներին և գրավեց Սամոսատը։ 878—879 թվականներին բյուզանդացիները նոր հաղթանակ տարան արաբների դեմ և գրավեցին Կիլիկիան ու Կապադովկիան։ Հետագայում կայսրությունը խալիֆայության դեմ վարած ռազմաարշավներում մեծ հաջողությունների հասավ առանձնապես X դարում[2]։ Բյուզանդական բանակները 928 թվականին վերցրին Թեոդոսուպոլիսը (Էրզրումը), 943 թվականին՝ Մելիտինեն, 944 թվականին՝ Եդեսիան, 949 թվականին՝ Գերմանիկեն, 957 թվականին՝ Ամիդը, 995 թվականին՝ Հալեպը և այլն։ Այսպիսով, արաբական երբեմնի աշխարհացունց բանակները, պարտություն պարտության ետևից կրելով, նահանջում են դեպի հարավ։

[1] G. Finlay, History of the Bizantine Empire (Հմմտ. Հ9Գ, հ. I, էջ 261)։
[2] Տե՛ս «Всемирная история», հ. III, М., 1957, էջ 220։

Բյուզանդական բանակում ռազմական այս գործողություններ մեջ աչքի են ընկնում նաև հայ զորահրամանատարներ Հովհաննեսը, Գրիգորը, Վարդ-Փոկասը, վերջինիս որդիները՝ Լևոնը, Կոստանդինը, Նիկոփորոսը և ուրիշներ։

Ռազմական գործողությունների մեջ այս շրջանում հայերը գործուն դեր են ունեցել։ Այդ երևում է ժամանակակից պատմիչների վկայություններից։

Կռիվներում իր զինվորական տաղանդով փայլել է Հովհաննես Կուրկասը։ Սրա մասին Գելցերը գրում է. «Հայազգի ընտիր զորապետ Հովհաննես Կուրկուասը 22 տարիների ծանր պատերազմներից հետո (920—942) տերության սահմանները առաջ տարավ Հալյուսից մինչև Եփրատ և Տիգրիս»[1]։

Բյուզանդիան իր ռազմական հաջողություններից հետո սկըսում է հատուկ ուշադրություն դարձնել հայերի վրա, որպեսզի գրավված վայրերը, որոնք առաջ դատարկվում էին բնակչություններից (մահմեդական բնակչությունը վախենալով բյուզանդացիներից մասսայաբար գաղթում էր նահանջող խալիֆայության զորքերի հետ), կրկին բնակեցվեն։ Եվ ահա բյուզանդական իշխանությունները եզրագծային, սահմանային այդ բաց գոտին՝ «akrites»-ներն ամրացնելու համար այնտեղ բնակեցնում էին քրիստոնյա ժողովուրդների, առաջին հերթին՝ հայերի։

Այս մասին ուշադրության արժանի է Միքայել Ասորու հետևյալ տեղեկությունը. «Այդ դարում (այսինքն՝ X դարում),—գրում է պատմիչը,—երբ հույները գրավում էին արաբներից Կապադովկիայի, Հայաստանի, Փոքր Հայքի և Սիրիայի քաղաքները, Մեծ Հայաստանից քշում բերում էին ժողովրդական մեծ բազմություն, նրանք հաստատվում էին այդ տեղերում և բազմանում»[2]։

Բյուզանդիայի՝ հայերի նկատմամբ վարած այս քաղաքականության մասին վկայում են նաև հույն-լատինական աղբյուրները։ Անհրաժեշտ ենք համարում բերել մի քանի տեղեկություններ։

Հովհաննես Չմշկիկը 962 թվականին Արևելյան բանակի հրամանատար եղած ժամանակ, երբ արաբներից գրավեց Սեբաստիայի շրջանը, այնտեղ, ինչպես և Եփրատի մոտերքում գրաված ամրություններում, հայեր բնակեցրեց[3]։ Հովհաննես Չմշկիկը, գրում է

---

1. Հ. Գելցեր, Համառոտություն բյուզանդական կայսրների պատմության, էջ 213։

2 Chronique de Michel le Syrien, էջ 79—80։

3 A. H. Sayce. Les Hétéens. Historie d'un empire oublie, Paris, 1891, էջ 250 (ՀԺՊ, հ. I, 240)։

Մարքսը, կազմել էր անգամ ծրագիր՝ Հայաստան արշավելու հա-
մար, բայց մահացավ և չկարողացավ իրագործել իր ծրագիրը[1]։
Նիկոփորոս Փոկաս կայսրը արաբներից երբ վերցրեց Մսիսը, Տա-
րոնը և Մելիտինեն, այդ վայրերից փախած մահմեդական բնակ-
չության տեղում դարձյալ հայեր բնակեցրեց։ Վասիլ Երկրորդը, հե-
տևելով իր նախորդների՝ հայերի նկատմամբ վարած քաղաքակա-
նությանը, 999 թվականին երբ գրավեց Սիրիան, մեծ թվով հայեր
բերեց և բնակեցրեց դատարկված այս վայրերում[2]։ Եվ այսպես,
անվերջ հայ բնակչություն տեղափոխելով նախկինում արաբա-
կան տիրապետության տակ գտնվող և այժմ Բյուզանդիային անց-
յած վայրերում, հայ բնակչության թիվն այնքան շատացավ Հյու-
սիսային Միջագետքում, Սեբաստիայում, Կապադովկիայում և Կի-
լիկիայում, որ տեղի բնակչության մեծամասնությունը հայերը
կազմեցին։ Նշված վայրերում այնքան շատ հայ բնակչություն է
կենտրոնացել, որ անհրաժեշտ է եղել հայ եկեղեցական առանձին
թեմ կազմել։ Ստեփանոս Ասողիկը վկայում է, որ ժամանակա-
կից Խաչիկ կաթողիկոսը (973—992) զբաղվել է այդ հարցով և
եպիսկոպոսական թեմ է ստեղծել։ Ասողիկն այս մասին գրում է.
«Իսկ յաւուրս Տեառն Խաչկայ հայրապետին Հայոց սփռեալ տա-
րածեցաւ ազգս Հայոց զկողմամբքն արևմտից, մինչև ձեռնադրել
նմա եպիսկոպոսունս յԱնտիոք Ասորւոց և ի Տարսոն Կիլիկեցւոց
և ի Սուլնդայ (Սելենտի քաղաքը՝ Իսավրայում—Ա. Ա.) և յամե-
նայն գաւառսն յայնոսիկ»[3]։

IX—X դարերում Բյուզանդիայի հայկական խոշոր գաղթ-
օջախներից էր Կոստանդնուպոլիսը։ Լևոն Գրամատիկոսի մի տե-
ղեկությունից երևում է, որ 967 թվականին Կ. Պոլսի քաղաքա-
բնակ հայերի և հույների միջև ընդհարում է տեղի ունեցել, որի
հետևանքով շատ վիրավորներ են եղել։ Պոլսի հայկական հատ-
վածն, անշուշտ, այնքան մեծ է եղել, որ նրանք համարձակվել են
քաղաքի բնակչության մեծամասնությունը կազմող հույների հետ
ընդհարվել։

IX—XI դարերում Բյուզանդիայի Արևելյան նահանգներում և
Կոստանդնուպոլսում կենտրոնացած հայ բնակչությունը շարունա-
կում է գործուն դեր կատարել կայսրության կյանքում։ Բյուզան-
դագետ Շարլ Դիլը, խոսելով մասնավորապես X դարում Բյուզան-

---

1 Архив Маркса и Энгельса, т. V, էջ 188։

2 Նույն տեղը, էջ 63—65։

3 Ստեփանոս Ասողիկ, էջ 256։

դիայում հայերի կատարած դերի մասին, հետևյալն է գրում. «X դարի ընթացքում կայսրության գործերում, ըստ երևույթին, զգալի դեր էին խաղում հայերը. նրանք տալիս էին զինվորներ, զորահրամանատարներ, վարչական աշխատողներ, դիվանագետներ, նույնիսկ կայսրեր»[1]: «Վասիլ I-ը,— շարունակում է նա,— գյուղացի էր հայկական ծագումով, որի ծնողները հարկադրաբար թողել էին իրենց հայրենիքը՝ ընկնելով դառն աղքատության մեջ»[2]: X—XI դարերում գահակալող Մակեդոնական դինաստիայի կապակցությամբ անհրաժեշտ ենք համարում մի քանի խոսք ասել հայկական ծագում ունեցող կայսրների մասին:

Բյուզանդիայի կայսրության Մակեդոնական կամ Հայկական կոչվող դինաստիան, ինչպես հայտնի է, տվել է աշքի ընկնող մի շարք կայսրեր, որոնք, ինչպես իրավացի նկատել է Շարլ Դիլը՝ «Շնորհիվ իրենց զենքի հզոր ուժի, ճարպիկ և ճկուն դիվանագիտության ու կառավարչական եռանդի, կարողացան իրականացնել իրենց երազանքը—գահակալության այդ շրջանը դարձնել բարձր վերածնության շրջան, Բյուզանդիայի երկարատև պատմության ամենափայլուն շրջաններից մեկը»[3]: Սակայն մենք չափազանցություն ենք համարում նույն հեղինակի արտահայտած այն կարծիքը, ըստ որի իբր թե Մակեդոնական դինաստիայի 150 տարիների ընթացքում հանդես եկող բոլոր կայսրերը «գրեթե առանց բացառության, հանդիսացել են հրաշալի մարդիկ»: Այս հարցում իրավացի ենք գտնում նշված հեղինակի «Բյուզանդիայի պատմության» ռուսերեն թարգմանության առաջաբանի քննադատությունը: Անհրաժեշտ է նկատել, որ ազգային սնապարծությամբ հիվանդ հայ պատմաբաններից ոմանք, բյուզանդական գահի վրա հայազգի կայսրեր փնտրելու մոլուցքով տարված տակն ու վրա են արել հայկական և բյուզանդական աղբյուրները՝ աշխատելով պարզել հայածին այդ կայսրերի ծննդաբանությունը: Ըստ որում նրանք առանց բացառության ներբողներ են հորինել հայազգի բոլոր կայսրերի շուրջը, փառաբանել նրանց «արքայական շուք»-ը, «արտակարգ տաղանդը» և այլն: Հայ ազգայնամոլ պատմաբաններից ոմանք այնքան են խորացել թթու շովինիզմի մեջ, որ հայտարարել են, որ իբրև թե Բյուզանդիան իր հարատևության համար պարտական է հայերին, որովհետև հայ ժողովուրդն է, որ իր բնածին հատկության անջնջելի դրոշմն է տպավորել բյուզանդական կայսրության վրա և նոր ջիղ ու արյուն ներարկել նրա պարտասած մարմնին: Այս անհեթեթություն է, բայց մի րոպե ընդունենք, որ մատնացույց արված երեսունից ավելի կայսրներն էլ ծագումով հայեր են եղել, բայց մի՞թե ազգային ծագումը չափանիշ կարող է հանդիսանալ նրանց գործունեության դրվատման: Բյուզանդիայի հայազգի կայսրերի գործունեությունը, հայկական գաղթօջախների կապակցությամբ գնահատելիս, մեր չափանիշը պիտի լինի այն, թե ի՞նչ են արել նրանք հայ ժողովրդի համար, ի՞նչ չափով են նրանք օգտակար եղել Հայաստանին՝ նրա օրհասական ծանր ժամին, ե՞րբ են նրանք սպեղանի դրել հայ ժողովրդի արյունոտ վերքի վրա, և վերջապես, ի՞նչ են արել նրանք բյուզանդական կայսրության համար: Եվ երբ մենք այս տեսանկյունով ենք մոտենում հարցին, ապա չենք կարող չնկատել այն մեծ վնասը, որ կրել է բազմատանջ հայ ժողովուրդը հայազգի վատանուն որոշ կայսրների կողմից: Փաստեր շատ կարելի է բերել անցյալի պատմությունից: Մորիկը (582—602), որը, ըստ Շապուհ Բագրատունու տեղեկության, իբր թե հայ է եղել, ինչո՞վ է նա հայտնի հայ ժողովրդի պատմության մեջ—իր ոճրագործ ծրագրով՝ արտաքսել հայ ժողովուրդն իր հայրենի երկրից: Լևոն Հինգերորդ կայսրը (813—820), որն անվիճելի՝ ծագումով հայ է եղել և անգամ «Հայազն» մականունն է ունեցել, ինչո՞վ է հայտնի հայ ժողովրդի պատմության մեջ—ժողովրդի բռնագաղթով: Թեոդորա կայսրուհին (842—855)՝ Մամիկոնյան նախարարական տան այս կին ներկայացուցիչը, բազմելով բյուզանդական գահի վրա, նշանավորվեց հայ ժողովրդի հիշողության մեջ նրանով, որ հարյուր հազարի հասնող պավլիկյանների՝ հայ, հույն և ասորի աշխատավոր ժողովրդին, կոտորել տվեց և բազմաթիվ հայ բնակիչների արտաքսեց Թրակիա: Եվ, վերջապես, Բարսեղ Երկրորդ Բոլգարասպանը (976—1027), որին նույնպես հայկական ծագում է վերագրվում, հայտնի է հայ ժողովրդի պատմության մեջ նրանով, որ 1021 թվականին եկավ Անդրկովկաս, ճնշեց Տարոնում բռնկված ապստամբությունը, ասպատակեց Հայաստանը և վրաստանն ու տեղական բնակչությունից կոտորեց շուրջ երկու հարյուր հազար հոգի: Չենք ուզում կանգ առնել մյուս վատանուն կայսրների գործունեության վրա ևս, որոնց նույնպես հայկական ծագում է վերագրվում:

---

[1] Ш. Диль, История византийской империи, М., 1948, էջ 75:
[2] Ш. Диль, Основные проблемы византийской истории, էջ 62:
[3] Ш. Диль, История византийской империи, էջ 10—11:

Բյուզանդական կայսրության գահը բարձրանալու և անվտանգ գահակալելու համար, ինչպես հայտնի է, վճռական դեր ուներ բանակը. նա էր գահ բարձրացնում և ցանկացած դեպքում գահընկեց անում անհամակիր գահակալին: Այդ շատ լավ էին հասկանում բյուզանդական կայսրերը և աշխատում բանակը համալրել իրենց համակիր զինվորականներով: Այս նկատառումով հայազգի կայսրերը լայն բաց էին անում զինվորական դռները իրենց հայրենակիցների առջև: Հայկական զորագնդեր էին ստեղծում կայսրության արևելյան, արևմտյան և հյուսիսային սահմանների վրա, աշխատում էին արքունիքի պահակազորը կազմել հայերից: Այսպիսով, իրենց գահը ամրացնելու համար նրանք Հայաստանից անվերջ քաշում, տանում էին երկրի ամենակենսական ուժերը:

Բյուզանդիայի վարած այս քաղաքականությունը, հասկանալի է, թուլացնում, կազմալուծում էր առանց այն էլ արյունաքամ եղած Հայաստանի ռազմա-քաղաքական հզորությունը: Եվ այս քաղաքականությունը, ինչպես կտեսնենք քիչ հետո, ճակատագրական ծանր հետևանքներ ունեցավ հայ ժողովրդի համար:

Անհրաժեշտ է նշել, որ ֆեոդալիզացիայի պրոցեսը Բյուզանդիայում ուժեղանալուց հետո, հայ ստրատիոտների մի մասը վերածվեց պատրիկների (ճորտերի): Այս, ինչպես կտեսնենք, մեծ դժգոհություն առաջացրեց հայ բնակչության մեջ, և դրանով պետք է բացատրել հայերի գործոն մասնակցությունը ինչպես սոցիալական շարժումներին, այնպես էլ կայսրության դեմ ուղղված օպոզիցիոն ուժերի ընդվզումներին: Կայսրությունը դժգոհելով հայ բնակչության ընդվզումներից, վերանայում է իր վերաբերմունքը նրանց նկատմամբ և աշխատում սահմանափակել այն բոլոր արտոնությունները, որոնք անցյալում տրված էին եղել նրանց:

Նիկոփորոս կայսրը (963—968) իր հրամաններից մեկում գանգատվում է հայ ստրատիոտներից, որ նրանք լավ չեն կատարում իրենց ծառայական պարտականությունները, ուստի նրանց պիտի փոխարինել «ոռճիկ ստացողներով»: Եվ նա սահմանափակում է նաև ստրատիոտների հողային իրավունքը: Նրա հրամաններից մեկում կարդում ենք. «Եթե հայ ստրատիոտներից մեկը հեռանալով կբացակայի երեք տարի, իսկ հետո վերադառնալով իր հողը կգտնի զբաղեցված փախստականի և կամ զինվորական ծառայության մեջ աչքի ընկած ստրատիոտի և կամ հանրօգուտ աշխատանք կատարող որևէ մեկի կողմից, ապա հայ ստրատիոտը, որը բացակայել է երեք տարի, իրավունք չունի իր հողամասը ետ առանալու»[1]:

Նիկոփոր Փոկասին հաջորդող Ջմշկիկ կայսրը (969—975) ցանկանալով վարձահատուցել լինել հայ զինվորականներին, որոնք վճռական դեր էին կատարել նրան գահ բարձրացնելու գործում, գահակալության հաջորդ իսկ օրը՝ 969 թվականի դեկտեմբերի 25-ին, հատուկ հրովարտակով Բյուզանդիայում ապրող հայերին ազատեց հարկերից: Սակայն այս ժամանակավոր մի ձեռնարկում էր, որով չբեթևացավ հայ աշխատավորության դրությունը:

Պավլիկյան շարժումը Հայկական գաղթավայրերում:

Բյուզանդիայի հայ գաղթօջախների պատմության կարևոր իրադարձություններից մեկը պավլիկյան շարժումն է, որը չնայած նախապես սկիզբ է առել, ձևավորվել Արևելյան Հայաստանում, բայց հետագայում բռնկվող վառոդի արագությամբ ծավալվել է Բյուզանդիայի հայաշատ վայրերում՝ սոցիալական բարենպաստ հող գտնելով հայ, հույն, ասորի և հարևան այլ ժողովուրդների աշխատավորական լայն մասսաների մեջ: Խոսելով հայ գաղթօջախների պատմության մասին, անկարելի է լռությամբ անցնել այդ շարժման կողքով:

Կղերական պատմիչները և պատմագրության ներկայացուցիչները, հասկանալի պատճառով, աշխատել են սևացնել պավլիկյաններին՝ ներկայացնելով նրանց որպես «անբարիշտ աղանդավորներ», «բիրտ վայրենիներ», «արյունռուշտ հրեշներ» և այլն: Անգլիացի պատմաբան Գիբոնը առաջին գիտնականներից մեկն է, որ հակառակ անցյալում քաղաքացիություն ստացած այս կարծիքների, պատմական անհերքելի փաստերի հիման վրա ցույց է տվել, որ իրականում, պավլիկյանները հանդիսացել են «ազատասեր մարտիկներ», ունեցել են առաջադիմական գաղափարախոսություն և «իրանց հեղափոխական հայացքներով կարողացել են ցնցել Արևելքը և լուսավորել Արևմուտքը»[2]:

Պավլիկյան շարժումը, ինչպես նշված է այժմ, նորագույն ուսումնասիրությունների մեջ, հանդիսացել է սոցիալական շարժում և ուղղված է եղել տեղական և օտարերկրյա աշխարհիկ և հոգևոր ֆեոդալական հարստահարիչների դեմ: Շարժման հետևորդները

---

[1] Գ. Ֆնտրքլյան, Հայազգիներ ի Բյուզանդիոն (տե՛ս «Հայաստանի կոչնակ» 1935, էջ 354):

[2] E. Gibbon, The History of the decline and fall of the Roman Empire, London, 1898, Vol VI.

քարոզել են գույքի և իրավունքի հավասարություն, ժխտել են Քրիստոսի աստվածային ծագումը, չեն ընդունել ծեսերը՝ մկրտությունը, կնունքը, հաղորդությունը, մերժել են սրբերի պաշտամունքը, խաչը, դեմ են եղել եկեղեցական նվիրապետությանը ու կալվածատիրությանը և այլն։

Պետք է սակայն նշել, որ պավլիկյան շարժումը լինելով հիմնականում սոցիալական շարժում, որոշ տեղերում միաձուլվել է ժողովրդա-ազատագրական շարժումների հետ և հանդես եկել համատեղ։

Մեզ հասած հին հայկական սկզբնաղբյուրների ուսումնասիրությունից երևում է, որ պավլիկյան շարժման նախնական ձևավորումը տեղի է ունեցել Արևելյան Հայաստանում VI դարում, և նրա անունը կապված է իր աղանդապետի՝ ծագումով հայ Պողոս Սամոսատցու հետ[1]։

«Գիրք թղթոց» կոչվող վավերագրերի ժողովածուի մեջ պահված մի փաստաթղթից երևում է, որ դեռևս 554 թվականին Դվինում Ներսես Բագրևանդցի կաթողիկոսի նախաձեռնությամբ գումարված եկեղեցական ժողովում պավլիկյանների շարժումը հայ կղերականության մտահոգության լուրջ առարկան է հանդիսացել[2]։

Համոզիչ չէ հայագետների ոմանց կողմից վերջերս առաջ քաշած այն թեզը, որ իբրև թե «Գիրք թղթոց»-ի մեջ հիշված պավլիկյանները՝ դրանք հանրածանոթ պավլիկյանները չեն, այլ Պողոս Սամոսատացու հետևորդները։

Հայ եկեղեցին շարժման առաջին իսկ օրից, խանդ ու եռանդ չի խնայել այն իր խանձարուրի մեջ խեղդելու համար։ Հայ եկեղեցու ցուցաբերած այս անհանդուրժողականությունը պավլիկյան շարժման նկատմամբ շատ ցայտուն դրսևորված է 719 թվականին Դվինում գումարված եկեղեցական ժողովի որոշման մեջ, ուր հատուկ կետ է նախատեսված պավլիկյանների դեմ։ Ժողովը հավատացյալ հոտին հանձնարարում է ամենադաժան պատիժներով պատժել պավլիկյաններին, խոշտանգել ոչ միայն պավլիկյաններին հարող անձանց, այլև նրանց, ովքեր կփորձեն փոքր չափով անգամ գթասիրություն ցուցաբերել պավլիկյանների նկատմամբ

---

[1] Ս. Մելիք-Բախշյան, Պավլիկյան շարժումը Հայաստանում, Երևան, 1953, էջ 129-149։

[2] «Գիրք թղթոց», Թիֆլիս, 1901, էջ 72։

կամ հասարակական հարաբերությունների մեջ կմտնեն նրանց հետ[1]։

Պավլիկյան շարժման մասսայական բնույթի մասին խոսում է նաև այն փաստը, որ Հովհան Օձնեցի կաթողիկոսը (717—728) հատուկ աշխատություն է գրել՝ «Ընդդէմ պավլիկյանների դեմ Պաւղիկեանց» վերնագրով։ Իր այս աշխատության մեջ կաթողիկոսը խոսում է պավլիկյանների մասին, որոնք նրա բառով ասած, «չոգան, ղօղեցին յոլորտս ուրեք աշխարհիս մերոյ»[2]։ Եթե պավլիկյանները հասարակական լուրջ ուժ չներկայացնեին, բնական է, նման աշխատության անհրաժեշտությունը չէր լինի։

Պավլիկյան շարժումն ավելի է ծավալվում VIII դարում։ Հայկական մատենագրության մեջ տեղեկություններ կան այն մասին, որ VIII դարի սկզբում պավլիկյանները տարածված էին ոչ միայն Հայաստանում, այլև հարևան Աղվանքում[3]։

Հայկական եկեղեցու գործադրած այս միջոցառումները սակայն, ի զորու չէին ճնշելու ժողովրդական հուժկու շարժումը, որը գնալով ավելի խորացավ և ծավալվեց։ Շարժման կենտրոնները Արևելյան Հայաստանից փոխադրվեցին Արևմտյան Հայաստան, իսկ այնտեղից՝ Բյուզանդիայի հայաշատ գաղթօջախները՝ լայնորեն տարածվելով նաև ասորի, հույն և հարևան այլ ժողովուրդների աշխատավորական շրջաններում։ Այսպիսով, պավլիկյան սոցիալական շարժումը ազգային նեղ շրջանակներից դուրս եկավ միջազգային լայն ասպարեզ։

VIII դարում, ինչպես հայտնի է, Բյուզանդիայի հասարական-տնտեսական կյանքում տեղի է ունենում գյուղական համայնքների մասսայական ճորտացումը։ Կայսրության արևելքում և արևմուտքում վարած պատերազմներն իրենց հետ բերում էին հարկերի և տուրքերի ծանրություն, իսկ այս ամենն ավելի էին խթանում գյուղի և քաղաքի աշխատավորական լայն շրջաններում սոցիալական շարժումների ծավալմանը։ Աշխատավորությունը բացահայտ ընդվզում էր հարստահարիչների դեմ և կամ հարում կայսրության դեմ ուղղված օպոզիցիոն ուժերին։

Մեր տեղեկությունները կայսրության սահմանների մեջ հանդես եկող պավլիկյանների մասին վերաբերում են VIII դարի 60—

---

[1] Կանոնգիրք Հայոց, Թիֆլիս, 1913, էջ 148-149։

[2] Յովհաննու Իմաստասիրի մատենագրութիւնք, էջ 39։

[3] Սամուէլի քահանայի Անեցւոյ Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1898, էջ 286։

80-ական թվականներին։ Նրանց մասին պատմական արժեքավոր սկզբնաղբյուր է հանդիսանում Պետրոս Սիցիլացու «Պավլիկյանների պատմությունը» խորագրով աշխատությունը, որը նա գրել է 869—870 թվականներին պավլիկյան շարժումը մոտիկից և հանգամանորեն ուսումնասիրելուց հետո. կայսրությունը նրան ուղարկել էր պավլիկյանների մոտ գերի ընկած սպաների փոխանակության համար բանակցություններ վարելու, որը և նրան հնարավորություն է տալիս հանդիպել պավլիկյան շարժման ղեկավարներին, ծանոթանալ պավլիկյան գաղափարախոսությանը և այլն։

Պետրոս Սիցիլացին պավլիկյան շարժման աչքի ընկնող առաջնորդներից է համարում Կոնստանդին Սիլվանին, որը, նրա ասելով, արտակարգ ազդեցություն է ունեցել պավլիկյան նոր սերընդի վրա։ Կոնստանդին Սիլվանի ռեզիդենցիան գտնվել է «Հայկական Սամոսատի Մանանաղ գյուղում»[1]։ Կոնստանդին Սիլվանից հետո շարժումը ղեկավարել է մի այլ աչքի ընկնող անձնավորություն՝ Սիմեոն Տիտը[2]։

Պետք է ասել, որ բյուզանդական արքունիքը եկեղեցու համեմատությամբ, պավլիկյանների նկատմամբ պակաս անհանդուրժողականություն չի ցուցաբերել։ Սկզբնաղբյուրներում տեղեկություններ կան այն մասին, որ Հուստինիանոս Երկրորդի կարգադրությամբ 690—695 թվականներին բավականին թվով պավլիկյաններ են բռնվել և այրվել խարույկի վրա։ «Արոսի մոտիկ,— գրում է Պետրոս Սիցիլացին,— խարույկ արեցին և նրա մեջ մեկեն վառեցին բոլոր պավլիկյաններին»[3]։ Հայտնի է նաև, որ բյուզանդիայի արքունիքում 726 թվականին հաստատված օրենսդրությամբ հանձնարարվում էր «բռնել պավլիկյաններին և սպանել նրանց սրով»[4]։

Պավլիկյանների դեմ կայսրության սկսած հալածանքները շարունակվում են հետագայում ևս։ Դրությունը փոքր-ինչ փոխվում է VIII դարի 20-ական թվականներին, երբ բյուզանդական գահն անցնում է Իսավրյան դինաստիայի ձեռքը, որը, ինչպես հայտնի է, հենվում էր ավելի աշխարհիկ ռազմա-հողագործական խավերի վրա։

Կայսերական նոր դինաստիան, Բյուզանդիայի ռազմական

[1] Petri Siculi, Historia..., էջ 1276։

[2] Նույն տեղում, 1282։

[3] Petri Siculi, էջ 1282—1283։

[4] «Сборник дакументов по социально-экономической истории Византии», М., 1954, էջ 110։

հզորությունը ուժեղացնելու նպատակով, ձեռնարկում է մի շարք միջոցառումներ, այդ թվում նաև վանական կալվածատիրությունը սահմանափակելու և կտրված հողամասերը զինվորականներին բաժանելու քաղաքականություն։ Պատկերամարտության շարժումը, որ սկսում է այդ ժամանակից, փաստորեն, այդ նույն քաղաքականությունն արտահայտող ձևերից մեկն էր։

Կայսրությունը իր որդեգրած այդ նոր քաղաքականության շահերից ելնելով, անհրաժեշտ է համարում վերանայել իր վերաբերմունքը դեպի պավլիկյանները և շատ ու քիչ հանդուրժողական վերաբերմունք ցուցաբերել նրանց նկատմամբ։

Սակայն կար մի այլ պատճառ ևս, որ տվյալ ժամանակաշրջանում Իսավրյան արքունիքին մոտեցնում էր պավլիկյաններին։ Պավլիկյան համայնքները մեծ մասամբ գտնվում էին Բյուզանդիայի արաբական սահմանի վրա և մարտական հզոր ուժ էին ներկայացնում, ուստի արքունիքը սիրաշահելով նրանց, ցանկանում էր այդ ուժերն օգտագործել խալիֆայության դեմ։

Անհրաժեշտ է նշել, որ VIII—IX դարերում պավլիկյան շարժումը միատարր բնույթ չի ունեցել։ Նրան հարած են եղել որոշ թվով սոցիալական միջին և բարձր խավերի ներկայացուցիչներ՝ առևտրականներ, զինվորականներ, պետական ցածրաստիճան պաշտոնյաներ և այլն։ Շարժումը փաստորեն բաժանված է եղել երկու թևերի, որի աջ թևը ավելի թեքված է եղել արքունիքի հետ բանակցելու և լեզու գտնելու կողմը։

Եվ, վերջապես, կար մի երրորդ պատճառ ևս, որ պավլիկյաններին մոտեցնում էր արքունիքին։ Հայտնի է, որ VII դարի երկրորդ կեսում փոքրասիական մի շարք շրջաններ ընկել էին խալիֆայության տիրապետության տակ։ Կայսրությունը խալիֆայության դեմ իր վարած պատերազմները աշխատում էր ներկայացնել որպես ազատագրական պատերազմներ, իսկ այդ նույնպես մոտեցնում էր ազատասեր պավլիկյաններին Իսավրյան դինաստիայի վարած քաղաքականությանը։

Բյուզանդական աղբյուրները տեղեկություններ են պահել այն բանակցությունների մասին, որոնք տեղի են ունեցել մի կողմից՝ Լևոն Երրորդի ու Գերմանիկոս պատրիարքի, իսկ մյուս կողմից՝ պավլիկյանների ղեկավար Գեներիոսի միջև։

Լևոն Երրորդի որդեգրած այս քաղաքականությանը հետագայում հետևում են Կոստանդին V Կոպրոնիմ (741—775) և Նիկեփոր (802—810) կայսրերը։

Պավլիկյանների համար Բյուզանդիայում ստեղծված հարաբերական այս խաղաղ շրջանում շարժումն ավելի է ընդարձակվում և ծավալվում։ Մեզ հասած ոչ լրիվ տեղեկություններով պավլիկյան համայնքներ գոյություն են ունեցել հետևյալ վայրերում՝ Սամոսատ (Եփրատի վրա), Մոպսուեստիա (Կիլիկիայում), Մելիտինե, Կոլոնիա, Անտիոք, Ամարա և Կաբալա (Թրակիայում), Արմենյակ թեմի բնակչության մեջ, Կ. Պոլիս, Սանարա (Հալիս գետից արևելք) և այլն։ Շարժման ծավալմանը նպաստում է հայ և ասորի բնակչության Փոքր Ասիայից փոխադրությունը դեպի Թրակիա։ Այս գաղթի մասին արժեքավոր տեղեկություններ է պահվել Գենեզիոսի մոտ։ Կոստանդին կայսրը, գրում է պատմիչը, 751—752 թվականներին, երբ արաբներից վերցրեց Մելիտինե և Թեոդոսուպոլիս քաղաքները, ձեռնարկեց տեղի բնակչության փոխադրությունը դեպի Թրակիա[1]։

Հայերին և ասորիներին Թրակիա փոխադրելու կայսրության այս քաղաքականությունը ավելի խթանեց պավլիկյան շարժման ծավալմանը, որովհետև Թրակիա գնացող գաղթականությունն իր հետ տանում էր նաև իր գաղափարախոսությունը։

Պավլիկյաններին սիրաշահելու կայսրության այս քաղաքականությունը սակայն, երկար չտևեց։ Պավլիկյան շարժման ծավալումը, եկեղեցական նվիրապետության դեմ պավլիկյանների որդեգրած մարտական դիրքը, աշխատավորության լայն շրջանում նրանց ունեցած հսկայական ազդեցությունը և այլն, ստիպեցին կայսրությանը վերանայել իր նախկին քաղաքականությունը և նորից սկսել հալածանքները պավլիկյանների դեմ՝ նպատակ ունենալով վերջնականապես արմատախիլ անել շարժումը։ Նոր քաղաքականության առաջին իրագործողը հանդիսացավ Միքայել կայսրը (811—812 թթ.)։ Նրա հրամանով Թրակիայում և Լիկաոնիայում սրահար են արվում և կոտորվում ոչ քիչ թվով պավլիկյաններ[2]։ Պավլիկյան շարժումը ճնշող դահճի դերում հանդես է գալիս Նիկեփորոս պատրիարքը։ Սկսվում են զինված կատաղի ընդհարումներ պավլիկյանների և բյուզանդական կազմակերպված բանակների միջև։ Միքայել կայսեր վարած հալածանքի այս քաղաքականությունը հետագայում շարունակում է Լևոն V կայսրը (813—820)։ Պատմական սկզբնաղբյուրներում տեղեկություններ կան այն մասին, որ Լևոնը 817 թվականին պավլիկյանների հետ ունեցած կռիվների ժամանակ, գերի վերցրած պավլիկյաններին փոխադրել է Թրակիա[1]։ Այս շարժման պատմության մեջ ուշագրավ փաստ է պավլիկյանների մասնակցությունը կայսրության դեմ ուղղված օպոզիցիոն ուժերի գլխավորած շարժումներին։ Հավաստի տեղեկություններ կան այն մասին, որ պավլիկյանները գործոն մասնակցություն են ունեցել Թովմա Սլավոնի գլխավորած ապստամբությանը՝ ընդդեմ Բյուզանդիայի։ Փաստորեն Թովմա Սլավոնի կռվող հիմնական ուժերը հավաքագրվել էին Արմենիկոն թեմում, որի բնակչության մեծ մասը հայեր էին և խմորված պավլիկյան գաղափարախոսությամբ։ Անհիմն չէ բյուզանդական պատմիչ Թեոֆանը, երբ գտնում է, որ Թովմա Սլավոնի ապստամբության շարժիչ ուժերը հանդիսանում էին «ստրուկները, որոնք իրենց զինված ձեռքը բարձրացրել էին իրենց տերերի վրա»[2]։ Պավլիկյանների՝ Թովմա Սլավոնի ապստամբությանը մասնակցելու վերաբերյալ որոշակի տեղեկություն է հաղորդում Գենեզիոսը։ Խոսելով Թովմայի բանակի մասին, նա նշում է, որ այնտեղ կային զինվորներ, «որոնք հետևում էին Մանիի (այսինքն՝ պավլիկյանների —Ա. Ա.) խայտառակ մոլորությանը»[3]։ Եկեղեցական պաշտոնական մատենագրի համար, բնական է, պավլիկյանների ուսմունքը «մոլորություն էր», այն էլ՝ «խայտառակ մոլորություն»։ Պավլիկյանների կայսրության դեմ վարած երկարամյա պատերազմների ընթացքում պավլիկյան աչքի ընկնող ղեկավարներից է հանդիսացել Սերգեյ Տիտը (801—835)։ Բյուզանդական պատմիչները նրան հիշում են Արմենյակ թեմի էկզարխին սպանելու կապակցությամբ։ Պատմում են, որ էկզարխը Արխոնիրի հանձնարարությամբ սկսում է հետապնդել իր թեմի պավլիկյաններին և ոչնչացնել նրանց։ Պավլիկյանների առաջնորդ Սերգեյ Տիտը, վրիժառության ցասումով լցված, կացինը ձեռին մտնում է էկզարխի բնակարանը և կտոր-կտոր անում նրան։ Էկզարխի սպանությունից հետո պավլիկյաններն անցնում են բյուզանդական սահմանը և մտնում արաբական տիրապետության մեջ։ Մելիտինեի էմիրը պավլիկյաններին բնակավայր է հատկացնում Արագուսում։ Հետագայում, երբ պավլիկյանները շատ են հավաքվում այստեղ, կառուցում են Տևրիկ նշանավոր քաղաքը։

Պետրոս Սիցիլացին պավլիկյանների նորակառույց քաղաքի մասին հետևյալ տեղեկությունն է հաղորդում. «Խորտակված այդ ժողովրդի ղեկավարն այն ժամանակ կարաբեասն էր։ Նրանց (այ-

[1] Genesii Regum, Bonnae, 1834, 122.

[2] Նորդան-Իվանով (Համմ. ՀԳՊ, հ. I, էջ 234)։

[1] Theophanis Continuatus, 53։

[2] Նույն տեղը, էջ 53։

[3] Genesii, Regum, էջ 32։

սինքն՝ պավլիկյանների—Ա. Ա.) թիվն Արագուսում այնքան շատացավ, որ նրանք այլևս չտեղավորվեցին։ Նա (այսինքն՝ Կարաբեասը—Ա. Ա.) եկավ և կառուցեց Տևրիկը, ուր և բնակեցրեց իր ժողովրդին... դրանով նա ցանկացավ մոտենալ Հայաստանին և Հռոմստանին (այսինքն՝ Բյուզանդիային)՝ նրանց, ովքեր ենթարկվում են իրեն։ Նա նրանց իր դաշնակիցները դարձրեց և օգտագործում էր»[1]։

Խալիֆայության կողմից պավլիկյաններին ապաստան տալու այս փաստը պատմագիտության մեջ սխալ մեկնաբանության ադրիթ է տվել։ Գտնվել են պատմաբաններ, որոնք այդ փաստի հիման վրա հանգել են սխալ եզրակացության, թե իբրև պավլիկյանների և խալիֆայության միջև կնքած է եղել ռազմական դաշինք։ Մեր երիտասարդ պատմաբաններից մեկը, վերջերս իր հրատարակած մի հոդվածում, այդ սխալ հետևության մեջ այնքան է խորացել, որ պնդում է, թե իբր արաբների և պավլիկյանների միջև ռազմական դաշինք է կնքված եղել դեռևս VII դարի կեսերից, այսինքն՝ արաբների Հայաստանը նվաճելուց անմիջապես հետո։ Նման մեկնաբանությունները, իհարկե, բոլորովին անհիմն են։ Այս սխալ տեղեկությունների գլխավոր մեղսակցությունն ընկնում է բյուզանդական պատմիչների վրա, որոնք ամեն կերպ աշխատում են պավլիկյաններին ներկայացնել որպես ազգի դավաճաններ, թշնամական ուժերին գործակցողներ և այլն, իսկ մեր ժամանակի դյուրահավատ պատմաբանները «օբյեկտիվորեն» կրկնում են վերոհիշյալ պատմիչներին։ Պավլիկյանների համար խալիֆայությունը նույնպիսի հարստահարիչ էր, ինչպիսին Բյուզանդական կայսրությունը։ Պավլիկյաններին խալիֆայության սահմանը բերողը ոչ թե բարեկեցիկ կյանք փնտրելու ձգտումն էր, այլ մահվան սարսափը։ Ըստ որում, անցնելով խալիֆայության տիրապետության սահմանը, նրանք ստրկորեն չէին ծառայում խալիֆներին, այլ աշխատում էին համախմբել իրենց ուժերը, բուժել վերքերը և պատրաստվել ինքնապաշտպանության։ Մենք փաստեր ունենք, որ Տևրիկում հաստատված պավլիկյաններն իրենց մոտ ընդունում էին ոչ միայն փախստականներ Հայաստանից և Բյուզանդիայից, այլև արաբական խալիֆայությունից։

VIII դարի պատմիչ Ղևոնդը տեղեկություններ է հաղորդում այն մասին, որ 748 թվականին, խալիֆայության դեմ Հայաստանում Գրիգոր Մամիկոնյանի ղեկավարությամբ բռնկված ժողովրդական պատերազմի ժամանակ, պավլիկյանները միացել և օգնել են ապստամբներին։ Ղևոնդը չնայած պավլիկյանների անունը չի տալիս, բայց այնպիսի ձևով է հիշում, որ կասկած չի մնում, որ խոսքը նրանց է վերաբերում։ Ապստամբները Պոնտոսում գտնված ժամանակ, գրում է նա, իրենց ընտանիքներով եկան և նրանց միացան «որդիք յանցսնաց», «մարդիկ, որոնք չեն վախենում ոչ աստծուց և ահ չունեն իշխաններից»[1]։

Պավլիկյանների դեմ պայքարող բյուզանդական գահակալներից վատթարագույն համբավն ունի Թեոդորան, Մամիկոնյանների նախարարական տան կին ներկայացուցիչը բյուզանդական գահի վրա, որին ուղղափառ եկեղեցին սրբերի շարքն է դասել այն բանի համար, որ նա ճնշել է պատկերամարտներին և վերականգնել պատկերապաշտությունը։ Պավլիկյանների նկատմամբ նրա կատարած դահճային դերի մասին պատմիչները հետևյալ տեղեկությունն են հաղորդում. 843 թվականին, երբ Մավրոպատումում բյուզանդական բանակը հաղթանակ տարավ պավլիկյանների դեմ, Թեոդորա կայսրուհու հրամանով սրի քաշվեց այնտեղ գտնվող ամբողջ բնակչությունը։ Սպանվածների թիվը, ըստ բյուզանդական պատմիչ Թեոֆանի Պատմության շարունակողի, հասնում էր հարյուր հազարի։ Այդ պատմիչը հետևյալն է գրում. «Թեոդորան ցանկանալով Արևելքում պավլիկյաններին ուղիղ հավատքի բերել և կամ արմատախիլ անել ու հեռացնել մնացածներին, այդ նպատակով նա պավլիկյանների դեմ ուղարկեց իր մագիստրոսներից մի քանիսին։ Բյուզանդական զորքերը նրանցից (այսինքն՝ պավլիկյաններից) ոմանց խաչեցին փայտի վրա, մյուսներին սրախողխող արին կամ ձգեցին ծովի հատակը։ Այդ եղանակով, ինչպես հաշվում են, զոհվեց հարյուր հազար մարդ։ (Թեոդորան) նրանց հարստությունը վերցրեց և հանձնեց կայսերական գանձարանին»[2]։ Արյունոտուշտ Թեոդորայի այս գազանությանը նախընթացը չունեցող մի ոճիր էր աշխատավորության դեմ։

Կատաղի պատերազմները պավլիկյանների և բյուզանդացիների միջև շարունակվում են հետագա տարիներում ևս։ Շարժման հետևողները ամրանում են Արևմտյան Հայաստանի և Սիրիայի անմատչելի լեռներում և անօրինակ քաջությամբ կռվում բյուզանդական բանակների դեմ՝ մի շարք անգամներ պարտության

[1] Petrii Sic., XLII.

[1] Ղևոնդ, էջ 123։

[2] «Сборник документов по социально-экономической истории Византии», М., 1951, էջ 123։

մատնելով նրանց։ Պավլիկյանների և բյուզանդական բանակների միջև արյունալի ճակատամարտեր տեղի են ունենում Բարսեղ Առաջինի գահակալության տարիներին (867—886)։ Այդ ժամանակ պավլիկյան շարժման ղեկավարն էր Խրիսոխիրը։ Պայքարի այս նոր փուլում հարձակման նախաձեռնությունը վերցնում են պավլիկյանները՝ գրավելով կայսրությունից ընդարձակածավալ մի տերիտորիա։ Պավլիկյանների կողմից սպառնացող վտանգն այնքան մեծանում է կայսրության համար, որ Բարսեղ կայսրը նամակ է ուղարկում Խրիսոխիրին, խոստանում է տալ ոսկի, արծաթ, թանկագին քարեր, միայն թե նա դադարեցնի իր հարձակումները։ Խրիսոխիրը նրան ուղարկում է հետևյալ համարձակ պատասխանը. «Եթե դու, կայսր, ցանկանում ես հաշտվել մեզ հետ, ապա հրաժարվիր քո իշխանությունից Արևելքում և իշխիր միայն Արևմուտքի վրա։ Իսկ եթե դու չուզենաս հրաժարվել, այն դեպքում մենք ինքներս կաշխատենք քեզ զրկել իշխանությունից»[1]։ Բարսեղ կայսրը 871 թվականին խոշոր ուժերով շարժվում է պավլիկյանների դեմ։ Սակայն այդ արշավանքում կայսրը խայտառակ պարտություն է կրում և հազիվ ազատվում գերի ընկնելուց։ Կատաղի մարտերը շարունակվում են հաջորդ տարին ևս։ Սկզբում հաղթանակ են տանում պավլիկյանները։ Հետապնդելով խուճապահար նահանջող կայսրության բանակին, պավլիկյանները հասնում են մինչև Անկարա։ Սակայն պավլիկյանները նահանջելիս պատշաճ ուշադրություն չեն գարձնում իրենց թիկունքի վրա, այդ պատճառով բյուզանդական բանակի կողմից շրջապատման մեջ են ընկնում և զգալի կորուստներ տալիս։ Այստեղ սպանվում է Խրիսոխիրը։ Բյուզանդական բանակները մտնում են Տևրիկ և պավլիկյանների մյուս քաղաքները ու ամրոցները և հաշվեհարդար տեսնում նրանց հետ։ Պավլիկյաններից ոմանց սպանում են, ոմանց գերի վերցնում։ Ըստ պատմիչ Ջոնարայի տեղեկության, «Բյուզանդական զորքերը շատերին գերի վերցրին և շղթայակապ ուղարկեցին կայսրին»[2]։

Բյուզանդական արքունիքում արտակարգ հանդիսավորությամբ են նշում պավլիկյանների դեմ կայսրության տարած հաղթանակը։ Պատմում են, որ կայսրը հանդեսի ժամանակ բերել է տալիս Խրիսոխիրի կտրված գլուխը և ի նշան վրիժառության, նրա վրա թաց է թողնում երեք նետ։

Ուշ շրջանի պավլիկյանների մասին կցկտուր տեղեկություններ են պահվել։ Ենթադրվում է, որ 872 թվականին կրած պարտությունից հետո Փոքր Ասիայի պավլիկյանների մի մասը տեղափոխվել է Հայաստան և ձուլվել այստեղ ծայր առած Թոնդրակյան աղանդավորական շարժման հետ։ Այդ մասին փոքրիկ ակնարկ ունի Գրիգոր Մագիստրոսը[1]։ Չի կարելի համաձայնել այն տեսակետի հետ, որ իբրև թե իններորդ դարի յոթանասնական թվականներին տեղի ունեցած պավլիկյանների շարժման ջարդից հետո նա այլասերվեց սովորական աստվածաբանական համայնքի։ Ճիշտ է, մատնացույց արված ջարդից հետո պավլիկյանները չկարողացան նախկին թափով ճակատ առ ճակատ կռվել բյուզանդական բանակների դեմ, բայց նրանք չհրաժարվեցին իրենց գաղափարախոսությունից և չվերածվեցին աստվածաբանական համայնքների։ Պավլիկյանները շարունակեցին օպոզիցիոն դիրքի մեջ մնալ պաշտոնական եկեղեցու նկատմամբ և պայքարել նրա դեմ։ Պատահական չէ, որ XI դարի բյուզանդական աղբյուրները խոսելով պավլիկյանների մասին, նրանց անվանում են «խռովարար ժողովուրդ» և անհրաժեշտ գտնում մեկուսացնել նրանց։

Սկզբնաղբյուրներում տեղեկություններ կան այն մասին, որ Հովհաննես Ջմշկիկ կայսրը Պոլսի պաշտպանությունը հանձնած է եղել պավլիկյան 300 հոգուց բաղկացած մի զորամասի։ Քաղաքը պաշտպանող պավլիկյանները, ըստ տեղեկությունների, սրի ուժով զինվորագրում էին իրենց աղանդի հետևորդներին, չէին հաշտվում տիրող սոցիալական կարգերի հետ և քարոզում էին դասակարգային անհաշտ պայքար։

XI դարում Թրակիայում ապրող պավլիկյանները մեծ թիվ էին կազմում, զբաղեցնում էին ամբողջ շրջաններ։ Նրանք այստեղ երկար ժամանակ պահեցին իրենց գոյությունը։ Կայսրությունը շարունակում էր այս խիզախ պավլիկյաններից զինվորներ հավաքագրել։ Բյուզանդական պատմիչ Աննա Կոմնինը հայտնում է, որ Ալեքսեյ կայսրը, երբ 1022 թվականին իր բանակների գլուխ անցած Իլլիրիա պիտի գնար, իր բանակում ուներ 2800 հոգուց բաղկացած պավլիկյան մի զորամաս։ Հետագա դարերում Թրակիայի և Մակեդոնիայի հայ պավլիկյանները, այնտեղ գտնված այլ համայնքների հետ միասին, ասիմիլյացիայի ենթարկվեցին։ Նրա գաղափարախոսությունը տարածվեց Բալկաններում և որոշ ազդեցություն գործեց բոգոմիլների գաղափարախոսության վրա։

[1] Genesii, 122.

[2] Johannis Zonarae, Epitome historiarum, vol. IV. Lipsiae, 1841, էջ 26։

[1] Տե՛ս Գրիգոր Մագիստրոսի թղթերը, Ալեք-պոլ, 1910, էջ 168։

Կայսրության քաղաքականությունը Հայաստանի նկատմամբ և հայ գաղթականության նոր հոսանքները դեպի Բյուզանդիա:

Հայ բնակչությունը Հայաստանից դուրս հանելու իր անմիտ քաղաքականությունը կայսրությունը շարունակում է նաև X—XII դարերում, այսինքն՝ այն ժամանակ ևս, երբ Հայաստանի սահմանների վրա արդեն երևացել էին սելջուկները և Բյուզանդիան կանգնել էր սոսկալի փորձության առջև: Այս ահավոր ժամին կայսրությունը փոխանակ հայ բնակչությանը համախմբելու իր հայրենի երկրում, կազմակերպելու նրա ռազմական ուժերը և դրանով ամրացնելու կայսրության Արևելյան սահմանները, շարունակում էր Հայաստանը հայ բնակչությունից դատարկելու իր անհեռատես քաղաքականությունը:

XI դարի վերջում Մերձավոր Արևելքում ստեղծված նոր իրադրության պայմաններում, երբ Հայաստանին սկսում էր սպառնալ սելջուկյան սարսափը, հայ բնակչության մեջ ավելի լայն ծավալ է սկսում ստանալ Հայաստանից հեռանալու, վերահաս վտանգից գլուխ ազատելու մտայնությունը: Սկսում է գաղթի մի նոր և խոշոր հոսանք դեպի Բյուզանդիա: Ըստ ոմում, Բյուզանդիա գաղթողներն այժմ այլևս առանձին անհատներ չէին, այլ ամբողջ համայնքներ: Սովորական էր դարձել հայ ժողովրդի համար վնասակար այն գործարքը, երբ այս կամ այն իշխանը բանակցություններ մեջ էր մտնում արքունիքի հետ, իր տիրույթը հանձնում կայսրությանը, նրա դիմաց հողեր ստանում Փոքր Ասիայի ներքին գավառներում և իր ենթակա բնակչության հետ միասին գաղթում նոր բնակավայր: Բյուզանդիան ընդառաջում էր հայ իշխաններին և քաջալերում հայերի մասսայական տեղափոխությունները, որովհետև նա այժմ վերցրել էր Հայաստանում և Վրաստանում գոյություն ունեցող մանր ավատական կիսանկախ իշխանությունները վերացնելու վճռական քաղաքականություն: Իր այդ քաղաքականությունը իրագործելու համար նրան անհրաժեշտ էր ճանապարհից վերացնել բոլոր տեսակի արգելքները, ուստի նա որդեգրում է տեղի քաղաքական միավորները կազմալուծելու և թուլացնելու քաղաքականություն: Նպատակին հասնելու համար Բյուզանդիան դիմում է ամեն տեսակի նենգ միջոցների՝ բռնության, սպառնալիքի, խարդավանանքի և այլն:

XII դարի հայ շրջահայաց դեմքերից մեկը՝ Ներսես Շնորհալին, Մանվել կայսրին (1143—1180) ուղարկած իր նամակում դատապարտում է Բյուզանդիայի պառակտողական այս քաղաքականությունը: Շնորհալին կայսրության դեմ բողոքում է այն բանի

համար, որ նա «ոչ միայն զբաժանեալս ոչ միաւորէ, այլ զմիաւորեալն պառակտէ ի միմեանց»[1]:

Հայկական մանր իշխանությունները վերացնելու և հայկական հողերը գրավելու իր առաջին փորձը Բյուզանդիան սկսում է Տարոնից: Ըստ XI դարի պատմիչ Ստեփանոս Ասողիկի տեղեկության, 966 թվականին, երբ մահանում է Տարոնի կյուրապաղատ Աշոտ Բագրատունին, բյուզանդական զորքերը մտնում են Տարոն և գրավում այն[2]: Բյուզանդացիներին չի հաջողվում գրավել միայն լեռնոտ Սասունը, որի բնակչությունը հնուց ի վեր չէր տեսել օտարի անարգ լուծը: Ասողիկի տեղեկություններից երևում է նաև, որ Բարսեղ կայսրը 998 թվականին Հայաստանից մեծ թվով գաղթականություն է տարել Մակեդոնիա և օգտագործել շինարարական աշխատանքներում: Կայսրության ուխտադրուժ այս քաղաքականության հաջորդ զոհը դառնում է Տայքը: 1001 թվականին Տայքի իշխան Դավիթ կյուրապաղատի մահվանից հետո, Բյուզանդիայի Բարսեղ Երկրորդ կայսրը հսկայական բանակով շարժվում է Տայք և գրավում այն՝ պատճառաբանելով, որ իբրև թե Դավիթը նախապես իր իշխանությունը կտակած է եղել Բյուզանդիային[3]: Վերադարձին նա տեղի հավատարիմ ազնվականներին պաշտոններ է տալիս, իսկ մնացածներին տեղափոխում Հունաստան[4]: Բյուզանդիայի տիրապետությունը Տայքում, սակայն, երկար չի տևում: Հենց որ բյուզանդական բանակը հեռանում է Տայքից, տեղի հայ և վրացի բնակչությունը ապստամբվում է, դուրս է անում երկրից բյուզանդական վելուկացուներին և երկիրն անկախ հայտարարում: Տարիներ հետո, երբ կայսեր գործերը կարգավորվում են, նա նորից գալիս է արևելք և արյունախանձ կատաղությամբ ավերում կարսը և տասներկու այլ գավառներ ու ոչնչացնում տեղի բնակչությանը[5]: Ըստ Յահյա Անտիոքացու տեղեկության, քրիստոնյա հորջորջվող այդ կայսրը, անխնայաբար կոտորել է մոտ երկու հարյուր հազար հայ և վրացի բնակչություն:

1021 թվականին Բյուզանդիան տիրում է նաև Վասպուրականին: Այդ տեղի է ունենում հետևյալ իրադրության մեջ: 1018 թվականին Վասպուրականի վրա հարձակվում են սելջուկները և որոշ ավերածություններ կատարում: Վասպուրականի իշխան Սենեքե-

---

1 Ներսեսի Շնորհալւոյ, թուղթ ընդհանրական, Երուսաղեմ, 1871, էջ 118:
2 Ստեփանոս Ասողիկ, էջ 183:
3 Արիստակես Լաստիվերցի, Պատմութիւն, Թիֆլիս, 1912, էջ 5:
4 Ստեփանոս Ասողիկ, էջ 278:
5 В. Розен, Император Василий Болгаробойце, էջ 67:

րիմ Արծրունին զգալով, որ չի կարող միայնակ կանգնել սելջուկների վիթխարի ուժի առջև, նախընտրում է բանակցությունների մեջ մտնել կայսրության հետ, նրան հանձնել Վասպուրականը և փոխարենը ստանալով Սեբաստիա և Լարիսա քաղաքները իրենց մոտակա շրջաններով, տեղափոխվել այնտեղ։ Նոր բնակավայրն է տեղափոխվում Վասպուրականի ամբողջ բնակչությունը։ Ջամչյանը տեղափոխված բնակչության թիվը հաշվում է չորս հարյուր հազար։ Գաղթող բնակչությունը կայսրությանն է հանձնում 8 քաղաք, 72 բերդ և 400 գյուղ[1]։

Միքայել Ասորին Վասպուրականի այս գաղթի մասին հետևյալն է գրում. «1300 թվականին (մեր ներկա թվականի 1021-ին— Ա. Ա.) սկսվեց հայերի գաղթը Մեծ Հայքից... Եվ Վասիլ կայսրն էր, որ հայերի ձեռքից առավ Սենեքերիմ թագավորի երկրները և դրանց փոխարեն տվեց Կապադովկիայի Սեբաստիան։ Նրանք (այսինքն՝ հայերը— Ա. Ա.) բազմացան այդ երկրում և այդտեղից տարածվեցին ողջ Կապադովկիայում, Կիլիկիայում և Սեբաստիայում»[2]։

Բյուզանդական արքունիքը, սակայն, չգոհացավ այս ամենով։ Նա հայ ժողովրդի նկատմամբ ձեռնարկեց քստմնելի մի այլ ոճիր. աշխատեց մարել հայերի քաղաքական անկախության վերջին ջահը Շիրակում, որը դեռ պահում էին Բագրատունիների ֆեոդալական տան վերջին շառավիղները։

Կայսրությունը իր այս ծրագիրը իրագործելու համար դիմում է բռնության. բյուզանդական բանակը հարձակվում է Շիրակի վրա և շրջապատում Անին։ Տեղացիները հերոսական դիմադրություն են ցույց տալիս։ Տեսնելով, որ անհնարին է իր ծրագիրն իրագործել բռնությամբ, կայսրությունը դիմում է իրեն հատուկ նենգության՝ հայ դավաճան իշխանների միջոցով խաբեությամբ Բյուզանդիա է բերում Բագրատունիների վերջին գահակալին՝ Գագիկին, նրանից վերցնում Անի քաղաքի բանալիները, իսկ իրեն աքսորում փոքրասիական Պիզու քաղաքը, ուր և հայ աքսորական թագավորը ինքնասպանությամբ վերջ է տալիս իր կյանքին։

Ռուս նշանավոր գիտնական Ֆ. Ուսպենսկին՝ անդրադառնալով բյուզանդական արքունիքի Հայոց Գագիկ թագավորի դեմ սարքված դավադրությանը, հետևյալն է գրում. «Չի կարելի առանց վրդովմունքի կարդալ ազատ երկրի (այսինքն՝ Հայաստանի— Ա. Ա.) այդ վերջին ներկայացուցչի՝ Գագիկ թագավորի պատմությունը, որը շրջապատված դավաճաններով ու մատնիչներով, անգիտակցաբար գնում էր իր առջև լարված թակարդի ճանապարհով»[1]։ Անիում կենտրոնացած հայ հայրենասերները, վահրամ Պահլավունու ղեկավարությամբ փորձում են թույլ չտալ բյուզանդացիներին մուտք գործել մայրաքաղաք, հերոսաբար պաշտպանում են այն, բայց ոչ մի տեղից օգնություն չստանալով, հարկադրված են լինում 1045 թվականին զենքը վայր դնել և Անին հանձնել բյուզանդացիներին։

Բյուզանդական արքունիքի կողմից Հայաստանի անկախությունը վերացնելու այս փաստը անվիճելիորեն ապացուցում է, թե որքան անհեթեթ է արևմտաեվրոպական որոշ պատմաբանների զարգացրած այն «տեսությունը», որ իբր թե բյուզանդական կայսրները մարդասիրական բարձր գաղափարներով տոգորված, հովանավորել են հայ ժողովրդին։ Անիի անկումից հետո, 1046 թվականին, Բյուզանդիա է տեղափոխվել նաև Գրիգոր Պահլավունին իր հետևորդներով։ Նա Բյուզանդիային է հանձնել Բջնին և իրեն ենթակա գյուղերը և փոխարենը կալվածքներ ստացել Միջագետքում։ Հետագայում Գրիգոր Պահլավունին մագիստրոսի կոչում է ստացել և նշանակվել բյուզանդական բանակներից մեկի հրամանատար։

Անդրկովկասի ռազմա-քաղաքական ուժերը պառակտելուց և թուլացնելուց հետո, բյուզանդական արքունիքը Կոստանդին Մոնոմախի նախաձեռնությամբ՝ պետական ծախսերը թեթևացնելու գծով հաշիվներից ելնելով, բանակից ազատեց հիսուն հազար հայ և վրացի վարձու զինվորներ։ Սելջուկյան ահռելի սպառնալիքի առջև կանգնած Բյուզանդիան փոխանակ ամրացնելու իր արևելյան սահմանները, անմտաբար ավելի թուլացրեց այն։

Այսպիսով, բյուզանդական կայսրությունը իր անհեռատես քաղաքականությամբ հայ բնակչությանը դուրս հանելով իր հայրենի երկրից, թուլացնում էր նրա պաշտպանությունը և դրանով ահռելի վնաս հասցնում ո՛չ միայն Հայաստանին, այլև հենց իրեն՝ Բյուզանդիային։ Իր կատարած ճակատագրական սխալը նա զգաց հետագայում, բայց զգաց բավականին ուշացած, երբ արդեն հնարավոր չէր թույլ տված սխալն ուղղել։

Հայ պատմիչներից մեկը՝ Մատթեոս Ուռհայեցին, որն ակատես է եղել Բյուզանդիայի այս քաղաքականությանը և նրա ծանր հետևանքներին, հետևյալ մեղադրական խոսքերն է ուղղում

[1] Տես Մ. Ջամչյան, Պատմություն Հայոց, հ. Բ, էջ 903։

[2] Michel le Syrien, t. III, էջ 33։

[1] Ф. Успенский, Истории византийской империи, т. III, էջ 52։

կայսրությանը. «Ո՛վ կարասցէ մի ըստ միոջէ պատմել զկորուստ բարկութեանն և զլաց ապաշաւանաց տանս Հայոց, զորս յանդիմարշտութենէ... զօրացն թուրքաց կրեաց յանտէրութենէն ի սուտ պահապանացն ի տկար և ի թուլամորթ վատ ազգէն Յունաց, վասն զի մի առ մի քակեալ հանին զքաջ զօրականսն ի տանէն Հայոց, զորս հանին յարկաց և ի գաւառաց։ Եւ բարձեալ խափանեցին զաթոռ թագաւորութեան Հայոց. քակեցին զգանկ պահպանութեան զօրացն և զօրավարացն. և ազգն Հոռոմոց իւրեանց անուն քաջութեան զանդարձ փախչիլն արարին պարծանք. նմանեցան վատ հովուացն, զի յորժամ զգայլն տեսանէ փախչի»[1]։ Մի այլ պատմիչ, Միքայել Ասորին, զայրույթով քննադատում է Բյուզանդիայի այս անխորհուրդ քաղաքականությունը և գտնում է, որ այդ քաղաքականության հետևանքով ստեղծվեցին նպաստավոր պայմաններ սելջուկների համար, որոնք կարողացան թափանցել Փոքր Ասիա և հաստատվել այնտեղ[2]։

Հայաստանը միջին դարերում բազմաթիվ բռնի կամ կամովին գաղթեր է տեսել, սակայն դրանցից ոչ մեկն իր ծավալով, ժամանակի տևողությամբ և հետևանքների ծանրությամբ այնքան խորտակիչ, այնքան աղետաբեր չի եղել հայ ժողովրդի համար, որքան հայ գաղթականության առաջնեկը՝ արտագաղթը դեպի Բյուզանդիա։ Տարագիր հայ բնակչության համար Բյուզանդիան հանդիսացել է անհատակ մի ծով, ուր ճնացել և լուռ խորտակվել են բազմահազար հայ գաղթականներ։

Հայ բնակչության արտագաղթը դեպի Բյուզանդիա ճակատագրական է եղել ո՛չ միայն հեռացողների, այլև հայրենիքում մնացողների համար, որովհետև այդ արտագաղթերը արյունաքամ են արել Հայաստանը, խլել են նրա կենսունակ ուժերը և դուռ բաց արել օտարերկրյա թշնամու առջև։

Սելջուկները, ինչպես հայտնի է, մի շարք արշավանքներից հետո գրավեցին ամբողջ Անդրկովկասը։ 1065 թվականի օգոստոսի 16-ին բնակավ Բագրատունյաց Հայաստանի մայրաքաղաք Անիին։ Բյուզանդացիները փորձեցին դիմադրել սելջուկներին, բայց՝ անհաջող. 1071 թվականին Մանազկերտի մոտ սելջուկների հետ ունեցած ճակատամարտում բյուզանդացիները խայտառակ պարտություն կրեցին և Ռոմանոս Դիոգենես կայսրը գերի ընկավ։ Սելջուկները մտան Փոքր Ասիա և հաստատվեցին այնտեղ։ Հայաստանը հիմնովին ավերածության ենթարկվեց։ Հայ բնակչությունը մեծ զանգվածներով սկսեց գաղթել դեպի Արևմուտք՝ դեպի Կապադովկիա, Բյուզանդական Միջագետք և Կիլիկիա։ Գաղթականական մի այլ հոսանք Հայաստանից շարժվեց դեպի Վրաստան, իսկ այնտեղից՝ դեպի հյուսիս՝ դեպի Մերձվոլգյան Բուլղարիա, Ղրիմ, Կիևյան Ռուսաստան և այլ վայրեր։ Հայաստանի բնակչությունը նոսրացավ և ստրկական վիճակի մեջ ընկավ նոր տիրակալների արյունոտ լծի տակ։ Արիստակես Լաստիվերտցին խոսելով սելջուկյան այդ արհավիրքի մասին գրում է, որ սելջուկները պղծեցին և ավերեցին մեր երկիրը ոչ թե մեկ անգամ, այլ նոսկի։ Ամեն անգամ նրանք վերադառնում էին միևնույն տեղերը, մինչև որ երկիրը զրկվեց բնակչությունից և դադարեց անասունների բառաչը։ Քաղաքական այս խառնակ և հայ ժողովրդի այս բախտորոշ շրջանում վճռական միջոցների դիմեցին Փոքր Հայքի, Կապադովկիայի, Միջագետքի և Կիլիկիայի հայ իշխանները։ Նրանք համախմբվեցին Փիլարտոս Վարաժնունու շուրջը և նրա ղեկավարությամբ կռվեցին սելջուկների դեմ՝ որոշ ժամանակ կանգնեցնելով նրանց առաջդարժումը։ Հայկական այս ուժերը փորձեցին Փոքր Ասիայում ստեղծել բոլորովին անկախ հայկական իշխանություն։ Սակայն հայկական այդ փոքրաթիվ ուժերն ի զորու չգտնվեցին կռվելու երկու ճակատում—բյուզանդացիների և սելջուկների դեմ։

Հայ ժողովրդի ինքնապաշտպանությունը կազմակերպելու և քաղաքական անկախություն ձեռք բերելու գործում հաջողությամբ պսակվեցին Կիլիկիայի հայության ջանքերը, որոնք XI դարի ութսունական թվականներին Ռուբեն իշխանի գլխավորությամբ ստեղծեցին Կիլիկիայի անկախ հայկական իշխանությունը, իսկ 1198 թվականին՝ թագավորությունը հանձին Լևոն Առաջինի։ Կիլիկիայի հայ թագավորությունը շարունակեց իր անկախ գոյությունը մինչև 1375 թվականը։

Բյուզանդիայի փոքրասիական գաղթօջախները համախմբվելով Կիլիկիայի շուրջը, շատ ու քիչ հաջողությամբ, կարողացան պահպանել իրենց ֆիզիկական գոյությունը և ասիմիլյացիայի չենթարկվեցին։

Բոլորովին այլ և տխուր ճակատագիր ունեցան Կ. Պոլսի և Թրակիայի հայ գաղթօջախները, որտեղ XII դարից սկսած տեղի է ունենում հայ հատվածների ասիմիլյացիան։ Այստեղի հայերը մասսայաբար հունադավանությունն են ընդունում, փոխում են իրենց լեզուն և 1453 թվականին հայկական շատ քիչ հատված-

[1] Մատթէոս Ուռհայեցի, էջ 135։
[2] Michel le Syrien, t. III, էջ 198։

ներ էին պահպանում իրենց գոյությունը, երբ թուրքերը գրավեցին Պոլիսը։ Պատմական աղբյուրներում տեղեկություններ կան, որ մինչև Պոլսի գրավումը թուրքերի կողմից, այնտեղի հայկական հատվածների կրոնական ղեկավարությունը գտնվում էր երկու եպիսկոպոսների ձեռքին՝ Հովհաննես եպիսկոպոսի, որը հովվել էր Թրակիայի, Հունաստանի և Պոլսի շուրջը եղած հայերին և Եսայի եպիսկոպոսի, որի հովանավորության տակ էր գտնվում միայն Պոլսի հայությունը[1]։

Պոլսում և նրա շուրջը գտնվող հայության համար անչափ ծանր ողբերգություն էր Պոլսի գրավումը, որի ժամանակ աշխարհահռչակ այս քաղաքում սպանվեցին, կողոպուտի ենթարկվեցին և աքսորվեցին քաղաքի բնակիչների հսկայական զանգվածներ, այդ թվում նաև մեծ թվով հայեր։ Ժամանակակից հայ ողբերգակ տաղերգուներից մեկը՝ Աբրահամ Անկյուրեցին իր չափածո «Ողբ»-ի մեջ խոր վշտով նկարագրել է Պոլսի անկումը և քրիստոնյա բոլոր ժողովուրդների, այդ թվում նաև հայերի կրած ծանր տառապանքները. պատմելով այն մասին, թե թուրքերն ինչպիսի անգթությամբ են վարվել տեղացիների հետ, նա գրում է.

«Զպատերազմողսըն զօր գըտին,
Զամենեսեան կոտորեցին.
Այլ և զայրըս և ըզկանայս
Ի գերութիւն իսկ վարեցին։

Եւ զնորհաս տըղայս նոցին
Ի մօր գըրկացըն խըլէին,
Առեալ զքարի հարկանէին,
Զծերսըն սըրով խողողէին...։

Այլ զաղաղակ և զողբ նոցին՝
Զլալեացն ըզձայն և զկականին
Ոչ ոք կարէ լեզուով ասել
Եւ ոչ բանիւ մարդկան պատմին»[2]։

Այս ահավոր ողբերգության ժամանակ փաստորեն ոտքի տակ տրորվեցին, ոչնչացան Կ. Պոլսի և նրա շրջապատի երբեմնի հայաշատ օջախների վերջին բեկորները...

---

[1] Ն. Ակինյան, Կ. Պոլսո հայոց պատրիարքության սկզբնավորությունը (տե՛ս «Հանդէս ամսօրեայ», 1951 թ., էջ 462)։

[2] Հ. Անասյան, Հայկական աղբյուրները Բյուզանդիայի անկման մասին, Երևան, 1957, էջ 43։

Գիտություն և կուլտուրա։ Դժվար է թվարկել Բյուզանդիայի հայ գաղթօջախների կուլտուրական և գիտական շատ ու քիչ աչքի ընկնող երևույթները, որովհետև հայ մշակույթը վաղ միջնադարում այնքան շատ ընդհանրություններ է ստեղծել Բյուզանդիայի հետ, որ հնարավոր չէ ներկա աշխատության սահմաններում նրանց մասին հանգամանորեն խոսել։ Հարցն ավելի է բարդանում, եթե նկատի ունենանք, որ հայ մտավորականությունն անտիկ առաջավոր գիտության և կուլտուրայի լավագույն ստեղծագործությունների հետ ծանոթանում և թարգմանել է սկսում փաստորեն բյուզանդական շրջանում, մեծ մասամբ Բյուզանդիայի գիտական կենտրոններում ու բյուզանդական ավանդույթով, ուստի անտիկ այս ստեղծագործությունները ևս սերտորեն առնչվում են հայ-բյուզանդական մշակույթի հետ։

Հայ-բյուզանդական գիտական կուլտուրական կապերը փաստորեն սկիզբ են առնում V դարի սկզբներում, երբ Մեսրոպ Մաշտոցի ջանքերով ստեղծվում է հայկական ներկա գիրը և այն գործածության մեջ դրվում ինչպես Հայաստանում, այնպես և Բյուզանդական հայ գաղթօջախներում։ Մեսրոպ Մաշտոցը, ըստ Կորյունի տեղեկության, գիր ստեղծելուց և Արևելյան Հայաստանում դպրոցներ բաց անելուց հետո, 418 թվականին մեկնում է Կ. Պոլիս Թեոդորոս կայսեր (408—451) մոտ նրանից թույլտվություն ստանալու և Բյուզանդիայի գերիշխանության տակ ապրող հայերի համար ևս դպրոցներ բաց անելու համար։ Կայսրը համաձայնություն է տալիս և հատուկ հրովարտակով հանձնարարում իր պաշտոնյաներին՝ Բյուզանդիայի հայաշատ կենտրոններում «բազմութիւն մանկտւոյ ժողովել» և սովորեցնել[1]։

Հայկական գիրն ստեղծելուց հետո մենք հաճախ ենք Բյուզանդիայում հանդիպում հայ ուսանողների, որոնք գալիս են այնտեղ բարձրագույն կրթություն ստանալու համար։ V—VI դարի հայ մատենագիրները բացառիկ գովեստով են խոսում Բյուզանդիոնի մասին՝ անվանելով նրան «օջախ իմաստութեան»։ Ղազար Փարպեցին հետևյալ ձևով է ներկայացնում Կ. Պոլիսը. «Վտակք գիտութեան որպէս ի թագաւորանիստ վայրի յորդեալ բղխեն ի քաղաքէն. որպէս և յամենայն կողմանց յաշխարհէն Յունաց քաջ ուսեալքն անդ փութան հանգստանալ, և մինչև ցայսօր առաւելեալ տարածին յամենայն կողմանս նորա իմաստութեան վտակք»[2]։ Հայ

---

[1] Կորյուն, Վարք Մաշտոցի, Երևան, 1941, էջ 68։

[2] Ղազար Փարպեցի, Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1904, էջ 4։

մատենագրության մեջ բավականին թվով ուսանողներ են հիշվում, որոնք գալիս են Բյուզանդիոն՝ սովորելու և կամ հունարենից հայերեն թարգմանություն կատարելու համար։ Նման ուսանողներից են եղել Կորյունը, Եզնիկը, Ղևոնդը և ուրիշները։ Անվավեր մի բնագրում հիշվում են Սահակ Պարթևի և Մեսրոպ Մաշտոցի հինգ աշակերտները՝ «Դաւիթ Անյաղթ կոչեցեալն փիլիսոփայ, և Մովսէս Քերթողահայրն, Իմաստասէրն Մամբրէ, և հռետորն Աբրահամ, և սոցին նմանակից Պաւղոս»[1]։

VI դարում ավելանում է Բյուզանդիայի բարձրագույն դըպրոցներում սովորող հայ ուսանողների թիվը, որոնք խորանալով հունարեն լեզվի մեջ և նրա ազդեցության տակ, սկսում են հայ գրական լեզվի մեջ մտցնել հունական բազմաթիվ տերմիններ ու արտահայտություններ։ Հայ մատենագրության մեջ գրական այդ հոսանքն ընդունված է անվանել «Հունաբան դպրոցի» ուղղություն։ Բյուզանդիայի բարձրագույն դպրոցներում սովորող ուսանողների ջանքերով հունարենից հայերեն են թարգմանվում անտիկ աշխարհի առաջավոր գիտության մի շարք ներկայացուցիչների աշխատությունները։ V—VI դարերում հունարենից հայերեն են թարգմանվել անտիկ աշխարհի հռչակավոր փիլիսոփա Արիստոտելի (384—322) աշխատությունների մեծ մասը («Կատեգորիաները», «Պերի էրմենիաս», և այլն)։ Այդ նույն դարերում հունարենից հայերեն է թարգմանվել Պլատոնին (427—347) վերագրվող «Մինոսը», «Օրենքի մասին», «Պատասխան Սոկրատին» և այլ բնագրեր։ VI դարում հունարենից հայերեն է թարգմանվել հայ իրականության մեջ մեծ ժողովրդականություն վայելող Նեոպլատոնական Պորփյուրի (232—303) փիլիսոփայական մեկնությունները, Դիոնիսիոս Թրակացու (180—145) քերականությունը, Թեոնի «Ճարտասանությունը», Պտղոմեոսի (I դ.) տիեզերագիտական աշխատությունները, Անդրիասի (IV դ.) տոմարագիտական աշխատությունները և բազմաթիվ այլ գործեր։ Գիտական մեծ արժեք են ներկայացնում հատկապես հին հայկական այն թարգմանությունները, որոնց հունական բնագրերը կորել են և նրանք գիտությանը հայտնի են միայն հայերեն ձեռագրով։ Այդպիսիներից կարելի է մատնացույց անել, օրինակ, Եվսեբեոս Կեսարացու (IV դար) «Քրոնիկոնը», Զենոն Ստոյիկի (336—264) «Բնության մասին» փիլիսոփայական երկը, Հերմես Տրիսմեգիստեսի (III դ.) «Սահմանքը» և այլ աշխատություններ։ Աշխարհիկ բնա-

[1] «Հանդէս ամսօրեայ», 1903 թ., էջ 152-154։

գրերի համեմատությամբ անչափ շատ են կրոնական-կանոնական բնագրերի հայկական թարգմանությունները։ Դրանց թիվը, եթե հաշվենք նաև «Հայսմաւուրքների», «Հարանց վարքերի» և «Ճառընտիրների» մեջ մտնող բնագրերը, ապա մի քանի հարյուրների է հասնում։

Կ. Պոլսի հայ գաղթօջախում VII դարում հանդես եկող աչքի ընկնող հայ գիտական դեմքերից է Դավիթ Բագրևանդցին, որը, ըստ Ասողիկի տեղեկության, փիլիսոփա էր։ Որպես մեծ հեղինակություն ունեցող գիտնական, բյուզանդական Կոստաս կայսրը 648 թվականին նրան է դեսպանության ուղարկել Հայաստան՝ Ներսես կաթողիկոսի և Սմբատ Վարազտիրոց կյուրապաղատի հետ բանակցելու համար[1]։ Դավիթ Բագրևանդցու հեղինակած աշխատություններից մի քանիսը հասել են մեզ։

Կ. Պոլսում հունարեն բնագրերը հայերեն թարգմանելու գործում մեծ վաստակ ունի VIII դարի գիտնական Ստեփանոս Սյունեցին, որը Կ. Պոլսում սովորող հայ ուսանողներից էր։ Նա իր նախնական կրթությունը ստացել է Սյունյաց նշանավոր դպրոցում՝ աշակերտելով Մովսես Սյունեցուն։ Այնուհետ գիտությունների մեջ խորանալու նպատակով, գնացել է Պոլիս և աշակերտել այնտեղ մի ուսուցչի, որը, ըստ Օրբելյանի տեղեկության, «էր հմուտ արտաքին իմաստից»[2], այսինքն՝ մասնագետ էր անտիկ գիտությունների։ Հունարեն լեզվի մեջ ավելի խորանալու նպատակով, նա գնում է Աթենք և որոշ ժամանակ սովորում այնտեղ։ Այնուհետև Աթենքից գալիս է Կ. Պոլիս և զբաղվում թարգմանությամբ[3]։ Ստեփանոս Սյունեցին 715 թվականին, Դավիթ անունով մեկի գործակցությամբ թարգմանում է Դիոնիսիոս Արիսպագացու թղթերը և Վկայությունները։ Թարգմանության հիշատակարանում ասված է. «...թարգմանեցաւ գիրքս Պարապմանց և Թղթոց սրբոյն Կիւրղի եպիսկոպոսապետին Աղէքսանդրի ի սուրբ օրինակաց ի Կոստանդնուպաւլիս ի ձեռն Դաւթի Հիւպատոսի ի թագաւորական սեղանոյ Կենաաի և ի ձեռն Ստեփանոսի Քերդողի, աշակերտի Մովսէսի Սիւնեաց եպիսկոպոսի»[4]։ Նույն Ստեփանոս Սյունեցին 719 թվականին, Դավթի օգնությամբ, հունարենից հայերեն է թարգմանել Նեմեսիոսի (IV դարի վերջերը և V սկզբ-

[1] Ստեփանոս Ասողիկ, էջ 91։

[2] Ստեփանոս Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 134։

[3] Նույն տեղը, էջ 135։

[4] Գ. Հովսեփյան, Հիշատակարանք ձեռագրաց, էջ 54։

ները) «Յաղագս բնութեան մարդոյ» աշխատությունը, որը թյուրիմացաբար վերագրվել է Գրիգոր Նյուսացուն[1]։

X դարի երկրորդ կեսում Կ. Պոլսում որպես հմուտ թարգմանիչ հայտնի էր Հովսեփը, որը 991 թվականին հունարենից հայերեն է թարգմանել հունական «Սինասքար»-ը («Հայսմավուրք»-ը)[2]։ Այդ բնագրի թարգմանության պատվիրատուն եղել է Պանտալիոն քահանան — Անձևացյաց Աբուսահլ-Համազասպ թագավորի ներկայացուցիչը, որը Կ. Պոլիս է եկած եղել բանակցություն վարելու բյուզանդական արքունիքի հետ։ Հիշատակարանից երևում է, որ վերջինիս մեծ դժվարությամբ է հաջողվել Ս. Սոֆիայի մատենադարանից ստանալ թարգմանության համար հունական բնագիրը՝ «Բազում աշխատութեամբ հանի զդա յարկեղեաց սրբոյն Սոփեայ»,— գրում է նա։ Նույն Պանտալիոն քահանան Հովսեփի միջոցով Կ. Պոլսում թարգմանել է տվել մի այլ աշխատություն, որի հունական բնագիրը պատվիրատուն դարձյալ ստացել է Ս. Սոֆիայի մատենադարանից[3]։ Ուսումնասիրողներից ոմանք ենթադրում են, որ այս Պանտալիոնը կարող է լինել Ղևոնդ Հռետորը, որը որպես բանագնաց 966 թվականին եղել է Կ. Պոլսում և բանախոսել Ս. Սոֆիայի իմաստասիրական ճեմարանում, որին ներկա է գտնվել և Նիկեփոր կայսրը։ Այս մասին Ուռհայեցին գրում է. «Խօսեցաւ վարդապետն Հայոց առաջի թագաւորի Նիկոփորոս Փոկաս (963—969) ընդ ամենայն իմաստասիրացն Հռոմոց և անպարտելի երևեցաւ ի մէջ վարդապետացն տանն Յունաց, վասն զի ամենայն հարցմունս հաճելի երևեցաւ։ Եւ բազում գովութեամբ բարեբանեցին զնա և զուսուցիչն նորա ... և գնաց մեծաւ ուրախութեամբ յաշխարհն Հայոց ի մեծ տունն Շիրակայ...»[4]։

Կ. Պոլսի հայ գրչության օջախում գործող նշանավոր թարգմանիչներից մեկն է եղել Կիրակոս թարգմանը։ Գրիգոր Պահլավունին 1076 թվականին իր գրած հիշատակարանում հայտնում է, որ Կ. Պոլսում եղած ժամանակ ինքը հանդիպել է Կիրակոսին և նրան հանձնարարել թարգմանել Հովհան Ոսկեբերանի «Գիրք առաքելոց»-ի մեկնությունը[1]։ 1193 թվականին Ներսես Լամբրոնացին Թեոդոս անունով ասորի մի քահանայի օգնությամբ հունարենից հայերեն է թարգմանել «Ասոր-Հռոմեական» կոչվող դատաստանագիրքը, որը Բյուզանդիայի փոքրասիական երկրամասերում գործող հիմնական դատաստանագիրքն է հանդիսացել։ Հայկական թարգմանությունը վերնագրված է. «Օրէնք յաղթող թագաւորացն Կոստանդիանոսի և Թէոդոսի և Լևոնի թագաւորացն Հռովմայեցւոց»[2]։

1196 թվականին Ներսես Լամբրոնացին հունարենից հայերեն է թարգմանել նաև «Բյուզանդական դատաստանագիրքը», որի հայկական բնագիրը վերնագրված է. «Ընտրութիւն յամառօտ յօրինացն քաղաքականաց Լևոնի և Կոստանդեայ իմաստուն և բարեպաշտ թագաւորացն, զորոյ և Մեծն Յուստինիանոս նորոգեաց զկարգն ուղղեալ ի բարեպաշտութիւն»[3]։ Դատաստանագիրքը բաղկացած է 19 խոշոր բաժիններից, իսկ բաժիններն էլ իրենց հերթին ունեն առանձին գլուխներ։ Դատաստանագրքում կան գլուխներ ժառանգական իրավունքի, քրեական հանցագործությունների համար նախատեսված պատիժների, սոցիալական տարբեր խավերի օրենքի առջև ունեցած պատասխանատվության վերաբերյալ և այլն։ Նա կարևոր սկզբնաղբյուր է հանդիսանում Բյուզանդիայի իրավունքի պատմության համար։ Ներսես Լամբրոնացին հունարենից հայերեն է թարգմանել նաև Բյուզանդիայում գործող զինվորական կանոնադրությունը, որը բաղկացած է 56 հոդվածներից։ Թարգմանված բնագիրն ունի «Վասն զինուորաց սահմանադրութեան» խորագիրը[4]։

Բյուզանդիայի հայ գրչության օջախներում գրվել են նաև հայկական ձեռագրեր, որոնցից շատ քչերն են հասել մեզ։ Յայտնի է ասել, որ ժամանակի դաժան փոթորիկների մեջ զոհ են գնացել ո՛չ միայն Բյուզանդիայի գաղթօջախները, այլև այնտեղ գրված ձեռագրերը։

Բյուզանդիայի գրչության դպրոցներում գրված և մեզ հասած ձեռագրերից հնագրական մեծ արժեք ունի Հայկ. ՍՍՌ պետ. մատենադարանի № 6202 ձեռագիրը, որը գրված է Կ. Պոլսում 909 թվականին Թուխայել գրչի կողմից՝ Հայոց Սմբատ թագավորի եղ-

---

[1] Տե՛ս Ավ. Գ. Տեր-Պողոսյան, Բիւզանդական մոքի զարգացումը Հայաստանում, Երևան, 1960, էջ 177-178։

[2] Ն. Ակինյան, Հովսեփ Կ. Պոլսեցի թարգմանիչ Հայսմավուրքի (տե՛ս «Հանդէս ամսօրեայ», 1957թ., էջ 1-12)։

[3] Գ. Կ. Հովսեփյան, Հիշատակարանք ձեռագրաց, էջ 117—120։

[4] Մատթէոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, էջ 28—29։

[1] Գ. Հովսեփյան, Հիշատակարանք ձեռագրաց, էջ 255։

[2] Ա. Աբրահամյան, Մատենադարանի ձեռագիր գանձերը, Երևան, 1959, էջ 62։

[3] Նույն տեղը, էջ 63։

[4] ՀՊՄ, ձեռ. № 488, թ. 23։

բայր Աշոտի, իսկ աղբյուրագետների ոմանց կարծիքով՝ Աշոտ Երկաթի պատվերով։ Ձեռագրի հիշատակարանում գրչության վայրի վերաբերյալ ասված է, որ նա գրված է «ի Կոստանդնուպաւլիս ի ձեռն Թուխայելի»[1]։ Բյուզանդիայի մյուս օջախներից մեզ է հասել Ադրիանապոլսում գրված մի ձեռագիր, որն ընդօրինակված է 1007 թվականին։ Այդ ձեռագիրն այժմ Վենետիկի Մխիթարյանների սեփականությունն է[2]։ Ձեռագրի պատվիրատուն է հանդիսացել բյուզանդական արքունիքի հայ ազնվականներից Հովհաննեսը, որը իրեն ներկայացնում է որպես թագավորական «պուտուսկպաթար», այսինքն՝ ավագ սուսերակիր։

Բյուզանդիայի հայ դպիրօջախները, սակայն, տվել են աշքի ընկնող գիտնականներ, գրողներ և արվեստի բնագավառի աշխատողներ ոչ միայն հայ իրականությանը, այլև իրեն՝ Բյուզանդիային։ Նրանք տվել են այնպիսի դեմքեր, որոնք իրենց համեստ լուման են ներդրել ընդհանուր դիտության և արվեստի բնագավառներում։ Բյուզանդիայում այս կարգի առաջին [Խոշոր] գիտնականներից է Բագրատ աստղագետը, որը հունական մատենագրության մեջ հիշվում է Պակրատիոս անունով։ Սա Բագրատունյաց տոհմից է և Հայաստանից գալով Բյուզանդիա, ծառայելիս է եղել բյուզանդական բանակում և սպանվել 792 թվականին բուլղարական արշավանքի ժամանակ։ Հույն պատմիչները Բագրատին ներկայացնում են որպես աշքի ընկնող աստղագետի։ Բագրատից հետո գիտության բնագավառում Բյուզանդիայի հողի վրա աշքի ընկնող դեմք է հանդիսացել Հովհաննեսը, որը հայտնի է «Քերական» մականունով։ Հովհաննես Քերականին, որպես մեծ հռչակ ունեցող գիտնականի, հանձնարարված է եղել Միքայել կայսեր որդու՝ Թեոփիլի դաստիարակությունը։ Հովհաննես Քերականը եղել է նաև նշանավոր դիվանագետ. բյուզանդական արքունիքը նրան երկու անգամ դեսպանության է ուղարկել Բաղդադ՝ խալիֆայության մոտ, որը հաջողությամբ կատարել է իր առաքելությունը։ Հովհաննես Քերականը 832 թվականին բարձրացել է մինչև Կ. Պոլիսի պատրիարքության պաշտոնին՝ հանդիսանալով պատկերամարտության պայքարի գործուն նախաձեռնողներից մեկը։ Հետագայում, երբ պատկերապաշտները հաղթանակեցին, նա զրկվեց արվեց պատրիարքական պաշտոնից, իսկ նրա մահվանից հետո բարձրաստիճան եկեղեցականները, որոնք արտակարգ քինախնդրությամբ էին լցված Հովհաննես Քերականի դեմ, նրա դիակը հանել տվեցին գերեզմանից, մտրակով ծեծեցին և այրեցին խարույկի վրա[1]։

Դժբախտաբար բյուզանդական եկեղեցական պատմիչները, որոնք գրել են իրենց աշխատությունները Հովհաննես Քերականի մասին, նրա պատրիարքական աթոռից զրկվելուց հետո, սկսել են նրան սևացնել, անվանարկել։ Ի դեպ, Քերականին առաջադրվող մեղադրանքներից մեկն էլ այն է եղել, որ նա իբր եղբոր՝ Արշավիրի պալատում, որը գտնվել է Բոսֆորի ափին, ունեցել է փորձեր կատարելու լաբորատորիա, որը վկայում է անշուշտ նրա գիտահետազոտական մեծ էրուդիցիայի մասին։

IX դարում Բյուզանդիայի գիտական կյանքում աշքի ընկնող երևույթ է հանդիսացել համալսարանի վերաբացումը Մագնավրի կոչվող պալատում։ Այս համալսարանի մեկենասն է հանդիսացել Վարդ Մամիկոնյանը, Իրինա թագուհու եղբայրը, որին «Միքայել կայսրը նշանակել էր կեսար»[2]։ «Վարդը,— գրում է Թեոֆանի շարունակողը,— ուշադրություն դարձրեց արտաքին գիտությունների վրա, որոնք այդ ժամանակ գտնվում էին անկման և խամրելու վիճակում, և այնպես արեց, որ գիտական իմացությունները Մագնավրում նորից ծաղկեցին»[3]։ Բյուզանդագետ Շարլ Դիլը այս համալսարանի վերաբացմանը շատ խոշոր նշանակություն է տալիս. «Գրականությունը և արվեստը Բյուզանդիայում,— գրում է նա,— նոր թափ առավ XI դարում։ Եվ Կ. Պոլսի համալսարանը, որը վերաբացվեց Մագնավրի պալատում Վարդ Պատրիկի նախաձեռնությամբ, Լևոն Թեսալացու ղեկավարությամբ, դարձավ մտավոր կուլտուրայի հրաշալի կենտրոն»[4]։

Համալսարանի առաջին ռեկտորը՝ Լևոն փիլիսոփան, Հովհաննես Քերականի եղբոր որդին է։ Լևոնի մասին, որպես խոշոր գիտնականի, բարձր կարծիք են հայտնել ո՛չ միայն իր բարեկամները, այլև նրա անձնական թշնամիները։ Նրա կենսագրությունն ուշագրավ կետեր ունի, ուստի անհրաժեշտ ենք համարում համառոտակի տալ այն։

Լևոնը, ըստ սկզբնաղբյուրների տեղեկությունների, իր նախ-

[1] Գ. Հովսեփյան, Հիշատակարանք ձեռագրաց, էջ 107։

[2] Հ. Բ. Սարգիսյան, Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց մատենադարանին Մխիթարյանց, հ. Ա, էջ 518։

[1] Տե՛ս Georg. 834. Symeon, էջ 681 (Օգտվել ենք Ն. Ադոնցի վերոհիշված աշխատությունից)։

[2] Архив Маркса и Энгельса, т. V, 1938, էջ 40։

[3] Theoph. Cont. էջ 185։ (Օգտվել ենք Ն. Ադոնցի վերոհիշված աշխատությունից)։

[4] Шарл Диль, История византийской империи, էջ 68։

նական կրթությունը ստացել է Բյուզանդիայում։ Նա այստեղ խորացել է քերականության և ճշգրիտ գիտությունների մեջ։ Այնուհետև իր սիրած մասնագիտության մեջ ավելի խորանալու նպատակով, գնացել է Անդրոս կղզին, ուր գտնվելիս են եղել իր ժամանակի մեծ հռչակ ունեցող Ճարտասաններ, փիլիսոփաներ և մաթեմատիկոսներ։ Նա սովորել է այնտեղ, ապա երկար շրջագայել Բյուզանդիայի գրչության դպրոցներում և ուսումնասիրել հին ձեռագրերը։ Հետագայում նա հաստատվել է Կ. Պոլսում և պարապել մանկավարժությամբ։ Նա այստեղ ընկել է դառն աղքատության մեջ։ Թեոֆանի շարունակողն այս մասին հետևյալն է գրում. «Նրանից հետո, երբ Լևոնը հասավ իմացության բարձունքին գիտության մեջ ու տիրապետեց փիլիսոփայությանը և նրան ազգակից մաթեմատիկային, եռանկյունաչափությանը և աստղագիտությանը... գտնվում էր կարիքի մեջ, ապրում էր էժանագին բնակարանում և ուսուցում էր բոլոր նրանց, ովքեր գալիս էին իր մոտ սովորելու...»[1]։

Սակայն շուտով մի իրադարձություն պատճառ է դառնում նրա հեղինակության բարձրացմանը և հրավիրում արքունիքի ուշադրությունը։ Լևոնի մոտ սովորող ուսանողներից մեկը, որը գրագրի պաշտոնով ծառայելիս է եղել Արևելյան ռազմաճակատում պաշտոնավարող մի ստրատեգի մոտ, գերի է ընկնում արաբների ձեռքը։ Ամիրապետ Մամունը, երբ պարզում է, որ իր գերին մաթեմատիկական բարձր կրթություն ունի, և նրա ուսուցիչն է հանդիսացել Լևոն մաթեմատիկոսը, նամակ է գրում Լևոնին և հրավիրում նրան աշխատելու իր մոտ։ Լևոնն իր ստացած այս նամակը ցույց է տալիս արքունիքին։ Այնտեղ սկսում են անմիջապես ուշադրություն դարձնել գիտնականի վրա և նրան նշանակում են դասախոս Քառասուն մանկանց կոչվող եկեղեցում։ Հետագայում Թեոֆիլ կայսրը նույնպես ամիրապետից նամակ է ստանում, որի մեջ խնդրվում է Լևոնին ուղարկել իր մոտ աշխատելու։ Կայսրը մեծ ժամ է ամիրապետի խնդրանքը և կարգադրում Հովհաննես պատրիարքին Լևոնին միտրոպոլիտ նշանակել Թեսալոնիկեի թեմում։ Լևոնն այդ պաշտոնում մնում է մինչև պատկերապաշտների հաղթանակը, որից հետո պաշտոնանկ է լինում։ Միտրոպոլիտի պաշտոնից հեռացվելուց հետո է, որ սկսում են Լևոնի գիտական և մանկավարժական բեղմնավոր աշխատանքները համալսարանում։ Մագնավրի համալսարանում դասավանդվում էին գլխավորապես աշխարհիկ առարկաներ՝ փիլիսոփայություն, քերականություն, Ճարտասանություն, երկրաչափություն և աստղագիտություն։ Մենք տեղեկություններ չունենք Լևոն փիլիսոփայի որդեգրած գիտական ուղղության մասին, սակայն մեզ հասած մի պարսավագրից, որի հեղինակն է Լևոնի աշակերտ Կոստանդինը, որոշակի երևում է, որ փիլիսոփայի սիրած հեղինակներն են եղել Սոկրատը, Պլատոնը, Արիստոտելը, Եվկլիդեսը, Պրոկլը և էպիկուրյանները։ «Դու թողեցիր ամենապայծառ և գերափառ հավատը,— ասված է պարսավագրում,— գլորվեցիր հելլեն (հեթանոս) ապականության հրեշավոր վիհը... Գնա չարաղետ Պրիպլեգետոնի մոտ, լայնարձակ տարտարոսը, ուր կարող ես տեսնել Քրիսիպներ, Սոկրատներ, Պրոկլներ, Պլատոններ, Արիստոտելներ, էպիկուրներ և քո բարեկամ էվկլիդեսներ և աստղաբաշխ Պտղոմեոսներ...»[1]։ Պարսավագրից պարզ երևում է, որ Լևոն իմաստասերը հետևել է անտիկ աշխարհի առաջադեմ գիտությանը, որի նկատմամբ անհանդուրժողական դիրք է ունեցել բյուզանդական բարձրաստիճան կղերականությանը։

Լևոնն ունեցել է մի շարք ուսանողներ, որոնք իր ժամանակի աչքի ընկնող դեմքերից են հանդիսացել՝ Փոտը, սլավոնական գիր ստեղծող Կիրիլը, Կոմիտաս Քերականը և ուրիշներ։ Լևոնի հետաքրքրությունների բնագավառն է հանդիսացել գլխավորապես մաթեմատիկան, գործնական մեխանիկան և կիրառական բնագիտությունը։ Նրա հեղինակությանն է վերագրվում վառվող խարույկների միջոցով հեռավոր տարածությունների վրա ազդանշաններ հաղորդելու գյուտը, որի շնորհիվ Կ. Պոլսում մի օրվա մեջ կարելի էր իմանալ Սիրիայում տեղի ունեցող կարևոր իրադարձությունները։ Լևոնի հեղինակությանն է վերագրվում բյուզանդական արքունիքում մեխանիկական թռչունների և գազանների պատրաստումը, որոնք հարկավոր պահին սկսում էին շարժվել և ձայներ հանել. «Առյուծներն սկսում էին մռնչալ, թռչունները սկսում էին տարբեր ձայներով երգել»[2]։

Մաթեմատիկական գիտությունների դոկտոր Գ. Բ. Պետրոսյանը գտնում է, որ Լևոնը «նրբին հաշվումների միջոցով լուրջ հաջողությունների էր հասել մեխանիկայի և ակուստիկայի բնագավառում»[3]։

[1] Theoph. Cont. էջ 185։

[1] Տե՛ս Minge pat. Gr., 107, c XI;

[2] Տե՛ս Е. Э. Липшиц, Византийский ученый Лев математик («Византийский временник», т. II, էջ 148)։

[3] Գ. Բ. Պետրոսյան, IX դարի ականավոր գիտնական-մաթեմատիկոս Լևոնի կյանքի ու գործունեության մասին (տե՛ս «Բնագիտության և տեխնիկայի պատմությունը» գիտական նյութերի ժողովածու, հ. I, 1960, էջ 18)։

Բյուզանդիայի աչքի ընկնող գիտնականներից է հանդիսացել Փոտը, որը Վարդ Մամիկոնյանի ազգականն է, Սարգիս Պատրիկի եղբայրը։ Նա գրել է բազմաթիվ աշխատություններ, որոնց մեծ մասը հասել է մեզ։ Նրա աշխատություններից առանձնապես արժեքավոր է «Գրադարան»-ը, որի մեջ անոտացիայի են ենթարկված 250 անտիկ հեղինակների աշխատությունները։ Փոտը հալածանքի է ենթարկվել բյուզանդական կղերականության կողմից։

Ե. Է. Լիպշիցը ենթադրում է, որ Հովհաննես Քերականը, Լևոն Իմաստասերը, Փոտը, նրանց հետևող գիտնականները նոր խոսքի ներկայացուցիչներն են հանդիսացել գիտության մեջ. «Գիտական մտքի այս նոր հոսանքի բողբոջները,— գրում է նա,— ցույց են տալիս, մի կողմից, վերադարձի ձգտում դեպի անտիկ ժառանգության ուսումնասիրությունը, իսկ մյուս կողմից, ձգտում դեպի շրջապատող բնությունը գիտա-գործնական հետազոտության»[1]։

X դարում Բյուզանդիայի պատմագիտության բնագավառում որպես նրա ականավոր ներկայացուցիչը հանդես է գալիս Կոստանդին Միրանածին Հայազգի կայսրը (913—959)։ Նա հանդիսացել է պատմաբան, բանաստեղծ, երաժիշտ, ճարտարապետ, մեքենագետ և նկարիչ։ Ենթադրվում է, որ նա գիտցել է հայերեն և պարծեցել է իր ծագմամբ։ Հեղինակ է մի շարք աշխատությունների, որոնցից կարևոր են Բարսեղ I-ի կենսագրությունը, բանակաթեմիրին նվիրած աշխատությունը, նրա կազմած օրենսգիրքը, բժշկարանը և այլ աշխատություններ։ Նա արքունիքում իր շուրջն է հավաքած եղել գիտունների և գրողների, այդ թվում նաև մի քանի շնորհալի հայ գիտնականների։

Կոստանդին Միրանածինի աշակերտներից է հանդիսացել ծագումով հայ Հովսեփ Գենեզիոսը։ Նա գրել է պատմական մի շարք աշխատություններ, որոնք ընդգրկում են մի քանի կայսրերի գահակալական շրջանները՝ Լևոն V-ի, Միքայել II-ի, Թեոփիլոսի, Միքայել III-ի և Վասիլ I-ի։ Գենեզիոսը նշված աշխատությունները գրած պիտի լինի 945—950 թվականներին Կոստանդին I կայսեր հանձնարարությամբ։

Ուշ շրջանում Բյուզանդական հողի վրա հանդես եկող հայ գիտնականներից է Նիկոլայ-Արտավազդ Զմյուռնացին, որը հանդիսացել է խոշոր մաթեմատիկոս և իր թողած թվաբանական ու երկրաչափական աշխատություններով պատշաճ տեղ գրավել մաթեմատիկայի պատմության մեջ։ Նիկոլայ-Արտավազդի գիտական

[1] Е. Э. Липшиц (տե՛ս «Виз. временник», т. II, էջ 149)։

աշխատագործական շրջանն է հանդիսացել XIV դարի առաջին կեսը։ Մաթ. գիտ. դոկտոր Գ. Պետրոսյանը հանգամանորեն ուսումնասիրելով այս հեղինակի մաթեմատիկական աշխատությունները, եկել է այն եզրակացության, որ նա իր մաթեմատիկական աշխատությունների մեջ օգտվել է Անանիա Շիրակացու համարողական աշխատություններից[1]։

Մինչև X դարը Բյուզանդիայի հայ գաղթօջախներում քիչ են երևում նկարիչները։ Այդ բացատրվում է նրանով, որ հայերը, մանավանդ Բյուզանդիայում գտնվող պավլիկյանները, կատաղի պատկերամարտներ էին և հակում չունեին պատկերագրության։ Դրությունը փոխվում է (X—XI դարերից սկսած), երբ աննախընթաց ձևով սկսում է (զարգանալ հայ մանրանկարչությունը) և ահա հայ նկարիչներ են սկսում երևալ ոչ միայն Կ. Պոլսում, այլև Բյուզանդիայի հայկական մյուս գաղթօջախներում։ Արտակարգ զարգանում է գեղանկարչությունը, մասնավորապես Կիլիկիայում։ Հայ նկարիչները բյուզանդական մանրանկարչությունից վերցնում են այն ամենը, ինչը գեղեցիկ է, ինչը համապատասխանում է իրենց ճաշակին և, հակառակը, տալիս են բյուզանդականին հայկական մանրանկարչության լավագույն տարրերը։ Բյուզանդական գեղանկարչության լավագույն մասնագետներից մեկը՝ Վ. Ն. Լազարևը, խոսելով հայ-բյուզանդական շփումների մասին, հետևյալն է գրում. «XIII դարի քրիստոնեական արվեստի արևելյան հուշարձանների շարքում առանձնահատուկ տեղ ունեն հայկական հուշարձանները։ Նրանք կազմում են ազգային որոշակի մի խումբ՝ առանձնահատուկ մաքրությամբ պահպանելով իրենց բնույթը։ Սակայն այդ չի խանգարում խոսելու բյուզանդական գեղանկարչության ազդեցության մասին հայկականի վրա, քանի որ վերջինս վճռական դեր է ունեցել կիլիկյան մանրանկարչության ոճի ձևավորման ընթացքում»[2]։

Բյուզանդիայի հայ գաղթօջախներն իրենց համեստ մուծումներն ունեն նաև բյուզանդական ճարտարապետության բնագավառում։ Հայաստանից Բյուզանդիա գաղթող հայ շինարարները՝ քարակոփները, ճարտարապետներն ու կառուցումների հետ գործ ունեցող այլ մասնագետները, չեն խնայել իրենց ջանքերը և շնորհքը ներդնելու Բյուզանդիայի ճարտարապետության մեջ։ Այդ է

[1] Գ. Բ. Պետրոսյան, Մաթեմատիկան Հայաստանում հին և միջին դարերում, Երևան, 1959, էջ 176—182։

[2] В. Н. Лазарев, История византийской живописи, т. I, М., 1947, էջ 186։

պատճառը, որ բյուզանդական արքունիքը բոլոր միջոցներով խրախուսել է Հայաստանից եկող նման մասնագետների գաղթը: Այս մասին պատմական բավականին փաստեր ունենք: Մովսես Կաղանկատվացու տեղեկությունից երևում է, որ Ներսես կաթողիկոսը (641—661) Զվարթնոցի տաճարի շինարարությունը ավարտելուց հետո, այդ առթիվ տոնախմբություն է կազմակերպել և բյուզանդիայից հրավիրել նաև Կոստանդին կայսրին: 652 թվականին, երբ կայսրը եկել է Հայաստան և տեսել Զվարթնոցի նորակառույց տաճարը, հիացել է նրանով և հրամայել «շինողացն գնալ զկնի իւր, զի նոյնաձև յարմարեսցէ ի պալատանն»[1]: Կայսրը ցանկացել է Զվարթնոցի վրա աշխատող շնորհալի մասնագետների ձեռքով նորաձև պալատներ կառուցել Պոլսում, որը, սակայն, հնարավոր չի եղել նրա մահվան պատճառով:

Բարսեղ Բուլղարատպանի ժամանակ (970—1025) տեղի ունեցող բյուզանդա-բուլղարական պատերազմների հետևանքով, երբ քարուքանդ եղավ Մակեդոնիան և բյուզանդական արքունիքը անհրաժեշտ գտավ վերակառուցել Մակեդոնիայի քանդված շինությունները, նա դիմեց հայ շինարարներին. այդ նպատակով նա մեծ թվով հայերի տեղափոխեց Մակեդոնիա[2]: Պարզ է, որ եթե հայ շինարարներն աչքի ընկած չլինեին իրենց վարպետությամբ և գործարար հատկություններով, ապա մեծ թվով հայ գաղթականության այդքան հեռավոր տարածության վրա տեղափոխելն անիմաստ կլիներ:

Ճարտարապետության պատմության մասնագետներն այժմ հաստատապես գտնում են, որ Բյուզանդիայի տաճարների խաչաձև հատակագծերը և Բյուզանդիայի վրայով Արևմտյան Եվրոպա անցած գոթական ոճի նախատիպը հայկական է: Բյուզանդագետ Շարլ Դիլը Սորբոնի համալսարանում բյուզանդական ճարտարապետության վերաբերյալ իր կարդացած դասախոսության մեջ՝ անդրադառնալով ճարտարապետական փոխազդեցություններին հարցին, հետևյալն է հայտարարել. «Ոմանք կարծում են, թե հայկական ոճը գոթականի նախատիպն է եղել: Այս անհավանական չէ, որովհետև հայ ժողովրդի ճարտարապետական հուշարձանների նմուշները հաստատապես համոզում են մեզ, որ հայ ժողովուրդն ավելի շինարար և ստեղծագործող է եղել, այդ են վկայում հայկական քանդակները, գմբեթների մույթերի վրա վարպետորեն հաստատելու փաստը և ինքնատիպ այլ հատկանիշներ: Այս ամենը օրինակներ և փաստեր են նրա (այսինքն՝ հայ ժողովրդի—Ա. Ա.) ուշիմության և ստեղծագործական ոգևորության»[1]:

Ճարտարապետ Թ. Թորամանյանը խոսելով Բյուզանդիայի հայ գաղթականության մասին և նշելով նրա խաղացած խոշոր դերը կայսրության հասարակական-քաղաքական կյանքում, բնական է համարում հայ մշակույթի ազդեցությունը բյուզանդականի, մասնավորապես ճարտարապետության վրա: «Հայ գաղթականության,— գրում է նա,— Բյուզանդիայի տիրող տարրերին զուգընթացաբար վարելով ամբողջ երկրի ներքին ու արտաքին քաղաքական կազմակերպությունը, անկարելի է, որ իր ինքնուրույն դրոշմը չդներ նույն երկրի քաղաքականության վրա: Մանավանդ, երբ հայերը բացի զինվորականներից և քաղաքականներից, նաև շինարար ժողովրդի մը համբավ ունեին, անպայման երկրին վարչությունը զիրենք այդ ճյուղին մեջ ալ ավելի հառաջ պիտի քշեր հօգուտ կայսրության»[2]:

Բյուզանդիայի ճարտարապետական շինարարության մեջ իրենց համեստ մասնակցությունը ունեցող հայ ո՞ր վարպետի կամ ճարտարապետի անունը կարող ենք այժմ հիշել: Պատմական աղբյուրներն այս հարցում դժբախտաբար շատ ժլատ են: Մենք միայն մի ճարտարապետի անուն գիտենք, որը 989 թվականին վերաշինել է Ս. Սոֆիայի տաճարը, որը հիմնահատակ կործանած է եղել երկրաշարժը,— այդ Տրդատ ճարտարապետն է, որի անունը պահել է Ստեփանոս Ասողիկը: Նա հայտնում է, որ 989 թվականի երկրաշարժից հետո, երբ քանդվել էր տաճարը, «...բազում ջան նվև արհեստաւոր ճարտարացն Յունաց առ ի վերստին նորոգել: Այլ անդ դիպեալ ճարտարապետին Հայոց Տրդատայ քարագործի՝ տայ զօրինակ շինուածոյն, իմաստուն հանճարով պատրաստեալ ղկաղապարս կազմածոյն և սկզբնաւորեալ զշինելն. որ և գեղեցկապէս շինեցաւ պայծառ քան զառաջինն»[3]: Ս. Սոֆիայի վերակառուցումն ավարտվել է 1001 թվականին:

Ինչպես տեսնում ենք, մայր հայրենիքից գաղթաշխարհ տեղափոխված տարագիր հայությունը պասսիվ տարր չի հանդիսացել իր նոր բնակավայրում՝ Բյուզանդիայում. նա շարունակել է ստեղծագործել նաև օտարության մեջ և իր համեստ լուման ներ-

---

1 Մովսես Կաղանկատվացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, էջ 254:
2 Ստեփանոս Ասողիկ, էջ 201:

1 Charles Diehl, Manueb d' art byrantin, 1910.
2 Թ. Թորամանյան, Հայկական ճարտարապետություն, Երևան, 1942, էջ 72:
3 Ստեփանոս Ասողիկ, էջ 251:

դրել համամարդկային մշակույթի ոսկյա գանձարանում։ «Հայությունը մի գեա է,— իրավացի գրում է Ն. Ադոնցը,— որի ջրերը ոռոգում են ո՛չ միայն իր հարազատ հողն ու անդաստանը, այլև թավալում են հուժկու ալիքներ դեպի ընդհանուր քաղաքակրթության օվկիանոսը»[1]։

---

[1] Ն. Ադոնց, Արտավան Սրշակունի («Պատմական ուսումնասիրություններ», էջ 319)։

ՀԱՅ ԳԱՂԹՕՋԱԽՆԵՐԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

Հայաստանի հարևան երկրների մեջ միակ երկիրը, որ ապաստան գտած հայ գաղթականը պանդխտության հոգեմաշ ցավով հիվանդագին չի տառապել, խորթության, օտարության ռանճնապես չի զգացել, հանդիսացել է վրաստանը։ Պետք է ասել, որ հայերի համար ստեղծված ողբերգական ծանր օրերին եղբայրական վրաց ժողովուրդը միշտ էլ լայնորեն բաց է արել իր դռները հայ գաղթականության առջև և սրտաբաց հյուրասիրությամբ ընդունել է նրան, ուր և ստեղծել բարենպաստ պայմաններ նրա ապրուստի համար։ XV դարի հայ մատենագիր՝ Մատթեոս Ջուղայեցին, խոսելով վրաց ժողովրդի բարեմասնությունների մասին, որպես հյուրասեր ժողովրդի, գտնում է, որ բարերարությունը չորս տեսակ է լինում՝ ողորմություն, մարդասիրություն, հյուրասիրություն և առատաձեռնություն. այս չորս առաքինություններն էլ, հեղինակի կարծիքով, ունի վրաց ազգը կատարելապես։

Մեզ հասած պատմական սկզբնաղբյուրներից երևում է, որ վրաստանում հայ գաղթականի իրավունքը սահմանափակ չի եղել գործունեության ոչ մի բնագավառում. նա օգտվել է տեղացի քնակչի բոլոր իրավունքներից։ Այդ է պատճառը, որ հայ գաղթականը կարողացել է իր ապաստանած նոր բնակավայրում շատ արագ ոտքի կանգնել, անկեղծ սիրել և սրտովին կապվել վրաց ժողովրդի հետ։ Իրավացի է Ալպոյաճյանը, երբ իր «Պատմություն հայ գաղթականության» աշխատության մեջ նշում է, որ վրաստանը, իբրև հայերի գաղթավայրի, «մեր գաղթականության մեջ

իրեն պարտինք հատկացնել փառավոր էջ մը, վասնզի հոն հայերն ապրած են երկրին տերերուն պես և ոչ իբրև ստրուկ կամ նվաստ գաղթականներ»[1]։

Վրաց ժողովրդի հայերի նկատմամբ ցուցաբերած այդ սիրալիրությունը, իհարկե, պատահական չէ. նա խարսխված է հայ և վրաց ժողովուրդների անխախտ բարեկամության վրա, որը տասնյակ դարերի պատմություն ունի։ Հայ և վրացի ժողովուրդները մի ընտանիքի նման ապրել են կողք-կողքի, ստեղծագործել են կուլտուրական գործոն փոխհարաբերությունների պայմաններում, պայքարել են ձեռք-ձեռքի տված բազմաթիվ օտարերկրյա հարբրստահարիչների դեմ՝ իրար հետ բաժանելով կյանքի և՛ դառնությունը, և՛ ուրախությունը։ Անդրկովկասյան բազմադարյան պատմության դասերը երկու ժողովուրդների գիտակցության մեջ խորապես ամրագրել են անհողդողդ այն գիտակցությունը, որ իրենցից յուրաքանչյուրին սպառնացող վտանգը և արհավիրքը՝ վտանգ և արհավիրք է միաժամանակ իր հարևանի համար։ Հայ ժողովուրդն իր հարավային սահմանում կռվելով օտարերկրյա բշնամու դեմ, պաշտպանել է Վրաստանի սահմանը և, հակառակը, վրաց ժողովուրդը կռվելով հյուսիսից եկող ասպատակությունների դեմ, պաշտպանել է Հայաստանը։ Անդրկովկասի ժողովուրդների մեջ տարածված է մի վաղեմի ավանդություն, ըստ որի՝ հայերի, վրացիների, աղվանների, լեզգիների, օսետինների և կովկասյան մյուս ժողովուրդների նախահայրերը արյունակից հարազատ եղբայրներ են եղել։ Այս ավանդությունը գրի է առել վրաց պատմիչ Լեոնտի Մրովելին XI դարում[2]։ Ուսումնասիրողներից ոմանք ազգակցական կապեր են տեսնում հայ և վրաց ժողովուրդների միջև։ Այսպես, օրինակ, ակադ. Ն. Յա. Մառը ուսումնասիրելով պատմական աղբյուրները և լեզվական որոշ նմանություններ, գտնում է, որ «Հնձային հայերի և վրացիների մենք տեսնում ենք հետնորդներ երկու եղբայրական ազգերի, որոնք հետո բաժանվեցին այլևայլ ազգագրական, լեզվաբանական և մասամբ կուլտուրական և քաղաքական ներգործությունների շնորհիվ»[3]։

Հայ և վրաց ժողովուրդների ներքին և արտաքին թշնամիները՝ Անդրկովկասի ժողովուրդների դիմադրական ուժը թուլացնելու և աշխատավորական խավերի՝ իրենց շահագործողների դեմ ուղղված ընդվզումները ճնշելու նպատակով, հաճախ փորձել են խախտել

1 Ա. Ալպոյաճյան, ՊՀԳ, հ. II, էջ 313։
2 Պրոֆ. Ի. Աբուլաձեի հրատ., Թբիլիսի, 1953, էջ 5։
3 «Մուրճ», 1898թ., էջ 511։

նրանց միասնությունը, աշխատել են բարեկամ ժողովուրդներին հակադրել իրար, սակայն այդ ժողովուրդներն այնքան սերտ և անխզելի կապերով են կապված եղել, որ այդ փորձերը, մեծ մասամբ, մատնվել են անհաջողության։

Երկու ժողովուրդների մեջ գոյություն ունեցող ահա այս փոխհարաբերությունների պայմաններում զարմանալի չէ այն բարյացակամությունը և հոգատարությունը, որ վրաց ժողովուրդը ցուցաբերել է հայ գաղթականության նկատմամբ։

Ե՞րբ է սկսել հայ բնակչության գաղթը դեպի Վրաստան և ե՞րբ են հիմնվել Վրաստանի հայ գաղթօջախները — որոշակի դժվար է պատասխանել։ Բանասեր Ա. Սարուխանը գտնում է, որ հայկական գաղթօջախները Վրաստանում գոյություն են ունեցել դեռևս Արտաշեսյան շրջանում, այսինքն՝ II—I դարերում (մ.թ.ա.)[1]։ Վրացագետ պրոֆ. Ա. Խախանովը գտնում է, որ հայ գաղթականության սկիզբը դեպի Վրաստան պետք է համարել V դարը[2]։

Վրաստանում Արտաշեսյան շրջանում հայ գաղթականության գոյության մասին մեզ ոչինչ հայտնի չէ։ Ո՞րտեղից է քաղել բանասեր Սարուխանն իր այդ տեղեկությունը՝ չգիտենք։ Մեզ հայտնի չեն նաև փաստեր, որ հայկական գաղթը դեպի Վրաստան սկսվել է V դարից, ինչպես պնդում է պրոֆ. Խախանովը։

Վրաստանում հիմնված առաջին փոքրիկ գաղթօջախի մասին մեր ունեցած տեղեկությունը վերաբերում է VI դարի վերջերին և VII դարի սկզբներին։ Այդ տեղեկությունը պահպանվել է X դարի պատմիչ Ուխտանեսի մոտ։ Պատմիչը խոսելով VII դարի սկզբներին հայ-վրաց եկեղեցիների միջև տեղի ունեցող պառակտման մասին, բերում է իր ձեռքի տակ եղած այդ դարաշրջանին վերաբերող մի շարք վավերագրեր, որոնցից երևում է, որ Յուրտավում գոյություն է ունեցել հայկական փոքրիկ գաղթօջախ։ Ուխտանեսը բերում է անգամ վրթանես Քերթողի մի նամակը, որն ուղղված է Յուրտավի հայերին՝ «Թուղթ շրջաբերական Տեառն Վրթանէսի Քերթողի (ի) Հայալեզու աշխարհն Յուրտաւայ՝ ի խնդրոյ Մովսիսի եպիսկոպոսի՝ առ ի հաստատել զնոսա ի հաւատս» և Յուրտավի հայկական համայնքի պատասխան նամակը՝ «Պատասխանի թղթոյն Վրթանէսի Հայալեզու աշխարհին Յուրտաւայ»[3]։

Ընդհանրապես, մինչև VII դարի սկզբները, այսինքն՝ մինչև

1 Ա. Սարուխան, Վրաստանը և հայերը, Վիեննա, 1939, էջ 17։
2 «Journal Asiatique», 1898, II, էջ 337—344։
3 Ուխտանէս եպիսկոպոս, Պատմութիւն Հայոց, Վաղարշապատ, 1871, մաս Բ, էջ 32—33։

հայ և վրացի կղերականների միջև դավանաբանական հարցերի շուրջը ծագած կրոնական սխոլաստիկ և վնասակար վեճերը, ահրտ փոխհարաբերություն է գոյություն ունեցել հայ-վրացական համայնքների միջև, ինչպես վրաց Կյուրիոն կաթողիկոսն իր նամակներից մեկում ճիշտ նկատել է. «միաբանութիւն էր Վրաց և Հայոց ընդ միմեանս»[1]։

Վրաստանում հայկական հնագույն գաղթօջախներից մեկը գտնվել է Թբիլիսի քաղաքում։ Վրացագետ մասնագետներից ոմանք գտնում են, որ Թբիլիսիի Տափթաղ թաղամասում Ս. Գևորգ կոչվող կաթողիկե հնագույն եկեղեցին կառուցված է հայոց 80 թվականին, այսինքն՝ մեր ներկա թվականության 631-ին[2]։ Հետագա դարերում այս եկեղեցին քանդվել է և 1251 թ. այն նորից վերաշինել է հայ աչքի ընկնող խոջաներից մեկը՝ Ումեկը[3]։ Թբիլիսիում VII դարում հայկական եկեղեցու գոյությունն ինքնին ապացուցում է նրա շուրջը համախմբված հայկական համայնքի գոյությունը։

Մեր ունեցած հնագույն տեղեկությունը հայ բնակչության զանգվածային առաջին գաղթի մասին դեպի Վրաստան վերաբերում է 703 թվականին։ Ղևոնդ պատմիչը նկարագրելով արաբների՝ Հայաստանում կատարած կեղեքումները, 703 թվականին բռնկված ապստամբությունը և Վանանդի Դրաշպետ գյուղի մոտ տեղի ունեցող ճակատամարտը, ուր հայ-բյուզանդական զորքերը պարտություն կրեցին խալիֆաթի զորքերից, հայտնում է, որ այս ճակատամարտից հետո Տայքի իշխան Սմբատ Բագրատունին դիմում է բյուզանդական արքունիքին և նրա համաձայնությամբ (Վրաստանն այդ ժամանակ գտնվում էր Բյուզանդիայի գերիշխանության տակ), իր ընտանիքով և հետևորդներով տեղափոխվում է Փոթի քաղաքը. «Իսկ Սմբատ Կիւրապաղատն և նախարարքըն, որ ընդ նմա գնացեալ մեկնեցան յաշխարհէս և անցեալ,— գրում է պատմիչը,— խնդրեցին ի թագաւորէն Յունաց քաղաք բնակութեան ...որ անուանեալ կոչի Փոյթ ի կողմանս Եգեր աշխարհին»[4]։ Այս գաղթականությունը, ըստ տեղեկությունների, երկար չի մնում իր հաստատված վայրում և ետ է վերադառնում։

Հայ բնակչության հաջորդ խոշոր գաղթը դեպի Վրաստան տե-

---

[1] Ուխտանես, Պատմութիւն Հայոց, մաս Բ, էջ 89։

[2] Ս. Ավչյան, Թբիլիսիի Մեյդանի սուրբ Գևորգ կաթողիկե սուրբ Աստվածածին կամ բերդի մեծ եկեղեցին (Տե՛ս «էջմիածին», 1959 թ., № 2, էջ 46—51)։

[3] Նույն տեղը, էջ 49։

[4] Ղևոնդ, էջ 35։

ղի է ունեցել 774 թվականին։ Այս մասին մեզ տեղեկություն է հաղորդում դարձյալ Ղևոնդը։ Նա պատմում է, որ նշված թվականին հայ հայրենասերները, Արտավազդ Մամիկոնյանի գլխավորությամբ, ապստամբում են խալիֆայության դեմ, սպանում Շիրակի Կումայրի գյուղում արաբական հարկահավաքին և ի վիճակի չլինելով կռվելու արաբական կազմակերպված և գերազանց ուժերի դեմ, փախչում, ապաստանում են Վրաստանում։ Արտավազդ Մամիկոնյանը, գրում է Ղևոնդը, հարկահավաքին սպանելուց հետո՝ «համբառնայր ամենայն տամբ իւրով, գնայր ի կողմանս Վրաց աշխարհին և ընդ նմա ամենայն նախարարք աշխարհիս»[1]։ Հայ փախստականներին Վրաստանում ընդունում են բացառիկ սիրալիրությամբ, անգամ Արտավազդ Մամիկոնյանին տալիս են իշխելու, կառավարելու իրավունք. «...ստանայիր անձամբ գիշխանութիւն անձին իւրոյ ի վերայ Եգերացւոցն...»[2]։

Հաջորդ տարին, 775 թվականին, երբ հայ հայրենասերների զորքերը Արճեշում նորից բախվում են Հայաստան ուղարկված արաբական պատժիչ նոր զորաբանակի հետ և պարտություն կրում, հայ կռվող զորքի մի մասը նորից տեղափոխվում և ապաստանում է Վրաստանում։ Ի դեպ, Վրաստան տեղափոխված այս զինվորականության մեջ է գտնվում Աշոտ Բագրատունին — շրջահայաց և հեռատես մի անձնավորություն, որին հաջողվում է հիմնել Կղարջք — Տայքում անկախ իշխանություն Արտանուջ մայրաքաղաքով։ Այս Աշոտից է սկիզբ առնում Վրացական Բագրատունիների դինաստիան, որը իշխում է IX դարի սկզբներից մինչև XIX դարը։

Արաբական պատմիչներից մեկը՝ Տաբարին, ուշագրավ տեղեկություններ է հաղորդում հայերի և վրացիների համատեղ պայքարի մասին Թբիլիսիում՝ ընդդեմ խալիֆաթի պատժիչ զորամասերի։ 851—853 թվականներին, ինչպես հայտնի է, Հայաստանում և Վրաստանում բռնկվում է խոշոր ապստամբություն խալիֆայության դեմ։ Ապստամբները ոչնչացնում են Անդրկովկասում գտնվող արաբական բոլոր կայազորները և կամ նրանց դուրս քշում երկրից։ Ապստամբությունը ճնշելու համար Անդրկովկաս է ուղարկվում արաբական մի խոշոր բանակ՝ արյունառուշտ Բուղայի գլխավորությամբ։ Բուղան արյան մեջ ճնշելով հայկական ցրված ուժերը, 853 թվականին շարժվում է դեպի Վրաստան և շրջապատում Թբիլիսի քաղաքը։ Տաբարիի վկայություններից երևում

---

[1] Ղևոնդ, էջ 138։

[2] Նույն տեղը, էջ 139։

է, որ Թբիլիսիի պաշտպանների շարքում գտնվել են նաև խութեցիները։ «Այս քաղաքը (այսինքն՝ Թբիլիսին — Ա. Ա.),— գրում է նա,— շինել է Անուշիրվան թագավորը, իսկ Իսահակը ամրացրել էր, նորա շուրջը փոս փորել և քաղաքի մեջ դրել խութեցիներից և այլոց պահակ զորք։ Բուղան շնորհեց բնակիչներին ներումն այն պայմանով, որ նոքա իրենց զենքերը վայր դնեն և գնան, ուր կամենան»[1]։ Ինչպե՞ս բացատրել քաջարի խութեցիների ներկայությունը Թբիլիսիում 853 թվականին։ Այդ երկու կերպ կարելի է բացատրել, ինչպես փորձել է անել բանասիրական գիտությունների թեկնածու Վ. Նալբանդյանը. կամ այն է, որ Տարոնի ապըստամբությունը ճնշվելուց հետո խութեցիները խույս տալով հետապնդումից, եկել, հասել էին այստեղ, կամ Թբիլիսիի ամիրան՝ Սահակը, լսելով խութեցիների քաջության մասին, ինքն էր հրավիրել նրանց՝ քաղաքի պաշտպանությունն ավելի վստահելի դարձնելու նպատակով[2]։ Բոլոր դեպքերում արաբ պատմիչի վերև բերված վկայությունը ցույց է տալիս, որ հայ-վրացական ժողովուրդների քաջարի զավակները մաքառել են թշնամու դեմ ձեռք-ձեռքի տված և թափել իրենց արյունը՝ Թբիլիսիի պաշտպանության համար։

Հայ բնակչության գաղթը դեպի Վրաստան սկսում է մասսայական բնույթ ստանալ հատկապես հայ Բագրատունիների անկումից և Անի մայրաքաղաքը բյուզանդացիների կողմից գրավելուց հետո։ Վրաստանը դեռ չէր ընկել օտար լծի տակ, ուստի հայ բնակչության որոշ խավեր նախընտրում են ապաստանել այնտեղ։ Մեծանում են հայ գաղթականական օջախները մասնավորապես Դմանիսում, Շամշուդեում և Թբիլիսիում։ Հայ հայրենասեր շրջաններն այժմ իրենց ազատագրական հույսերը սկսում են կապել վրաց Բագրատունիների հետ՝ ակնարկելով նրանց օգնությամբ ազատագրել Հայաստանը։ Առաջանում է քաղաքական նոր գաղափարախոսություն՝ Հայաստանի ազատագրությունը՝ վրաց Բագրատունիների գլխավորությամբ[3]։

XII դարի պատմիչ Մատթեոս Ուռհայեցու հաղորդած տեղեկություններից երևում է, որ վրաց Դավիթ Շինարար թագավորի

[1] Արաբացի մատենագրերը Հայաստանի մասին, հավաքեց և թարգմանեց Բ. Խալաթյանց, Վիեննա, 1919, էջ 100։

[2] Վ. Ս. Նալբանդյան, Թբիլիսին հայ մատենագրության մեջ, Երևան, 1958, էջ 63։

[3] Ա. Հովհաննիսյան, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, 1-ին գիրքը, Երևան, 1957, էջ 141։

չուրջն են սկսում հավաքվել հայկական ցրված զորամասերը, որոնք գործուն մասնակցություն են ցուցաբերում Անդրկովկասը սելջուկյան հարստահարիչներից մաքրելու գործում։

Դավիթ Շինարարին հաջորդող վրացական մյուս թագավորների գահակալությունների ժամանակ ևս վրացական բանակում շարունակում են գոյություն ունենալ հայկական զորամասեր, որոնք ուս-ուսի կռվում են ընդհանուր թշնամու դեմ։ Դրանով կարելի է բացատրել այն արտակարգ բարյացակամությունը, որ վրացական արքունիքը ցուցաբերում էր հայ գաղթականության նկատմամբ։ Ուռհայեցին խոսելով Դավիթ Շինարարի՝ հայ գաղթականության նկատմամբ ցուցաբերած սիրալիրության մասին, նշում է, որ նա հայ գաղթականության համար կառուցել է տվել հատուկ քաղաք։ «Սա,— գրում է պատմիչը,— երևեցաւ ընդունող և սիրող ազգին Հայոց... շինեաց քաղաք Հայոց յաշխարհին Վրաց և հաստատեաց եկեղեցիս և վանորայս բազումս, և անուանեաց զանուն քաղաքիս Գօռա (=Գորի) և ունէր մեծաւ ուրախութեամբ և ցնծութեամբ զամենայն ազգն Հայոց»[1]։

XII դարի յոթանասունական թվականներին այնքան հայ գաղթականություն է հավաքվում Վրաստանում, որ անհրաժեշտ է լինում հայ եկեղեցուն դավանող հավատացյալների թեմ հիմնել՝ թեմական առաջնորդի կենտրոն ընտրելով Թբիլիսի քաղաքը։ XII դարում Թբիլիսիի հայոց թեմի առաջնորդներից մատենագրության մեջ տեղեկություններ են պահվել Բարսեղ եպիսկոպոսի մասին, որը 1179 թվականին մասնակցել է Հռոմկլայում հրավիրված ազգային եկեղեցական ժողովին։ Նա հեղինակավոր անձնավորություն է եղել և եկեղեցական ժողովին մասնակցող պատգամավորների շարքում հիշվում է յոթերորդ տեղում որպես պատգամավոր, «թագաւորանիստ քաղաքին վրաց Տփխեաց»[2]։ Հայ մատենագրության մեջ տեղեկություններ կան Թբիլիսիի հայկական թեմի այլ եպիսկոպոսների մասին ևս (Անանիա, Հովհաննես և ուրիշներ)։

Վրաց Գեորգի III-ի գահակալության տարիներին ևս շարունակվում է Վրաստանում ապրող հայերի նկատմամբ բարյացակամությունը։ Ուռհայեցու հաղորդած մի տեղեկությունից երևում է, որ Գեորգի թագավորն՝ ընդառաջելով հայերի ցանկությանը, 1162 թվականին հարձակվում է շահարմենների վրա և ազատում Անի քաղաքը նրանց տիրապետությունից։ Այնուհետև, գրում է պատմիչը, Գեորգի թագավորը քառասուն հազար դահեկան գու-

[1] Ուռհայեցի, էջ 356։

[2] Մ. Չամչյան, Պատմ. Հայոց, III, էջ 132։

մար է քաց թողնում՝ Անիից գերի տարված բնակչությանը ետ գնելու համար[1]։

Պատկերացնելու համար, թե ինչպիսի վերաբերմունք է ցուցաբերել վրաց արքունիքը հայերի, մասնավորապես պատերազմներում աչքի ընկած հայ զինվորների նկատմամբ, բավական է հիշել այն մեծ իրավունքները, որ վրաց արքունիքը վստահած է եղել երկու հայ իշխաններին՝ եղբայրներ Զաքարեին և Իվանեին։ Թամար թագուհու ժամանակ առաջինը վարում էր ամիրսպասալարության բարձր պաշտոնը, իսկ Իվանեն՝ աթաբեկությունը։

Վրաց արքունիքի այս երկու բարձրաստիճան հայերը հսկայական ջանքեր են գործադրում Արևելյան Հայաստանը սելջուկյան լծից ազատագրելու ուղղությամբ։ Ըստ պատմիչների հաղորդած տեղեկությունների, նրանց հաջողվում է օտարերկրյա տիրապետությունից ազատագրել Անին, Դվինը, Վաղարշապատը, Կաղզվանը, Ամբերդը, Կարսը, Գառնին և այլ շրջաններ ու քաղաքներ։

Հայ և վրաց պատմիչներն արտակարգ գովեստով են խոսում Զաքարե և Իվանե եղբայրների գործունեության մասին, որպես աչքի ընկնող և սիրված գործիչների։ Ըստ Թամար թագուհու պատմիչի՝ Բասիլի տեղեկության, Զաքարեն և Իվանեն «...իմաստուն էին, քաջ, լավ փորձառու և հավատարիմ»[2]։ Թամար թագուհու գահակալության տարիներին վիրահայկական միացյալ բանակի թշնամու դեմ տարած աչքի ընկնող հաղթանակներից մեկը՝ Ռուքն-էդ-դին սուլթանի դեմ տարած հաղթանակն էր, որը տեղի է ունեցել 1202 թվականին Բասենի ճակատամարտում։ Այս մասին մանրամասն տեղեկություններ է պարունակում Մուշի նշանավոր «Ճառընտիր»-ը[3]։ Ժամանակակից հիշատակարի տեղեկություններից երևում է, որ Ռուքն-էդ-դինը հսկայական բանակով հարձակվում է Անդրկովկասի վրա։ Նրա դեմ են դուրս գալիս վիրա-հայկական զորքերը Զաքարեի և Իվանեի գլխավորությամբ և աքցանի մեջ առնելով, թշնամուն պարտության են մատնում. նրանք հրսկայական ռազմավարով և գերիներով ետ են վերադառնում։

Այս հաղթանակը հսկայական նշանակություն ունեցավ Անդրկովկասի համար։ Թշնամիները վերջնականապես համոզվեցին, որ ավելորդ են իրենց թափած ջանքերը՝ նորից գրավելու

[1] Մ. Ուռհայեցի, էջ 427։

[2] Басили, Историк царицы Тамары (Տե՛ս «Памятники эпохи Руставели», Л., էջ, 48)։

[3] Տե՛ս Գ. Կ. Հովսեփյան, Հիշատակարանք ձեռագրաց, հ. Ա, Անթիլիաս, 1951, էջ 712։

Անդրկովկասը և իրենց տիրապետությունը հաստատելու այնտեղ։

Հայ-վրաց ժողովուրդների արտաքին թշնամու դեմ մղած համատեղ պայքարի ուշագրավ փաստերից է Արդավիլի սուլթանի հետ տեղի ունեցող միջադեպը, որի համառոտ պատմությունը հետևյալն է։ Արդավիլի սուլթանը 1207 թվականին գաղտագողի հարձակվում է Անիի վրա, մտնում քաղաք, ավերում ու հսկայական ավար և գերիներ վերցրած ետ վերադառնում։ Երբ այդ իմանում են Զաքարեն և Իվանեն, իսկույն հայ-վրացական զորքերով արշավում են Արդավիլի վրա, ջարդում սուլթանին և ավարն ու գերիները ետ վերադարձնում։

Ակադ. Ն. Մառը, վրաց պատմիչի հաղորդած տեղեկության հիման վրա, անդրադառնալով այս միջադեպին, հետևյալ եզրակացության է հանգում. «Վրաց պատմիչի բերած միջադեպը եզակի դեպք չէ, որի մեջ հաղորդվում է հայ-վրացական ազգային տարրերի համերաշխությունը՝ սրանց կամ նրանց համատեղ պայքարի մասին՝ ի փառս ինչպես հայ, այնպես և վրաց ժողովուրդների։ Թամարի թագավորության ժամանակաշրջանում Զաքարեն և Իվանեն հայկական միակ իշխանները չէին միայն, որոնք իրենց փայլուն արշավանքներով հայտնի էին վրաց ժողովրդի պատմության մեջ... Դժվար օրերում զենքը պաշտպանում էր նրանց ընդհանուր շահը։ Իրենց փոխհասկացողությամբ հայկական և վրացական այդ գործիչները շարունակում էին միայն կովկասյան կյանքի լավագույն տրադիցիաները։ Թամարից 150 տարի առաջ հայ զորավար Վահրամ Պահլավունու ռազմական հաջողությունների մասին վրացական զորքերը երգ էին երգում որպես կիսաստծու հաջողություններ»[1]։

Հայ բնակչության գաղթը դեպի Վրաստան անընդմեջ շարունակվում է Հայաստանը մոնղոլների կողմից գրավելուց և հարկային ծանր վարչակարգ սահմանելուց հետո ևս։ Վրաստանում հավաքված հայ բնակչությունը նորից շարունակում է իր հայրենիքի ազատագրության հույսերը կապել վրաց Բագրատունիների հետ։ Հայ մատենագրության մեջ հաճախ են պատահում, որ վրաց այս կամ այն թագավորը հիշվում է ոչ միայն վրաց թագավոր, այլև հայոց թագավոր։ Այսպես, օրինակ, Ավանում գտնված մի արձանագրության մեջ վրաց Դեմետրե թագավորը (1270—1285 թթ.) հիշված է «Վրաց և Հայոց» թագավոր[2]։ 1323 թվակա-

[1] Н. Я. Марр, Ани, Л.—М., 1934, էջ 40։

[2] Կ. Ղաֆադարյան, Ավանի երկլեզվյան ծածկագիր արձանագրությունը, Երևան, 1945, էջ 20։

նին Գլաձորում գրված մի հիշատակարանում վրաց Գեորգի թագավորը հիշված է դարձյալ որպես «Տանն Վրաց և Մեծաց Հայոց թագաւոր»[1]։ 1417 թվականին գրված մի ձեռագրի հիշատակագիր արձանագրելով վրաց Գեորգի թագավորի մահը, վշտով նկատում է, որ այդ կորուստը անչափ աղետաբեր է եղել նաև հայ ժողովրդի համար. «Զի փոխանորդ զնա ունէաք մեր մեծ ազգին, զոր կորուսաք»[2]։ Թովմա Մեծոփեցին խոսելով Ջհան շահի 1440 թվականին Վրաստանում կատարած վայրագությունների մասին, միաժամանակ նշում է, որ վրաց իշխանները անկարող գտնվեցին պաշտպանելու հայրենիքը։ Այդ կապակցությամբ պատմիչը նկարագրում է այն կսկիծը, որ ապրեցին հայերը՝ Վրաստանի հարստահարությունը տեսնելով. «...մեք հանապազ յոյս ի Վրացիսն ունելով պարծէաք ի մէջ անօրինաց, յայնմանէ յուսահատեալ առաջի անօրինաց ափիբերան եղաք»[3]։

Վրաստանի հայկական գաղթօջախը տվել է ոչ միայն լավ զինվորներ, այլև հայ գրչության նշանավոր օջախներ, ուր ընդօրինակվել և մանրանկարվել են արժեքավոր հայկական ձեռագրեր, գրվել են ինքնատիպ աշխատություններ, կատարվել են թարգմանություններ և շնորհակալ ջանքեր են գործադրվել՝ հայ մատենագրության երկերը կորստից փրկելու ուղղությամբ։ Այսպես, օրինակ, այժմ Հայկ. ՍՍՌ մատենադարանի սեփականությունն է խոնացած մի ձեռագիր, որը ժամանակին գտնվել է Մուղանի թաթարների մոտ «գերության» մեջ։ Ավարառուները ձեռագիրը բերել են Թբիլիսի վաճառելու։ Քաղաքի Հայկական համայնքում գնել են ձեռագիրը և նվիրել տեղի Ս. Քառասնից կոչվող եկեղեցուն։ Հայ մատենագրության աչքի ընկնող ներկայացուցիչներից մեկը՝ Վանականը, ձեռագրի չգրված սպիտակ էջերից մեկի վրա գրի առնելով տվյալ ձեռագրի «գերության» և «ազատագրության» տխուր պատմությունը՝ իր հաղորդած տեղեկությունը ավելի հավաստի դարձնելու համար միաժամանակ ավելացրել է. «Ես՝ Վանականս, գրեցի իմով ձեռամբս ի Տփխիս քաղաքի»[4]։

Վերև հիշված ձեռագրի բախտին է արժանացել նաև Վարդան Արևելցու նշանավոր «Պատմութիւն Հայոց» աշխատությունը. 1265 թվականին Վարդան պատմիչը, Հուլավու խանի մոտից վերադառ-

[1] ՀՊՄ, ձեռ № 6289, թ. 283ա-բ։
[2] ՀՊՄ, ձեռ. № 8689, թ. 17բ։
[3] Թովմա Մեծոփեցի, Պատմութիւն Լանկ Թամուրայ, Փարիզ, 1860, էջ 123։
[4] Գ. Կ. Հովսեփյան, Հիշատակարանք, էջ 903։

նալիս ընկնում է ավազակների ձեռքը և կողոպուտի ենթարկվում։
Ավազակները նրանից վերցնում են նաև «Պատմության» ձեռագիրը, որը նույնպես բերում են Թբիլիսի և վաճառում տեղի հավ-
յերին, որոնք գնելով այն՝ վերադարձնում են հեղինակին։ Վարդանը ետ ստանալով աշխատությունը, որպես վերջաբան, անհրաժեշտ է համարում շարադրել իր ձեռագրի գերեվարության
պատմությունը[1]։ Ահա մի այլ ձեռագիր ևս, որը գրվել է Թբիլիսում 1304 թ., բայց թափառիկ ճակատագիրը նրան նետել է
օտարություն՝ հասցնելով հեռավոր Իտալիայի Վենետիկ քաղաքը։
Ձեռագրի հիշատակարանում կարդում ենք. «Արդ, գրեցաւ սա ի թագաւորական քաղաքս ի Տփխիս ձեռամբ խաչատուր սարկաւագի, մեղուցեալ և անպիտան գրչի՝ ի վայելումն Մարտիրոսի, որդւոյ Աստուածատուրի»[2]։

XV դարում Թբիլիսիի հայ գրչության օջախում գործող փայլուն դեմքերից է հանդիսացել Սարգիս գրիչը, որի մասին արտակարգ գովեստով են խոսում իր ժամանակակիցները։ Այսպես, օրինակ, Հայկ. ՍՍՌ մատենադարանի № 5784 ձեռագրում, որը գրված է 1444 թվականին, Սարգիսը հիշված է որպես «անյաղթ փիլիսոփա»[3]։ Սարգիսը որպես այդպիսին հիշված է այլ ձեռագրերի հիշատակարաններում ևս՝ Հայկ. ՍՍՌ մատենադարանի № 7839, թ. 357բ։ և Լենինգրադի արևելագիտական ինստիտուտի հայկ. ձեռ. № 38 թ.։

Վրաստանի հայ գաղթականության դրությունը զգալիորեն վատթարանում է XV—XVII դարերում, երբ Վրաստանը մասնատվում է քաղաքական մանր իշխանությունների և ընկնում պարսկա-թուրքական արյունոտ լծի տակ։ Վրաստանի հայ բնակչությունը այդ ժամանակ լիովին բաժանել է այն ծանր ողբերգությունը, որն ապրել է վրաց ժողովուրդը օտարերկրյա հարստահարիչների անարգ լծի տակ։

XV դարից սկսած Վրաստանում մոլեգնող արհավիրքները բազմատեսակ են եղել՝ կոտորած, ավարառություն, գերեվարություն, անտանելի ծանր հարկեր, մանկահավաք և այլն։ Ժամանակակից պատմիչները վկայում են, որ նշված դարերում արևելյան շուկաները լցված էին Անդրկովկասից տարված գերիներով, որոնք էժան գներով վաճառքի էին հանվում ամենուրեք։

[1] Վարդան Մեծ, Պատմութիւն տիեզերական, Մոսկվա, 1861, էջ 213։
[2] Բ. Սարգիսյան, Վենետիկի Մխիթարյանների մատենադարանի ձեռ. ցուցակ, հ. Ա, էջ 488։
[3] ՀՊՄ, ձեռ. № 5784, թ. 357ա։

Ի միջի այլոց, հայերը, որպես վրաց ժողովրդին բախտակից և նեղ օրվա ազնիվ բարեկամ, արտակարգ կարեկից վերաբերմունք են ցույց տվել վրաց գերիների նկատմամբ. աշխատել են փրկագին տալ և ազատել նրանց գերությունից։ Թովմա Մեծոփեցին պատմում է, որ 1416 թվականին Ուզուն Հասանը երբ մտավ Վրաստան և մեծ թվով գերիներ վերցնելով վերադարձին անցնում էր Հայաստանից, հայ բնակչությունը միջոցներ չէր խնայում վրացի գերիներին ազատելու համար. հայ կանայք տալիս էին «զարդարանքս իւրեանց... արք՝ զանասունս... ումն ոչխարիկ և ումն տաւարիկ կայր՝ տային և գնէին»։ Եվ գերեվարող հարստահարիչները տեսնելով հայերի՝ վրաց գերիներն ազատագրելու գործում ցուցաբերած արտակարգ փութաջանությունը, շարունակում է Մեծոփեցին, բարձրացնում էին գերիների գինը. «...եւ տեսեալ անօրինացն զյօժարութիւն նոցին՝ զամէն գերին հանեցին ի 10 000 և ի 20 000... դահեկան»[1]։

Վարքագրական մի աշխատության մեջ, որը նվիրված է Թավրիզի հայ բնակիչ Միրաքին (որը սպանվել է 1486 թվականին), վարքագրությունը կազմող հեղինակը, թվարկելով Միրաքի մի շարք բարերարությունները, առաջին հերթին հիշում է այն, որ Միրաքը «Քաղում ոգիս ի գերելոցն Վրաց տանայ՝ արս և կանայս, ձերս և տղայս գնեալ ոսկով և արծաթով ի յանօրինաց և թափեալ ազատեաց զնոսա՝ գնալ ի տեղիս իւրեանց...»[2]։

Վրաստանից տարված գերիների մեջ փոքր թիվ չեն կազմել նաև Վրաստանում ապրող հայերը։ Օրինակ, Ջհան շահի 1440 թվականին Վրաստանում կատարած ասպատակությունների ժամանակ տեղի հայ բնակչությունից 12.000 հոգի կոտորվել և գերեվարվել են։ Այդ նույն տարում գրված մի ձեռագրի հիշատակարանում կարդում ենք. «ՊՁԹ (1440) թվականին Ջհանշահ Ամիրզէն ի Վրաց տուն մտաւ. և շատ աւեր արար, և զեկեղեցիքն քանդեց, և քան տասն երկու հազար աւելի ի հայոցս՝ զորս սպան և զորս գերի վարեաց»[3]։

Առաքել Դավրիժեցու վկայությունից երևում է, որ Շահաբասի՝ Վրաստանից քշած տասնյակ հազարավոր գաղթականության մեջ եղել են նաև հայեր, որոնք վրացիների հետ միասին բնակեցվել են Սպահանի մոտ՝ Ֆահրապատի ճահճուտներում[4]։

[1] Թովմա Մեծոփեցի, էջ 78։
[2] ՀՊՄ, ձեռ. 6273, թ. 199ա (Համմ. «Հայոց նոր վկաները», էջ 322)։
[3] Գ. քահ. Աղանյան, Դիւան հայոց պատմության, հ. X, էջ 18։
[4] Առաքել Դավրիժեցի, Պատմութիւն Հայոց, էջ 132—133։

1795 թվականին Աղա Մամադ խանի՝ դեպի Վրաստան կատարած արշավանքների ժամանակ, վրաց ժողովրդի դժբախտությունը բաժանել են նաև հայերը։ Թբիլիսիում և նրա շրջապատում բազմաթիվ հայեր սպանվել են և գերեվարվել։ Ըստ մի տեղեկության, այս արշավանքի ժամանակ է սպանվել հայ անմահ բանաստեղծ Սայաթ-Նովան[1]։

Անհրաժեշտ է նշել, որ հայերը և վրացիները, բախտակից այս երկու ժողովուրդները, ստրկորեն չեն ենթարկվել պարսկական բուրքական հարստահարություններին. նրանք միշտ հերոսական պայքար են մղել իրենց ազատագրության համար։ Ուշագրավ է այն փաստը, որ այս երկու ժողովուրդների ազատագրական ծրագրերը, նրանց ձգտումները և դեգերումները գրեթե անցել են միևնույն ճանապարհով։ Ըստ որում, Հայաստանի և Վրաստանի ազատագրության ջանքերը կատարվել են միմյանց հետ համաձայնեցված։ Այսպես, հայտնի է, որ 1679 թվականին, երբ Հակոբ Ջուղայեցին մեկնում էր Եվրոպա այսպես կոչված քրիստոնյա երկրներից օգնություն խնդրելու՝ ազատագրության համար, նա մեկնելուց առաջ լինում է Վրաստանում, բանակցում վրացական ազատագրական շրջանների հետ, իր պլանները համաձայնեցնում նրանց հետ և նոր միայն մեկնում Պոլիս՝ Եվրոպա անցնելու համար։ Սակայն, ինչպես հայտնի է, այդ բանակցությունը վերջնում է անհաջողությամբ[2]։ XVIII դարի սկզբներում, երբ Օրին գտնվում էր Մոսկվայում ու բանակցություններ էր վարում ցարական արքունիքի հետ, Հայաստանի ազատագրության հարցը արծարծվում է Վրաստանի հետ միասին, ի՞նչ ճանապարհներով կարող են ռուսական զորքերը մտնել Վրաստան և Հայաստան, ինչքա՞ն կռվող ուժ կարող են տրամադրել տեղացիները և այլն[3]։ Հայտնի է, որ 1722 թվականին սյունեցիների խնդրանքով Վախտանգ VI և նրա որդի Շահնավազը, Սյունիքի ազատագրական շարժումը կազմակերպելու համար Մցխեթից այնտեղ են ուղարկել Դավիթ-Բեկին՝ իր զինակիցներով, որոնց կատարած սխրագործությունները հայ ժողովրդի պատմության մեջ ոսկե տառերով են արձանագրված։ 1722 թվականին, երբ Պետրոս Մեծը սկսել էր իր պարսկական նշանավոր արշավանքը և հասել էր Դերբենդ, ըստ նախապես պայմանավորվածության, հայ և վրաց զորքերը

[1] Տե՛ս Սայաթ-Նովա, հրատ. ակադ. Թղթ. անդամ Մ. Հասրաթյանի, Երևան, 1963, էջ XXXVI։
[2] Լեո, Հայոց պատմություն, հ. III, Երևան, 1946, էջ 347։
[3] Г. А. Эзов, Сношения Петра Великого с армянским народом, էջ 75 և այլ էջեր։

պիտի հանդիպեին Շամախում։ Ժամանակակից պատմիչներից մեկը՝ նսայի Հասան Ջալալյանը, նկարագրում է այն հրճվանքը և ոգևորությունը, որով տոգորված են եղել Պետրոսին դիմավորելու գնացող հայ և վրաց զորամասերը[1]։ Եվ ինչքան մեծ է եղել նրանց հիասթափությունը, երբ իմացել են, որ Պետրոս Մեծը ետ է վերադարձել Դերբենդից[2]։

Ստեղծված քաղաքական անբարենպաստ պայմանների հետևանքով Վախտանգը կորցրեց իր գահը, իսկ Արևելյան Հայաստանը ենթարկվեց աննկարագրելի հարստահարության՝ սկզբում թուրքերի, իսկ հետո պարսիկների կողմից։ Եվ վերջապես, XVIII դարի վաթսունական թվականներին Հովսեփ Էմինը գալով Վրաստան միայն մի երազանք է ունեցել՝ կազմակերպել Վրաստանում հայերից և վրացիներից մեծ ու լավ զինված բանակ և նրա օգնությամբ ազատագրել իր հայրենիքը[3]։ Հայ-վրացական համատեղ ջանքերը ազատագրության համար շարունակվեցին Հերակլի ժամանակ։ Հայ ազատագրական շարժման ականավոր ներկայացուցիչներից մեկը՝ Շահամիր Սուլթանում Շահամիրյանը, որը սերտ հարաբերությունների մեջ է գտնվել Հերակլ թագավորի հետ, ամեն կերպ աշխատել է համոզել նրան, որ նա իր վրա վերցնի Արևելյան Հայաստանի ազատագրության պատվաբեր միսիան։ Շահամիրյանն իր 1787 թվականի հոկտեմբերի 15-ին Հերակլին գրած նամակում խորհուրդ է տվել ո՛չ միայն ազատագրել Հայաստանը, այլ օգտվելով պարսկական իշխանության քայքայված վիճակից, առապալել այն և իշխանության գլուխ կանգնել։ Շահամիրյանը գտնում է, որ Հերակլը այդ անելու օրինական բոլոր հիմքերն ունի. «Ի պակասել սերնդոց սեֆեֆի ժառանգության Պարսից,— գրում է նա,— պարտ է մտածել և ժառանգորդ լինել մի ի սերնդոց երից վալուս, այսինքն՝ յԱւիզուս կամ Սիստանայ և կամ Գուրջիստանայ... և այժմ ունիս իթաւունս ընդ օրինօք նոցա ժառանգել, առաջնորդել ի տեղի նոցա (այսինքն՝ Սասանյանների)»[4]։ Տիրապետելուց հետո, Շահամիրյանի կարծիքով, կառավարելը հեշտ կլինի, եթե միայն ժողովրդին ազատություն տաս և կրոնական հանդուրժողականություն ցուցաբերվի։ Ինչ վերաբերում է Արևմտյան Հայաստանին, ապա իշխանության գլուխն անցնելուց

[1] Эзов, Сношения..., էջ 336։
[2] Նույն տեղը, էջ 337։
[3] Տե՛ս А. Р. Иоаннисян, Иосиф, Эмин, Ереван, 1945, աշխատությունը։
[4] ՀՊՄ, ձեռ. 2949, թ. 277բ։

հետո, եթե Հերակլը վերացնի ճորտությունը և լավ կարգ ու կանոն ստեղծի երկրում, «վասելի արասցեն նոցա քաղցրութիւն յօրինաց քոց և ազատութիւն քոյին»[1], որից հետո արևմտահայերը հոժարակամ կգան և կմտնեն նրա հովանավորության տակ։ Թե ինչով վերջացան հայ և վրաց ժողովուրդների ազատագրական այս ձգտումները, այս մասին մանրամասն մենք կխոսենք հետագայում։ Այժմ անհրաժեշտ է պատասխանել մի հարցի՝ Վրաստանի ո՞ր վայրերում են գտնվել հայկական գաղթօջախները և մոտավորապես ի՞նչքան հայ բնակչություն է ապրել այնտեղ։

Այս մասին, դժբախտաբար, սկզբնաղբյուրները աղքատ են և որոշակի տեղեկություններ չեն հաղորդում։ Բացի այդ, միջին դարերում, տարբեր ժամանակներում, փոփոխվել է ինչպես բնակչության թիվը, այնպես էլ բնակավայրը։ Բայց ընդհանուր պատկերացում տալու համար անհրաժեշտ ենք համարում, այնուամենայնիվ, բերել մի քանի պատմական հիշատակություններ։

Հայկական ամենախոշոր գաղթօջախներից մեկը Վրաստանում գտնվել է Թբիլիսիում։ XIII դարի ճանապարհորդ Մարկո Պոլոն իր «Ուղեգրության» մեջ նկարագրելով Թբիլիսին, հետևյալ ուշագրավ տեղեկությունն է հաղորդում նրա բնակչության մասին. «Այս երկրում (այսինքն՝ Վրաստանում — Ա. Ա.) մի հիանալի քաղաք կա Թբիլիսի անունով, որը շրջապատված է արվարձաններով և բազմաթիվ ամրություններով։ Բնակիչները քրիստոնյաներ են՝ հայեր և վրացիներ, կան և մի քանի ատուկինոսցիներ և փոքր թվով էլ հրեաներ»[2]։ Այս տեղեկության մեջ հայերը, ինչպես տեսնում ենք, հիշվում են որպես քաղաքի հիմնական բնակիչներից մեկը։

Հայկ. ՍՍՌ մատենադարանի մի ձեռագրի հիշատակարանում գրիչը խնդրում է հիշել տեղի ծխատեր ութ քահանաներին, որոնց թվարկում է նա անուններով։ Բայց կարող են, անշուշտ, թբիլիսիում եղած լինել նաև հայ այլ քահանաներ, որոնք չեն հիշված հիշատակագրի մեջ։ Այս հիշատակությունը մեզ որոշ հնարավորություն է տալիս տեղի հայ համայնքի բնակչության թվի մասին հաշվումներ կատարելու։ Եթե ընդունենք, որ յուրաքանչյուր ծխատեր քահանա պարտավոր է եղել հովվել 150—200 ծուխ, ապա ութ քահանաները պիտի հովվելիս լինեն 1400-ից մինչև 1600 ծուխ. եթե յուրաքանչյուր ծխում, միջին հաշվով, ընդունենք 5

[1] ՀՊՄ, ձեռ. 2949, թ. 278ա։
[2] Путешествие Марко Поло, перевод И. Минаева, СПБ, 1873, էջ 30։

շունչ, ապա Թբիլիսիում այդ ժամանակ ապրած պիտի լինեին 7000—8000 հայ բնակիչ։

XVIII դարում Տուրնեֆորը Թբիլիսիի բնակչությունը հաշվում է 20.000 հոգի, որից 12 հազարը հայեր են եղել[1]։

Հայ բնակչության մի այլ խոշոր հատված գտնվել է Գորի քաղաքում։ XVII դարում հայ բնակչությունն այնքան մեծ թիվ է կազմել, որ էջմիածինն անհրաժեշտ է համարել Վրաստանում նոր թեմ կազմել՝ թեմական առաջնորդի կենտրոն դարձնելով Ուփլիսցիխե ավանը։ Հակոբ կաթողիկոսը 1660 թվականին մի կոնդակ ունի գրած այդ թեմի հայկական համայնքին. «Ուփլիսցիխեի սուրբ նշանի օրհնեալ վիճակի ու թեմի հայազգի քահանաներին, դիվլաթորներին, տանուտերներին և առհասարակ ժողովուրդին...»[2]։ Հայ բնակչության ստվար հատված եղել է նաև Փոթիում։ Դեռևս XV դարի եվրոպացի վաճառականներից մեկը՝ Ամբրոսիոս Կոնտարինին, 1473—1477 թվականների ուղեգրության ժամանակ Վրաստանի Փոթի քաղաքի մոտ տեսել և հիշում է հայկական ինը գյուղ[3]։ Հայկական բնակչության մի խոշոր հատված ապրել է նաև Շամշուդեյում։ Ակադ. Ա. Հովհաննիսյանի օգտագործած մի աղբյուրից երևում է, որ Շամշուդեյում XV դարում եղել է մինչև 20.000 հայ բնակչություն[4]։ Սիմեոն կաթողիկոսը 1763—1767 թվականներին գրած իր կոնդակներում հիշում է Թբիլիսին, Գորին, Կախեթը, Քիսեղը և Թելավը որպես հայկական գաղթօջախներ[5]։ Նրա կազմած վիճակագրական մի ցանկից երևում է, որ հայերը Վրաստանում ապրում են հետևյալ վայրերում. Թբիլիսի, Գորի, Սուրամ, Կրցխուա, Ախալգոր, Սայրխեթա, Անանուր, Դուշեթ, Այինու ձոր, Սաարսաթյան, Կախեթ, Թելավ և Քիսղև։

* *
*

Վրաստանի հայ գաղթօջախների մասին խոսելիս անհրաժեշտ է նշել այն խոշոր դրական դերը, որ ունեցել են նրանք հայ-վրացական մշակույթների փոխազդեցության բնագավառում։ Վրաստանում երկար ապրող հայ մատենագիրը կամ հայ վարպետը տեղացիներին տվել է լավագույն այն ամենը, ինչ նա բերել է իր հայրենիքից՝ Հայաստանից և, հակառակը, տեղացիներից վերցրել և իր հայրենիքն է փոխանցել այն ամենը, ինչ դուր է եկել իրեն, ինչը իր սրտին մոտ է համարել։

Հայ-վրացական մշակութային շփումների առաջին փուլը համարվում են V—VIII դարերը, իսկ շփման ասպարեզը՝ ստորին Քարթլին և Պաղեստինի հայ-վրացական գաղթօջախները։ Պետք է ասել, որ օտարության մեջ գտնվող երկու ժողովուրդների բեկորները, որպես հավատակից և մոտիկ հարևաններ, ապրելով կողք-կողքի, մշակույթի բնագավառում զգալի չափով փոխազդել են իրար վրա։ Այս շրջանում հայ-վրացական մատենագրության փոխազդեցությունները նկատելի են գլխավորապես կրոնա-կանոնական գրականության բնագավառում։ Հայ-վրացական մշակույթների մերձեցման շրջանն է հանդիսացել մատենագրության երկրորդ փուլը կամ, ինչպես ընդունված է ասել՝ Տայք-Կղարջքյան շրջանը, այսինքն՝ այն ժամանակաշրջանը, երբ Տայքի և Կղարջքի գավառներն անցնում են վրաց գերիշխանության տակ և ստեղծված բարենպաստ քաղաքական իրադրության մեջ վերականգնվում են երբեմն խամրած Իշխանի, Շատբերդի, Միջնաձորի և գրչության նշանավոր այլ օջախները, որոնք և խոշոր դեր են կատարում հայ-վրացական մատենագրությունները բարձրորակ ստեղծագործություններով զարգացնելու ուղղությամբ։ Այս շրջանում հայերենից վրացերեն են թարգմանվել հայ պատմիչների աշխատություններից որոշ գլուխներ և հատվածներ՝ Ագաթանգեղոսից, պատմահայր Մովսես Խորենացուց, Փավստոս Բուզանդից և այլ հեղինակներից։ Վրացերենից հայերեն է թարգմանվել Եպիփան Կիպրացու, Գրիգոր Նյուսացու աշխատություններից, ինչպես նաև՝ վարքաբանական որոշ աշխատություններ, որոնք հավաքված են առանձին ժողովածուի մեջ[1]։

Վրացական մատենագրության զարգացման գործում XI դարում առանձնապես խոշոր է եղել մի հայ բարերարի՝ Գրիգոր Բակուրյանի, դերը։ Վերջինս, ինչպես պարզված է, Տայքի հայ իշխաններից է, եղել է Անի քաղաքի ամիրապետը, հետագայում ծառայել է բյուզանդական արքունիքում, աչքի է ընկել որպես լավ զինվորական և քաղաքական աշխատող, կալվածք է ստացել Բուլ-

---

[1] М. Полиетков и Г. Натадзе, Старый Тифлис в известиях, современников, Тбилиси, 1929, էջ 30։

[2] Գ. ք. Ազոնյան, (տե՛ս «Տարազ» 1919 թ., № 1—12, էջ 44)։

[3] Հ. Հակոբյան, Ուղեգրություններ, Երևան, 1932, էջ 244։

[4] Ա. Հովհաննիսյան, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, II գիրք էջ 327։

[5] Գ. ք. Ազոնյան («Տարազ», 1919 թ., էջ 164)։

[1] Լ. Մելիքսեթ-Բեկ, Հայ-վրացական գրական կապերի պատմությունից, «Էջմիածին», 1957թ., № 7—8, էջ 29։

զարխայի Բուշկովս քաղաքում և իր կալվածքում հիմնել վրացի և հայ հոգևորականներից բաղկացած միաբանություն. XI—XIII դարերում այստեղ ծաղկել է վրացական մշակույթի մի հրաշալի օջախ, որը և տվել է գիտության այնպիսի նշանավոր ներկայացուցիչ, ինչպիսին ականավոր փիլիսոփա Հովհան Պետրիցին է[1]։

Հայ-վրացական մշակույթի մերձեցման ամենափայլուն շըրջաններից է հանդիսացել մասնավորապես XI—XIII դարերն ընդգրկող ժամանակաշրջանը, երբ Վրաստանում ստեղծվում է միասնական բավականին հզոր պետություն, և երբ վրացական ֆեոդալական մշակույթը գտնվում էր իր բարձր զարգացման շրջանում։ Այս ժամանակ առանձնապես նկատելի է Հայաստանում գործող Պղնձահանքի (ներկայիս Ախթալան) գրչության օջախի դերը։ Այստեղ վրացերենից հայերեն են թարգմանվել պատմական և փիլիսոփայական մեծարժեք մի շարք աշխատություններ։ XII—XIII դարերում վրացերենից հայերեն կատարված թարգմանությունների շարքում պատկառելի տեղերից մեկը պատկանում է «Քարթլիս Ցխովրեբա»-ին, որն Անդրկովկասի ժողովուրդների պատմության արժեքավոր սկզբնաղբյուրներից է։ Նա պարունակում է բազմաթիվ տեղեկություններ ինչպես վրաց ժողովրդի, նույնպես և հարևան մյուս ժողովուրդների պատմության վերաբերյալ։ «Քարթլիս՝ Ցխովրեբա»-ն, ինչպես պարզված է, բաղկացած է վրացական մի քանի պատմական երկերից, որոնցից ամենահին մասի հեղինակը XI դարի պատմիչ Լեոնտի Մրովելին է։ «Քարթլիս Ցխովրեբա»-ի հնագույն ձեռագիրը գտնվում է Հայկական ՍՍՌ մատենադարանում։ Այն ընդօրինակված է XIII դարի 2-րդ կեսին. հրատարակված է երկու անգամ (Վենետիկում՝ 1884 թվականին Ա. Վ. Թիրյանի խմբագրությամբ, իսկ երկրորդ անգամ հրատարակել է պրոֆ. Ի. Աբուլաձեն 1953 թվականին)։

XIII դարում վրացերենից հայերեն է թարգմանվել Պրոկղ Դիադոխոսի «Շաղկապք աստուածաբանականք» փիլիսոփայական աշխատությունը։ Պրոկղը մեր էրայի V դարում ապրող հույն հեղինակ է, Պլատոնի ուղղության հետևող նշանավոր փիլիսոփաներից։ Պրոկղի այս աշխատությունը հունարենից վրացերեն էր թարգմանվել XII դարում, իսկ հաջորդ դարում վրացերենից թարգմանվել է հայերեն։ Թարգմանիչը՝ Սիմեոն Պղնձահանքեցին, թողել է հետևյալ հիշատակությունը այդ գրքի մասին (բերում ենք կրճատումով). «Թարգմանեցաւ գիրքս Պրոկղի Դիադոխոսի Պղատոնական իմաստասիրի ձեռամբ Սիմեոնի անպիտան քահանայի

[1] Н. Я. Марр, Аркаун, СПБ, 1905, էջ 19—21։

և կրօնաւորի ի Վրաց լեզուէ ի հայ լեզուս յերկիրս Հայոց ի վանս Վրաց, որ կոչի Պղնձահանք ի յաւիտենից թուականին ՑՁԾԶ (6756)... այլ զի ոչ էր սա թարգմանեալ ի մեր լեզու, յայն սակս թարգմանեցի, զի մի պակաս սա լիցի յազգէս մերմէ»[1]։ XIII դարում նույն Սիմեոն Պղնձահանքեցին վրացերենից հայերեն է թարգմանել Հովհաննես Դամասկացու (VIII դար) փիլիսոփայական աշխատության մի մասը։ Անհրաժեշտ է նշել, որ վրացական և հայկական այս թարգմանությունները հարազատորեն են պահպանել նախկին բնագիրը. նրանք նույնիսկ պարունակում են այնպիսի գլուխներ և հատվածներ, որոնք բացակայում են մեզ հասած հունարեն բնագրերում։ XIII դարում վրացերենից հայերեն է թարգմանվել Հովհաննես Կղեմաքսի «Սանդուխք աստուածային ելից» վերնագրով աշխատությունը։ Կղեմաքսը VI դարի հեղինակ է։ Նրա աշխատության առաջին մասը թարգմանված է եղել հունարենից հայերեն Մինաս Սյունեցու կողմից Տրապիզոնում, իսկ երկրորդ մասը թարգմանել է վրացերենից XIII դարում Սիմեոն Պղնձահանքեցին։ Հ. Ն. Ակինյանը հատուկ ուսումնասիրություն ունի նվիրված Սիմեոն Պղնձահանքեցու թարգմանական վաստակներին, որից երևում է, որ նրա թարգմանության շարքի մեջ մտնում է ինը աշխատություն[3]։

Պետականության հզորացման շրջանում Վրաստանում հանդես են եկել հայ բանաստեղծներ ու գրողներ, որոնք իրենց հաստատ լուման են ներդրել վրաց գրականության մեջ։ Այդպիսի հեղինակներից, օրինակ, կարելի է մատնացույց անել Սարգիս Թմոգվեցուն, որը հայտնի է եղել իր «Դիրալգեւ» բանաստեղծությամբ[4] և մեծ հռչակ է ունեցել որպես «գիտուն փիլիսոփա և հռետոր»[5]։ Ըստ մատենագրական տեղեկությունների, նա վրաց արքունիքում գործող Զաքարյանների բարեկամներից էր։

Վրացական հողի վրա ավելի ուշ դարերում հանդես եկող, ծագումով հայ՝ վրաց բանաստեղծներից է Փեշանգ Փաշվի-Բերդվաձեն, որը համարվում է վրաց գրականության պատմության մեջ առաջին հեղինակը, որն իր պոեմների սյուժեն ընտրել է անմի-

[1] Հայկ. ՍՍՌ մատենադարան, ձեռագիր № 5032, թ. 83ա։

[2] Հ. Ն. Ակինյան, Սիմեոն Պղնձահանքեցի և իր թարգմանությունները վրացերենե (տե՛ս «Հանդէս ամսօրեայ»-ի 1949 թվականի համարները)։

[3] Տե՛ս Վագրենավորի վերջաբանը։

[4] Խոսքը վերաբերում է Սարգիս I Թմոգվեցուն։

ջապես վրաց իրականությունից և սկիզբ դրել ռեալիզմին: Նա գրել է երկու նշանավոր պոեմ:

XVII դարում Վրաստանում գործող, մեծ վաստակ ունեցող հեղինակներից է հանդիսացել Բեկթաբեկը, վրաց Գեորգի Թագավորի դիվանապետը, որը կատարել է վրաց ձեռագրերի մի շարք ընդօրինակություններ: Մենք նրան ենք պարտական վրաց հանճարեղ բանաստեղծ Շոթա Ռուսթավելու հնագույն և լավագույն ձեռագրի ընդօրինակման համար, որը կատարված է 1680 թվականին: Մեզ հասած այս ձեռագիրը լավագույնն է համարվում բոլոր մեզ հասած ընդօրինակությունների մեջ:

Վրաց պատմագրության և լեզվաբանության մեջ XVII դարում հանդես եկող հեղինակների մեջ աչքի ընկնող հայերից է Փարսադան Գեորգիջանիձեն: Նա հեղինակ է մի քանի պատմա-բանասիրական աշխատությունների: Նրա գրչին է պատկանում «Վրաց պատմության»-ը նվիրված ստվար մի աշխատություն: Նա պարսկերենից վրացերեն է թարգմանել մահմեդական օրենսգիրքը, որը կրում է «Ջամի Աբասի» վերնագիրը: Եվ վերջապես, Գեորգիջանիձեն է կազմել վրացերեն-արաբերեն-պարսկերեն ընդարձակ բառարանը:

XVIII դարի վրաց մատենագրության նշանավոր անձնավորություններից մեկը՝ Սուլխան-Սաբա Օրբելիանին, իր կազմած «Բառարան»-ում, ի շարս այլ սկզբնաղբյուրների, օգտվել է 1666 թվականին Ամստերդամում հրատարակված հայկական Աստվածաշնչի հավելվածում զետեղված բառացանկից և Երեմիայի բառարանից:

Հայ և վրաց մերձեցումը ավելի լայն բնույթ է ստանում մասնավորապես XVIII դարի առաջին քառորդում: Վախթանգ VI և վրաց կաթողիկոս Անտոնի ժամանակ Վրաստանում մեծ աշխատանք է տարվում հայ մատենագրության աչքի ընկնող ստեղծագործությունները թարգմանելու ուղղությամբ: Դրա համար հրավիրվում են մի շարք հայ բանիմաց գրողներ և լեզվաբաններ, որոնք արքունիքի և կաթողիկոսի անմիջական հսկողության տակ սկսում են թարգմանական ծավալուն աշխատանք: Հայ թարգմանիչների մեջ աչքի ընկնող վաստակ են ունեցել Զաքարիա Մատինյանը (Մադինաշվիլին), բազմահմուտ փիլիսոփա Փիլիպոս Ղայթմազաշվիլին, Պետրոսը, Սամվելը և ուրիշներ: Թարգմանիչների այդ խմբի ջանքերով հայերենից վրացերեն են թարգմանվում Արիստոտելի «Ստորոգություն»-ը, Կյուրեղ Աղեքսանդրացու «Գանձեր»-ը, Եփեսոսի ժողովի պատմությունը, ասորա-հռոմեական

կոչվող դատաստանագիրքը, Մխիթար Գոշի «Դատաստանագիրք»-ը և այլն[1]:

Հայերենից վրացերեն են թարգմանվում մի շարք դասագրքեր՝ Մխիթար Սեբաստացու «Ճարտասանություն»-ը, «Քերականություն»-ը, «Տրամաբանություն»-ը, հատվածներ՝ «Հայկազյան բառարանից», Ջամչյանի «Հայոց Պատմություն»-ից, Ինճիճյանի «Աշխարհագրություն»-ից և այլն:

Վախտանգ VI-ի արքունիքի հետ կապված է եղել Նաղաշ Հովնաթանը, որը Թբիլիսիում է հորինել իր «Վրաստանի գյուղալները» նշանավոր տաղը: Եվ վերջապես, Վրաստանում է ապրել և ստեղծագործել Անդրկովկասի հանճարեղ բանաստեղծ Սայաթ-Նովան, որը երգել է հայերեն, վրացերեն և ադրբեջաներեն: Նա իր հանճարեղ ստեղծագործություններով փաստորեն մարմնավորել է Անդրկովկասի երեք ժողովուրդների սերտ և անխախտ դարավոր բարեկամությունը: Սայաթ-Նովայից հետո վրացական հողի վրա հանդես եկող աչքի ընկնող բանաստեղծներից է հանդիսացել Զամչի Մելքոնը, որը երգել է ինչպես հայերեն, այնպես էլ վրացերեն:

Մեր նպատակից դուրս է այստեղ հանգամանորեն կանգ առնել հայ-վրացական մշակութային հարաբերությունների վրա ընդհանրապես: Մենք նշեցինք մի քանի անուններ միայն՝ կապված գլխավորապես Վրաստանի հայ գաղթօջախների հետ, ցույց տալու համար, որ վրաց հյուրասեր հարկի տակ ապաստան գտած հայ գաղթականները անգործունյա տարր չեն հանդիսացել, այլ գործուն մասնակցություն են ցուցաբերել ո՛չ միայն քաղաքական և հասարակական, այլև կուլտուրական կյանքում և իրենց համեստ ներմուծումները կատարել այդ բնագավառում[2]:

---

1 Տե՛ս Ի. Աբուլաձե, Նոր հուշարձաններ վրաց և հայոց գրական հարաբերությունների մասին անցյալում» («Բանբեր Մատենադարանի», 1956թ., № 3, էջ 101—114):

2 Աշխատության այս գլխում հաշվի է առնվել վրացագետ Պարույր Մուրադյանի դիտողությունները:

ՀԱՅԵՐԸ ԿԻԵՎՅԱՆ ՌՈՒՍԻԱՅՈՒՄ ԵՎ ՄԵՐՁՎՈԼԳՅԱՆ ԵՐԿՐԱՄԱՍԵՐՈՒՄ

Հայ-ռուսական հնագույն հարաբերությունները և հայերը Կիևյան Ռուսիայում:

Հայ-ռուսական հնագույն հարաբերությունների մասին մեզ հասած տեղեկությունները կցկտուր են և մշուշապատ: Բայց այդ կցկտուր տեղեկություններից անգամ դժվար չէ նկատել, որ հայ-ռուսական հարաբերությունները սկիզբ են առնում վաղ անցյալում սերտ բարեկամական հողի վրա: Երկու ժողովուրդներն առաջին անգամ իրար են հանդիպել մարտադաշտերում, ճանաչել են իրար պատերազմի փոթորիկների մեջ՝ որպես հավատարիմ դաշնակիցների, և այդ դաշնակցության վրա է, որ խարսխվել է երկու ժողովուրդների դարավոր ջերմ բարեկամությունը:

Ռուս ժողովրդի մասին հայ մատենագրության մեջ պահված հնագույն տեղեկությունը ընդհանուր բնույթ ունի. նա կոնկրետ չի վերաբերվում ռուս ժողովրդին, այլ՝ սլավոններին ընդհանրապես: Այդ տեղեկությունը մեզ հասել է VII դարի հայ գիտնական Անանիա Շիրակացու «Աշխարհացոյց»-ից: Ըստ «Աշխարհացոյց»-ի համառոտ խմբագրության, սլավոնական քսանհինգ ցեղախմբեր ապրելիս են եղել Թրակիայում, բայց հետագայում նրանց դուրս են մղել գոթերը[1]:

Շիրակացու «Աշխարհացոյց»-ի ընդարձակ խմբագրությունը, որը հեղինակի բնագիրը, համեմատաբար, պահել է ավելի հարազատ ձևով, ընդարձակում է վերև բերված տեղեկությունը և նշում

[1] Ա. Աբրահամյան, Շիրակացու մատենագրությունը, էջ 342:

սլավոնների նոր բնակավայրերը. «Իսկ ըստ արջային կողմանէին (Թրակիոյ),— կարդում ենք այնտեղ,— (ունի) մեծ աշխարհ Դակիա, յորում բնակին Սկլաւք քսան և հինգ ազգ, յորոց փոխանակաւ մտին պատերազմաւ Գուդք... իսկ Սկլաւքն անցին ընդ Դանաւգետ և կալան այլ աշխարհ ի Թրակիոյ և Մակեդոնիոյ, և անցին յԱք(այ) իա և ի Դաղմատիա»[1]: Շիրակացու «Աշխարհացոյց»-ում սլավոնների մասին պահված այս հիշատակությունը պատմական մեծ արժեք ունի, որովհետև այն՝ սլավոնների մասին մեզ հասած հնագույն տեղեկություններից մեկն է:

Ռուսների մասին հայ մատենագրության մեջ առաջին կոնկրետ հիշատակությանը մենք հանդիպում ենք Մովսես Կաղանկատվացու շարունակող հեղինակողի՝ X դարի պատմիչ Մովսես Դասխուրանցու «Պատմութիւն Աղուանից» աշխատության մեջ: Դասխուրանցին հայտնում է, որ ռուսական մի զորամաս 943—944 թվականներին Կասպից ծովի վրայով գալիս է Աղվանից աշխարհը և տիրում նրա մայրաքաղաքին՝ Պարտավին (Բարդային): Պարտավն այդ ժամանակ գտնվում էր արաբների գերիշխանության տակ, որոնց հրամանատարը՝ Սալարը, փորձում է դուրս հանել ռուսաց զորամասը մայրաքաղաքից, բայց չի կարողանում: Ռուսաց զորամասը Պարտավում մնում է մինչև վեց ամիս և ապա մեծ ավարով հեռանում. «Ընդ նոյն ժամանակս,— պատմում է Մովսես Դասխուրանցին,— բաղխի ի կողմանցն հիւսիսոյ... ազգ մի, զոր Ռուզիկք կոչին, որք ոչ աւելի քան զերիս ժամանակս իբրև զմրրիկս ընդ համատարած աշխարհածով ելիցեն կասբից յանկարծ հասանէին ի մայրաքաղաքն Աղուանից ի Պարտաւ, որ ոչ ունելով կարողութիւն ընդդիմակալել նոցա... և նոյն ինքն Սալարն պաշարեալ զնոսա՝ ոչ ինչ կարէր վնասել, զի անյաղթելի էին զօրութեամբ...»[2]:

ՀՍՍՌ մատենադարանի կաղանկատվացու Պատմության ընդօրինակությունը պարունակող մի ձեռագրում, որը, մեր կարծիքով, արտագրված է ավելի հին ձեռագրից, քան Կաղանկատվացու № 1531 նշանավոր ձեռագիրն է (1289 թ. ընդօրինակությամբ), Դասխուրանցու վերև հիշված տեղեկությունը լրացնում է նոր փաստով՝ հիշում է Պարտավը գրավող զինվորների թիվը, որը

[1] Ընդարձակ խմբագրությունը ֆրանսերեն է թարգմանել Արսեն Վ. Սուքրյանը և բնագրի հետ միասին հրատարակել (տե՛ս Géographie de Moise Corène, Venise, 1881, էջ 16—17):

[2] Մովսէս Կաղանկատուացի, էջ 385—86:

եղել է, ըստ այդ հիշատակության, երեք հազարից ավել[1]։ Պրոֆ. Լ. Մելիքսեթ-Բեկը ենթադրում է, որ ռուսական այդ զորամասը հրավիրված էր Անդրկովկասի ֆեոդալների կողմից, որոնք ցանկանում էին արաբական լուծը թոթափել ռուսների օգնությամբ[2]։ Անհավանական չէ այս ենթադրությունը, միայն թե այդ հաստատող պատմական փաստեր գոյություն չունեն։ Ի դեպ, Պարտավ կատարած ռուսական մի այլ արշավանքի մասին՝ 912—913 թվականներին, տեղեկություն կա արաբական պատմիչներ Յակուբիի, Ալ-Մասուդիի, Իբն-ալ-Աթիրի և ուրիշների մոտ։ Ռուսական այդ արշավախմբերը, ինչպես պարզված է, գալիս էին Կիևյան Ռուսիայից։ Նրանք նավակներով Կիևից, Դնեպրի վրայով, իջնում էին Սև ծով, այնտեղից անցնում Ազովի ծովը, Դոն գետով բարձրանում էին մինչև Վոլգայի ծունկը, նավակները Դոնից քաշում էին Վոլգա, իջնում Կասպից ծով և Քուռի վրայով հասնում Պարտավ։

Դասախոսանցու մոտ, ինչպես տեսնում ենք, ռուսները հիշվում են «Ռուզիկք» ձևով։

Հայ-ռուսական հնագույն հաճախակի հանդիպումները տեղի են ունեցել գլխավորապես բյուզանդական հողի վրա X—XIII դարերում։ Նշված ժամանակաշրջանում բյուզանդական բանակում ծառայում էին ռուս-սկանդինավյան մեծաթիվ դրուժինաներ, որոնք կոչվում էին «վայրագներ»[3]։ Բյուզանդիայում, ինչպես հայտնի է, այդ ժամանակ ծառայում էին նաև հայկական զորամասեր, որոնք հաճախ ռազմական գործողությունների ժամանակ, հակառակորդի դեմ հանդես էին գալիս ռուս զորքերի հետ կողք-կողքի և, բնական է, որպես զինակիցներ հարկավոր դեպքում օգնում, օժանդակում իրար։ Բյուզանդիայում ծառայող հայ-ռուսական զորամասերի մարտական համատեղ գործողությունների մասին ուշագրավ տեղեկություն է հաղորդվում արաբական պատմիչ Ահմեդ իբն Աբդլլահ Վինամը։ Նա հայտնում է, որ 954 թվականին Ալի Հասանի դեմ կռվել և նրա բանակը շրջապատել են ռուսական և հայկական դաշնակից զորամասերը[4]։ Ստեփանոս

[1] ՀՊՄ, ձեռագիր № 2561, 230բ—231ա։

[2] Տե՛ս Л. Меликсет-Бек, Из истории русско-армянских отношений («Հայկ. ՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր», 1954թ., № 4, էջ 22)։

[3] В. Г. Васильевский, Варяго-русская и варяго-английская дружина (տե՛ս «Журнал Министерства народного просвещения, ч. ccxvl, 1881, էջ 319 ծան. 1)։

[4] Տե՛ս Карамзин, История государства российского, т. I, СПБ, 1894, էջ 103։

Ասողիկի հաղորդած մի տեղեկությունից երևում է, որ X դարի վերջերին և XI դարի սկզբներում ռուսական 6000 հոգուց բաղկացած մի զորամաս գտնվել է Հայաստանում։ Ռուսական այդ զորամասը գտնվել է բյուզանդական այն բանակի կազմում, որը գլխավորում էր Բարսեղ II կայսրը՝ 1000 թվականին Տայք եկած ժամանակ։ Խոսելով ռուսական զորամասի Անդրկովկասում գտնվելու մասին, հայտնում է, որ Վլադիմիր իշխանի և Բարսեղ կայսեր միջև կնքվել էր ռազմա-քաղաքական դաշինք, Վլադիմիրը ամուսնացել էր կայսեր քրոջ՝ Աննայի հետ, և ռուսական վերը նշված զորամասը դրել Բարսեղի տրամադրության տակ. «... (Զի էին նոքա այսինքն՝ Բարսեղ կայսեր հետ բերված «ռուզիկ»-ները—Ա. Ա.),—գրում է Ասողիկը,— արք ՋՌ (6000) հետևակամարտք, նիզակ և ասպար ի ձեռս նոցա։ Զնոսա էր խնդրեալ թագաւորին Վասլի ի թագաւորէն Ռուզաց, յորժամ եւ զքոյրն իւր կնութեան նմա»[1]։

Ռուսական զորամասը 1054 թվականին ակտիվ մասնակցել է սելջուկյան Տուղրիլ Բեկ սուլթանի դեմ Մանազկերտում տեղի ունեցող ճակատամարտին։ Վաստիվերտցին պատմում է, որ Տուղրիլ Բեկը գրավելով Խաղտիքը և ենթարկելով այն ավարառության, մեծ թվով գերիներ վերցրած գալիս է «մինչև ի բերդաքաղաքն, որ կոչի Բաբերթ։ Հանդիպի և անդ գունդ մի ի զօրացն Հոռոմոց, որ կոչին Փռանկք (այսինքն՝ վայրագ, ռուսներ իմաստով—Ա. Ա.), որք յանգէտս միմեանց ի դիմի հարեալք ճակատեցան. և յողորմութենէն Աստուծոյ զօրացն գունդն Հոռոմոց, և յաղթեալ թշնամեացն՝ զգլուխ զօրուն սպանին և զբազումս ընդ նմա, և պայլսն ի փախուստ դարձուցեալ, զառ և զգերի զամենայն թափեցին, բայց փախստէիցն զհետ ոչ իշխեցին յերկարել, քանզի երկեան, թէ գուցէ ծանր զօրու հանդիպեսցին»[2]։ Վերջերս պրոֆ. Ս. Երեմյանը և պատմական գիտությունների թեկնածու Կ. Յուզբաշյանն համոզեցուցիչ ձևով պարզել են, որ հայ մատենագրության մեջ «փրանկ» բառն այստեղ գործ է ածվել «վայրագ» իմաստով՝ նկատի ունենալով ռուսներին[3]։

Ռուսական փոքրաթիվ մի զորամաս գտնվել է նաև Դավիթ

[1] Ստեփանոս Ասողիկ, էջ 277։

[2] Արիստակես Լաստիվերտցի, էջ 97։

[3] С. Т. Еремян, Юрий Боголюбский в армянских и грузинских источниках («Գիտական աշխատություններ Երևանի պետական Համալսարանի» XXIII, 1946, էջ 390)։ Կ. Յուզբաշյան, Արիստակես Լաստիվերտցու «Պատմության» մեկ տարբերված ծածքի մասին («Բանբեր Մատենադարանի», № 4, էջ 77—82)։

Շինարարի (1089—1125) զորաբանակում և մասնակցել սելջուկ էմիրությունների դեմ հայ-վրացական զորքերի 1121 թ. օգոստոսի 13-ին Թբիլիսի մոտ տեղի ունեցող ճակատամարտին։ Այդ մասին մեզ տեղեկություն է հաղորդում Մատթեոս Ուռհայեցին[1]։

Հայ-ռուսական հարաբերությունների մասին մեզ հասած աղբյուրներից արժեքավոր է Գրիգոր Տուտեորդու նամակը, որը գրված է վատիկանի հայերի նկատմամբ գործադրած բռնությունների կապակցությամբ։ Վատիկանը, ինչպես հայտնի է, օգտագործելով Կիլիկիայի Հայաստանի քաղաքական ծանր վիճակը, աշխատում էր իր «փարախի մեջ» առնել նաև հայերին։ Սանահնի առաջնորդ Գրիգոր Տուտեորդին նամակ է գրում Կիլիկիա Գրիգոր Տղա կոչվող կաթողիկոսին (1173—1193) և խորհուրդ տալիս ո՛չ մի դիջում չանել Վատիկանին, որը ցանկանում է չարաշահել հայերի ծանր դրությունը և օգնություն խնդրել քրիստոնեական մեծ ժողովուրդներից։ Մեծ ժողովուրդների շարքում Տուտեորդին մատնացույց է անում «րուսներ»-ին[2]։ Տուտեորդու նամակը հետաքրքիր փաստաթուղթ է այն տեսակետից, որ նա նախ միջնադարյան հայ իրականության մեջ հյուսիսից օգնության ակնկալելու հնագույն վավերագիրն է, և ապա՝ այդ փաստը ցույց է տալիս, որ XII դարում ռուս ժողովուրդն այնքան էր ճանաչված և այնպիսի համարում ուներ, որ նրա պաշտպանությանը դիմելու ակնկալություններ են առաջանում հեռավոր Հայաստանում։ Հայ-ռուսական հարաբերությունների վերաբերյալ վերին աստիճանի ուշագրավ են առանձնապես այն տեղեկությունները, որոնք վերաբերում են հայ զորամասերի հրավիրմանը Կիևյան Ռուսիա XI—XIII դարերում։ Հայկական այդպիսի զորամաս, ըստ եղած հիշատակությունների, առաջին անգամ Կիևյան իշխանները հրավիրել են 1009 թվականին՝ կռվելու Բոլեսլավ Խիզախի (992—1025) զորաբանակի դեմ[3]։ Հավանական է, հայկական այդ զորամասը Կիևյան Ռուսիա եկած լինի Բալկաններից՝ բյուզանդական բանակում ծառայող հայ զորամասերից և կամ Թրակիա աքսորված պավլիկյաններից, որոնք ունեին խիզախ և քաջարի զինվորականների համբավ։

Ի դեպ, հայկական զորամասի Բալկաններում և Կիևյան Ռուսիայում գոյության փաստը հաստատվում է նաև լեհական սկզբնաղբյուրների տվյալներով։

Պատմագիտության մեջ հայտնի է շատ հետաքրքիր մի վավերագիր, որը վերաբերում է դարձյալ հայ-ռուսական զինակցությանը Կիևյան Ռուսիայում։ Այդ իշխան Ֆեոդոր Դմիտրիչի հրովարտակն է, որով նա հայերին զինական օգնության է հրավիրում պոլովցիների դեմ կռվելու համար։ Հրովարտակում, որը թարգմանաբար բերել է Քուշներյանը, ասված է. «Ի մեծ դքսէ Թէոդորէ որդւոյ Դեմետրեայ առ Նաշոխաշեան Հայս, որ աստ կամին գալ, յեկեսցեն օգնութիւն ինձ և ես տաց ձեզ ազատութիւն ընդ ամս երիս։ Եւ եթէ լինիջիք առ իս, ուր և հաճեսցի ոք, երթիցէ ազատօրէն։ Յամի 1062»[1]։

Ֆեոդոր Դմիտրիչին օգնության է եկել 2000 հոգուց բաղկացած հայկական մի զորամաս։ Ոստումնասիրողներից ոմանք այս հրովարտակի վավերականությունը կասկածանքի տակ են առնում այն պատճառաբանությամբ, որ 1062 թվականին Ֆեոդոր Դմիտրիչ անունով իշխան չի եղել Կիևում։ Լեհ գիտնական Ֆ. Կ. Զախարյասևիչը, որն անձամբ տեսել է նշված հրովարտակի ռուսերեն բնագիրը և նրա լատիներեն թարգմանությունը, հայտնում է, որ ռուսական բնագիրը թվական չի ունեցել, իսկ լատինական թարգմանության վերջում եղած 1062 թվականը ենթադրվում է հայկական թվականը լինի։ Նշված վավերագրի ժամանակի մասին մեզ ավելի հավանական է թվում ռուս գիտնական Լիխաչևնկոյի հայտնած կարծիքը. նա գտնում է, որ այդ հրովարտակը գրել է ոչ թե Կիևի, այլ Վոլինի իշխան Ֆեոդոր Դմիտրիչը։

Մեր կարծիքով, լատինական վավերագրի վերջում եղած թվականը ոչ թե հայկական թվական է, այլ հռոմեական։ Հռոմեական թվականը ներկա թվականին վեր ածելու համար պետք է գումարել 247 (1062+247=1309 թ.)։ Այսպիսով, հայկական վերև նշված զորամասը Կիևյան Ռուսիա է հրավիրվել ո՛չ թե 1062 թվականին, այլ՝ 1309-ին։ Եթե մեր այս ենթադրությունը հավանական համարվի, այդ դեպքում կլուծվի նաև բնագրի մեջ գործածված «նախխաչյան հայերի» առեղծվածը, որոնց բնակավայրը դարեր կլինի փնտրել Ղրիմի մոտերքում, ուր այդ ժամանակ հայկական բնակչաշատ գաղթօջախներ են եղել։

Հայկական մի այլ զորամասի օգնության է հրավիրել Գալիցիայի իշխան Լև Դանիլևիչը 1280 թվականին[2]։ Հայկական զորա-

[1] Մատթէոս Ուռհայեցի, էջ 350։

[2] Տուտեորդու նամակի ընդօրինակությունը պահվում է ՀՍՍՌ մատենադարանի № 2966 ձեռագրում։ Նա հրատարակված է Միքելյանի կողմից «Արարատ»-ում 1893 թվականին։

[3] Քուշներյան, Պատմություն Խրիմու հայ գաղթականության, էջ 25։

[1] Քուշներյան, Պատմություն Խրիմու հայ գաղթականության, էջ 85։

[2] Кирион, Колонизация юго-западной России, էջ 2։

մասերը, ըստ տեղեկությունների, գործուն աջակցություն են ցույց տվել Լև Դանիլևիչին, որի համար և իշխանը նրանց թույլ է տվել մշտապես բնակություն հաստատել Գալիցիայում: Այս մասին խոսք կլինի Լեհաստանի գաղթավայրի մասին խոսելիս:

Կիևյան Ռուսիայում ապրող հայերը մասնակցել են նաև 1410 թվականի Գրյունվալդի ճակատամարտին: Տևտոնական օրդենի ասպետները, ինչպես հայտնի է, ձգտում էին իրենց տիրապետությունը հաստատել հարավային և արևելյան հարևան երկրների վրա: Վտանգավոր այդ պահին, լեհերը, լիտվացիները, ռուսները և չեխերը դաշնակցել են և Գրյունվալդի մոտ տեղի ունեցող արյունահեղ ճակատամարտում ջարդել տևտոնական ասպետների բանակը: Ահա այս ճակատամարտում, դաշնակից բանակի կազմում, գտնվել են երկու հայկական գունդ՝ կազմված Գալիցիայում ապրող հայերից: Հայկական զորամասերը մասնակցել են նաև 1440 թվականի Վառնայի տակ տեղի ունեցող նշանավոր ճակատամարտին[1]:

Վերև բերված հայ-ռուսական զինական դաշնակցության փաստերը Բյուզանդիայում և Անդրկովկասում, հայ զորամասերի հրավերները Կիևյան Ռուսիա և հայ-ռուս զինվորների համատեղ պայքարը արտաքին թշնամիների դեմ, մեզ հաստատուն հիմք են տալիս ասելու, որ հայ և ռուս ժողովուրդների բարեկամությունը ստեղծվել է ռազմական դաշտում և ամրապնդվել երկու ժողովուրդների ռազմադաշտում ընկած լավագույն զավակների արյունով:

Կիև քաղաքում հայկական փոքրիկ գաղթօջախ գոյություն է ունեցել X—XI դարերում: Հայ փոքրաթիվ բնակչության այստեղ հավաքվելուն մասամբ նպաստել է Վլադիմիր Սվյատոսլավիչի (978—1015) ամուսնությունը հայուհի Աննայի հետ: Հայ գաղթօջախը կազմված է եղել զինվորականներից, արհեստավորներից և առևտրականներից: Կիևի հայկական այդ փոքրիկ գաղթօջախի մասին, դժբախտաբար, կցկտուր տեղեկություններ են մնացել: Ռուսական «Հարանց վարք» («Патерик») կոչվող ժողովածուի մեջ տեղեկություններ են պահվել միայն հայ «վարպետ բժիշկների» մասին: Այդ բժիշկներից մեկի մասին հետևյալն է ասված. «Այն ժամանակ (այսինքն՝ Վլադիմիր Մոնոմախի ժամանակ— Ա. Ա.) Կիև քաղաքում ապրում էր մի բժիշկ, ազգությամբ և հավատքով հայ, որը հմուտ էր բժշկության մեջ, նման մասնագետ

[1] Տե՛ս Ս. Բարոնիչ, Ուրվագծեր Տարնոպոլի հայոց պատմության, 1869 (լեհերեն), էջ 63:

առաջներում չէր եղել»[1]: Հայ բժիշկներից մեկը բուժել է Վլադիմիր Մոնոմախին:

Կիևի Սոֆիայի նշանավոր տաճարում գտնվում է Յարոսլավ իմաստունի սարկոֆագը, որի երկթեք զարդաքանդակ խուփի վրա, հյուսիսային կողմում պարզ կարդացվում են հայկական հինգ տառեր՝ «Ա», «Գ», «Ն», և «Պ»[2]: Տառաձևերին նայելով, կարելի է նրանք համարել XI—XII դարերի տառեր: Կասկածանք լինել չի կարող, որ սարկոֆագի խուփի վրա հայկական նման տառեր կարող էին փորագրել միայն հայ վարպետները:

XIII—XIV դարերում Կիևի փոքրաթիվ հայ գաղթօջախը ստվարանում է Ղրիմից, Կիլիկյան Հայաստանից, Բալկաններից և այլ վայրերից եկած նոր գաղթականներով, որոնք դուրս են գալիս քաղաքի անձուկ սահմաններից: Շուտով այնքան հայ բնակչություն է հավաքվում Ուկրաինայում, որ անհրաժեշտ է լինում հիմնել ինքնուրույն թեմ՝ թեմական առաջնորդի կենտրոն ընտրելով Կիևը: Կաթոլիկ պատմաբան Պիդուն (XVII դարի երկրորդ կեսը) իր «Կարճառօտ տեղեկութիւնք զարդի վիճակէ, զսկզբանէ և ծաւալմանէ առաքելական քարոզութեանն առ Հայս Լեհաստանի, վալախիոյ և մերձակայ աշխարհաց» խորագրով աշխատության մեջ, անդրադառնալով Կիևյան Ռուսիայում երբեմնի ապրող հայ հոծ գաղթականությանը, գրում է. «Զկիև ասին լինել նախկին աթոռանիստ քաղաք արքեպիսկոպոսին Հայոց, ուրանօր պատրիարք կոչէր արքեպիսկոպոսն և էր ընդ իշխանութեամբ կաթողիկոսին էջմիածնի... իրաւունս ունէր ձեռնադրելոյ եպիսկոպոսունս»[3]: Հայերի մոտավոր թիվը Ռուսիայում XI—XII դարերում մեզ հայտնի չէ, բայց որ այնտեղ պատրիարքական թեմ է եղել, ապա պետք է ենթադրել, որ բավականաչափ հայեր պետք է եղած լինեին:

Կիևյան Ռուսիայում հատկացված հայկական գաղթավայրերը երկար կյանք չեն ունեցել: XIV դարի կեսերին, երբ սկսվեցին մոնղոլական արշավանքները, հայ գաղթականությունը Կիևյան Ռուսիայից տեղաշարժվեց դեպի Արևմուտք՝ Բուկովինա և Գալիցիա, իսկ XIV դարի վերջին թվականներին, երբ Գալիցիան

[1] Л. Меликсет-Бек, Древняя Русь и Армения (Տե՛ս Հայկ. ՍՍՌ ԳԱ Լեզվի ինստիտուտի «Գիտական աշխատություններ», 1946թ., էջ 118):

[2] Վ. Հարությունյան, Մի հայատառ մակագրության մասին (Հայկ. ՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր», 1956թ., № 5, էջ 118):

[3] Բռնի միութիւն Հայոց Լեհաստանի ընդ եկեղեցւոյ Հռովմայ, ժամանակակից յիշատակարանք, ՍՊԲ, 1884, էջ 16:

ընկավ Լեհաստանի գերիշխանության տակ, այնտեղ գտնվող հայկական համայնքները ստեղծեցին լեհական գաղութի կորիզը։

Ուկրաինայի հողի վրա հետագա դարերում շատ ու քիչ աչքի ընկնող հայկական համայնքներ չկազմվեցին։ Տեղեկություններ կան, որ Կիևում XVII դարում գոյություն է ունեցել հայկական փոքրիկ համայնք, բայց նա շատ թե քիչ աչքի ընկնող դեր չի կատարել[1]։

Հայ գաղթականությունը երկար ապրելով Կիևյան Ռուսիայում, չէր կարող չնպաստել տեղական մշակույթի զարգացմանը և այս հողի վրա չէր կարող տեղի չունենալ կուլտուրական փոխազդեցություն։

Կիևյան Ռուսիայի պատմությամբ զբաղվող մասնագետները Ռոստով-Սուզդալում մատնացույց են անում ճարտարապետական մի քանի կոթողներ, որոնք անշափ նմանություն ունեն հայկական և վրացական ճարտարապետությանը (Նովգորոդի Ներիդեյի տաճարի քանդակագործությունը, Վլադիմիրի Դմիտրի տաճարի ճարտարապետությունը և այլն)։ Ակադ. Բ. Գրեկովը գտնում է, որ «հայ-վրացական արվեստի ազդեցությունը արտացոլվել է Ռոստով-Սուզդալյան Ռուսիայի շինարարության մեջ»[2]։

Ակադ. Ն. Մառը, ավելի լայնորեն քննելով հայկական արվեստի փոխազդեցությունների հարցերը, գտնում է, որ «Հայկական արվեստի ազդեցությունը նշմարվում է ո՛չ միայն Փոքր Ասիայի սելջուկյան արվեստի վրա, այլև նրանից առաջ՝ Բյուզանդիայի՝ առանձնապես ռուսաց հին ճարտարապետության վրա...»[3]։

Սակայն հայերը չեն միայն, որ նպաստել են ռուս ժողովրդի մշակութային կյանքի զարգացմանը։ Նույնը, ոչ պակաս չափով, կատարել են նաև ռուսները հայ մշակույթի բնագավառում, որի վրա առիթ կունենանք կանգ առնելու։ Հին շրջանից հայտնի է, որ Հայաստանի երբեմնի մայրաքաղաք Անիի եկեղեցիներից մեկի որմնանկարները կատարել է մի ռուս նկարիչ։ Հայկական և ռուսական մատենագրական երկերում մատնացույց են արվել որոշ թարգմանություններ, որոնք կատարվել են հայերենից ռուսերեն և ռուսերենից՝ հայերեն։

Հայ-ռուսական մշակույթի կապը ցուցանշող կարևոր հուշար-

[1] Բոնի միութիւն Հայոց Լեհաստանի ընդ եկեղեցւոյ Հռոմայ, ժամանակակից յիշատակարանք, էջ 16։

[2] Б. Греков, Киевская Русь, М., 1949, էջ 429։

[3] Ն. Մառ, Հայկական մշակույթը, նրա արմատները և նախապատմական կապերը ըստ լեզվաբանության, Փարիզ, 1925։

ձան է հանդիսանում Բորիսի և Գլեբի վարքագրությունը, որը վերնագրված է «Պատմութիւն... Դաւթի և Ռոմանոսի, որ ի Ռուսք նահատակեցան յանօրէն եղբօրէն իւրեանց, որ կոչեն Պաւրիս Հլէպ»։ Վարքաբանական այս աշխատությունը թարգմանվել է XII դարի երկրորդ կամ XIII դարի առաջին կեսին և, որպես կարևոր բնագիր, մտցվել հայկական «Յայսմաւուրք»-ների մեջ։ 1251 թ. Իսրայելի խմբագրած «Յայսմաւուրք»-ի մեջ այն արդեն հանդիպում է մեզ հունիսի 24-ի տակ ՀՍՍՌ մատենադարանի որոշ «Յայսմաւուրքներ»-ի մեջ։

Դավթի և Ռոմանոսի այս վարքը, ինչպես արդեն պարզված է, թարգմանված է ռուսերենից և հանրածանոթ Բորիսի և Գլեբի վարքագրությունն է (ըստ ավանդության, Բորիս և Գլեբ անունները հեթանոսական էին և քրիստոնեություն ընդունելուց հետո նրանց անվանեցին Ռոմանոս և Դավիթ)։ Հայագետներից ոմանք (Էմին և ուրիշներ) այն կարծիքն են հայտնել, որ իբր այդ տեքստը թարգմանված է անմիջապես ռուսերենից։ Նշված բնագիրը ուշագրավ է թարգմանիչի կամ խմբագրողի մուծած մի ընդմիջարկությամբ, որը ցույց է տալիս, որ հայերը XI—XII դարերում եղել են Կիևյան Ռուսիայում և մոտիկից ծանոթ են նրան։ Խոսելով Բորիսի և Գլեբի նահատակությունից հետո նրանց աճյունների վրա կառուցված հուշարձանին այցելող ուխտավորների մասին, հայ ընդմիջարկողը, բնագրի այդ տեղեկությունն ավելի հավաստի դարձնելու նպատակով, իր կողմից ավելացրել է. «Որոց բազումք ի մերոյ աշխարհէ տեսօղք եկեալ պատմին զմեզ» (այսինքն՝ մեր աշխարհից «շատերը» եղել են Կիևում, աչքով տեսել և եկել պատմել են մեզ)։

Այսպիսով, հայ-ռուսական հնագույն հարաբերությունների մասին վերև բերված տեղեկությունները մեզ բերում են այն եզրակացության, որ հայերը, հնագույն շրջանից սկսած, ռազմաքաղաքական կապերի մեջ են գտնվել ռուս ժողովրդի հետ՝ միշտ հանդես գալով իբրև նրա անխարդախ զինակիցներ։ Այս հողի վրա է հիմնավորվել և ամրապնդվել երկու ժողովուրդների դարավոր բարեկամությունը։ Ցուցանշական է այն, որ ռուս ժողովուրդն իր երկրի դռները միշտ հյուրասիրաբար բաց է արել մարտադաշտերի փորձություններում ճանաչած իր վստահելի դաշնակցի առաջ։

XIV դարում, քաղաքական նոր իրադրության մեջ, Չերվոնի Գալիցիան ընկել է լեհական իշխանության տակ, ուստի այնտեղ ապրող հայ գաղթօջախների պատմության վրա մենք կանգ կառնենք Լեհաստանի հայ գաղթավայրի մասին խոսելիս։

Հայերը Մերձվոլգյան երկրներում:

Հայերը Վոլգայի գետուղին ճանաչել և այդ ուղեգծով առևտրական հարաբերություններ են ունեցել Մերձվոլգյան երկրների հետ դեռևս VIII—IX դարերում: Հայ ձեռներեց վաճառականները խազարական խաքանատի և Մերձվոլգյան Բուլղարիայի սովորական հյուրերն էին: Նրանք Արևելքից հյուսիս էին տեղափոխում մետաքս, կերպասեղեն, գորգեր, համեմունք և այլ ապրանքներ, իսկ հյուսիսից տանում էին գլխավորապես մորթեղեն: Հայ առևտրականի անունն այնքան սերտորեն էր կապված մետաքսի հետ, որ չուաշ ժողովրդի մոտ մինչև այժմ մետաքսը կոչվում է «Հայկական փիրսան»[1], այսինքն՝ «հայկական մետաքս»: X դարի արաբ ճանապարհորդ Իբն-Ֆադլանն իր «Ճանապարհորդություն Վոլգայի վրայով» ուղեգրության մեջ պատմում է, որ բուլղարական թագավորի ապրանքն ամբողջապես ծածկված էր հայկական գորգերով[2]: Արաբական մի այլ մատենագիր՝ Թաբարին, վկայում է, որ հյուսիսային ճանապարհով հիմնական «երթևեկություն կատարողները հայերն են»[3]:

Հայերը, ինչպես երևում է, իրենց հյուսիսային հարևանների հետ գտնվել են քաղաքական կապերի մեջ: Արաբական ճնշումներից փախած որոշ հայ իշխաններ 885 թվականին դիմում են խազարների խաքանին և բուլղարների թագավորին և նրանցից օգնություն խնդրում: Մեզ հասած հատ ու կենտ տեղեկությունները հիմք են տալիս ենթադրելու, որ Իթիլ, Բուլղար և Կազան քաղաքներում հայկական փոքրիկ գաղթօջախներ են գոյություն ունեցել VIII դարից սկսած: Այդ մասին են վկայում Կազան և Բուլղար քաղաքների միջև ընկած տարածության վրա գտնված հայկական արձանագրություն ունեցող տապանաքարերը: Այդ արձանագրությունները, ըստ տեղեկությունների, Պետրոս Մեծի հանձնարարությամբ գրի է առնվել և թարգմանվել ռուսերեն[4]: Կազան և Բուլղար քաղաքների մոտակայքում հայտնաբերված հայկական տապանաքարերից երևում է, որ այնտեղ ապրող հայերը միայն առևտրականներ չեն եղել. գերեզմանաքարերի վրա կան նկար-

[1] А. П. Смирнов, Армянская колония города Болгара («Материалы и исследования по археологии СССР, № 61, էջ 330):

[2] Ибн-Фадлан, Путешествие на Волгу, М.—Л., էջ 73:

[3] Паллас, Путешествие по разным провинциям России, СПБ, 1899, էջ 192:

[4] В. Бартольд, Арабские известия о руссах («Советские востоковедение», т. I, էջ 18):

ված հայ զինվորներ՝ իրենց զենք ու զրահով: Այդպիսի գերեզմանաքարեր տեսել են և իրենց ուղեգրությունների մեջ նշել XVI դարի անգլիացի ճանապարհորդները[1]: Ի՞նչ գործ ունեին հայ զինվորականները X—XI դարերում հյուսիսային այս երկրներում, դժվար է պատասխանել:

Հայ գաղթականության ստվար հատվածներ դեպի հյուսիսային այս երկրները են գնում XI դարում, երբ սելջուկները մտնում են Հայաստան և սկսում իրենց վայրագությունները: Վոլգայի ճանապարհով հյուսիս եկող հայ գաղթականները հաստատվում են գլխավորապես Աստրախանում, Ախտարայում (Սարայում) և Կազանում: Ըստ տեղեկությունների, Կազան քաղաքի երկու փողոցները կոչվել են «Հայկական»՝ մեկը կոչվել է «Հայկական մոտակա», փողոց, իսկ մյուսը՝ «Հայկական հեռավոր» փողոց[2]: Անշուշտ, փողոցների այդ անունը կապված է եղել այնտեղ ապրող հայ բնակչության հետ: Անիից դեպի հյուսիս եկող այս գաղթականության մասին ուշագրավ է Մաթեոս Ղրիմեցու «Պատմութիւն Ղրիմայ երկրի» չափածո պատմության մեջ հաղորդված տեղեկությունը: Ջարմաղանի ավերածությունից հետո, գրում է նա, հայերից ոմանք հարկադրված եղան գաղթականության ճանապարհը ընտրել.

«Կէսքն ճղեալ գնան ի Ջուղայ և Վան
Եւ այլքն ի յայլ տեղիս, ուր և կամեցան,
Իսկ կէսքն՝ տարադէմ յերկիր հեռաստան,
Անցանեն ընդ ծովամբն Կասպիական:

Յազգքն նետողական ելիալք ապաստան,
Եւ ի կայսր նոցին՝ թաթար մեծ խան,
Ջտեղի առեալ մնան մերձ Հաճի Թարխան (Աստրախան),
Ասխարայ կոչեցեալ տեղին աննշան»[3]:

Հայ բնակչության գաղթը Վոլգայի ճանապարհով դեպի Բուլղարիա ավելի մասսայական բնույթ է ստանում մոնղոլների արշավանքների արյունոտ տարիներին, մասնավորապես 1235 թ.՝ Ջարմաղանի Անի քաղաքը գրավելուց հետո: Մեզ է հասել պատմական մի կարևոր հիշատակարան, որի գրիչը Անի քաղաքի գրավումը նկարագրելուց հետո, պատմում է թե ինչպես անեցիներից

[1] Տե՛ս Հ. Հակոբյան, Ուղեգրություններ, հ. I, էջ 437:

[2] Б. В. Миллер, Об арм. надписях в Болгарах и Казани («Известия рос. ак. ист. мат. культуры», т. IV, էջ 76):

[3] Ա. Մարտիրոսյան, Մարտիրոս Ղրիմեցի, Երևան, 1958, էջ 145:

շատերը «թողեալ զօսկեզօծ պալատս և զծաղկաւէտ դաշտս, վանո-
րայս և զեկեղեցիս, չուեալ եկին որպէս փախստական ի յԱսխա-
րայ, որ է ի մէջ Հաշտարխանու և Ղազանու...»[1]։

Ենթադրվում է, որ Անի քաղաքից դուրս եկած այս գաղթա-
կանությունը բաղկացած է եղել 40,000 հոգուց[2]։

Մերձվոլգյան հայկական գաղթօջախները հետագայում մե-
ծանում են 1262 թվականին Բերկեի Հայաստանից բերված ռազ-
մագերիներով, որոնց մեծ մասը արհեստավորներ են եղել։ Մոն-
ղոլները առանձնահատուկ ուշադրություն էին դարձնում արհես-
տավորների վրա, գերեվարում էին նրանց և հարկադրում աշխա-
տել բանակի կարիքների համար։

Ակադ. Բ. Գրեկովը և պրոֆ. Ա. Յակուբովսկին Ոսկե Հորդա-
յին նվիրված իրենց ուսումնասիրության մեջ մի շարք փաստեր
են բերել այն մասին, որ XIII դարում Սարայ Բերկեյում արհես-
տագործության մեջ զգալի դեր ունեին հայերը[3]։

Մեզ է հասել Սարայի հայկական գաղթօջախում 1319 թվա-
կանին գրված մի ձեռագիր, որն այժմ Վիեննայի Մխիթարյան-
ների սեփականությունն է։ Ձեռագրի գրիչն է հանդիսացել Խաչա-
տուրը, որը ծերունի է եղել և հյուսիսային ցրտին անսովոր, որի
համար և հյուսիսային դաժան կլիմայից գանգատվում է իր հի-
շատակարանում։ Գրչի հիշատակարանում կարդում ենք. «Ես կըրկ-
նակի դարձեալ ևս առաւել աղաչեմ զձեզ ո՛վ առաքինիքդ հոգով,
որ յաղագս սխալանաց կամ ևս այլ պատճառաց լինել անմեղա-
դիր, զի բնական կայանք չունէի, ապա ի տեղւոջէ ի տեղ կու դե-
գերէի, և այլ զի սիրտս վշտացեալ էր։ Ես այս աշխարհիս (այսին-
քըն Ախսարայի—Ա. Ա.) ձմեռն խիստ է, հաւայն չէ գրագրոյ լա-
յեխ։ Բայց գրեցաւ սա ի մայրաքաղաքս Սարայ, որ է հիւսիսոյ
կողմ, մերձ առ ծովուն Կասպիականին, ընդ որում շուրջ պատէ
զնովաւ մեծ և հզօր գետն էթիլ (խոսքը Վոլգայի մասին է—Ա. Ա.)
և ընդ հովանեաւ Աստուածածնին և կենսակիր սուրբ նշանին»[4]։

Ուշագրավն այն է, որ նշված ձեռագրի պատվիրատուն հան-
դիսացել է Պողոս եպիսկոպոսը՝ բարձր աստիճանի մի հայ հոգե-
վորական։ Սարայում հայ բարձրաստիճան եկեղեցականի և եկե-
ղեցու գոյությունը և հիշատակությունը ինքնին ցույց են տալիս,
որ Սարայում ապրելիս են եղել բավականին թվով հայեր։ Եպիս-

[1] Հայկ. ՍՍՌ մատենադարան, ձեռագիր № 7449, թ. 281ա։
[2] Ա. Ալպոյաճյան, Պատմություն հայ գաղթականության, հ. II, էջ 350։
[3] Б. Д. Греков и А. Ю. Якубовский, Золотая орда и ее падение, էջ 17։
[4] Հ. Տաշյան, Յուցակ ձեռագրաց ... Մխիթարյանց ի Վիեննա, էջ 885։

կոպոսները, ունեին իրենց թեմերը։ Այսպիսով պարզ է, որ Սարա-
յում այնքան ստվար հայություն է ապրել, որ անհրաժեշտ է եղել
թեմակալ եպիսկոպոս ունենալ։ Ախսարայի հայկական գաղթօջա-
խը, ըստ երևույթին, երկար չի պահպանել իր գոյությունը Մերձ-
վոլգյան Բուլղարիայում։ Ենթադրվում է, որ Անիի գաղթականու-
թյունը Մերձվոլգյան Բուլղարիա է եկել 1299 թվականներին և հե-
ռացել 1330 թվականին, այսպիսով, այնտեղ մնացել է ընդամե-
նը 31 տարի։

Թաթարները, ինչպես երևում է, նեղել են հայերին, այդ
պատճառով էլ հայ գաղթօջախների ներկայացուցիչները գնացել
են Ղրիմ, բանակցություններ վարել այնտեղ իշխանություն հաս-
տատած ճենովացիների հետ, ստացել նրանց համաձայնությու-
նը, գաղթել ու վերաբնակություն հաստատել Ղրիմում։ Այդ տեղի
է ունեցել 1330 թվականին։

Անիի գաղթականության մասին վերև նշված հիշատակարա-
նում եղած մի ակնարկից երևում է, որ թաթարները չեն ցանկա-
ցել իրենց երկրից սիրահոժար բաց թողնել հայ գաղթականու-
թյանը։ Սակայն հայերը զինվորական ջոկատներ կազմած կռվել
են թաթարների դեմ, ճեղքել նրանց արգելքները և դուրս հանել
հայ բնակչությանը թաթարական գերությունից[1]։

Մերձվոլգյան երկրներից կատարված այս գաղթից հետո ևս
հայ որոշ գաղթականներ մնացին այնտեղ։ Ռուսական մատենա-
գրության մեջ տեղեկություն կա այն մասին, որ Իվան Ահեղի կող-
մից 1552 թ. Կազանը գրաված ժամանակ, այնտեղ գտնվել են որոշ
թվով հայեր։ Հայերին, ինչպես պարզվում է, օգտագործում էին
որպես վարժ բնդանոթաձիգներ։

Մերձվոլգյան երկրամասում հայկական նոր գաղթօջախներ
ստեղծվեցին XVII դարում։ XVI—XVIII դարում Վոլգան հայ առև-
տրականների համար այնքան բանուկ մի ճանապարհ դարձավ, որ
այն կոչվում էր «Армянская дорога»։ Այս մասին խոսք կլինի
առջևում։

[1] Հայկ. ՍՍՌ մատեն., ձեռ. № 7449, թ. 281ա։

ԵԳԻՊՏՈՍԻ ՀԱՅ ԳԱՂԹԱՎԱՅՐԸ

Աղբյուրները և ուսումնասիրությունները: Եգիպտոսի հայ գաղթավայրի պատմությունը համեմատաբար լավ է ուսումնասիրված: Այդ մասին հրատարակվել են մի շարք արժեքավոր մենագրություններ և հոդվածներ, առանձին ժողովածուներով լույս են ընծայվել նաև արաբական աղբյուրներում հայ-եգիպտական հարաբերությունների մասին եղած տեղեկությունները:

Եգիպտահայ գաղթավայրի պատմության սկզբնաղբյուրների հրատարակության և ուսումնասիրության գործում առանձնապես ջանադիր աշխատանք է կատարել արաբագետ Գ. Մսըրլյանը, որը երկար տարիներ ապրելով Կահիրեում և անթերի տիրապետելով արաբերեն լեզվին, որպես քաջատեղյակ մասնագետ, արաբական աղբյուրներից քաղել է արժեքավոր այն ամենը, ինչ վերաբերում է եգիպտահայության պատմությանը: Իր հավաքած նյութերի մի մասը նա զետեղել է «Ականավոր հայեր եգիպտոսի մեջ» արժեքավոր աշխատության մեջ, որը լույս է տեսել Կահիրեում 1947 թվականին, իսկ մյուսը առանձին հոդվածներով հրատարակել է «Սիոն» ամսագրում 1934 և 1938 թվականներին:

Նշված հայ գաղթավայրի վերաբերյալ արաբական աղբյուրներից քաղվածքներ է հավաքել և հրատարակել նաև Արտաշես Գարտաշյանը՝ «Նյութեր եգիպտոսի պատմության համար» խորագրով: Նա իր այդ աշխատությունը զետեղել է «Հանդէս ամսօրեայ» (1943 և 1947 թթ.) և «Բազմավէպ» (1947 թ.) ամսագրերում:

Եգիպտոսի հայ գաղթօջախի պատմության համար արժեքավոր աշխատություն է հանդիսանում Հ. Սուֆյանի «Եգիպտոս հայ

մեմլուքները և իշխանները ֆաթիմյան շրջանին», որը հրատարակվել է Կահիրեում 1928 թվականին:

Եգիպտոսի հայկական հուշարձանների վիմագիր արձանագրությունները հավաքել ու հրատարակել է Թ. եպ. Գուշակյանը իր «Եգիպտահայոց հին և արդի եկեղեցիները» գործում: Այս աշխատությունը լույս է տեսել Կահիրեում 1927 թվականին:

Եգիպտահայության պատմությանը նվիրված լուրջ ուսումնասիրողներից է հանդիսացել Մամուր Ֆաթիմին, որն ընդարձակ հոդվածաշարք է տեղավորել «Սիոն» ամսագրի 1928 և 1930 թվականների համարներում՝ «Պատմություն Եգիպտահայության» վերնագրով: Այս հարցում առանձնապես մեծ է ականավոր պատմաբան Ա. Ալպոյաճյանի վաստակը, որն իր «Պատմություն հայ գաղթականության» աշխատության մեջ եգիպտահայության պատմությանը նվիրված ընդարձակ էջերից բացի, 1960 թվականին հրատարակել է ընդարձակ մի ուսումնասիրություն բացառապես նվիրված Եգիպտոսի հայ գաղթավայրին: Այս աշխատության վերնագիրն է «Եգիպտոսի նահանգն և հայերը»: Հատորն ընդգրկում է եգիպտահայության պատմությունը սկզբնավորությունից մինչև արդի ժամանակները:

Թվարկված աշխատությունները պատմական հարուստ նյութ են պարունակում: Սակայն նրանք ունեն այն ընդհանուր թերությունը, որ կարևոր պատմական խնդիրները երբեմն խճողված են մանրուքների մեջ, քննադատական մոտեցում չի ցուցաբերվում սկզբնաղբյուրների նկատմամբ և կան որոշ չափազանցություններ եգիպտոսում բարձր պաշտոնների բարձրացած հայ պաշտոնյաների նկատմամբ:

Հայ-եգիպտական հնագույն առնչություններ: Եգիպտոսը կամ, ինչպես հնում հայերն անվանել են՝ Մսրրը, հին Արևելքի այն երկրներից է, որը գործուն փոխհարաբերությունների մեջ է գտնվել պատմական Հայաստանի նախաբնիկների հետ դեռևս փարավոնյան շրջանում: Հայտնի է, օրինակ, որ Թութմոս երրորդ փարավոնը (1516—1461 թթ. մ. թ. ա.) խաղաղության և բարեկամության դաշն է կնքել Միտանիի թագավոր Արտատամա Առաջինի հետ[1]:

Հետագայում եգիպտոսի նշանավոր փարավոններից Ռամզես երրորդը ևս 1295 թ. (մ. թ. ա.) խաղաղության և փոխօգնության պայմանագիր է կնքել հեթիթական թագավոր Խաթտուսիլի հետ,

[1] Ա. Խաչատրյան, Հայաստանի սեպագիր շրջանի պատմություն, Երևան 1933, էջ 380:

որի բովանդակությունը փորագրվել է տաճարի պատին[1]։ Պատմագրության մեջ հայտնի է այդ պայմանագրի սեպագիր պատճենը, որի մի մասը գտնվում է ներկայումս Լենինգրադի էրմիտաժում։ Կնքված դաշինքը հաստատուն պահելու համար եգիպտական թագավորները սովորություն են ունեցել ամուսնանալ հեթիթների և միտանիների թագավորների աղջիկների կամ քույրերի հետ։

Հայ-եգիպտական փոխհարաբերությունները շարունակվել են հետագայում սելևկյան և հռոմեական տիրապետության շրջաններում, սակայն մենք փաստեր չունենք, որ հնագույն այդ շրջաններում հայկական մեծ կամ փոքր գաղթօջախներ ստեղծված լինեն եգիպտոսում։

Եգիպտական հողի վրա հաստատված առաջին հայ հատվածի մասին մեզ հասած հավաստի տեղեկությունը վերաբերում է առաջին դարին մեր թվականությունից առաջ։ Հռոմեական Սալլյուստոս պատմիչը, որը երկար տարիներ եգիպտոսի կառավարիչն է եղել և լավատեղյակ անձնավորություն է, հայտնում է, որ եգիպտոսում բավականին թվով հայեր են ապրում և իշխող դիրքեր ունեն[2]։ Ամենայն հավանականությամբ եգիպտոսում հիշվող հայկական այդ հնագույն հատվածը կազմված է եղել գլխավորապես զինվորականներից. Հռոմը, հետագայում նաև Բյուզանդիան, սովորություն է ունեցել Փոքր Հայքի հայ բնակչությունից զորամասեր կազմել և տեղավորել եգիպտոսում։

Եգիպտոսի պատմական Թեբե քաղաքում մեր թվականության III դարից մեզ է հասել խոսրով անունով մի հայ մարդու տապանաքար հետևյալ հունարեն արձանագրությամբ. «Խոսրով, հայ տեսնելով զարմացա»[3]։ Ո՞վ է եղել այս Խոսրովը և ինչո՞ւ է հայ տեսնելով զարմացել, դժվար է ասել։ Հազիվ թե կարելի լինի համաձայնվել այն պատմաբանների հետ, որոնք կարծում են, որ այդ Խոսրովը եղած լինի III դարի հայոց Խոսրով Թագավորը։ Ծապանաքարի վրա «Հայ տեսնելով զարմացա» արտահայտությունը, մեր կարծիքով, վշտալի ակնարկ է այն մասին, որ հայերը ցրված են ամենուրեք, նրանք հասել են մինչև հեռավոր եգիպտոս։

VI դարի պատմիչ Պրոկոպիոս Կեսարացու վկայություններից

[1] «Всемирная история», т. I. էջ 180։

[2] Solluste, Jugurtha, 18-րդ գլուխ (հմմտ. Ալպոյաճյանի «Եգիպտոսի նահանգը և հայերը», էջ 4)։

[3] Corpus iscr. graec. 4821 (հմմտ. Հ. Մանանդյանի «Քննական տեսություն հայ ժող. պատմության, հ. II, էջ 58)։

երևում է, որ Հուստինիանոս Առաջինի ժամանակ (527—565 թթ.) հայկական զորամասեր են տեղադրված եղել Եգիպտոսում։ Տեղեկություններ կան նաև այն մասին, որ VI—VII դարերում եգիպտոսի կառավարիչներից մի քանիսը հայեր են եղել՝ ներսես Բասենցին, Արտավան Արշակունին, Հերակլը և ուրիշներ։ Հայտնի է, որ ներսես Բասենցին պաշտոնավարել է այնտեղ նույնիսկ «Աֆրիկայի դուքս» տիտղոսով[1]։

Եգիպտոսի հայ գաղթավայրը Բյուզանդիայի շրջանում միայն զինվորականներից կազմված չի եղել, պատմական աղբյուրներում տեղեկություններ կան նաև հայ առևտրականների և հայ «անապատական»-ների մասին[2]։

VI—VII դարերից մեզ հասած հունական և լատինական արձանագրություններից երևում է, որ քիչ չէ եղել այն հայերի թիվը, որոնք ապրելով եգիպտոսում աշխատել են օգտակար լինել այդ երկրի համար. կառուցել են ճարտարապետական հոյակապ կոթողներ՝ իրենց հիշատակը հավերժացնող հունարեն կամ լատիներեն արձանագրություններով։

Բյուզանդական կայսրության նվաճված ժողովուրդների նկատմամբ վարած ձուլելու քաղաքականությունը, մանավանդ բյուզանդական երկաբնակ եկեղեցու Արևելքի միաբնակների նկատմամբ գործադրած բռնությունները, որը կրոնական քողի տակ որոշակիորեն հետապնդում էր քաղաքական նպատակ, ավելի է մոտեցրել իրար հայ և եգիպտացի բախտակից ժողովուրդներին։ Աղեքսանդրիան այդ դարաշրջանում փաստորեն դառել է այն կենտրոնը, որը կոդմնորոշել և ղեկավարել է հայ, ասորի, եգիպտացի և արևելյան մյուս երկաբնակների պայքարը բյուզանդական պաշտոնական եկեղեցու դեմ։ Եգիպտոսը բյուզանդական գերիշխանության տակ գտնված ժամանակ հայ-եգիպտական հարաբերությունները զարգանում են մասնավորապես մշակույթի բնագավառում։ Հելենիստական կուլտուրայի աշխարհահռչակ Աղեքսանդրիայում սովորելու են գալիս ուսման ծարավ բազմաթիվ հայ երիտասարդներ և անտիկ գրականության ջահը տանում վառելու իրենց հայրենիքում։

V—VI դարերում հունարենից հայերեն են թարգմանվել անտիկ գիտության բազմաթիվ ներկայացուցիչների, այդ թվում նաև Աղեքսանդրյան դպրոցի մի շարք հեղինակների աշխատություն-

[1] Ա. Ալպոյաճյան, եգիպտոսի նահանգը և հայերը, էջ 6—7։

[2] Մ. եպ. Աղավնունի, Անապատական կյանքը եգիպտոսի մեջ («Տաթև» տարեցույց, 1929, էջ 39—50)։

ներ՝ Աթանաս Աղեքսանդրացու, Դիոնիսիոս Աղեքսանդրացու, Թեոփիլոս Աղեքսանդրացու, Կյուրեղ Աղեքսանդրացու, Տիմոթեոս Աղեքսանդրացու և ուրիշների։ VI դարում հունարենից հայերեն է թարգմանվել Հերմես Տրիսմեգիստոսի «Սահմանք փիլիսոփայության» խորագրով աշխատությունը, որի նախնական բնագիրը, ինչպես պարզված է, գրի է առնվել եգիպտական հողի վրա, եգիպտերենից թարգմանվել է հունարեն, իսկ հունարենից էլ՝ հայերեն, և մեզ է հասել հայկական այս թարգմանությունը, իսկ եգիպտական և հունական բնագրերը կորել են[1]։

Հայ-եգիպտական հարաբերությունների պատմության համար արժեքավոր ունկում է եգիպտոսում հայտնաբերված հայատառ հունարեն պապիրուսի մի պատառիկ, որը հայ մատենագրության համար ունի նաև կարևոր պալեոգրաֆիկ արժեք։ Այդ պատառիկն ուսումնասիրել և պարունակված նյութը վերծանել է բանասեր Հ. Տաշյանը[2]։

Եգիպտոսի հայ գաղթավայրը արաբական խալիֆայության և Այուպյան շրջաններում։

Բյուզանդական տիրապետությունից հետո Եգիպտոսն ընկել է խալիֆայության գերիշխանության տակ և մնացել ավելի քան երեք դար (640—969 թթ.)։

Արաբական խալիֆայության տիրապետության տարիներին Եգիպտոսի հայ գաղթավայրը փոքրացել է։ Պատմական աղբյուրներում մենք քիչ ենք հանդիպում հայ գաղթավայրի մասին հիշատակությունների և հիշվածներն էլ, մեծ մասամբ, առանձին հավատափոխ հայ պաշտոնյաներ են։ Այսպես, օրինակ, խալիֆայության տիրապետության առաջին շրջանից հիշատակություններ կան Վարդան-էլ-Ռումի կոչվող հայի մասին, որը, որպես դրոշակակիր, ծառայելիս է եղել խալիֆաթի բանակում, մասնակցել Ամր զորավարի եգիպտական արշավանքներին և աչքի ընկել իր քաջությամբ և հնարամտությամբ։ Տեղեկություններ կան այն մասին, որ Եգիպտոսը խալիֆայության կողմից նվաճվելուց հետո, երբ Ամր զորավարը հիմնել է Ֆոստատ քաղաքը (Եգիպտոսի մայրաքաղաքն է հանդիսացել որոշ ժամանակ), շինարարական աշխատանքներին մասնակցել է նաև Վարդան-էլ-Ռումին. նա Ֆոստատում կառուցել է տվել ծածկած մի շուկա և իր անունով

[1] Ա. Աբրահամյան, Հերմեսի փիլիսոփայական աշխատության հին հայերեն թարգմանությունը (տե՛ս «Էջմիածին», 1957թ., XI—XII, էջ 41—47)։

[2] Հ. Տաշյան, Ակնարկ մը հայ հնագրության վրա, Վիեննա, 1898, էջ 95։ Նույն պատառիկը ավելի ուշ վերծանել է նաև G. Cuendet (տե՛ս «Հանդէս ամսօրեայ», 1938թ., էջ 57—65)։

էլ կոչվել է «Սուք-էլ-Վարդան»։ Վարդանը կառուցել է նաև «Դարօլ-Նահաս» անունով մի պալատ ևս[1]։ Դժբախտաբար այս երկու կառուցումներից ոչինչ չի մնացել։ Արաբական աղբյուրներից երեվում է, որ Վարդանը միակ անձնավորությունը չի եղել, որ ծառայել է արաբական բանակում և աչքի ընկել իր քաջագործություններով։ Խալիֆայության բանակում գտնվել է 500 հոգուց բաղկացած «Ռումի» կոչվող մի զորամաս, որը կազմված է եղել բացառապես հույներից, հայերից և ասորիներից[2]։

Խալիֆայությունը նվաճելով Եգիպտոսը, կառավարել է իր կառավարիչներով, որոնք կոչվել են էմիրներ։ Այդ էմիրների մեջ հիշվում են նաև մի քանի հայեր։ Արաբական պատմիչներն առանձնապես գովեստով են խոսում եգիպտահայ Ալի-բին-Յահյա Աբուլ-Հասան-էլ-էրմանիի մասին, որը երկու անգամ Եգիպտոսի կառավարիչ է նշանակվել՝ 841 և 849—850 թվականներին։ Արաբական պատմիչ Ջամալ-էդ-դին Թաղրիբիրդին նրա մասին հետևյալն է գրել. «Ալի-բին-Յահյան կտրիճ, քաջասիրտ, առատաձեռնությամբ ներքողված, պատերազմի և ճակատամարտերի հմուտ, տնօրինող, վարչագետ և կառավարչության պաշտոնի մեջ բարի վարք ունեցող էմիր էր։ Նա հայ էր ծագումով»[3]։

Եգիպտոսի հայ գաղթավայրը արաբական տիրապետության շրջանից թողել է մի շարք հայկական արձանագրություններ, որոնցից թվական ունի մի խաչարձան, որը գրված է հայկական մեծ թվականի «Նվ»ին, այսինքն՝ 981 թվականին։ Այդ հուշարձանը ներկայումս պահվում է Կահիրեի բին Սուրենի եկեղեցում[4]։ Նշված խաչքարը եկեղեցական շենքի բեկոր է, իսկ եկեղեցու գոյությունը ինքնին ապացույց է, որ X դարում, խալիֆայության տիրապետության շրջանում, եգիպտոսի հայ գաղթավայրը դեռ շարունակել է իր գոյությունը։ Եգիպտահայ գաղթավայրը համեմատաբար նպաստավոր պայմաններում է գտնվել Ֆաթիմյան սուլթանների օրոք (969—1117 թթ.), երբ եգիպտական ժողովուրդը թոթափելով խալիֆայության լուծը, կարողացավ անկախություն ձեռք բերել։ Ֆաթիմյան սուլթաններին հաջողվեց նվաճել Պաղեստինը, Սիրիան և ավելի մոտենալ Փոքր Ասիայի հայաշատ կենտրոններին։ Ֆաթիմյան սուլթանները ընդհանրապես հանդուրժող վերաբերմունք են ցուցաբերել դեպի քրիստոնյաները, այդ

[1] Գ. Մսերլյան, Ականավոր հայեր եգիպտոսի մեջ, էջ 12։

[2] Նույն տեղը, էջ 14։

[3] Գ. Մսերլյան, Ականավոր հայեր եգիպտոսի մեջ, էջ 18։

[4] Թ. Ե. Դուշակյան, եգիպտոսի հայոց հին և արդի եկեղեցիները, էջ 10։

թվում՝ նաև դեպի հայերը։ Այդ նպաստել է Եգիպտոսի հայ գաղթավայրի մասնակի աշխուժացմանը և գաղթականների թվի մեծացմանը։ Արաբական սկզբնաղբյուրները մեզ ուշագրավ տեղեկություններ են հաղորդում Ֆաթիմյան սուլթանության ժամանակաշրջանում վեզիրության պաշտոնի բարձրացած մի շարք հայերի մասին, որոնք խոշոր դեր են կատարել Եգիպտոսում կենտրոնացված ավատական միապետություն ստեղծելու, երկրում կարգ ու կանոն հաստատելու և արհեստներն ու արդյունագործությունը զարգացնելու ուղղությամբ։ Հայ վեզիրների գործունեությունն այնքան մեծ է եղել Եգիպտոսի պատմության մեջ, որ նրա պատմության խոշորագույն մասնագետներից մեկը՝ Գաստոն Վիթը, Եգիպտոսի պատմության այս շրջանն անվանել է «Հայկական շրջան»[1]։ Այս ժամանակաշրջանում, իրապես, Եգիպտոսի վարչական և ռազմական փաստական ղեկավարությունն ամբողջապես գտնվել է հայ վեզիրների ձեռքում։ Եգիպտահայ վեզիրների մեջ եղել են վարչական մեծ կարողություններ ունեցող անձինք, որոնք կատարել են օգտակար գործեր Եգիպտոսի համար։ Եգիպտոսում իշխող դիրքի հասած հայ վեզիրներից նշանավոր Բեդր-էլ-Կամալին կամ Ջամալին։ Նա վեզիրության պաշտոնում է գտնվել 1070—1094 թթ.։ Նրա մասին Գաստոն Վիթը գրել է. «Պետր-էլ Կամալին, մեր կարծիքով, մահմեդական Եգիպտոսի ամենանշանավոր անձնավորություններից մեկն է։ Նա ավելի հեռատես է եղել, քան խորամանկ, կորովի—քան անողոք։ Նա կարողացել է առանց վհատվելու Եգիպտոսը դարձնել զորավոր և բարգավաճ մի երկիր»[2]։ Ըստ արաբացի պատմիչ Մագրիզիի տեղեկության, Բադր-էլ-Կամալին մամլուկական ճորտ է եղել։ Հետագայում կարողացել է ճորտությունից ազատվել ու բարձրանալ վեզիրության բարձր պաշտոնին շնորհիվ իր արտակարգ խելքի և քաջության։ Նրան վեզիրության պաշտոնին է հրավիրել Մուսթանսար խալիֆը[3]։ Բեդր-էլ-Կամալին համաձայնվել է այդ պաշտոնն ստանձնել միայն մի պայմանով, որ թույլ տրվի եգիպտական բանակը կազմել իր ցանկացած զինվորականներից[4]։ Ստանձնելով վեզիրության պաշտոնը, նա ամենից առաջ աշխատել է վերացնել ավազակությունը և երկրում կարգ ու կանոն հաստատել։ Իր այդ նպատակն

[1] Gaston Viet, Précis de l' histoire d' Egypte *(Համմտ. Ա. Ալպոյաճյան, Եգիպտոսի նահանգը և հայերը, էջ 18)։*

[2] *Ա. Ալպոյաճյան, Եգիպտոսի նահանգը և հայերը, էջ 19։*

[3] *Գ. Մսըրլյան, Ականավոր հայեր Եգիպտոսի մեջ, էջ 23։*

[4] *Ղ. Ալիշան, Արուսահլ հայ, Վենետիկ, 1895, էջ 16։*

իրագործելու համար, նա դիմել է բռնությունների. անխնա ոչընչացրել է բոլոր նրանց, ովքեր փորձել են ընդդիմանալ իրեն. «Նա ինքնիշխան վարեց գործերը,— գրում է Մագրիզին,—և ամենալավ կերպով կանոնավորեց. խիստ պատկառազդու էր և մեծապես հարգված ու ահարկու։ Նա արքան մարդ սպանեց, որի համբանքը միայն ալլահը կարող է կատարել»[1]։ Ուռհայեցին ևս վկայում է, որ Բադր-էլ-Կամալին վեզիրության պաշտոնին է կանչվել երկրում տիրող խառնակ վիճակը կարգի մեջ դնելու համար։ Սուլթանը, ասում է նա, վեզիրության պաշտոնը հանձնեց Ամիր Ճոշին «ի հայ ազգէն», որը «հայ զորականներով կռվեց ներսի և դրսի թշնամիների դեմ և «եղև խաղաղութիւն Մսրայ»[2]։ Բեդր-էլ-Կամալին հատուկ ուշադրություն է դարձրել հողագործների վրա. նա երեք տարի հողը շնորհել է հողագործներին՝ բարվոքելով նրանց վիճակը։ Նա հովանավորել է վաճառականներին և արհեստավորներին։ Նրա օրոք «Մսըր վերադարձան,— գրում է Մագրիզին,— վաճառականները, որոնք հեռացել էին սովի օրերին»[3]։ Եվ այս բոլորի հետևանքով Բադր-էլ-Կամալիի վեզիրության տարիներին, ըստ արաբական աղբյուրների տեղեկության, բարգավաճում է երկիրը, որ քարուքանդ էր եղել անցյալում՝ տեղի չարագործների ավերումների հետևանքով։ Բադր-էլ-Կամալին բարյացակամ վերաբերմունք է ունեցել նաև Եգիպտոսի հայ գաղթավայրի նկատմամբ. մի շարք հայերի նա առաջ է քաշել պետական և զինվորական ղեկավար պաշտոնների։ Կենտրոնախույս ֆեոդալների դեմ պայքարելու համար հաստատուն հող ստեղծելու նպատակով, նա աշխատել է եգիպտական բանակում լայն տեղ տալ հայերին։ Մագրիզին այդ մասին հետևյալն է հաղորդում. «Բադր-էլ-Կամալին... իրեն համար բանակներ և զորամասեր կազմեց հայերից, և այդ ժամանակից ի վեր բանակի մեծ մասը հայերից էր կազմված»[4]։ Անցյալում կռիվների ընթացքում քարուքանդ եղած երկիրը վերակառուցելուց հետո Բադր-էլ-Կամալին ձեռնամուխ է լինում մի շարք բերդերի, կամուրջների, քաղաքային պարիսպների և հասարակական այլ շենքերի կառուցմանը։ Նա առանձնապես մեծ աշխատանք է կատարել Կահիրեի վերաշինության գործում։ Այդ մասին Մագրիզին հետևյալն է գրում. «Այս քաղաքը մի անապատ էր, անմարդաբնակ և ամայի փլա-

[1] *Գ. Մսըրլյան, Ականավոր հայեր Եգիպտոսի մեջ, էջ 25։*

[2] *Մատթէոս Ուռհայեցու ժամանակագրութիւն, էջ 233։*

[3] *Գ. Մսըրլյան, Ականավոր հայեր Եգիպտոսի մեջ, էջ 26։*

[4] *Նույն տեղը, էջ 28։*

տակների մի շրջանակ։ Ուստի նա արտոնություն տվեց ասկարներին, մելեճներին, հայերին և շենք շինելու կարողություն ունեցողներին, որ Կահիրեի մեջ իրենց ուզած շենքը կառուցեն»[1]։ Նրա կառուցած շինարարական գործերից է Կահիրեի պարիսպը, որի երեք դռները՝ Բաբ-էլ-Ֆութա, Բաբ-էլ-Զուեյլա և Բաբ-էլ-Նասըր, կառուցված են արտակարգ վայելչությամբ և կանգուն են մինչև այսօր։ Այդ դռները կառուցել են եղեսացի երեք հայ ճարտարապետ եղբայրներ[2]։ Ալպոյաճյանը խոսելով այդ դռների մասին, գրում է. «Այս երեք դռները, որոնք ցարդ հիացման առարկա կըլլան Կահիրե այցելող օտարականներուն, երեքն ալ հայ ճարտարապետներու հրաշակերտներն են»[3]։ Բադր-էլ-Կամալիից հետո վեզիրության պաշտոնն ստանձնել է իր որդին՝ Շահնշահը, որը հայտնի է արաբական մատենագրության մեջ Ավդալ պատվանունով։ Արաբացի պատմիչները նրան ներկայացնում են որպես «Կրոմվի, ռազմագետ, վարչագետ և արդարամիտ» անձնավորություն։ Ավդալը Եգիպտոսը կառավարել է բացարձակ միապետի իրավունքով 1094—1121 թվականներին։ Եգիպտական բարձր շրջաններում նա այնքան մեծ հեղինակություն է ունեցել, որ միջամտել է մահացած եգիպտական սուլթանի թափուր գահի թեկնածուն որոշելու հարցում և իր վճռական խոսքն ասել։ Նա կտրել է նաև իր սեփական դրամը։ Արաբական պատմիչները որոշ քննադատական խոսք ունեն Ավդալի մասին, որ իբրև թե նա գաղտնի բանակցություններ է մտել խաչակիրների հետ և ցանկացել եգիպտացիներին քրիստոնյա դարձնել[4]։ Ժողովրդի մեջ տարածված այդ լուրն էլ, հավանաբար, պատճառ է դարձել նրա խորտակման. նա սպանվել է փողոցում՝ մոլեռանդ մահմեդական ամբոխի կողմից։

Ավդալը կառուցել է տվել բազմաթիվ շենքեր։ Նրա անվան հետ է կապված 1113 թվականին կառուցված Աբուլ Մունաջայի ջրանցքը։ Նրա նախաձեռնությամբ են կառուցել մի քանի հոյակապ պալատներ, որոնք դժբախտաբար չեն պահպանվել։ Ըստ արաբ պատմիչի մի տեղեկության, նա գրասեր է եղել, իր գրադարանում ունեցել է 500.000 կտոր գիրք[5], որն անշուշտ, չափազանցված թիվ է։ Նա հովանավորել է գիտության մարդկանց։ Ըստ արաբ պատմիչների տեղեկության, Ավդալը կառուցել է աստղադիտարան (Մեջիտ-էր-Ռասատ)՝ այնտեղ դնելով «զաթ-էլ-հալադ» կոչվող մի գործիք՝ աստղերի շարժումը դիտելու համար[1]։

Եգիպտոսի աչքի ընկնող հայ վեզիրներից է հանդիսացել նաև Վահրամ Պահլավունին, որն արաբական պատմիչների մոտ հայտնի է Բեհրամ-էլ-Արմանի անունով։ Սա միջնադարյան հայ նշանավոր տաղերգու Ներսես Շնորհալու հորեղբայրն է։ Ենթադրվում է, որ Վահրամ Պահլավունին Եգիպտոսում զինվորական ծառայության մեջ է գտնվել հայ վեզիրների իշխանության օրոք և աստիճանաբար բարձրացել ու հասել վեզիրության պաշտոնին 1135 թվականին։

Եգիպտահայ գաղթավայրը Վահրամ Պահլավունու վեզիրության տարիներին բավականաչափ մնծացել և բարգավաճ վիճակում է գտնվել։ Հայ վեզիրը իր դիրքը Եգիպտոսում ամրացնելու նպատակով Կիլիկիայից և Սիրիայից բերել է տվել հայ զինվորականների և բանակի հիմնական մասը կազմել նրանցից։ Նա հաջողությամբ կարողացել է ճնշել միջֆեոդալական կռիվները և խաղաղացնել երկիրը։ Ներսես Շնորհալին իր «Վիպասանության» մեջ արտակարգ գովեստով է խոսում Վահրամ Պահլավունու՝ իր ազգակցի մասին։

«Ըզպատերազմ ազանց վանեալ,
Հակառակաց յաղթող գտեալ,
Վասն այսորիկ շրջեղացեալ,
Եւ աշխարհին նոցունց տիրեալ»[2]։

Վահրամ Պահլավունին, սակայն, այնքան շատ հայեր է հավաքել իր շուրջը, որ տեղիք է տվել դժգոհության տեղացի արաբական շրջանում։ Իբն-էլ-Աթիրը գանգատվում է, որ Վահրամ Պահլավունին պատասխանատու պաշտոնների էր նշանակում անարժան հայ մարդկանց և ազատում աշխատանքից մահմեդականներին։

Վահրամ Պահլավունու նկատմամբ սկսում են կասկածանքներ տարածվել, ըստ որի, նա մեղադրվում է իբրև խաչակիրների գաղեկամ անձնավորության[3]։ Մեղադրանքի նյութ է հանդիսանում մանավանդ այն փաստը, որ նա առանց սուլթանի համաձայնու-

[1] Ա. Ալպոյաճյան, Եգիպտոսի նահանգը և հայերը, էջ 22։
[2] Ա. Օրագյան, Հայ ճարտարապետներ Եգիպտոսի մեջ (տե՛ս «Կյանք և Գիր» տարեգիրք, 1948 թ., էջ 155)։
[3] Ա. Ալպոյաճյան, ՀԳՊ, հ. II, 460։
[4] Տե՛ս Historiens Occdes Craisades, IV, էջ 48 և 78։
[5] Գ. Մսըրլյան, Ականավոր հայեր Եգիպտոսի մեջ էջ 45։

[1] Գ. Մսըրլյան, Ականավոր հայեր Եգիպտոսի մեջ, էջ 55։
[2] Տե՛ս Ն. Շնորհալի, Վիպասանություն։
[3] Journal Asiatique, 1888. XI—XII, էջ 487։

թյունն առնելու, գերությունից ազատել էր մի շարք եվրոպացիներ։ Նրա անձնական թշնամիները օգտագործելով ահա այս և նման այլ փաստեր, գրգռում են մահմեդականներին, որոնք ընդվզում են հայ վեզիրի դեմ և սուլթանից պահանջում պաշտոնանկ անել Վահրամ Պահլավունուն։ Վերջինս իր հայ զորամասերով փորձում է դիմադրել, բայց հաջողություն չունենալով, թողնում է իր պաշտոնը[1]։ Հետագայում սուլթանը նորից նրան աշխատանքի է կանչում և նշանակում իր անձնական խորհրդատուն։

Ֆաթիմյան շրջանի մեծ անուն ստեղծած հայ վեզիրներից է եղել Թալայ-բին-Ռուզիքը, որը Եգիպտոսում վեզիրության պաշտոնի մեջ է գտնվել 1154—1161 թվականներին։ Նա եգիպտոսի վեզիրների շարքում եզակի դեմքերից է այն իմաստով, որ իր ռազմագիտական կարողությունների հետ ունեցել է նաև բանաստեղծական տաղանդ։ Կառավարել է Եգիպտոսը միահեծան իշխանությամբ, որովհետև նրա օրոք Եգիպտոսում գահակալող երկու սուլթաններն էլ մանկահասակ են եղել և հայ վեզիրը խնամակալի պաշտոն է ունեցել։

Թալայ-բին-Ռուզիքը բացառիկ հարգանք է ցուցաբերել մտավորականության նկատմամբ։ Իր պալատում հիմնել է գիտության ճեմարան գրական, գաղափարական հարցերն այնտեղ քննության առնելու համար։ Ինքը, ինչպես երևում է, եղել է շնորհալի բանաստեղծ, գրել է երկու հատորից բաղկացած իր դիվանը. նրա բանաստեղծությունների մասին ընդհանուր պատկերացում տալու համար կարելի է բերել հետևյալ քառյակը։

«Ժամանակը, իբրև գուշակ, իրադարձություններ է ծավալում,
Ւսկ մենք հաճախ խուսափում ենք այն նկատել,
Մոռանում ենք մեր օրհասը, չենք ուզում այդ մասին խոսել,
Մինչև որ ինքն է գալիս մեզ այդ հուշելու»[2]։

Ֆաթիմյան շրջանի վերջին վեզիրներից է եղել Ռուզիք-բին-Սալիհը (1161—1163 թթ.), որն առանձնապես չի փայլել ոչ քաջությամբ և ոչ էլ խելքով, ուստի չենք ուզում կանգ առնել ոչ նրա և ոչ էլ հաջորդ մյուս եգիպտահայ վեզիրների վրա, որոնք առանձին օգտակար գործ չեն կատարել եգիպտական ժողովրդի կամ Եգիպտոսի հայության կյանքում։

Ֆաթիմյան իշխանությունները հայերի նկատմամբ ցուցաբերած վերաբերմունքով բարենպաստ հող են ստեղծել Եգիպտոսում հայ բնակչության կենտրոնացման համար։ Եգիպտահայ գաղթավայրի ստվարացմանը զգալի չափով նպաստել են նաև ծագումով հայ եգիպտական վեզիրները, որոնք, ինչպես ասացինք, վստահելի հենարան ստեղծելու նպատակով, աշխատել են հայերին առաջ քաշել պետական ապարատներում և զորամասերում։

Եգիպտոսում նպաստավոր պայմաններ են եղել նաև հայ արհեստավորության և առևտրականների համար։ Փաստորեն եգիպտական հայկական բանակը, եթե չհաշվենք համաշխարհային առաջին պատերազմի տարիներին հայ փախստականների հարկադրական կենտրոնացումը Եգիպտոսում, իր երկարաձիգ պատմության ընթացքում, ամենից շատ բնակչություն ունեցել է XI—XII դարերում։

Եգիպտոսի հայ գաղթօջախի բնակչության թվի մասին այս դարաշրջանում դժվար է հաստատուն խոսք ասել, որովհետև աղբյուրները տարբեր թվեր են տալիս և տարբեր հաշվումներ կատարում։ Հայկական մատենագրության մեջ տեղեկություն է պահպանվել այն մասին, որ իբր Եգիպտոսում ապրել է շուրջ երեսուն հազար հայ ընտանիք[1], որն անշուշտ չափազանցություն է։ Չափազանցված է նաև արաբական աղբյուրների այն տեղեկությունը, որ հայերի թիվը միայն հետևակ և հեծելազոր զորամասերում քսան հազար է եղել[2]։ Ավելի հավանական թիվը տալիս է հայ ժամանակագիր Մաթեոս Ուռհայեցին, որը հաշվում է 30.000 հոգի. «Եւ բազում զօրք ժողովեցան յԵգիպտոս, իբրև երեսուն հազարաց»[3]։ Նույն թիվն է տալիս նաև հնագույն հայկական մի հիշատակագիր. «Եւ էր յայսմ ժամանակ (XI—XII դարերում— Ա. Ա.) յազգէն Հայոց յԵգիպտոս ԼՌ (30.000)»[4]։

Հայ բնակչության մեծ մասը կենտրոնացած էր Մըսր՝ ներկայիս Կահիրե քաղաքում։ Միայն Կահիրեի Հյուսեյն Հարիթու թաղամասում, ըստ Մագրիզի տեղեկության, բնակվելիս է եղել 7.000 հայ[5]։ Հայ գաղթականներ են եղել Եգիպտոսի բազմաթիվ վայրերում։ Այդ մասին են վկայում Եգիպտոսի գրեթե բոլոր քաղաքներում հայկական անունով դարբասների գոյությունը։ Այդ հաստատվում է նաև Եգիպտոսում կառուցված և մինչև օրերս հասած հայկական հուշարձաններով։ Հայերի մեծ մասը Եգիպտոսում

[1] Գ. Մսրլյան, Ականավոր հայեր Եգիպտոսի մեջ, էջ 70—71։
[2] Նույն տեղը, էջ 89։

[1] Ա. Ալպոյաճյան, Եգիպտոսի նահանգը և հայերը, էջ 29։
[2] Նույն տեղը, էջ 30։
[3] Մատթէոս Ուռհայեցի, էջ 211։
[4] Գ. Կ. Հովսեփյան, Հիշատակարանք ձեռագրաց, էջ 420։
[5] Գ. Մսրլյան, Ականավոր հայեր Եգիպտոսի մեջ, էջ 28։

ծառայել է զորամասերում: Նրանք փոքր թիվ չեն կազմել նաև պետական ապարատներում: Մագրիզի մոտ տեղեկություն կա այն մասին, որ Վահրամ Պահլավունուն վեզիրության պաշտոնից հեռացնելուց հետո, երբ սկսվեց հայկական տարրերի պետական ապարատից զտումը, ապա աշխատանքից հեռացվեցին երկու հազար հայեր: Ըստ երևույթին քաղաքներում քիչ թիվ չէին կազմում նաև հայ առևտրականները և արհեստավորները:

XI—XII դարերում քաղաքային կյանքը և ապրանքային արտադրությունը ավելի է զարգացած եղել, քան Միջերկրածովային որևէ այլ երկրում: Եգիպտոսում աննախընթաց ձևով զարգացել են արհեստները, մանավանդ վուշի, բամբակի, բրդի և մետաքսի կտորների արտադրությունը: Եգիպտոսում գործված ոսկեթել կտորները սպառման լայն շուկաներ են ունեցել հարևան երկրներում: Արտադրվել է նաև գունավոր ճենապակի: «Всемирная история»-ի մեջ Եգիպտոսին նվիրված գլխում այս դարաշրջանի մասին կարդում ենք. «Եգիպտոսը ակտիվ առևտրական հարաբերությունների մեջ է գտնվում Միջերկրածովյան երկրների, մասնավորապես իտալական Ամալֆի, Պիզա, Ջենովա և Վենետիկ քաղաքների հետ: XII դարում սկսում է զարգանալ առևտուրը նաև Հնդկաստանի հետ»[1]: Հայ արհեստավորները խոշոր մասնակցություն են ունեցել տեղական արդյունագործության մեջ, իսկ հայ վաճառականները՝ տարանցիկ առևտրի ասպարեզում: Հայ վաճառականները գործուն դեր են ունեցել Աֆրիկայի առևտուրը Մերձավոր Արևելյան երկրների և Հնդկաստանի հետ կապելու մեջ: Հայերի նկատմամբ Եգիպտոսում կրոնական անհանդուրժողական վերաբերմունք չի ցուցաբերվել: Եգիպտահայ գաղթավայրի հայ բնակչությանը չեն հարկադրել հավատափոխ լինել, մահմեդականություն ընդունել, նույնիսկ Վահրամ Պահլավունուն, իր վեզիրության պաշտոնում գտնված ժամանակ, չի պարտադրվել կրոնափոխ լինել: Եգիպտահայությունն ազատ իրավունք է ունեցել կառուցելու իր եկեղեցիները, որոնց թիվը ըստ Աբու-Սալիհ պատմիչի, հաշվում է երեսուն: Ըստ որում, նա Եգիպտոսում գտնվող հայկական աղոթատները հիշում է անուններով և նշում դրանց գտնվելու վայրը[2]:

Եգիպտական բնակչաշատ այս գաղութը, բնական է, չէր կարող չհրավիրել իր վրա հայոց կաթողիկոսության ուշադրությունը,

[1] «Всемирная история», т. III, էջ 507—508:
[2] Ալիշան, Արուսեակ հայոց:

որն այդ ժամանակ գտնվում էր Կիլիկյան Հայաստանում: Տեղեկություններ կան հայ մատենագրության մեջ, որ Գրիգոր Վկայասեր կաթողիկոսը 1074—1075 թվականներին այցելել է Եգիպտոս և բարյացակամ ընդունելություն գտել եգիպտական իշխանությունների կողմից. «Եւ բազում փառք և մեծութիւն ընկալաւ տէր Գրիգորիս ի թագաւորէն Եգիպտոսի առաւել, քան ի թագաւորէն Հռոմոց»[1],— գրում է Ուռհայեցին:

Գրիգոր Վկայասեր կաթողիկոսը Եգիպտոսում թեմ է ստեղծել և թեմի հոգևոր առաջնորդ նշանակել իր քրոջ որդուն՝ Գրիգորին[2]:

Եգիպտոսի հայ գաղթավայրը Այուբյան, մամլուկների և Թուրքիայի տիրապետության ժամանակաշրջաններում:

Եգիպտոսի հայ գաղթավայրը ծանր վիճակի մեջ է ընկնում Այուբյան շրջանում (1171—1250 թթ.): Այուբյան դինաստիայի հաստատման ժամանակ պետք է ասել, որ եգիպտահայերն անհեռատես են գտնվել և որպես ֆաթիմյան դինաստիայի համակիրներ գործուն մասնակցություն ունեցել Այուբյանների դեմ կազմակերպված դիմադրությանը, իսկ Այուբյանների՝ իշխանության գլուխ անցնելուց հետո, մասնակցել են նրանց դեմ 1192 թվականին բռնկված ապստամբությանը: Եվ Այուբյան առաջին սուլթանը՝ Սալահէդդինը, որ Դվին քաղաքի քրդերից էր, գազազած հայերի ցուցաբերած թշնամական այս դիրքից, հալածանքի է ենթարկել եգիպտահայերին, ոմանց սպանել տվել, գրավել շատերի գույքը և պաշտոնազուրկ արել Եգիպտոսի պետական ապարատներում և զորաբանակում աշխատող հայերի մեծ մասին: Նա դրանից հետո եգիպտական զորքը սկսել է կազմել գլխավորապես քրդերից և թուրքերից: Այս հալածանքի ժամանակ բավականին թվով հայեր թողել են Եգիպտոսը և տեղափոխվել Կիլիկյան Հայաստան, իսկ մի մասը՝ Հաբեշստան:

Չնայած Սալահէդդինի եգիպտահայության նկատմամբ բռնած թշնամական դիրքին, այնուամենայնիվ, նրան մտերիմ շրջանում գտնվել են հայեր, որոնք վայելել են Սալահէդդինի վստահությունը և հովանավորվել նրա կողմից: Այդպիսի հայերից կարելի է, օրինակ, հիշել Բեհ-ադ-Դին Կարակուշին, որը Սալահէդդինի կողմից նշանակված է եղել Եգիպտոսի պետական շինարարության ղեկավար: Գարագուշը լինելով իր ժամանակի լավագույն ճարտարապետներից մեկը, մեծ ծառայություն է ունեցել եգիպ-

[1] Ուռհայեցի, էջ 211:
[2] Նույն տեղը:

տական ժողովրդի համար։ Նրա շինարարական աշխատանքներից կարելի է մատնացույց անել Գիզեի նշանավոր կամուրջները, Կահիրե քաղաքի միջին պարիսպը, Կահիրեի Լեռան բերդը և հասարակական այլ շենքեր[1]։ Կահիրեում Գարագուշի անունով հրապարակ է գոյություն ունեցել։

Սալահ-էդ-Դինի սուլթանության ժամանակ եգիպտական նավատորմիղի ղեկավարն է եղել եգիպտահայ զինվորական Հուսամեդ-դին Լուլու-էլ-Նաջիբը։ Ըստ պատմիչների տեղեկության, նա ռազմական մեծ հմտությամբ ծովային ճակատամարտ է տվել խաչակիրների դեմ Կարմիր ծովում և արժանացել եգիպտական ժողովրդի հարգանքին և մեծարանքին[2]։

Եգիպտական սուլթանության շրջանում բարձր պաշտոններ են ունեցել մի քանի այլ եգիպտահայեր ևս, սակայն դրանք, ինչպես ասացինք, առանձին անհատներ են եղել. եգիպտահայ գաղթավայրերը ամբողջությամբ վերցրած, գտնվել է իր անկման և նոսրացման շրջանում։

Եգիպտոսի հայ գաղթավայրի վիճակն ավելի է ծանրացել մամլուկների տիրապետության ժամանակաշրջանում (1250—1517)։ Մամլուկներն արտակարգ անհանդուրժողական վերաբերմունք են ցուցաբերել քրիստոնյաների, այդ թվում նաև եգիպտահայերի նկատմամբ, որի հետևանքով եգիպտահայ գաղթավայրն այս շրջանում ավելի է խամրում։ Սկսում է ավելանալ Եգիպտոսում անազատ այն հայերի թիվը, որոնք որպես ստրուկներ գնվում էին կամ գերի էին բերվում Կիլիկյան Հայաստանից ու Սիրիայից։ Մամլուկները, ինչպես հայտնի է, իրենց բանակը կազմում էին Կովկասից, Ղրիմից և այլ վայրերից բերված երեխաներից. փոքր հասակում տարբեր ազգությունների պատկանող երեխաներ բերում, տեղավորում էին զինվորական ճամբարներում և նրանց դաստիարակում մոլի մուսուլմանական ոգով ու հատուկ մարզիչների միջոցով զինավարժություն սովորեցնում։ Հետագայում այդ երեխաները մոռանում էին իրենց մայրենի լեզուն և ազգային ծագումը։ Այս կարգի երեխաների մեջ եղել են մեծ թվով հայեր, թուրքեր և քրդեր։ Թե ինչ թիվ են կազմել հայերը մամլուկյան բանակում, կարելի է պատկերացում կազմել արաբական աղբյուրներից մեկի հաղորդած այն վկայությունից, որ 1290 թվականին

[1] Գ. Մսրլյան, Ակնառվոր հայեր Եգիպտոսի մեջ, էջ 111։

[2] Հ. Սուֆյան, Եգիպտոսի հայ մամլուքներն ու իշխանները Ֆաթիմյան շրջանին, Գահիրե, 1928։

մամլուկ Աշրաֆ խալիլի իշխանության ժամանակ սուլթանական բանակի 10.000 հոգուց 3700-ը եղել են հայեր և չերքեզներ[1]։

Եգիպտոսի մամլուկյան իշխանությունը, ինչպես հայտնի է, քաղաքական հարաբերությունների մեջ է գտնվել Կիլիկյան Հայաստանի հետ։ Խաչակիրների՝ Արևելքում երևալուց հետո, հայերը մի շարք անգամներ կռիվներ ունեցան Եգիպտոսի հետ։ Ահա այս կռիվների ընթացքում, երբ եգիպտացիները հաջողություն էին ունենում, Կիլիկիայից մեծ թվով գերիներ էին բերվում. այստեղ մեծահասակներին, որպես ստրուկների, օգտագործում էին գյուղատնտեսության մեջ, իսկ փոքրահասակներին դաստիարակում էին զինվորական ճամբարներում։ Կիլիկիայից գերիներ են բերվել Եգիպտոս 1265, 1274, 1283, 1305, 1322 թվականներին և այլն։ Մեծ գերեվարություն է կատարել առանձնապես Աշրաֆ սուլթանը, որը 1292 թվականին հարձակվել է Կիլիկիայի վրա, շրջապատել Հռոմկլան և այն վերցնելուց հետո «զկաթողիկոսն և զամենայն բազմութիւն քրիստոնէից, աւելի քան զԼՌ (30.000) հոգիս գերիս տարան ի Մսր՝ ի բանտ և ի ծառայութիւն»[2]։

Կիլիկիայի Խորին անապատի գրիչներից մեկը, 1305 թվականին գրած իր հիշատակարանում, վշտով արձանագրել է, որ եգիպտական բանակը հարձակվել է Կիլիկիայի վրա, «զերիտասարդս և զտղայսն» տարել է գերի, իսկ իրենք սարսափահար տագնապի մեջ են և գիշեր ու ցերեկ ապրում են զարհուրանքով[3]։

Եգիպտական սուլթանները գերիներ են տարել ոչ միայն Կիլիկիայից, այլև հայկական այլ գաղթավայրերից։ Այսպես, հայտնի է, որ 1425 թվականին եգիպտացիները Կիպրոսից գերի են տարել մոտ 560 հոգի. նրանց մեջ եղել են նաև բավականին թվով հայեր[4]։

XIV դարում Եգիպտոսում, ինչպես երևում է, դեռ բավականաչափ հայեր կային։ Հայ մատենագրության մեջ տեղեկություններ կան այն մասին, որ Կոստանդին կաթողիկոս Դրազարկցին 1325 թվականին գնացել է Եգիպտոս՝ նպատակ ունենալով կարգավորել Եգիպտոսի և Կիլիկյան Հայաստանի փոխհարաբերությունները ու բարելավել եգիպտահայ գաղթավայրի վիճակը[5]։ Այդ նպատակով Եգիպտոս է գնացել նաև Կիլիկիայի հայ իշխան Հե-

[1] Ա. Ալպոյաճյան, Եգիպտոսի նահանգը և հայերը, էջ 41։

[2] Ղալաթիայի ձեռագիր ցուցակ, էջ 206։

[3] Գ. Կ. Հովսեփյան, Հիշատակարանք ձեռագրաց, էջ 420։

[4] Լ. Խաչիկյան, ԺԴ դարի հայերեն ձեռ. հիշատակարաններ, էջ 354։

[5] Նույն տեղը, էջ 193։

թում Նղրեցին։ Կիլիկիայի Հովհաննես գրիչը հայտնում է, որ նըշված իշխանը «ճանապարհորդեալ եղև յաշխարհն Եգիպտոսի վասն հանգստեան քրիստոնէից»[1]։ Եգիպտոսի հայ գաղթավայրը XIV—XV դարերում ո՛չ միայն պահպանել է իր գոյությունը, այլև կարողացել է ստեղծել իր գրչության օջախները։ Հայկական ՍՍՌ մատենադարանի սեփականությունն է մի ձեռագիր, որը գրված է 1352 թվականին Մանվել գրչի կողմից «ի քաղաքիս Մսըր կոչեցեալոյ»[2]։ Պետական մատենադարանում է գտնվում նաև Եգիպտոսի Կահիրե քաղաքում 1415 թվականին գրված մի ձեռագիր, որը նվեր է տրված Երուսաղեմիյ Եգիպտոսի հայ գաղթավայրը այցելության եկած Պողոս եպիսկոպոսին[3]։

Հայ-եգիպտական հարաբերությունների սրման հարցում բացասական դեր է ունեցել մասնավորապես Վատիկանը, որը ոտքի է հանել Կիլիկիայի անհեռատես հայ իշխանավորներին ընդդեմ Եգիպտոսի, խոստումներ է տվել օգնելու նրան զորքով ու դրամով, բայց խաբել և Կիլիկիայի հայ իշխանություններին, կանգնեցրել է ռազմականապես շատ ավելի հզոր Եգիպտոսի առջև։ Ուշագրավ է այն փաստը, որ 1337 թվականին, երբ Եգիպտոսի և Կիլիկյան Հայաստանի միջև տեղի են ունեցել հաշտության բանակցություններ, եգիպտական կառավարության ներկայացուցիչները հայերից պահանջել են խոստանալ երդումով, որ հայերը կխզեն իրենց հարաբերությունները Հռոմի պապերի հետ[4]։ Սակայն հայ դիվանագիտական շրջաններն այդքան հեռատես չեն գտնվել և վերջ ի վերջո Կիլիկյան Հայաստանը, ինչպես շատ ճիշտ նկատել է պատմաբան Ա. Ալպոյաճյանը, զոհ է դարձել լատինական խարդավանանքներին[5]։ 1375 թվականին մամլուկներին հաջողվել է վերջնականապես նվաճել Կիլիկիան և Լևոն Հինգերորդին գերի բերել Եգիպտոս[6]։ Լևոն թագավորին Եգիպտոս գերեվարած ժամանակ Կահիրեում, ինչպես երևում է, գոյություն է ունեցել հայկական գաղթօջախ։ Լատին կրոնավոր Հովհաննես Դարդելը, որը Կիլիկիայի հայոց թագավոր Լևոն V-ի խոստովանահայրն է եղել, և նրա հետ գերության մեջ է գտնվել, իր ժամանակագրության մեջ հայտնում է, որ եգիպտական սուլթանը ցանկանալով

[1] Լ. Խաչիկյան, ԺԴ դարի հայերեն ձեռ. հիշատակարաններ, էջ 203։
[2] Նույն տեղը, էջ 397։
[3] Լ. Խաչիկյան, ե դ. հիշատակարաններ, մ. I, էջ 179։
[4] Մ. Չամչյան, Պատմութիւն Հայոց, հ. III, էջ 337։
[5] Ա. Ալպոյաճյան, ՊՀԴ, հ. II, էջ 468։
[6] Հովհաննէս Դարդելի ժամանակագրութիւն, Ս. Պետերբուրգ, 1891, էջ 153։

բանտից դուրս հանել և Կահիրեում ապրելու ազատ իրավունք տալ գերի հայ թագավորին, կանչում է «քաղաքի հայ մեծամեծներին և պատվավորներին, որոնք հնուց ի վեր բնակվում էին Կահիրեում և սուլթանի հպատակներն էին» և երաշխավորությամբ ազատ արձակում գերի հայ թագավորին ու տալիս նրանց[1]։ Նույն պատմիչի հաղորդած տեղեկություններից երևում է, որ իր Կահիրեում գտնված ժամանակ հանդիպել է հայ քահանաների և զինվորականների։

Եգիպտոսի հայ գաղթավայրը շարունակում է իր գոյությունը Թուրքիայի՝ Եգիպտոսը տիրելուց և իր գերիշխանությունն այնտեղ հաստատելուց հետո (սկսած 1517 թվականից)։ Թուրքերը Եգիպտոսը գրավելուց հետո այն դարձնում են իրենց վալիությունը։ Թուրքական արյունոտ լուծը ծանրանում է ո՛չ միայն եգիպտացիների, այլև այնտեղ ապաստանած հայերի վրա։ Թուրքական տիրապետության շրջանում հայ գաղթավայրը լուծվելու աստիճան փոքրանում է։

Թուրքիայի տիրապետության շրջանում տնտեսական կյանքի լճացումը, տիրակալների կեղեքումներն ու հարստահարությունները իրենց ծանր կնիքն են դրել Եգիպտոսի հասարակական, տնտեսական կյանքի, այդ թվում նաև՝ եգիպտահայության վրա։ Այդ որշակի երևում է Սիմեոն Լեհացու «Ուղեգրություն»-ից, որը 1615 թվականին եղել է Եգիպտոսում և գրի առել իր տպավորությունները։ Սիմեոն Լեհացու նկարագրությունից երևում է, որ Եգիպտոսի նախկին բարգավաճ գաղթավայրը XVII դարում գտնվել է ողբալի վիճակում։ Կահիրե քաղաքում նա հիշում է միայն 200 տուն հայեր, որոնք ապրում են «Հայկական» կոչվող թաղամասում և Եգիպտոս են եկել 1600 թվականին Ջալալիների ապստամբության ժամանակ։ Եգիպտահայերը,, ըստ հայ ուղեգրի տեղեկության, գլխավորապես զբաղվում են արհեստներով։ Նա Կահիրեի խանխալ թաղամասում հանդիպել է դիարբեքիրցի, հալեպցի և պոլսեցի հայ արհեստավորների, որոնք զբաղված են եղել ոսկերչությամբ և զինագործությամբ։ XVI—XVII դարերում հայ գաղթավայրի նվազման հետևանքով նրանք սեփական աղոթատներ նույնիսկ չեն ունեցել և օգտվել են ղպտիների տված մի մատուռից[2]։ Ըստ XVII դարի եվրոպացի ճանապարհորդ Գեորգ

[1] Հովհաննէս Դարդելի ժամանակագրութիւն, Ս. Պետերբուրգ, 1891, էջ 153։
[2] Սիմէոն դպրի Լեհացւոյ ուղեգրութիւն, տարեգրութիւն և յիշատականօք, Վիեննա, 1936, էջ 216, Հ. Ն. Ակինյանի հրատարակություն։

Սենիսի տեղեկության, որն անձամբ եղել է Կահիրեում և ուսումնասիրել է այն, նշում է, որ հայերը քաղաքի «Ամենից աղքատներն են և ամենից մեծ պատիվ ունեցողները. նրանք չարքաշ աշխատում են և համեստ ապրում»[1]։

Շվեդական մի ճանապարհորդ բժիշկ, որը 1749—1752 թվականներին ուղևորություն է կատարել Արևելքում արևելյան ժողովուրդների անցյալն ու ներկան ուսումնասիրելու նպատակով, Եգիպտոսի միջնադարյան ճարտարապետության մասին խոսելիս, նախ քննադատում է թուրքերին, որոնք չգիտեն, թե ինչպես կարելի է քարը քարի վրա դնել և պատ շարել. «Հայերն են նրանց ճարտարապետները,— գրում է նա.— Սրանք բնական հակում ունեն դեպի այս արհեստը։ Օժտված լինելով այն բոլորով, ինչ տեսել են Արևելքում իրենց ճանապարհորդության ընթացքում, նրանք կառուցում են այնքան լավ, որ կարելի է ակնկալել մի ժողովրդից, որ իր գիտությունը կպարտի մի տեսակ բնության»[2]։ Վերջում նա ցանկություն է հայտնում, որ եթե այս կառուցողները գան Եվրոպա, ճարտարապետական հրաշալի կոթողներ կկառուցեն նրանք այստեղ, կկարողանան «իրենց վարպետությամբ մրցել հների հետ և անցնել նորերից»։

Եգիպտոսի հայ գաղթավայրը արաբական պատմագրությանը տվել է ևս իր ներկայացուցիչը։ Արաբական պատմագրության մեջ հայտնի է Աբուսահլ անունով մի պատմիչ, որը հայ է եղել, բայց իր պատմական աշխատությունը գրել է արաբերեն։ Նա XII դարի պատմիչ է։ Նրա աշխատությունը պարունակում է Եգիպտոսում գտնվող քրիստոնյա եկեղեցիների և վանքերի պատմությունը, որի վրայով լուրջ են անցնում մահմեդական պատմիչները։ Ռուս նշանավոր արևելագետ Տուրաևը Աբուսահլի պատմական այս աշխատությունը համարում է պատմական «թանկարժեք աղբյուր»։

XI—XII դարերում եգիպտահայերի կառուցած հուշարձաններից կանգուն է մնացել Սոհակ քաղաքի մոտ կառուցած Սպիտակ կոչվող վանքը, որն այժմ գտնվում է ղպտիների ձեռքում և կոչվում է Դեյր-էլ-Աբյադ։ Նշված հուշարձանը Եգիպտոսի հոյակապ կոթողներից մեկն է։ Վանքի պատերի վրա մնացել է երեք արձանագրություն, որոնցից մեկի մեջ հիշատակված է վանքի որմնանկարները զարդանկարող վարպետի՝ Թեոդորոս Քեսունցու անունը, որը հավանական է Կիլիկիայից բերված գերիներից է եղել և Եգիպտոսում շարունակել է աշխատել իր մասնագիտությամբ[1]։ Ի դեպ, նշված վանքի արձանագրություններից մեկի մեջ հիշատակություն կա այն մասին, որ տվյալ վայրում ապրող հայերը աշխատում են քարակոփությամբ։

Եգիպտահայերը, երախտագիտորեն գնահատելով եգիպտացիների մարդասիրական ազնիվ վերաբերմունքը՝ իրենց ապաստան տալու և աշխատելու հարմար պայմաններ ստեղծելու համար, ոչ միայն ջանադիր են գտնվել Եգիպտոսի՝ իրենց երկրորդ հայրենիքի տնտեսության և մշակույթի զարգացման քննագավառներում, այլև հավատարմորեն կանգնել են եգիպտական ժողովրդի կողքին՝ նրանց մղած ազատագրական շարժումների ժամանակ։ Եվ այդ հասկանալի է։ Եգիպտահայերը, որոնք եգիպտական ժողովրդից ոչ պակաս չափով իրենց կաշու վրա զգացել են հարստահարիչների կեղեքումները և հարստահարությունները, բնական է, չէին կարող իրենց գործուն մասնակցությունը չցուցաբերել եգիպտական ժողովրդի ազատագրության վեհ գործին։ Այդ տեսակետից ուշագրավ է պատմական հետևյալ փաստը. 1771 թվականին, երբ Ռուսաստանը պատերազմական գործողությունների մեջ էր գտնվում Թուրքիայի հետ և ռուսական նավատորմիղը մտել էր Միջերկրական ծով, Եգիպտոսի կառավարիչ Ալի բեյը երկու պատգամավոր է ուղարկում ռուսական զորահրամանատար իշխան Օրլովի մոտ՝ կնքելու զինակցության և բարեկամության դաշինք ընդդեմ Թուրքիայի։ Այդ երկու պատգամավորներից մեկը հայ է եղել՝ Հակոբ անունով։ Պատգամավորությունը եղել է Պետերբուրգում, հաջողությամբ կատարել իր միսիան և վերադարձել երկու ռուս սպաների հետ, որոնք հանձնարարություն են ունեցել քննելու եգիպտական բանակի վիճակը որպես դաշնակից երկրի։ Հետագայում Ռուսաստանից Եգիպտոս են ուղարկվում թնդանոթներ և այլ զինամթերք։ Հակոբը արել է ամեն ինչ, որպեսզի ռուսական օգնության շնորհիվ Եգիպտոսը պահպանի իր պետական անկախությունը։

[1] George Sanys, Relotion of a Joureny Begun. A. Q. 1610.

[2] Տե՛ս Ա. Ալպոյաճյան, Եգիպտոսի նահանգը և հայերը, էջ 50—51։

[1] Տե՛ս Թ. եպ. Գուշակյան, Եգիպտոսի հայոց հին և արդի եկեղեցիները, էջ 44—245։

ՀԱՅ-ՀԱԲԵՇԱԿԱՆ ԱՌԸՆՉՈՒՄՆԵՐԸ

Ե՞րբ են հայերը ճանաչել հաբեշ բարի ժողովրդին և ի՞նչ պարագաներում, դժվար է ասել, միայն փաստ է, որ այդ երկու ժողովուրդների միջև դարեր շարունակ գոյություն են ունեցել արտակարգ սերտ բարեկամական հարաբերություններ։ (Հաբեշները հայ մատենագրության մեջ հիշվում են երկու տարբեր անուններով՝ հաբեշներ կամ խափշիկներ[1] և եթովպացիներ, իսկ երկիրը՝ Հաբեշստան և Եթովպիա)։

Հայ-հաբեշական հարաբերությունների մասին մեզ հասած տեղեկությունները, դժբախտաբար, շատ աղքատիկ են. հայ պատմիչները այդ մասին համառորեն լռում են, իսկ հաբեշական մատենագրության մեջ՝ տեղեկությունները պահվել են գլխավորապես վարքագրական (ագիոգրաֆիկ) աշխատությունների մեջ և իրենց պարունակած նյութով ավելի վերաբերում են հայ-հաբեշական եկեղեցական հարաբերություններին, քան երկու ժողովուրդների տնտեսական, քաղաքական և մշակութային կապերին։

Հայ-հաբեշական հարաբերությունների հնության մասին է վկայում արևելյան մի ավանդություն, որը ժամանակին գրի է առել Մովսես Խորենացին։ Ըստ այդ ավանդության, քաղդեական Տևտամոս թագավորը օգնական զորք է ուղարկել Պրիամոսին, որի մեջ գտնվել է հայ զորավար Զարմայրը՝ եթովպական զորքով։ Կռվում Զարմայրը վիրավորվել է և մահացել։ Պատմահայրը մեջ բերելով այս ավանդությունը, ցանկություն է հայտնում, որ Զարմայրը սպանված լիներ Աքիլլեսի և կամ «յայլմէ ումեքէ քաջացն»[2]։

[1] Հնում «խափշիկ» են կոչվել Աֆրիկայի բոլոր սևամորթ բնակիչները։

[2] Մովսէս Խորենացի, Պատմութիւն Հայոց, էջ 88։

VII դարի հայ գիտնական Անանիա Շիրակացին իր «Աշխարհացոյց»-ի մեջ Աֆրիկայում (պատմական Լիբիայում) հիշում է եթովպական երեք երկիր. «Ներքսագոյն Եթովպիա», «Վերին Եթովպիա» և «Ներքին Եթովպիա»։ (Ներկայումս Հաբեշստանի տերիտորիան համընկնում է «Վերին Եթովպիայի» հետ)։ Այդ երկիրը, ըստ Շիրակացու տեղեկության, հարուստ է «զմյուռսով, խընկով և կինոմոնով»[1]։

Պատմական որոշ տեղեկություններ հիմք են տալիս ենթադրելու, որ հայ առևտրականները ծանոթ են եղել Հաբեշստանի հետ դեռևս մեր թվականության առաջին դարից սկսած, այսինքն՝ Աքսումի պետության շրջանում։ Հայտնի է որ Կարմիր ծովի վրա գտնվող հաբեշական Տիգրե մարզի Ադուլիս նավահանգիստը տարանցիկ առևտրի կարևոր կենտրոն էր Հնդկաստանի ծովային ուղու վրա և անծանոթ չէր շատ շրջիկ հայ վաճառականներին։

Հայ-հաբեշական գործուն հարաբերությունները սկիզբ են առնում փաստորեն VI դարում։ Իրենց նախնական ձևով նրանք չնայած ստեղծվել են կրոնական հողի վրա, սակայն ունեցել են որոշակի քաղաքական նպատակադրում։ Հայտնի է, որ V—VI դարերում բյուզանդական կայսրությունը իր հպատակ արևելյան քրիստոնյա ժողովուրդների նկատմամբ վարել է ասիմիլյացիոն քաղաքականություն՝ այդ նպատակի համար օգտագործելով քրիստոնեական եկեղեցին։ Եկեղեցական ասպարեզը Բյուզանդիայի ընթացիկ քաղաքականության համար օգտագործումը ցայտուն դրսևորվել է 451 թվականին Քաղկեդոնում հրավիրված եկեղեցական տիեզերական ժողովում, որի կազմակերպողը, որոշումներ թելադրողը և ժողովականներին հետևելու հնազանդության պարտադրողը փաստորեն բյուզանդական արքունիքն է հանդիսացել։ Քաղկեդոնի այդ ժողովը ուժեղ հակազդեցություն է առաջացրել արևելյան քրիստոնեական ժողովուրդների շրջանում, որոնք ի մի համախմբվելով, կազմակերպել են դավանական մոնոֆիզիտ (միաբնակ) հակաքաղկեդոնական ուղղությունը և պայքար ծավալել Քաղկեդոնում ընդունված որոշումների դեմ։

Քաղկեդոնական և հակաքաղկեդոնական ուղղությունների մեջ տեղի ունեցող դավանաբանական վեճերը, ըստ ձևի, կրոնական սխոլաստիկ վեճեր են եղել, բայց նրանք, ըստ էության, ունեցել են քաղաքական հիմք, որովհետև արևելյան ժողովուրդները մերժելով բյուզանդական պաշտոնական եկեղեցու հպատակությունը, օպոզիցիոն դիրք են վերցրել հենց իրեն՝ Բյուզանդիայի կայսրու-

[1] Տե՛ս Անանիա Շիրակացու մատենագրությունը, էջ 344։

թյան նկատմամբ։ Բյուզանդական պաշտոնական եկեղեցու դեմ ուղղված այդ պայքարն ավելի է մոտեցրել իրար արևելյան քրիստոնյա ժողովուրդներին, այդ թվում՝ նաև հայերին ու հաբեշներին։ (Հաբեշները, ըստ տեղեկությունների, քրիստոնեություն են ընդունել 318 թվականին)։

Ռուս ականավոր արևելագետ ակադ. Բ. Ա. Տուրաևը խոսելով հայ-հաբեշական եկեղեցիների հարաբերությունների մասին, նրանց առաջացումը հետևյալ կերպ է բացատրում. հայերը և ղպտիները իբրև քաղկեդոնական, միշտ կրոնական կապ են ունեցել իրար հետ և Երուսաղեմում մշտական հաղորդակցության մեջ են գտնվել։ Ղպտիների միջոցով այդ կապն անցել է նաև հաբեշներին, որովհետև նրանց երկիրը կրոնապես ենթարկված է եղել ղպտիների պատրիարքին, դրանով պետք է բացատրել, որ հաբեշներն ընդունել են Երուսաղեմի հայոց պատրիարքարանի գերիշխանությունը[1]։ Ամենայն հավանականությամբ, արևելյան եկեղեցիների հակաքաղկեդոնական պայքարի այդ թեժ օրերին է ստեղծվել հաբեշական այն ավանդությունը, ըստ որի իբրև թե հաբեշական եկեղեցու աչքի ընկնող հիմնադիրներից մեկը՝ Եվստաթեոսը, հայ եկեղեցու ջատագովներից մեկն է եղել և եկել ու մահացել է Հայաստանում[2]։ Այս ավանդությունը, անշուշտ, ստեղծվել է հայ և հաբեշ շրջաններում գոյություն ունեցող բարեկամության հողի վրա։

Հնագույն հայկական գաղթօջախը Հաբեշստանում, ըստ պատմական աղբյուրների, ստեղծվել է VII դարում։ Գաղթօջախի ըստեղծման շարժառիթը հետևյալն է եղել. Արաբական խալիֆայությունը նվաճելով Սիրիան, Պաղեստինը և Եգիպտոսը, սկսել է հալածանք քրիստոնյաների դեմ։ Քրիստոնյաների մի մեծ հատվածք, չուզենալով ապրել արաբական բռնակալության տակ, գաղթել և բնակություն է հաստատել քրիստոնյա Հաբեշստանում։ Եգիպտոսում և Սիրիայում ապրող բավականին թվով հայեր ևս հնարավորություն չունենալով Սիրիայի և Պարսկաստանի վրայով վերադառնալ հայրենիք, որովհետև այդ երկրները գրավված էին արաբների կողմից, միանում են քրիստոնյաների գաղթականական այս հոսանքին և գաղթում ու հաստատվում են Եթովպիայի Աքսում թագավորության սահմաններում, ներկայիս Դեսսիե քաղաքի մոտ։ Հայ գաղթականները, ինչպես ամենուր, այստեղ ևս

[1] Б. А. Тураев, Из армяно-абиссинских сношений, СПБ, 1912, էջ 1։

[2] Հ. Նալբանդյան, Հայերը և Եթովպիան (տե՛ս «Արև», 1935 թ., 15-ը փետրվար)։

չեն ցրվել, այլ միասին քաղաքություն են հաստատել մի շրջանում, ունեցել են իրենց սեփական զորքը և առևտրական հարաբերությունների մեջ են գտնվել ինչպես ներսի, այնպես և դրսի աշխարհի հետ, որքան այդ հնարավոր է եղել խալիֆայության տիրապետությունից հետո Արևելքում ստեղծված նոր պայմաններում։ Հայկական այդ գաղթօջախը լայն ճանաչում է գտել հաբեշ ժողովրդի մոտ, և այն կոչվել է «հայկական կղզի»՝ հիշատակվելով հաբեշ մատենագրության մեջ։ Պատմական գիտությունների թեկնածու Հ. Թուրշյանը, որը հանգամանորեն ուսումնասիրել է հայ-հաբեշական հարաբերությունների պատմությունը, գտնում է, որ հայկական նշված գաղթօջախը «իր սեփական օրինակելի զորքով, կուլտուրական և առևտրական ծավալուն գործունեությամբ դարեր շարունակ աչքի ընկնող դաստիարակիչ «կղզի» է հանդիսացել Հաբեշստանի պատմության մեջ»[1]։

Ինչքա՞ն բնակչություն են ունեցել Հաբեշստանի «հայ կղզին»։ Դժբախտաբար աղբյուրները հնարավորություն չեն տալիս մեզ պատասխանելու այդ հարցին։

Հաբեշական Բայիդա-Մարիամի ժամանակագրության մեջ պահված միջնադարյան մի տեղեկությունից երևում է, որ հայկական այդ գաղթօջախը իր գոյությունը պահպանել է մինչև XV դարը։ Ժամանակագրության մեջ ասվում է, որ հաբեշ թագավորը, երբ եկել է «Հայ կղզի», տեղի բնակիչները նրան ընդունել են մեծ շքով և պատիվներով։ «Եւ երբ թագավորը տեսավ,— պատմում է ժամանակագիրը,— Հայքի մարդկանց մատուցած պատիվը և նրանց փառահեղությունը, զարմացավ, ջերմորեն ողջունեց և թույլ տվեց նրանց, որ վերադառնան իրենց տեղը»[2]։

Հաբեշստանի հայ գաղթօջախը XV դարում, իհարկե, այն չէր, ինչ Աքսումի թագավորության շրջանում։ Հատկապես X դարում հայ գաղթավայրը նոր գաղթականներ չընդունելու հետևանքով սկսել էր խամրել։ Պատմական աղբյուրներում մեծ թիվ կազմող հայ գաղթականության մասին տեղեկություն կա միայն Սալահէդդինի ժամանակից (XII դար)։ Եգիպտոսի սուլթանի կատարած արտակարգ վայրագությունների հետևանքով, եգիպտահայերի մի մեծ խումբ, 1169 թվականին փախչելով Եգիպտոսից, ապաստանել է Հաբեշստանում՝ իրենց հայրենակիցների մոտ։ Հետագա-

[1] Հ. Թուրշյան, Հաբեշ կրոնական գործիչ Ս. Եվստաթեոսը և հայ եկեղեցին (տե՛ս «Էջմիածին», 1956 թ., № 3—4, էջ 99)։

[2] Абиссинские хроники XIV—XV вв., М.—Л., 1936, էջ 92։

յում հայ գաղթականության մի նոր հոսանք Հաբեշստան է գնացել Կիլիկիայից XIV դարում՝ հայ թագավորության անկումից հետո[1]։

Հայ-հաբեշական հանդիպումների և շփումների խոշոր կենտրոն է հանդիսացել Երուսաղեմը, ուր հնուց ի վեր հայկական պատրիարքարանի գերիշխանության տակ են գտնվել տեղի ասորի, ղպտի և հաբեշ միաբնակ համայնքները։ Հայկական պատրիարքարանի գերագահ այդ իրավունքը պաշտոնական և իրավական ձևակերպություն է ստացել Եգիպտոսի Նասըր Մուհամեդ սուլթանի 1311 թվականի հրովարտակով, ըստ որի Երուսաղեմի Սարգիս եպիսկոպոսը ճանաչվել է իբրև «Ինքնուրույն պատրիարք հայոց և եկեղեցական պետ հայերի և նրանց դավանակից արեւելյան միաբանություններ»[2]։ Երուսաղեմի հայոց պատրիարքարանի այդ իրավունքը հետագայում ճանաչել են նաև օսմանյան իշխանությունները. ղպտի, ասորի և հաբեշ եկեղեցականները թուրքական կառավարության հետ կարող էին հարաբերություն ունենալ Երուսաղեմի հայոց պատրիարքարանի միջոցով[3]։

Երուսաղեմի հայկական պատրիարքարանը մեծ ազդեցություն է ունեցել ո՛չ միայն Երուսաղեմում ապրող հաբեշ դավանակիցների վրա, այլև բուն Հաբեշստանում։ Հայտնի է, օրինակ, որ 1539 թվականին հաբեշական Լեբնա Դենգել թագավորի հրամանով, հաբեշներն անվերապահ հետևել են հայերին և առաջնորդվել հայկական տոմարական հաշիվներով[4]։ Ժամանակ առ ժամանակ Երուսաղեմի հայկական պատրիարքարանն իր պատվիրակներն է ուղարկել Հաբեշստան։ Այդպիսի մի պատվիրակության մասին տեղեկություն կա XII դարից. Եվստաթիոս անունով մի հայ եկեղեցական Երուսաղեմից, իր աշակերտների հետ միասին, եկել և քարոզչությամբ է զբաղվել Հաբեշստանում։ Ավելի ուշ շրջանում Երուսաղեմից Հաբեշստան գնացած պատգամավորության մասին ուշագրավ տեղեկություն է հաղորդում Մեսրոպ Թաղիադյանը։ «Երուսաղեմից,— գրում է նա,— Հաբեշստան նվիրակ ուղարկվեց Գրիգոր եպիսկոպոսը, որը շրջելով քարոզչությամբ աշխարհն Եթովպացւոց մինչ ի Մուխա, եկն անդուստ ի Քոչին և քարոզությամբ իւրով հաստատեց զամենեսեան ի դաւանութիւն Հայոց և

[1] Ա. Ալպոյաճյան, ՊՀԳ, հ. Բ, էջ 473։

[2] Ա. Տեր-Հովհաննիսյան, Ժամանակագրական պատմություն Ս. Երուսաղեմի, Երուսաղեմ, 1890, հ. Ա, էջ 201։

[3] Նալբանդյան, Հայերը և Եթովպիան, «Արև», 1935 թ., 15 փետր.։

[4] Б. А. Тураев, Из армяно-абиссинских сношений, էջ 2։

ասորւոց»[1]։ Հայ-հաբեշական հարաբերությունների պատմության մեջ աչքառու դեմքերից է հանդիսացել Մակաբա էկզիեն, որի եկեղեցական անունն է եղել Եվստաթեոս։ Նա համարվում է Հաբեշստանի մեծ լուսավորիչը և բարեփոխիչը։ Հայ մատենագիրներից ոմանք թյուրիմացաբար նրան հայկական ծագում են վերագրել[2]։ Իրականում, ինչպես պարզվում է պատմական աղբյուրների մանրակրկիտ ուսումնասիրությունից, նա բնիկ հաբեշ է եղել, բայց իր կրթությունը ստացել է Հաբեշստանի «հայ կղզում»։

Եվստաթեոսը որպես իր ժամանակի լուսամիտ մարդկանցից մեկը, հանդես է եկել տեղի տգետ և խավարամիտ եկեղեցականների դեմ, հալածվել է նրանց կողմից և հարկադրված է եղել իր աշակերտների հետ թողնել հայրենի երկիրը և 1344 թվականին Կիլիկյան Հայաստանում[3]։ Այստեղ նա նին գալ ու հաստատվել Կիլիկյան Հայաստանում[3]։ Այստեղ նա հաբեշական փոքրիկ գաղթօջախ է ստեղծել և մնացել 14 տարի։

Եվստաթեոսը և իր աշակերտներն այստեղ սովորել են հայերեն լեզուն և ուսումնասիրել հայ մատենագրությունը։ Եվստաթեոսի ահա այս դպրոցն է, որ նրա մահվանից հետո տեղափոխվել է Հաբեշստան և մեծ պայքարով, Զառա-Հակոբ Նեգուսի բարեփոխություններից հետո, պաշտոնական ճանաչում գտել Հաբեշստանում։

Եվստաթեոսի խումբը, ըստ երևույթին, Հաբեշստանից Հայաստան եկող միակ խումբը չի եղել։ Հայկական վկայաբանական գրականության մեջ հիշատակություն կա երկու հաբեշ ճանապարհորդների մասին ևս, որոնք Հայաստան են եկել շրջելու 1421 թվականին, բայց անհաջողության են հանդիպել — ձերբակալվել են Խիզանի մահմեդական ամիրայի կողմից և դատապարտվել մահվան։ Հայերը սպանված հաբեշների դիակները թաղել են պատվով և նրանց անունները մտցրել հայ նահատակների շարքը[4]։ Հայ մատենագրության մեջ տեղեկություններ կան այն մասին, որ XIII դարում Կիլիկյան Հայաստանի դիվանագիտական շրջաններից փորձեր են արվել քաղաքական հարաբերությունների մեջ մտնե-

[1] Մեսրոբ Թաղիադյան, Պատմություն հին Հնդկաստանի, գիրք 3-րդ, գլ 7-րդ (Հմմտ. Դ. եպ. Փոլադյանի Ուղեգրությունը, «Զարթոնք», 1960 թ., 15-ը մայիսի)։

[2] Ա. Ալպոյաճյան, Հայ եպիսկոպոսի մը առաքելությունը ի Հապեշիստան XVII դարու, Գահիրե, 1946։

[3] Հ. Թուրշյան, Հաբեշ կրոնական գործիչ Ս. Եվստաթեոսը և հայ եկեղեցին (տե՛ս «Էջմիածին», 1956 թ., № 4—5, էջ 97—99)։

[4] Հ. Մանանդյան և Հ. Աճառյան, Հայոց նոր վկաներ, էջ 244։

լու Հաբեշստանի հետ և մասնակից դարձնելու նրան Խաչակրաց արշավանքներին։ Մեզ է հասել Կիլիկիայի Հեթում իշխանի՝ Կոռիկոսի տիրոջ, նամակը ուղղված հռոմեական պապին, որով նա խորհուրդ է տալիս նամակ գրել հաբեշական թագավորին և հորդորել նրան մասնակցելու Խաչակրաց արշավանքներին։ Ըստ որում, նա պապին խորհուրդ է տվել նաև նշված նամակը ուղարկել Կիլիկիայի հայոց թագավորին՝ հաբեշական լեզվով թարգմանելու համար և նոր ուղարկել Հաբեշստան[1]։ Կիլիկիայում, ինչպես երևում է, եղել են հաբեշերեն լավ գիտցողներ, հավանական է հաբեշ այն զինվորականներից, որոնք ծառայում էին Կիլիկիայի հայոց բանակում։

Հաբեշական արքունիքը բացառիկ վստահություն է ցուցաբերել իր մոտ ծառայող հայերի նկատմամբ, որոնց առաջ է քաշել բարձր պաշտոններ։ Այդպիսի հայ անձնավորություններից է հանդիսացել Մատթևոս անունով մի դիվանագետ հոգևորական, որը Հաբեշստանի ծանր օրերին, հաբեշական Հեղինե թագուհու կողմից 1513 թվականին դեսպան է ուղարկվել պորտուգալական էմմանվել թագավորի մոտ[2]։ Դեսպանության ուղարկման պատճառը հետևյալն է եղել. Հաբեշստանի ցեղապետներից մեկը՝ Ահմեդ Մուհամեդ Ղռանը, արաբական և հարևան մահմեդական այլ ժողովուրդների աջակցությամբ, ընդհարվել է Հաբեշստանի Լեբնա-Դինգել թագավորի հետ, հաղթել նրան և բռնի մահմեդականություն տարածել Հաբեշստանում։ Նա քանդել է քրիստոնեական տաճարները և նրանց փոխարեն մզկիթներ հիմնել։ 1527 թվականի այս ավերումների ժամանակ, ի դեպ, քար ու քանդ է արվել նաև «Հայ կղզու» Ս. Ստեփանոս եկեղեցին, որը կառուցված է եղել հայ ճարտարապետական ձեղեցիկ ոճով։ Լեբնա-Դինգել թագավորը իրեն հավատարիմ մարդկանց հետ ապաստանել է անմատչելի լեռներում, ուր և նա մահացել է։ Եվ ահա նրա այրին՝ Հեղինե թագուհին, հավատարիմ հայ մարդկանցից Մատթևոսին ուղարկում է պորտուգալական էմմանվել թագավորի մոտ և օգնություն խնդրում։

Ակադ. Տուրաևը հայ-հաբեշական հարաբերությունների կա-

[1] Ղ. Ալիշան, Սիսական, էջ 471։

[2] Հաբեշահայ այս դեսպանի հաղորդած տեղեկությունների հիման վրա գրված է Դամիան Գեոցի «Ավետիս հայր թագավորին՝ Հովհաննես երեցի գտնվելու մասին» խորագրով աշխատությունը, որը փաստորեն հաբեշների մասին եվրոպական լեզվով գրված առաջին աշխատությունն է, լույս է տեսել Լիսաբոնում 1531 թվականին պորտուգալերեն լեզվով։

պակցությամբ նշելով այս փաստը, գտնում է, որ Մատթևոսն «առաջին եվրոպա՝ եկող հաբեշական դեսպանն է հանդիսացել»[1]։

XVII դարից մեզ հայտնի են տեղեկություններ հաբեշական արքունիքից նշանակված երկու այլ հայ դեսպաններ։ Նրանցից մեկը՝ Մուրադ Հալեպցին, հանդիսացել է Հնդկաստանի դեսպանը և հաբեշական Ծասուս թագավորի անձնական առևտրական ներկայացուցիչը։ Իսկ մյուսը՝ դարձյալ Մուրադ անունով, նշանակված է եղել դեսպան Ֆրանսիայում Լուի XIV մոտ։

Մինչև XVII դարը հաբեշները համեմատաբար բարյացակամ դիրք են ունեցել եվրոպացիների նկատմամբ որպես քրիստոնյա ժողովրդի, անհրաժեշտ դեպքում դիմել են անգամ նրանց օգնությանը, սակայն երբ պորտուգալացիները օգնության պատրվակի տակ մտնելով Հաբեշստան, փորձել են տիրել երկրին և այն վերածել գաղութի, հաբեշները դուրս են արել երկրից բոլոր եվրոպացիներին և արգելել նրանց մուտքը Հաբեշստան։ XVII—XVIII դարերում սպիտակամորթ ժողովուրդներից Հաբեշստան մտնելու իրավունք են ունեցել միայն հայերը և հույները[2]։ Այդ ժամանակներում Հաբեշստան գնացող գրեթե բոլոր եվրոպացիները հայկական կամ հունական հագուստ են հագել և ձևացրել իրենց հայ կամ հույն։ Ղ. Ալիշանը նման կեղծված հայերից մատնացույց է արել հիսուսյան կաթոլիկ ճանապարհորդներ Մելքոն Սիլվոսին և Պետրոս Պայիզին[3]։ XVII դարում Հաբեշստան ճանապարհորդած ֆրանսիացի մի բժիշկ՝ Ֆրանսուա Բեռն, իր ուղեգրության մեջ պատմում է, որ ճանապարհորդությունը սկսելուց առաջ իր ծանոթները խորհուրդ տվեցին իրեն հայ կամ հույն ձևանալ։ Նա լսեց ծանոթների խորհուրդը և դա իրեն փրկել է իր ճանապարհորդության ժամանակ վտանգներից. «Հիրավի,— գրում է նա,— ինձ հայ կամ հույն ձևացնելով, մեծ վտանգի չենթարկվեցի[4]»։ Հաբեշների՝ հայերի նկատմամբ ցուցաբերած այս բարյացակամ վերաբերմունքը հաշվի առնելով, եվրոպացիները ևս աշխատել են հաբեշների հետ ունեցած դիվանագիտական հարաբերությունների ժամանակ օգտագործել հայերին։ Հայտնի է, օրինակ, որ XVII դարում ֆրանսիացիները Հաբեշստանի հետ դիվանագիտական

[1] Б. А. Тураев, Из армяно-абиссинских сношений, էջ 3։

[2] Հ. Քյուրդյանի «Հայերն Աֆրիկայի մեջ ըստ հին օտար աղբյուրների» աշխատությունը։

[3] Ղ. Ալիշան, Սիսական, էջ 471։

[4] Бернье Франсуа, История последних политических событий и переворотов в государстве Великого Могола, М.—Л., 1936, էջ 55—56։

հարաբերություններ ստեղծելու և դեսպաններ փոխանակելու նպատակով Հաբեշստան են ուղարկել Կահիրեի ֆրանսիական դեսպանատան հայ աշխատակից Եղիա Ենոքին։ Սա գնացել է Հաբեշստան և աշխատել կատարելու իր ստանձած պատասխանատու հանձնարարությունը[1]։

1678 թվականին քաղաքական պատասխանատու միսիայով Փարիզից Հաբեշստան է մեկնել Հովհաննես եպիսկոպոս Աղթամարցին, որը նախկինում վարել է Պոլսի հայոց պատրիարքի և Աղթամարի կաթողիկոսի բարձր պաշտոնները։ Ենթադրվում է, որ նա Հաբեշստան է գնացել հորդորելու հաբեշական արքունիքին՝ միանալու Եվրոպայում ստեղծված հակաթուրքական կոալիցիային։ Հովհաննես Աղթամարցին երկու տարի մնացել է Հաբեշստանում և օգտվելով հաբեշների ցույց տված սիրալիր վերաբերմունքից, բավականին շրջագայել է երկրում և վերադարձին գրել իր նշանավոր «Պատմութիւն Հապաշըստանայ փնալոյ և գալոյ ճանապարհին»։ Հայ ճանապարհորդի այս ուղեգրությունը բացառիկ արժեք ունեցող սկզբնաղբյուր է հանդիսանում XVII դարի Հաբեշստանի պատմության համար։ Այնտեղ կան արժեքավոր նյութեր հաբեշ ժողովրդի կենցաղի և սովորությունների, պետական կառուցվածքի, ճանապարհի վրա գտնված բնակելի կարևոր վայրերի մասին և այլն։ Հովհաննես Աղթամարցին առաջին հեղինակն է, որ կարողացել է պարզել՝ թե որտեղի՞ց է սկիզբ առնում Նեղոս գետի Կապույտ կոչվող վտակը և գրել նրա մասին միջնադարյան մատենագրության մեջ քաղաքացիություն ունեցող առասպելները։ Հովհաննես Աղթամարցու այս ուղեգրությունը հրատարակել է հայագետ Ա. Ալպոյաճյանը[2], իսկ ռուսերենը՝ ակադ. Ն. Մառի թարգմանությամբ, հրատարակել Տիրայր եպիսկոպոսը «Христианский Восток»-ի մեջ[3]։ XVII—XVIII դարերում առանձնաշնորհյալ վիճակի մեջ են գտնվել հայ վաճառականները[4]։ XVII—XVIII դարերում Հաբեշստանի արքունիքում պետական բարձր պաշտոններում են գտնվել մի շարք հայեր։ Հաբեշական արքունիքի հայերի նկատմամբ ունեցած վստահության մասին

---

[1] Брнье Франсуа, История последних политических событий, էջ 183։

[2] Ա. Ալպոյաճյան, Հայ եպիսկոպոսի մը առաքելությունը ի Հապէշիստան XVII դ., Գահիրե, 1946։

[3] «Христианский Восток», 1914, II, էջ 6—10։

[4] Գ. Ագոնց, Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի, 1802, Վենետիկ, էջ 527։

պատկերացում ունենալու համար, բավական է մատնացույց անել այն փաստը, որ XVIII դարի 60—70-ական թվականներին պետական գանձապահությունը հանձնված է եղել Սեֆել անունով արաբկիրցի մի հայի, իսկ 1762 թվականին նրա մահվանից հետո, այդ պաշտոնը հանձնարարվում է Հովհաննես Թովմաչյանին, իսկ սրանից հետո՝ նրա որդի Պողոսին[1]։

Տեղեկություններ կան Հաբեշստանում գտնվող հայ արհեստավորների մասին։ XVII դարում հաբեշական արքունիքում աշխատելիս է եղել վառոդագործ մի հայ մասնագետ, որը հաբեշներին սովորեցրել է վառոդ պատրաստելու արհեստը[2]։

Կցկտուր, բայց ուշագրավ փաստեր կան հայ-հաբեշական գրական-կուլտուրական հարաբերությունների մասին։ Հայերենից հաբեշերեն են թարգմանվել Գրիգոր Լուսավորչի վարքը և Լուսավորչին վերագրվող մի շարք ճառեր[3]։ Հաբեշները, որպես դավանակից ժողովուրդ, Լուսավորչի տոնը տարեկան նշում են 3 անգամ։ Դ. եպ. Փոլադյանին, Հաբեշստանում իր կատարած ճանապարհորդության ժամանակ, Դեբրա Բեզիի վանքի վանականները ցույց են տվել Տրդատ թագավորի վարքը, որն անշուշտ թարգմանվել է հայերենից[4]։

Հայ աղբյուրագետներից ոմանք արտակարգ նմանություն են տեսնում հայ և հաբեշ գրերի միջև, որը ցույց է տալիս, որ հաբեշական գիր ստեղծողը ծանոթ է եղել հայկական գրության սիստեմի հետ և աշխատել է հաբեշների համար գրեր ստեղծել այդ սկզբունքով։ Հայկական տոմարական գրականության մեջ, Արևելքի մի շարք ժողովուրդների տոմարների շարքում, հատուկ ուշադրություն է դարձվում հաբեշական տոմարի վրա. բերում են հաբեշական ամիսների ցանկը և նրանք համեմատության մեջ դնում հայկական շարժական և հռոմեական անշարժ տոմարների հետ և այլն[5]։

Հայ-հաբեշական գրական կապերի ստեղծման և զարգացման գործում առանձնապես խոշոր գործ են կատարել «Հայ կղզին»՝ Հաբեշստանում և հայկական վանական գաղթօջախը՝ Երուսաղեմում։ Այսպես, հայտնի է, որ «Հայ կղզու» վանականներից մեկը

---

[1] Ղ. Ալիշան, Սիսուան, էջ 471։

[2] Б. А. Тураев, Из армяно-абиссинских сношений, էջ 4։

[3] Նույն տեղը, էջ 2։

[4] Դ. եպ. Փոլադյանի ուղեգրությունը (տե՛ս «Զարթոնք», 1960 թ., 14—ը մայիսի)։

[5] Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, էջ 73 և այլք։

Գևորգ վարդապետը, հաբեշերեն մի ներբող ունի գրած, որը Թուրաևի գնահատմամբ «Գեեզ (հաբեշական գրական հին լեզվի) ամենափայլուն գոհարը կարելի է համարել»[1]։ Հաբեշերեն է թարգմանվել Պետրոս անունով մի հայ կրոնավորի աշխատությունը արաբերեն բնագրի միջոցով[2] և այլն։

Հայաստանի պետական մատենադարանի ձեռագրական ժողովածուում հայտնի է մի ձեռագիր, որը պարունակում է հաբեշերենից հայերեն թարգմանված «Պատմութիւն Հապաշից վարուց» խորագրով կրոնա-բարոյախոսական բովանդակությամբ մի աշխատություն՝ ընդօրինակված 1698 թվականին Դավիթ գրչի կողմից[3]։ Այս աշխատությունը, մեր կարծիքով, պետք է թարգմանված լինի Երուսաղեմում։

Ակադ. Բ. Թուրաևը, իր «Հայ-հաբեշական հարաբերություններից» խորագրով վերև հիշված աշխատության մեջ, թվարկելով պատմական այն փաստերը, որոնք հաստատում են հայերի մատուցած ծառայությունները Հաբեշստանում, հանգում է հետևյալ եզրակացության. «Այսպիսով, հայերը դարեր շարունակ Հաբեշստանում հանդես են եկել իբրև աշխարհիկ և հոգևոր գործունեության ամենատարբեր բնագավառների ներկայացուցիչներ»[4]։

---

[1] Տե՛ս Б. А. Тураев, Эфиопские рукописи в Петербурге աշխատությունը։

[2] Տե՛ս Հակոբ-Գրիգորի հոդվածը՝ տպված «Բյուզանդիա» խմորատիպ շաբաթաթերթում, էջ 10։

[3] ՀՊՄ, ձեռ. № 2002, թ. 66ա—91ա։

[4] Б. А. Тураев, Из истории армяно-абиссинских сношений, էջ 5։

ՂՐԻՄԻ ՀԱՅ ԳԱՂԹԱՎԱՅՐԵՐԸ

Սկզբնաղբյուրները և գրականությունը: Ղրիմի կամ Տավրիկայի թերակղզին հանդիսացել է այն վայրերից մեկը, ուր տարաբեր հայությունը միջին դարերում ստվար գաղթօջախներ է ստեղծել, ապրել է հասարակական եռուն կյանքով և անընդմեջ պահպանել իր գոյությունն ավելի քան յոթ դար շարունակ։ Ընկնելով քաղաքական անբարենպաստ պայմանների մեջ, նա մարել է նոր ժամանակներում՝ թողնելով ճարտարապետական հոյակապ կոթողներ, բազմաթիվ մամուռ հայագիր հուշարձաններ և խոշոր մատենագրական ժառանգություն։

Ղրիմի գաղթօջախները պատկանում են քիչ բացառություն կազմող հայկական այն գաղթավայրերի թվին, որոնք ունեն իրենց պատմիչները։ XVII դարում մեզ հայտնի են երկու պատմիչներ, որոնք գրի են առել Ղրիմի հայերի պատմությունը։ Նրանցից մեկը՝ Դավիթ Ղրիմեցին է, որը ձեռքի տակ ունեցած գրավոր աղբյուրների հիման վրա կազմել է Ղրիմի հայ գաղթավայրի ամբողջական պատմությունը՝ վաղ շրջանից մինչև իր ժամանակները՝ զետեղելով այն ձեռագիր «Հայսմավուրք»-ի հավելվածում իբրև հիշատակարան[1]։ Մյուսը՝ ղրիմահայ նշանավոր տաղերգու Մարտի-

---

[1] Այս ձեռագիրը անցյալում գտնվել է Նոր Նախիջևանի Նեսվետա գյուղում և բանասիրության մեջ հայտնի է «Նեսվետայի ձեռագիր» անունով։ Բաժանելով ղրիմահայության ճակատագիրը, ձեռագիրը երկար թափառումների մեջ է գտնվել, իսկ վերջում բերվել է Հայաստան և այժմ գտնվում է Մատենադարանում (գրանցված է 7442 թվահամարի տակ)։ Դավիթ Ղրիմեցու «Պատմութիւն»-ը առաջին անգամ հրատարակել է Մ. Բժշկյանը 1720 թվականին իր «Ճանապարհորդութեան» մեջ (էջ 335—342), իսկ հետագայում այն վերահրատարակել են ուրիշները։

րոս Ղրիմեցին է, որը 1672 թվականին գրել է Ղրիմի հայերի չափածո պատմությունը՝ «Պատմութիւն Ղրիմայ յերկրի» վերնագրով։ Ղրիմեցին իր «Պատմութիւն»-ը սկսել է հնագույն շրջանից՝ Անի քաղաքի բնակչության գաղթից դեպի Ասխարա և Ղրիմ ու հասցրել մինչև XVII դարը[1]։

XVII դարի ղրիմահայ մի այլ հեղինակ՝ Խաչատուր Կաֆայեցին, կազմել է իր ժամանակաշրջանի քաղաքական իրադարձությունների «Տարեգրություն»-ը, որը բացառիկ արժեք ներկայացնող սկզբնաղբյուր է Ղրիմի թերակղզու պատմության համար։ Հեղինակը ժամանակակից, ականատես և շրջահայաց անձնավորություն է։ Կաֆայեցու այս տարեգրության մեջ կան որոշ տեղեկություններ նաև տեղի հայ գաղթօջախների մասին[2]։

Ղրիմի հայ գաղթավայրի վերաբերյալ արժեքավոր սկզբնաղբյուրներ են Ղրիմի թերակղզու հայկական վիմագիր արձանագրությունները և Ղրիմի հայ գաղթօջախներում գրված հայկական ձեռագրերի հիշատակարաններն ու հիշատակագրությունները, որոնք հավաքել և հրատարակել են Մ. Բժշկյանը[3], Գ. Եպ. Այվազովսկին[4], պրոֆ. Քուչակ-Հովհաննիսյանը[5] և Լ. Խաչիկյանը[6]։ Այս հրատարակությունները, դժբախտաբար, բավականաչափ թերի են. հարյուրավոր վիմագիր արձանագրությունների ձեռագիր հիշատակարաններ կան, որոնք վրիպել են հրատարակիչների ուշադրությունից։

Մխիթարական վիճակում չէ Ղրիմի հայ գաղթավայրի պատմության ուսումնասիրությունը։ Չնայած այս թեմային նվիրված

[1] Մարտիրոս Ղրիմեցու «Պատմութիւն Ղրիմու երկրի» աշխատության ձեռագիրը գտնվում է Օքսֆորդի Բոդլեյան մատենադարանում։ Հրատարակել է բանասիրական գիտությունների թեկնածու Ա. Մարտիրոսյանն իր «Մարտիրոս Ղրիմեցի» աշխատության մեջ 1958 թվականին (էջ 142—152)։

[2] Խաչատուր Կաֆայեցու «Տարեգրության» հայտնաբերման մասին մենք առաջին անգամ հաղորդում ենք տպագրել «Էջմիածին» ամսագրի 1944 թվականի համարներում։ Մեզանից հետո, 1951 թվականին, այդ տարեգրությունը հրատարակել է պատմ. գիտ. թեկնածու Վ. Հակոբյանը իր «Մանր ժամանակագրություններ»-ի I հատորում (էջ 205—336)։

[3] Մ. Բժշկեան, Ճանապարհորդութիւն ի Լեհաստան, Վենետիկ, 1839։

[4] Г. Айвазовский, Армянские надписи, находящихся на юге России (Տե՛ս «Записки Одесского об-ва истории и древностей», т. VI, 1867, էջ 323—333։ (Այսուհետև մատնացույց ենք անելու կրճատ ЗОО ИД ձևով)։

[5] Х. Кучак-Иоаннисов, Старинные армянские надписи и рукописи в пределах юго-запада России и в Крыму (Տե՛ս «Труды Вост. комиссии имп. Московского археологического об-ва», т. II, III, 1903):

[6] Լ. Խաչիկյանի կազմած հիշատակարանների մասին խոսել ենք առկում։

բավականին թվով աշխատություններ են հրատարակվել և այդ հրատարակությունները փաստական հարուստ նյութ են պարունակում, սակայն գիտական առումով նրանք բարձրորակ ուսումնասիրություններ չեն։

Առաջին հեղինակը, որը ղրիմահայ գաղթօջախների վրա Ղրիմի ընդհանուր պատմության կապակցությամբ կանգ է առել, հանդիսացել է ռուս գիտնական Սեստրենցևիչ-Բոգուշը։ Նա առանձնակի չի ուսումնասիրել ղրիմահայ գաղթօջախների պատմությունը, այլ իր հրապարակած տեղեկությունները պատրաստի վերցրել է Հովսեփ Եպիսկ. Արղությանի մի զեկուցագրից, որը վերջինս 1789 թվականին ներկայացրել է ցարական արքունիքին[1]։ Հետագայում Սեստրենցևիչ-Բոգուշից օգտվել և նրան կրկնել են ռուսական մի շարք այլ պատմաբաններ։

Ղրիմի հայ գաղթավայրերին նվիրված պատմական և լավագույն փաստերով հարուստ ուսումնասիրություններից է Մինաս Բժշկյանի «Ճանապարհորդութիւն ի Լեհաստան» խորագրով աշխատությունը, որը լույս է տեսել Վենետիկում 1839 թվականին։ Երկար ապրելով Ղրիմում և լավ ճանաչելով տեղի գաղթօջախները, հեղինակը պատմական արժեքավոր նյութեր է հավաքել ձեռագրերից և վիմագիր արձանագրություններից ու հրապարակել իր «Ճանապարհորդութեան» մեջ։

Ավելի ուշ լույս են տեսել Ղրիմին և ղրիմահայ գաղթավայրին նվիրված երկու այլ աշխատություն ևս՝ դրանցից առաջինը Հ. Տեր-Աբրահամյանի «Պատմութիւն Խրիմա», որը հրատարակվել է Թեոդոսիայում 1865 թվականին, երկրորդը՝ Ք. Քուշներյանի «Պատմութիւն գաղթականութեան Խրիմա հայոց»՝ հրատարակված 1895 թ. Վենետիկում։ Նշված երկու հեղինակներն էլ հիմնականում օգտվել են Բժշկյանից և պատմագիտական առանձին արժեք չեն ներկայացնում։

Մատնացույց արված աշխատություններից բացի, առանձին ժողովածուներում ու պարբերականներում լույս են տեսել մի շարք հոդվածներ, որոնք նվիրված են Ղրիմի հայ գաղթօջախների պատմության մասնակի հարցերին, որոնց մենք կանդրադառնանք ու ցուցումներ կանենք համապատասխան տեղերում։ Նշված հոդվածներից՝ պարունակած նյութի հարստությամբ և հարցադրման գիտականությամբ, ուշագրավ են Հայկ. ՍՍՌ գիտությունների ա-

[1] Сестренцевич-Богуш, История о Таврике, СПБ, 1806, էջ 176—178։

վադեմիայի գիտական աշխատող Վ. Միքայելյանի[1] և բանասեր Խ. Փորքեշյանի ուսումնասիրությունները[2]։

Հայկական գաղթօջախների հիմնումը Ղրիմում։

Հայերը Ղրիմի թերակղզին ճանաչել և ելուզմուտ են ունեցել այնտեղ շատ վաղուց։ Հայտնի է, որ բյուզանդական գահի հայազգի կայսրները ո՛չ միայն աշխատել են իրենց շրջապատել հայ ազնվականներով ու զինվորականներով, այլ հայ զորամասեր են տեղավորել կայսրության հեռավոր այն սահմանները, որոնք վտանգավոր են համարվել կայսրության ինչպես ներքին, այնպես և արտաքին ապահովության համար։

Ղրիմում հայկական զորամասի գտնվելու մասին է վկայում Խերսոնես քաղաքի բյուզանդական մի զորամասի ապստամբության պատմությունը, որը տեղի է ունեցել 711 թվականին։ Ապըստամբները, ինչպես հայտնի է, իրենց հայ զորահրամանատարին՝ Վարդանին, կայսր են հռչակել և խազարների օգնությամբ գահ բարձրացրել «Փիլիպպիկոս» մականունով[3]։ Վարդանը, անշուշտ, միակ հայ զինվորականը չէր Ղրիմում։

Որ Ղրիմում հայ զորամասեր են գտնվել, այդ երևում է Մ. Ուռհայեցու մի տեղեկությունից, որի համաձայն, Կոստանդին կայսրը (Կոմանոս Տուկծինը) 1065 թվականին զորաժողով է կատարել «զօրս Հայոց աշխարհին» և Վասիլի գլխավորությամբ ուղարկել կռվելու ուղուրների դեմ Թանահիս (Դոն) գետի մոտերքում[4]։

Հայ զորամասերի հետքերով դեպի Ղրիմ գնացել են նաև հայ առևտրականները։ Ղրիմի թերակղզին շահաբեր մի վայր է հանդիսացել տարանցիկ առևտրի համար, որի մեջ, ինչպես երևում է, փոքր դեր չեն ունեցել նաև հայերը։

Առաջին հայ գաղթականները Ղրիմ են եկել և հաստատվել երեք տարբեր ուղիներով։ Հնագույն հայ գաղթականությունը Ղրիմ է եկել Բյուզանդիայի հայ գաղթօջախներից՝ Բալանների վրայով։ Հայ գաղթականների հաջորդ խմբերը եկել են Արևմտյան Հայաստանից՝ Տրապիզոնի և Սինոպի ճանապարհով։ Եվ, վերջապես, Ղրիմը հայկական զանգվածային խոշոր գաղթականություն է ընդունել Մերձվոլգյան երկրամասից 1330 թվականին։

Ղրիմի հայ գաղթականության հնագույն օջախներից է հանդիսացել Սուդակ քաղաքը, որը պատմության մեջ հայտնի է նաև Սուղդա, Սուրոժ և Սուղդայա անուններով։ XII դարում սլավոնական մի վարքագրության մեջ հայերը հիշված են իբրև Սուդակի հիմնական բնակիչներ[1]։ Հայերը Սուդանում հիշվում են նաև XIII դարի արաբ մի հեղինակի՝ Իբն-ալ-Թիբինի մոտ[2]։

Սուդակում գրված հունական մի ձեռագիր «Հայսմավուրք»-ի («Սինակսարի») մեջ արձանագրված մի հետաքրքիր հիշատակություն խոսում է այն մասին, որ 1292 թվականին տեղի հայկական համայնքը զատիկը հույների հետ միասին չեն տոնել ապրիլի 6-ին, այլ տեղափոխել են հաջորդ կիրակի՝ ապրիլի 13-ին[3]։

Նշված հիշատակագրությունը ծռազատիկին է վերաբերում։ 95 տարին մեկ անգամ, երբ քրիստոնեական զատիկի օրը համընկնում է հրեական զատիկի օրվան, հայերը, ի տարբերություն մյուս դավանանքներին պատկանող քրիստոնյաների, այդ օրը զատիկ չեն անում, այլ տեղափոխում են հաջորդ կիրակի։ Մեր կատարած տոմարագիտական հաշվումներից պարզվեց, որ 1292 թվականին իրոք ծռազատիկ է եղել, հետևապես ճիշտ է հունական «Հայսմավուրք»-ի տեղեկությունը։

Հունական այդ «Հայսմավուրք»-ի հաղորդած հիշատակությունից պարզ երևում է, որ XIII դարի վերջերում Սուդակում բավականին թվով հայեր են ապրել, այլապես հույն հեղինակը անհրաժեշտ չէր համարի հայ համայնքի հետ կապված ծռազատկի փաստը հիշել որպես տեղի հասարակական աչքի ընկնող երևույթներից մեկը։

Վ. Ռուբրուկն իր «Ուղեգրության» մեջ հայտնում է, որ ինքը 1253 թվականին Սուդակում գտնված ժամանակ լավ ընդունելություն է գտել տեղի հայ համայնքի եպիսկոպոսի կողմից[4]։ Նրա հաղորդած տեղեկությունից երևում է, որ Սուդակում հայկական եկեղեցի է եղել։ Հայկական եկեղեցու և հայ եպիսկոպոսի հիշատակությունը դարձյալ վկայում են այն մասին, որ Սուդակում մեծաթիվ հայ բնակչություն է ապրել։

---

[1] Վ. Ա. Միքայելյան, Երբ և ինչպես է սկզբնավորվել Ղրիմի հայ գաղութը (տե՛ս Հայկ. ՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր», 1962 թ., № 3, էջ 37—52)։

[2] Խ. Ա. Փորքեշյան, Երբ է կատարվել հայերի մուտքը Ղրիմ (տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես» 1962 թ., № 2, էջ 105—117)։

[3] «Հանդէս, ամսօրեայ», 1895, էջ 204։

[4] Մատթէոս Ուռհայեցի, ժամանակագրութիւն, էջ 151—152։

[1] Ф. Брун, Черноморье, ч. II, Одесса, 1880, էջ 129։

[2] Տե՛ս «Византийский временник», т. XXV:

[3] Архимандрит Антоний, Заметки XII—XIII вв. (տե՛ս ЗООИД, кн. V, ч. II, էջ 603)։

[4] В. Рубрук, Путешествие в восточные страны, СПБ, 1911, էջ 66—67։

Սուդակում գտնվում են XIII—XIV դարերի բազմաթիվ գերեզմանաքարերի հունարեն արձանագրություններ, որոնք վերծանել և հրատարակել է հայտնի աղբյուրագետ Վ. Յուրգևիչը։ Մեր ուսումնասիրությունից պարզվեց, որ տապանագրերում հիշված անձնավորությունների զգալի մասը հայեր են եղել։ Այդ արձանագրություններում հիշվում են, օրինակ՝ Պետրոս, որդի Խաչատուրի, Գրիգոր, որդի Ստեփանոսի, Օհան, որդի Հովհաննեսի, Դավիթ որդի Սմբատի և այլ հայեր[1]։ Կան արձանագրություններ, որոնց տապանագրում հիշվում է անգամ մահացածի ազգային ծագումը։ Մահարձաններից մեկի վրա արձանագրված է. «Նույն օրը մահացավ Երնիչան, Սմբատ հալի կինը. 6814» (1306 թվականին)։

Մատնացույց արված այս փաստերը հիմք են տվել Ղրիմի միջնադարյան պատմության լավագիտակ պատմաբան Ֆ. Բրունին անգամ եզրակացնելու, որ XIII—XIV դարերում Սուդակի բնակչության զգալի մասը հայեր են եղել[2]։

Ղրիմահայ հնագույն խոշոր գաղթօջախներից է հանդիսացել Կաֆան (Թեոդոսիան)։ Ճենովացի վաճառականների պաշտոնական վավերագրերում տեղեկություններ են արձանագրված այն մասին, որ 1316 թվականին Կաֆայում գոյություն է ունեցել հայկական երեք եկեղեցի, որոնցից մեկը գտնվել է խարխուլ վիճակում։ Այդ թվականին հայկական հին եկեղեցու գոյությունն ինքնին ապացույց է հայերի այդ քաղաքում վաղուց հաստատվելուն, գուցե ավելի վաղ՝ քան ճենովացիները։

Վիեննայի Մխիթարյանների մատենադարանի սեփականություն է մի «Ճառընտիր», որը գրված է Կաֆայում 1305 թվականին։ Ձեռագրի հիշատակագիրը հայտնում է, որ Կաֆայում, Ավետիք անունով մի վարդապետի նախաձեռնությամբ, կառուցվել է քաղաքի Ս. Երրորդության եկեղեցին և Աստվածածնի «Գամճակ» անունով վանքի գմբեթը[3]։ Նշված շինությունների ավարտումից հետո բարերարը երկու ձեռագիր է նվիրել, մեկը՝ «ի Քամճակն և զմիւսն՝ ի Կաֆային եկեղեցին՝ ի սուրբ Երրորդութիւն»[4]։ Մերձվոլգյան երկրամասից հայերի Ղրիմ գալուց առաջ պետք է որ բավական թվով հայեր ապրեին, որ հայկական երկու եկեղեցու անհրաժեշտությունը լիներ այնտեղ։

[1] В. Юргевич, Заметки XII—XV вв. (տե՛ս ЗООИД, т. V, ч. II, էջ 603—610)։

[2] Ф. Брун, Черноморье, ч. II, էջ 137։

[3] Հ. Տաշյան, Վիեննայի ձեռագրաց ցուցակ, էջ 885։

[4] Բ. Սարգիսյան, Վենետիկի ձեռ. ցուցակ, հ. II, էջ 511—512։

Ճենովական աղբյուրից հայտնի է, որ Կաֆայի հայ կաթոլիկները XIV դարում ունեցել են թեմ՝ թեմական առաջնորդ եպիսկոպոսով։ Թեմի առաջնորդարանի իրավասության տակ է գտնվել քաղաքի ջրմուղը, որը ջուր է մատակարարել ամբողջ քաղաքին։ Կաֆա քաղաքի ճենովացիների 1290, 1313, 1316, 1414 և 1449 թվականներին կազմած կանոնադրությունների մեջ հատուկ կետ է մտցված հայոց առաջնորդարանի ջրմուղի անձեռնմխելիության մասին[1]։

Կաֆայում պահպանվել են հայկական մի քանի արձանագրություններ, որոնք դարձյալ գրված են հայկական գաղթականության Մերձվոլգյան երկրներից գալուց առաջ[2]։

Ղրիմի հայ գաղթավայրերի սկզբնավորությունը որոշելու հարցում մեծ վիճաբանության տեղիք է տվել ներկայումս Թեոդոսիայի թանգարանում պահվող մի տապանաքար, որը ենթադրվում էր, որ գրված պետք է լինի 1027 թվականին և Կաֆա բերված Անիից՝ գաղթականների կողմից։ «Անիի քար»-ի առեղծվածի հաջող լուծումը տվել է Պ. Ի. Բաբկովը[3]։ Նա առաջարկեց արձանագրության մեջ նշված ՆՀԶ թվականը (476+551=1027) կարդալ ՉՀԶ (776+551=1327)։ (Աղբյուրագիտական այդ առաջարկը Բաբկովը կատարել է ակադ. Հ. Ա. Օրբելու ցուցումով ու նրա օժանդակությամբ)։

Մեր ձեռքի տակ ունենք նշված տապանաքարի լուսանկարը։ Արձանագրության հայկական թվականի ենթադրվող «Ն» տառի ներքևի մասը կոտրված է, և այն, ավելի շուտ, բոլորագիր «Չ» կարելի է կարդալ, քան «Ն»։ Բաբկովի առաջարկած ուղղումը, մեր կարծիքով, ճիշտ է։ Սակայն Բաբկովը կատարելով այս ուղղումը, ընկել է մի այլ ծայրահեղության մեջ. նա առաջարկել է ընդհանրապես վերանայել ղրիմահայ գաղթօջախների հաստատման ժամանակը՝ այն ավելի ուշ ժամանակաշրջան տեղափոխելու միտումով՝ անտեսելով, որ Ղրիմի հայ գաղթօջախների սկզբնավորության որոշումը կապված չէ միայն նշված շիրիմաքարի հետ։

XIV դարում հայկական գաղթօջախ է գոյություն ունեցել Ազախ (պատմական Թանա, ներկայիս՝ Ազով) քաղաքում։ Այդ

[1] Устав генуэзских колоний 1449 г., Յուրգևիչի թարգմանությամբ (տե՛ս ЗООИД, кн. V, 90-րդ ծանոթագրությունը)։

[2] Г. Айвазовский, Армянские надписи, находящихся на юге России (տե՛ս ЗООИД, 1867, т. VI, էջ 325):

[3] Տե՛ս «Изв. гос. географ. об-ова», 1939, т. 71, вып. 7.

երևում է Տերտեր Երևանցու 1341 թվականին ընդօրինակած մի ձեռագրի հիշատակարանից։ Նա գրում է.

«Այս մոլորեալս և անպիտան
Երկրէն եկի այն Հայաստան,
Ի քաղաքէն այն պատուական
Որ իր անունն էր Երևան...
Ի ծովս անցայ այս սահման
Ի քաղաքն եկայ՝ ի Ֆրանկ Կաֆան,
ՅԱզախ եկի այս աննման»[1]։

Ազախ քաղաքում գտնվել է Ս. Գրիգոր Լուսավորչի անունով հայկական եկեղեցի, որին և նվիրել է Տերտեր Երևանցին իր այդ ձեռագիրը։ Մեզ հայտնի է 1341 թվականին գրված մի այլ ձեռագիր ևս, որի պատվիրատուն՝ տիկին Ավենտը, ձեռագիրը նույնպես նվիրել է Ազախի Ս. Գրիգոր Լուսավորչի եկեղեցուն[2]։ Ազախի եկեղեցին 1341 թ. իհարկե չէր կառուցվել, նա անշուշտ գոյություն է ունեցել շատ վաղուց։

1330 թվականից առաջ հայ բնակչություն է ապրել նաև հին Ղրիմում (Էսկի Ղրիմ կամ Սուրխաթ)։ Քաղաքից ոչ շատ հեռու Ս. Խաչ վանքում գտնվում է հայկական մի մահարձան 1311 թվականի արձանագրությամբ, որը կանգնեցված է եղել ի հիշատակ Խաչիք Պապաքի[3]։

Ղրիմի հայկական հնագույն գաղթօջախներից է հանդիսացել Խերսոնեսը։ X դարից տեղեկություն ունենք այն մասին, որ Ղրիմում ապրող Կալոկիր անունով մի հայ ազնվական, որպես բյուզանդական արքունիքի պաշտոնական ներկայացուցիչ, բանակցություն է վարել Կիևի իշխան Սվյատոսլավի հետ[4]։

Հնագետ Յակոբսոնը, որը պեղումներ է կատարել Խերսոնես (Կորսուն) քաղաքում, հայտնաբերած ցուցանյութերի հիման վրա եկել է այն եզրակացության, որ XI—XIII դարերում այնտեղ զգալի թվով հայ բնակչություն է ապրել։ Պեղումների ժամանակ բացված է խաչաձև մի տաճար հայերեն արձանագրությամբ։ Հնագետը հայ ճարտարապետության ազդեցությունն է տեսնում տեղական՝ Ղրիմի մի քանի հուշարձանների վրա[5]։

[1] ՀՊՄ, ձեռ. №8030, թ. 328բ։

[2] Տաշյան Վիեն. Մխ. ձեռ. ցուցակ, էջ 885։

[3] Г. Айвазовский, Армянские надписи (տես ЗООИД, т. VI, էջ 326)

[4] Ю. Кулаковский, Прошлое Тавриды, Киев, 1914, էջ 112։

[5] А. Л. Якобсон, Средневековый Херсонес, М. — Л., 1950. էջ 105, 117, 119։

Ճենովայի Ս. Գեորգ բանկի արխիվից պրոֆ. Գ. Բրատիանու հրատարակած XIII դարի վերջերին վերաբերող վավերագրերի մեջ Ղրիմի նավահանգստային քաղաքներում հաճախ են երևում հայ առևտրականներ, արհեստավորներ և նավեր բարձող բանվորներ[1]։

Վերև բերված պատմական փաստերն անվիճելի ապացուցում են, որ հայ գաղթօջախները հիմնվել են ո՛չ թե XIV դարում, այլ դրանից առաջ, ինչպես շատ ճիշտ եզրակացրել են Խ. Ա. Փորքեշյանը[2] և Վ. Ա. Միքայելյանը[3] նորագույն ուսումնասիրությունների մեջ։ Վերջերս լույս տեսած «Всемирная история»-ի հեղինակները ևս պաշտպանում են այդ կարծիքը՝ գտնելով, որ հայերը XI—XIII դարերում Ղրիմի թերակղզու հիմնական բնակիչներն են հանդիսացել[4]։

Իրավացի է ակադ. Ի. Պ. Կրիպյակևիչը, երբ խոսելով XIII դարում Լվովի առաջին հայ գաղթականության ղեկավարների (պոլովցիների) խոսելու և գրելու մասին, այդ բացատրում է հայ գաղթականների երկար ժամանակ Ղրիմում՝ ղեկավարական շրջապատում, ապրելու հանգամանքով[5]։

Սուդակում, Կաֆայում, Ազախում, Խերսոնեսում, Սուրխաթում և Ղրիմի այլ քաղաքներում հաստատված հնագույն ահա այս գաղթավայրերն են, որ հետագայում ապաստան են ծառայել և հենակետ դարձել հայկական գաղթական նոր հոսանքների համար։

XIV դարում Ղրիմ եկած զանգվածային ամենամեծ գաղթը՝ անեցիների գաղթն է հանդիսացել, որի մասին արժեքավոր սկզբնաղբյուր է հանդիսանում Նեսվետայի «Հայսմավուրք»-ի մատնացույց արված հիշատակարանը։ Ծանոթանանք այդ հիշատակարանի հետ։

Ջարմաղանի 1236 թվականին կատարած վայրագություններից հետո անեցիները թողել են իրենց հայրենի քաղաքը և գաղթել Վրաստան, այնտեղից՝ Մերձվոլգյան երկրամաս, իսկ Մերձ-

[1] Տե՛ս G. Bretianu, Actes des notaires génois de Péra et de Caffa de la fin du treiziéme siécle (1280—1290), Bucarest, 1927.

[2] Խ. Ա. Փորքեշյան, Ե՞րբ է կատարվել հայերի մուտքը Ղրիմ (տե՛ս ՊԲՀ, 1962 թ, № 2, էջ 115)։

[3] Վ. Ա. Միքայելյան, Ե՞րբ և ինչպե՞ս է սկզբնավորվել ղրիմահայ գաղութը (տե՛ս Հայկ. ՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր», 1962 թ., № 3, էջ 51)։

[4] «Всемирная история», т. III, էջ 465։

[5] И. П. Крипякевич, К вопросу о начале армянской колонии во Львове (տե՛ս «ՊԲՀ», № 1, էջ 164—165)։

վոլգյան երկրամասից՝ Ղրիմ։ «Զի մեք եմք (այսինքն՝ Ղրիմ եկած հայերը—Ա. Ա.),—գրում է հիշատակագիրը,— սերունդք Պահլաւունեանց, ի մեծ թագաւորանիստ քաղաքէն յԱնւոյ, որ է գաւառ Շիրակվանու, տանն Շարայեան, գահոյն Բագրատունեաց»[1]։ Հեղինակը վշտով է վերհիշում Ղրիմ գաղթող հայության ծննդավայր Անի քաղաքը, նրա գեղեցիկ շենքերը, հասարակական եռուն կյանքը, ժողովրդի բարեկեցիկ վիճակը և դառը կսկիծով նշում, որ Անիի այդ ամբողջ վայելչությունը ոչնչացվել է Ջարմաղանի ավերածությունների հետևանքով։ Այնուհետև նա նկարագրում է Անիի բնակչության գաղթաշարժը դեպի Վոլգայի ափերը և հաստատվելը Սարայում։

Ըստ հիշատակարանի տեղեկության, Անիի գաղթականությունը Սարայում երկար չի մնացել, որովհետև նրանց հետևից շուտով հասել են մոնղոլ նվաճողները, որոնք գրավել են Մերձվոլգյան շրջանները և նեղել հայ գաղթականներին։ Սարայի հայ բնակիչները, ստեղծված այս ծանր դրությունից դուրս գալու համար, որոշել են տեղափոխվել և բնակություն հաստատել Ղրիմի թերակղզու հարավային շրջանները։

Ղրիմի հարավային նավահանգստային քաղաքներում այդ ժամանակ տիրություն էին անում Վենետիկի և Ճենովայի առևտրական ֆակտորիաները, որոնք պայմանավորվել էին Ղրիմում տիրապետություն հաստատած մոնղոլական իշխանությունների հետ, վճարում էին սահմանված մաքսը և իշխում Սև ծովի հյուսիսային ափերի վրա։ Իտալական առևտրական այդ ֆակտորիաները, հատկապես Կաֆայում հաստատված ճենովացիները, շահագրգռված էին իրենց շրջապատել վստահելի հարևաններով։ 1316 թվականին Կաֆայի կոնսուլատը, որին ենթարկվում էին Սև ծովի ափին գտնվող ճենովական գաղութների մեծ մասը, կենտրոնական իշխաններից հրաման էր ստացել թույլ տալու հայ և հույն քրիստոնյա ժողովուրդներին բնակություն հաստատելու քաղաքի պարիսպներից դուրս գտնվող թաղամասերում[2]։

Անիի հայերը պատգամավորություն են ուղարկում Կաֆայի ճենովական կոնսուլի մոտ, բանակցություններ վարում և նրա համաձայնությունն առնելուց հետո, 1330 թվականին, զենքի ուժով բաց են անում իրենց գաղթի ճանապարհը և Սարայից տեղափոխվում Ղրիմ։

[1] ՀՊՄ, ձեռ. № 7442, թ. 380բ։

[2] Извлечения из сочинения В. Гейде, История торговли Востока в средние века (տե՛ս «Известия таврической ученой комиссии», № 52, էջ 87)։

XVII դարի տաղերգու Մարտիրոս Ղրիմեցին իր «Պատմութիւն Ղրիմայ երկրի» չափածո աշխատության մեջ գրում է.

«Եւ (անիցիք) անդ (Աղսարայում) ոչ ախորժեն մնալ սեփական,
Զզոսեալ դժնաբարու ազգաց Հոնական,
Ապա դեսպանս յղեն առ լատին իշխան,
Որ էր տէր Կաֆայու նախնի բերքին այն։

Առ որ ուխտ հաստատեն և դաշն ամրական,
Ջուեալ Աղսարայու և գան ի Կաֆայն.
Կէսք ի Ղրիմ քաղաք ախորժեալ մնան,
Սիրելով զբաղցրայօդ լեռնամերձ վայր այն»[1]։

Այսպիսով, Ղրիմի թերակղզու հարավային ափերում հայ գաղթօջախները, որոնք, ինչպես ասացինք, հիմնվել էին դեռևս XI—XIII դարերում, XIV դարում ստվարանում են մեծաթիվ նոր գաղթականությամբ։

Սարայից դեպի Ղրիմ հկող գաղթականության փոքրաթիվ մի հատվածը մնում է Ազախ քաղաքում, իսկ հիմնական մասը տեղափոխվում է Կաֆա, Սուրխաթ, Սուղդա, Խերսոնես, Կազարաթ, Ղրիմ քաղաքները և նրանց մոտիկ գյուղերն ու ավանները։ Փասատորեն Կաֆայից դեպի հյուսիս մինչև Ղարասու կամ Ղարաբազար քաղաքը ամբողջովին զբաղեցնում են հայ գաղթականները։ Որոշ թվով գաղթականներ անջատվում են մայր զանգվածից և տեղափոխվում Մոլդավիա, Ուկրաինա և Լեհաստան։

Թե ի՞նչ իրավունքներից է օգտվել Ղրիմում հաստատված հայ գաղթականությունը և ի՞նչ կոնկրետ պարտավորություններ են ունեցել նրանք ճենովացի վաճառականների և նրանց սուվերեն իշխանավոր Ոսկե Հորդայի առջև, մենք չգիտենք, բայց միջնակյալ որոշ տեղեկություններից երևում է, որ հայ գաղթականության բնակություն հաստատված հողերը համարվել են նրանց սեփականությունը. հայերին թույլ է տրվել ունենալ իրենց ներքին ինքնավարությունը, իսկ հայ խոջաները, ճենովայի վաճառականներին հավասար իրավունքով, հանդես են եկել Ղրիմի և միջազգային շուկաներում։

Հայկական ձեռագրերի հիշատակարաններից երևում է, որ Ղրիմի հայերը պարտավոր են եղել մասնակցել երկրի շինարարական աշխատանքներին և իրենց զինված ուժերով պաշտպանել

[1] Ա. Մարտիրոսյան, Մարտիրոս Ղրիմեցի, էջ 145—146։

Սուրխաթի մոտիկ բարձունքները հյուսիսային ասպատակություններից: «Ի հնումն աստ (այսինքն՝ Կազարաթում—Ա. Ա.),—գրում է Բժշկյանը,— նստէր կողմնապահ հայ իշխան, և ունէր զօրս ի պահպանութիւն ճենովացւոց, որպէս պատմէ հին յիշատակարանն»: Եվ Բժշկյանը բերում է այդ հին հիշատակարանի հետևյալ տողերը. «Ամէդ էր աղնիւ Մարգարն Մուղալէնց, որդի Թորոսի... ըստ հրամանի Շիրին իշխանին Քինեվիզաց բնակէր զօրօք ի վերայ ջրոյն Կազարաթի...»[1]:

Ղրիմի հայ գաղթօջախները XIV—XV դարերում:

Անիի հայ գաղթականությունը Մերձվոլգյան երկրամասից Ղրիմ տեղափոխվելուց հետո նախանձելի վիճակում չի գտնվել: Հայերը Ղրիմի գաղթօջախներում հաստատվելուց շատ չանցած՝ 1346—1347 թվականներին, մոլեգնել է համաճարակը (մահտարաժամը): Այդ մասին ուշագրավ հիշատակություն է թողել ղրիմահայ մեծավաստակ գրիչներից մեկը՝ Նատիրը: Ըստ նրա տեղեկության, մահտարաժամը, որը սկսվել է Արևելքում և ծավալվելով հասել մինչև Ղրիմ, մեծ վնասներ է պատճառել. «Մինչև ցայժմ ԺԵ (15) ամիս է,— գրում է նա,— որ անպատմելի և անթուելի մեռան տարաժամ մահուամբ»[2]:

Նորեկ գաղթականությունը մի քանի անգամ ենթարկվել է փորձությունների: Առանձնապես ծանր է եղել Ջանիբեկ խանի 1344 և 1345 թվականներին Կաֆայի պաշարումը, որին թեպետ չի հաջողվել վերցնել Կաֆան՝ ճենովական և հայկական զինված ուժերի հերոսական պաշտպանության շնորհիվ, սակայն պաշարված քաղաքացիները շատ են տուժել: Մեզ է հասել հայկական մի ձեռագիր, որ գրվել է 1344 թվականին Կաֆայում Մկրտիչ գրչի կողմից՝ քաղաքի պաշարման ժամանակ: Գրիչը խնդրում է ամենազորիր լինել գրչության խոշորության համար, որովհետև գրել է «Ի դառն ժամանակիս, ի պաշարմանն Կաֆային»[3]:

Հետագա տարիներին ևս Կաֆան ենթարկվել է հարձակումների, որից ամենից շատ տուժել են գլխավորապես նորեկ այն հայերը, որոնք բնակություն էին հաստատել քաղաքի պարիսպներից դուրս: Այդ էլ ստիպել է Կաֆայի հայ բնակչությանը՝ 1357 թ. կառուցելու քաղաքի երկրորդ պարիսպը, որը շինարարական վիթխարի աշխատանք է հանդիսացել:

[1] Մ. Բժշկեան, Ճանապարհորդութիւն, էջ 328:
[2] ՀՊՄ, ձեռ. № 7744, թ. 250բ:
[3] «Հանդէս ամսօրեայ», 1926 թ., էջ 237—238:

Մարտիրոս Ղրիմեցին Կաֆայի նոր կառուցված պարսպի մասին հետևյալն է գրում.

«Յետ այսմ ամենայ(ն)ի այնք որ՝ ի Կաֆայն,
Խոշտանգեալ տաքնապին յազ(գ)էն հոնական,
Զի գայր պատերազմաւ դժնատէս ազգն այն,
Առնէր վնաս բազում ընչից և մարդկան:

Զի ոչ էր ամենից բերթն բաւական,
Զայն որ ֆռանկն ունէր իւրն սեփհական,
Վասն այն միաբանեալ սիրով մեծաջան,
Շինեն բերթ արտաքոյ եռակ պարսպեան»[1]:

Կաֆա քաղաքի հայկական պարսպի կառուցման նախաձեռնողը, ըստ Դավիթ Ղրիմեցու տեղեկության, եղել է Մաղաքիա ավագերեցը:

Ճենովացիների և հայերի կառուցած այս պարիսպները վերակառուցվել, ամրացվել և քաղաքի շուրջը խրամատներ են փորվել 1363 թվականին: Ստեփանոս գրիչն այդ թվականին գրած ձեռագրի հիշատակարանում հայտնում է, որ «Պետ քաղաքիս փոս հատանէ, խորխորատ փորէ շուրջ քաղաքաս և բազում տունք հիմն ի վեր առնէ»[2]:

Ղրիմահայ գաղթականների շատ ու քիչ ապահով վիճակը դեպի իրեն է սկսում քաշել գաղթականության նոր հոսանքներ ինչպես մայր հայրենիքից, այնպես էլ Կիլիկիայից ու հայկական գաղթավայրերից: Շուտով Ղրիմում այնքան ստվար հայություն է կենտրոնանում, որ Ղրիմ թերակղզու արևելյան մասը կոչվում է «Ծովային Հայաստան» («Armenia maritima»)[3]:

Սխալվում է Ա. Լ. Յակոբսոնը, երբ կարծում է, թե այդ անվանումը Ղրիմի հայ գաղթավայրերին տվել են իրենք՝ «հայ պատմիչները»: Ղրիմին «Ծովային Հայաստան» են կոչել ո՛չ թե Ղրիմի հայերը, այլ նրանց ճենովացի հարևանները: Կաթոլիկ Եվգենիոս IV պապը, իր 1432 թվականին Սուղդայի հայության ուղարկած կոնդակում Ղրիմի հայ գաղթավայրին նույնիսկ «Մեծ Հայաստան» անունն է տալիս: Սուղդան, գրում է նա, գտնվում է «Մեծ Հայաստանի» կողմերը («In partibus Armeniae majoris»)[4]:

[1] Ա. Մարտիրոսյան, Մարտիրոս Ղրիմեցի, էջ 146—147:
[2] F. Conybeare, A Catalogue of the Armenian Manuscripts in the British Museum, էջ 248:
[3] M. Heyd, Histoire du commerce du Levant (տե՛ս ИТУАК, № 52, 1915, էջ 34—35):
[4] Ք. Վ. Քուշներյան, Պատմություն գաղթականության հայոց, էջ 121:

Այդ անվանումը հասկանալի կդառնա, եթե նկատի ունենանք Կաֆայի ճենովացի վաճառականների վարչության 1455 թվականի սեպտեմբերի 6-ի որոշումը, ուր ասվում է, որ «Այս երկրում (այսինքն՝ Ղրիմի թերակղզում—Ա. Ա.) մեծ մասամբ բնակություն են հաստատել հայերը»[1]։

Ղրիմի հայ գաղթօջախները XIV—XV դարերում գտնվել են բարենպաստ պայմաններում։ Այդ մասին վկայում է Դավիթ Ղրիմեցին։ «Յանժամ զօրացաք մեք և բազմացաք,— գրում է նա,— և շինեցաք զգիւղս և զգաւառս, իշխանք և ազնուականք ի Ղարապարզարէն սկսեալ մինչև ի Սուրխաթ և ի Ֆէօդոսիա, ի լերինս և ի դաշտս լի արարին վանօրէիւք և եկեղեցեօք մինչև ի Սուրխաթ»[2]։ Նույնը հաստատում է նաև Մարտիրոս Ղրիմեցին իր «Ղրիմաց երկրի» պատմության մեջ։

«Ի գալն ազգիս Հայոց յերկիր Ղրիմայն
Եօթն հարիւր ութսուն էր մեր թուական,
Զետեղեալ մնացին ուր և ասացան՝
Ի Կաֆայ, ի՛ Ղրիմ, ի լեհ, ՚ւ Ախքիրման։

Իսկ այնք, որ Կաֆայ կացին սեփհական
Եւ ի Ղրիմ քաղաք Սուրխաթ կոչական,
Եկեղեցուք լցին զվայրսն ամենայն
Փոխան եկեղե[ցե]ացն, որք՝ ի Շիրակվան»[3]։

Քրիստոնյա հայ պատմիչներն իրենց գլխավոր ուշադրությունը դարձրել են վանքերի և եկեղեցիների վրա։ Սակայն հայ գաղթականության Ղրիմում երբեմնի զբաղեցրած վայրերում թողած ավերակները պերճախոս վկաներ են նաև աշխարհիկ շենքերի վիթխարի շինարարության։

Որքա՞ն հայություն է եղել Ղրիմում XIV—XV դարերում։ Հայագիտության մեջ ընդունված է ասել՝ մոտ կես միլիոն։ Հայ բնակչության այդ թիվը հաշվելիս սովորաբար հիմք են վերցնում պատմիչի վերև բերված տեղեկությունը՝ Ղրիմում հարյուր հազար տուն հայություն բնակություն հաստատելու մասին։ Հաշվում են, որ եթե յուրաքանչյուր ընտանիք բաղկացած լիներ ամենաքիչը 5 շնչից, ապա հարյուր հազար ընտանիքում պիտի եղած լիներ մոտ կես միլիոն մարդ։

[1] Տե՛ս Л. Меликсет-Беков, Армянские древности в Аккермане, Тифлис, 1911, էջ 7։

[2] ՀՊՄ, ձեռ. № 7449, թ. 281բ։

[3] Մարտիրոսյան, Մարտիրոս Ղրիմեցի, էջ 146։

Ճենովական աղբյուրներից հայտնի է, որ միայն Կաֆա քաղաքն ունեցել է 70 000 շունչ բնակչություն, որից $^2/_3$-ը հայեր են եղել, այսինքն՝ մոտ 46 000 հոգի։ Հայկական հիշատակագրերը Կաֆայում հիշում են 45 եկեղեցի. եթե յուրաքանչյուր եկեղեցու համայնքը մոտ 200 ծուխ հաշվինք և յուրաքանչյուր ծուխ ունենար 5 շունչ, դարձյալ 46 000-ի մոտ բնակչություն է ստացվում։ Մեծ թվով հայ բնակչություն է ունեցել նաև Սուրխաթը, Կազաքրթը, Սուղդան, Կորսունը և մյուսները։ Մեր մոտավոր հաշվումներով՝ նշված դարերում Ղրիմն ունեցել է ո՛չ ավելի քան երկու հարյուր հազար հայություն։ Անշուշտ, չափազանցություն պետք է համարել կես միլիոն թիվը։

Ղրիմի այսպիսի բնակչաշատ գաղթավայրը, բնական է, չէր կարող մնալ առանց թեմական հոգևոր ղեկավարության։ Ստեղծվում է Ամենայն հայոց կաթողիկոսությանը ենթակա այսպես կոչված՝ «Հյուսիսայինն» թեմ։ Գրիչներն իրենց հիշատակարաններում գահակալող խաների և կաթողիկոսների անունների կողքին հաճախ հիշում են նաև Ղրիմի հայ թեմական առաջնորդների անունները։ Օրինակ, Տերտեր Երևանցին 1341 թ. առաջին անգամ հիշում է «Հայոց հյուսիսային կողմանց եպիսկոպոս» Ստեփանոսին՝ Սուղդայի Գրիգոր քահանայի որդուն։

Թեմական առաջնորդից բացի, գոյություն է ունեցել նաև «աթոռապահություն»։ 1346 թ. մի հիշատակարանում կարդում ենք. «Գրեցաւ զձեռագիրս... յառաջնորդութեան տէր Գրիգորի, յաթոռապահութեան համձարեղ հռետորին Յովհաննէս աբեղայինն...»[1]։

Սուրխաթում 1348 թ. գրված հայկական մի ձեռագրի գրիչ՝ Ավետիք, որդի Նադրի, որը Ղրիմի հայ ականավոր մանրանկարիչներից մեկն է, իր հիշատակարանում հայտնում է, որ ձեռագիրը գրել է «ի հռչակաւոր և հոյակապ քաղաքս, որ կոչի Սուրխաթ... յեպիսկոպոսութեան նահանգիս տեառն Ստեփաննոսի՝ արքեպիսկոպոսի ամենայն հիւսիսական կողմանց և յերկրորդի նորին Յովհաննէս կրաւնաւորի»[2]։ Թեմի մեծությունը հաշվի առնելով, ըստ ճշմարտության, անհրաժեշտ է համարել թեմական առաջնորդի կողքին ունենալ նաև աթոռապահ։

Կաֆայում սակայն եպիսկոպոս առաջնորդ է ունեցել նաև հայ կաթոլիկ համայնքը, որի առաջնորդական կենտրոնը գտնվել է Ս.

[1] Գ. Սրվանձտյան, Թորոս աղբար, II, էջ 426—427։

[2] ՀՊՄ, ձեռ. № 7857, թ. 288բ։

Նիկողացու վանքում։ Կաֆայի հայ եպիսկոպոսի իրավասությունը տարածվել է Ղրիմի կաթոլիկ հայության վրա։ Ինոկենտիոս VI պապը 1356 թվականի կոնդակով Ղրիմի հայ կաթոլիկներին հաստատել է Օգոստինոսի կարգի մեջ և ֆրա Ավագտեր եպիսկոպոսին նշանակել Ղրիմի «գուբառնաթոր», այսինքն՝ հոգևոր թեմի առաջնորդ[1]։

Հիշատակարաններում պահպանված տեղեկություններից երեվում է, որ Ղրիմի հայ լուսավորչական և կաթոլիկ համայնքները հաշտ ու համերաշխ չեն ապրել կողք-կողքի, այլ մշտապես գտնվել են միջդավանական պայքարի մեջ։ Այդ պայքարը հրահրել է Վատիկանը, որը Կաֆայի, Սուղդայի և Սուրխաթի կոնսուլների միջոցով աշխատել է հայերին դավանափոխ անել։ Անտոն գրիչը 1357 թվականին գրած իր «Տոնապատճառի» հիշատակարանում գանգատվում է, որ ինքը քիչ փորձանքներ և հակառակություններ չի տեսել «ի հերձուածողացն»[2]։

Ըստ երևույթին, լուսավորչական համայնքի պայքարը գլխավորել է Հովհաննես վարդապետը, որը 1363 թվականին գրված մի ձեռագրի հիշատակարանում ներկայացված է որպես «կորոփամիտ վարդապետի», «հերձուածողաց հալածողի» և «ցոփագնացից ահ արկանողի»։ Նա, ըստ գրչի տեղեկության, փայլում էր «իբրև զարփն լուսոյ» և «զպարիսպ բարձրապատուար շուրջանակի»[3]։

Ի դեպ, կաթոլիկների այդ հալածանքն ուղղված էր ո՛չ միայն հայ համայնքների, այլև՝ հույն-ռուսական ուղղափառ համայնքների դեմ։ Տեղեկություն կա այն մասին, որ 1365 թվականին կաթոլիկները խլել են ուղղափառների (անշուշտ, ռուսների) Ս. Աստվածածնի անունով եկեղեցին, որը և մեծ դժգոհություն է առաջացրել «ուղղափառաց եկեղեցեացն»[4]։

Կաֆայի, ինչպես և Ղրիմի բոլոր գաղթավայրերի հայության վրա ծանր է անդրադարձել արյունոտ այն պայքարը, որը XIV դարի 60-ական թվականներին տեղի է ունեցել Կաֆայի ճենովական և Սուղդայի վենետիկյան առևտրական ֆակտորիաների միջև, որը վերջացել է Կաֆայի հաղթանակով։ Կաֆայի Կարապետ գրիչը, որի համակրանքը ճենովացիների կողմն է, 1365 թվականին իր գրած հիշատակարանում հայտնում է, որ Կաֆայի ճենովացիների հրամանատարը «աստվածային հաջողություններով» գրավել է Սուղդա քաղաքը, թշնամիներին ձերբակալել, իսկ հրեա և մահմեդական բնակչությանը «զամենեսեան սպառ իսպուռ կոտորեալ»[1]։

Միջֆեոդալական այդ պայքարը 1365 թվականից հետո դարձյալ շարունակվել է։ 1371 թվին գրված հիշատակարանում Ստեփանոս գրիչը դառնությամբ գանգատվում է, որ «Իշխանք և հազարապետք զմիմեանս սատակեն»[2]։

Իտալական վաճառականների միջև տեղի ունեցող այս ներքին կռիվները մեծ չափով նպաստում են խանության ուժեղացմանը Ղրիմում։ Այդ ժամանակ Ղրիմում խան էր Մամայը, որը նստում էր Ղարասուում։ Օգտվելով վերը հիշատակված միջադեպերից, նա հաճախ է ասպատակում հայաբնակ վայրերը, կողոպտում և բնակչությանը գերեվարում։

1365 թ. Նատիրի որդի Ավետիս գրչի թողած հիշատակարանից երևում է, որ Մամային հաջողվել է վերցնել Կաֆան և կողոպտել բնակչությանը. «Պատերազմաւ սուգ կալաւ զբոլոր սահմանս Ղրիմ,— գրում է նա,— զի իշխան սորա ոչ կարեցեալ ընդդիմանալ՝ նկուն եղեալ փախեաւ, և հարին ի զաւրուն իբրև Ս (երկու հազար) այր, և զկարասին զինուք հանդերձ առեալ տարան Մօլ»[3]։

Միջֆեոդալական այս կռիվներին ուղեկցում է սովը։ Ստեփանոս գրիչը հայտնում է, որ Ղրիմում՝ Մամայի կողմից գրավվելուց երեք տարի հետո, մոլեգնել է սովը, որից այնքան շատ մարդիկ են մահացել, որ ինքը «գրելոյ անկար է»[4]։

Ղրիմահայ համայնքների ներքին կյանքի և սոցիալական ընդվզումները:

Ղրիմահայ համայնքների ներքին կյանքի մասին մեր ունեցած տեղեկությունները շատ աղքատ են։ Նրանք մեզ հնարավորություն չեն տալիս ծավալվելու։ Մեզ հասած տեղեկությունների մեծ մասը վերաբերում է հայ առևտրականներին և բարձրաստիճան հոգևորականներին. խոշորացույցով կարելի է փնտրել հայ աշխատավորության մասին եղած տեղեկությունները։

Մերձվոլգյան երկրամասից Ղրիմ եկող հայ գաղթականության առևտրա-արհեստավորական խավերը բնակություն են հաստատել ծովափնյա նավահանգստային քաղաքներում՝ Ազախում, Կերչում, Կաֆայում, Սուղդայում, Կորսունում և այլն։ Իսկ գյուղացիությունը՝

---

1 ՀՊՄ, ձեռ. № 2037, թ. 187ա։
2 ՀՊՄ, ձեռ. № 2039, թ. 319բ։
3 ՀՊՄ, ձեռ. № 6273, թ. 132բ։
4 ՀՊՄ, ձեռ. № 7458, թ. 426բ։

1 ՀՊՄ, ձեռ. № 7458, թ. 426բ։
2 ՀՊՄ, ձեռ. № 7474, թ. 490բ։
3 ՀՊՄ, ձեռ. № 4656, թ. 560ա։
4 ՀՊՄ, ձեռ. № 2705, թ. 487ա։

ընտրել է թերակղզու ներքին երկրամասը, մասնավորապես Սուրխաթի և Կազարաթի արգավանդ շրջանները։

Գյուղացիությունը՝ ղրիմահայ բնակչության զգալի մասն է կազմել։ Նրա հիմնական զբաղմունքներն են եղել հողագործությունը և անասնապահությունը։ Մեծ ուշադրություն է դարձվել մասնավորապես այգեգործության՝ խաղողի մշակության վրա։ Հայտնի է, որ թերակղզու ծովափնյա բոլոր քաղաքների խմիչքը հայ այգեգործներն են մատակարարել։ Տեղեկություններ կան անգամ Ղրիմից խմիչքի արտահանության մասին։

Ի՞նչ իրավունք են ունեցել Ղրիմի հայ գյուղացիները հողի նկատմամբ, մեզ ոչինչ հայտնի չէ։ Ամենայն հավանականությամբ, նրանք ապրել են գյուղական համայնքներով. նրանք իրար մեջ են բաժանել իրենց տրված հողամասերը ըստ շնչերի և դրան համապատասխան վճարել պետական հարկը և կալվածատիրոջ ռենտան։ Փաստեր չկան այն մասին, որ գյուղացիությունը գտնված լինի ճորտացված վիճակում։ Միայն մի հիշատակարանում տեղեկություն կա Սուրխաթի եկեղեցական կալվածներում աշխատող բանվորների, մաճկալների և հովիվների մասին։ Այդ՝ Խոսրովի 1356 թվականին Սուրխաթում գրած հիշատակարանն է, ուր գրիչը խնդրում է հիշել Ս. Աստվածածնի, Ս. Սիմեոնի և Ս. Օքսենտիոսի կալվածքներում աշխատող «պաղի (այսինքն՝ այգու—Ա. Ա.) գործաւորսն, զտնտեսն, և զմաճկալքն, և զհովիւն...»[1]։

Ղրիմահայ քաղաքատիպ գաղթօջախներում ամենից գործունյա դեր են ունեցել հայ առևտրականները, որոնք շատ սերտ հարաբերությունների մեջ էին գտնվում ճենովական առևտրականների հետ և նրանց գործակիցները դարձած ակոսում էին Սև ծովն այ ու ձախ։ Ճենովայի առևտրականներն իրենց ընկերակիցներին անվանում էին «մեր հավատարիմ և ազնիվ վաճառականներ»։

Ճենովայի առևտրականները, 1260 թվականին Բյուզանդիայի Միքայել Պալեոլոգ կայսեր հետ կնքած պայմանագրով, առևտուր անելու մենատիրություն էին ստացել և Սև ծովին տիրություն էին անում իրենց սեփական տան նման։ Նույն իրավունքներից օգտվում էին նաև հայ առևտրականները։

XIV—XV դարերում Ղրիմի նավահանգիստները միջազգային տարանցիկ առևտրի խոշոր կենտրոններ էին դարձել. նրանք Արևմտյան Եվրոպան կապում էին Արևելքին՝ Մոնղոլիայի, Հնդկաստանի, Չինաստանի հետ։ Ղրիմով էին անցնում նաև Ոսկե Հորդայի

[1] ՀՊՄ, ձեռ. № 6273, էջ 153—154։

գրաված երկրներից դեպի հարավ ձգվող առևտրական ուղիները։ Առևտրական սերտ հարաբերություններ ստեղծվեցին մանավանդ Տրապիզոնի հետ, ուր իշխող դիրքեր էին գրավել հայ և հույն առևտրականները՝ Ղրիմին մատակարարելով Պարսկաստանի և Անդրկովկասի ապրանքները։ Ղրիմի նավահանգիստները յուրատեսակ պահեստարաններ էին աշխարհի չորս կողմից բերվող ապրանքների համար։ Ճենովացիների և Ոսկե Հորդայի խանության միջև 1266 թ. կնքված պայմանագրի համաձայն, խաները պարտավոր էին պահեստներ կառուցել՝ ճենովացիների ապրանքները պահպանելու համար[1], իսկ ճենովացիները Սև ծովի վրայով իրենց կատարած առևտրի համար վճարում էին մաքս։

Ղրիմի հայ և ճենովացի վաճառականները Արևելքից Եվրոպա էին փոխադրում ցորեն, աղ, ձուկ, բուրդ, մորթի, մոմ, թանկագին քարեր, համեմունք և այլն։ Եվրոպայից դեպի Արևելք էին տանում գործվածքներ, երկաթյա և պղնձյա իրեր, զարդարանքներ և այլն։

Հայ առևտրականները, ինչպես երևում է, կապված են եղել Ճենովայի Ս. Գեորգի բանկի հետ, որոնց ճենովական բաժանմունքը գտնվել է Կաֆայում։ 1431 թ. Քրիստոսատուր գրիչը «Ճաշոց»-ի վերջում իր գրած հիշատակարանում հայտնում է, որ տիկին Ազիզ-Մելիքը Ս. Անտոնի վանքի անունով «ի պանքն եղեալ է», 100 սոմ անշարժ դրամագլուխ, որի տոկոսները՝ տարեկան 1400 ասպրտակ, պիտի տրվի վանքին՝ ծախսելու։ Բարեգործուհու հայրը՝ պարոն Ամիլը, վանքի անունով բանկն է դրել 25 սոմ, որի տարեկան տոկոսն է եղել 300 ասպրտակ և այլն[2]։

Ղրիմի քաղաքներում ստվար թիվ էին կազմում նաև հայ արհեստավորները։ Ինչպես երևում է, Ղրիմի քաղաքները ո՛չ միայն միջազգային առևտրի, փոխանակության կենտրոններ էին, այլև նրանք, առևտրին մասնակցում էին նաև իրենց արտադրանքով։

Պետ. մատենադարանի սեփականություն է մի թանկարժեք ձեռագիր, որը գրված է Սուրխաթում 1347 թվականին հայ բազմավաստակ մի գրչի՝ Նադրի կողմից։ Ձեռագիրը ստվար մի հատոր է՝ «Ճառընդիր»։ Դժվար է եղել մեկին կատարելու ձեռագրի վրա դրված ծախսը, ուստի և մի շարք հայ արհեստավորներ և մանր առևտրականներ միջոցներ են հավաքել և տվել գրչին՝ պատվիրելով

[1] Е. С. Зевакин и Н. А. Пенчко, Очерки по истории генуэзских колоний на западном Кавказе в XIII—XV вв. (տե՛ս «Исторические записки», № 3 за 1938, էջ 72—129)։

[2] ՀՊՄ, ձեռ. № 7434, թ. 395բ։

իրենց անունները արձանագրելու ձեռագրի տարբեր էջերում։ Ձեռագրի մեջ ցրված մանր հիշատակարաններից դժվար չէ պատկերացում կազմել, թե ինչ մասնագիտությամբ արհեստավորներ և մանր առևտրականներ են եղել Կաֆայում XIV դարում։ Այնտեղ հիշված են հետևյալ արհեստավորները և այլ զբաղմունքով պարապող մարդիկ. Թադեոս ներկարարը, Պարոնշահ կոշկակարը, Կարապետ բազազը, Թորոս ջուլհակը, Սարգիս բազազը, Մելիքսեդ ոսկերիչը, Ուռումբեկ ոսկերիչը, Գորգի ներկարարը, Սարգիս դանկարը, Մարգարե ջուլհակը, Ավետիք ջուլհակը, Ամպետ կտավագործը, Կիրակոս ճոնը, Բաբելի ոսկերիչը, Մարգարե քաթանագործը, Վարդերես ջուլհակը, Ստեփանոս հյուսնը, Սաթե դերձակը, Ավրան կտավագործը, Մկրտիչ դանակագործը, Թավտա բազազը, Հեթում դարբինը, Աղբարշահ գինեծախը, Գրիգորես էգիպանը (այգեպանը), Պարոնշահ սանրագործը, Հովհաննես կտավագործը, Տուրք էգիպանը, Կարապետ ջուլհակը[1] և այլն։

Նադիրի վերև բերված հիշատակարաններից երևում է, որ Կաֆայում մեծ թիվ են կազմել մասնավորապես ջուլհակները։ Այլ աղբյուրներում տեղեկություններ կան նաև կաշեգործ և նավաշինարար արհեստավորների մասին։

Արհեստավորների մեծ մասը կապված է եղել առևտրականների հետ և կատարել նրանց պահանջները՝ արտադրելով այն ապրանքները, որոնք անհրաժեշտ էին ինչպես ներքին, այնպես էլ արտաքին շուկաներում վաճառման համար։ Անհավանական չէ, որ հայ արհեստավորներն ունեցել են իրենց համքարական կազմակերպությունները։

Ղրիմի քաղաքատիպ գաղթօջախներում կային մեծ թվով հայ գինվորականներ և սևագործ բանվորներ։ Զինվորականները պաշտպանում էին քաղաքները թշնամու հարձակումներից և ուղեկցում քարավաններին՝ ցամաքային ճանապարհորդության ժամանակ։ Ինչ վերաբերում է քաղաքում ապրող սևագործ բանվորներին, ապա նրանք աշխատում էին պահեստներում, նավահանգստներում և նավերի վրա։

Ճենովական պաշտոնական վավերագրերից երևում է, որ Ղրիմի այլազգի բոլոր ժողովուրդները, այդ թվում նաև հայերը, ճենովական իշխանությունների կողմից ենթարկվել են անօրինակ շահագործման։ Նրանք վճարել են բազմատեսակ հարկեր։ Մեհարկից բացի, նրանք պարտավոր են եղել վճարել հարկեր նաև շենքի, այգեգործության և շուկայում վաճառքի հանված բոլոր տեսակի ապրանքների համար՝ գինու, հացահատիկի, մրգերի և այլն։ Իշխանությունները հարկ են վերցրել անգամ կամուրջների համար։ Առանձնապես ծանր է եղել աղի վրա դրված հարկը։

Թուրքերը 1453 թվականին Կոստանդնուպոլիսը վերցնելուց հետո, երբ փակվում է Սև ծովի ելքը դեպի Միջերկրական ծովը, տարանցիկ առևտուրը սկսում է նվազել։ Ճենովական իշխանություններն սկսում են ավելի ծանրացնել իրենց հարկային լուծը. Եթե նրանք 1415 թվականին ժողովրդից վերցրել էին միայն 3 միլիոն լիրա հարկ, ապա 1470 թվականին թուրքերի Ղրիմ ներխուժելու նախօրյակին, այն բարձրացնում են մինչև 12 միլիոն լիրայի։

Աշխատավոր բնակչության դրությունն այնքան է ծանրանում, որ ապրուստ չունեցող մարդիկ հարկադրված են լինում կամավոր հանձնվել ստրկության։ Կաֆայի կոնսուլատը այդ երևույթի առաջն առնելու համար հատուկ որոշում է կայացրել, որ՝ «Կաֆայում կամ նրա արվարձաններում արգելվում է գնել տեղացի այն բնակիչներին, որոնք կամովին վաճառում են իրենք իրենց»[1]։

Հայ աշխատավորությունը շահագործվում էր սակայն ո՛չ միայն ճենովական իշխանությունների կողմից, այլ նաև իր ազգակից մեծահարուստների կողմից, որը և տեղի է տվել աշխատավորության հաճախակի բողոքներին և ապստամբության։ Հայկական շրջաններում մեծ դժգոհություն է առաջացել մանավանդ Կայարիս անունով մի հայ վաշխառուի գործունեության հետևանքով, որը, ըստ ճենովական մի վավերագրի, անշափ մեծահարուստ մեկն է եղել և վարկեր է տալիս եղել քաղաքի շատ բնակիչներին։

1433 թվականներին, ինչպես հայտնի է, տեղի է ունեցել Ջեմբալայի ապստամբությունը (Ջեմբալան Կաֆայից դեպի արևմուտք գտնվող Ղրիմի նավահանգստային քաղաքներից մեկն է, ուր ըստ-վար հայ բնակչություն էր ապրում)։ Ապստամբությունն ուղղված է եղել տեղի իշխանության դեմ։ Ապստամբներին հաջողվել է իշխանությունը վերցնել իրենց ձեռքը և քաղաքից դուրս վտարել ճենովական հարստահարիչներին։ Ապստամբության ալիքը արագ անցել է հարևան քաղաքները և գյուղերը։ Այս ապստամբությանը մաս-

[1] ՀՊՄ, ձեռ. № 3797 (տարբեր էջերում)։

[1] Տե՛ս ЗООИД, т. V, էջ 738։

նակցել են նաև հայերը[1]։ Ապստամբությունը ճնշվել է մեծ դժվարությամբ՝ Կաֆայից ուղարկված 60 000 հոգուց բաղկացած զորաբանակի կողմից։

1454 թվականին աշխատավորության նոր ընդվզում է տեղի ունեցել Կաֆայում, որի բնակչության երկու երրորդը, ինչպես ասել ենք առջևում, կազմել է հայ բնակչությունը։ Ժողովուրդը զինք է վերցրել և սկսել է կռվել։ Քաղաքի հարուստները, վախենալով ժողովրդի ցասումից, փախել են քաղաքից։ Կաֆայի կոնսուլն իր զեկուցագրում գրում է. «Անցյալ ամսվա 15-ին (այսինքն՝ սեպտեմբերի 15-ին—Ա. Ա.), այստեղ տեղի ունեցան մեծ անկարգություններ։ Քաղաքում կռիվ սկսվեց, և ավելի քան հինգհարյուր մարդիկ գոչում էին՝ «կեցցե ժողովուրդը», «մահ ազնվականներին»[2]։

Հետաքրքիր են ճենովական վավերագրերում պահված այն տեղեկությունները, որոնք վերաբերում են անմիջապես Կաֆայի հայ համայնքի աշխատավորության ընդվզմանը՝ հայրենակից հարուստների դեմ։

Կաֆայի կոնսուլ Կաբելլայի մի զեկուցագրից երևում է, որ Կաֆայի հայ բնակչությունը բաժանված է եղել երկու հիմնական խմբի՝ մեծահարուստների և աշխատավորության։ Մեծահարուստները, ըստ նրա տեղեկության, մեծ թիվ չեն կազմել՝ ընդամենը ութ-տասը հոգի։ Նրանց զեկավարն է հանդիսացել վերև հիշված Կայարիսը, որը հավանական է լատինական վավերագրերում աղավաղումն է Կարապետ անվան։

Կաֆայի հայ աշխատավորության պայքարը հարուստների դեմ սուր բնույթ է ստանում 1474 թվականին՝ հոգևոր առաջնորդի ընտրության ժամանակ։ Ունևորներն առաջարկել են իրենց թեկնածուին՝ տեր Կարապետ անունով մեկին, որը Կայարիսի ազգականներից է եղել. հովանավորված տեղական իշխանությունների կողմից, իսկ աշխատավորությունն առաջարկել է իր թեկնածուին՝ տեր Հովհաննեսին։ Քաղաքի կոնսուլը բացահայտորեն պաշտպանել է ունևորների թեկնածուին և ցանկացել է պարտադրել հայ աշխատավորությանը՝ հնազանդվել հարուստների կամքին։ Սակայն աշխատավորությունը չի ենթարկվել իշխանություններին և ապստամբել է։

Ըստ տեղեկությունների, հուզումը փոքր-ինչ խաղաղվելուց հետո, նորից բռնկվել է վեց ամիս հետո։ Այս անգամ Կաֆայի հայ

[1] Այս ապստամբությունների մասին տես Л. М. Чиперис, Экономическое развитие и классовая борьба в крымских городах в 30—70-х гг. XV века (автореферат).

[2] П. Н. Надский, Очерки по истории Крыма, Симферополь, 1951, էջ 61։

բնակչության համար ապստամբության առիթ ծառայել է մեծահարուստ մի հայի՝ Քոտուլ Բեյի տղայի կողմից չքավոր մի մարդու աղջկա առևանգումը։ Ժողովուրդը հավաքվել ու շարժվել է դեպի կոնսուլի շենքը՝ «Կորչի՛ Քոտուլ Բեյը, մահ նրան» բացականչություններով։ Կոնսուլը, վախենալով բազմության զայրույթից, թաքնվել է։ Մեծ դժվարությամբ է հաջողվել ժողովրդին հանգստացնել և հեռացնել կոնսուլի շենքից։

Հայ աշխատավորության նոր ընդվզումներ են եղել նաև 1473—1475 թվականներին։ Կոնսուլ Կաբելան 1475 թ. փետրվարի 12-ին Ճենովա գրած իր նամակում հայտնում է. «Հայ ժողովրդի շրջանում մեծ անկարգություններ են սկսվել, առաջացել է խռովություն, եկեղեցիներից մեկում 300 հոգի են հավաքվել»։

Ամենայն հավանականությամբ ճենովական կոնսուլի՝ եկեղեցում հիշած այս 300 հոգին հանդիսացել են զինված այն անձնավորությունները, որոնք չեն ցանկացել հնազանդվել իշխանությունների կարգադրությանը և չեն ցանկացել ընդունել հայ հարուստների պարտադրած թեմական առաջնորդին։

Ի դեպ, Ս. Գևորգ բանկի պրոտեկտորը 1473 թվականի իր մի գրության մեջ մեղադրել է Կաֆայի կոնսուլին, որ նա թույլ է տվել միջամտելու հայ համայնքի ներսում ծայր առած խռովություններին։

Փաստորեն, Կաֆայի հայ աշխատավորության պայքարը տեղի հայ մեծահարուստ խմբակի դեմ շարունակվել է մինչև թուրքերի մուտքը Կաֆա։

Ղրիմի թերակղզու գրավումը թուրքերի կողմից և նրանց կատարած վայրագությունները։ Ղրիմի հայությունը շուտով կանգնում է մի նոր փորձության առջև. նրա գլխին պայթավումը թուրքերի կողմից և նրանց կատարած թուրքական սոսկալի արհավիրքը։ Պոլիսը թուրքերի կողմից գրավելուց հետո, ինչպես ասացինք, դադարում է ծովային հաղորդակցությունը Սև և Միջերկրական ծովերի միջև։ Ղրիմը կտրվում է արտաքին աշխարհից և ընկնում փակուղու մեջ։ Ճենովացիները զրկվում են Իտալիայից ծովային ճանապարհով ռազմական և այլ օգնություն ստանալու հնարավորությունից և հարկադրված են լինում մայր հայրենիքի հետ կապվել ցամաքային հեռավոր ճանապարհով։ Թերակղզում թաթար բնակչության մեջ աստիճանաբար սկսում են ուժեղանալ թուրքոֆիլ տրամադրությունները։

Ղրիմի ճենովական իշխանությունները, սակայն, չեն ըմբռնում ժամանակի վտանգը, պատշաճ միջոցներ չեն ձեռնարկում՝ ամրացնելու քաղաքները, զինելու և կազմակերպելու տեղական ուժերը և

խեղդելու թուրքական օրիենտացիա ունեցող թաթարական խանների ոտնձգությունները։ Ավելին, ճակատագրական այս ծանր օրերին նրանք, հնազանդ պապական կաթոլիկ պրոպագանդային, շարունակում են երկպառակությունների սերմանել Ղրիմի հայկական շրջաններում՝ վանելով հայ աշխատավորությանը իրենցից։

Թուրքական նավատորմիղն առաջին անգամ Ղրիմի թերակղզուն է մոտենում 1454 թվականին՝ Մանքաստրան (Ակկերմանը) վերցնելուց հետո։ Թուրքական նավերը Կաֆայի ծովախորշն են գալիս նույն տարվա հուլիսի 11-ին։ Կաֆացիները բանակցություններ են սկսում թուրքական հրամանատարության հետ, վճարում 600 սոմ (մոտ 19,400 լիրա) ռազմատուգանք և գործը վերջացնում խաղաղությամբ[1]։

Սակայն այդ ժամանակավոր, խաբուսիկ մի դադար էր։ Թուրքական կառավարության աչքը Ղրիմի վրա էր։ Եվ ահա նրանք 1475 թ. Ղրիմի թերակղզին նվաճելու համար ուղարկում են մի նոր զորաբանակ՝ Գեդուկ Ահմեդ փաշայի գլխավորությամբ։ Թուրքական նավատորմիղը Կաֆայի ծովածոցն է մտնում մայիսի 31-ին, իսկ հունիսի 1-ին թուրքերը զորք են ափ հանում և սկսում ռազմական ընդհարումներ։

Ղրիմի հայ և ճենովացի բնակչությունը որոշում է դիմադրել թշնամուն։ Հայկական զորամասերին հանձնարարվում է պաշտպանել քաղաքի ցամաքային սահմանը՝ հայկական պարսպի ուղղությամբ։

Ականատես հայ տաղերգուներից մեկը՝ Ղարիպ Ներսեսը, որը Կաֆայի մասին հատուկ ողբ է գրել («Ողբ ի մայրաքաղաքին Կաֆայու») հետևյալն է հաղորդում թուրքերի հարձակման և հայերի ու իտալացիների հերոսական պաշտպանության մասին.

«Ծօփ թաֆա[ն]ք շատ ունէին,
Խիստ կանչելով կուու արին,
Որ ահն առէր էր վերայ քաղքին...
Մեծ-մեծ թօփերն երբ քաշեցին,
Երկինք ու երկիր կու դողային։

Տունք և տաճարքըն բըլչէին,
Տղայք մեռան ահէ ձայնին.
Կանայք ահէն զարհուրէին,
Եւ զաղայքըն անցանէին.
Զի ահեղ էր ձայնն թօփին»[1]։

[1] В. Гейд, История Востока в средние века (Տե՛ս «Известия таврической ученой архивной комиссии», № 52, էջ 68—185)։

[2] ՀՊՄ, ձեռ. № 7709, թ. 34բ։

Ըստ Ղարիպ Ներսեսի տեղեկության, Կաֆա քաղաքը եկող և շրջապատող թուրքական նավատորմիղը բաղկացած է եղել 400 նավերից։ Թուրքական բանակը քաղաքը շրջապատել է թե՛ ծովից, և թե՛ ցամաքից։

Հայ և ճենովացի զինվորները թուրքական հսկայական բանակի դեմ կռվել են հինգ օր անդադար և անօրինակ քաջությամբ ետ շպրտել նրա հարձակումները։ Սակայն կռվի վճռական պահին դաշնանել են քաղաքի թաթարները և 60.000 հոգով անցել թուրքերի կողմը։ Իտալական վաճառականների մեջ նույնպես եղել են դավաճաններ։ Եվ այսպես, գնալով պակասում են պաշարվածների ուժերը։

Դրությունը ավելի է ծանրանում, երբ թշնամին կտրում է քաղաքի ջուրը։ Քաղաքը նախապես ապահովված չէր նաև պարենով։ Վճռական պահին իր ապահովության մասին մտածող իտալական հյուպատոսը թողնում և փախչում է քաղաքից։ Առանձնապես ստոր գործ է կատարում Կաֆայի գանձապահը. նա գաղտնի թուրքերին է հանձնում քաղաքի բանալիները։ Ահա այսպիսի ծանր պայմաններում հայ զինվորականությունը հարկադրված է լինում բանակցությունների մեջ մտնել թուրքերի հետ, ստանալ նրանց հավստիացումը, որ քաղաքը հանձնելու պարագային վրեժխնդիր չեն գտնվի նրանց նկատմամբ և հանձնել քաղաքը։ Նեսվետայի «Հայսմաւուրք»-ի հիշատակարանի հեղինակն այդ մասին հետևյալն է գրում. «ընդդիմացան իշխանքն և ազնուականքն մեր և ոչ տևյալն է գրում. «ընդդիմացան իշխանքն և ազնուականքն մեր և ոչ տեսան զերեքն», իսկ հետո, երբ տեսան, որ անկարելի է պաշտպանել, բանակցությունների մեջ մտան և «թուրքն ուխտ եդեալ չմեղանչել, եթե հնազանդեսցեն, այլ ազատութիւն տալ։ Տեսեալ իշխանացն մերոց և ազնուականաց զթուլութիւն իշխանին ճենեվիզաց և զօրացն նոցին, մանաւանդ թե իշխանն փախուստ էառ, անճար մնացեալ ի սովու, առին ղերդումն և զքաղաքն ետուն թուրքաց»[1]։

Եվ այսպես, Կաֆան հինգօրյա պաշտպանությունից հետո, ընկնում է թշնամու ձեռքը։ Թուրքերը, ինչպես միշտ, այս անգամ ևս դրժում են իրենց խոստումը և դատաստան տեսնում հայ, իտալացի, ռուս և տեղացի այլ բնակչության հետ։ Ղարիպ Ներսեսը մանրամասն պատմում է այն վայրագությունների մասին, որը կատարել են թուրքերը Կաֆայի բնակչության հետ։ Թուրքերը նախ հավաքում են տեղի կռվող ուժը և զինաթափ անում։ Նրանց մի մա-

[1] ՀՊՄ, ձեռ. № 7442, թ. 281բ։

սին կոտորում են, իսկ մյուս մասին՝ գերում, հավատափոխ անում և ուղարկում Պոլիս՝ թուրքական բանակում ծառայելու համար։ Մնողներից վերցնում են նաև նրանց երեխաներին։

«Զդուստր և որդիքն ժողովեցին,
Զհարն գլուխն կըտրեցին,
Զդուստերքն առին և գերեցին,
Անխնայ ժողովեցին,
Երկու եղբայրքն ի մեկ տեղին,
Զնորպսակ հարսն ու փեսան,
Լալով առին ու նաւ դրին,
Հայրըն և մայրըն շատ լացին
Եւ գլխիբաց ի յետ գնացին,
Նայ ճար չեղաւ, չի խղճային
Եւ ոչ լալոն ողորմէին,
Սըրտեր եղեր էր գազանին»[1]։

Ըստ Ղարիպ Ներսեսի տեղեկության, ծնողներից վերցրած միայն տղաների թիվը տասը հազարի է հասել։ Այնուհետև նրանք հավաքում են բոլոր վաճառականներին և «Զամէնն խիստ թալանեցին»։ Վերցնում են քաղաքի բոլոր եկեղեցիների զանգերը և ուղարկում Պոլիս՝ թնդանոթ ձուլելու համար։ Մտնում են տները, կողոպտում բնակչությանը։ Աշխատունակ մարդկանց նրանք հավաքում են մի տեղ և աշխատեցնել տալիս ռազմական շինարարության վրա։ Վերջում Ղարիպ Ներսեսն իր «Ողբն» ամփոփում է հետևյալ դառնակսկիծ զայրույթով.

«Խիստ նեղութիւն կայր քաղաքին,
Ամէնն ի լաց հառաչէին,
Ճամփա չի կար, որ փախչէինք»[2]։

Թուրք հրամանատարությունը Կաֆայի հայ բնակչության դեմ կազմակերպում է մի այլ ոճիր ևս, որը հաղորդում է մեզ «Ղրիմի Պատմության» հեղինակը։ Կաֆայի և Ղրիմի մյուս բնակավայրերի գրավումից հետո, երբ շատ ու քիչ կյանքն սկսում է խաղաղվել, թուրքերը և թաթարները սկսում են հարկադրել հայերին կրոնափոխ լինել և ընդունել մահմեդականություն։ Սակայն հայերը վճռականապես մերժում են։ Թուրքական զորքի հրամանատար Ահմեդ փաշան դիմում է այսպիսի ոճրագործության. մահմեդական տոներից մեկի ժամանակ, հյուրասիրության պատրվակով, ընդունելու-

[1] ՀՊՄ, ձեռ. № 7709, թ. 34բ։
[2] Նույն տեղը, թ. 34բ։

քյուն է կազմակերպում իր պալատում, որը գտնվելիս է եղել ծովափին։ Նախապես հայտնում է հրավիրվածներին հյուրասիրության գալ առանց զենքի։ Ճաշկերույթից հետո, երբ հրավիրվածները շնորհակալություն հայտնելով դուրս են գալիս՝ իջնելով աստիճաններով, այնտեղ կանգնած դահիճները մեկ-մեկ սպանում են հրավիրված հայերին և նրանց դիակները ձգում ծով. «Յետ ճաշելոյն վիրաւած հայերին և նրանց դիակները ձգում ծով. «Յետ ճաշելոյն նոցին (այսինքն՝ հայոց—Ա. Ա.),—գրում է պատմիչը,—ի յիջանելն ի ձիգ ձիգ աստիճանսն պալատին՝ դահիճքն, ըստ հրամանի փաշային՝ մի մի կոտորեալ արկին ի ծով»[1]։ Ապա փաշան հրամայում է կոտորել հայերին։ «Զծերս և զտղայս, զարս և զկանայս, սրոյ ճարակ եւտուն, և զարիւնս նոցա յերկիր յեղեալ իբրև զվտակս գետոց ընթանայր ի փողոցսն։ Անթիւ աղջիկք և մանկունք, մատաղ տղայք գերեալ առաքեցին ի Պօլիս առ սուլթանն»[2]։ Այդ նույն ձեռվով, ավելացնում է պատմիչը, հայերի հետ վարվեցին նաև Կաղարեթ և Սուրխաթ քաղաքներում[3]։

Կաֆան և Սուրխաթը վերցնելուց հետո թուրքական բանակը շարժվում է Սուղդայի վրա։ Տեղի իտալացի, հայ և հույն կռվող ուժերը, համախմբված, հերոսական դիմադրություն են ցույց տալիս թուրքերին և բոլորն էլ ընկնում անհավասար մարտում։

Կաֆայի գրավումը և ավերումը ցնցող տպավորություն է թողել ժամանակակիցների վրա։ 1475 թվականին Երուսաղեմում գրված Սողոմոն գրչի հիշատակարանում կարդում ենք. «Ի թվիս հայոց ՉԻԴ (1475), յորում գրեցաւ սուրբ աւետարանս, առին զկաֆան տաճիկն և արարին բազում գերութիւնս և աւերումն, և եղև յոյժ տրտմութիւն և սուգ քրիստոնէիցս»[4]։

Թուրքերը, ինչպես երևում է, կողոպտել են ո՛չ միայն բնակչության գույքը, այլև վանքերում եղած ձեռագրերը։ Կաֆայում թալանված մի ավետարան թուրք զինվորների կողմից վաճառքի է հանվել Պոլսում։ Ձեռագիրը գերությունից ազատող բարերարը հետևյալ հիշատակագրությունն է թողել. «Ի թվականս ՉԻԴ (1475) յունիս ամսոյ Զ (6), իսմայիլացիքն առին զկաֆայն և գերեցաւ սուրբ աւետարանս և բերաւ ի յՀստամպօլ և ես՝ Աւետիքս, գնեցի»[5]։

Թուրքական նման վայրագությունների պայմաններում, հասկանալի է, որ դժվար էր հայերին ապրել թուրք-թաթարական բռնա-

[1] ՀՊՄ, ձեռ. № 7442, թ. 282ա։
[2] Նույն ձեռագրում,
[3] Նույն ձեռագրում։
[4] Տե՛ս Միաբանք և այցելուք Երուսաղեմի, էջ 475։
[5] ՀՊՄ, ձեռ. № 7831, թ. 295ա։

կալության տակ, ուստի ղրիմահայության մի զգալի մասը, ինչպես հայտնի է, տեղափոխվում է Ուկրաինա, Լեհաստան և Մոլդավիա։

Ղրիմի հայ գաղթօջախները թուրք-թաթարական տիրապետության շրջանում։

Եվ այսպես, 1475 թվականից սկսած, Ղրիմն ընկնում է թուրքական արյունոտ լծի տակ, և նրա գերիշխանության տակ մնում ավելի քան 300 տարի։

Թուրք-թաթարական տիրապետության այս ժամանակաշրջանը հանդիսացել է Ղրիմի պատմության ամենամռայլ շրջաններից մեկը։

Չնայած Ղրիմն ունեցել է իր տեղական խաները, սակայն նրանք վասալական կախման մեջ են գտնվել թուրքական սուլթաններից և հանդիսացել են փաստորեն նրանց կամակատարները, նրանց պաշտոնյաները՝ խանական տիտղոսով։

Սուլթանական կառավարությունը Ղրիմի վրա նայել է որպես հասութաբեր աղբյուրի և ամենևին շահագրգռված չի եղել նրա տնտեսական կյանքի զարգացմամբ։ Ասենք, Թուրքիան ինքն այդ ժամանակ գտնվում էր զարգացման այնքան ցածր աստիճանի վրա, որ ի վիճակի չէր զարգացնել իր սեփական տնտեսությունը, թող թե ուշադրություն դարձներ գաղութների վրա։

Ղրիմը թուրքերի կողմից գրավվելուց հետո, ինչպես տեղի քրիստոնյա բոլոր ժողովուրդներին, այնպես և հայերին թույլ է տրվում ապրելու որպես թուրք-թաթարական խանության հպատակներ։ Ղրիմի հայ գաղթավայրի պատմության հեղինակը խոսելով այդ պայմանի մասին, գրում է. «Ըստ հրամանի սուլթանի թուրքաց և մնացեալ ազգս Հայոց մինչև ցայսօր բնակեմք ի ձեռս թաթար խանին հարկատուղական պայմանիւ»[1]։

1475 թվականից հետո Ղրիմի հայ գաղթօջախները փաստորեն սկսում են կազմալուծվել։ Սև ծովի նավահանգիստները կորցնում են իրենց նախկին միջազգային նշանակությունը և պարփակվում տեղական նեղ շրջանակների մեջ։ Արհեստագործությունը, որ կապված էր տարանցիկ առևտրի հետ, զրկվում է իրացման շուկայից։ Մեկ-մեկ սկսում են հանգչել հայ գրչության երբեմնի ծաղկուն օջախները։

Թուրք-թաթարական իշխանությունները եռանդուն ջանքեր են գործադրում Ղրիմի քրիստոնյա բնակչությանը մահմեդականացնելու ուղղությամբ։ Սկսում են բռնագրավել հայկական եկեղեցիները և այն վերածել մեչիդների։ Ըստ պատմական մի աղբյուրի, կաֆայում գոյություն է ունեցել հայկական 45 եկեղեցի և վանք, որոնցից 16-ը բռնագրավում և մեչիդների են վերածում[1]։

Թուրք-թաթարական իշխանությունները հայերին կրոնափոխ անելու և մահմեդական դարձնելու համար դիմել են ամեն տեսակ կամայականությունների։ Հայ արձակ և չափածո գրականությունն անչափ հարուստ է ղրիմահայ նահատակների վարքագրություններով՝ Աստվածատուրինը, որը սպանվել է 1488 թվականին, Ավետիքինը, որը սպանվել է 1549 թվականին, Պարոն Լուսինը՝ սպանվել է 1567 թվականին և այլն։

Պատմական սկզբնաղբյուրներում պահված տեղեկություններից երևում է, որ ղրիմահայության կյանքում ծանր է եղել հատկապես 1560 թվականի սովը։ Բնական այս աղետի մասին մեզ է հասել վրթաննես գրչի մի տաղը։ Սովն առաջացել է երաշտի պատճառով՝ երկնքից անձրև չի եկել ու երկիրը պտուղ չի տվել։ Սկսվել է այնպիսի սաստիկ սով, որ մարդիկ «գազանաբար զմեռեալս հանէին ուտէին»՝ «ոչ շուն, ոչ կատու թողին, անխտիր զամէնն ուտէին»։ Մարդիկ ծախում են իրենց գույքը՝ հաց գնելու համար։ «Շատ մարդ զյուր որդին ծախեաց՝ թէ՛ թուրքին և թէ թաթարին», ծնողները իրենց երեխաներին այլևս տիրություն չէին անում, վշտացած գրում է հիշատակագիրը[1]։

Տարերային այս դժբախտությունից, իհարկե, օգտվում են մեծահարուստ այն մարդիկ, որոնք հացահատիկ ունեին կուտակած իրենց մառաններում, որոնք իրենց հացը վաճառում են տասնապատիկ բարձր գնով։

Տաղերգուի ակնարկներից երևում է, որ 1560 թվականի սովի հետևանքով խոջաների և մյուս մեծահարուստ մարդկանց չարաշահությունը տեղիք է տալիս տեղի աշխատավորության հուզումների։ Սովի հետևանքով, հայտնում է տաղերգուն, «ամէնն աւազակ եղան, զմիմեանս կողոպտէին» և ավելացնում, որ ըմբոստները չար գազան դարձած, գիշերով ման էին գալիս, «ոչ վանք, ոչ ջաղացք թողին, զմեծատանց տունն թալանեցին»[3]։ Շատերը հարկադրված ծախում են իրենց տունն ու տեղը և գնում են օտարություն։

Թուրք-թաթարական իշխանությունները հարկեր են դնում հայ բնակչության բոլոր խավերի վրա՝ գյուղացիության, արհեստավո-

[1] ՀՊՄ, ձեռ. № 7442, թ. 282բ։

[1] ՀՊՄ, ձեռ. № 2939, թ. 471ա։
[2] ՀՊՄ, ձեռ. № 3081, թ. 119բ—120ա։
[3] Նույն տեղը, թ. 119բ։

րության, առևտրականների, հոգևորականության և այլն։ Ըստ որում, գոյություն չի ունեցել հարկահավաքության շատ ու քիչ սահմանված կայուն մի կարգ։ Կարելի է ասել, որ խաները վերցրել են այնքան հարկ, որքան կարելի է եղել կորզել հարկատուներից։

Ղրիմահայ բնակչության վճարվող հարկատվության մասին հետաքրքիր տեղեկություն է հաղորդում Խաչատուր Կաֆայեցին, որի տարեգրությունից անհրաժեշտ ենք համարում մի քանի մեջբերումներ անել։

«Թուականին ՌՀԶ (1627) ամին բարկութիւն շատ եղև և ծանր խարճ վերցուցին քրիստոնէից»։

«ՌՀԹ (1630) թուականին Կաֆային խարաճն Հասան աղայ անիծածն էառ և շատ չարչարեց զժողովուրդն և զքահանայքն... զամէնն տէֆտէր արաւ... չորս հինգ տարոյ տղաքն խարաճ գրեց»։

1634 թվականի տակ արձանագրված է՝ «...խարաճն եկաւ, հասըլ հարճ (այսինքն՝ եկամտահարկ— Ա. Ա.) կասեն, անունն անիծիծ ու գինքն՝ մարդոյ երեք-երեք ոսկի։ Քրիստոնեայք լացին, ողբացին, թէ ճար չունինք տալոյ... Մեկ դատաւոր կայր... որ անունն ասեն Մուսա օղլի... ան անիծածն էր դատաւոր, էմր չարաւ»։

Այս հարկի կապակցությամբ ժողովուրդը դիմել է իշխանություններին, խնդրել է պակասեցնել, բայց իշխանությունները ոչ մի ուշադրություն չեն դարձրել և բնակիչները, ասում է տարեգիրը՝ «շվար մնացին»[1]։

Թուրք-թաթարական իշխանությունները հարկ են վերցրել Ղրիմի քրիստոնեական բոլոր եկեղեցիներից, այդ թվում և հայկականից։ XVII դարի մի ձեռագիր գրիչ բերել է Կաֆայի 29 եկեղեցիների հարկացանկը, ըստ որի Ս. Սարգիս եկեղեցին պարտավոր է եղել վճարել 19 ոսկի, Ս. Հրեշտակապետաց եկեղեցին՝ 8 ոսկի, Ս. Նիկողոսինը՝ 9 ոսկի, Ս. Հակոբը՝ 3, Ս. Խաչը՝ 2 ոսկի, Ս. Լուսավորիչը՝ 8 ոսկի, Ս. Հարությունը՝ 10 ոսկի և այլն[2]։

Ղրիմը գրավելուց և թաթարական իշխանությունն այնտեղ հաստատելուց հետո, թերակղզին դառնում է յուրատեսակ հենակետ՝ Ռուսաստան, Մոլդավիա և Լեհաստան սիստեմատիկաբար կատարվող ասպատակությունների համար։ Թուրք-թաթարական հրոսակախմբերը գրեթե ամեն տարի խուժում են Ուկրաինա, կողոպտում, ավերում և բնակչությանը հազարներով քշում գերության։

---

[1] Մանր ժամանակագրություններ, հ. I, էջ 213։

[2] ՀՊՄ, ձեռ. № 2939, թ. 471ա։

Բերված գերիներին նրանք Կաֆայում լցնում են նավերը և տանում վաճառելու արևելյան շուկաներում։

Թուրք-թաթարական այս ասպատակությունների ժամանակ ռուս, լեհ և ռումինացի ժողովուրդների դժբախտությունը հավասար բաժանում էին նրանց մոտ ապաստան գտած հայ բնակչությունը ևս։ Նրանք ևս ենթարկվում էին թշնամու կողոպուտին և գերությանը։ Խաչատուր Կաֆայեցին պատմում է, որ թաթարների 1650 թվականին Լեհաստան կատարած ասպատակության ժամանակ գերի բերվածների մեջ գտնվել են երեք հարյուր հայեր[1]։

Հայ գաղթավայրերի պատմության կապակցությամբ հետաքրքիր է այն հարցը, թե ի՞նչ վերաբերմունք է ցուցաբերել Ղրիմի ստվարաթիվ հայ գաղթավայրը Դավիթ-Բեկի և Մխիթար սպարապետի գլխավորած Սյունիքի հերոսամարտի նկատմամբ։

Հարցի պատասխանը մենք գտնում ենք Գ. քահ. Պատկանյանի «Հարիւրամեակ Նոր Նախիջևանի հայաբնակ քաղաքի» ձեռագիր աշխատության մեջ[2], որը գրի է առել 1879 թվականին։ Պատկանյանը, պետք է ասել, շնորհակալ աշխատանք է կատարել. նա ղրիմահայ ծերունիներից հավաքել է այն բոլոր տեղեկությունները, որոնք վերաբերում են մեզ հետաքրքրող հարցին, թեպետ հաղորդվող տեղեկությունների մեջ կան կասկածելի կետեր և որոշ սխալներ։

1722 թվականին հայ վաճառականները տեղեկություն են բերում Ղրիմ, որ Սյունիքում Դավիթ-Բեկի «դրոշակի ներքո հավաքվել են մինչև չորս հարյուր քաջ երիտասարդք, որք սկսել են պարսից դեմ մաքառել»[3]։

Երբ այդ հայտնի է դառել Ղրիմում, գրում է Պատկանյանը, անեցիների «Սրտի մեջ սկսել է արծածել յուրյանց քաջարի վաղընջուց նախնյաց քաջության կայծն և հայրենասիրության բոցն»։ Եվ ահա Ղրիմի գաղթօջախներում սկսում են կամավորներ հավաքել՝ «Պարտ է ազատել հայոց ի ժանյաց գայլոց և այլ գազանաց» գրել՝ «Պարտ է ազատել հայոց ի ժանյաց գայլոց և այլ գազանաց» Նշանաբանով։ Հավաքվում է մի քանի հարյուր հոգի, որոնք, Ս. Կարապետի վանքը ուխտ գնալու պատրվակի տակ, ուղևորվում են Հայաստան։ Կամավորների մի խումբը նավ է նստում Եվպատորիայում, իսկ մյուսը՝ Կաֆայում։ Նրանք հավաքվում են Տրապիզոնում։ Ղրիմահայերը ճանապարհին երբ հասան Անի,— գրում է Պատկանյանը,—«լուռ իջան ձիաներեն և սկսան արտասվոք գետնի վրա ընկնել և յուրյանց կարոտած հայրենյաց հողն համբուրել»...

---

[1] Մանր ժամանակագրություններ XIII—XVIII դդ., էջ 225։

[2] ՀՊՄ, ձեռ. № 8815, թ. 25բ—33ա։

[3] Մեջբերումներն անում ենք նոր ուղղագրությամբ։

բուրել»։ Այնուհետև նրանք գնում են Սյունիք։ Շատ արտառուչ է ներկայացված ղրիմահայերի հանդիպումը Դավիթ-Բեկի և նրա զորաբանակի զինվորների հետ. «Մի այնպիսի տեսարան հանդիսացուցին, որոց նման միայն Հորդանան էր տեսել Երիքովի հանդիպմանն»։

Ղրիմահայ կամավորները տանյակների բաժանված մտնում են Դավիթ-Բեկի զորաբանակի մեջ և մասնակցում Սյունիքի հերոսամարտին։

1725 թվականին ղրիմահայ կամավորները տեղեկություն են ստանում, որ Ղրիմի խանը իմացել է, որ իրենք գնացել են Դավիթ-Բեկին օգնության ու բանտարկել է իրենց բարեկամներից 284 հոգու՝ սպառնալով, որ եթե մինչև երեք ամիս չվերադառնան կամավորները, ապա նրանց հարազատներին բոլորին էլ կսպանի։

Պատկանյանի գրի առած մի տեղեկությունից երևում է, որ 1728 թվականին, Դավիթ-Բեկի մահվանից հետո, տարաձայնություններ են առաջացել Մխիթար սպարապետի և Ավետիք վարդապետի միջև։ «Այս տարաձայնությունների ժամանակ խրիմաբնակ անեցի հայերն մնացին Մխիթարին հավատարիմ»։

Մխիթար սպարապետի սպանությունից հետո, վերջացնում է Պատկանյանը իր հավաքած տեղեկությունների շարադրանքը, «Խրիմահայ հեծելազորքն ցրիվ եկեան»։

Ղրիմի տնտեսական կյանքը նորից շատ ու քիչ բնականոն վիճակ է ընդունում XVI դարի 70-ական թվականներից սկսած, երբ նորից է սկսվում գործուն առևտրական հարաբերություններ Արևմտյան և Արևելյան երկրների միջև և Ղրիմը մասամբ վերականգնում է իր կորցրած դիրքը տարանցիկ առևտրում։ Նրա հարավային նավահանգիստները նորից սկսում են միջազգային խոշոր կենտրոն դառնալ Թուրքիայից, Պարսկաստանից և Հնդկաստանից եկող առևտրականների համար։ Ապրանքներ են սկսում բերել և փոխանակել նաև Ուկրաինայից, Լեհաստանից, Ռումինիայից և այլ վայրերից։

Ղրիմահայ երբեմնի խամրած գրչության օջախները նորից սկսում են կենդանանալ։ Նախկին ողբերգի փոխարեն լսվում է նորից գովեստի խոսքեր Ծովհայաց Կաֆայի և Ղրիմի այլ քաղաքներիբարեկեցության մասին։ Մեզ են հասել Կաֆա քաղաքին նվիրված մի քանի տաղեր՝ Ստեփանոսի «Գովասանություն ի վերայ Կաֆայ քաղաքին», Մարտիրոսի «Տաղ ի վերայ Կաֆայ քաղաքին ասացեալ վասն ուրախութեան» և այլն։ Կաֆան սկսում են համեմատել «Մեծ Հռոմի, Ըստամպոլի, Շամի, Համիթի և Եգիպտոսի» հետ՝ նշելով, որ նավերը հազար բարիք են բերում Կաֆա։ Մարտի-

քան Ղրիմեցին իր ժամանակվա Կաֆան համարում է «Հայոց տուն», որի ձայնը, «ընդհանուր երկիրը կերթայ»[1]։ Նրա ասելով, Ղրիմում և մերձակա վայրերում ապրող հայերը, «ճոխ են», բարեկեցիկ և նախկին ողբի փոխարեն «ամեն մարդ կը խնդայ»։ XVII դարի ժամանակագիր Խաչատուրը Կաֆան և նրա շրջապատը համարում է այնպիսի մի վայր, ուր «բըղխէ զկաթն և զմեղրն»։ Խաչատուրի այս տեղեկությունն անշուշտ ունևոր խոջայական շրջանին է վերաբերում և ոչ ընչազուրկ աշխատավորությանը։

XVII դարի առաջին քառորդում Ղրիմի հայ գաղթօջախները ամայանում են Հայաստանից, Պարսկաստանից և Թուրքիայից եկած նոր գաղթականներով։ Թուրքիայում՝ ջալալիների, իսկ Հայաստանում՝ Շահաբասի բռնագաղթի հետևանքով բավականին քիվով հայեր անցնում են Սև ծովը և ապաստանում Ղրիմի հայ գաղթօջախներում, իրենց հայրենակիցների մոտ։

Այս խմբի գաղթականության ներկայացուցիչներից մեկն է տաղերգու Ստեփանոս Թոխաթեցին, որն իր ընդօրինակած ձեռագրի հիշատակարանում հայտնում է. «Գրեցի ի դառն և դըժար ժամանակիս, որ յետ ճալալի և եաղի Ղարայ Եազճան Ղարադաղ պօլուկ պաշին եկաւ, կրկին էրեց և աւերեց զԹօխաթ, և ամենեքեան ելաք փախստական եկաք ի յաստուածաշէն և տիրախնամ մայրաքաղաքն ի Կաֆա»[2]։

Ղրիմի հայ գաղթօջախները սակայն XVII դարում ևս բարենպաստ պայմաններում չեն գտնվել։ Ղրիմահայերը քիչ տառապանքներ չեն տեսել խանական իշխանությունների կողմից։ Խաչապեկ գրիչը 1643 թվականին Ղարասուում գրած իր հիշատակարանում գանգատվում է, որ ինքը ձեռագիրը գրել է՝

«Ի դառնագոյն ժամանակի
Մահմադ Քարայ թաթար խանի,
Պատճառելով ինչ պատճառի,
Յոյժ կողոպտին ազգն հայի...»[3]։

1648 թվականին Ղրիմում մեծ համաճարակ է սկսել, որից շատ երեխաներ են մահացել։ Ավետիք գրիչը իր հիշատակարանում վշտով պատմում է, որ այնքան երեխաներ մահացան, որ հայրերն առանց որդի մնացին. մատղաշ երկու երեխա մեկ դագաղի մեջ էին գնում, և «ոչ կայր տուն առանց լացի»[4]։

1 ՀՊՄ, ձեռ. № 3081, էջ 109ա—109բ։
2 ՀՊՄ, ձեռ. № 7744, թ. 180բ։
3 ՀՊՄ, ձեռ. № 1558, թ. 393ա—395բ։
4 ՀՊՄ, ձեռ. № 7524, թ. 333բ—334ա։

Մինչև 1774 թվականը՝ Քուչուկ-Կայնարջիում կնքված պայմանագիրը, Ղրիմի խաները շարունակում են վասալական կախվածության մեջ գտնվել թուրքական սուլթաններից. գահակալող խանի թեկնածուն սովորաբար հաստատում է Բարձր դուռը։ Դրությունը փոխվում է 1774 թվականից հետո, երբ թուրքական կառավարությունը զրկվում է Ղրիմի ներքին գործերին միջամտելու իրավունքից։ Այժմ Ղրիմն ընկնում է ցարական իշխանության ազդեցության տակ։ Ռուսական իշխանություններն ամեն կերպ աշխատում են տնտեսական ճնշում գործ դնել Ղրիմի վրա, թուլացնել նրան և հող պատրաստել Ղրիմը Ռուսաստանին վերջնականապես միացնելու համար։

Ղրիմի վերջին խանն է հանդիսացել Շահին Գիրեն՝ անկամք մի անձնավորություն, որը խաղալիք է դառնում ռուսաց իշխանությունների ձեռքում։

Ցարական իշխանությունները, ցանկանալով Ղրիմը տնտեսապես սնանկացնել, որոշում են հայ ու հույն բնակչությանը դուրս հանել Ղրիմից։ Եկատերինա կայսրուհին առաջարկում է Շահին Գիրեյին՝ թույլ տալ Ղրիմից դուրս հանելու հայերին, որը և համաձայնվում է։

1778 թվականի ապրիլի 23-ին հայտարարվում է արտագաղթի մասին։ Հայերը թողնելով իրենց սեփական տները, այգիները, իրենց սիրելիների գերեզմանները, երեք խմբով գաղթում են Նոր Նախիջևան։ Առաջին խումբը գաղթում է 1778 թվականի հուլիսի 18-ին, երկրորդը՝ օգոստոսի 20-ին, իսկ երրորդը՝ սեպտեմբերի 28-ին։ Գաղթը կազմակերպում է զորավար Սուվորովը։ Եվ այսպես, ղրիմահայերը գաղթում և բնակություն են հաստատում Նոր Նախիջևանում։

Այս մասին ավելի հանգամանորեն խոսք կլինի Ռուսաստանի հայ գաղթօջախների մասին խոսելիս։

Մշակույթը։ Ղրիմի մարած գաղթօջախները թողել են մեզ ինքնատիպ և բարձրարժեք մշակույթ։ Հայ բնակչությունն ավելի քան երեք դար ապրելով Ղրիմում վերածննդյան առջևից ընթացող ճենովացիների և վենետիկցիների հարևանության մեջ, հաղորդակից է եղել իր ժամանակի եվրոպական առաջադեմ մշակույթին և գաղափարախոսությանը ու այդ լավագույն ավանդույթը կիրառել իր ստեղծագործությունների մեջ։ Ղրիմի հայ գաղթավայրը, փաստորեն, կամուրջ է ձգել միջնադարյան հայ մշակույթի և վերածննդյան գետնի վրա կանգնած եվրոպական մշակույթի միջև։

Ղրիմահայ մշակույթը մինչև այժմ մասնագիտորեն դեռ չի ուսումնասիրված։ Նրա առանձին հուշարձանների մասին միջանկյալ ձևով խոսել են որոշ հնագետներ՝ գլխավորապես իրենց պեղումներից հայտնաբերած ցուցանյութերի կապակցությամբ։ Ճարտարապետական որոշ հուշարձաններ նկարագրել են Ղրիմ այցելած մի քանի զբոսաշրջիկ ճանապարհորդներ։ Ղրիմի գրչության դպրոցների մեկ-երկու ձեռագրի վրա միայն կանգ են առել մանրանկարչության կապակցությամբ։ Այս է պատճառը, որ մինչև այժմ պարզ պատկերացում գոյություն չունի ղրիմահայ մշակույթի մասին, որի նշանակությունը, մեր կարծիքով, դուրս է գալիս ո՛չ միայն գաղթավայրի, այլև՝ հայ մշակույթի սահմաններից ընդհանրապես։

Ղրիմահայ մշակույթի լավագույն հուշարձանները՝ դրանք մեզ հասած ճարտարապետական կոթողներն են, որոնց մի մասը պահպանվել է մինչև այժմ։ Ղրիմի թերակղզում քաջածանոթ անձնավորություններից մեկը՝ Քուշներյանը, խոսելով Ղրիմի հայկական հուշարձանների մասին, գրում է. «Գրեթե ամենայն քայլափոխի կգտանի հին հայերենի հիշատակաց ցանկալի, մանավանդ ցավալի մնացորդաց»[1]։

Ղրիմի հայ ճարտարապետական հուշարձանները՝ գլխավորապես եկեղեցիներ և վանքեր են, որոնց մեծ մասը այժմ օգտվում են ավերակ վիճակում։ Կանգուն միայն մի քանի կոթողներ կան Սուղդայում, Կաֆայում, Խազարեթում և Սուրխաթում, որոնք կենդանի վկաներ են ղրիմահայ ճարտարապետների մեծ վարպետության և գեղարվեստական բարձր ճաշակի։

Աշխարհիկ բնույթի շինարարական հուշարձաններից կարելի է մատնացույց անել Կաֆայի դրսի մեծ պարիսպը, որը կառուցել են տեղի հայերը XIV դարում։ Այդ պարսպի մասին Բժշկյանը հետևյալ տեղեկությունն է հաղորդում. «Այս ամրակուռ բերդ Հայոց շինեցաւ ի կոփածոյ քարանց և ի մեծամեծ վիմաց հանդերձ բազում աշտարակօք ի ձև գոթացի. իւրաքանչիւր աշտարակք հեռի էին ի միմեանց 20, 40 և 60 կանգնաւ։ Ի վերայ պարսպին կային արձանագիրք Հայոց»[2]։ Բժշկյանի հաղորդած մի այլ տեղեկությունից, երևում է, որ հայկական այդ արձանագրությունը տարվել է Պետերբուրգի թանգարանը։

Իր ժամանակի շինարարական աշխատանքների հրաշալի

1 Ք. Քուշներյան, Պատմութիւն գաղթականութեան Ղրիմու, էջ 2։

2 Բժշկեան, Ճանապարհորդութիւն, էջ 333։

նմուշ է հանդիսանում Կաֆայի ջրմուղը, որը կառուցել են տեղի հայերը դարձյալ XIV դարում։ Այդ մի բարդ կառուցվածք է, որը սկիզբ է առնում լեռներից։ Նրանք հատուկ հարմարանքով հավաքել են տեղումների ջրերի ջրամբարների մեջ և խողովակներով բավականին դժվարանցանելի տեղանքով բերել մինչև քաղաք։

Ղրիմահայ վարպետներն իրենց որոշակի կնիքը դրել են կերամիկայի վրա։ Պատմական գիտությունների թեկնածու Ի. Ա. Գոլդշմիդտը ուսումնասիրելով XIII—XV դարերի Ղրիմի կերամիկան, հանգել է հետևյալ եզրակացության. «Ճենովական տիրապետության շրջանում հայերը մեծ ազդեցություն են գործել Կաֆայի կուլտուրայի վրա։ Այդ ազդեցությունն ավելի ցայտուն արտահայտվել է Կաֆայի կերամիկայի վրա, որի զգալի մասը նկարված է հայկական արվեստին բնորոշ զարդերով»[1]։

Ղրիմահայ մշակույթի մեզ հասած հուշարձաններից առաջնակարգ տեղը պատկանում է գրչագրերին։ Սկսած XIV դարի 40-ական թվականներից Ղրիմի թերակղզում հաստատվում են հայ գրչության երեք կարևոր օջախներ՝ Կաֆան, Սուրխաթը և Սուղդան, ուր գրվում և զարդանկարվում են գիտության տարբեր բնագավառներին վերաբերող բազմաթիվ հայերեն ձեռագրեր։ XVII դարում Ղրիմում հիմնվում են հայ գրչության երկու նոր օջախ ևս՝ մեկը Բախչիսարայում, իսկ մյուսը Ղարասուում։

Ահա այս օջախներն են, որ ղրիմահայ գրավոր մշակույթի կենտրոններն են դառնում։

Ղրիմի փոթորկոտ պատմության ընթացքում նշված գրչության օջախներում գրված շատ ու շատ ձեռագրեր, իհարկե, ոչնչացել են, բայց, այնուամենայնիվ, այնտեղ գրված մոտ 500 ձեռագիր մատյաններ հասել են մեզ և ցայտուն պատկերացում են տալիս ստեղծագործական այն մեծ ունակության մասին, որ ունեցել են անցյալում ղրիմահայերը։

Ղրիմահայ գրչության արվեստի ակունքները սկիզբ են առնում պատմական Շիրակից և շատ կողմերով հիշեցնում են քաղաքամայր Անիի հին ավանդույթը։ Եվ այդ հասկանալի է. չէ՞ որ ղրիմահայության զգալի մասը գաղթել է Շիրակից։ Սակայն ղրիմահայ արվեստագետները կառչած չեն մնացել անցյալին, ստրկորեն չեն պատճենահանել հինը, այլ հարստացրել են այն նոր, ավելի գեղեցիկ ու ինքնատիպ ստեղծագործություններով։

[1] Տե՛ս И. О. Гольдшмидт, Каффа генуэзская колония в Крыму в конце XIII—первой половине XV в (автореферат), М-ва, 1952.

Ղրիմահայ գրչության արվեստի բնորոշ առանձնահատկություններից մեկն այն է, որ նրանք գրված են գեղեցիկ ու համաչափ, ազատ են կրոնական միստիցիզմից և ավելի շատ տեղ են տալիս աշխարհիկ և գիտական բովանդակություն ունեցող բնագրերին։

Ղրիմահայ գաղթօջախները տվել են անվանի մի շարք գիտնականներ, տաղերգուներ և ժամանակագիրներ, որոնցից մի քանիսի մասին անհրաժեշտ ենք համարում խոսել։

Ղրիմի հայ մատենագրության աշքի ընկնող դեմքերից մեկն է Հակոբ Ղրիմեցին։ Նա ապրել և ստեղծագործել է XIV դ. վերջերին և XV դ. սկզբներին (մահացել է 1416 թ.)։ Սովորել է Գլաձորի համալսարանում և երախտագիտությամբ է հիշում իր ուսուցչին՝ Գևորգ Երզնկացուն։ Գիտությունների պատմության մեջ հայտնի է որպես խոշոր տոմարագիր։ Մեզ են հասել նրա տոմարական բովանդակությամբ չորս աշխատությունները, որոնցից ծավալունը և ինքնատիպը հանդիսանում է Թովմա Մեծոփեցու հանձնարարությամբ գրած «Մեկնութիւն տոմարի» աշխատությունը, որը մեզ է հասել ավելի քան հարյուր ձեռագիր ընդօրինակություններով։ Օգտվելով Անանիա Շիրակացու և Հովհաննես Իմաստասերի տոմարական աշխատություններից, ժամանակակից հունա-լատինական տոմարագիտական սկզբունքների հիման վրա, նա կազմել է տոմարական հաշվումների համար հանրամատչելի գիտական ձեռնարկ։ Հակոբ Ղրիմեցին հանդիսացել է իր ժամանակի հանճարեղ հռետորներից մեկը. ժամանակակիցները նրան հիշում են որպես «հրեղեն լեզու» ունեցող։

Ղրիմի տարեգրության բնագավառում մեծ վաստակ ունի Խաչատուր Կաֆայեցին, որն ապրել և գործել է XVII դ.։ Նա գրել և մեզ է թողել իր «Տարեգրութիւն»-ը, որը սկսում է 1583 թվականից և վերջացնում 1658 թվականով։ «Տարեգրությունը» հիմնականում պարունակում է Ղրիմի թերակղզում տեղի ունեցող իրադարձությունները, ներքին և արտաքին կռիվները, բնական պատահարները՝ երաշտ, մահտարաժամ, խավարումներ և այլն, հայ գաղթավայրի հասարակական կյանքը, Կաֆայում և այլ քաղաքներում կատարվող առևտուրը և այլն։ Կաֆայեցու այս «Տարեգրութիւնը» պատմական կարևոր սկզբնաղբյուր է ոչ միայն ղրիմահայության, այլև թերակղզու պատմության համար ընդհանրապես։

Ղրիմի հայկական գաղթավայրի գիտական դեմքերից է Մարտիրոս Ղրիմեցին (1620—1680)։ Նա եղել է իր ժամանակի զարգացած մատենագիրներից մեկը։ Նրա աշխատություններից առանձ-

նապես արժեքավոր է «Պատմութիւն Ղրիմայ երկրին» չափածո երկը, որի մասին խոսք եղել է առջևում։ Հայ մատենագրության համար իրենց թեմատիկայով ուշագրավ են նաև նրա զավեշտական տաղերը, ուր հեղինակը ծաղրանքի է ենթարկել դրամաշորթ, ագահ ու բարոյապես ընկած անձնավորություններին։

Մեծ թիվ են կազմում ղրիմահայ տաղերգուները՝ Գրիգոր Կաֆայեցին (XV դ.), Թոմա Կաֆայեցին (XVI դ.), Հովհաննես Կաֆայեցին (XVII դ.), Սիմեոն Կաֆայեցին (XVII դ.), Վարդան Կաֆայեցին (XVII դ.) և այլն։

Ղրիմի գաղթավայրի հետ է կապված հայ տաղերգության ականավոր դեմքերից մեկը՝ Ստեփանոս Թոխաթեցին (1558—1623)։ Նա Կաֆայում երկար ժամանակ զբաղվել է ուսուցչությամբ և գրչությամբ։ Նրա «Գովասանութիւն Կաֆայի քահանայից» տաղի մեջ շատ դիպուկ տրված է իր ժամանակի այլասերված հայ հոգևորականների խաթարված պատկերը։ Բերենք այդ տաղից միայն երկու քահանաներին տրված բնութագիրը.

Սարգիս քահանային.

«Ո՞վ դու Սարգիս, դու գրագիր,
Կարճ ու բոլոր, լաւ ու ընտիր,
Ըռախին (այսինքն՝ օղին.—Ա. Ա.), գինին ի կուլ
տայիր,
Հանգչի հոգիդ փառաւորիր»։

Հակոբ քահանային.

«Իսկ տէր Յակոբն բարձրակալ,
Որ մականուամբ է Ալաճա,
Յորժամ գոռայ, զբերանն բանայ,
Շատ ոք վախի՝ թէ կուլ կու տայ»[1]։

Ղրիմի լավագույն տաղերգուներից է Խասպիկը (1610—1686)։ Կաֆայում աշխատել է իբրև ուսուցիչ, գրիչ և ծաղկող։ Ժամանակակիցները նրան համարում են «Փիլիսոփայ ներհուն» և «Բնածին միտք»։

Վերածնվող նոր արվեստի գեղեցիկ նմուշներ կարելի է տեսնել Ղրիմի հայ մանրանկարիչների նկարչության և զարդանկարչության մեջ։ XIV—XV դարերում ղրիմահայ գաղթօջախները տվել են մանրանկարչության այնպիսի ականավոր վարպետներ, ինչպիսին՝ Տեր-տեր Երևանցին, Նադրը, Ավետիսը, Կարապետը, Օգսենտը, Քիստոսատուրը, Հովհաննեսը, Մաղաքիան, Առաքելը և տասնյակ ուրիշներ։

Սուրխաթ և Կաֆա քաղաքներում սկսած XIV դարից վանքերին կից գոյություն են ունեցել դպրոցներ, ուր դասավանդվել են ևալ կյանքի հետ կապված այնպիսի առարկաներ, ինչպիսին երաժշտությունն է, մանրանկարչությունը և գրչության արվեստը։ XV դարում գրված քերականական բովանդակությամբ մի ձեռագրի հիշատակարանում գրչության արվեստը չգիտցող մարդը համեմատված է անվարժ մսագործի հետ, իսկ ձեռագիրը չգնահատողը՝ անբանի խոզի[1]։

Ղրիմահայ գրիչների մեծ մասն սովորություն է ունեցել հիշատակարաններում երախտագիտությամբ հիշելու իրենց ուսուցիչներին, և այդ հիշողությունների հիման վրա դժվար չէ կազմել ղրիմահայ ուսուցիչների ժամանակագրական ցանկը։ XIV դարի երեսնական թվականների գրիչներն առանձնապես մեծ ակնածանքով են հիշում իրենց ուսուցիչ Սարգսին, որը ոչ միայն նոր շենքեր է կառուցել, այլև «դասատուն կարգեաց» և «աշակերտօք զարդարեաց»։

Ղրիմի հայկական նոր ժամանակի լավագույն դպրոցներից մեկի՝ Ղարասուբազարի հայկական դպրոցն է հանդիսացել, որի մասին հետաքրքիր տեղեկություններ է հաղորդում Մ. Բժշկյանը։ «Յասմ ուսումնարան,—գրում է նա,—ուսանին մանկունք ո՛չ միայն գրագրութիւն և ուսումնականութիւն հայերէն, այլև ռուսերէն, գաղիերէն, արաբերէն, և այլն»[2]։ Ուշագրավ է այդ դպրոցի ցուցատախտակի վրա գրված առաջին երկտողը։

«Ճեմարան պայծառ վայելուչ տեղի,
Վայր իմաստութեան բազմաց ցանկալի...»[3]։

Ղրիմի հայ գաղութի հնագույն պատմության հետ կապված բացառիկ արժեք է ներկայացնում Հայկ. ՍՍՌ պետական մատենադարանի ութ նկարիչների կոչվող նշանավոր ձեռագիրը, որն ունեցել է թափառումների ուշագրավ պատմություն։ Այս ձեռագիրը, որը գրվել է Կիլիկիայում, Հայրապետ գրչի կողմից, Օշին թագավորը 1320 թվականին նվեր է տվել Սեբաստիայի Ստեփանոս եպիսկոպոսին։ Ձեռագրի մանրանկարչությունը գտնվել է Թերավարտ վիճակում. Ստեփանոս Սեբաստացին 1300 դրամ է տվել Սարգիս Պիծակին՝ հայ մանրանկարչության այդ խոշոր վարպետին, և նրա

[1] Մարտիրոսյան, Մարտիրոս Ղրիմեցի, էջ 50։

[1] Ն. եպ. Պողարյան, Յուցակ ձեռագրաց Երուսաղեմի, հ. III, էջ 116։
[2] Մ. Բժշկեան, Ճանապարհորդութիւն, էջ 252։
[3] Նույն տեղում։

ու նրա աշակերտների ջանքերով լրացրել մանրանկարչությունը։ Ստեփանոս եպիսկոպոսը ձեռագիրը բերել է Սեբաստիա։ Այստեղ հալածվելով, փախել է Կաֆա՝ իր հետ տանելով նաև ձեռագիրը։ «Փախստական յայլազգեաց, եկի ի մայրաքաղաքն ի Կաֆա, կացի յոլով ժամանակս ինչ և դառնամ և դրունս մեր Հայրենի»,—գրում է հիշատակագիրը[1]։

Վերադառնալիս նա ձեռագիրը հիշատակ է թողել Կաֆայի հայ համայնքին։

Ղրիմի գաղթի ժամանակ, 1778 թվականին, այս ձեռագիրը բերվել է Նոր Նախիջևան, իսկ այնտեղից էլ՝ սովետական իշխանության տարիներին, տեղափոխվել Երևանի պետական մատենադարան։ Հանգուցյալ ակադ. Հ. Աճառյանն իր «Հայոց անձնանունների բառարան»-ում, խոսելով այս ձեռագրի և նրա թափառումների տխուր պատմության մասին, հետևյալն է գրել. «Այս մի ձեռագիրը պատկերն է հայ ազգի ճակատագրի. աշխատանք, արվեստ, գիտություն, ապա հարստահարություն, փախուստ, գաղթ երկրից երկիր, ի վերջո ներգաղթ դեպի մայր երկիրը։ Գնացի տեսա այս ձեռագիրը (№7651), գուրգուրանքով համբուրեցի նրա ճակատը մեր բոլոր տարագիր հարազատների անունից և մաղթեցի, որ նրանք էլ մի օր արժանի լինեն հայրենի արևը վայելելուն»[2]։

---

[1] ՀՄՄ, ձեռ. № 7651, թ. 270ա։

[2] Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. IV, էջ 638։

ԼԵՀԱՍՏԱՆԻ ՀԱՅ ԳԱՂԹԱՎԱՅՐԸ

Աղբյուրները և գրականությունը:

Լեհաստանի հայ գաղթավայր ասելով մենք, հիմնականում, նկատի ունենք Գալիցիայում (Չերվոննի Ռուսիայում) գտնվող հայկական գաղթօջախները։ Գալիցիան, ինչպես հայտնի է, իր պատմության ընթացքում գտնվել է տարբեր տիրապետությունների տակ. սկզբում նա հանդիսացել՝ է ռուսական իշխանների տիրույթը և մտել է Ուկրաինայի մեջ, 1349—1352 թվականներին, կազիմիր II-ի կողմից նա նվաճվելուց հետո անցել է Լեհաստանին և ավելի քան հինգ դար շարունակ պատկանել է լեհական իշխանությանը. XIX դարում, կարճ ժամանակով, գտնվել է ավստրիական տիրապետության տակ, իսկ նոր ժամանակներում միացվել Ուկրաինային։ Գալիցիայի մեր ուսումնասիրած շրջանն ընդգրկում է Լեհաստանի տիրապետության ժամանակաշրջանը, ուստի մենք անվանել ենք «Լեհաստանի գաղթավայր»։

Պետք է ասել, որ լեհահայ գաղթավայրի պատմության ուսումնասիրությունը ունի գիտական բացառիկ կարևորություն ո՛չ միայն այն պատճառով, որ լեհահայ պատմությունը հանդիսանում է նաև հայ-լեհական և հայ-ուկրաինական ժողովուրդների հարաբերությունների պատմություն, այլ որ պատմական Գալիցիայի հայ գաղթօջախներն են հանդիսացել այն կենտրոնները, ուր վաղ անցյալում ծնունդ են առել և հետագա դարերի փորձությունների բովում թրծվել ու ամրացել հայ ժողովրդի բարեկամությունը ուկրաինացի և լեհ ժողովուրդների հետ։

Լեհահայ գաղթավայրի պատմական աղբյուրները բավականին հարուստ են և բազմակողմանի։ Բացի լեհահայերի թողած հա-

րուստ մատենագրությունից, մեզ են հասել լեհահայերի մասին եվրոպական ճանապարհորդների և քաղաքական գործիչների որոշ մեմուարներ, աշխարհագրական-տեղագրական նկարագրություններ, կրոնա-դավանական պոլեմիկ աշխատություններ, դիվանագիտական գործակալների և եկեղեցական գործիչների ծավալուն զեկուցագրեր և այլն։ Այս ամբողջ նյութերի բիբլիոգրաֆիան, աղբյուրագիտական լուրջ վերլուծումներով, վերջերս հրատարակեց գիտական աշխատող Յա. Ռ. Դաշկևիչը՝ «Ուկրաինայի հայ գաղութները XV—XIX դարերի աղբյուրներում և ուսումնասիրություններում» (ռուսերեն լեզվով) պատմական արժեքավոր իր ակնարկի մեջ։ Դաղթավայրի պատմության աղբյուրների և գրականության մասին մասնակի տեղեկություն տալու նպատակով, այնուամենայնիվ, ավելորդ չենք համարում կանգ առնել հայկական արժեքավոր աղբյուրների և գաղթավայրի պատմությանը նվիրված մի քանի կարևոր ուսումնասիրությունների վրա։

Ուկրաինայի, ինչպես և Լեհաստանի, հայ գաղթավայրերի պատմության արժեքավոր սկզբնաղբյուրներից մեկը այդ Ղ. Ալիշանի կազմած «Կամենեց. տարեգիրք հայոց Լեհաստանի և Ռումենիոյ» խորագրով պատմական նյութերի հարուստ ժողովածուն է, որը լույս է տեսել Վենետիկում 1898 թվականին։ Ժողովածուի մեջ մտել են Հովհաննես Ավագերեցի ժամանակագրությունը (1430—1611 թթ.), Հակոբ և Օգսենտի (Հովհաննես Ավագերեցի թոռները) հայատառ թաթարերեն ժամանակագրությունը (1621—1624 թթ.), Ստեփանոս Ռոշքայի ժամանակագրությունը (1350—1730 թթ.), կաթողիկոսական մի շարք կոնդակներ՝ սկսած 1365 թվականից, բազմաթիվ ձեռագրական հիշատակարաններ և հիշատակագրություններ ու պատմական այլ նյութեր։

Լեհահայերի պատմության կարևոր աղբյուրներից է XVII դարի հեղինակ Սիմեոն Լեհացու «Ուղեգրութիւն»-ը, որը հրատարակել է Հ. Ն. Ակինյանը Վիեննայում 1936 թվականին։

Լեհահայերի գաղթօջախների մասին պատմական արժեքավոր տեղեկություններ կան Լեհաստանում գրված հայկական ձեռագրերի հիշատակարաններում, որոնց մեծ մասը չի հրատարակված։ Հիշատակագիրները ժամանակակից իրադարձությունների ճշմարտացի գրանցողներն են, ուստի նրանց հաղորդած տեղեկությունները մեծ մասամբ պատմական վստահելի աղբյուրներ են հանդիսանում։

Պատմական բացառիկ արժեք ունեն Լվովի, Կամենեցի և այլ գաղթօջախների հայկական դատավարական գործերը, որոնք գրված են հայերեն, լատիներեն, ղպչաղերեն և լեհերեն լեզուներով։ Այդ նյութերի մեծ մասը հասել է մեզ և այժմ պահվում է Լվովի և այլ քաղաքների արխիվներում։ Այդ վավերագրերի առաջին խմբի մեջ մտնում են լեհական թագավորների հայերեն տրված շնորհագրերը՝ ինքնավարության, առևտրի, համքարական կազմակերպությունների և այլ խնդիրների վերաբերյալ։ Երկրորդ խումբ վավերագրերը վերաբերում են հայկական վույթերի դատավարությանը և կայացած որոշումներին։ Այս նյութերը կարևոր են առանձնապես լեհահայ համայնքների ներքին կյանքի ուսումնասիրության համար։ Երրորդ խումբ վավերագրերը վերաբերում են հայ առևտրականներին և արհեստավորներին։ Առանձին խումբ են կազմում լեհական բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորող հայ ուսանողության և հայ մշակույթի մասին եղած վավերագրերը։

Գաղթավայրի մասին արժեքավոր նյութեր է հրապարակված Ի. Վ. Ձախարիասևիչի (1770—1845) կողմից։ Վերջինս ազգությամբ լեհահայ է։ Եղել է Լվովի մեծագույն գրադարաններից մեկի վարիչը և Ցրանց Յոսիֆի անվան համալսարանի ռեկտորը։ Եվ ահա, իր պատմագիտական աշխատությունների մեջ նա հատուկ տեղ է հատկացրել իր ազգակիցների պատմությանը։ Նրա ուսումնասիրություններից արժեքավոր է մասնավորապես «Տեղեկագիր Լեհաստանի հայերի մասին» խորագրով աշխատությունը։

Լեհահայ գաղթավայրի վերաբերյալ փաստական որոշ նյութեր է պարունակում Ալոյիսիոս Պիդուի (1638—1717) «Կարճառօտ տեղեկութիւնք զարդի վիճակէ, զսկզբանէ և ծաւալմանէ առաքելական քարոզութեանն առ Հայս Լեհաստանի, Վալախիոյ և մերձակա աշխարհաց» վերնագիր կրող աշխատությունը։ Պիդուն կաթոլիկ քարոզիչ էր։ Լեհաստան է ուղարկվել Վատիկանի կողմից՝ կաթոլիկությունը լեհահայերի մեջ ամրացնելու նպատակով։ Նշված աշխատությունը լեհահայերի մեջ ամրացնելու նպատակով։ Նշված աշխատությունը փաստորեն հանդիսացել է նրա՝ Հռոմի պապին ներկայացրած պաշտոնական զեկուցագիրը՝ լեհահայերի անցյալի պատմության և առկա վիճակի մասին։

Լեհաստանի հայ գաղթօջախների մասին պատմական արժեքավոր նյութեր են հրատարակված Մինաս Բժշկյանի «Ճանապարհորդութիւն ի Լեհաստան» խորագրով աշխատության մեջ, որին մենք անդրադարձել ենք ղրիմահայ գաղթավայրերի պատմության կապակցությամբ։ Հեղինակը XIX դարի սկզբներում ճանապարհորդել է Լեհաստանում և Բալկանյան երկրներում, ծանոթացել տեղի հայ գաղթօջախների կյանքի հետ և նշված աշխատության մեջ զետե-

ղել ո՛չ միայն իր տպավորությունները, այլև այդ գաղթավայրերի մասին իր հավաքած պատմական նյութերը։

Լեհաստանի հայ գաղթավայրի պատմության մեղվաջան ուսումնասիրողներից է հանդիսացել Սադոկ Բարոնչը (1814—1892), որի գիտական վաստակը վերջերս պատշաճ գնահատեց ակադեմիկոս Ի. Պ. Կրիպյակևիչը[1]։

Սադոկ Բարոնչը Ստանիսլավի չքավոր հայ ընտանիքի զավակ է։ Ավարտել է գիմնազիան և զբաղվել ուսուցչությամբ։ 1831 թ. մտել է Լվովի համալսարանը և ձեռնադրվել կաթոլիկ քահանա։ Շուտով սակայն նա մեծ հիասթափություն է ապրել։ «Իմ դասի պարտականությունները կտրեցին ինձ իմ ամենասիրելի զբաղմունքից,— դժգոհում է նա,— դաժան ճակատագիրը կամայականորեն ինձ նետել է այս ու այն կողմ և հարկադրել գործել կամքիս միանգամայն հակառակ ուղղությամբ»։ 1848 թ. Ավստրիայի բուրժուական ռևոլյուցիայի ժամանակ նա ընտրվել է Ազգային խորհրդի նախագահ և կարգվել համաշխարհային դատավոր Տիսմենցա քաղաքում։

Սադոկ Բարոնչն անչափ մեծ ջանք և եռանդ է գործադրել ուսումնասիրելու լեհահայ իր ազգակիցների պատմությունը։ Տիրապետելով ավելի քան յոթ լեզուների, նա արխիվներից և հրատարակված գրականությունից հավաքել է այն բոլոր տեղեկությունները, որոնք վերաբերում են լեհահայերին. հրատարակել է ավելի քան 60 ուսումնասիրություն, որոնք, հիմնականում, ամփոփել է իր երկու աշխատությունների մեջ՝ «Լեհահայ ականավոր հայերի կենսագրությունները» (լույս է տեսել լեհերեն, 1852 թ.) և «Ուրվագիծ հայոց պատմության» (լույս է տեսել դարձյալ լեհերեն, 1869 թ.)։ Առաջինը կազմված է բառարանի ձևով և ընդգրկում է XIV—XIX դարերի 300 աչքի ընկնող լեհահայերի կենսագրությունները, իսկ երկրորդի մեջ նա ընդարձակ տեղ է հատկացրել Լեհաստանի 33 գաղթօջախների պատմությանը՝ յուրաքանչյուրի պատմության վերջում զետեղելով գրականության բիբլիոգրաֆիա։

Բարոնչի նշված աշխատությունները փաստական հարուստ նյութ պարունակելով հանդերձ, ունեն աշքառու թերություններ. գլխավոր շեշտը նրանց մեջ դրված է «հայ մեծատների» վրա և բո-

[1] Մենք նկատի ունենք Ի. Պ. Կրիպյակևիչի հաղորդումը «Садок Баронч — историк армян бывшей Галиции» թեմայով, որը տպագրվել է «Исторические связи и дружба украинского и армянского народов» ժողովածուի մեջ (էջ 38—47), և լույս է տեսել Երևանում 1961 թ.։ (Այսուհետև այս ժողովածուն հիշելու ենք «Исторические связи» կրճատ վերնագրով)։

լորովին աչքաթող է արված հայ աշխատավորության։ Տեղ-տեղ գունազարդված է ներկայացված լեհահայերի գործունեությունը։

Լեհաստանի հայ գաղթավայրի պատմությանը նվիրված ուշադրավ են երկուսը՝ պրոֆ. Ի. Ա. Լիննիչենկոյի «Լեհաստանի և արևմտյան-հարավային Ռուսիայի հայերը», որը հայերեն թարգմանությամբ լույս է տեսել Մոսկվայում 1895 թվականին, և վրացական կիրիոն եպիսկոպոսի «Ռուսահայաստանի հարավ-արևմտյան հայերի գաղութացումը» (ռուսերեն), որը հրատարակվել է Կամենեց-Պոդոլսկում 1903 թվականին։

Սովետական գիտնականներից լեհաստանի հայկական գաղթավայրի պատմության վրա կանգ է առել Հայկ. ՍՍՌ ԳԱ թղթակից-անդամ պրոֆ. Լ. Մելիքսեթ-Բեկը իր երկու աշխատություններում՝ «Հին Ռուսաստանը և հայերը» (լույս է տեսել ռուսերեն, Երևանում, 1940 թվականին) և «Հայ-ռուսական հարաբերությունների պատմությունից» (լույս է տեսել Հայկ. ՍՍՌ ԳԱ «Տեղեկագրի» 1952 թ. №4-ում)։

Այդ գաղթավայրին նվիրված նորագույն ուսումնասիրություններից է պատմ. գիտությունների դոկտոր Լ. Խաչիկյանի «Հայկական գաղթավայրերը Ուկրաինայում XVI—XVII դարերում» աշխատությունը (լույս է տեսել Հայկ. ՍՍՌ ԳԱ «Տեղեկագրի» 1954 թ. №4-ում), ուր գիտական շրջանառության մեջ է դրվել լեհահայ գաղթավայրին վերաբերող ձեռագրական նոր նյութեր։

Վերջին տարիներս Ուկրաինայի ՍՍՌ և Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիաների պատմության ինստիտուտների նախաձեռնությամբ կազմակերպվել են գիտական սեսիաներ՝ նվիրված հայ-ուկրաինական ժողովուրդների դարավոր բարեկամությանը, ուր լսվել են արժեքավոր զեկուցումներ Ուկրաինայի և Լեհաստանի հայ գաղթօջախների մասին։ Հայկ. ՍՍՌ ԳԱ պատմության ինստիտուտի կողմից առանձին ժողովածուով 1961 թվականին հրատարակվել է միացյալ առաջին սեսիայի նյութերը՝ «Ուկրաինական և հայ ժողովուրդների պատմական կապերը և բարեկամությունը» խորագրով։ Նշված ժողովածուի մեջ մտած նյութերից լեհահայ գաղթավայրի պատմության հետ անմիջապես առնչվում են հետևյալ հոդվածները.

1. Ակադ. Ի. Պ. Կրիպյակևիչ, Սադոկ Բարոնչ—հայ պատմաբան նախկին Գալիցիայի (էջ 38—47)։

2. Պրոֆ. Լ. Մելիքսեթ-Բեկ, Հայ-ուկրաինական հարաբերությունների պատմությունից (էջ 48—58)։

3. Պատմ. գիտ. թեկնածու Վ. Ոսկանյան, Հին Ռուսիան և Ուկրաինան հայերի ճակատագրում (էջ 59—91)։

4. Պատմ. գիտ. թեկնածու Վ. Վ. Գրաբովիցկիյ, Հայ գաղթօջախները արևմտաուկրաինական շրջաններում (էջ 92—109)։

5. Պատմ. գիտ. թեկնածու Ե. Ա. Բացկևիչ, Լվովի հայ մշակույթի հուշարձանները (էջ 121—139)։

6. Գիտ. աշխատող Ն. Կ. Կիրովանոս, Հայերը Լվովի կուլտուրական կյանքում (էջ 132—139)։

7. Գիտ. աշխատող Գ. Ս. Սիզոնենկո, Արխիվային նյութեր Լվովի հայ գաղթօջախի վերաբերյալ (էջ 204—209)։

8. Պատմական գիտությունների թեկնածու Վ. Ա. Հակոբյան, Հայկական աղբյուրները Ուկրաինայի և ուկրաինացիների մասին (էջ 210—228)։

Նշված բոլոր հոդվածները լույս են տեսել ռուսերեն լեզվով։ Հոդվածներն աչքի են ընկնում փաստական նյութի հարստությամբ և մեկնաբանված հարցերի թարմությամբ։ Հոդվածագրերը գիտական զգալի ներդրումներ են կատարել լեհահայ գաղթօջախների կենճռոտ պատմության ուսումնասիրության ասպարեզում։

Հնագույն գաղթօջախները։ Հայ հնագույն գաղթօջախները Գալիցիայում հիմնվել են XIII դարում։ Ըստ լեհ պատմիչ Իվան Ալնպիկի հաղորդած տեղեկության, հայերին՝ որպես զինական դաշնակիցների, Գալիցիա է հրավիրել ռուս իշխան Դանիել Ռոմանովիչը (Լվով քաղաքի հիմնադիր Լևոն իշխանի հայրը) և օգտագործել նրանց զինվորական ուժը՝ արտաքին թշնամիների դեմ մղած կռիվներում։

Գալիցիա հրավիրված այդ հայերը, ըստ տեղեկությունների, իրենց կրծքին փակցրած են եղել խաչ և կոչվել են «կշիժակ», որ լեհերեն նշանակում է «խաչակիր»։ Հայ զինվորները, ինչպես վկայում են լեհական պատմիչները, աչքի են ընկել իրենց քաջությամբ և հնարամտությամբ։

Որոշ ուսումնասիրություններում տեղեկություններ են հրապարակել այն մասին, որ իբր 1241 թվականին՝ մոնղոլների դեմ լեհաստան կատարած արշավանքի ժամանակ, Ղրիմի Կաֆա քաղաքից 40 000 հոգուց բաղկացած հայկական մի զորամաս օգնության է եկել Կամեննեցին՝ պաշտպանելու հայությանը մոնղոլական հարձակումից[1]։

[1] И. П. Крипякевич, К вопросу о начале армянской колонии во Львове («ՊԲՀ», 1936, № 3, էջ 163)։

XIII դարում Լեհաստանում հաստատված հայ գաղթօջախները սկսում են անընդմեջ գաղթականություն ընդունել մայր հայրենիքից և հայկական գաղթօջախներից։ Տեղեկություններ կան, որ XIV դարում Լեհաստան է եկել հայ գաղթական երկու խոշոր հոսանք, որոնցից մեկը՝ Մերձվոլգյան երկրներից՝ Ղրիմի վրայով, իսկ մյուսը՝ Կիլիկյան Հայաստանից՝ Թրակիա-Վալախիա-Լեհաստան և կամ Ղրիմ-Լեհաստան գաղթուղիներով։

Հայ գաղթականության հաջորդ մեծ խումբը Լեհաստան է եկել Ղրիմի գաղթավայրից XV դարի վերջին քառորդին. 1475 թվականին, երբ թուրքերը գրավել են Ղրիմի թերակղզին և սկսել իրենց նին սովորական վայրագությունները, ղրիմահայերը մեծ խմբերով գաղթել և հաստատվել են Լեհաստանում։

XIV—XV դարերում Լեհաստան եկող հայ բնակչությունը չի ցրվել, այլ բնակություն է հաստատել խմբերով՝ ստեղծելով մեծ ու փոքր մի շարք գաղթօջախներ։ Ակադ. Ի. Պ. Կրիպյակևիչը խոսելով այդ շրջանի լեհահայ գաղթօջախների մասին, գրում է. «Ուկրաինայում, առանձնապես ներկայիս Ուկրաինական ՍՍՌ արևմտյան շրջանները հայ գաղթօջախների խիտ ցանցով ծածկվեցին, որոնք զգալի դեր կատարեցին ուկրաինական քաղաքների զարգացման գործում»[1]։

Լեհաստանի հնագույն և խոշոր գաղթօջախը գտնվել է Լվով քաղաքում։ (Լվովը հայ մատենագրության մեջ հայտնի է մի քանի անուններով՝ Լվով, Իլով, Լեոպոլիս և Լիմբերգ)։ Այստեղ հայերը բնակություն են հաստատել քաղաքի հիմնադրման ժամանակից։ Տեղեկություններ կան, որ Լևոն Դանիլովիչ ռուս իշխանը, Լվովը կառուցելու համար, մեծ թվով հայ արհեստավորներ է հրավիրել, որոնք և մասնակցել են քաղաքի պարիսպների, ամրությունների և իշխանական դղյակների կառուցումներին[2]։

Լվովի հնագույն գաղթականները բնակություն են հաստատել քաղաքի հյուսիսային մասում, որը կոչվում է Պոդզամչե։ Այդ երեվում է նշված վայրում մնացած «Հայկական գետակ», «Հայկական բաղնիք» հին անուններից[3]։ 1360 թվականուրջ», «Հայկական բաղնիք» հին անուններից[3]։ 1360 թվական-

[1] И. П. Крипякевич, Садок Баронч (տե՛ս «Исторические связи», էջ 38)։

[2] В. В. Гробовецкий, Армянские поселения на западно-украинских землях (տե՛ս «Исторические связи», էջ 94)։

[3] И. П. Крипякевич, К вопросу об армянской колонии во Львове («ՊԲՀ», 1953 թ., № 1, էջ 166)։

«Հայկական»։ (Այս փողոցն իր անունը պահել է մինչև այսօր)։

Հայերի Լվովի հին բնակիչներ լինելու մասին է վկայում լեհական Կազիմիր Թագավորի 1356 թվականի հունիսի 17-ի հրովարտակը, ուր Լվովում ապրող հիմնական բնակիչների թվում հիշվում են նաև հայերը[1]։ Ըստ լեհական ժամանակագրի Ստեփանոս Ռոշքայի տեղեկության, 1303 թվականին կառուցվում է Լվովի «Աթոռակալ» եկեղեցին[2], իսկ հետագայում՝ երեք այլ եկեղեցիներ։ Եթե հավատալու լինենք Բժշկյանի հրապարակած մի հիշատակարանին, դեռևս 1183 թվականին քաղաքում կառուցված է եղել փայտաշեն մի այլ եկեղեցի[3]։

Սիմեոն Լեհացին Լեհաստանի հայկական հնագույն և բնակչաշատ գաղթօջախն է համարում Լուցքը. «Առաջին Լուցքան ՀԾ (800) տուն էր, գեղեր, ագարակներ ունէր և շատ վախճք (կալվածք)»[4]։

Լեհաստանի հնագույն գաղթօջախներից են հանդիսացել Կամենեցը և Յազլովեցը, ուր հուշարձաններ կան կառուցված 1350-ական թվականներից։ Յազլովեցը հայտնի է եղել իր տոնավաճառով, որը բացվել է յուրաքանչյուր տարվա փետրվարի վերջերին։ Յազլովեցը ցրված լեհահայության հանդիպման վայրն է եղել. տոնավաճառի օրերին այստեղ են հավաքվել հայերը արևմտյան գրեթե բոլոր գաղթօջախներից։

Տեղեկություններ կան այն մասին, որ մեծաթիվ հայ բնակչություն է ապրել Սմոդրիչ գետի վրա։ Սրա պարզ ապացույցն այն է, որ այնտեղ գտնվող երկու բնակավայրեր կոչվում են հայկական անուններով՝ մեկը «Вирмени» (Արմյանի), իսկ մյուսը «Вирменки» (Արմյանկի)[5]։

XIV դարի վաթսունական թվականներին այնքան հայություն է կենտրոնացած եղել Լեհաստանում, որ անհրաժեշտ է եղել ինքնուրույն հոգևոր թեմ ստեղծել։ Լեհահայ առաջին թեմական առաջնորդն է եղել Գրիգոր եպիսկոպոսը, որը հատուկ կոնդակով նշանակվել է Մեսրոպ Արտազեցի կաթողիկոսի կողմից 1364 թվականին[6]։

[1] И. П. Крипякевич, К вопросу об армянской колонии во Львове «ՊԲՀ», 1936 թ., № 3, էջ 164։

[2] Ալիշան, Կամենեց, էջ 131։

[3] Մ. Բժշկյան, Ճանապարհորդութիւն ի Լեհաստան, էջ 104։

[4] Սիմէոն Լեհացի, Ուղեգրութիւն, էջ 170։

[5] В. В. Гробовецкий, Армянские поселения... (տե՛ս «Исторические) связи», էջ 94—95)։

[6] Ղ. Ալիշան, Կամենեց, էջ 5—7։

Մեզ է հասել Լեհաստանի թեմին ուղղված հետագա մի քանի այլ կաթողիկոսական կոնդակները ևս՝ Կոստանդին կաթողիկոսինը՝ 1375 թվականից, Թեոդորոս կաթողիկոսինը՝ 1384 թվականից, Հովհաննես կաթողիկոսինը՝ 1410 թվականից և այլն, Կաթողիկոսական այդ կոնդակներում թեմին ենթակա հայաշատ կենտրոններից հիշված են Լվովը, Վլադիմիրը, Լուցկը, Կամենեցը և Զիլնովը։

XIV—XV դարերում լեհահայ թեմական առաջնորդին ենթարկվել են նաև Մոլդավիայի ու Ռումինիայի հայաշատ կենտրոնները՝ Ակկերմանը, Սերաթը, Սչովը, Պոթիշանը և ուրիշներ։

Սսի և Էջմիածնի կաթողիկոսները, հայկական այս թեմի նշանակությունը նկատի ունենալով, աշխատել են սիրաշահել նրա ղեկավարությանը։ Հայկ. ՍՍՌ մատենադարանի սեփականությունն է 1301 թվականին Սսում գրված մի թանկարժեք ձեռագիր, որը 1379 թվականին նվեր է ուղարկված եղել Ռուսաստանի և Լեհաստանի հայության իբրև «Մեծ ընծայ,— ինչպես ասված է ձեռագրի հիշատակարանում,— Հայոց՝ Հռոսաց և Վլախաց աշխարհին»[1]։

Հայ բնակչության գաղթը դեպի Լեհաստան շարունակվում է հետագայում ևս։ Այսպես, XVI դարի վերջերին Ջալալիների ապստամբության և XVII դարի սկզբներին շահ Աբասի բռնագաղթի հետևանքով մեծաթիվ նոր գաղթականություն է գալիս Լեհաստան։ Նորեկները կամ նոր գաղթօջախներ են ստեղծում և կամ ստվարացնում մինչև այդ եղածները։ Պատմական տեղեկություններ ունենք Ուկրաինայի և Լեհաստանի XVI դարի հայ գաղթօջախների մասին, որոնց վրա մեկ առ մեկ կանգ է առել Սարգիս Բարոնյանը իր «Հայոց պատմության ուրվագիծ» աշխատության մեջ։ Բարոնյանի մատնացույց արած գաղթօջախները հետևյալներն են. Բալթա, Վար, Բելզ, Բերեժնի, Բորոկ, Բրոդի, Վարյախ, Վիրմենի, Գորոդենկա, Դուբնո, Ժվանեց, Ժովկվա, Ժուկով, Զամոսցե, Կամենեց-Պոդոլսկ, Զոլչևսկ, Կուտի, Կիև, Լիսեց, Լուցկ, Լվով, Մոգիլև, Օբերտին, Պիտգայցի, Բաշկով, Ստանով, Սնյատին, Ստանիսլավ, Ստուդենիցա, Տիմենիցա, Չերնովիցի, Յազլովեցկ և Յարոսլավ[2]։

XVII դարում նորեկ հայ գաղթականների համար բնակության խոշոր կենտրոն է դարձել Լվովից 15 կիլոմետր հեռավորության վրա գտնվող Զամոսցե քաղաքը, որը 1586 թվականին հիմնել է Լեհաստանի կանցլեր Զամոյսքին։ Ըստ լեհահայ տարեգիր Հովհան-

[1] ՀՊՄ, ձեռ. № 1527, թ. 667բ։

[2] Տե՛ս И. П. Крипякевич-ի վերև նշված հոդվածը (տե՛ս «Исторические связи», էջ 43)։

նես Ավագերեցի տեղեկության, կանցլերը իր քաղաքում բնակվելու համար «կոչեաց զհայ ազգն»[1]։

Լեհական իշխանությունները, պետք է ասել, բարյացակամ վերաբերմունք են ցուցաբերել Լեհաստանում բնակություն հաստատած հայ գաղթականության նկատմամբ. նրանց բնակության վայրեր են հատկացրել, շնորհել են որոշ արտոնություններ, թույլ են տվել կառավարվել իրենց ներքին սովորություններով և այլն։

Հայ գաղթականները իրենց աշխատասիրությամբ, պարզ կենցաղով և օրինակելի վարք ու բարքով, շատ շուտ կարողացել են շահել տեղի լեհ և ռուս ժողովուրդների համակրությունը։ Լեհ պատմիչ Ալմպեկը ցանկանալով տալ լեհահայերի ընդհանուր բնութագիրը, հետևյալ ձևով է ներկայացնում նրանց. «Երիտասարդները՝ աչալուրջ են և անվախ, տղամարդիկ՝ խորամանկ են և փարթամության հետամուտ, ծերունիները՝ դյուրաբորբոք են և հյուրընկալ, օրիորդները՝ կամակոր են և թխադեմ, կանայք փոքր-ինչ պարզունակ են, բայց պառավ հասակում՝ թունավոր»[2]։

Հայերը ինչպես իրենց ապրած մյուս երկրները, այնպես էլ Լեհաստանը, համարել են իրենց երկրորդ հայրենիքը և համեստ ուժումներ կատարել երկրի տնտեսական, հասարակական և մշակութային կյանքում։ Տեղի լեհ ժողովուրդը սիրել և գնահատել է աշխատասեր և ձեռներեց հայ գաղթականներին։ Լեհ գիտնական Ադոլֆ Նովաչինսկին՝ խոսելով հայ գաղթականության Լեհաստանում հաստատվելու և նրա երկրին մատուցած վաստակների մասին, գրում է. «Հայաստանի առաջին անդամահատությունը առաջացնում է գաղթականություն։ Հայ գաղթականները, կերպասի կտորի մեջ ծրարելով հայրենի մի ափ հող, գալիս ու հաստատվում են հարավ Ռուսաստանի, Կովկասի և Կոզակների երկրի մեջ... և պետք է ասել, այսչափ հեռուներից եկած այս հյուրի վրա տեղացիները նայում են որպես «երկրի աղի», որպես չափազանց օգտակար և փափագելի տարրի վրա։ Նրանք գլխավորապես հաստատվում են քաղաքների մեջ, դառնում են Լեհաստանի քաղքենի դասակարգի կորիզը։ Լվով քաղաքը (Լեմբերգը) Լեհաստանի ամենից հայրենասեր կենտրոնը, պատմական այնչափ տակնուվրայության վայրը, իր փայլը մեծավ մասամբ պարտական է հայ գաղթականներին, Կամենեց-Պոդոլսկը մեր հին ամրոցների այս թագուհին, իր ամբողջ համբավը ստացել է այնտեղ հաստատված հայերից։

[1] Ղ. Ալիշան, Կամենեց, էջ 54։

[2] Я. Г. Дашкевич, Армянские колонии на Украине, էջ 44։

Բուկովինիայի և ամբողջ Գալիցիայի մեջ հայ տարրը խոշոր դեր է կատարել սոցիալական և քաղաքական կյանքի, ճարտարարվեստի և մտավոր շարժման մեջ»[1]։

Լեհահայ համայնքների սոցիալական կազմը։

Լեհահայ համայնքները բաղկացած են եղել սոցիալական տարբեր խավերից։ Գաղթօջախների կազմավորման առաջին իսկ շրջանում, հայ աշխատավոր գյուղացու և արհեստավորի կողքին, մենք տեսնում ենք նաև հայ առևտրականին, կալվածատիրոջը, հոգևորականին, վաշխառուին և սոցիալական այլ խավերի ներկայացուցիչների։ Հակոբ կաթողիկոսը լեհահայերին ուղարկած իր 1410 թվականի կոնդակի մեջ հետևյալ սոցիալական դասերն է մատնացույց անում՝ քահանաներ, պարոններ, ավագորդիներ, խոջաներ, պուռճիներ (բուրժուներ), վաճառականներ, տանուտերներ, արվեստագետներ և հողագործներ[2]։

Ցուցանշական այն փաստը, որ լեհահայ համայնքների շահագործող վերնախավերը շատ արագ մերվել են պանական լեհաստանի ավատական իշխող շրջանի հետ և դրվել արտոնյալ վիճակի մեջ, իսկ հայ աշխատավորությունը կապվել է բախտակից լեհ և ռուս աշխատավորության հետ։

Լեհահայ բնակչության հիմնական մասը հանդիսացել է գյուղացիությունը, այսինքն՝ այն խավը, որը Հակոբ կաթողիկոսի վերև հիշված կոնդակում հիշված է սոցիալական խավերի վերջին տեղում՝ «աշխատասէր հողագործներ» անվան տակ։

Հայ գյուղացիությունը կենտրոնացված է եղել գլխավորապես Լվովի և Կամենեցի մոտիկ գյուղերում։ Նա սկզբում գտնվել է ազատ վիճակում, բայց հետագայում կախման մեջ է ընկել կալվածատերերից, իսկ գյուղացիներից ոմանք էլ վեր են ածվել ճորտերի։

Լեհաստանի հայ գյուղացիությունը ընդհանրապես աղքատ վիճակում է գտնվել։ Պիդուն վերև հիշված իր զեկուցման մեջ խոսելով Սնեատի հայերի մասին, որոնց վիճակն անձամբ ուսումնասիրել է, հայտնում է, որ նրանք «աղքատ են յոյժ, զի խաշնարածությիւն կեան ամենեքին»[3]։ Հայ բնակչության մեծ մասի աղքատության մասին է խոսում նաև այն փաստը, որ Լեհաստանի գրեթե բոլոր հայ եկեղեցիներին կից գոյություն էն ունեցել այսպես կոչված «բանկեր»՝ հայ աղքատ բնակչությանն օգնելու նպատակով։

[1] Ժակ դը Մորգան, Հայ ժողովրդի պատմությունը, Պոսթըն, 1947, էջ 369—370 (մեջբերումն արվում է արևելահայ գրական լեզվով)։

[2] Ղ. Ալիշան, Կամենեց, էջ 221։

[3] Ա. Պիդու (տե՛ս «Բռնի միություն», էջ 97)։

Բավականին մեծ թիվ է կազմել նաև հայ արհեստավորությունը, որոնք հաստատված են եղել Լեհաստանի առևտրաշատ կենտրոններում։ Հայ արհեստավորությունը քաղաքային հայ բնակչության մեծամասնությունն է կազմել։ XVII դարի լեհ պատմիչներից մեկը՝ Սեբաստիան Պետրիչին, խոսելով հայերի՝ տնտեսական կյանքում ունեցած մեծ հաջողությունների մասին, նշում է. «Լվովն ընդունեց հայերին իբրև թափառաշրջիկների և մանր առևտրականների, իսկ այժմ նրանք դուրս են անում լեհ ազգին»։ Նա գանգատվում է, որ հայերը «չեն ցանկանում ընդունել մեր սովորությունները, իրար հետ են ամուսնանում և ունեն իրենց գաղտնի հանրապետությունը»[1]։

Լեհ գիտնական Լոզինսկին, որն հանգամանորեն ուսումնասիրել է Լվովի ոսկերչությունը XV—XVIII դարերում, գտնում է, որ «Լվովի ոսկերչության զարգացման համար մենք պարտական ենք հայերին»։ Նա տեղեկություններ է բերում այն մասին, որ Լվովի ոսկերիչների մեջ իշխող դիրքերը գտնվում էին հայ արհեստավորների ձեռքում։ XV դարի սկզբում, գրում է նա, եթե Լվովում գործող 18 ոսկերիչ վարպետներից վեցն է միայն հայ եղել, իսկ մնացածներից մեկը լեհ է եղել, 6-ը՝ գերմանացի, ապա XVII դարի վերջում Լվովում գործող ոսկերիչների կեսից ավելին հայեր են եղել։ Հայ ոսկերիչների թիվը միայն Լվովում հասել է 30-ի[2]։ Անշուշտ, լեհահայերը նման հաջողություններ ունեցել են նաև մյուս քաղաքներում և արհեստագործության մյուս ասպարեզներում ևս։

Սիմեոն Լեհացին խոսելով Լվովի արհեստավորության մասին, հիշում է հետևյալ մասնագիտությամբ արհեստավորների՝ «Թաֆդանճիք, եօրղանճիկ, սախդիանճիք, պօյաճիք, խաւչիք, չեմպերճիք, և ազգի և ազգի ջուլհակք, չատըճիք և այլն, պասմաճիք, ոսկի հալողք, ոսկի ծեծողք նախշայ, այլ և պատկերագործք, նկարագիրք, պատկերահանք, պասմագիրք հանողք Լեհաց, Ըռզաց, և Հայոց»[3]։

Հայ արհեստավորությունը, ինչպես կտեսնենք հետո, իրավունք է ստացել տեղացի արհեստավորության հետ միասին համքարական կազմակերպություններ ունենալ։

Լեհահայ աշխատավորությունը ենթարկվել է շահագործման ինչպես օտար, այնպես և իր ազգակից առևտրական շլյախտչական խավերի կողմից։ Երբեմն հայ աշխատավորների դրությունն այնքան է ծանրացել, որ նրանք ընդվզել են։ Հայտնի է, օրինակ, որ 1660 թվականին Լվովի հայ աշխատավորությունը չի ցանկացել ենթարկվել իր ավագանուն։ Վերջինս բողոքել է արքունիքին։ Լեհական կենտրոնական իշխանությունը կարգադրել է Լվով քաղաքի խորհրդին՝ «անհնազանդ և ապստամբ այն հայերին, որոնք հանդես գալիս իրենց ավագանու դեմ, բանտարկել»[1]։

Մեծ է եղել լեհահայ առևտրականների դերը ևս։ Նրանց հաջողվել է կարճ ժամանակում իրենց ձեռքը վերցնել այսպես կոչված «թաթարական ճանապարհը» և խոշոր դեր կատարել Լեհաստանի տարանցիկ առևտրի մեջ։

Պրոֆ. Ի. Լիննիչենկոն մանրամասն ուսումնասիրելով Հարավային Ռուսաստանի տնտեսական կյանքը միջին դարերում, հետևյալ եզրակացությանն է հանգել. «Հարավային Ռուսիայի քաղաքների միջին շրջանի պատմության մեջ հայերին շատ նշանավոր տեղ է պատկանում։ Առանց որևէ չափազանցության կարելի է հաստատել, որ հարավային Ռուսիայի ամենահռչակված առևտրական կենտրոնները, ինչպիսիք են՝ Լվովը, Լուցկը, Կամենեց-Պոդոլսկը, իրենց հարստությամբ, փարթամությամբ և նշանակությամբ մեծավ մասամբ պարտական են առանձնապես հայերին։ Այս ճարպիկ, աշխույժ և ընդունակ ամենայն ձեռներեցությանց ժողովրդի շնորհիվ էր հատկապես, որ հարավային ռուսաց առևտրական կենտրոնները միջնորդ դարձան Արևելքի և Արևմուտքի վաճառականության մեջ։ Շանոթ լինելով կյանքի պայմաններին Արևելքում, տեղյակ արևելյան լեզուներին, քաջ ճանաչելով հաղորդակցության ճանապարհներին Արևելքում, օժտված անձնական քաջությամբ և զենք շարժելու վարժ, անհրաժեշտ հատկություններ վտանգավոր ուղեգնացություններ կատարելու... Հայերը շատ հին ժամանակներից ձեռնամուխ եղան ցամաքային առևտրին Արևմուտքի և Արևելքի միջև, իսկ իտալական գաղութների անկումից հետո Ղրիմում, բոլոր վաճառականությունը նոքա իրանց հաջողակ ձեռքը ձգեցին»[2]։

Հայերն Արևելք էին տանում մահուդի գործվածքներ, քաթան, թավիշ, սրաքարեր և այլն։ Արևելքից Լեհաստան էին ներմուծում խունկ, պղպեղ, երկնակապույտ թավիշներ, կանանց դամասկյան կերպասներ, բուսորագույն ակնեհյուս դիպակներ, քիշմիրի շալեր,

[1] Я. Д. Дашкевич, Армянские колонии на Украине, էջ 488։
[2] Տե՛ս И. А. Орбели, Избранные труды, Ереван, 1963, էջ 211—212։
[3] Սիմէոն Լեհացի, Ուղեգրութիւն, էջ 168։

[1] В. В. Гробовецкий, Армянские поселения (Տե՛ս «Исторические связи», էջ 99)։
[2] Ի. Ա. Լիննիչենկո, Լեհաստանի և արևմտյան-հարավային Ռուսիայի հայերը, Մոսկվա, 1894, էջ 3։

մետաքսե նուրբ գործվածքներ և այլն։ XIV դարի կեսերին Լվովը սկսում է մրցել Կրակովի հետ՝ տարանցիկ առևտրի մեջ։ Լվովը գտնվում էր հարմար դիրքում, որովհետև այնտեղով էր անցնում Կամենեց-Պոդոլսկի վրայով դեպի Սևծովափնյա գաղութները տանող ճանապարհները[1]։ Հարավային Ռուսաստանում և Լեհաստանում սովորական երևույթ էր տեսնել հայ վաճառականներին արևելյան ապրանքներ վաճառողների դերում, և պատահական չէր, որ մի ամբողջ շարք ապրանքներ կոչվում էին «հայկական»։

XIV դարում հայ առևտրականների իրավունքները, տեղացի լեհ առևտրականների համեմատությամբ, սահմանափակ է եղել։ Այդ ժամանակ հայ առևտրականները իրավունք չեն ունեցել մասնակցելու ներքին առևտրին, իսկ տարանցիկ առևտրի համար պարտավոր են եղել մաքս վճարել։ Սակայն շուտով հայ ճարպիկ առևտրականները ստանում են այդ իրավունքը ևս։ Վլադիսլավ II թագավորը 1402 թվականին հայ առևտրականներին իրավունք է շնորհում մասնակցելու ներքին առևտրին, իսկ Սիգիզմունդ թագավորը իր 1505 թվականի հրովարտակով հայ վաճառականներին ազատում է մաքս վճարելու պարտավորությունից[2]։

Առանձնաշնորհված հայ վաճառականները սկսում են լայն ծավալել իրենց գործունեությունը Լեհաստանի ներքին և տարանցիկ առևտրի ասպարեզում։ Ըստ տեղեկությունների, XVI դարում Լվովում գործող 38 խանութներից 22-ը պատկանելիս է եղել հայերին, 6-ը՝ ռուսներին, 8-ը՝ կաթոլիկներին[3]։ Իսկ ավելի ուշ՝ XVII դարում, Լվովի բոլոր խանութները պատկանել են հայերին, բացառությամբ երկուսից, որոնք նույնպես վաճառված են եղել հայերին, բայց քաղաքի մագիստրատը հրաժարվել է հաստատել վաճառման գործարքները։

Լեհաստանում հայ խոջաներն իրենց ներկայացուցիչներն են ունեցել ժամանակի առևտրաշատ բոլոր աչքի ընկնող կենտրոններում՝ Պոլսում, Զմյուռնիայում, Սպահանում, Մոսկվայում, Ամստերդամում և այլ քաղաքներում։ Սիմեոն Լեհացին խոսելով Լվովի մեծահարուստ հայ վաճառականների մասին, հետևյալն է գրում. «...(Նոքա) վաճառականք են մեծ և անուանիք, ունին և վէբլնի Ստանպօլ, Անկուրի, Սպահան, Մօսքով, Կաանսկա, Պօրթուկալ և այլն։ Կան ի միջի նոցա խոճայք, որ ունին ՅՌ (50000), ԿՌ (60000), ՁՌ (80000) և ՃՌ (100000) դուռուշ կամ աւելի։ Ունին մուլքեր, պաղ ու պաղչանի, պտղատու ծառեր, պարտէզք, բուրաստանք, ծաղկաստան և վարդենիք, այլ և բարձր սարայք դարպասանի և աղբերք յորդաբուղք, և լիճք և մէջն՝ մեծ և լայն, լի ձկամբ, զօր ոմանք և աշտարակք և սարայանի ունին ի վերայ ջրոյն զարմանաշէն»[1]։

Հայ առևտրականների մեջ քիչ չեն եղել նաև վաշխառուները։ Նրանց մեջ գտնվել են դրամատեր այնպիսի մարդիկ, որոնք փոխարինաբար փող են պարտք տվել լեհական թագավորներին՝ Սիգիզմունդ III-ին, Վլադիսլավին և ուրիշների։ Պատկերացնելու համար, թե ինչ հեքիաթային հարստություն ունեցող հայ դրամատերեր են եղել, ցուցանշական է Ս. Բարոնչի բերած հետևյալ փաստը. XVII դարի կեսերին լեհական Վլադիսլավ թագավորը, երբ դիմում է Լվովի մեծահարուստ հայ Քրիստափոր Բերնատովիչին և խնդրում է նրանից 100000 դուկատ փոխարինաբար դրամ տալ, վերջինս հարցնում է թագավորին՝ թե ինչպիսի՞ դրամով է ցանկանում ստանալ նշված գումարը՝ ոսկո՞վ, արծաթո՞վ, թե՞ պղնձով։ Թագավորը պատասխանում է՝ երեքից էլ ցանկանում է, և այդպես նա ստանում է պահանջված գումարը[2]։ Այդ հարստությունն, անշուշտ, կուտակված է եղել ինչպես լեհ, այնպես և հայ աշխատավորության արյուն-քրտինքից։

Մեծահարուստ հայերից ոմանք կալվածքներ են ձեռք բերել և մտել լեհ ազնվականների շարքերը։ Ըստ Պիդուի տեղեկության, «Հայք մեծատուն ոմանք ընկալել են պատիւ ազնուականութեան»։ Սիմեոն Զամոստեցին ևս վկայում է, որ հայ մեծահարուստներից «ոմանք ունէին գիւղք, այլք ագարակ և աւանս»։ Ճորտ կամ կիսաանկախ դրության մեջ գտնվող հայ գյուղացիության մի մասի կալվածատերերը եղել են ազգակից մեծահարուստները։

Լեհահայ վերնախավերից արտոնյալ վիճակում են գտնվել նաև հայ հոգևորականները։ 1566 թվականին Լվովում ընդօրինակված մի ձեռագրի հիշատակագիր հայտնում է, որ Սիգիզմունդ III-ը հատուկ հրովարտակով ազատել է Լվովի հայ քահանաներին բոլոր տեսակի հարկերից և «թարխանութիւն» է տվել[3], այսինքն՝ հարկ չվճարելու արտոնություն է շնորհել։

[1] История Польши в трех томах, т. I, М-ва, 1954, էջ 114։

[2] Տե՛ս F. Bischoff, Urkunde zur Geschichte der Armenier in Lemberg, Wien, 1864.

[3] Տե՛ս Ի. Ա. Լիննիչենկոյի վերև հիշված աշխատությունը, էջ 18։

[1] Սիմէոն Լեհացի, Ուղեգրութիւն, էջ 338։

[2] В. В. Гробовецкий, Армянские поселения (Տե՛ս «Исторические связи», էջ 98—99)։

[3] Ղ. Ալիշան, Կամենեց, էջ 163։

XVI—XVII դարերի լեհահայ հիշատակարաններում բողոքներ կան դրամաշորթ, տգետ, հայրենիք և պատիվ մոռացած հոգևորականության հասցեին։ Ստեփանոս լեհացին իր չափածո մի տաղում հետևյալ ձևով է ներկայացնում բացասական նկարագիր ունեցող լեհահայ այդ քահանաներին.

«Իսկ քահանայք որ ի նմա (այսինքն՝ Լվովում) կան՝
Գոռոզ, յանդուգն, ամբարտաւան.
Ոչ ունեք են նոքա հաւան.
Չտեսի յայլ տեղ սոցա նըման։

Չգիտեն բնաւ սահման ուսման,
Եւ չգիտեն զլեզուս հայկեան.
Եւ զինչ կարդան՝ չիհասկանան.
Եւ գիտողաց վերայ խրոխտանան»[1]։

Այնուհետև նա պատմում է, թե ինչպես հայ եկեղեցականները հավատացյալների մեջ ընկած անվերջ փող են հավաքում, քիչ ուղղներին բամբասում, պախարակում, իսկ հավաքած միջոցներով «կուտեն, կխմեն, կուրախանան»։

Լեհահայ թվարկված սոցիալական խավերի մեջ, ինչպես ասացինք, մեծամասնությունն էին կազմում գյուղացիները և արհեստավորները։ Գաղթավայրերի պատմության անտեղյակության արդյունք կարելի է համարել հայ և օտարազգի այն պատմաբանների պնդումները, որոնք լեհահայերին փորձում են ներկայացնել որպես համատարած առևտրականների՝ մեծահարուստ մի քանի խոջաների թիկունքում չտեսնելով շահագործվող, ընչազուրկ բազմահազար հայ աշխատավորությանը։

Հայերի ներքին ինքնավարությունը և կպմակերպությունները։

Լեհաստանի հայաշատ բոլոր մեծ համայնքները ներքին գործերում ինքնավար են եղել։ Նրանք ունեցել են իրենց սեփական դատարանը և իրավունք են ունեցել անգամ մահվան դատավճիռ կայացնել։

Լեհահայերն ինքնավարության իրավունքն առաջին անգամ ստացել են Կամենեց քաղաքում 1350 թվականին։ Ստեփանոս Կամենեցի ժամանակագրության մեջ այդ մասին հետևյալն է ասված. «1350 Հայք կամենացիք յայսմ ամի սկսան ի ձեռն բրիվիլեկաց թագաւորացն լեհաց. զդատարանս առնել. մինչ զի կարող եղեն և

[1] Ղ. Ալիշան, Կամենեց, էջ 202։

վմահապարտսն մեռուցանել, առանց հրամանի թուլլատվութեան լեհաց»[1]։ 1350 թվականին ինքնավարության իրավունք են ստացել նաև Լվովի ու լեհահայ մյուս հայաշատ համայնքները։

Հետաքրքիր տեղեկություններ են պահպանվել հայկական այն կազմակերպությունների մասին, որոնք ղեկավարել են ինքնավարությունները։

Ինքնավարության գերագույն մարմինը հանդիսացել է ավագների խորհուրդը, որը կազմված է եղել 40 հոգուց և կոչվել է «Քառասուն եղբարց խորհուրդ»։ Այդ խորհրդին լատիներեն անվանել են «Seniores consilii armenorium»։ Խորհուրդի անդամ ընտրվելու իրավունք են ունեցել միայն տեղաբնակ հայերը, գլխավորապես դիրք ու հարստություն ունեցող անձինք, որոնք ընտրվել են ցմահ։ Որ իրոք, «Քառասուն եղբարց» անդամները հայ ունևոր շրջանից էին ընտրվում, այդ պարզ երևում է 1644 թվականին կամենեցում գրված մի հիշատակարանից, որի գրիչը՝ Վարդերեսը, խնդրում է հիշել ձեռագրի պատվիրատու պան Գրիգորին՝ «Կամենեցայ տօլվաթաւոր քառասուն եղբայրց մեկն»[2]։

Լվովում «Քառասուն եղբարց» գոյության մասին մենք տեղեկություն ունենք XIII դարից։ Այնտեղ 1264 թվականին կառուցված է եղել մի գեղեցիկ ցայտաղբյուր, որի շինարարական արձանագրության մեջ հայկական բոլորաձև երկաթագրով փորագրված է հետևյալը. «Ի թագաւորութեան Գազիմիր Գոռզի շինեցին հայ աղբարքն զաղբիւր մի թուականին ՉԺԳ (1264)»[3]։ Այս արձանագրության մեջ գործածված «աղբարք» բառը, անշուշտ, գործ է ածվել մեզ ծանոթ «Քառասուն եղբայրներ»-ի իմաստով։

«Քառասուն եղբայրց» ավագների այս խորհուրդը իր միջից ընտրել է 12 հոգուց հայ դատավորների կազմը, իսկ այս 12 դատավորներն իրենցից ընտրել են երկու հոգի նախագահ դատավորներ, որոնք կոչվել են «վույթ» կամ «հրեսփոխան»։ Վույթերը դատարանին նախագահել են տարվա մեջ վեցական ամսով։ Վույթերի լիազորության սահմանը ընդարձակ է եղել. նրանք ղեկավարել են ո՛չ միայն դատավարությունը, այլև հայ հասարակական ողջ կյանքը. նրանք են տնօրինել եկեղեցական և դպրոցական գործերը, նրանք են հանդիսացել հայկական համայնքի պատասխանատու անձինք լեհ կառավարության առջև և այլն։

[1] Ղ. Ալիշան, Կամենեց, էջ 131։
[2] Նույն տեղը, էջ 189։
[3] Մ. Բժշկեան, Ճանապարհորդութիւն ի Լեհաստան, էջ 99։

Լեհաստանում գրված ձեռագրեր կան, որոնց հիշատակարաններում, որպես ժամանակի հեղինակավոր անձնավորություններ, կաթողիկոսից, լեհական թագավորի և թեմի առաջնորդի անուններից հետո, հիշում են նաև ժամանակի վույթերի անունները։ Այսպես, Ղազար Բաբերթցին իր չափածո հիշատակարանում խնդրում է հիշել՝

«Աստվածատէր տանուտէրացըն Լովական
Բան Գաբրիէլն և բան Թորոսըն երեսփոխան,
Եւ հասարակ են դատաւորք երկոտասան»[1]։

Լվովում գրված մի դատաստանագրքի հիշատակարանում գրիչը խնդրում է հիշել երեսփոխան Իսան Բեյին և այլն[2]։

Դատական գործերում վույթի իրավունքն անսահմանափակ է եղել. նա կարող էր մեղավորին, ինչպես ասացինք վերևում, անգամ մահվան դատապարտել. իր գործունեության համար նա պատասխանատու էր միայն լեհական թագավորի և կանցլերի առջև։

Վույթը, դատավարության ընթացքում, առաջնորդվում էր Մխիթար Գոշի Դատաստանագրքով, որի լատիներեն թարգմանությունը հաստատվել էր Սիգիզմունդ թագավորի 1519 թվականի մարտի 5-ի հրովարտակով։ Գոշի Դատաստանագրքի հաստատված այս բնագիրը լեհերեն է թարգմանվել 1606 թվականին։

Մինաս Թոխաթեցին, որ երկար տարիներ Լվովի հայկական դատարանի քարտուղարն է եղել, իր «Գրօրէնք Լիմբերգի Հայոց դատաստանի» տաղի մեջ հետևյալ խոսքերով է դրվատել վույթի գործունեությունը.

«Սակաւ հայ կայ ի մէջ Լովուն,
Են իմաստուն և քաջ գիտուն,
Ջհայոց ազգն դոքա դատեն,
Ուխտ և դաշինք կու հաստատեն,
Ջապստամբեալն խրատեն,
Ջկարգ և զսահմանքն կու պընդեն։
Երկոտասան դատաւորքն են,
Ջծուռն և զպիտակն դոքա քննեն»[3]։

Հայկական դատարանը իրականում շատ է տարբերվել Թոխաթեցու նկարագրածից։ Մեզ հասած հայկական դատավճիռների գործերի ուսումնասիրությունից երևում է, որ հայ դատավորներն

[1] Ղ. Ալիշան, Կամենեց, էջ 176։
[2] Տե՛ս «Հանդէս ամսօրեայ», 1935 թ., էջ 142—143։
[3] Հ. Ն. Ակինյան, Հինգ պանդուխտ տաղասացներ, Վիեննա, 1921, էջ 80։

ամեն տեսակ կամայականություններ և չարաշահումներ կատարել են հօգուտ լեհահայ վերնախավի, որի հնազանդ սպասարկուներն են հանդիսացել իրենք։

Լվով քաղաքի հայ ինքնավարության պահպանմանը դեմ է եղել քաղաքի ընդհանուր մագիստրատը, որն առաջնորդվում էր գերմանական Մագդինբուրգյան իրավունքով։ Նա երկար ժամանակ պայքարել է հայ ինքնավարությունը վերացնելու ուղղությամբ։ Բազմաթիվ անգամներ բողոքներ են գրվել հայկական վույթի դեմ, իսկ հայերը, բոլոր հնարավոր միջոցներով, աշխատել են պաշտպանել և պահպանել իրենց ինքնավարությունը։ Ուշադրության արժանի է այն, որ Լվով քաղաքի մագիստրատի և հայկական վույթի մեջ տեղի ունեցող այս ներքին պայքարում լեհական իշխանությունները հայ համայնքի կողմն են բռնել։ Նրանք չեն ցանկացել վշտացնել իրենց երկրի «հավատարիմ և սիրելի քաղաքացիներին», ինչպես հաղորդում են լեհական հեղինակները։

Վավերագրերից հայտնի է վիճաբանության նյութ հանդիսացող հետևյալ միջադեպը։ Լվովի քաղաքային մագիստրատը 1518 թվականին առանց հայկական վույթի համաձայնության, քննության է առել հայ Իվաչկոյի և լեհուհի Սոֆիայի մեղադրական գործը՝ ապօրինի կենակցության մասին և դատապարտել է նրանց մահվան՝ այրելով խարույկի վրա։ Որոշումն ի կատար է ածվել։ Հայերը բողոքել են լեհական արքունիքին՝ մագիստրատի ապօրինի գործունեության համար։ Արքունիքը հայերի բողոքը գտել է իրավացի. տուգանել է մագիստրատին և հանձնարարել է նրան՝ մեղադրական այն գործերում, երբ հայերը մեղսակից են լինում մյուս ազգի մարդկանց հետ, նրանց մասին որոշումներ չկայացնել առանց հայկական վույթի հետ համաձայնեցնելու։

Հետագայում, սակայն, լեհական իշխանությունները լեհահայ վույթի իրավունքները աստիճանաբար սկսել են սահմանափակել։ 1476 թվականին վույթի իրավասությունից վերցրել են քրեական գործերը՝ սպանություն, գողություն, բռնաբարություն և այլն։ 1510 թվականին վույթին զրկել են անշարժ գույքին վերաբերվող գործերի քննության իրավունքից։ Մյուս գործերը շարունակվել են մնալ վույթի իրավասության տակ մինչև նրա վերջնական լուծարքը, որը տեղի է ունեցել 1784 թվականին։

Լեհահայ գաղթօջախներում գործող հայկական կազմակերպությունների ուշագրավ նյութեր են պահպանվել արհեստավորական կազմակերպությունների՝ համքարությունների մասին։

Արհեստակցական այդ միությունները՝ համքարությունները,

լեհաստանում կոչվել են «Ծղբայրություններ»։ Նրել են «ջուլհակների», «կոշկակարների» և այլ եղբայրություններ։ Մ. Բժշկյանը տեղեկություններ է հաղորդում «Քիւրքջոց (քյուրքչիների) և Թերզընուն (դերձակների), սուրուկճոց կօշկակարաց, մազմանողաց, ղասապջոց (միս մորթողների) և այլոց» մասին։

Ամեն տարի, որոշված օրը, եղբայրությունները հավաքվել և ընտրել են իրենց ավագը և գրագիրը։ Համքարության անդամները պարտավոր են եղել պարտաճանաչությամբ կատարել կանոնադրության պահանջները և ներկա լինել կազմակերպության ժողովներին և հասարակական հանդեսներին։ Նրանք ունեցել են և դրամարկղ, որը, սովորաբար, պահվել է եկեղեցիներում։

Անհրաժեշտ է նշել, որ հայ համքարական կազմակերպությունները իրավահավասար վիճակում չեն գտնվել տեղի լեհական համքարությունների հետ։ Միայն Յան Սոբեսկին, որին լեհ պատմիչները համարում են «Հայերի մեծ բարեկամը», հայերին՝ տեղացի լեհ համքարություններին հավասար իրավունք է տվել։

Ուշագրավ է այն, որ հայ արհեստավորները ակտիվ հանդես են եկել մյուս ազգի արհեստավորների՝ լեհերի, ռուսների, գերմանացիների և մյուսների հետ միասին, ընդդեմ տեղի շահագործող խավերի։

Վերին աստիճանի հետաքրքիր է լեհահայ երիտասարդության ռազմական կազմակերպությունը, որը կոչվել է «կտրիճների խումբ»։ Նրա մասին, դժբախտաբար, քիչ տեղեկություն է հայտնի։ Այդ կազմակերպությունը, ինչպես երևում է, պահպանել է Ուկրաինայի և Լեհաստանի հողերի վրա երբեմնի հանդես եկող հայկական հին զորամասերի գովելի ավանդույթը. կռիվների ժամանակ նա հանդես է եկել ռուսական և լեհական զորամասերում ընդդեմ թուրք նվաճողների։ Հայ երիտասարդական այդ կազմակերպությունները կոչվել են նաև «Կույս Մարիամի ասպետներ» (Рыцари девы Марии)։

Սիմեոն Լեհացու «Ուղեգրության» մեջ կա ուշագրավ հիշատակություն այն մասին, որ Ակկերմանի հայ գաղթօջախում «կտրիճների խումբը» տեղի ունեցող կռիվների ժամանակ դուրս էր բերում մինչև հինգ հարյուր հոգուց կազմված զորամաս[1]։

Ամենայն հավանականությամբ «Կտրիճների այս եղբայրությունն» է, որ ուղեկցում էր հայ վաճառականական քարավաններին և պաշտպանում նրանց ավազակային հարձակումներից։

[1] Սիմէոն Լեհացի, Ուղեգրութիւն, էջ 347։

Կտրիճների այս կազմակերպությունները պաշտոնապես ընդունվում և հաստատվում էին Լեհաստանի թեմական առաջնորդների կողմից։ Կամենեցում հրատարակված մի ժամանակագրության մեջ, 1690 թվականի տակ, արձանագրված է հետևյալը. «Վարշյան մեջ, 1690 թվականի տակ, արձանագրված է հետևյալը. «Վարշյան արքեպիսկոպոսն յայս տարի, նոյեմբերի 10, զմեր Սուանիսլաւոլու կտրիճվորաց եղբայրութիւնն, որ յիրմէն տված կոնտակովն հրկուսումն կու հաստատէ, զորն որ վաղուց Նիկոլ Թորոսովիչն հիմնել էր»[1]։

Հայ «կտրիճների» այս խմբերն ունեցել են իրենց սեփական գանձարկղը և մասնակցել են հայ համայնքի հասարակական կյանքին։ Հայտնի է, օրինակ, որ կամենեցի հայ եկեղեցու ներսի որմնանկարների մի մասը կատարվել է նրանց ծախսով։ «Միթբան կտրիճները նկարել ետուն»,— գրանցված է եկեղեցու նվիրաբերության մատյանում[2]։

Լեհաստանում բնակություն հաստատած հայերի հետ են կապված վերջերս հայտնաբերված շատ արժեքավոր վավերագրեր։ 1727—1730 թվականներին, երբ Սյունիքում սկսվում է ազատագրական շարժումները, երբ Սղնախների քաջարի մարտիկները 1725—1730 թվականներին սկսում են հերոսաբար կռվել Անդրկովկասում խուժած թուրքական բանակների դեմ, Լեհաստանի մի խումբ հայեր պաշտոնապես դիմում են ռուսական արքունիքին և խնդրում թույլ տալ իրենց գնալ Անդրկովկաս՝ հայրենակիցներին օգնելու։ Ցարական արքունիքին հայ կտրիճների այդ դիմումներն այժմ գտնվում են Մոսկվայի արխիվներից մեկում և թանկարժեք վկայագրեր են ձուլման վերջին տարիներին ապրող Լեհաստանի հայ հայրենասերների նախաձեռնության[3]։

Լեհահայերի փոխհարաբերությունները տեղացիների հետ։

Լեհահայերը երախտագիտական խոր զգացումով են գնահատել լեհ և ուկրաինացի բարեկամ և հյուրասեր ժողովուրդների վերաբերմունքը՝ նեղ օրերին իրենց ապաստան տալու և ապրուստի նպաստավոր պայմաններ ստեղծելու համար և սիրել են իրենց ապաստանած երկիրը։

Լեհահայերը, ամենից առաջ, անտարբեր չեն գտնվել լեհ և ուկ-

[1] Գ. Ալիշան, Կամենից, էջ 129։

[2] Մ. Բժշկեան, Ճանապարհորդութիւն, էջ 149։

[3] Տե՛ս Վ. Ա. Փարսամյանի «Լեհահայերի մասնակցությունը Դավիթ-Բեկի ապստամբությանը», Երևան, 1962 և Վ. Կ. Ոսկանյանի ու Վ. Մ. Մարտիրոսյանի «Նոր վավերագիր 1720-ական թվականների հայ ազատագրական շարժման վերաբերյալ» («ՊԲՀ», 1962, № 4, էջ 193—216)։

րահնացի ժողովուրդների ազատագրական շարժումների նկատմամբ և ակտիվ մասնակցություն են ցույց տվել նրանց՝ օտարերկրյա նվաճողների, մասնավորապես Թուրքիայի դեմ մղած ազատագրական պատերազմներում։ Դրեթե ամեն անգամ, երբ լեհ ժողովուրդը զենք է վերցրել պաշտպանելու իր սահմանները Թուրք հարստահարիչներից, մենք նրանց կողքին տեսնում ենք նաև հայ փոքրաթիվ զորամասերի, որոնք կազմված են եղել գլխավորապես հայ երիտասարդ «կորիճների եղբայրություններ»-ից։ Բերենք փաստեր, որոնք ավելի պերճախոս են։

Լեհահայ պատմաբան Սադոկ Բարոնչի տեղեկություններից երևում է, որ հայերը գործուն մասնակցություն են ունեցել 1444 թվականի նոյեմբերի 11-ին Վարնայի տակ Թուրք զավթիչների դեմ ունեցած ճակատամարտին և նրանցից շատերն են զոհվել լեհ և ուկրաինացի իրենց դաշնակիցների հետ[1]։

XVII դարում տեղի ունեցող ռազմական խոշոր իրադարձություններից է հանդիսացել 1621 թ. լեհ-Թուրքական պատերազմը, որի ժամանակ լեհ ժողովուրդը և ուկրաինացի կազակները, Խոտինայի ամրոցի տակ պարտության մատնեցին Թուրքական բանակին։ Ահա այդ պատերազմում իրենց համեստ մասնակցությունն են ունեցել նաև հայերը։ Ժամանակակից պատմիչ Հովհաննես Կամենեցկին հաղորդում է, որ լեհական բանակը Վլադիսլավի, Թագավորի որդու գլխավորությամբ, երբ անցնում էր Կամենեց քաղաքից Թուրքերի դեմ կռվի գնալու համար, քաղաքի հայերը ուղեկցում են նրան մինչև Խոտին ամրոցը, ուր և տեղի էր ունենալու ճակատամարտը[2]։

Այդ նույն կռվի ժամանակ, երբ Թուրքական զորամասերից մեկը մեծ թվով գերիներ վերցրած, վերադառնալիս է լինում Կամենեց-Պոդոլսկի մոտով, քաղաքացիները և մոտի գյուղական բնակչությունը հարձակվել են Թուրքական զորամասի վրա, կոտորել նրանց մի մասին և ազատել գերիներին։ Կամենեց-Պոդոլսկի հիմնական բնակիչները, ինչպես հայտնի է, հայեր են եղել։ Պատահական չէ, որ կատաղած Թուրքերը, վրեժխնդիր լինելու համար, նորից եկել են Կամենեցի վրա և այրել հայկական եկեղեցին։

Լվովի հայերը, տեղացի լեհ, ռուս և գերմանացի բնակիչների հետ միասին, հերոսական դիմադրություն են ցույց տվել 1672

[1] В. К. Восканян, Древняя Русь и Украина в судьбах армян (Տե՛ս «Исторические связи», էջ 71)։

[2] ՀՊՄ, ձեռ. № 2644, թ. 229—254։

թվականի օգոստոսին Թուրքական զորքերի կողմից քաղաքի պաշարման ժամանակ։ Ժամանակակից լեհահայ գրիչներից մեկը հետևյալ հիշատակագրությունն է թողել. «ՌՈՀԲ (1672) ամի, օգոստոսի 16-ին, եկեալ ազգին տաճկաց և տիրեցին զԴամենից և յետոյ հինգ աւուրց, եկին չարքն հասան ի քաղաքն յԼվով, ութ օր և ութ գիշեր պատերազմեցաւ Թուրքաց ազգն ի քաղաքացիքն ի հետ միմեանց մին օրն և մին գիշերն հինգ վեց հարիւրն թօփ քաշեցին առ միանգամ, Թող թէ զանհամար Թուֆանկն։ Գոհանամ զառաւտ ողորմութենէն աստուծոյ, որ ոչ ետ ի ձեռն չարեաց քաղաքն և քաղաքացի»[1]։

Լեհ գիտնական Ադոլֆ Նովաչինսկին, հայ-լեհական փոխհարաբերությունների կապակցությամբ, անդրադառնալով լեհահայերի մատուցած ծառայությանը լեհաստանի տնտեսության և մշակույթի բնագավառներում, ինչպես և նրա մասնակցությանը երկրի պաշտպանության գործին, գրում է. «Բուքովինիայում և ամբողջ Գալիցիայում հայ տարրն առաջնակարգ դեր է կատարել սոցիալական և քաղաքական կյանքի, ճարտարարվեստի և մտավոր շարժման մեջ։ Հետագայում նույնը կատարել է ամբողջ Լեհաստանի և նրա Վարշավա քաղաքի մեջ։ Հայոց սերունդները, որոնց հայրերը ժամանակին Արաքսի մեծ ազգ էին կազմում, համբավավոր են դառնում բոլոր ասպարեզներում։ Գրունվալդի և Վառնայի կռիվներին մասնակցել են Ալեքսանդրովիչների, Օգյուստինովիչների, Աբգարովիչների, Ակոբոսովիչների, Ապականովիչների հայրերը։ Նրանց շարքից վերջում հանդես են գալիս հռչակավոր այնպիսի լեհեր, ինչպիսիք են՝ Մալակովսկի, Մեսասովիչ, Բարուչ, Պիրամովիչ, Պերնաստովիչ, Կախովիչ, Մորոզիանովսկի, Գրիգորովիչ, Թեոդորովիչ և այլն»[2]։

Լեհահայերի և տեղացիների միջև ստեղծված հարաբերությունների համար ցուցանշականն է լեհահայերի կարեկից վերաբերմունքը Թուրքական գերության մեջ գտնված լեհերի և ուկրաինացիների նկատմամբ։ Հայ վաճառականները հաճախ լինելով Պոլսում և Թուրքիայի խոշոր այլ քաղաքներում, չեն խնայել իրենց դրամը՝ փրկագին վճարելու և ազատելու լեհ և ռուս գերիներին։ Սադոկ Բարոնչը տեղեկություններ է հաղորդում նման մի շարք հայերի մասին։ Այսպես, XVII դարի սկզբին Արդոն անունով մի հայ վաճառական բազմաթիվ ուկրաինացիներ և լեհեր է ազատել Թուրքական գերությունից։ XVII դարի կեսերին Կամենեց-Պոդոլսկ քա-

[1] Գ. Ալիշան, Կամենեց, էջ 194։

[2] Ժակ դը Մորգան, Հայ ժողովրդի պատմություն, էջ 370։

դաքի մի հայուհի՝ Մարիանա Պողոս, շրջել է հայկական բոլոր գաղթօջախները, ժողովարութիւն արել, որպեսզի դրամ հավաքի և փրկագին վճարի ու ազատի լեհ գերիների։ XVII դարի վերջերում մեծ թվով լեհ գերիներ են ազատել հայ առևտրականներ. Դերշինովիչը և Վարդան Գունյանը։ 1672 թվականին, երբ թուրքերը Լվովից փրկագին են պահանջել, այն ամբողջովին վճարել է լեհահայ Մինասովիչը և այլն[1]։ Սադոկ Բարոնչը մատնացույց անելով ահա այս փաստերը, իրավացիորեն նկատում է. «...նրանք (այսինքն՝ հայերը) փոթորիկների և անվստահության ժամանակներում, իրենց ձեռքումն էին պահում առևտուրը, բերելով երկիրը Արևելքի պտուղները։ Բացի նյութական այդ շահից, նրանք աշխատում էին նույնպես ազատել թուրքական գերությունից քրիստոնյաներին»[2]։

Լեհ թագավորները, նկատի ունենալով հայերի ընդունակությունները և բարեխղճությունը, հաճախ նրանց դիվանագիտական պատասխանատու պաշտոններ են վստահել։ Այսպես, XV դարի կեսերին Հակոբ անունով Լվովցի մի հայ «դիվանագիտական գործերով» ուղարկվել է Պարսկաստան, Արաբիա և Թաթարստան։ Լվովցի հայ Քրիստափոր Սերեբկովիչը հիշվում է որպես «Թուրքիայի դեսպան», Պետրոս Գրիգորևիչ անունով մի այլ հայ հայտնի է որպես դիվանագետ՝ արևելյան և արևմտյան երկրներում։ 1772 թվականին լեհահայ Իվան Նիկորովիչը դիվանագիտական միսիայով մեկնել է Կոստանդնուպոլիս, Ադրիանապոլիս և այլն։

Լեհական արքունիքում աշխատող ականավոր հայ դիվանագետներից է հանդիսացել Կոստանդին Սուլեյմանը, որը լեհ թագավոր Յան Սոբեսկու հանձնարարությամբ, զբաղվել է նաև հայկական հարցով։ Կոստանդին Սուլեյմանը սերբաստացի հայ ընտանիքի զավակ է, փոքր հասակից ընկել է Պորթուգալիա և դաստիարակություն ստացել պորթուգալական արքունիքում։ Սովորել է մի շարք արևելյան և արևմտյան լեզուներ. ապրել է Ֆրանսիայում, Իտալիայում և Գերմանիայում։ Երկար թափառումներից հետո հկել է Լեհաստան և հիմնավորվել այստեղ։ Շուտով մտերմական հարաբերությունների մեջ է մտել Յան Սոբեսկու հետ և հրավիրվել աշխատանքի դիվանագիտության բնագավառում՝ նշանակվելով Ավստրիայի դեսպան։ 1677 թվականին ղեկավարել է Պոլսի լեհական դեսպանությունը, 1678 թվականին մասնակցել է Մոսկվայում

[1] Ղ. Ալիշան, Կամենեց, էջ 194։

[2] В. В. Гробовецкий, Армянские поселения *(տե՛ս* «Исторические связи», էջ 109)։

Անդրուսովի դաշնագրի կնքմանը։ 1686 թվականին եղել է դեսպան Պարսկաստան ուղարկված լեհական դեսպանությունը և այլն։ Լեհահայ ականավոր գործիչ Երեմիա Քյոմուրճյանի 1679 թվականին գրած մի ներբողը, որը նվիրված է Յան Սոբեսկուն։ Այդ ներբողի մեջ լեհ թագավորը համարվում է «Ապստամբողաց, քշնամեաց ցաղթող... քաւիչ և ազատիչ, փրկիչ թագաւոր»[3]։

Ի դեպ, Իսրայել Օրին ևս՝ Պֆալցի Հովսեփ Կյուրֆյուրստին 1699 թ. սեպտ. 22-ին գրած իր զեկուցագրում ակնարկում է այն

[1] Տե՛ս Ա. Ալպոյաճյան, Ճանապարհորդութիւն ի Հապեշստան ԺԷ. դարում, Կահիրե, 1946, էջ 63 և հտ.։

[2] Նույն տեղում։

[3] Երեմիա Քյոմուրճեան, Օրագրութիւն, Երուսաղեմ, 1939, էջ 526 և հտ։

մասին, որ Սոբեսկին 35000 զորքով խոստացել է գալ և թուրքերից ազատագրել հայ ժողովրդին[1]։

Կաթոլիկության հարկադրանքը և լեհահայերի ծուլությունը։

Լեհահայ տարեգրության ամենից մռայլ էջը՝ դավանափոխության տհաճ պատմությունն է, որը ճակատագրական է հանդիսացել Լեհաստանի հայ բնակչության համար։

Գրիգորիս XV պապը, ինչպես հայտնի է, 1622 թվականին կազմակերպում է «Հավատի պրոպագանդայի» հիմնարկությունը, իսկ նրա հաջորդը՝ Ուրբիանոս VIII պապը, 1627 թվականին բաց է անում պրոպագանդիստների հատուկ դպրոց և հիմնում մի տպարան՝ կաթոլիկ-պրոպագանդիստական բազմալեզու գրականություն հրատարակելու համար։

Վատիկանի հրահանգով լեհական իշխանությունները և Լեհաստանի կաթոլիկ կղերականությունը գործի են անցնում և սկսում պարտադրել լեհահայերին կաթոլիկությունը։ Լեհահայերը համառ դիմադրություն են ցույց տալիս։ Սկսվում է անհավասար մի պայքար, որը տևում է ավելի քան 40 տարի և վերջանում լեհահայերի պարտությամբ։

Հայ կղերական պատմաբաններն այդ իրադարձությունը, սովորաբար, ներկայացնում են իր կրոնական, դավանաբանական երեսով։ Իրականում այն ունեցել է սոցիալական խոր արմատներ։ Այդ պայքարի էությունը ճիշտ հասկանալու համար ծանոթանանք տվյալ իրադարձության փաստական պատմության հետ։

1623 թվականին մահանում է Լեհաստանի հոգևոր առաջնորդ Մեսրոպ եպիսկոպոսը և թեմը մնում է թափուր։ Էջմիածնի Մելքսեդեկ կաթողիկոսը, որը պատմության մեջ հայտնի է որպես արկածախնդիր, փառամոլ և դրամաշորթ մի անձնավորություն, 1626 թ. աշնանը իր շքախմբով գալիս է Պոլիս, իսկ այնտեղից անցնում է Լեհաստան՝ առաջնորդ նշանակվելու նպատակով։ Լեհահայերը առաջարկում են մի քանի թեկնածուներ։ Բայց կաթողիկոսը որոշում է «խուզել» այս թեկնածուներին. թեմի առաջնորդ ձեռնադրել նրան, ով ավելի մեծ գումար կաշառք կտա իրեն։ Մրցությունը շահում է Լվովի մեծահարուստ Թորոսովիչների ընտանիքից Նիկոլ անունով 23 տարեկան մի երիտասարդ, որին և կաթողիկոսը ձեռնադրում է եպիսկոպոս։

Նիկոլը, ինչպես վկայում են ժամանակակիցները, եղել է այլասերված մի անձնավորություն։ Ստեփանոս Լեհացին, որ ոչ միայն

[1] Эзов, Сношения..., էջ 31։

ժամանակակից է, այլև մոտիկից ծանոթ է եղել նրա վարք ու բարքին, հետևյալ ձևով է բնութագրել նրան. «Մանուկ տիօք և տգէտ մտօք, խաւարեալ խորհուրդով և անիմաստ հանճարով, անուղ(ղ)ա վարիք, վատ և ապիրատ ամենայն իրս և ի գործս, լիրբ յանզգամ և անդուգն...[1]»։ Պատմիչը նշում է նաև, որ նա «...կաշառօք ձեռնադրեցաւ եպիսկոպոս ի Մելիքսէթ կաթողիկոսէ»[2]։

Կաշառառու կաթողիկոսը Նիկոլին եպիսկոպոս է ձեռնադրում գիշերը, իսկ հաջորդ օրը, երբ հայտնի է դառնում կաթողիկոսի գաղտնի արարքը, ժողովուրդը ընդվզում է և ցանկանում սպանել և՛ կաթողիկոսին, և՛ Նիկոլին։ «Իբրև ծանեաւ զայն ժողովուրդն»,— գրում է դեպքերին լավատեղյակ կաթոլիկ քարոզիչ Պիդոն,— զայրացաւ յոյժ, յոյժ զի փոքր մի ևս՝ զէն առնոյր և ի մասունս կոտրացաւ յոյժ, յոյժ զի փոքր մի ևս՝ զէն առնոյր և ի մասունս կոտրէր զկաթողիկոսն և զձեռնադրեալն ի նմանէ զարքեպիսկոպոսս»[3]։

Ժողովրդի վրդովմունքի մասին վկայում է նաև Ստեփանոս Լեհացին իր չափածո հիշատակարանում։ Զայրացած բազմությունը, գրում է նա, մտավ եկեղեցի և սկսեց հայհոյել կաթողիկոսին և մյուս կղերականներին, ուզեց անգամ բռնել և սպանել Նիկոլին, սակայն նա թաքնվեց եկեղեցում և ազատվեց։

«Զնիկօլն ուզէին բռնէին,
Կրտոր կրտոր զնա առնէին.
Հազիւ զերծաւ ձեռաց նոցին,
Մտեալ սաքրէստան ախեց դրովին»[4]։

(Այսինքն՝ մտավ անդատուն և փակեց դուռը)։

Կաթողիկոսը, ժողովրդական ցասումից ահաբեկված, թողնում է Լվովը և փախչում Կամենեց՝ իր հետ տանելով նաև իր ձեռնասուն Նիկոլին։ Այստեղ կաթողիկոսը կոնդակ է գրում և Նիկոլին նշանակում լեհահայոց առաջնորդ։ Կամենեցում կաթողիկոսը հիվանդանում է և մահանում։

Ժամանակակից գրեթե բոլոր լեհահայ գրիչները զզվանքով են հիշում Նիկոլի անունը՝ համարելով վատանուն և խեղկատակ անձնավորություն։ Այսպես, Սիմեոն Լեհացին Նիկոլի մասին գրում է. «...էր յոյժ անառակ և վայրապար, ունէր մարդիկ աշխարհականք և կարգաւորք ի—լ (20—30), պահէր պէտավի ձիան, կաոս մեծա-

[1] ՀՑՄ, ձեռ. № 1004, թ. 192բ։
[2] Նույն տեղում։
[3] Ա. Պիդու (տես «Բոնի մխութիւն», էջ 21)։
[4] Ղ. Ալիշան, Կամենեց, էջ 204։

գինս և տաճիկ ձիանս, և ինքն յագնէր բեհեզս և ծիրանիս, մախմուր և աթլազ, ներքևանց՝ սամուր մորթի կամ վաշախ, գաւազանն՝ բուն արծաթի»[1]։

Գրիչներից մեկն իր հիշատակարանում Նիկոլի անունն հիշելիս, նախատինք է համարում և դառնացած հայտնում, որ «բազում և անասելի նեղութիւն հասոյց ժողովուրդեանն Լէվա»[2]։

Ահա այս իրադարձությունն է, որ պատճառ է դառնում այն պայքարի, որը տեղի է ունենում մի կողմից՝ Նիկոլի և նրա հովանավորողների, իսկ մյուս կողմից՝ լեհահայ ժողովրդի միջև։

Լեհահայ առաջնորդի շուրջը սկսած պայքարն ամենից հարմար առիթ էր կաթոլիկ կղերին՝ օգտագործելու այն իր նպատակների համար։ Նիկոլի նման եպիսկոպոսական կոչումով այլասերված մարդը կատարյալ գյուտ էր նրանց համար, ուստի ճիզվիտներն անմիջապես շրջապատում են Նիկոլին, վերցնում են իրենց ձեռքը և օգտագործում։ 1639 թվականին նրանք Նիկոլից երդումնագիր են վերցնում, որ նա կաթոլիկություն է ընդունում և պարտավորվում հնազանդորեն կատարել պապի բոլոր հրամանները[3]։

Լեհահայ համայնքներում թեմական առաջնորդի շուրջը ծավալված պայքարը խորանում է։ Լվովի հայերը, որոնք որոշել էին Նիկոլին դատել իրենց վուլթում, նրա թիկունքում կանգնած են տեսնում կաթոլիկ կղերին և լեհական կառավարությանը, որոնք ջերմորեն պաշտպանում էին Նիկոլին։ Լեհահայ համայնքի մեջ տեղի է ունենում պառակտում. Նիկոլի կողմն են անցնում հայ ազնվականները, որոնք վաղուց ի վեր թողել էին հայկական սովորությունները, հայ առևտրականները, որոնք իրենց շահերով սերտորեն կապված էին կաթոլիկ աշխարհի հետ և Լեհաստանի պետական հիմնարկություններում աշխատող հայ պաշտոնեությունը։ Լեհահայ համայնքի աշխատավորները սակայն համառությամբ շարունակում են իրենց պայքարը։

Այս պայքարում անպատշաճ դեր են վերցնում որոշ հայ եկեղեցականներ, որոնք թվում է թե պիտի գլխավորեին կաթոլիկության դեմ լեհահայության վարած պայքարը։ Իրականում, պայքարի առաջին շրջանում դիտորդի դեր են վերցնում, իսկ հետագայում, երբ լեհական կառավարությունը միջամտում է և պաշտոնապես վավերացնում Նիկոլին թեմական առաջնորդի պաշտոնում, անմիջապես անցնում են նրա կողմը։ Ստեփանոս Լեհացին վշտով նշում է, որ Նիկոլը միայնակ չէր, այլ՝

«Բազում ունէր նա օգնական
Կարգաւորք (այսինքն՝ հոգևորականներ—
Ա. Ա.) և աշխարհական,
Դատաւորք, պարոն և իշխան,
Արք և կանայք որ ի լեհ կան»[1]։

Նույնը նա կրկնում է նաև իր արձակ հիշատակարանում։ «Նիկոլը դավանափոխությունից հետո,—գրում է նա,—սկսաւ բազում չարիս և նենգութիւն գործել ազգիս իմոյ՝ ունելով իւր օգնական... զիշխանս, զդատաւորս և զամենայն քահանայս և կարգաւորս»[2]։

Դավանափոխության գործում առանձնապես նողկալի դեր են կատարել Ղազար Սլոնիովսկին (լեհ ազնվականության կոչում ստացած մի հայ վաճառական), քաղաքի վուլթը՝ Գաբրիել Զախոնովիցն մի հայ վաճառական), քաղաքի վուլթը՝ Գաբրիել Զախոնովիցն և վուլթի քարտուղար Գաբրիել Կապրովսկին[3]։

Պայքարն սկսում է անհավասար բնույթ ստանալ. մի կողմում կանգնում են պետությունը, վատիկանը, այլասերված հայ մեծահարուստները, իսկ մյուս կողմում՝ իրավազուրկ և անպաշտպան լեհահայ աշխատավորությունը։

Լեհական կառավարությունը պահանջում է Լվովի հայ եկեղեցին հանձնել Նիկոլին։ Ժողովուրդը ընդդիմանում է։ Կաթոլիկ կղերականությունը, պինվորների օգնությամբ, ջարդում է եկեղեցու փակ դուռը և այն հանձնում Նիկոլին, որից հետո արգելվում է լուսավորչական ծեսերով երեխաներ մկրտել, թաղում կատարել և այլն։ Լեհահայերի մեջ սկսվում է դավանափոխությունը, որին հաւանելու համար Նիկոլը գործադրում է բազմատեսակ բռնություններ։ Ահա թե ինչ է գրում Ստեփանոս Լեհացին Նիկոլի մասին.

«Զոմանս ի բանտ կու ձգէր,
Զայլս բռնաւորաց ձեռս մատնէր.
Զոմանս ծեծէր և հարկանէր,
Դատաւորքն տուգանէր»[4]։

Լեհահայ աշխատավորությունը բազմաթիվ բողոքներ է ներկայացնում լեհական արքունիքին, խնդրում է վերջ դնել բռնություններին, բայց նրանց բողոքը մնում է անպատասխան։

---

1 ՀՊՄ, ձեռ. № 1004, թ. 194ա։
2 «Հանդէս ամսօրեայ», 1936 թ., էջ 507—508։
3 Առաքել Դաւրիժեցի, Պատմութիւն Հայոց, էջ 289։

1 Ղ. Ալիշան, Կամենից։
2 ՀՊՄ, ձեռ. № 1004, թ. 192բ—193ա։
3 Պիդու (Տես «Բոնի միութիւն», էջ 36—39)։
4 Ղ. Ալիշան, Կամենից, էջ 211։

Ժողովուրդը դիմել է նաև էջմիածին։ Կաթողիկոսը պատվիրակներ է ուղարկել Լեհաստան, Հռոմ, որոնք պաշտոնապես դիմել են լեհ թագավորին, պապին, աղերսել բռնություններ չգործադրել անպաշտպան հայ ժողովրդի նկատմամբ, բայց՝ անարդյունք։

Կաթոլիկները հետագայում գրավում են նաև Կամենեցի և Լեհաստանի մյուս վայրերում գտնվող հայկական եկեղեցիները։ Պապի հատուկ հանձնարարությամբ 1663 թ. Լվովում բաց են անում հայ կաթոլիկ դպրոց՝ հոգևորականություն պատրաստելու համար։

Ստեղծված այդ իրադրության հետ չհամակերպվող հայերի մի զգալի մասը տեղափոխվում է հարևան երկրներ՝ Մոլդավիա, Հունգարիա և Բուլղարիա։

Կաթոլիկության հարկադրանքը ճակատագրական եղավ լեհահայության համար։ Նա զգալի չափով արագացրեց լեհահայերի ձուլումը։ Եվ XVIII դարի վերջերին, երբ Գալիցիան միացվեց Ռուսաստանին, լեհահայությունը արդեն ձուլված էր և նրանից միայն փոքրիկ բեկորներ էին մնացել։

Մ. Բժշկյանը 1820 թվականին Լեհաստանում շրջած ժամանակ հայ բնակչության է հանդիպել հետևյալ վայրերում. Լվովում՝ 100 տուն, Ստանիսլավում՝ 70 տուն, Լիսցայում՝ 60 տուն, Բերժանում՝ 60 տուն, Դիսմինիցում՝ 42 տուն, Սենյադինում՝ 70 տուն, Հոդենքայում՝ 100 տուն, Գուբիներում՝ 20 տուն։

Ռուսաստանի սահմանների մեջ մտած լեհահայ նախկին գաղթօջախներում նա հայ բնակչություն է հիշում Զվանչիայում՝ 100 տուն, Կամենեցում՝ 70 տուն, Մայլովում՝ 60 տուն, Գրիգորիոպոլսում՝ 350 տուն։ Բժշկյանը հայ բնակչության չի հանդիպել Բրեմնի ծաղկուն գաղթօջախներ Յազլովիցում, Ռաշկովում, Պալդիայում և Լուցքում[1]։

Հայագիտության մեջ վիճաբանության առարկա է եղել ասիմիլյացիայի ենթարկված լեհահայ բնակչության թիվը։ Ֆրանսիացի հայագետ Ժակ Մորգանը գտնում է, որ լեհաստանում ապրելիս է եղել շուրջ 200000 հայություն[2]։ Նույն կարծիքին է նաև Կ. Բասմաջյանը[3]։

Լեհահայ բնակչության թվի մասին որոշակի որևէ բան ասել, դժվար է, որովհետև վիճակագրական հաստատուն տվյալներ մեզ չեն հասել։ Անկարելի է հայ բնակչության թիվը որոշել պատմիչների կցկտուր տեղեկությունների հիման վրա, որոնք ավելի վերաբերում են քաղաքների ներսում ապրող բնակչությանը, իսկ հայ գաղթականության մեծ մասն ապրել է գյուղերում և քաղաքամերձ արվարձաններում։ Քաղաքներում ապրել են գլխավորապես հայ ունևորները։ Լեհաստանում գրված ձեռագրերի հիշատակարաններն ուսումնասիրությունը մեզ բերել է այն եզրակացության, որ Լեհաստանում ապրելիս է եղել ոչ ավելի, քան 15.000 բնտանիք՝ մոտ յոթանասուն հազար հայ բնակչություն։ Նկատի ունենք, իհարկե, XVII դարի առաջին քառորդը, երբ կաթոլիկության բռնի հարկադրանքի հետևանքով լեհահայերի որոշ մասը դեռ չէր տեղափոխվել հարևան երկրներ։ Պետք է նկատի ունենալ նաև, որ որոշ թվով հայ գաղթականներ Լեհաստանից հեռացել են 1671—1672 թվականներին՝ լեհ-թուրքական պատերազմի ժամանակ։ Այնպես որ XVIII դարում Լեհաստանում ասիմիլյացիայի ենթարկված հայերի թիվը ավելի չի կարող լինել 50.000-ից։

Մշակույթը։ Լեհահայ մշակույթից չնայած շատ քիչ բան է հասել մեզ, բայց այդ քիչը ևս որոշ պատկերացում տալիս է ստեղծագործական այն մեծ թափի մասին, որ ունեցել է Լեհաստանի հայ գաղթավայրը։ Լեհահայերի պատմական հուշարձաններից քչերն են կանգուն՝ ժամանակի անողոք ձեռքը շատերն է քանդել և փոշով ծածկել։

Մեզ հասած պատմական կարևոր լեհահայ հուշարձաններից կարելի է մատնացույց անել Լվովի եկեղեցին, որը կառուցել են Հակոբ Շահնշահի որդի Կաֆայեցի և Փանոս Վայսուրցի վաճառականները 1363 թ.[1]։ Այդ եկեղեցին կանգուն է մինչև այժմ։ Պատմ. գիտ. թեկնածու Յ. Ա. Յացկևիչը խոսելով այդ հուշարձանի պատմական արժեքի մասին, գրում է. «Լվովի հայկական տաճարը հանդիսանում է հին հայկական ճարտարապետության ամենանշանակալից կոթողն Արևմուտքում»[2]։

Մի շարք լեհահայ հուշարձաններ կան Կամենեցում և այլ քաղաքներում, որոնց վրա մենք հնարավորություն չունենք կանգ առնելու։

Լեհահայերը զգալի դեր են ունեցել հայկական կիրառական արվեստի բնագավառում։ Գիտված է, որ հայկական արվեստի որոշ տարրեր մտել են լեհականի մեջ և, հակառակը, լեհական վեհատեսիլ գեղեցիկ նմուշներ անցել են հայկական արվեստին։ Փոխազդեցության այս երևույթը որոշակի երևում է Լվովի հայ ա-

---

1 Մ. Բժշկեան, Ճանապարհորդութիւն, էջ 91—175։

2 Ժակ դը Մորգան, Հայ ժողովրդի պատմություն, էջ 370։

3 Կ. Հ. Բասմաջյան, Իսկական պատմություն հայոց, Կ. Պոլիս, 1914, էջ 409։

1 Մ. Բժշկեան, Ճանապարհորդութիւն է Լեհաստան, էջ 104—105։

2 Я. А. Яцкевич, Памятники армянской культуры во Львове (Сб. «Исторические связи», էջ 125)։

կերիչների գործերում, որոնց ուսումնասիրությամբ զբաղվել է լեհ գիտնական Վլադիսլավ Լոզինսկին։ Նա գտնում է, որ Լվովի հայ ոսկերիչների և արծաթագործների ստեղծագործությունները արևելյան և եվրոպական երկու արվեստների հանճարեղ միաձուլումն է։

Լեհաստանի հայ գաղթավայրը, գտնվելով եվրոպական զարգացած շրջապատի մեջ, հասկանալի է, չէր կարող հատուկ ուշադրություն չդարձնել դպրոցների վրա։ Մեզ հասած տեղեկություններից երևում է, որ Լեհաստանի գրեթե բոլոր մեծ ու փոքր գաղթօջախներում եղել են հայկական դպրոցներ։

Լվովում հայերը դպրոց են կառուցել 1590 թվականին։ Ավելի ուշ՝ XVII դարի սկզբում, ըստ Սիմեոն Լեհացու տեղեկության, Լվովի դպրոցում սովորելիս է եղել 80 երեխա[1]։ Դպրոցում դասավանդվել են միայն աշխարհիկ առարկաներ՝ երաժշտություն, քերականություն, առոգանություն, թարգմանություն և համարողական արվեստ։

1668 թվականին Լվովի այս դպրոցում, կաթոլիկ կղերական Պիդուի նախաձեռնությամբ, թարգմանվել է Հռիփսիմեի նահատակության մասին մի ողբերգություն, որը դիտելու համար հավաքվել են մեծ թվով հայեր[2]։ Ժողովրդի ցանկությամբ այս ներկայացումը կրկնվել է չորս անգամ։

Հայկական դպրոցներ են եղել մյուս գաղթօջախներում ևս։ Կամենեց-Պոդոլսկի հայկական դպրոցի մասին տեղեկություն ունենք 1593 թվականից, Յազլովիցինի՝ XVII դ. երկրորդ կեսից, Տեսմենիցինը՝ XVIII դ. կեսերից և այլն։

Լվովի հայերն ունեցել են նաև իրենց հիվանդանոցը, որը կառուցել է Բոգդան Դոնովակովիչը 1578 թվականին Լվովի Կրակովյան կոչվող արվարձանում։ Ըստ լեհահայերի մոտ եղած սովորության, այդ դպրոցներին և հիվանդանոցներին կտակվել են մեծ գումարներ։

Լվովում 1616 թ. կազմակերպվել է տպագրություն. տպագրվել է երկու գիրք՝ «Սաղմոսարան» և «Բժշկարան»։ Գրքերի հրատարակիչն է հանդիսացել Հովհաննես եպ. Ծարմատանենց Բաղիշեցին։

Լեհահայերի թողած կուլտուրայի ամենից արժեքավոր գանձերը՝ դրանք ձեռագիր մատյաններն են։ Լեհաստանի մի շարք քաղաքներում՝ Լվով, Կամենեց, Գալիչ, Զամոսցե և այլն, հայերը ստեղծել են գրչության սքանչելի օջախներ, ուր գրվել և ընդօրինակվել են հարյուրավոր ձեռագրեր։

[1] Սիմէոն Լեհացի, Ուղեգրութիւն, էջ 336—337։

[2] Ա. Պիդու (Տե՛ս «Բռնի միութիւն», էջ 203)։

Դժբախտաբար, այդ ձեռագրերի՝ մատենագրական այդ չքնաղ ստեղծագործությունների, ինչպես և ոսկե ու արծաթե հուշանվերների մեծ մասը, ժամանակի ընթացքում, ոչնչացել է։ Տեղեկություններ կան, որ Նիկոլ Թորոսովիչի՝ այդ վաստակաշատ մարդու մեղքով, վաճառքի են հանվել Լվովի ավանդատան բազմաթիվ ձեռագրեր։ Ստեփանոս Լեհացին ցավով նշում է, որ Նիկոլը «ՔՃ—ԳՃ (200—300) ազնիւ գրեանս... ի քագաւորական խաղնայէ ի գուրս ելած, մանաւանդ Սբոու և Քաֆայո, (Նիկոլն) միում ամի կորոյս և ոչնչացոյց... զորս ծախէր և վաճառէր. զկէսս գրաւէր հրէից և այլ ցեղից»[1]։

Լվովի եկեղեցին իր ձեռքը վերցնելուց հետո, Նիկոլ Թորոսովիչը վաճառքի է հանել նաև եկեղեցուն նվեր տված ոսկե և արծաթե անոթները, ասեղնագործ զգեստները, որոնք, ըստ Ստեփանոս Լեհացու տեղեկության, «ՃՃ (500) ամաց հետէ ժողովեալ էր առնտրիկնաց, ոչ երբեք գտանիւր այլ աշխարհի այնպիսի քօհվայք և անգիտ իրք»[2]։

Լեհահայ գրչության օջախներից մեզ հասած ձեռագիր մատյանների թիվն այժմ հաշվվում է մոտ 200, որի կեսը գտնվում է Հայկ. ՍՍՌ պետական մատենադարանում, իսկ մյուսները ցրված են աշխարհի տարբեր ձեռագրական ժողովածուների մեջ։

Լեհահայ ձեռագրերի մեջ կան դաստառանագրքեր, տոմարագրքեր, փիլիսոփայական բնագրեր, քերականություններ և այլն։ Մեծ թիվ են կազմում մանավանդ կրոնական բովանդակությամբ ձեռագրերը։

Մեզ հայտնի են լեհահայ գրչության օջախի բեղմնավոր մի շարք գրիչներ, որոնք բազմաթիվ ձեռագրեր ընդօրինակել են։ Նրանցից կարելի է մատնացույց անել Մինասին, Հակոբ և Ղազար Թոխաթցիներին, Գրիգոր Տոմաժիրսկուն, Թորոս դպիրին, Ստեփանոս Լեհացուն, Արքունին, Զատկին և ուրիշներ։ Այդ գրիչներից շատերը եղել են նաև մանրանկարիչներ։

Լվովահայերն իրենց ներկայացուցիչներն են ունեցել գիտության տարբեր բնագավառներում։ Նշանավոր աստղագետ Տամաշը Լվովի հայերից է, նա կազմել է տոմարական մի աշխատություն, ուր ճշտությամբ կարողացել է նախատեսել 1699 թվականին արեգակի խավարումը։ Լեհահայ մի այլ գիտնական՝ Սլոնովսկին, մեծ հռչակ է ունեցել որպես տասնյակ լեզուներ իմացողի[3]։

[1] ՀՊՄ, ձեռ. № 1004, թ. 193ա։

[2] Նույն տեղում։

[3] Տես՝ Н.К. Кривонос-ի վերև հիշված հոդվածը, էջ 134—135։

Ճշգրիտ գիտությունների խոշոր ներկայացուցիչ է համարվում Յան Յասկևիչը: Նա է հիմնել Կրակովի համալսարանի քիմիական լաբորատորիան, բնության ուսումնասիրության կաբինետը և բուսաբանական այգին: Որպես վաստակավոր գիտնական ընտրվել է Փարիզի համալսարանի և Վիեննայի գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ[1]:

Լեհահայ գիտական մատենագրության ականավոր դեմքերից է Ստեփանոս Լեհացին: Նա իր կրթությունը ստացել է Լվովի բարձրագույն դպրոցում, հանգամանորեն ուսումնասիրել է լատիներենը և Նիկոլ Թորոսովիչի հալածանքից խուսափելով եկել և հաստատվել է Էջմիածնում: Նա սովորել է հայերեն և զբաղվել թարգմանություններով: Լատիներենից հայերեն նրա կատարած աշքի ընկնող թարգմանություններից են Հովսեփեոս Ֆլավիուսի «Պատմությունը», Դիոնիսիոս Արիոսպագացու մեկնությունները, Արիստոտելի «Մետաֆիզիկան», Պրկողի «Պատճառաց գիրքը»: Նա լեհերենից հայերեն է թարգմանել նաև «Հայելի վարուց»-ը (Великое зерцало), որը սրամիտ և հետաքրքիր ժողովրդական առակներից մի ժողովածու է[2]:

Գիտական մատենագրության ճանաչված դեմքերից է Ստեփանոս Ռոշկան (1670—1739): Նա ծնվել է Կամենեց քաղաքում: Գրել է «Փիլիսոփայություն», «Տրամաբանություն» աշխատությունները և կազմել «Ժամանակագրություն»: Նրա ամենախոշոր գործերից է հայ-լատիներեն և լատինա-հայերեն բառարանները, որը կոչվում է «Գանձարան հայոց լեզուին»: Այս գրքի վրա հեղինակն աշխատել է երկար տարիներ: Ժամանակակիցներից մեկը հայտնում է, որ Ստեփանոս Ռոշքան նշված «Գանձարանը» շարադրել է «Մեծաւ աշխատութեամբ, այսինքն՝ երեսուն և երրորդ ամս, մինչև աւարտեալ է զնա. երկու անգամ սրբագրեալ և յերրորդ սրբագրութեան հանգեաւ ի տէր (1740 թ.) ի Ստանեսլաւ քաղաքն Լեհաց»[3]:

Լեհահայ մատենագրության մեջ նշանակալից տեղ ունի պատմագրությունը: Ենթադրվում է, որ Լվովի աշքի ընկնող պատմիչը Զիմոռովիչը (1597—1677) Լվովի հայ է:

Լեհահայ պատմագրության աշքի ընկնող դեմքերից է Հովհաննես Ավագեռեցը, որը գրել և մեզ է թողել արժեքավոր մի ժամանակագրություն՝ 1430 թվականից մինչև 1611 թվականը: Նա մոտիկից ծանոթ է իր շուրջը կատարված իրադարձություններին: Ժամանակագրության հին շրջանը գրել է Ձեռքի տակ եղած վավերագրերի, հիշատակարանների և պատմական այլ նյութերի հիման վրա, իսկ իր ժամանակի դեպքերը նկարագրել է որպես ականատես անձնավորություն: Հովհաննեսի մահվանից հետո (1611 թ.) ժամանակագրությունը շարունակել են նրա երկու թոռները՝ Հակոբը և Օգսենտը, հայերեն գրերով և թաթարերեն լեզվով՝ ժամանակագրությունը հասցնելով մինչև 1624 թվականը[1]:

Հովհաննես Երեցի ժամանակագրությունը արժեքավոր պատմական սկզբնաղբյուր է Լեհաստանի և Ռումինիայի XV—XVII դարերի պատմության համար: Այնտեղ բերված են հետաքրքիր տեղեկություններ Զապորոժիեի կազակների, թաթարների, թուրքերի, լեհերի և ռուսների փոխհարաբերությունների, պանական Լեհաստանի սոցիալ-տնտեսական կյանքի, Լեհաստանի և Ռումինիայի հայ համայնքների վիճակի մասին և այլն:

Պատմական մեծարժեք գործ է հանդիսանում Սիմեոն Լեհացու «Ուղեգրությունը»: Սիմեոնը ծնվել է Յամոցէ քաղաքում 1584 թվականին: Ծնողները այդտեղ են գաղթած եղել Ղրիմի Կաֆա քաղաքից: Փոքր հասակից զբաղվել է հայկական գրչությամբ, որը և նրա ապրուստի միակ միջոցն է հանդիսացել: 1608 թվականին ձեռնարկել է երկարատև մի ճանապարհորդություն դեպի Արևելք, որը տևել է 11 տարի: Եղել է Պոլսում, Վենետիկում, Հռոմում, Մուշում, Կահիրեում, Երուսաղեմում, Բաղդադում և այլ քաղաքներում և ստացած տպավորությունները ամենայն մանրամասնությամբ գրի առել իր աշխատության մեջ: Այս հեղինակի մասին խոսք եղել է առջևում:

Ականավոր լեհահայ պատմիչներից է Հովհաննես Կամենեցիացին, որը գրել և մեզ է թողել իր «Խոտինի պատերազմի պատմությունը»: Հեղինակը XVII դարի պատմիչ է: Գրի է առել 1611—1624 թթ. Լեհաստանում քաղաքական կարևոր դեպքերը՝ հանգամանորեն կանգ առնելով մանավանդ 1621 թվականի լեհ-թուրքական պատերազմի վրա: Հովհաննես Կամենեցիացին իր նկարագրած իրադարձությունների ժամանակակիցն է, իսկ մի մասին՝ ականատես: Նշված աշխատությունը ռուսերեն թարգմանությամբ հրատարակել է Հ. Անանյանը «Պատմա-բանասիրական հանդեսի» 1958 թ. № 2-ում (էջ 250—286):

Լեհահայ գաղթավայրը տվել է իր ներկայացուցիչները նաև տաղերգության բնագավառում:

---

[1] Տե՛ս Н. К. Кривонос-ի վերև հիշված հոդվածը, էջ 134—135:

[2] В. Чалоян, История армянской философии, Ереван, 1960, էջ 220—230:

[3] Գ. Ալիշան, Կամենեց, էջ 201:

[1] Նշված ժամանակագրությունները հրատարակել է Ալիշանն իր «Կամենեց» աշխատության մեջ:

Լեհահայ մշակույթի պատմության հետ է կապված միջնադարյան հայ ականավոր տաղերգու Մինաս Թոխաթեցու (1510—1622) անունը, որն իր երիտասարդ հասակից թողել է իր ծննդավայր Թոխաթը և հաստատվել Լվովում՝ երկար ժամանակ աշխատելով իրրև Լվովի հայկական դատարանի քարտուղար։ Թոխաթեցին ապրել է մինչև խոր ծերություն՝ ավելի քան 110 տարի։ Մեզ հասած տաղերից արժեքավոր են նրա «Ողբ ի վերայ օլախաց երկրի» տաղը, որի մասին մանրամասն խոսք կլինի Մոլդավիայի գաղթավայրի կապակցությամբ։ Մինաս Թոխաթեցու լավագույն ստեղծագործություններից է համարվում «Գովասանք հերիսայի» զավեշտական տաղը[1]։

Իր ժամանակի խոշոր բանաստեղծներից է լեհահայ Շիմոն Շիմոնովիչը (XVI դ. վերջերը XVII-ի սկզբները), որը գրել է լատիներեն։ Գրականության պատմության մեջ նա մտել է իր նշանավոր «Հովվերգություններ»-ով։ Նա իր ստեղծագործության մեջ ռեալիստորեն է պատկերել աշխատավոր գյուղացու ծանր դրությունը և դատապարտել շլյախտչիական խավերին՝ աշխատավորության նկատմամբ ցուցաբերած անմարդկային վերաբերմունքի համար։ Շիմոն Շիմոնովիչը գրել է նաև օդաններ։ Լատինական գրականության լավագույն մասնագետներից մեկը՝ անգլիացի Տոմոշ Սեխետը, հիացմունքով է խոսում Շիմոնովիչի օդանների մասին և գտնում է, որ նրանց հավասար օդաններ լատինական գրականության մեջ գոյություն չունեն[2]։

Լեհահայ շնորհալի տաղերգուներից է Պարսամ Տրապիզոնցին, որը երկար տարիներ Լվովի թեմի առաջնորդն է եղել։ Նա գրել է մի շարք տաղեր, որոնցից լավագույնը «Վասն ակռայի» երգիծական տաղն է։

Լեհահայ մյուս ականավոր բանաստեղծներից է Հակոբ Թոխաթեցին (1573—1678)։ Նա ևս եկել է Թոխաթից և մշտական բնակություն հաստատել Լեհաստանի Զամոսցե քաղաքում։ Բացի ինքնուրույն բանաստեղծություններից, 1614 թվականին լատիներենից հայերեն է թարգմանել «Պատմութիւն եօթն իմաստասիրացն» գեղեցիկ վեպը, որն անցյալում, հայ իրականության մեջ, ամենից տարածված գրքերից մեկն է հանդիսացել և տպագրվել բազմաթիվ անգամներ։ Այս վեպը հնդկական ստեղծագործություն է։ Թարգմանվել է աշխարհի բազմաթիվ լեզուներով՝ պահլավերեն, սասերեն, արաբերեն, լատիներեն, ֆրանսերեն, լեհերեն, ռուսերեն և այլն[1]։

Լեհահայ գաղթավայրի զավակ է լեհ ականավոր կոմպոզիտոր Շոպենի հանճարեղ ասիստենտ Կարլ Միկուլը։

Կարլ Միկուլը Փարիզում, Շոպենի ղեկավարությամբ, սովորել է դաշնամուրային երաժշտությունը, իսկ կոմպոզիտոր Ռոբերտից մոտ ուսումնասիրել երաժշտության տեսությունը։ Շրջագայել և ներկայացումներ է տվել Յասում, Բուխարեստում, Քիշինևում, Կիևում և այլ քաղաքներում։ 1858—1887 թվականներին ղեկավարել է լվովի երաժիշտների միությունը։ Նա գրել է երաժշտական մի շարք գործեր։ Նա համարվում է Շոպենի ստեղծագործությունների առաջին և լավագույն խմբագիրը։ Կարլ Միկուլը թաղված է Լվովի հայկական եկեղեցու բակում, ուր դրված է հուշատախտակ հետևյալ մակագրությամբ. «Կարլ Միկուլի։ 1819—1897։ Նշանավոր պիանիստին և կոմպոզիտորին, Գալիցիայի երաժշտական ընկերության Քանգարանի դիրեկտորին։ Շնորհապարտ աշակերտներից և աշակերտուհիներից»[2]։

---

[1] Տե՛ս Հ. Ն. Ակինյան, Հինգ պանդուխտ տաղերգուներ, էջ 37—44։

[2] Տե՛ս Н. К. Кривонос-ի վերև հիշված հոդվածը, էջ 136։

[1] Հ. Ն. Ակինյան, Հինգ պանդուխտ տաղերգուներ, էջ 139—202։

[2] Н. К. Кривонос-ի վերև հիշված հոդվածը, էջ 138—139։

ՊԱՐՍԿԱՀԱՅ ԳԱՂԹԱՎԱՅՐԸ

Սկզբնաղբյուրները և գրականությունը: Չնայած պարսկահայ գաղթավայրը ավելի քան ութ դարերի երկարաձիգ պատմություն ունի և գործոն դեր է ունեցել Պարսկաստանի տնտեսական և քաղաքական կյանքում, սակայն, դժբախտաբար, սկզբնաղբյուրները զարմանալիորեն քիչ տեղեկություններ են հաղորդում նրա մասին:

XII—XV դարերի պարսկահայ գաղթօջախները չունեն իրենց ինքնուրույն պատմիչը: Նրանց պատմության հիմնական նյութերը մենք քաղում ենք գլխավորապես հայկական ձեռագիր հիշատակարաններից և հիշատակագրություններից: Պարսկաստանի հայ գաղթօջախներում, ինչպես կտեսնենք, գրչության բավականին զարգացած օջախներ են եղել, ուր գրվել և ընդօրինակվել են բազմաթիվ ձեռագրեր: Ահա այդ ձեռագրերում պատահում են գրիչների գրառումները՝ իրենց վիճակի և իրենց շուրջը տեղի ունեցող իրադարձությունների մասին, որոնք և մեզ համար սկզբնաղբյուր են ծառայել: Պատմական այդ նյութերը բացառիկ արժեք ունեն մեզ համար, որովհետև գրված են ականատես հեղինակների կողմից:

Պարսկահայ գաղթօջախների վրա միջանկյալ կանգ են առել հայկական մի քանի պատմիչներ և ժամանակագիրներ՝ Մատթեոս Ուռհայեցին, Արիստակես Լաստիվերտցին, Կիրակոս Գանձակեցին, Թովմա Մեծոփեցին և ուրիշներ: Սակայն նշված հեղինակների տեղեկությունները ավելի վերաբերում են հայ բնակչության գաղթին՝ Հայաստանից դեպի Պարսկաստան, քան հայ գաղթօջախներին ու նրանց ներքին կյանքին:

Պարսկահայ գաղթավայրի մասին արժեքավոր տեղեկություններ գտնում ենք ուղեգրությունների մեջ, որոնք գրված են եվրոպացի ճանապարհորդների կողմից: Դրանցից են՝ Ուիլյամ Ռուբրուկը (1253—1255), Մարկո Պոլոն (1271—1295), Կլավիխոն (1405—1406), վենետիկի XV դ. ճանապարհորդներ՝ Կատերինո Զենոն, Ջոզիֆա Բարբարոն, Ամբրոսիոս Կոնտարինին և ուրիշներ, որոնց՝ հայերի մասին հաղորդած տեղեկությունները հավաքել, հայերեն է թարգմանել և հրատարակել Հ. Հակոբյանը «Ուղեգրություններ»-ի առաջին հատորում, որը լույս է տեսել Երևանում 1932 թվականին:

Պարսկահայ գաղթօջախների մասին, համեմատաբար, ավելի հարուստ նյութեր են պարունակում XVI—XVIII դարերի սկզբնաղբյուրները: Այս շրջանում հանդես են գալիս առանձին հայ պատմիչներ, որոնք իրենց աշխատություններում բավականաչափ տեղ են հատկացնում պարսկահայ գաղթավայրի պատմությանը: Այս կարգի աշքի ընկնող պատմաբաններից է հանդիսացել Առաքել Դավրիժեցին՝ էջմիածնի մատենագրական դպրոցում ուսում ստացած իր ժամանակի զարգացած անձնավորություններից մեկը: Նա Փիլիպոս և Հակոբ կաթողիկոսների հանձնարարությամբ, 1651—1662 թվականներին, գրի է առել իր նշանավոր «Պատմութիւն»-ը՝ նպատակ ունենալով նկարագրելու հայ ժողովրդի մեծագույն ողբերգություններից մեկը՝ Շահաբասի բռնագաղթը և Նոր Ջուղայի ու մյուս պարսկահայ գաղթօջախների հիմնումը: Գրի առած պատմական տեղեկությունների մեծ մասին ականատես է եղել հեղինակը, իսկ մյուս՝ իրենից առաջ տեղի ունեցող իրադարձությունների մասին նա տեղեկություններ է քաղել հիշատակարաններից, ժամանակագրություններից և պատմական այլ աղբյուրներից: Դավրիժեցին հայկական միակ պատմիչն է, որի աշխատությունը լույս է տեսել իր կենդանության օրոք՝ 1669 թվականին Ամստերդամում Ոսկան Երևանցու հրատարակությամբ:

Պարսկահայ մյուս հեղինակը, որը նպատակ է դրել գրելու Պարսկաստանի պատմությունը՝ նրա մեջ տեղ տալով նաև հայկական գաղթօջախներին, հանդիսացել է Խաչատուր Ջուղայեցին: Նրա աշխատությունը խորագրված է «Պատմութիւն Պարսից»: Ջուղայեցին իր աշխատությունը գրել է 1779 թ., հրատարակվել է այն էջմիածնում 1905 թ.:

XVIII դ. Պարսկաստանի հայ գաղթավայրի վերաբերյալ արժեքավոր սկզբնաղբյուր է հանդիսանում Աբրահամ Կրետացու «Պատմութիւն անցից իւրոց և նաղդը շահին պարսից» աշխատությունը, որը առաջին անգամ լույս է տեսել 1769 թվականին Կալկաթայում, իսկ հետո վերահրատարակվել Վաղարշապատում 1870 թ.:

Եվ վերջապես, ավյալ շրջանի վերաբերյալ հետաքրքիր տեղ-

կություններ կան Հակոբ Շամախեցու պատմական մի փոքրիկ աշխատության մեջ, որը հրատարակել է պրոֆ. Ս. Վ. Տեր-Ավետիսյանը Երևանում 1940 թ. «Նադիր շահի արշավանքները» խորագրի տակ։

Պարսկահայ գաղթօջախի պատմության վերաբերյալ արժեքավոր նյութեր է պարունակում Եզյանի հրատարակած փաստաթղթերի ժողովածուն «Сношения Петра Великого с армянским народом», որը լույս է տեսել 1898 թվականին։

Գաղթավայրի պատմության չհրատարկված աղբյուրներից անհրաժեշտ է մասնավորապես նշել Եղիաս Մուշեղի (XVIII դարի առաջին քառորդ) անտիպ հարյուրավոր նամակները, որոնք գտնվում են Մոսկվայում ՍՍՌՄ արտաքին գործերի արխիվում։ Եղիաս Մուշեղը իր ժամանակի աչքի ընկնող առևտրականներից մեկն է եղել, նամակագրություն է ունեցել Պարսկաստանի, Թուրքիայի և Անդրկովկասի աչքի ընկնող բազմաթիվ վաճառականների հետ։ Նա իր ուղարկած նամակների պատճենները, ինչպես և ստացած նամակները պահել է։ 1721 թվականին, Ռուսաստան փնացած ժամանակ, զրպարտվել և ձերբակալվել է։ Ռուսական իշխանությունները գրավել են նրա մոտ գտնված ամբողջ թղթերը և այս ճանապարհով փրկվել է նրա արխիվը։

Պարսկահայ գաղթօջախի պատմությունը վատ է ուսումնասիրված։ Մինչև այժմ չկա գիտական շատ ու քիչ արժեքավոր մենագրություն, որը նվիրված լինի պարսկահայերի ամբողջական պատմությանը։ Նրան անդրադարձել են միայն կամ Նոր Ջուղայի և կամ հայ-ռուսական հարաբերությունների պատմության կապակցությամբ։

Նոր Ջուղայի հայ գաղթօջախին նվիրված առաջին լուրջ գործը՝ այդ Հարություն Տեր-Հովհաննյանցի «Պատմութիւն Նոր Ջուղայի, որ յԱսպահան» խորագրով երկհատոր աշխատությունն է, որի առաջին հատորը լույս է տեսել Նոր Ջուղայում 1880 թվականին, իսկ երկրորդը՝ 1881 թվականին։ Հեղինակը պատմիչներից, հիշատակարաններից և արխիվային վավերագրերից հսկայական նյութ է հավաքել Նոր Ջուղայի մասին և զետեղել իր այդ գրքում։ Աշխատությունը սկսում է գաղթօջախի հիմնադրությունից և հասցնում մինչև XVIII դարի 80-ական թվականները։

Պարսկաստանի գաղթավայրին նվիրված փոքրիկ մենագրություն ունի Հ. Առաքելյանը, որը լույս է տեսել Վիեննայում 1911 թվականին։ Աշխատությունը վերնագրված է. «Պարսկաստանի հայերը. նրանց անցյալը, ներկան և ապագան»։ Այս մենագրությունը

գիտական առանձին արժեք չի ներկայացնում։ Չնայած հեղինակը փորձում է առաջին անգամ շարադրել XIV—XV դարերի պարսկահայ պատմությունը, սակայն բերված փաստերն աղքատիկ են և սխեմատիկ բնույթ ունեն։ Առաքելյանը կանգ է առել նաև Մեֆյան շրջանի պարսկահայ պատմության վրա մինչև XVII դարի յոթանասունական թվականները՝ օգտվելով մեծ մասամբ Տեր-Հովհաննյանից։

XII—XV դարերի պատմության վերաբերյալ մեզ ծանոթ ուսումնասիրություններից, պարունակած փաստական նյութի տեսակետից, համեմատաբար հարուստ է Ա. Ալպոյաճյանի «Հայ գաղթականության պատմություն» աշխատությունը, որի երկրորդ և երրորդ հատորներում հատուկ գլուխներ են նվիրված պարսկական գաղթօջախներին։ Ալպոյաճյանի մոտ օգտագործված են հայ և օտար աղբյուրներն ու գրականությունը։

Սովետական գիտնականներից պարսկահայ գաղթավայրի պատմության ուսումնասիրությամբ զբաղվել է պրոֆ. Ս. Վ. Տեր-Ավետիսյանը։ Նա կազմել է Պարսկաստանում գտնվող հայկական ձեռագրերի ցուցակը և ռուսերեն լեզվով գրել մի ուսումնասիրություն՝ «История Новой Джульфы» վերնագրով։ Այդ աշխատությունը լույս է տեսել Թբիլիսիում 1927 թվականին։

1961 թվականին ուշագրավ մենագրություն հրատարակեց Երևանի պետական համալսարանի դոցենտ Հ. Նաջարյանը «Թուրքիրանական հարաբերությունները XVI դարում ու XVII դարի սոսկին կեսին և Հայաստանը» խորագրով։ Նշված աշխատության մեջ քավականաչափ տեղ է հատկացված և Պարսկաստանի հայ գաղթօջախներին։

Պարսկահայ գաղթօջախները XVII—XV դարերում։

IV դարում Շապուհի կողմից Պարսկաստան քշված տասնյակ հազարավոր հայ գաղթականների մասին խոսել ենք առջևում։ Ի՞նչ եղան այդ գաղթականները, ինչքա՞ն ժամանակ նրանք կարողացան պահպանել իրենց գոյությունը, ոչինչ չգիտենք. սկզբնաղբյուրները համառորեն լռում են։ Ամենայն հավանականությամբ խալիֆայության շրջանում նրանք վերջնականապես ասիմիլյացիայի ենթարկվեցին։

Պարսկաստանում հայկական նոր գաղթօջախներ սկսել են ստեղծվել XI դարից գլխավորապես բռնի գաղթի և գերեվարության ճանապարհով։ Հայաստան խուժած սելջուկ-մոնղոլական և թուրք-պարսկական հարստահարիչներն անընդմեջ ավերել են երկիրը, կողոպտել ժողովրդին և տասնյակ հազարներով հայերի գերեվա-

րել ու քշել Պարսկաստան։ Այդ գերիներից շատ-շատերը իհարկե ոչնչացել են, իսկ կենդանի մնացածները կարողացել են նոր բնակավայրում ոտքի կանգնել, համախմբվել և գաղթօջախներ ստեղծել։ Եվ երբ կյանքը նոր բնակավայրում շատ ու քիչ բնականոն վիճակի մեջ է մտել, երբ տիրակալների ապստամբության և կողոպուտի քաղաքականությունը փոխարինվել է խաղաղության և տնտեսական կյանքը օրինավոր հունի մեջ դնելու քաղաքականությամբ, տարանցիկ ուղիների վրա հաստատված պարսկահայ գաղթօջախները հայրենի երկրից դեպի իրենց են սկսել քաշել գաղթականների նոր հոսանքներ։

Հայաստանից դեպի Պարսկաստան քշված գերիների և գաղթականների մասին հայ և օտար աղբյուրներում բավականաչափ տեղեկություններ կան։ Նրանք քաղվածաբար բերված են ակադ. Հ. Մանանդյանի «Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության» և Ա. Ալպոյաճյանի «Պատմություն հայ գաղթականության» աշխատությունների մեջ։ Ցույց տալու համար գերեվարության և բռնագաղթի այն միջոցները, որոնք կիրառել են օտար հարստահարիչները Հայաստանում, անհրաժեշտ ենք համարում բերել մի քանի փաստեր։

Առաջին խոշոր գերեվարությունը Հայաստանից դեպի Պարսկաստան կատարել են սելջուկները 1048 թվականին։ Այդ մասին մեզ տեղեկություն է հաղորդում ժամանակակից պատմիչ Արիստակես Լաստիվերտցին։ Նա պատմում է, թե ինչպես Տուղրիլ Բեկի հրամանով սելջուկյան մի բանակ Իբրահիմ Յանալիի և Գիրլմուշի գլխավորությամբ, «իբրև գայլս քաղցեալս անյագեալս ի կերակրոյ» մտնում է Հայաստան, սրով ու հրով քանդում, ավերում է Հայաստանի 24 գավառները և մեծ թվով գերիներ վերցրած ետ վերադառնում[1]։

Հաջորդ, 1048 թվականին, սելջուկ հարստահարիչները կրկնելով իրենց արշավանքը հիմնահատակ կործանում են առևտրաշատ Արծն քաղաքը (Թեոդոսուպոլսի մոտ), բնակչության մի մասին կոտորում, իսկ մյուսին՝ քշում գերություն։ Արծնը այդ ժամանակ Հայաստանի խոշոր քաղաքներից մեկն էր, նա ունեցել է 300.000 բնակչություն։ Սելջուկները, ըստ Մատթեոս Ուռհայեցու տեղեկության, կոտորել են 150.000 հոգի, իսկ մյուսներին գերեվարել և քշել Պարսկաստան։ «Եւ այսպէս դառն կոտորածիւս,— վշտով արձանագրել է ժամանակագիրը,— և չարաչար մահուամբս սրով անցու-

[1] Տե՛ս Արիստակէս Լաստիվերտցի, Պատմութիւն, Թիֆլիս, 1912, էջ 65։

վայելուչ և փառաւոր քաղաքն Արծն... և փառաւոր կանայք հանդերձ տղայօքն վարեցան ի գերութիւն յաշխարհն Պարսից յանգին ծառայութիւն[1]։

Սելջուկները տգևորված իրենց հաջողություններով, Հայաստանում նոր ասպատակություններ են կատարում 1049 թվականին։ Բյուզանդական բանակը փորձում է դիմադրել նրանց, սակայն հաջողություն չի ունենում։ Սելջուկները կրկին սանրում են Արևմտյան Հայաստանի շրջանները մինչև Մանազկերտ, Արծն և Կարին ու մեծ թվով հայեր, հույներ և վրացիներ վերցրած ետ վերադառնում։ Արաբ պատմիչ Իբն-ալ-Ասիրը հետևյալ տեղեկությունն է հաղորդում. «Մուսուլմանները (այսինքն՝ սելջուկները) այդ շրջանները (նկատի ունի Արևմտյան Հայաստանի շրջանները— Ա. Ա.) գրավեցին, կողոպտեցին նրանց, առան ամեն ինչ և գերի վերցրին ավելի քան 100000 մարդ։ Նրանք վերցրել էին այնպիսի մեծ քանակությամբ գրաստներ, ջորիներ, ավար և գույք, որն անկարելի է հաշվի առնել։ Ասում են, որ ավարը տարել են տասը հազար սայլի վրա...»[2]։ Սելջուկյան ասպատակությունները շարունակվում են հետագա տարիներին ևս։ Այսպես, 1053/1054 թ. հունվարի 6-ին նրանք հարձակվում են Կարսի վրա և «առեալ զգերի և զկապուտ քաղաքին գնացին յաշխարհն իւրեանց»[3]։ 1056 թ. հարձակվում են Երզնկայի վրա, վերցնում քաղաքը, կողոպտում այն և «առեալ զգերի և զկապուտ գաւառին դարձան անդրէն»[4]։ 1060 թ. Ալփասլանը հարձակվում է Սեբաստիայի վրա և «Բազում կոյսք և հարսունք և փառաւոր տիկնայք վարեցան ի գերութիւն յաշխարհն Պարսից»[5]։ 1063—1072 թվականներին Ալփասլանը մտնում է Աղվանք, այնտեղից անցնում Վրաստան, քանդում երկիրը և «... անհամար մանկունս և աղջկունս տարան ի Պարսիկս ի գերութիւն»[6]։ 1065 թ. օգոստոսի 15-ին Ալփասլանը գրավում է Անին և «... կանայք գեղեցիկք և ահարկուք՝ ի փառաւոր տանէն, վարեցան ի Պարսիկք ի գերութիւն և անհամարք և անթիւք մանկունս լուսատեսիլս և աղջկունս վայելուչս տարան զհետ մարցն...»[7]։ 1067 թ. սելջուկյան բանակը մըտ-

[1] Մատթէոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 103։

[2] «Из Тарих ал-камиль ибн ал-Асир, перев. П. Жузе, Баку, 1940 (հմմտ. Հ. Մանանդյանի «Քննական տեսություն հայ ժող. պատմ.», հ. III, էջ 46)։

[3] Արիստակէս Լաստիվերտցի, էջ 92։

[4] Հ. Քյուրտյան, Երիզա և նկեղյաց գավառ, հ. Ա, էջ 82—83։

[5] Մ. Ուռհայեցի, էջ 135։

[6] Նույն տեղը, էջ 146։

[7] Նույն տեղը, էջ 149։

նում է Ամանոս և Սև լեռների շրջանները, կողոպտում բնակչությա-
նը և մեծ թվով գերիներ տանում։ Սելջուկ զորավարը, գրում է Ուռ-
հայեցին, երբ «... գնաց յաշխարհն Պարսից, և մատուցեալ առաջի
սուլտանին ծառայս գեղեցիկս մանկունս և աղջկունս իբրև երկու
հազար»[1]։

Կարելի է հայ և օտար աղբյուրներից բերել բազմաթիվ այլ տե-
ղեկություններ ևս սելջուկների՝ Հայաստանում և նրա հարևան երկըր-
ներում կատարած գերեվարության մասին, բայց բերած փաստերը
բավական են պատկերացնելու սոսկալի այն խժդժությունները,
որոնք կատարել են օտարերկրյա հարստահարիչները Հայաստանում։
Անհիմն չէ հայ ողբերգակ պատմիչ Արիստակես Լաստիվերտցու
այն վկայությունը, թե «... ապականեցին զաշխարհս մեր ո՛չ մի
անգամ, այլ երիցս անգամ՝ մի ի միոյ վերայ դարձ արարեալ՝ մին-
չև առհասարակ հատաւ երկիրս ի բնակչաց, և բարձաւ կառաչ ա-
նասնոց»[2]։

Պարսկաստան գերի տարված բազմահազար հայ բնակչության
մի մասը ոչնչանում է գերեվարության դաժան ճանապարհին, մյուս
մասը վաճառքի հանվում ստրկավաճառության շուկաներում և ան-
հետ կորչում, իսկ մնացածները, մասնավորապես արհեստավոր-
ները և առևտրականները, որոնք տեղավորվում էին գլխավորապես
քաղաքներում, կարողանում էին ոտքի կանգնել, համախմբվել և
հայ գաղթօջախների հիմքը դնել։

XI—XII դարերում պարսկահայ գաղթօջախները հիմնականում
տեղավորված են եղել Պարսկաստանի հյուսիսային (Ատրպատա-
կանի) և հարավային (Սպահանի մոտիկ) շրջաններում։ XII դարում
Պարսկաստանում այնքան մեծաթիվ հայ բնակչություն է կենտրո-
նացված եղել, որ այնտեղ հայկական երկու խոշոր թեմ է ստեղծ-
վել՝ Հեր և Զարևանդի թեմ և Սալմաստի ու պարսկական մայրաքա-
ղաքի թեմ։ Տեղեկություններ կան, որ այդ երկու թեմերի թեմական
առաջնորդները մասնակցել են 1179 թվականին Հռոմկլայում հրա-
վիրված ազգային եկեղեցական ժողովին։ Մ. Չամչյանը իր «Պատ-
մության» մեջ հրատարակել է նշված ժողովի մասնակից անձնա-
վորությունների ցանկը, ուր մեզ հետաքրքրող թեմերի ներկայացու-
ցիչներն են հանդիսացել «Ղազար եպիսկոպոսը՝ Հեր և Զարևանդ
գաւառից» և «Ստեփանոս եպիսկոպոս Սալմաստայ և դրանն
Պարսից»[3]։

---

[1] Մ. Ուռհայեցի, էջ 189։

[2] Արիստակէս Լաստիվերտցի, էջ 93—94։

[3] Մ. Չամչյան, Պատմութիւն Հայոց, հ. III, էջ 132։

Պարսկահայ գաղթականության դրությունը զգալի չափով բա-
րելավվում է Մելիք շահի գահակալության ժամանակ (1072—1092),
որը, պետք է ասել, սելջուկյան առաջին շրջահայաց գահակալն էր,
որ տեսնելով ավերածությունների վնասակար հետևանքները, իր
նշանավոր վեզիր Նիզամ-ալ-Մուլքի խորհուրդով շրջադարձ կա-
տարեց քաղաքականության մեջ, սկսեց հանդուրժողական վերա-
բերմունք ցուցաբերել նվաճված ժողովուրդների նկատմամբ և ըս-
տեղծեց հնարավոր պայմանները երկրի տնտեսական կյանքի վե-
րականգնման ու առևտրի, արհեստագործության զարգացման հա-
մար[1]։ Ուռհայեցին անդրադառնալով Մելիք Շահին և նրա վարած
քաղաքականությանը, գտնում է, որ նա «... եղև այր բարի և ողոր-
մած և յոյժ քաղցր ի վերայ հաւատացելոցն Քրիստոսի»[2]։

Պարսկահայ գաղթօջախները ավելի մեծացան և Պարսկաստա-
նի տնտեսական կյանքում սկսեցին խոշոր դեր կատարել մասնավո-
րապես մոնղոլական տիրապետության շրջանում (1220—1385)։
Ահա այդ ժամանակ էր, որ նրանք իրենց մեջ ընդունեցին Հայաս-
տանից եկած գաղթականական նոր հոսանքներ։

Մոնղոլները, ինչպես հայտնի է, աշխատում էին նվաճած
երկրների բնակչությանը, մասնավորապես երիտասարդությանը,
դուրս հանել իրենց բնակավայրից և փոխադրել թիկունք։ Այդ քա-
ղաքականությամբ նրանք հետապնդում էին երկու նպատակ. կըռ-
վող ուժը երկրից դուրս հանելով հնարավորություն չտալ ապըս-
տամբություն կազմակերպելու իրենց դեմ, իսկ մյուս կողմից՝
նրանց տեղափոխելով իրենց ենթակա մի այլ երկրամաս՝ դրանով
իսկ զարկ էին տալիս տվյալ վայրի տնտեսական կյանքի զարգաց-
մանը՝ հնարավորություն տալով գաղթականներին նոր բնակավայ-
րում զբաղվել երկրագործությամբ, արհեստներով և առևտրով։

Մոնղոլների՝ Հայաստանում կատարած ամենից մեծ գերեվա-
րությունը տեղի է ունեցել 1236/37-ին, որի մասին տեղեկություն
է հաղորդում Կիրակոս Գանձակեցին։ Մոնղոլական զորքերը, գրում
է նա, Չարմաղանի գլխավորությամբ, ցրվելով Հայաստանում
«... ընդ կողմանս կողմանս աշխարհին՝ ասպատակէին զաշխարհս և
զգաւառս, բառնային զիշխանութիւնս ազգաց, առնուին զինչս և
զստացուածս՝ զկանայս նորահասակս և զմանկունս գերի առեալ ի
ծառայութիւն ստրկութեան»[3]։

---

[1] Տե՛ս История Ирана с древнейших времен до конца XVIII в., Л.,
1918, էջ 149։

[2] Մ. Ուռհայեցի, էջ 205։

[3] Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, Երևան, 1961, էջ 234։

Մոնղոլական մի այլ գերեվարություն կատարվել է Երզնկայից 1340 թվականին։ Այդ մասին մեզ տեղեկություն է հաղորդում Սարգիս գրիչը. «Եւ ո՞վ կարէ պատմել զանաւրէնութիւնս նոցա,— բացատրում է գրիչն իր հիշատակարանում,— զոր արարին և գործեցին, քանզի բազում գաւառս գերեցին և աւերելով կործանեցին...»[1]։

Մոնղոլական գերիշխանության շրջանում հայ բնակչություն է տեղափոխվել Պարսկաստան ո՛չ միայն բռնագաղթի ճանապարհով, այլև կամովին։ XIII դարում, ինչպես պարզված է, առևտրական տարանցիկ ճանապարհները հարավից տեղափոխվում են հյուսիս։ Այդ ճանապարհները Թավրիզի վրայով անցնում էին Տրապիզոն և Այաս։ Պարսկաստանում այդ նոր ճանապարհների վրա հիմնվում են մի շարք առևտրաշատ կենտրոններ։ Մայր հայրենիքում ստեղծված ծանր պայմանները ստիպում են բազմաթիվ հայ առևտրականների և արհեստավորների տեղափոխվել և հաստատվել Պարսկաստանի այս քաղաքներում, ուր գործունեության ավելի լայն ասպարեզներ էին բացվում իրենց առջև։ Եվ այսպիսով, մոնղոլական տիրապետության շրջանում ստվարաթիվ գաղթօջախներ են ստեղծվում Թավրիզում, Սուլթանիեում, Մարանդում, Խոյում, Սալմաստում, Մարաղայում, Ռեշտում և այլ քաղաքներում։ Տեղեկություններ կան, որ բազմաթիվ հայեր և քրիստոնյա այլ ժողովուրդներ են ապրել Ռնյ քաղաքում, որը մինչև սելջուկյան արշավանքները, Արևելքի առևտրական խոշոր կենտրոններից մեկն է հանդիսացել և կոչվել է «Տիեզերքի վաճառատուն»[2]։

Հյուսիսային տարանցիկ ճանապարհի վրա հաստատված պարսկական քաղաքներից ամենից խոշոր հայաշատ կենտրոնն է հանդիսացել Թավրիզը (Դավրիժը), որը հայկական աղբյուրներում հիշվում է նաև Գանձակ Շահաստան անունով։ Նա, ըստ ուղեգիր Կլավիխոյի տեղեկության, XVI դ. սկզբներում ունեցել է ավելի քան 200.000 տուն՝ այսինքն՝ մոտ մեկ միլիոն բնակչություն[3]։ Այս քաղաքում են կենտրոնացած եղել Եվրոպայից, Հնդկաստանից, Անդրկովկասից և այլ վայրերից վաճառքի բերված ապրանքները[4]։ Թավրիզի հայ բնակչության թիվը բավականին մեծ է եղել։ Վենետիկի նշանավոր ճանապարհորդ Մարկո Պոլոն, որը 1271 թվականին եղել

[1] «Ազգ. հանդես», գիրք XII, 1905 թ., էջ 165։
[2] Հ. Աճառյան, Պարսկաստանի հայերը, էջ 19։
[3] Հ. Հակոբյան, Ուղեգրություններ, հ. I, էջ 122։
[4] «Сборник статей по истории Азербайджана», т. I, Баку, 1949, էջ 101, 141։

է Թավրիզում և իր ուղեգրության մեջ հանգամանորեն կանգ է առել այդ քաղաքի նկարագրության վրա։ Նա տեղի քրիստոնյա ժողովուրդներից առաջին հերթին հիշում է հայերին[1]։ Մեզ հասած մի տեղեկության համաձայն, Թավրիզը XVI դ. ունեցել է 700 տուն բնակչություն՝ 12 եկեղեցիներով, որոնց մի մասը հետագայում գրավել և մզկիթների են վեր ածել մահմեդականները[2]։ Համենայն դեպս XIV—XV դարերում Թավրիզում այնքան շատ հայեր են կենտրոնացված եղել, որ 1345 թ. գրված հայկական մի ձեռագրի հիշատակագիր՝ ներսես Գրիչը, Թավրիզը համարում է ոչ միայն ֆարսերի (պարսիկների), այլև հայերի մայրաքաղաք[3]։ Թավրիզի բնակչության ճնշող մեծամասնությունը հանդիսացել են արհեստավորներն ու առևտրականները։ Քաղաքին մոտիկ գտնվել են նաև հայկական գյուղեր։ XIV—XV դարերում Թավրիզի հայ գաղթօջախներում գրվել են մի շարք ձեռագրեր, որոնք որոշ պատկերացում են տալիս տեղի հայ գաղթօջախի մասին։ Թավրիզում գրված հնագույն հայկական ձեռագիրը 1334 թվականից է։ Այն ընդօրինակված է Սարգիս գրչի կողմից ոմն Հովհաննեսի պատվերով։ Գրչի հիշատակարանում Թավրիզում հիշվում է երկու եկեղեցի՝ Ս. Սարգիս և Ս. Աստվածածին անուններով[4]։

Հաջորդ՝ 1335 թվականին գրված չափածո մի հիշատակարանից երևում է, որ Թավրիզի հայ համայնքը բաժանված է եղել երեք հատվածների՝ լուսավորչականների, կաթոլիկների ու հունադավանների, և նրանց մեջ տեղի են ունեցել դավանական վճռաբեկ վեճեր։ Հիշատակագիր Հովհաննես Տարբերունին, ինչպես երևում է, պարսավական աշխատություն է գրած եղել կաթոլիկների և հունադավանների դեմ։

«...Ես Յովհաննէս Տարբերունի,
Որ սակաւ բանքս գրեցի,
Ոչ զօրաւոր, այլ ըստ կարգի,
Դէմ Հոռոմոց և Ֆռանկի...
Յիշման առնել զիս արժանի,
Ջեղբայր Ասլանս փառաւք ի լի
Եւ զայլ եղբարսդ Թավրիժի»[5]։

[1] «Сборник статей по истории Азербайджана», т. I, էջ 60։
[2] Ա. Ալպոյաճյան, ՊՀԳ, II, էջ 313։
[3] ՀՄՄ, ձեռ. № 731, թ. 252բ։
[4] ՀՄՄ, ձեռ. № 78, թ. 291բ։
[5] ՀՄՄ, ձեռ. № 2776, թ. 227ա—227բ։

Ինչպես երևում է, պարսկահայությունը Վատիկանի ուշադրության կենտրոնում է եղել։ Ըստ տեղեկությունների, XIII—XV դարերում կաթոլիկ քարոզիչները լիքն էին պարսկահայ գաղթօջախներում։ Վատիկանը քարոզչական երեք կենտրոն էր ստեղծել Պարսկաստանում՝ Թավրիզում, Մարաղայում և Սուլթանիեում։ Նա 1330 թվականին հռոմադավան հայության համար եպիսկոպոսական թեմ հիմնեց Պարսկաստանում՝ նստատեղ ընտրելով Սուլթանիեն։ Առաջին թեմական առաջնորդն է հանդիսացել Հովհաննես Կոր (Jean de Cor) արքեպիսկոպոսը[1]։

1336 թ. գրված ձեռագրի հիշատակարանից երևում է, որ Թավրիզը Ատրպատականի հայ լուսավորչական թեմի առաջնորդական կենտրոն է եղել։ Հիշատակարանում ասված է, որ ձեռագիրը գըրված է «յեպիսկոպոսութեան և վերայդիտողութեան սրբոյ առաքելոյն Թադէոսի տէր Զաքարիայի և տէր Տիրացւի»[2]։ Նշված եպիսկոպոսներից առաջինը՝ Զաքարիան, հավանական է, առաջնորդ է եղել, իսկ երկրորդը՝ տիրացու, նրա փոխանորդը։ Այդ թվականից վեց տարի հետո Թավրիզում գրված մի այլ ձեռագրի հիշատակարանից երևում է, որ Զաքարիան մահացել է, և առաջնորդական պաշտոնը անցել է Տերտեր եպիսկոպոսի ձեռքը[3]։

Ըստ նույն ձեռագրի հիշատակագրի տեղեկության, Թավրիզի քրիստոնյա բնակչության վիճակը, մոնղոլական տիրապետության շրջանում, այնքան էլ գովական չի եղել. նրանք ենթարկվել են հրոնական ճնշումների և հալածանքի։ Տիրակալները, գրում է հիշատակագիրը, «...ազգի-ազգի հալածանս յարուցանէին ի վերայ քրիստոնէից, կապոյտ տալպանդ ետուն փաթաթել, և ի տեղիս տեղիս եկեղեցիք ի հիմանց տապալեցին...»[4]։

Հայկ. ՍՍՌ պետական մատենադարանի № 2189 ձեռագրում հետաքրքիր նկարագրություն կա Թավրիզի հայերի և ադրբեջանցիների մղած պայքարի մասին ընդդեմ քաղաքը պաշարող Թեմուրի զորամասերի. «Այսօր ի դուրս ելան մեր հայերս և բերդի թուրքերն,— կարդում ենք այնտեղ,— և ժ (10) չաղաթա սպանին, և է (7) մարդ բռնեցին և բազում աւար առին»[5]։

XIV—XV դարերում պարսկահայ խոշոր գաղթօջախ է հաստատված եղել Սուլթանիեում, որը հիմնվել է մոնղոլ էլխան Արղունի (1284—1291) կողմից Զենջանի և Ղազվինի միջև և ընդարձակվել նրա հաջորդների ժամանակ։ Մոնղոլ իշխանավորները ցանկանալով Սուլթանիեն դարձնել տարանցիկ առևտրի խոշոր կենտրոն, բռնի միջոցներով այստեղ են տեղափոխել մեծ թվով առևտրականներ և արհեստավորներ։ XIV դարի սկզբներին էլխանության մայրաքաղաքը Թավրիզից տեղափոխվել է Սուլթանիե։

Սուլթանիեի հայ բնակչության մի մասը, հավանական է, եկել է Անիից։ Այդ մասին է վկայում 1326 թ. կարապետ գրչի հիշատակարանի հետևյալ տեղեկությունը. «Եւ ունէր սա (այսինքն՝ իր պատվիրատու Գրիգոր քահանա— Ա. Ա.) զբնակութիւն իւր ի մեծ մայրաքաղաքն Անի։ Արդ վասն աւերման աշխարհին իւրեանց, ևս առաւել վասն մայրաքաղաքին Անւոյ, եկեալ բնակէր ի տեղիս յայս»[1]։ Անիից Սուլթանիե է տեղափոխվել և այնտեղ աշխատել հայ մատենագրության մի այլ ներկայացուցիչ ևս՝ Մխիթար Անեցին։ Նա 1338 թվականին Սուլթանիեում գրած չափածո մի հիշատակարանում երազանքով է հիշում իր ծննդավայր Անին.

«Յիշեմ զգաւառն իմ հայրենին
Զմայրաքաղաք ամուրն Անին»[2]։

Նույն հիշատակարանից երևում է, որ Սուլթանիեն ևս, Թավրիզից անկախ, ունեցել է իր հայկական թեմը՝ թեմական առաջնորդներով։ Մխիթար Անեցին խնդրում է հիշել.

«Առաջնորդաց այս նահանգին
Տէր Սարգսի, տէր Գրիգորին»[3],

Տեր Սարգիսը, որպես Սուլթանիեի հայոց թեմի առաջնորդ, հիշված է հայկական այլ ձեռագրերում ևս։ Ուշագրավն այն է, որ երկու ձեռագրի հիշատակարանում Սուլթանիեում առաջնորդ է հիշված ոչ թե մեկ, այլ երկու անձնավորություն՝ Սարգիս քորեպիսկոպոս, և Գրիգոր եպիսկոպոս։ Սուլթանիեի հայոց առաջնորդին այնքան մեծ նշանակություն է տրվել, որ որոշ ձեռագրերում հիշվում է «միտրոպոլիտ»[4]։ Ամենայն հավանականությամբ, իշխանություն-

---

1 Nouvelles Annales des Voyages par de S.—Martin, Paris, 1852 october (Հմմտ. Հ. Առաքելյան, Պարսկաստանի հայերը, էջ 19)։

2 ՀՊՄ, ձեռ. № 5968, թ. 243բ։

3 ՀՊՄ, ձեռ. № 6273, էջ 151։

4 Նույն տեղը, էջ 171։

5 ՀՊՄ, ձեռ. № 2189, թ. 319բ—390ա։

1 Ա. արքեպ. Սյուրմեյան, Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Երուսաղէմի էջ 317։

2 ՀՊՄ, ձեռ. № 4429, թ. 149ա։

3 Նույն տեղը, թ. 148բ։

4 ՀՊՄ, ձեռ. № 212, թ. 310բ։

ները պարտադրել են Սուլթանիեում բնակություն հաստատել ոչ միայն առևտրականներին և արհեստավորներին, այլև հոգևոր առաջնորդներին։ Սուլթանիեն միջազգային առևտրում իր իշխող դիրքը պահպանեց մինչև էլխանության անկումը՝ 1385 թվականը։ XIV—XV դարերում հայկական մեծ թվով բնակչություն է ունեցել նաև Խոյ քաղաքը։ Իսպանացի ճանապարհորդ Կլավիխոն, որը 1405 թ. հունիսի 5-ին եղել է Խոյում, իր ուղեգրության մեջ հայտնում է, որ այդ քաղաքի «բնակչության մեծ մասը հայ ցեղից են»[1]։ Խոյ քաղաքում 1440 թ. ընդօրինակվել է մի ձեռագիր Հակոբ գրչի կողմից։

Ատրպատականի հայկական խոշոր գաղթօջախներից է հանգիստացել Մակուն։ Կլավիխոն հայտնում է, որ 1405 թվականի հունիսի մեկին գիշերել է Մակուի բերդում, որի իշխանը, ինչպես և բերդը պաշտպանող զինվորները կաթոլիկ հայեր են եղել. «ազգությամբ հայ էին,—գրում է նա,—և խոսում էին հայերեն»[2]։ Մեզ են հասել Մակուում գրված մի քանի ձեռագրեր՝ Սարգիս գրչինը 1383 թ., Մխիթար գրչինը՝ 1406 թ., Գրիգոր գրչինը՝ 1423 և այլն։

Հայ գաղթավայր է հանդիսացել Մարաղան։ Այստեղ գրվել են հայերեն ձեռագրեր և պարսկերենից թարգմանվել աշխատություններ[3]։

Սկզբնաղբյուրներում ստվարաթիվ հայ բնակչության գոյության մասին հիշատակություններ կան նաև Սալմաստ քաղաքում և նրա շրջակա գյուղերում։ Ըստ մի հիշատակագրության, Սալմաստ քաղաքի հայ համայնքը 1456 թվականին ձեռագիր է գրել տվել և հանձնել այն կազմելու[4]։ Հայկական գաղթօջախ է գտնվել նաև Ռեշտում։ Մեզ է հասել Ռեշտում 1494 թ. գրված մի «Ոսկեփորիկ», որի պատվիրատուն է հանդիսացել տեղի ծխատեր Վարդան քահանան։ «Ոսկեփորիկ»-ում տեղեկություն կա տեղի «Հակոբ հայրապետի» անունով հայոց եկեղեցու մասին[5]։ Ծխատեր քահանայի և եկեղեցու հիշատակության փաստերը, անշուշտ, վկայում են, Ռեշտի հայկական գաղթօջախի գոյությունը։

Բավականին խոշոր հայկական գաղթօջախ գտնվել է Ուրմիայում։ Այս գաղթօջախը, ըստ Թովմա Մեծոփեցու տեղեկության, հիմնովին տուժել է 1425 թվականի Իսկենդերի վայրագություններ քի հետևանքով, որը գրավելով քաղաքը, կոտորել է բնակիչներին՝

1 Հ. Հակոբյան, Ուղեգրություններ, հ. I, էջ 117։
2 Նույն տեղը, էջ 113։
3 Հ. Տաշյան, Վիեննա, Մխ. ձեռ. ցուցակ, էջ 741։
4 Ս. Տեր-Ավետիսյան, Նոր-Ջուղայի ձեռ. ցուցակ, էջ 142։
5 ՀՊՄ, ձեռ. № 6273, թ. 216ա—216բ։

բացի մանուկներից և աղջիկներից, իսկ քաղաքի բնակչության կէսից ավելին, ըստ պատմիչի վկայության, եղել են հայեր[1]։

XIV դ. վերջերից մինչև Սեֆյանների հանդես գալը Հայաստանը և պարսկահայ գաղթօջախները ապրում են աննկարագրելի կողոպուտի, կոտորածի և գերեվարության մի սոսկալի շրջան։ Պատմիչները այնպիսի սարսռեցուցիչ տեսարաններ են նկարագրում, որ մարդ ակամա զարմանում է, թե ինչպե՞ս է կարողացել հայ ժողովուրդն ազատվել այդ փոթորիկներից և գոյատևել։ Մենք նպատակ չունենք կանգ առնել նշված ժամանակաշրջանում կատարվող վայրագությունների վրա, սակայն ցանկանալով ցույց տալ, թե ինչպիսի դաժան փորձությունների առջև է կանգնած եղել հայ ժողովուրդը. ինչպես մայր հայրենիքում, այնպես և տարագրության մեջ, ցանկանում ենք թվարկել մի քանի փաստեր։

1385 թ. հյուսիսից Անդրկովկասի վրայով Պարսկաստան է արշավել Թոխթամիշ խանը, «որ եկեալ մտին ի Թաւրէզ Յայտնութեան Քրագալուցին, աւերեցին և գերեցին աւելի քան Զի բիւր (200 000) զայր և զկին, և անցին ընդ Նախչուան և ընդ Սիւնիս, և գնացին յաշխարհն իւրեանց»[2]։

1386 թ. Լենկ Թեմուրը մտել է Սուրմալու և գերել «զքաղաքն և զամենայն շրջակայ գեղորայսն»[3]։

Նույն թվականին Լենկ Թեմուրն ասպատակել է Այրարատյան նահանգը և «առնել զառ և զաւար և զգերին անթիւ, զոր ոչ ոք կարէ ճառել զդէտս և զդառնութիւն մերոյ ազգին»[4]։

1387 թ. Լենկ Թեմուրը հարձակվել է Վանի վրա, ավերել քաղաքը՝ «չարչարանօք, սպանմամբ և գերավարութեամբ»[5]։

1395 թ. Լենկ Թեմուրը հարձակվել է Մերդինի վրա, «աւերեաց քաղաքն... և այլքն ամենայն 7500 ամենեքեան գերեցան»[6]։

1396 թ. Լենկ Թեմուրը նորից է մտել Հայաստան, ասպատակել երկիրը, ձեռք ընկած մարդկանց գերել։ Նրա զինվորները նույնիսկ բարձրանում են լեռները և «իբրև զանասուն էրէոց որսացին և կալան զամենեսին, զոմանս սպանին, զոմանս գերեցին և զաշխարհն մեր հրոյ ճարակ եւտուն»[7]։

1 Թովմա Մեծոփեցի, էջ 85։
2 Սամուէլ Անեցի, էջ 171։
3 Մեծոփեցի, էջ 17—18։
4 Նույն տեղը, էջ 18—19։
5 Նույն տեղը, էջ 30։
6 Նույն տեղը, էջ 45։
7 Նույն տեղը, էջ 48։

1399 թ. Լենկ Թեմուրն ասպատակում է Վրաստանը և գերի տանում 60.000 հոգի, որի մեջ քիչ թիվ չեն կազմել նաև հայերը։

Լենկ Թեմուրից հետո Հայաստանում և պարսկահայ գաղթօջախներում շարունակվում են անընդմեջ ասպատակությունները Ղարա Յուսուֆի (1388/9—1405), Իսկանդարի (1420—1437), Ջևան շահի (1444—1466) և ուրիշների ժամանակ[1]։

Հայաստանից, Վրաստանից և Ատրպատականից քշված այս գաղթականների մեծ մասը տարվում էր Խորասան[2]։

Պարսկահայ գաղթօջախները XVI—XVIII դարերում:

Լենկ Թեմուրի և նրանից հետո Պարսկաստանում գահակալող տիրակալների վայրագությունների հետևանքով պարսկահայ գաղթօջախները զգալի չափով տուժեցին, սակայն բոլորովին չչքնաչացան. նրանց մեծ մասը շարունակեց իր գոյությունը նաև Սեֆյան հարստության շրջանում։

Ուշագրավ է այն, որ Սեֆյան հարստության հիմնադիր Իսմայիլը, փոքր հասակում, ապաստանել է Աղթամարում և իր դաստիարակությունը ստացել այնտեղ, չնայած հետագայում նրա որդին՝ շահ Թահմազը, երախտամոռ գտնվեց հայերի նկատմամբ։ Այդ նկատի ունենալով է, որ Հովհան Վարագեցին իր եղերգության մեջ հանդիմանական խոսքեր է ուղղել շահ Թահմազի հասցեին.

«Նա ոչ յիշեաց զերախտիս մեր
Զոր արարք մեք հօր նորա
Քաղցր յուսով իբր հարազատ,
Դիեցուցաք ի յԱղթամար.
Ի մեզ ուսաւ, ի մեզ սնաւ
Մինչև դառնալ քաջ զօրավար
Ի մէնջ առեալ յոյժ զօրավիգ
Փութաց Պարսս Սեֆեան աթոռ»[3]։

Պետք է ասել, որ պարսկահայ գաղթավայրը Սեֆյան շրջանում ևս հանգիստ վիճակում չգտնվեց. XVI դարի առաջին քառորդից սկիզբ առան պարսկա-թուրքական պատերազմները և փոփոխական հաջողություններով անընդմեջ շարունակվեցին մինչև Սեֆյանների անկումը[4]։ Պատերազմող կողմերից ամեն մեկը, իր հաջողության ժամանակ, մտնում է հակառակորդի երկիրը և մեծ ավարով ու գերեվարությամբ ետ վերադառնում։ Պարսկահայ ստվար գաղթօջախների մեծ մասը, դժբախտաբար, գտնված էր Պարսկաստանի հյուսիս-արևմտյան մասում, ուր և տեղի էին ունենում պարսկա-թուրքական պատերազմական գործողությունները, և ամենից շատ տուժում էին նրանք։ Մատնացույց անենք մի քանի փաստեր։

1514 թ. օգոստոսի 21-ին Ջալդրանում սուլթան Սելիմի և շահ Իսմայիլի բանակների միջև տեղի ունեցող կռվի ժամանակ, երբ պարսիկները պարտություն կրեցին, թուրքական զորքերը առաջանալով մտան Թավրիզ և այստեղից գերի տարան 3000 հայ արհեստավորների իրենց ընտանիքներով[1]։

XVI դ. 80-ական թվականներին թուրքերը գրավեցին պարսկական մի քանի շրջաններ և նրանց բնակիչներին՝ հայերին, պարսիկներին և ադրբեջանցիներին, թվով 60.000 հոգի քշեցին Թրակիայի կողմերը[2]։

Հայ մատենագիրներից մեկը՝ Հովհաննես Մարեցին, թուրք զավթիչների հայկական շրջաններում կատարած վայրագությունների մասին հետևյալն է գրում. «Արդ՝ զնեղութիւն և զդառնութիւն վշտաշատ ժամանակիս ո՞վ կարէ ընդ գրով արկանել ո՛վ եղբայր, բայց փոքր ի շատէ ողբալով ասասցուք, քանզի յաղագս ծովացեալ մեղաց իմոց յազգէն մահմետականաց, որ ըմբռնեալ էին զգաւառս Հայոց, աւերելով և գերելով զամենայն շէնս և զանշէնս... ոչ գոյր փախստեան ճարակ և թաքստեան տեղիք, այլ ամենայն մարդ ի տարակուսանս կայր, և երանի տային մեռելոց և ոչ այս կենդանեաց ...աւերեցին զբազում երկիր... և զբազումս գերեցին՝ զայր և զկին, զմեծ և զփոքր, զաղչկունս և զանմեղ տղայս... և ոչ թէ մի ամ գործեցաւ ոճիրս այս, երեք-չորս տարի այսպիսի վրդովումն եղև աշխարհիս»[3]։

Ժամանակակից մի այլ գրիչ վշտով արձանագրել է, որ թշնամին ոչ թե մեկ, այլ «հինգ տարպայ», այսինքն՝ հինգ անգամ է եկել։ Ըստ նրա տեղեկության, երեք օր այնպիսի կռիվ և այրումնհեղություն է եղել, որ «զարիւնն լաշն (դիակը) կու տանէր»[4]։

Սեֆյան հարստության հիմնադիր շահ Իսմայիլը մայրաքաղաք ընտրեց Սպահանը։ Նրա գահակալության շրջանում է հիմնվել Սպահանի հայ գաղթավայրը։ Սխալ է այն կարծիքը, որ իբրև թե Սպահանի հայ գաղթօջախը ստեղծվել է Շահաբասի բռնագաղթի

---

1 Մնձոփեցի, էջ 67։

2 ՀՊՄ, ձեռ. № 4696, թ. 253բ—256բ, ՀՊՄ, ձեռ. № 996, թ. 564բ։

3 «Գեղունի, 1905 թ., էջ 120։

4 Տե՛ս Հ. Խ. Նաջարյան, Թուրք-իրանական հարաբերությունները XVI դարում ու XVII դ. առաջին կեսին և Հայաստանը, Երևան, 1961։

1 Հ. Առաքելյան, Պարսկաստանի հայերը, էջ 23։

2 Հ. Նաջարյան, Թուրք-իրանական հարաբերությունները, էջ 153։

3 ՀՊՄ, ձեռ. № 2776, թ. 266բ։

4 Բ. Սարդիսյան, Վենետ. ձեռագրերի ցուցակ, հ. I, էջ 667—668։

շնորհիվ։ Շահաբասի բռնագաղթից առաջ Սպահանում հայ համայնքի գոյության մասին են խոսում, ամենից առաջ, այնտեղ գրտնըվող XVI դարի հայկական մի քանի արձանագրություններ, որոնց մասին հիշատակություն ունի Տեր-Հովհաննյանցը. «Ի հանգստարանին Ջուղայու կան քանի մի տապանաքարինք,— գրում է նա,— որոց թուականն է հազար, որք յիսուն և չորս ամօք յառաջ են, քան զՋուղայու հիմնարկութիւնն»[1]։ Այնուհետև XVI դարի եվրոպական ճանապարհորդները իրենց ուղեգրություններում մեջ տեղեկություններ են հաղորդում Սպահանում բնակություն հաստատած հայ առևտրականների և արհեստավորության աշխույժ գործունեության մասին։ Ի դեպ, այդ առևտրականներից մեկն է եղել խոջա Նազարը, որի Շահաբասից 1580 թվականին ստացած արտոնագրի հայերեն թարգմանությունը հրատարակել է Տեր-Հովհաննյանցը[2]։ Սպահանի հայ գաղթօջախը մինչև Շահաբասի բռնագաղթը, իհարկե, փոքր է եղել, նա ստվարացել է բռնագաղթից հետո։

Դավրիժեցու հաղորդած տեղեկությունից երևում է, որ նախքան Շահաբասի բռնագաղթը, Աղվանքից և Գողթնից հայ բնակչության մի քանի խմբեր, թուրքական ծանր հարկապահանջության հետևանքով, թողել էին իրենց հայրենի բնակավայրը և գաղթել Պարսկաստան։ Շահաբասը սիրալիր ընդունել է հայ գաղթականներին և բնակավայր հատկացրել նրանց Սպահանում։ Գաղթողների մեջ եղել են մի շարք հայ մելիքներ, որոնց Դավրիժեցին հիշում է անուններով, Դիզակի չորս հայ գյուղի բնակիչները և Գողթնի Դաշտ գյուղի բնակչության մեկ երրորդը[3]։

Շահաբասի բռնագաղթի արյունոտ պատմությունը հայտնի իրադարձություն է և բավականաչափ ուսումնասիրված, ուստի հարկ չենք համարում նրա վրա հանգամանորեն կանգ առնել։ Սակայն ցույց տալու համար, թե ինչ ահռելի ողբերգություն է եղել այդ հայ ժողովրդի կյանքում, անհրաժեշտ ենք համարում խոսել այն դաժան միջոցառումների մասին, որոնք կիրառել է Շահաբասը բռնագաղթի ժամանակ։

1603 թվականին, ինչպես հայտնի է, Շահաբասն անցնում է Արաքսը և մտնում Հին Ջուղա։ Ջուղայեցի հայ խոջաներն արտակարգ լավ ընդունելությոյն են ցույց տալիս։ Պարսկական բանակը գրավում է Նախիջևանը և շարժվում Արարատյան դաշտ։ Նրանք

[1] Հ. Տէր-Հովհաննեանց, Պատմութիւն Նոր Ջուղայու, հ. I, Նոր Ջուղա, 1880, էջ 158։ (Այս մասին տես նաև «Պարսկահայ օրացույց», 1929 թ., էջ 11)։

[2] Նույն տեղը, հ. I, էջ 158։

[3] Առաքել Դաւրիժեցի, էջ 16։

պաշարում են Երևանը, ուր ամրացել էր թուրքական կայազորը։ Երևանի գրավումը ձգձգվում է և տևում ինն ամիս։ Երևանի բերդի պաշարման ընթացքում պարսկական մի այլ զորամաս անցնում է թուրքական սահմանը Կարինի ուղղությամբ, ասպատակում Վանի, Մանազկերտի, Ալաշկերտի, Կարինի, Բասենի, Խնուսի գավառները և մեծ թվով գերիներ բերում[1]։

Պարսկական վայրագություններին ականատես վանեցի մի գրիչ իր ընդօրինակած ձեռագրի մեջ հետևյալ հիշատակագրությունն է թողել. «Վա՛յ մեզ հազար բերան, որ էնց բաներ տեսանք, կարմիր գտակն (այսինքն՝ պարսիկները — Ա. Ա.) եկաւ ի վերայ Վանայ... քազում գերիք տարաւ, որ թիւրն ու համարն չիմացանք»[2]։

Արևմտյան Հայաստանից բերված այս գաղթականների թիվը 60 հազար է հաշվում[3]։

Երևանը վերցնելուց հետո, երբ տեղեկություններ են ստացվում, որ թուրքական զորաբանակը Սինան փաշայի հրամանատարությամբ եկել, հասել է Կարս, Շահաբասը որոշում է իրագործել իր հրեշային ծրագիրը՝ հայերին բռնի գաղթեցնել Պարսկաստան։ Այդ միջոցառումը Շահաբասն օգտակար է համարում երկու տեսակետից. նախ՝ ամայի ընդարձակ տարածություն կստեղծեր արշավող թուրքական բանակի առջև ու դրանով կդժվարացներ նրա պարենավորումը, և ապա՝ հայ գաղթականությունը Պարսկաստան տեղափոխելով նպաստած կլիներ Պարսկաստանի տնտեսական կյանքի զարգացմանը։

Շահաբասի կողմից բռնագաղթի մասին կարգադրություն արվելուց անմիջապես հետո, պարսկական զորքերը գործի են անցնում. նրանք առանձին ջոկատների բաժանված, սկսում են շրջել գյուղերը, տեղահան անել հայ բնակչությանը և քշել դեպի Պարսկաստան։ Նրանք տեղահան արված գյուղերն այրում են, որպեսզի գաղթականները չկարողանան ետ վերադառնալ։ Շահաբասն Արևելյան Հայաստանը սանրում, Պարսկաստան է քշում մոտ կես միլիոն բնակչություն։

Բռնագաղթի ականատես հեղինակներից մեկը՝ Ավգուստինոս Բաջեցին պատմում է, թե ինչպես հայկական գյուղերն են մտնում Շահաբասի զինվորները «որպէս կայծակն ի յերկնից» և ստիպում բնակչությանը անմիջապես գաղթել։ Նրանք թույլ չեն տվել անգամ

[1] Դաւրիժեցի, էջ 35։

[2] Տե՛ս ՀՄՄ, ձեռ. № 5315, թ. 208ա։

[3] Ե. Լալայան, Վասպուրականի ձեռագրաց ցուցակ, էջ 822։

դաշտից բերել իրենց ապրանքները կամ վերցնել անհրաժեշտ իրերը. «Թողինք տունն ապրանքով լի, հօտն ի դաշտին,— գրում է Բաջեցին,— հայրն որդին ուրացաւ, մայրն ի դուստրն ուրացաւ... Դուրս արին ամենայն մարդ իւր յերկրէն որպէս նահիր և ինքեանք եղեն սրով և նիզակով քշողք. խառնեցան մէկ զմէկ, որպէս գառն ի ոչխարն խառնի, լալն ու հառաչանքն ելաւ մինչև յերկինս...»[1]: Ըստ Առաքել Դավրիժեցու տեղեկության, տեղահան արված հայ բնակչության թափորը մեկ օրվա ճանապարհի երկարություն է ունեցել:

Սրտաճմլիկ է եղել մասնավորապես հայ գաղթականության Արաքսից անցկացնելու տեսարանը: Պարսիկ զինվորները թուրքական մոտեցող զորքերի սպառնալիքի տակ ստիպել են գաղթականությանը լցվել գետը և անցնել ով ինչպես կարող է: Հապաղող գաղթականներին սարսափահար անելու նպատակով, պարսիկ զինվորականները դիմել են գազանային անգթության. կտրել են երկու հայ մարդու գլուխ, տնկել ձողերի վրա գետանցքի մոտ որպես սպառնալիք, իսկ ովքեր դանդաղած են եղել, կտրել են նրանց քիթը կամ ականջը: Պարսիկները այսպես ստիպում են գաղթել նաև Շահաբասին սիրալիր ընդունող ջուղայեցիներին. նրանք լացով դուրս են գալիս իրենց տներից, փակում դռները և բանալիները բերում ու նետում Արաքս գետը:

Պարսկաստան քշված բազմահազար հայ բնակչության կեսից ավելին ոչնչանում է. շատերը ուժասպառ եղած մահանում են ճանապարհներում, ոմանք խեղդվում են Արաքսն անցնելիս, շատերը ցրտահար են լինում և այլն: «Թէ զմտաւ ածեմք,— գրում է հիշատակագիր մեկը— քան զկէսն մահուանէ ի կենաս փոխեցան առ աստուած, ոմանք սրախոց սպանան, ոմանք սովամահ հղան, ոմանք ջրախեղդ մեռան, ոմանք ի ցրտոց պակասեցան և ոմանք ազգի ազգի մահուամբ առ Քրիստոս փոխեցան»[2]:

1607 թվականներին մոլեգնում է նաև սովը. թշվառ հայ գաղթականությունից մահանում են տասնյակ հազարավոր մարդիկ: Խաչատուր Գրիչը 1607 թ. ընդօրինակած ձեռագրի հիշատակարանում գրում է. «Ճի (100 000) ոգի աւելի մեռան ի սովոյ, զի բացումք հայրն զորդին կերաւ և մայրն զդուստրն, եղբայր զեղբայրն, ուժովն՝ զանուժն, և շատք երկիր զմեռեալս ամենայն կերան և ի գերեզման ոչ դրին, և այլ բազում նեղութիւն եղև հայոց ազգին, զոր չէ արժան գրել...»[3]:

[1] Ք. Պատկանյան, Նշխարք մատենագրութեան հայոց, ՍՊԲ, 1884, էջ 6:
[2] Տեր-Հովհաննես, Պատմութիւն Նոր Ջուղայու, հ. I, էջ 43—44:
[3] ՀՊՄ, ձեռ № 6785, թ. 330բ:

Եվրոպացի ճանապարհորդներից մեկը՝ Կոուվեն, Հայաստանից գաղթեցրած բնակչության թիվը 60,000 ընտանիք է հաշվում[1]: Եթե յուրաքանչյուր ընտանիքում հաշվենք 5 շունչ, ապա գերեվարված հայ բնակչության թիվը 300 000 է հասնում: Ուսումնասիրողներից ոմանք գաղթեցված հայ բնակչության թիվն ավելի շատ են համարում՝ 70,000 ընտանիք[2]: Կոուվեն քշված գաղթականներից միայն ստրկության վաճառվածների թիվը 100,000 է հաշվում: Ժամանակակից մի հիշատակագիր վշտով նշում է, որ հայ բնակչության «սուրգոն» քշող պարսիկ զինվորները «...խիզանն հայկական ազգին որպես գառինս վաճառէին միմեանց...»[3]:

Գաղթեցրած բնակչության որոշ մասը մնացել է Թավրիզում և նրա հարևան շրջաններում, մի մասը ցրվել է Պարսկաստանի այլևայլ քաղաքներ և շրջաններ՝ Քաշան, Ղազվին, Գիլան, Էնզելի և այլն, իսկ գաղթականության հիմնական մասը տեղավորվել է Սպահանում և նրա մոտիկ շրջաններում: Ըստ տեղեկությունների, միայն Մազանդարանում Շահաբասի Անդրկովկասից տարած գաղթականության թիվը 30 000 ընտանիք է եղել: Եվրոպացի ճանապարհորդ Շարդենը, բռնագաղթից 40 տարի հետո Մազանդարանում գտնված ժամանակ, ցավով նշում է, որ Մազանդարան բերված այդ 30.000 ընտանիքից մնացել է միայն 400-ը, մնացածները մահացել են կլիմայի վատառողջ լինելու պատճառով:

Մայրաքաղաքին մոտիկ մի դաշտավայրում թույլ են տվել հայ գաղթականներին ավան ստեղծել: Այստեղ գլխավորապես տեղավորվել են Երևանի ու Արևելյան Հայաստանի քաղաքաբնակ կամ ավանաբնակ գաղթականները: Իսկ գյուղերից քշված գաղթականներին, ըստ Դավրիժեցու տեղեկության, «բնակեցուցին ի Լընկաններին, ըստ Դավրիժեցու տեղեկության, «բնակեցուցին ի Լընջան, և յԱլնջան, ի Գանդիման, և ի Ջղախոռ, ի Փարիայ և ի Բուրվարի»[4]: Գաղթականությունից 500 տուն բնակեցվում է Շիրազում:

Շահաբասի վերոհիշյալ գերեվարությունը պատմության մեջ հայտնի է «մեծ սուրգուն» անունով: Սակայն, այս մեծ «սուրգուն»-ով չի բավարարվել Պարսկաստանի բռնակալը. նա այնուհետև մի շարք անգամներ գաղթականություն է տեղափոխել Ատրպատականից. «...Որպէս յոլով տեղիս պատմեալ եմք,— գրում է Դավրիժեցին,— եթէ մեծ և առաջին Շահաբասն, ոչ թե երկիցս

[1] Г. Эзов, Сношения, էջ 470:
[2] «История Ирана», էջ 277:
[3] Ս. Վ. Տեր-Ավետիսյան, Յուց. ձեռ. Նախավկայի, էջ 36:
[4] Դավրիժեցի, էջ 46:

և երիցս վարեաց զազգս Հայոց յԱտրպատական աշխարհէ՝ ի Պարսկաստան, այլ յոլով անգամ»[1]: Շահաբասի 1606 թվականին Վրաստանից բերված գերիների մեջ, ըստ վրացական աղբյուրների տեղեկության, գտնվել են ոչ քիչ թվով հայեր:

Շահաբասն ամեն միջոց ձեռք է առել Պարսկաստան քշված հայ գաղթականությունը տեղում ամրացնելու համար: Զգալավոր հարկեր է դրել հայ բնակչության վրա, ցուցաբերել է հանդուրժողական վերաբերմունք կրոնական հարցում, արտոնություններ շընորհել հայ առևտրականներին և արհեստավորներին և այլն: Հայտնի է, որ Շահաբասը նույնիսկ թույլ է տվել Նոր Ջուղայում հայկական եկեղեցիներ կառուցել, դատարաններում ունենալ իրենց ներկայացուցիչները, որոշ տեղերում հայ գաղթականներին տեղավորելու համար արտաքսել է նախկին մահմեդական բնակիչներին և այլն: Նա արտակարգ բարյացակամ վերաբերմունք է ունեցել մասնավորապես երկու հայ խոջաների նկատմամբ՝ Սաֆարի և Նազարի:

Ուշագրավ է մի ավանդություն, որ կապված է գինովցած մի հայի և Շահաբասի հետ: Շահաբասն անցնում է փողոցով: Հարբած մի հայ գալիս է ընդառաջ, բռնում է նրա ձիու սանձից ու հարցնում. «Ի՞նչ արժէ ձին»: Շահը հրամայում է հարբած հային տանել տուն և հաջորդ օրը բերել իր մոտ: Հաջորդ օրը, երբ հայը ըմբռնվում է, կնոջ խորհուրդով մի շիշ գինի է դնում գրպանը և գնում շահի մոտ: Շահը հարցնում է. «Քանիսո՞վ ես ուզում գնել ձիս»: Հայը գրպանից հանում է գինու շիշը և պատասխանում. «Շահն ապրած կենա, սա գնողն է, դուք վաճառողը, ես միջնորդի դեր ունեմ այդ առևտրի մեջ, հաշտվեցեք իրար հետ»: Հաճելի է թվում Շահաբասին հայի սրամիտ պատասխանը, և շահը ներում է նրան[2]:

Պատմում են նաև այսպիսի մի դեպք. պարսկական դատարանը որոշում է մի հայի դատապարտել մահվան՝ նրա գործած հանցանքների համար: Շահաբասը չի հաստատում այդ որոշումն այն պատճառաբանությամբ, որ Պարսկաստան բերված ամեն մի հայ իր վրա 1000 ոսկի է նստել, թող բողոքարկուն վճարի այդ 1000 ոսկին, նոր միայն մահվան դատապարտեն հային:

Շահաբասը հայ գաղթականությունը պարսկական հողի հետ կապելու նպատակով, էջմիածնի տաճարի անկյունաքարերից բե-

[1] Դաւրիժեցի, էջ 455:

[2] Տեր-Հովհաննէսեանց, էջ 47:

րել է տալիս՝ Նոր Ջուղայում կառուցվող եկեղեցիների պատերը ձևավորելու համար: Սակայն այդ ևս չի օգնում. հայ բնակչությունը իր հայացքը շարունակում է հառած պահել դեպի հայրենիք և սպասում այն երջանիկ օրվան, երբ նա հնարավորություն կունենա վերադառնալու հայրենի օջախը:

Պարսկահայ բնակչության եկեղեցական և հասարակական գործերը ղեկավարելու համար ստեղծում են թեմ՝ թեմական առաջնորդարանի վայր ընտրելով Նոր Ջուղան: Թեմի մեջ մտել են՝ Նոր Շիրազի, Թեհրանի, Համադանի, Ռաշտի, Անզալի, Քաշանի, Ղազվինի, Բասրայի, Բաղդադի և այլ գաղթօջախների հայ համայնքները: Նոր Ջուղայի առաջնորդին, ըստ տեղեկությունների, ենթարկվելիս են եղել 74 հայկական գյուղեր Պարսկաստանի 8 գավառներում[1]:

Հայերն անչափ գեղեցիկ են կառուցում Նոր Ջուղան: Թաղամասերը կառուցվում են ըստ առանձին հայրենակցական միությունների՝ Ջուղայեցիների թաղամաս, Երևանցիների, Դաշտեցիների և այլն: Ուղիղ փողոցների վրա շինում են երկու հարկանի գեղեցիկ տներ. «...շինեցին յարկս և բնակութիւնս ինքեանց,— գրում է Դավրիժեցին,— հրաշալի յօրինուածովք, կամարակապ փողոցօք, թևաւոր ապարանօք, և ամարասուն հովանոցօք, բարձրաբերձ և արքայակերպ շինուածօք, զարդարեալ և յօրինեալ ի ծաղկեա ոսկւոյ և լաջվարդի՝ և պէս-պէս երանգաց ակնախտիղ տեսողաց»[2]: Եվրոպացի ճանապարհորդներ Տավերինեսը, Տուրնեֆորը, Շարդենը, Դելա Վալլան հիացմունքով են խոսում Նոր Ջուղայի նորաշեն հայ ավանի մասին:

Իհարկե, այս տեղեկությունները վերաբերում են ավանի կենտրոնական մասին, ուր տեղավորված էին մեծահարուստ խոջաները և այլ ունևոր մարդիկ, այլապես ավանի ծայրամասերում նոր ոտքի կանգնած գաղթականության վիճակը մխիթարական չէր:

Նոր-Ջուղայի հայ գաղթականները կառուցում են ավանը Սպահանի հետ միացնող Զենգարանի նշանավոր կամուրջը, որը մնում է մինչև այժմ և համարվում հայ գաղթականության առաջին ու լավագույն հուշարձանը պարսկական հողի վրա: Նոր Ջուղայում կառուցվում են կամարակապ փողոցներ, մեծ կարավանատներ, ծառազարդ ճեմելիքներ, եկեղեցիներ և այլն: Նրանց մեծ մասը կառուցվում են ըստ տոհմական պատկանելության: Եկեղեցիների

[1] Տեր-Հովհաննէսեանց, Պատմութիւն Նոր-Ջուղայու, հ. II, էջ 105—108:

[2] Դաւրիժեցի, էջ 63—64:

պատերը զարդարում են յուղաներկ նկարներով, բազմազան ֆրեսկոներով, որոնք այժմ իսկ հիացնում են այցելուին և վկայում ջուղայեցիների գեղարվեստական բարձր ճաշակի մասին։

Նոր-Ջուղայի բնակչության թվի մասին ժամանակակիցները հակասական տեղեկություններ են տալիս. ըստ Մալկոլմի վկայության, Ջուղան ունեցել է 2500 տուն բնակչություն, Մորրերը 3400 է հաշվում, Ջոնսոն՝ 12.000 և այլն։ Եթե միջինը վերցնենք 600 տուն և յուրաքանչյուր տան մեջ հաշվենք 5—6 շունչ, ապա Նոր-Ջուղան ունեցել է ոչ պակաս քան 30—35.000 բնակչություն։ Չափազանցություն է, իհարկե, 120.000 հոգի հաշվելը։

Պարսկաստանի հայ գաղթավայրերի բնակչության հիմնական մասը գյուղացիությունն է հանդիսացել, որը, ինչպես ասացինք, տեղավորված է եղել Ջարմահալի, Փերիայի և այլ շրջաններում։ Հայկական գյուղերի թիվը հաշվում է մոտ 74, ուր ապրող գյուղացիները հողը ստացել են համայնքներով և բաժանել ըստ շնչի։ Սկզբում նրանք ազատ են եղել. պարտավոր են եղել վճարել միայն սահմանված պետական հարկը։ Սակայն XVII դարի երկրորդ կեսում նրանց դրությունը սկսում է ծանրանալ. պարսիկ կալվածատերերը (զարրաբները) տիրացել են հայկական գյուղերին և հարկադրել իրենց ռենտա վճարել ապրանքներով և կամ դրամով։

Համեմատաբար ավելի բարեկեցիկ վիճակում են գտնվել քաղաքներում (Թավրիզ, Թեհրան, Սպահան, Ռեշտ, Գիլան և այլն) տեղավորված հայ առևտրականները։ Շահաբասը ցանկանալով զարգացնել երկրի տնտեսությունը, մեծ արտոնություններ է տվել հայ խոջաներին։ Պարսկաստանի ներքին և արտաքին առևտրի մեջ հայ խոջաները գործուն դեր ունեին։ Տեր-Հովհաննյանցը լուկզբնաղբյուրներից մի շարք փաստեր բերելով պարսկահայ առևտրականների ակտիվ գործունեության մասին, եզրակացնում է. «Չկարծեմ թե լիցի չափազանցութիւն յասելն իմ, թէ ի նմին ժամանակի ջուղայեցիք էին առաջադէմ վաճառականք, քան զամենայն վաճառականս աշխարհի»[1]։

XVII դարի ֆրանսիացի ճանապարհորդ Բոուսեն, որը ուշադիր ուսումնասիրել է առևտրի վիճակը, գտնում է, որ Պարսկաստանի և Հնդկաստանի ողջ առևտուրը գտնվում է հայ վաճառականների ձեռքում։ Շահաբասը Պարսկաստանի մետաքսի արտահանության մենաշնորհը աճուրդով վաճառել էր հայ խոջաներին, որոնք խոստացել էին արքունիքին վճարել պահանջվող մաքսը՝ յուրաքան-

[1] Տէր-Հովհաննէսեանց, հ. I, էջ 172։

յուր հակին տալով 50 թուման ռակեդրամ։ Պատկերացնելու համար՝ թե ինչպիսի ձեռներեցություն էին ցուցաբերում հայ վաճառականները մետաքսի առևտրի գործում, բավական է ծանոթանալ հիսուսյան քարոզիչ Լա Մազի հաղորդած տեղեկության հետ այն մասին, որ Առաքել անունով մի հայ վաճառական մի տարվա մեջ Գիլանից Միջագետք, Պոլիս, Ռուսաստան, Հոլանդիա և Իտալիա է ուղարկելիս եղել 5 միլիոն լիրայի մետաքս[1]։ Պարսկաստանում հանդես են գալիս խոջայական մեծահարուստ այնպիսի տներ, ինչպիսիք Սաֆրազյաններն են, Լազարյանները, Շահրիմանյանները, Վելիջանյանները, Խալդարյանները և տասնյակ ուրիշներ[2]։

Խոջա-նոտաբլները մեծ դիրք ունեին պարսկական արքունիքում։ Հաճախ նրանք էին հանդես գալիս դեսպանների դերերում եվրոպական երկրների հետ (Վենետիկ, Ռուսաստան և այլն)։ «Ընդունելի եղէն Հայի Ջուղայու ի ծառայութիւն տէրութեան գործոց,—գրում է Տէր-Հովհաննյանցը,— թէ ի խորհրդակցութեան, թէ ի թարգմանութեան, թէ ի դեսպանութեան և թէ ի գինուորականութեան»[3]։ Հայտնի է, օրինակ, որ 1607 թվականին Շահաբասի կողմից Վենետիկ է ուղարկված եղել Շիրոշ անունով մի հայ վաճառական դիվանագիտական բանակցություններ վարելու համար[4]։ Երեք տարի հետո Շահաբասը հատուկ գրություններով Իտալիա է ուղարկում խոջա Սաֆարին «վասն խընդրոյ պատերազմի թուրքաց»[5] և այլն։ Ջուղայում ստեղծվել էր հայ առևտրական կամպանիաներ, որոնց ձեռքում էր կենտրոնացած հատկապես պարսկական մետաքսի առևտուրը։ Գրիգոր Լուսիկովը 1671 թվականին Ալեքսանդր Միխայիլևիչ ցարին գրած մի նամակում հայտնում է, որ «...մին տարէն մօտ ՀՌ (8000) խախ (-հակ) շային քուպի (-ողջ երկրումն ապրիշում կգո, որ մին խակն զ (6) փութ այ, ողջ գրկու ըռուսն»[6]։

Թե ինչ հեղինակություն ունեին հայ խոջաները արտաքին դիվանագիտության աշխարհում, այդ մասին է վկայում խոջա Ջա-

[1] Ղ. Ալիշան, Սիսական, էջ 444։

[2] Տեր-Հովհաննյանցը մանրամասն կանգ է առել Ջուղայում հանդես եկող 29 խոջայական տների վրա, որոնք ավելորդ ենք համարում բերել այստեղ (տե՛ս հ. I, էջ 86—198)։

[3] Տեր-Հովհաննէսեանց, հ. I, էջ 48։

[4] Ղ. Ալիշան, Սիսական, էջ 442։

[5] Նույն տեղը, էջ 443։

[6] Армяно-русские отношения, էջ 71։

խար Սահրադյանի 1660 թվականին Ալեքսեյ Միխայլովիչ ցարին նվեր բերված «Ալմազի գահը», որի վրա հաշվում է 897 ալմազ, 1298 հակինթ, 18030 փիրուզ։ Այդ գահավորակը ներկայումս Մոսկվայի Կրեմլի Զինապալատի աչքի ընկնող ցուցանյութերից մեկն է հանդիսանում[1]։

Հայ տաղերգուներից մեկը՝ Բաղիր օղլին, հայ վաճառականների գործունեության լայն ասպարեզը ցանկացել է ընդգծել հետևյալ քառյակով.

«Յարևել յարևմուտ և քօյն (=բովանդակ) ծէրվըծէրայ,
Բանիայ (=գործում է) չորս կողմն սօվդագարն (=վաճառականը) Ջուղուն։
Չորս կողմից դուրս գայ ուրէնց նաւէրն,
Կուշտացնեն անկեալ, քօռ ու կաղէրն»[2]։

Լեզուներ գիտցող, շրջահայաց, առևտրի մեջ մեծ հմտություն և ձեռներեցություն ունեցող հայ առևտրականների առջև բոլոր երկրների դռները բաց են եղել։

Մեզ է հասել ջուղայեցի Կոստանդին վարժապետի առևտրական մի ձեռագիրը, ուր թվարկված են այն բոլոր երկրները և քաղաքները, ուր լինում են Ջուղայի հայ առևտրականները։ Փաստորեն չկա շատ թե քիչ նշանավոր մի քաղաք Եվրոպայում, Հնդկաստանում, Մերձավոր Արևելքում, որ ջուղայեցի առևտրականները ոտք դրած չլինեին[3]։

Առևտրականների գործունեության հետ է կապված եղել պարսկական գաղթավայրի արհեստավորության գործունեությունը։ Հայ հմուտ ու ճարպիկ արհեստավորների արտադրանքը բարձր գներով է սպառվել ներքին և արտաքին շուկայում։ Ոսկերչության, կերպասագործության և գորգագործության ասպարեզում հայ արհեստավորները պարսկական հողի վրա համարվում էին լավագույն վարպետները։ Միայն Նոր Ջուղայում հայ արհեստավորության թիվը մի քանի հազարի է հասել։ Արհեստավորները, ինչպես երևում է, ունեցել են իրենց համքարությունները։

Ի՞նչ մասնագիտությամբ արհեստավորներ են եղել Նոր Ջուղայում։— Այսպիսի հարցով ֆրանսիացի մեկը դիմել է Շահաբասի ժամանակակից խոջա Սաֆարին։ Տեր-Հովհաննյանցը իր աշխատության մեջ հրատարակել է խոջա Սաֆարի պատասխանը. «Ամենայն հասարակ սանիաթ մեր ազգին (այսինքն՝ ջուղայեցւոց—Ա. Ա.) մէջ կայ,—պատասխանել է նա,— ինչպես ասենք դերձիկ, գլխակակար, բաբուչկար (ոստայնակ), դալլաք (սափրիչ), խառատ, դուրգեար, որմնադիր, ոսկերիչ, դարբին, ջուլհակ, գրագիր, կազմարար, ծաղկարար, ներկարար, մագաղաթագործ, ապրշմագործ, զառաֆ, նաղդաքու (արծաթագործ), սահաթսազ (ժամացուցագործ), տպագիր, բասմաչի և այլ բազումս»[1]։

Պարսկահայ մետաքսագործ և շերամապահ մասնագետներն այնքան մեծ համարում էին ստեղծել իրենց շուրջը, որ ցարական արքունիքը՝ ցանկանալով զարգացնել շերամապահությունը Ռուսաստանում, հանձնարարել էր Իսրայել Օրուն՝ նրա դեսպանության ժամանակ, շերամապահությամբ և մետաքսագործությամբ զբաղվող որոշ հայ ընտանիքներ տեղափոխել Ռուսաստան։ Եվ Օրին Պարսկաստանից վերադառնալիս 20 հայ ընտանիք իր հետ բերել է Ռուսաստան։

XVII դարի երեսնական-քառասնական թվականներին շահ Սեֆու (1629—1642) և Շահաբաս փոքրի ժամանակ (1642—1666) պարսկահայության դրությունը շարունակվում է բնականոն ձևով։ Պարսկահայերի դրությունը սակայն սկսում է արտակարգ վատթարանալ XVII դ. վերջին քառորդին և XVIII դարի սկզբներում։ Անչափ ծանրացնում են հայ բնակչությունից գանձվող հարկերը։ Հակոբ Ջուղայեցի կաթողիկոսը Միխայիլ Ալեքսեևիչ ցարին ուղարկած իր նամակում գանգատվում է, որ պարսկական պաշտոնյաները «մեր եկեղեցու վրա դրել են անչափ ծանր հարկեր, որ չքավորության և աղքատության պատճառով չենք կարողանում վճարել այդ հարկերը, քշում են բանտ, չարչարում են, խոշտանգում. մահմեդականների վերջնական նպատակն է հարկադրել մեզ ընդունելու իրենց հավատքը»[2]։ Պարսից իշխանությունների պահանջով փոխում են եկեղեցիների արտաքին տեսքը. վեր խոյացող գմբեթներն իջեցնում և մզկիթների նման կլոր ձև են տալիս, արգելված զանգերի փոխարեն փայտի զանգեր են գործածում, բայց եկեղեցիների ներսում նույնությամբ շարունակում են իրենց վաղեմի ծիսակատարությունները, իսկ ընտանիքներում պահում մայրենի լեզուն։

Պարսկահայ գաղութարարների դրությունը անտանելի ծանրանում է XVIII դարի երկրորդ կեսում։ Տնտեսական կրախի մեջ

---

[1] Армяно-русские отношения, էջ 21—34։
[2] Տէր-Հովհաննեանց, էջ 160։
[3] ՀՊՄ, ձեռագիր № 5994, թ. 3ա—3բ։

[1] Տէր-Հովհաննեանց, հ. I, էջ 184։
[2] Армяно-русские отношения XVII в., էջ 257։

ընկած պարսկական արքունիքը իր ծախսերը հավասարակշռելու համար ծանրացնում է բնակչության տուրքերը՝ առանձնապես հայ բնակչությունից գանձվող հարկերը։ Գյուղական վայրերում սկսում է մոլեգնել զարբաքների վայրենի կամայականությունը։ Քաղաքներում սկսում է խամրել նախկին աշխույժ տնտեսական կյանքը։ Օրկրում ստեղծված անապահով վիճակի հետևանքով լայն ծավալում է ստանում ավազակությունը։ Առևտրական քարավանների երթևեկությունը անապահով է դառնում։ Կրկնապատկվում է առևտրականների մաքսը։ Այս պայմաններում սահմանափակվում է նաև հայ արհեստավորության արտադրանքը։

Այս ամենի պակասը գալիս է լրացնելու ավղանների արշավանքը և Սեֆյանների քաղաքական փլուզումը։ Ավղանների արշավանքների հետևանքով Պարսկաստանը տակն ու վրա է լինում։ 1722 թվականին ավղանները վերցնում Նոր Ջուղան և աննկարագրելի ավերածության և կողոպուտի ենթարկում։ Պարսկաստանում ստեղծված ահա այս ծանր և անապահով վիճակը հարկադրում է պարսկահայ բնակչությանը աշխարհի վրա ապահով նոր անկյուն փնտրել։ Պարսկահայ բնակչությունը նորից թափառականի ցուպն է վերցնում և գաղթում դեպի նոր և անհայտ հորիզոններ։

Պարսկահայերի գաղթը դեպի Հնդկաստան, Ռուսաստան և Եվրոպա կատարվում է ոչ մեկեն, այլ աստիճանաբար, տասնամյակների ընթացքում։ Ավելի շատ գաղթում են հայերը Պարսկաստանի քաղաքատիպ վայրերից։ Գյուղացիները մնում են իրենց տեղում. դժվար էր նրանց ազատվել իրենց զարբաքների կախվածությունից։

XVIII դարի վերջերին հայ ժողովուրդը, բախտակից վրաց ժողովրդի հետ միասին, ենթարկվեց մի նոր և առնական ողբերգության. 1795 թվականին Անդրկովկաս արշավեց Պարսկաստանից Աղա Մահմադ խանը, վերցրեց Թբիլիսին, սարսափելի վայրագություններ կատարեց այնտեղ։ Վերադարձին, ըստ տեղեկությունների, իր հետ 1600 հոգի գերի տարավ՝ մեծ մասամբ տղաներ և աղջիկներ, որոնք վաճառքի հանվեցին պարսկական շուկաներում։

XIX դարի առաջին քառորդում պարսկահայ գաղթօջախներից շատերին մենք գտնում ենք արդեն խամրած վիճակում. 1830-ական թվականներին Հնդկաստան գնացող էջմիածնի պատվիրակներից մեկի՝ Հարություն Կարբեցու ուղեգրությունից երևում է, որ երբեմնի ծաղկուն կյանքով ապրած Նոր Ջուղան գտնվում է անմխիթար վիճակում և տեղի հազարավոր հայ բնակիչները ապրում են Հնդկաստանից ուղարկված բարեգործական նպաստներով։

Տեր-Հովհաննյանցը նկարագրելով Նոր Ջուղայի հայկական գաղթօջախի նվաղումը և անշքացումը, սրտի կսկիծով նշում է, որ «նուաղելով նուաղեցաւ Ջուղայ և պակասելով պակասեցան բնակիչք նորա, ի հետևոր և յօտար տահմանս խոյս տուեալ գաղթականութեամբ, ուստի մի արժանի զարմացման եղիցի լսելն թէ երկոտասան հազար տուն բնակիչք Ջուղայու ի միջոց 250 ամաց իջին ցերիս հարիւր տունս»։

Պարսկահայ կուլտուրան։

Պարսկաստանի հայ գաղթօջախները իրենց ավելի քանի 800-ամյա գոյության ընթացքում ստեղծել են բավականին արժեքավոր կուլտուրական արժեքներ։ Պետք է ասել, որ Հայաստանից Պարսկաստան տեղափոխված հայ գաղթականներն իրենց հետ տարել են հայ մշակույթի լավագույն ավանդույթները և արմատավորել իրենց նոր բնակավայրում։ Ըստ որում, պարսկահայ արվեստի շրջահայաց ներկայացուցիչները անտարբեր չեն գտնվել նաև պարսկական մշակույթի նկատմամբ. նրանք վերցրել են նրանից այն ամենը, ինչը մոտիկ է եղել իրենց սրտին։ Եվ ահա հայկական և տեղական մշակույթների համադրությամբ հայ արվեստի վարպետները պարսկական հողի վրա ստեղծել են ինքնատիպ մի մշակույթ, որը արժանի է հատուկ ուշադրության։

XVII—XVIII դարերում պարսկահայ մշակույթի ամենից խոշոր օջախներից մեկն է հանդիսացել Նոր Ջուղան, ուր կենտրոնացած են եղել մեծ թվով հայ արհեստավորներ և մտավորականներ։ Այստեղ XVII դարի երեսնական թվականներին, թեմի առաջնորդ Խաչատուր վարդապետ Կեսարացու ջանքերով, ստեղծվում է հայկական բարձրագույն մի դպրոց, որը հայ մատենագրության մեջ հաճախ անվանվում է «Համալսարան» կամ «Ճեմարան»։ Բարձրագույն այս դպրոցում ստվորելիս են եղել գլխավորապես Նոր Ջուղայի խոջայական խավերի երեխաները, իսկ խոջաներն աշխատել են, որպեսզի իրենց նյութական միջոցներով պահվող այդ դպրոցում պատշաճ որակով դասավանդվեն ճշգրիտ գիտություններն ու լեզուները։ Խաչատուր Ջուղայեցին, որ այդ դպրոցի սաներից է, հետևյալ ձևով է բնութագրում նրա գործունեությունը. «Սա (այսինքն՝ Խաչատուր Կեսարացին— Ա. Ա.) յօրինեաց զհամաբարան՝ յորում ուսուցանէր և մարզէր զհամբակագոյնսն ի գիտութիւնս հնոց և նորոց կտակարանաց, և զհամայն արհեստս ազատականս և գերբնազանցականս»[1]։ Խաչատուր Կեսարացու այս դպրոցը տվել է

[1] Խաչատուր Ջուղայեցի, Պատմութիւն Պարսից, Վաղարշապատ, 1905, էջ 116։

հայ մատենագրության մի շարք աչքի ընկնող ներկայացուցիչներ։

Պարսկահայ շրջանից մեզ հասած կուլտուրական արժեքներից ամենից արժեքավորը այդ հայ վարպետների որմնանկարչությունն ու մանրանկարչությունն է։ Հայ վարպետների ոսկի մատներով նկարազարդվել են Սպահանի և Նոր Ջուղայի մի շարք ապարանքներ, որոնք հիացմունք են պատճառում նայողին։ Ջուղայի հայ գրչության դպրոցում հարյուրավոր ձեռագրեր են մանրանկարվել, որոնք հասել են մեզ և խոսուն հուշարձաններն են հայ ծաղկողների հանճարեղ ստեղծագործության։ Այժմ արդեն անժըխտելի պիտի համարել, որ հայ ոսկերիչները, գորգագործները, մանրանկարիչները իրենց որոշակի ազդեցությունն են ունեցել պարսկական կուլտուրայի վրա։

Պարսկահայ որմնանկարչության և մանրանկարչության հանճարեղ դեմքերից է եղել Միհաս Մաղկողը, որը նկարազարդել է Շահաբասի պալատները և Ջուղայի Շեհրիմանյանների եկեղեցին[1]։ Ենթադրվում է, որ նրա ձեռքով են կատարված էջմիածնի տաճարի մի քանի որմնանկարներ։ Ջուղայի աչքի ընկնող որմնանկարիչներից նաև Հովհաննես Մրքուզը[2]։ Պարսկահայ մանրանկարիչները մեծ թիվ են կազմում։ Նրանց աչքի ընկնող ներկայացուցիչներից է Հակոբ Ջուղայեցին, որի 1610 թվին խոջա Ավետիքի պատվերով ծաղկանկարած Աստվածաշունչը հայ գեղեցիկ մանրանկարչության եզակի գործերից է (այս ձեռագիրը ներկայումս գտնվում է Հայկ. ՍՍՌ պետական մատենադարանում)։ Ջուղայի նկարչության լավագույն ներկայացուցիչներից է հանդիսացել Բոգդան Սալթանովը, որի նկարչության գործերից մեկը՝ պղնձի պնակի վրա կատարած Լեոնարդո դա Վինչիի «Խորհրդավոր ընթրիք»-ի պատճենահանությունը, 1660 թվականին ջուղայեցին խոջա Ջաֆարի կողմից նվեր է ուղարկվել Ալեքսեյ Միխայլովիչ ցարին։ Ցարական արքունիքում այն այնքան բարձր է գնահատվել, որ խնդրել են խոջա Ջաֆարից այդ վարպետին ուղարկել Մոսկվա արհեստանոց հիմնելու և ռուս աշակերտների սովորեցնելու համար։ Ջուղան հանդիսացել է հայ հին տպագրության առաջին օջախներից մեկը։ Կեսարացու ջանքերով 1636 թվականին Նոր Ջուղայում հիմնվում է տպարան և սկսում հայ գրքի տպագրությունը։ Տպարանն,

[1] Ա. Երեմյան, Նոր-Ջուղայի ԺԷ դարու հուշարձան, էջ 30։

[2] Գ. Լևոնյան, Հովհաննես վ. Մրքուզ (տե՛ս «Էջմիածին», 1944 թ., № 1, էջ 29—34)։

իհարկե, պրիմիտիվ բնույթ է ունեցել, որովհետև իրենք են իրենց համար ձևով պատրաստել տպագրող մեքենան, փորագրել տառերը, պատրաստել թուղթն ու ներկը։ 1639 թվականին կեսարացին իր շնորհալի և գործիմաց աշակերտներից մեկին՝ Հովհաննես Ջուղայեցուն, գործուղում է Իտալիա՝ ուսումնասիրելու տպագրության գործը։ Հովհաննեսը յոթ տարի մնում է Իտալիայում, հանգամանորեն սովորում այդ գործը և վերադառնալով Ջուղա, զարկ տալիս տպագրության գործին։ Անհրաժեշտ է նշել, որ տպագրության հետ տարված ողջ աշխատանքը Հովհաննես Ջուղայեցին, իր ընկերների հետ միասին կատարում են իրենց ձեռքով։ Ջուղայի այս տպարանից առաջին անգամ լույս է տեսնում «Հարանց վարքը» 1646 թվականին։ Ուշագրավ է այն փաստը, որ այդ հրատարակության մեջ են գործ ածել գունատիպ ծաղկագրեր։ Պետք է նկատի ունենալ, որ Նոր Ջուղայի հայկական այս տպարանն առաջինն էր պարսկական հողի վրա։ Ըստ տեղեկությունների, առաջին պարսկական տպարանը հաստատվել է Բենդեր-Բուշիրում 1784 թվականին[1]։

Պարսկաստանը տվել է մեզ նաև աչքի ընկնող մատենագիր-պատմիչներ, տաղերգուներ, փիլիսոփաներ և այլն։ Պարսկահայ պատմիչներից աչքի ընկնող դեմքերից է Առաքել Դավրիժեցին, որը գրել է և մեզ է թողել «Հայոց Պատմութիւն»-ը։ Նա իր պատմության մեջ օգտագործել է բազմաթիվ ժամանակագրություններ և հիշատակարաններ, որոնք մեր ձեռքը չեն հասել։ Չնայած նա հաճախ է կրկնում զանազան առասպելներ, բայց նկատվում է, որ նա հետևում է նոր սերնդի որոնումներին։ Կարևոր հեղինակներից է Խաչատուր Ջուղայեցին։ Նա գրել է իր ժամանակի պարսկական պատմությունը, որը կարևոր սկզբնաղբյուր է հանդիսանում իրանի ժողովրդի պատմության համար։

Պարսկական պատմության արժեքավոր սկզբնաղբյուրներից է Քուչուկ Հարությունի գրած «Պատմութիւն թահմազ Ղուլի խանի» խորագրով աշխատությունը, որը պարունակում է տեղեկություններ Թահմազ Ղուլի խանի արշավանքների մասին՝ Հնդկաստան։ Եղել են ենթադրություններ, որ դրա հեղինակը կարող է լինել Սայաթ-Նովան։

Պարսկահայ գաղթավայրը և հատկապես Նոր Ջուղան հայտնի է եղել իր տաղերգուներով, գուսաններով և բանաստեղծներով, որոնց վրա կանգ առնելու հնարավորություն չունենք։

[1] E. G. Browne, The Press and Poetry of Modern Persia, էջ 7։

ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՄԻԱԲԱՆԱԿԱՆ ԳԱՂԹՕՋԱԽԸ

Արևելյան հայ հնագույն գաղթավայրերից մեկը գտնվել է Երուսաղեմում՝ քրիստոնյա աշխարհի այս սրբավայր կենտրոնում։ Նա նման չի եղել հայ մյուս գաղթավայրերին, այլ ունեցել է վանական բնույթ։ Գաղթօջախը կազմված է եղել ոչ թե թշնամու բռնություններից խուճապահար փախչող գաղթականներից, որոնք եկել և ապաստան են գտել այստեղ, այլ անապատական ճգնավորական կյանք վարելու ցանկություն ունեցող և կամովին հավաքված կղերականներից։ Հին ժամանակներից սկսած այստեղ բավականին թվով հայ միաբաններ են հավաքվել և VI դարում քրիստոնյա եկեղեցու ներսում միջդավանական պառակտումը տեղի ունենալուց հետո, անջատվել այլազգի միաբանություններից և առանձին հայկական միաբանություն կազմել՝ կենտրոն ընտրելով Ս. Հակոբի կոչվող վանքը։ Երուսաղեմի հայկական այդ միաբանությունը հետագայում պատրիարքություն է ստեղծել և հայտնի դարձել «Երուսաղեմի հայ պատրիարքություն» կամ «Ս. Հակոբյանց հայ միաբանություն» անունով։

Երուսաղեմի հայ միաբանության պարտականություններից մեկը, բացի կրոնական-աստվածապաշտական իր հիմնական խնդրից, համարվել է այսպես կոչված «հայ իրավունքի» պաշտպանությունը այլադավան կղերականների ոտնձգություններից։

Երուսաղեմի հայ գաղթավայրը մեզ հետաքրքրում է, առաջին հերթին, որպես հայ գրչության օջախի, որն անչափ խոշոր դեր է կատարել հայ-հունական, հայ-ասորական, հայ-լատինական, հայ-արաբական, հայ-վրացական և հայ-հաբեշական մատենագրությունների շփման և փոխազդեցությունների խնդրում։

Երուսաղեմի հայ գաղթօջախին նվիրված մի շարք աշխատություններ են հրատարակվել։ Նրանցից կարելի է մատնացույց անել մասնավորապես Տ. Սավալանյանցի «Պատմութիւն Երուսաղէմի» երկու հատորից բաղկացած ստվարածավալ ուսումնասիրությունը, որը գրաբարից աշխարհաբար է թարգմանել և 1931 թ. Երուսաղեմում հրատարակել Մ. եպ. Նշանյանը, Մ. եպ. Աղավնունու «Հայկական հին վանքեր և եկեղեցիներ սուրբ երկրին մէջ», որը հրատարակվել է Երուսաղեմում 1931 թ., նույն հեղինակի երկու այլ աշխատությունները՝ «Միաբանք և այցելուք հայ Երուսաղեմի» (Երուսաղեմ, 1929 թ.), և «Սուրբ երկրին սրբավայրեր» (Երուսաղեմ, 1936 թ.) և այլն։

Տ. Սավալանյանցը, որպես Երուսաղեմի հայոց վանքի ժառանգավորաց դպրոցի ուսուցիչ, ինչպես և Մ. եպ. Աղավնունին, որպես Երուսաղեմի հայոց միաբանության անդամ նպատակ չեն ունեցել շարադրել Երուսաղեմի հայ գաղթօջախի բազմակողմանի պատմությունը։ Նրանց հանձնարարված է եղել, և նրանք գրել են միայն հայ վանքի ու վանականության տեսանափակ պատմությունը, ուստի զարմանալի չէ, որ նշված հեղինակները շրջանցել են այնպիսի կարևոր հարցերի կողքով, ինչպիսիք հայ աշխարհիկ համայնքի գոյությունն է, հայ գրչության օջախ խաղացած դերն է, հայ և մյուս ժողովուրդների մատենագրությունների փոխազդեցության հարցերն են Երուսաղեմում և այլն։ Ջենք խոտամ դեռ նշված հեղինակների սահմանափակ աշխարհայացքի և սխալ մոտեցման մասին՝ բազմաթիվ հարցերի վերլուծման և մեկնաբանման խնդրում։

Ե՞րբ, որ ժամանակից է սկսում հայ միաբանողների հոսանքը դեպի Երուսաղեմ,— դժվար է ասել, որովհետև հայ կրոնական-վարքագրական մատենագրության մեջ հրաշապատումներով գունազարդված այնքան շատ ավանդություններ են ստեղծվել և այնպես խճողել պատմական նյութերը, որ հաճախ դժվար է լինում ճիշտը զատել ավանդությունից։ Բացի այդ, դավանական տարբեր ուղղություն ունեցող եկեղեցիները, իրենց դարավոր իրավունքը Երուսաղեմի սրբավայրերի նկատմամբ ապացուցելու նպատակով, պատմական կեղծ փաստաթղթեր են հորինել և մտացածին հեղինակներ ստեղծել, որոնք պատմական ոչ մի արժեք չունեն։

Մեզ հասած ու հավաստի պատմական նյութերի հիման վրա կարելի է որոշակի միայն ասել, որ Երուսաղեմում հայ հոգևորականներ ու հայկական սրբավայրեր գոյություն են ունեցել IV դարի վերջերում և V դարի սկզբներում. մենք հատկապես նկատի ու-

նենք Ս. Պողիկյանի, Գավազոնի և Զիթենյաց լեռան Ս. Կարապետի մատուռները։ Վերջինս, ըստ Կաղանկատվացու տեղեկության, կառուցված է «արքունի ծախիւք»[1] 428 թվականին՝ Արշակունյաց հայ թագավորության անկումից առաջ։

Ի դեպ, այս մատուռը ծածկված է եղել հողի հաստ շերտով։ Դարի կեսերին, երբ ցարական արքունիքը ձեռնարկում է Զիթենյաց լեռան վրա ռուսական խոշոր մի վանքի կառուցումը և սկսում են փորել շենքի հիմքերը, բացվում է նախկին մատուռի հատակի գեղակերտ խաճանկարը՝ հայկական երկաթագիր չորս արձանագրություններով, որոնք և հիացմունքի առարկա են դառնում հնագիտական աշխարհում։

Հայկական այս խճանկարների և հայկական արձանագրությունների մասին բազմաթիվ ուսումնասիրություններ են լույս տեսել գերմաներեն, ֆրանսերեն և այլ լեզուներով[2]։ Ուսումնասիրողներից մեծ մասը հայկական արձանագրությունների ժամանակը որոշում է V—VI դարերը։ Այս, ինչպես և Երուսաղեմում հնագիտական պեղումների ժամանակ հայտնաբերված հայկական այլ հուշարձանները, անվերապահորեն ապացուցում են հայ միաբանական համայնքի գոյությունը V—VI դարերում։

Երուսաղեմը, որպես քրիստոնեական սրբավայր, հնագույն շրջանից սկսած անընդմեջ գաղթականություն է ընդունել։ Հայերը ևս սովորություն են ունեցել հանապարհի ապահովության համար մեծ խմբեր կազմած ուխտի գնալ Երուսաղեմ։ Հայ ուխտավորների 400 հոգուց բաղկացած նման մի խմբի մասին պատմական աղբյուրները տեղեկություն են պահպանել VI դարի կեսերից[3]։

Երուսաղեմ եկող այս ուխտավորներն էին, որ հուշարձաններ էին կառուցում այնտեղ և նվերներ տալիս։ Այս ուխտավորներն էլ, անշուշտ, կառուցել են նշված սրբավայրերը։

Վդ. երկրորդ կեսում Երուսաղեմի միաբանական այս գաղթօջախում հիմնվում է հայ մատենագրության մի հիանալի դպրոց, որը հսկայական գործ է կատարում մասնավորապես օտար լեզուներից կատարած իր թարգմանություններով։ Երուսաղեմի մատենագրական այս դպրոցը, Մաշտոցի կլասիկ դպրոցից հետո, առաջինն է, որ ձեռնամուխ է լինում թարգմանական մեծ աշխատանքների։ Երուսաղեմի վաղ քրիստոնեական համայնքները ազգային

[1] Մովսէս Կաղանկատուացի, էջ 227։

[2] Մ. եպ. Նշանյանի հոդվածը Թեոդիկի «Տարեցույց»-ի մեջ (1927, էջ 399—406)

[3] Գուշակյանի հոդվածը «Արև» թերթում, № 1922 թ. 1011։

հատկանիշներով չէին կազմված։ բոլոր ազգի միաբաններն ապրում և աշխատում էին միասին։ Այդ մեծ հնարավորություն էր ըստեղծում լեզուներ սովորելու և հարևանների մատենագրություններ հետ ծանոթանալու համար։ Թարգմանական գործում առանձրի նահատուկ ակտիվություն են ցուցաբերում Մար-Սաբայի միաբանությունը, ուր կային մեծ թվով հայ զարգացած միաբաններ։

Երուսաղեմի հայ մատենագրական դպրոցի կատարած թարգմանություններից կարելի է նշել «Թուղթ Իգնատիոսի», «Վարք Անտոնի և Մակարայ» «Խրատք Նեղոսի» և բազմաթիվ կանոնական և վարքագրական աշխատություններ։ Թարգմանությունը, ի տարբերություն հայ հունաբան դպրոցի, աչքի է ընկնում բառապաշարի հարստությամբ և լեզվի պարզությամբ ու անսեթևեթությամբ։

Մինչև Կ. Պոլսի 553 թվականի ժողովը, ինչպես ասացինք, Երուսաղեմի բոլոր ազգի միաբանողները խառն էին ապրում և չկային ազգային և դավանաբանական վեճեր։ Սակայն այդ ժողովից հետո համայնքները սկսում են պառակտվել և դավանաբանական կատաղի վեճեր սկսել։ Քրիստոնեական եկեղեցականները հիմնականում, ինչպես ասել ենք, երկու մասի են բաժանվում— քաղկեդոնականներ (այսինքն՝ 551 թվականին Քաղկեդոն քաղաքում տեղի ունեցող տիեզերական ժողովի կողմնակիցներ) կամ երկաբնակներ (Քրիստոսի մեջ երկու բնություն տեսնողներ) և հակաքաղկեդոնականներ կամ միաբնակներ։ Առաջին ուղղության կողմնակիցները լայն աջակցություն էին գտնում բյուզանդական արքունիքի կողմից։ Կայսրությունը սկսում է հալածանքի ենթարկել հակաքաղկեդոնականներին։ Եվ քանի որ հայկական եկեղեցին 554 թ. Դվինի ժողովում որոշակի հակաքաղկեդոնական ուղղություն էր վերցրել, կայսրության կողմից հալածանքի է ենթարկվում հայկական եկեղեցին, այդ թվում նաև՝ Երուսաղեմի հայոց միաբանությունը։ Բյուզանդական իշխանությունների կողմից նույնիսկ կարգադրություն է եղել «զի մի բնակեսցին անդր Հայոց կրօնաւորաց և Յակոբիկ Ասորի կամ Եգիպտացւոյն»[1]։

Հալածանքի այդ օրերին Երուսաղեմի հայ միաբանները 500 հոգի հանրագրով դիմել են ժամանակակից Հովհաննես Գաբեղենից կաթողիկոսին (557—574)՝ ճշտելու իրենց դիրքը հունադավան եկեղեցու նկատմամբ։ Կաթողիկոսն իր պատասխան նամակում

[1] Անաստաս վարդ., Վասն վանօրէից որ ի սուրբ քաղաքն Երուսաղէմ, Վենետիկ 1896, էջ 12։

հանձնարարել է հնազանդվել տեղական քաղաքական օրենքներին, իսկ հունադավան եկեղեցու նկատմամբ պահպանել նախկին բացասական դիրքը[1]: Հակառակ հունադավան եկեղեցու և նրա թիկունքում կանգնած բյուզանդական իշխանությունների հալածանքներին, Երուսաղեմի հայ միաբանական օջախը ոչ միայն չի ցրվել, այլ ավելի է ամրապնդել: Հատ հայ պատմիչների տեղեկություններին, VII դարում Երուսաղեմում 70 հայկական վանք է գոյություն ունեցել[2]: Կասկած լինել չի կարող, որ դրանց մեծ մասը փոքրիկ մատուռներ են եղել՝ կառուցված Հայաստանից Երուսաղեմ եկած ուխտավորների կողմից:

VI դարում հայ միաբանական գաղթօջախի կողքին Երուսաղեմում կազմվել է նաև հայ աշխարհիկ գաղթավայր՝ բաղկացած գլխավորապես հայ վաճառականներից և արհեստավորներից: Երուսաղեմն այդ ժամանակ գտնվում էր տարանցիկ ճանապարհի վրա, ուստի բնական է, որ նա Բյուզանդիայի տնտեսական կյանքում խոշոր դեր կատարած հայ վաճառականության ուշադրությունից չէր կարող վրիպել: Ըստ տեղեկությունների, Երուսաղեմի աշխարհիկ գաղթօջախը տեղավորված է եղել Սիոնի թաղամասի մեջ, այնտեղ, ուր երբեմնի գտնվել է հռոմեական լեգեոնի ճամբարը: Երուսաղեմն այդ ժամանակ Սիոնի ճանապարհի վրա ունեցել է Հայկական անունով փողոց (Ruda Armeniorum), որի վրա անշուշտ ապրելիս են եղել հայերը:

636 թ., Երուսաղեմը խալիֆայության կողմից գրավվելուց հետո, աշխարհիկ հայ գաղթօջախն անհետացավ, իսկ միաբանականը հևիհև շարունակեց իր գոյությունը: Այս շրջանում հայ միաբանական օջախը ազատվեց քաղկեդոնական ճնշումներից և հալածանքներից:

Խալիֆայությունը Երուսաղեմը գրավելուց հետո. քրիստոնյա համայնքների նկատմամբ առանձին անհանդուրժողականություն չցուցաբերեց, բայց կարգադրեց որ հայ, հույն և հրեա համայնքներն առանձին-առանձին ապրեն քաղաքում և վճարեն սահմանված գլխահարկը: Սակայն այս քաղաքականությունը երկար չտևեց. շատ չանցած սկսվեցին բռնություններ, հավատափոխության հարկադրանքներ, հարկերի ծանրացում և այլն:

Երուսաղեմի քրիստոնյա համայնքների, այդ թվում նաև հայերի դրությունը ծանրացավ հատկապես X դարում, երբ բյուզանդական բանակները սկսեցին հարձակողական պատերազմներ ընդդեմ արաբների և առաջացան Սիրիայի և Պաղեստինի ուղղությամբ: Արաբական զորքերի ամեն մի անհաջողությունից հետո, արաբական զորքերի հրամանատարությունը ցասումով լցված հանդեպ քրիստոնյաները, վրեժխնդիր էր լինում անպաշտպան Երուսաղեմի քրիստոնյա միաբանություններից: Հայտնի է, օրինակ, որ Երուսաղեմի հունական Հովհաննես VII պատրիարքը, բյուզանդական արքունիքի հետ գաղտնի հարաբերություն պահպանելու մեղադրանքով 966 թ. խարույկի վրա այրվեց Ս. Հարության տաճարում:

969 թվականին Պաղեստինը նվաճեցին եգիպտոսի Ֆաթիմյանները, որոնք համեմատաբար մեղմությամբ վարվեցին Երուսաղեմի քրիստոնյաների հետ: Երուսաղեմի միաբանական հայրերի նկատմամբ բարյացակամ դիրք բռնեց առանձնապես Ազիզ Խալիֆը (975—996), որի կինը՝ Մարիամը, հույն էր: Սակայն Ազիզի հաջորդը՝ էլ-Հաքիմ Բյումիրլահը 1007 թ. միայն Երուսաղեմի Ս. Հարության տաճարում կոտորել տվեց 10.000 քրիստոնյաների, որոնց մեջ քիչ թիվ չէին կազմում նաև հայերը[1]:

Երուսաղեմի քրիստոնյա համայնքների դրությունն ավելի ծանրացավ Ֆաթիմյանների և սելջուկների կռիվների ժամանակ. սելջուկները 1076 թ. Ֆաթիմյաններից գրավեցին Երուսաղեմը (1076 թ.), իսկ 1098 թ. նորից զիջեցին նրանց: Կռվի, հալածանքի ու ավերածության այս դժնդակ շրջանում հայ միաբանական օջախը անհետանալու աստիճան նվազեց: Նախկին գործուն 70 վանքերից մնացին միայն 15-ը: Միաբանների մեծ մասը ցրվեց, իսկ նորեկ միաբանների թիվը զգալիորեն պակասեց:

Երուսաղեմի հայ գաղթօջախը նոր շրջան թևակոխեց 1099 թվականից հետո, երբ խաչակիրները վերցրին Պաղեստինը և հիմնեցին Երուսաղեմի թագավորությունը: Երուսաղեմում հիմնավորվեցին մեծ թվով հայ զինվորականներ, որոնք միացել էին խաչակիրներին Կիլիկյան Հայաստանից և Սիրիայից, միաբանող եկեղեցականների նոր խմբեր եկան և համալրեցին Երուսաղեմի նոսրացած հայ միաբանության շարքերը: Ֆրանսիական և լատինական աղբյուրներում հիշատակություններ կան ստվարաթիվ հայ բնակչության մասին ոչ միայն Երուսաղեմում, այլև Երուսաղեմի թագավորության ենթակա մյուս քաղաքներում: Երուսաղեմի թա-

[1] Մ. Օրմանյան, Ազգապատում, մ. I, էջ 562:
[2] Մ. եպ. Աղավնունի, Հայկական հին վանքեր, էջ ԺԲ:

[1] Մ. Ուռհայեցի, Ժամանակագրություն, էջ 53:

գավորության շրջանում հայ միաբանների թիվը հասել է 500-ի, իսկ աշխարհիկ բնակչությանը՝ մեկ հազար տան[1]։

Երուսաղեմի հայ գաղթօջախը նոր անկում ապրեց Սալահէդդինի կողմից 1187 թվականին, Պաղեստինը նորից գրավելուց և խաչակիրներին դուրս անելուց հետո։

Երուսաղեմի հայ գաղթօջախը ավելի ծանր վիճակի մեջ ընկավ 1517 թ. Թուրքիայի տիրապետության հաստատումից հետո։ Թուրքական իշխանությունները շատ ճարպկորեն օգտագործեցին քրիստոնյա եկեղեցիների մեջ գոյություն ունեցող ներքին դավանաբանական վեճերը և Երուսաղեմի սրբավայրերի նկատմամբ տարբեր եկեղեցիների ունեցած իրավունքները։ Բարձր դրան առաջ վիճող կողմերից նա էր արդարացի, որն ավելի մեծ գումարի կաշառք էր տալիս։

Երուսաղեմի աշխարհիկ հայ բնակչությունը շատ փոքրաթիվ է եղել. Սիմեոն Լեհացին 1615—1616 թվականներին Երուսաղեմում գտնված ժամանակ, այնտեղ հիշում է միայն 12 տուն հայ ընտանիք[2]։

---

[1] Հովհաննիսյան, Պատմություն Երուսաղեմի, էջ 154։

[2] Սիմէոն Լեհացի, Ուղեգրութիւն, էջ 260։

ԻՏԱԼԻԱՅԻ ՀԱՅ ԳԱՂԹԱՎԱՅՐԸ

Աղբյուրները և գրականությունը։ Իտալիայի հայ գաղթավայրն ուսանելի և հարուստ պատմություն ունի։ Նրա ուսումնասիրությունը կարևոր է ո՛չ միայն հայագիտության, այլև Ասիայի և Եվրոպայի տնտեսական, քաղաքական և կուլտուրական հարաբերությունների պատմության համար ընդհանրապես։ Իտալիայի հայ գաղթավայրը փաստորեն հանդիսացել է ոսկյա այն կամուրջը, որի միջոցով Հայաստանը միջին դարերում կապ է պաշտպանել արևմտաեվրոպական երկրների հետ։ Բացի այդ, Իտալիայում է տպագրվել առաջին հայ գիրքը, այստեղ են առաջին անգամ մշակվել հայագիտական մի շարք բնագավառներ. Իտալիայում է կազմվել հայկական ձեռագրական առաջին խոշոր ժողովածուներից մեկը. Իտալիայում է հրատարակվել հայ մատենագրերի մեծ մասը և այլն։ Ահա թե ինչո՞ւ Իտալիայի հայ գաղթավայրի պատմության ուսումնասիրությունը ունի գիտական բացառիկ կարևորություն։

Իտալիայի հայ գաղթավայրի պատմությանը վերաբերող աղբյուրները երկու խումբ են կազմում՝ հայկական և իտալական։ Հայկական աղբյուրները, համեմատաբար, աղքատիկ են. նրանք գլխավորապես ձեռագրական հիշատակարաններ և հիշատակագրություններ են, մասամբ նաև՝ ժամանակագրություններ և ճանապարհորդների ուղեգրություններ։ XVII—XVIII դարերից պահվել են նաև հայկական որոշ թվով վավերագրեր։

Անհամեմատ ավելի հարուստ են իտալական աղբյուրները։ Գրեթե իտալական բոլոր խոշոր քաղաքները. XIV—XV դարերից սկսած պահել են իրենց դիվանները, ուր անսպառ նյութ կարելի է գտնել ինչպես ներքին կյանքի, այնպես և արտաքին հարաբերությունների մասին։ Պատմական վավերագրերի խոշոր արխիվներ

կան Վատիկանում, Ճենովայում, Վենետիկում և այլ քաղաքներում։ Քանի որ հայ գաղթօջախները գործուն դեր են ունեցել Իտալիայի միջնադարյան իրականության մեջ, ուստի բնական է, իրենց պատմության զգալի բաժինը պետք է ունենան և ունեն այդ դիվաններում։

Հայ գաղթավայրերի պատմության համար արժեքավոր ատաղձ են մատակարարում նաև լատինական պատմիչները։

Չի կարելի ասել, որ այս կարևոր թեմայի ուսումնասիրությունը մխիթարական վիճակում է գտնվում։ Եթե չհաշվենք Հ. Ղ. Ալիշանի Վենետիկի և Մ. Վ. Ուղուրլյանի՝ Լիվորնիայի գաղթօջախների պատմությանը նվիրված ուսումնասիրությունները, ապա մյուս գաղթօջախների մասին կարելի է ասել, որ համարյա չկա ոչ մի աշխատություն։ Ըստ որում, Ալիշանի և Ուղուրլյանի ուսումնասիրությունները ևս շատ հեռու են ժամանակակից պատմագիտական պահանջները բավարարելուց։

Ալիշանը Իտալիայի հայ գաղթավայրի պատմությանն անդրադարձել է իր երեք աշխատություններում՝ «Սիսուան», «Սիսական» և «Հայ-Վենետ»։ «Սիսուան»-ում նա իտալահայ գաղթավայրի վրա կանգ է առել գլխավորապես իտալական քաղաքների և կիլիկյան Հայաստանի միջև երբեմնի գոյություն ունեցող հայ-իտալական տնտեսական և քաղաքական հարաբերությունների կապակցությամբ։ «Սիսական»-ում իտալական հայ գաղթօջախների միասին խոսել է միայն հայ գաղթավայրերի մասին ընդհանուր պատկերացում տալու նպատակով։ Ինչ վերաբերվում է «Հայ-Վենետին», ապա այն սկզբնաղբյուրների հաղորդած տեղեկությունների հիման վրա կատարված Վենետիկի հայ գաղթօջախի պատմության գիտական լուրջ ուսումնասիրություն է։ Այդ աշխատության մեջ շարադրված է Վենետիկի հայ գաղթօջախի պատմությունը՝ հնագույն շրջանից մինչև XVII դարը։

Մ. վ. Ուղուրլյանի Լիվորնիայի հայ գաղթօջախին նվիրված ուսումնասիրությունը վերնագրված է. «Պատմութիւն հայոց գաղթականութեան և շինութեան եկեղեցւոց նոցա ի Լիւռռնոյ քաղաքի՝ հանդերձ յաւելուածովք»։ Նրա աշխատությունը ընդգրկում է Լիվորնահայ գաղթօջախի պատմությունը՝ իր սկզբնավորման շրջանից մինչև XIX դարը։ Աշխատության XIX գլուխը նվիրված է Իտալիայի կարևոր գաղթօջախներին։

Իտալահայ գաղթօջախների վրա Ֆլորենցիայի դոմինիկյան միաբանության նոր Սահմանադրության 1356—1357 թվականներին հայերեն թարգմանության հրատարակության կապակցությամբ

կանգ է առել Զվիցերիայի Ֆրիբուգ քաղաքի պրոֆեսոր Վան Դեն Ուդենբեյնը։ Նրա աշխատությունը լույս է տեսել Հռոմում 1940 թվականին. այն թարգմանվել է հայերեն և հրապարակվել Փարիզի «Այսօր» թերթի 1952 թվականի համարներում։

Հ. Ղ. Ալիշանի և Մ. վ. Ուղուրլյանի, ինչպես և Վան Դեն Ուդենբեյնի ուսումնասիրությունների հիմնական թերությունները կայանում են նրանում, որ նրանց մոտ հայ գաղթօջախների պատմությունը վեր է ածվել Իտալիայի հայոց եկեղեցիների և եկեղեցականների պատմության։ Նշված աշխատությունների մեջ այնքան է շեշտադրված հայ կղերականության գործունեությունը, որ ընթերցողի մոտ այն տպավորությունն է ստացվում, որ կարծես իտալական քաղաքներում ոչ թե հայկական գաղթօջախներ են եղել, այլ՝ հայկական կրոնական միաբանություններ միայն։ Չկա ոչ մի խոսք հայ գաղթօջախների ներքին եռուն կյանքի, նրանց հասարակական գործունեության, մշակութային փոխազդեցությունների և այլնի մասին։ Ավելորդ է ասել, որ վերոհիշյալ աշխատություններում չեն բացահայտվել կաթոլիկ կղերի խաղացած դերը՝ Իտալիայի հայ բնակչության ասիմիլյացիայի գործում։

Իտալահայ գաղթօջախների պատմության ուսումնասիրությանն այլ մոտեցում է ունեցել հանգուցյալ Ա. Ալպոյաճյանը։ Նա աշխատել է քննադատաբար օգտագործել սկզբնաղբյուրները և փորձել ցույց տալ Վատիկանի խորտակիչ դերը Իտալիայի հայ գաղթօջախների կյանքում, չնայած նա նույնպես լիովին չի կարողացել հաղթահարել հին կարծիքը և մի շարք հարցերում մնացել է նախորդ հեղինակների ազդեցության տակ։

Սովետական Հայաստանում Իտալիայի հայ գաղթավայրերի պատմության հարցերով զբաղվել է դոցենտ Ա. Տիրացյանը, որի «Հայկական գաղթականություններ և եկեղեցիներ Իտալիայում ԺԳ—ԺԴ դարերում» հոդվածը (լույս է տեսել «Էջմիածին» ամսագրի 1958 թ. VII (էջ 53—57) և VIII (էջ 38—40) համարներում։ Տիրացյանը հիմնականում օգտվել է Ալիշանի և Ուղուրլյանի վերև հիշված ուսումնասիրություններից։

Հայերը Իտալիայում VI—X դարերում։

Իտալիայում գտնվող հնագույն հայ բնակչության մասին մեզ հայտնի տեղեկությունները վերաբերում են հայ զորամասերին և կապված են բյուզանդական տիրապետության շրջանի հետ։ Բյուզանդական բանակում, ինչպես հայտնի է, հայկական խոշոր զորամասեր են եղել, որոնք, ըստ պահանջի, տեղափոխվել են կայսրության այս կամ այն սահմանը։

Հայկական խոշոր մի զորամաս Իտալիայում է գտնվել VI դարի կեսերին։ Այդ զորամասն իր հետ էր բերել բյուզանդական բանակի հրամանատար Ներսես Պատրիկը՝ առաջադրանք ունենալով Իտալիան ազատել գոթերից։ Ներսեսը 552 թվականին Կապուայի մոտ պարտության մատնեց գոթական Տոտելա թագավորի զորաբանակին և գրավեց Հռոմը։ Մի քանի տարի հետո նա ջախջախեց և հետ շպրտեց ֆրանկներին ու ալամաններին, որոնք հարձակվել էին Իտալիայի վրա։ Այս հաղթանակներից հետո. Ներսեսը նշանակվեց Իտալիայի փոխարքա (էկզարխ) և 13 տարի շարունակ վարեց այդ պաշտոնը։

Ներսես Պատրիկն էկզարխության կենտրոն ընտրեց ծովահայց Ռավեննա քաղաքը, ուր և տեղավորեց հայկական երկու հեծելազոր գունդ։ Հայկական զորամասերի պարտականությունն էր պաշտպանել Իտալիայի հյուսիսային սահմանները թշնամու հարձակումներից։

Այսպիսով, հայ-իտալական առաջին շփումները սկսել են բարեկամական հողի վրա. հայ մարտիկը իր համեստ մասնակցությունն է ունեցել Իտալիան գոթերից ազատագրելու և պաշտպանելու գործում։

Ներսեսը իր փոխարքայության տարիներին պատերազմելուց բացի, կատարել է նաև շինարարական աշխատանքներ, որով և լավ անուն է թողել Իտալիայի պատմության մեջ։ Նա համարվում է Միլանի՝ հյուսիսային Իտալիայի մայրաքաղաքի, հիմնադիրը, նա է կառուցել Ռավեննայի Ս. Ապողինար եկեղեցին, ուր զետեղված է 559 թ. մի արձանագրություն՝ նրա գործունեությունը դրվատող հետևյալ տողերով. «Ռավեննան փրկվել է գոթական իշխանությունից և հաստատվել է ազատություն և խաղաղություն Ներսեսի շնորհիվ»[1]։ Նրա նախաձեռնությամբ է կառուցվել հռչակավոր Սան Վիտալի տաճարը՝ ի հիշատակ Ռավեննայի վերագրավման։ Ներսեսին է վերագրվում նաև Միլանի Սան Լորենչո եկեղեցու հիանալի շինության կառուցումը։ Ալիշանը գտնում է, որ Ներսեսը Իտալիայում գոթերի դեմ ռազմական գործողություններ սկսելիս որովհետև օգտվել է վենետիկցիների նավերից, ուստի նրանց երախտամոտոյց լինելու համար Վենետիկում կառուցել է գրատուն և այլ շենքեր[2]։

[1] Գ. Ֆնտգլյան, Հայ իշխանավորք ի Ռավեննա (տե՛ս «Ամենուն տարեցույցը 1926 թ.», է 358)։

[2] Ղ. Ալիշան, Հայ-Վենետ, էջ 12։

Ներսեսից հետո, երկու դար շարունակ, Ռավեննայում են գըտնըվել հայկական երեք հեծելազոր գնդեր, որոնք տեղավորված են եղել ծովափնյա թաղամասերում։ Նրանցից երկուսը, ըստ Ալիշանի հավաստիացման, «ի պատճառ նստոցի և ազգի զորականին կկոչվեր Classis և «Armenia»[1]։

VII դարում Իտալիայի փոխարքաներից է եղել Իսահակ Հայկազը, որը հայկական զորամասերով գտնվել է Ռավեննայում։ Նա փոխարքայության պաշտոնը ստանձնել է 625 թվականից և պաշտոնավարել մինչև 643 թվականը։ Իսահակը մահացել է Ռավեննայում և թաղվել Սան-Վիտալի տաճարում։ Նրա տապանաքարը, որը մնում է տաճարում, կատարված է արտակարգ նրբարվեստ։ Մարմարյա կափարիչի վրա հունարեն արձանագրված է. «Ես՝ Սահակ մեծապայծառ տոհմից՝ զարդ և մեծ փառք ամենայն Հայոց, մարտակից էի արքաների»[2]։ Նրա կողքին է գտնվում կնոջ՝ Շուշանի տապանաքարը։

VII դարում հայկական զորամասեր են տեղադրված եղել նաև Սիցիլիայում։ Գտնվել են տեղի հայկական լեգեոնի դատավորի և երկու հայ հյուպատոսների կնիքները[3]։

Բյուզանդական Կոնստանս կայսրը VII դարի 70-ական թվականներին, Սիցիլիայի Սիրակուզ քաղաքում գտնված ժամանակ, իր բանակում ունեցել է մեծ թվով հայ զինվորներ, որոնց հրամանատարն է եղել Մժեժ անունով մի հայ իշխան, որին 668 թվականի հուլիսի 15-ին Կոնստանս կայսեր սպանությունից հետո, բանակը կայսր հռչակեց, սակայն նրա կայսրությունը երկար չտևեց, որովհետև Կոստանդին IV Պոգոնատը՝ մահացած կայսեր տղան, մեծ նավատորմիղով շարժվեց Սիցիլիա, ձերբակալեց Մժեժին ու նրա կողմնակիցներին և բոլորին էլ մահվան դատապարտեց[4]։

Անհավանական չէ, որ Ադրիականի վրա խմբերով եկող հայ զինվորականներին հետևել են նաև իրենց ազգակիցները և ընտանիքի անդամները։

Իտալիայում հաստատված հայ գաղթօջախների մասին հավաստի կարելի է համարել միայն 649 թ. Լատերանյան տիեզերական ժողովին Հռոմի հայ համայնքի երկու ներկայացուցիչների՝ Դարասիոսի և Գևորգի, մասնակցության մասին եղած տեղեկությունը։ Դարասիոսը մասնակցել է Լատիրանյան ժողովին որպես

[1] Ղ. Ալիշան, Հայ-Վենետ, էջ 13։

[2] Ա. Ալպոյաճյան, Պատմ. հայ գաղթականության, հ. I էջ 172։

[3] Ա. Ա. Ալպոյաճյան, ՊՀԳ, էջ 258։

[4] E. W. Brooks, CMH, II, էջ 395։

Հռոմի հայկական մենաստանի՝ իսկ Գևորգը՝ Հռոմի կիլիկյան միաբանության ներկայացուցիչ։ Հազիվ թե VII դարում հայկական այնպիսի նշանակալից գաղթօջախներ լինեին Հռոմում, որ կարողանային ներկայացուցիչներ տալ տիեզերական ժողովին[1]։ Ամենայն հավանականությամբ խոսքը վերաբերում է հայկական կրոնական միաբանություններին։ Սակայն չի բացառված, որ V—VII դդ. հայկական փոքրիկ համայնքներ, ավելի ճիշտ՝ առևտրական ֆակտորիաներ լինեին Հռոմում, Վենետիկում և Բատուայում, որոնք հետագա դարերում լուծարքի ենթարկված լինեին։

Իտալիան հայ զանգվածային գաղթականություն ընդունել է Բրակիայից IX—XI դարերում։ Այդ գաղթականները գլխավորապես եղել են պավլիկյաններ։ Արժեքավոր է բուլղար պատմաբան Իորդան-Իվանովի ուսումնասիրությունը, ուր ցույց է տրված, որ 885 թվականին Իտալիայում է գտնվել պավլիկյան մի ամբողջ լեգեոն[2]։ Հայտնի է նաև, որ 1040 թվականի Պետեր Տելյանի ապրստամբությունը Մակեդոնիայում ճնշելուց հետո, պավլիկյանները, որոնք օգնել էին Պետեր Տելյանին, փախան Իտալիա։

Սոցիալական ընչազուրկ այս խավը, ինչպես երևում է, խմորում է տեղի աշխատավորական խավերը։ Ով կաթոլիկ կղերականությունը քիչ ջանքեր չեն գործադրում այդ «վտանգավոր աղանդները» վնասազերծ անելու համար[3]։

Հայ գաղթօջախները Իտալիայում XIII—XV դդ.

Պավլիկյանները ևս Իտալիայում հայկական կայուն գաղթօջախներ չստեղծեցին։ Շատ արագ նրանք ցրվեցին հյուսիսային Իտալիայում և ձուլվեցին տեղացիների հետ։

Հայ գաղթօջախների մեծ մասն Իտալիայում հիմնվում են XIII դարում։ Դրան զգալի չափով նպաստել է Լևոն Թագավորի կնքած առևտրական պայմանագրերը իտալական որոշ քաղաքների՝ Ճենովայի (1201 թ.) Վենետիկի (1201 թ.), Պիզայի (1216 թ.) հետ և այլն։ Ըստ այդ պայմանագրերի, իտալացիները կարող էին ազատ երթևեկել Կիլիկյան Հայաստանում, բնակություն հաստատել ցանկացած վայրում, կառուցել իրենց աղոթատները, զբաղվել ցանկացած մասնագիտություններով, դատավարական իրավունք ունենալ և այլն։ Հայերը ևս, բնական է, փոխադարձաբար, նման իրավունքներ ստանում էին իտալական քաղաքներում։

[1] Ուղուրլյան, էջ 221։

[2] «Պուլկարահայ տարեցոյց»-ը, 1928, էջ 29։

[3] «Հայկարան», էջ 50։

XIII դարի սկզբներից աշխույժ նավարկություն է սկսում Իտալիայի և Կիլիկյան Հայաստանի միջև։ Կիլիկիայի նավահանգիստները տարանցիկ առևտրի խոշոր կենտրոններ էին. փոխանակության համար այնտեղ էին բերված Հնդկաստանից, Չինաստանից և Պարսկաստանից բազմատեսակ ապրանքներ։ Ահա այս ժամանակ է, որ իտալական առևտրական որոշ քաղաքներում սկսում են բնակություն հաստատել հայ առևտրականներն ու նրանց գործակալները։

Հայերը իտալացիների, մասնավորապես ճենովացիների և վենետիկցիների հետ կապված էին նաև Ղրիմի ճանապարհով։ Ղրիմում հայերը և իտալացիներն ապրում էին կողք-կողքի և շատ սերտ գործակցության մեջ էին գտնվում։ Այսպիսով, XIII-XV դարերում, փաստորեն, Սև ծովի ողջ նավարկությունը գտնվում էր հայկական և ճենովական առևտրականների ձեռքում, որոնք աչ ու ձախ կտրում էին Սև ծովը ցանկացած ուղղությամբ։ Այդ ժամանակ իտալական նավահանգստային քաղաքներում երևում էին արդեն Ղրիմից եկած և բնակություն հաստատած հայ նավաստիներ, նավավարներ և առևտրականներ։

Ինչպես իտալական, այնպես և հայկական պատմական աղբյուրներում հավաստի տեղեկություններ կան, որ XIII դարի ընկզբներում հայկական փոքրիկ գաղթօջախներ են գոյություն ունեցել Հռոմում, Վենետիկում, Ճենովայում և Պիզայում։

Շուտով սակայն խաչակրաց արշավանքների անհաջողությունները Արևելքում, նրանց գրաված երկրամասերի կորուստը, մոնղոլական արշավանքները, մամլուկների անընդմեջ հարձակումները Կիլիկյան Հայաստանի վրա և այլն, հայ նոր խոշոր գաղթականության համար դուռ բաց արեցին դեպի Արևմուտք, այդ թվում՝ նաև Իտալիա։ Հայերը հայրենի երկրից, Սիրիայի և Կապադովկիայի հայ գաղթավայրերից ու Կիլիկյան Հայաստանից, զանգվածաբար, սկսում են գաղթել և ապաստան փնտրել Իտալիայում։

Սկզբնաղբյուրները դժբախտաբար մեզ հնարավորություն չեն տալիս որոշակի ասելու՝ թե ե՞րբ և ի՞նչ հայ գաղթականական հոսանքներ են եկել Իտալիա։ Բայց այնուամենայնիվ կան կցկտուր որոշ տեղեկություններ, որոնք մեզ մասնակի պատկերացում տալիս են ինչպես գաղթի ժամանակի, այնպես և նրա առաջացման պատճառների վերաբերյալ։

Այն հարցին, թե ի՞նչն է, որ հարկադրել է հայ պանդուխտներին դեգերանքով գալ և հասնել մինչև հեռավոր Իտալիա, պա-

տասխան է տալիս հայ տարագիր գրիչներից մեկը՝ Թադեոս քահանան իր 1226 թվականին Հռոմում ընդօրինակած ձեռագրի հիշատակարանում։ Գրիչն իր այդ ձեռագիրը նվիրել է Հռոմի «Հայոց տանը» (այժմ Վատիկանի մատենադարանի սեփականությունն է)։ Հիշատակարանում հակիրճ պատմված է հայրենի երկրում տեղի ունեցող արհավիրքները՝ Քշնամու կոտորածը, գերեվարությունը, սովը և համաճարակը, որոնք և ստիպել են հայերին թափառական ցուպ վերցնել. «Ծհաս աշխարհին (մեր),—գրում է դառնությամբ հիշատակագիրը,— սուր անպատմելի, զոր տեսաք աչաք մերով, զի զհամարն աստուած միայն գիտէ զկոտորելոցն սրով և զգերելոցն ի ձեռս անաւրինաց, և յետ այնր մահ և սով սաստիկ»[1]։

Գաղթականության խոշոր մի հոսանք իտալական քաղաքներն է եկել 1375 թվականին Կիլիկիայի հայ թագավորության անկումից հետո։ Երբ եգիպտական զորքերը գրավում են Կիլիկիան և սկսում նեղել տեղի հայ բնակչությանը, տասնյակ հազարավոր հայեր կիպրոսի վրայով անցնում են և ցրվում Իտալիայի զանազան քաղաքներում։

Հայ մատենագրության մեջ տեղեկություններ են մնացել երկու խոշոր արտագաղթի մասին Կիլիկիայից դեպի «յայնկոյս ծովուն»՝ այսինքն Կիպրոս, իսկ Կիպրոսից՝ Իտալիա։ Այդ գաղթերից մեկը հիշվում է 1404, իսկ մյուսը՝ 1423—1424 թվականներին։ Երկու դեպքում էլ սկզբնաղբյուրում գաղթող բնակչության թիվը, մեր կարծիքով, չափազանցված է՝ հիշելով «տունս ԼՌ», այսինքն՝ 30.000[2], որ անհավանական է։

Ուշ շրջանի հայ ժամանակագիրներից մեկը՝ Մաղաքիա դպիրը տեղեկություն է հաղորդում հայ գաղթականության մի այլ հոսանքի մասին 1402 թվականին. «1402 թ.,—գրում է նա,— ի սոյն ժամանակ յետ բառնալոյ թագաւորութեան Հայոց ի Սսոյ, ժողովեցան թագաւորազունք և իշխանք և բազում ի ժողովրդոց, մտեալ ի նաւ՝ գնացին ի Ֆրանգաստան։ Ի յԱնգոնիա գոն բազում գերեզմանք հայ գրով փորագրեալք, որ երևին մինչև ցայսօր, որ եմք ՌՃՄ (1701)»[3]։ Անգոնիան կամ Անքոնիան Իտալիայի հայկական խոշոր գաղթօջախներից մեկն է հանդիսացել, նա գտնվում է Ադրիականի եզերքին՝ ոչ հեռու Ռավեննայից։

Իտալիա եկող հայ գաղթականությունը կենտրոնացված բնակություն չի հաստատել մի վայրում, այլ ցրվել է երեսունից ավելի քաղաքներում։

Հայ գաղթականները իրենց բնակավայր ընտրած գրեթե բոլոր վայրերում հաստատել են իրենց կենտրոնները, որոնք հայկական հիշատակարաններում կոչվել են «Հյուրանոց», «Հանգստարան հայոց», «Հայոց տուն»։

«Հայոց տները», բացի երթևեկող հայերի համար հյուրատուն ծառայելուց, հանդիսացել են նաև տվյալ վայրի հայ համայնքի հավաքատեղին։ Նրանք ունեցել են իրենց կառավարիչները և դրամարկղը՝ կարիքավորներին օգնելու և համայնքի անհրաժեշտ հոգևորները հոգալու համար։ Մեզ հայտնի են մի շարք հայ բարերարների կտակներ՝ հօգուտ «Հայոց տան»։ Հայկական տներին կից հաստատված են եղել հայկական եկեղեցիները։ Մեծ գաղթօջախներից յուրաքանչյուրում հիշվում են հայկական երկու, անգամ՝ երեք եկեղեցիներ։

Իտալիայի հայ գաղթօջախները իրար հետ սերտ կերպով չեն համագործակցել։ Նրանք գործել են համարյա իրարից անկախ և փորձեր չեն արել ազգային ընդհանուր կենտրոն ստեղծելու և միջոցներ փնտրելու ասիմիլյացիայի վտանգի դեմ պայքարելու համար։ Այդ մասամբ պետք է բացատրել նրանով, որ XIV—XV դարերում Իտալիան ևս պետական միասնական ամբողջություն չի կազմել և գտնվել է քաղաքական տարբեր ազդեցությունների տակ։

Համառոտակի կանգ առնենք Իտալիայի հայկական մի քանի գաղթօջախների վրա։

XIII—XIV դարերում հայկական խոշոր գաղթօջախներից մեկը գտնվել է Հռոմում։ Այնտեղ, ինչպես պարզվում է, հայկական փոքրիկ համայնք գոյություն է ունեցել դեռ XI—XII դարերից։ Հռոմի գաղթօջախը ստվար գաղթականությամբ համալրվել է XIII—XIV դարերում։ 1240 թվականին Հռոմում հիշվում են «Հայոց տուն» և երկու եկեղեցի։

Հռոմը՝ պապի ռեզիդենցիան է, այնտեղ էին գալիս հայ քաղաքական և եկեղեցական գործիչները և բանակցություններ վարում վատիկանի հետ։ Հայկական և իտալական մատենագրությունների մեջ բազմաթիվ տեղեկություններ են պահպանվել Հռոմում գտնվող հայ դիվանագետների մասին։ Կիլիկյան հայկական արքունիքի դիվանագետներից մեկը՝ Հեղին, որը Լևոն II-ի կողմից ուղարկված է եղել Ինոկենտիոս III պապի հետ բանակցելու համար, մեկ տարի և երեք ամիս Հռոմում մնալուց հետո, 1210 թվա-

[1] Գ. Հովսեփյան. Հիշատակարանք, էջ 845—846։
[2] Ալիշան, Սիսուան, էջ 542—543։
[3] Ալիշան, Սիսական, էջ 453։

կանին դեպի Կիլիկիա ծովով վերադառնալիս լատիներենից հայերեն է թարգմանել «Շարադրութիւն ինքնակալացն Հռովմայ» և «Շարադրութիւն հայրապետացն Հռովմայ» աշխատությունները և այդ առթիվ իր գրած հիշատակարանում նշում է, որ «ի վերայ ծովու՝ ի նաւարկութեանս մերոյ թարգմանեցի զսա ի հռովմեականէն ի մերս»։ Իր կատարած դիվանագիտական առաքելությունը կարծես արժեքավորելու նպատակով նա հայտնում է, որ իր հետ տանում է Պապի՝ Լևոն թագավորին ուղարկած նվերը՝ մի արքայական թագ՝ զարդարված «բազմածախ և բազմագին յականց պատուականաց և ի մեծագին մարգարտից ընդելուզեալ»[1]։

Հռոմում գրված հայկական որոշ ձեռագրերի հիշատակարաններից երևում է, որ այնտեղ գտնվել են առանձին հայ բարերարներ, որոնք նյութապես օգնել են հայ գրիչներին՝ պատվիրելով ձեռագրեր գրել։ Այսպես, Ստեփանոս Համշեցի գրիչը իր ձեռագրի հիշատակարանում, որը գրել է 1240 թվականին «յականդիտակ և ի հռչակաւոր մայրաքաղաքն Հռոմ», խնդրում է հիշել Հակոբին և իր տիկնոջը, որոնք տվել են «զպարեներիկս ի պէտս կերակրոյ վաստուէր մարմնոյ»[2]։ Ընդօրինակված այս ձեռագրի նախագաղափար օրինակը, ինչպես երևում են հիշատակարանից, պատկանել է Ավետիք փիլիսոփային, որին և գրիչը խնդրում է հշել. «Յիշեսջիք և զԱւետիքին փիլիսոփայն, որ յօժար կամաւք ետ զաւրինակին»[3]։ Հովհաննես գրիչը 1254 թվականին գրած ձեռագիր հիշատակարանում անուններով հիշել է մի քանի հռոմաբնակ հայերի՝ Մատթեոսին, Հակոբին, Մարկոսին, Ստեփանոսին և Ղազարին։ Հռոմում գրված ձեռագրերից ուշագրավ է առանձնապես հայ ականավոր տաղերգու Խաչատուր Կեչառեցու, իր ուսուցչին՝ Գլաձորի համալսարանի նշանավոր գիտնական Եսայի Նչեցուն նվիրաբերած «Աղեքսանդրի պատմութեան» հիշատակարանը. «Զայս պատմութիւն աշխարհակալին Աղեքսանդրոս գրեցի իմով ձեռամբ ի մեծ քաղաքն Հռովմ՝ բերեալ ի Հայս պարգեւս մեծ վարդապետին իմ Եսայեայ»[4]։

Հայկական խոշոր գաղթօջախներից մեկը Իտալիայում գրտնվել է Վենետիկում՝ վերածննդյան այս հռչակավոր քաղաքում։ Այս գաղթօջախի պատմությունը մանրամասն շարադրված է Ղ. Ալիշանի «Հայ-Վենետ» խորագրով արժեքավոր աշխատության մեջ։ Վենետիկը հայ գաղթականական հոսանքների մեծ մասի համար փաստորեն առաջին կայանն է հանդիսացել. այստեղ կանգ են առել առաջին կարավանները և այստեղից այնուհետև ցրվել Իտալիայում։

Վենետիկի գաղթօջախի սկիզբը կարելի է համարել XII դարը։ Այս ժամանակից էլ հայերը ունեցել են «Հայոց տուն»։ Հաջորդ դարում, երբ հայ բնակչության թիվը մեծացել է, անհրաժեշտ է եղել նոր տուն ունենալ։ Այս նոր տունը 1353 թվականին հայերին է տրամադրել իտալացի բարերար Մարկոս Միանին։ Վերջինս երկար ապրել էր Կիլիկյան Հայաստանում, վայելել հայերի հյուրասիրությունը և իր տունը կտակելով հայերին, ցանկացել է վարձահատույց լինել։ Հայկական այս «նոր տունը» գտնվել է Վենետիկում Հուլիանոսի կոչվող թաղամասում։ Իտալական մատենագրության մեջ հայոց տունը կոչվել է «Casa degli Armeni», այն փողոցը, որի վրա գտնվում էր հայոց տունը «Հայկական փողոց», «Calle degli Armeni իսկ մոտիկ կամուրջը՝ «Հայկական կամուրջ» (Pons Armeniorum seu Feralium)։ Վենետիկի հայ բնակիչներից անունով հիշվում է Անտոն, որդի Բարսեղի 1395 թ., որը նավաստի է եղել։ Ալիշանը հավաստում է, որ «Նոյն դարու առաջին կիսուն մեջ այլ կհիշվին հայ նավապետք թե ի Սև ծովու և թե Իտալիո կողմերու ջրերի մեջ»։ Կիլիկիայից, Ղրիմի գաղթօջախներից և Տրապիզոնից հայկական նավերը հաճախ էին գալիս Վենետիկ, ուր կատարվում էին նավերի վերանորոգումները։

Հայկական խոշոր գաղթօջախներից մեկը գտնվել է Պիզայում՝ Գալիլեայի ծննդավայր այս հռչակավոր քաղաքում։ Պիզան առևտրական հարաբերությունների մեջ է գտնվել Կիլիկյան Հայաստանի հետ XII դարից և այս ժամանակից էլ հիմնվել է հայ գաղթօջախն այստեղ։ Իտալական աղբյուրներում տեղեկություններ կան 1115 թվականին Պիզայի նավահանգստում ապրող այլադավան քրիստոնյաների մասին, որը հիմք է տալիս ենթադրել, որ դրանք հայեր են եղել[1]։

Պիզայի հայ գաղթօջախը հատկապես խոշորանում է XIII դարի սկզբներին, երբ Լևոն թագավորը պիզացիներին Կիլիկիայում ազատ առևտուր անելու առանձնաշնորհում է տալիս։ Այնուհետև, հայ առևտրականներն ավելի հաճախ են սկսում երթևեկել Պիզա։

---

1 Գ. Հովսեփյան, Հիշատակարանք, էջ 743—744։

2 ՀՄՄ, ձեռ. № 218 (253), թ. 265բ։

3 Նույն տեղը, 265բ։

4 Տե՛ս Ալպոյաճյան, ՊՀԳ, II, էջ 595։

1 Ալիշան, Սիսական, էջ 450։

1282 թվականի Պիզայի դիվանական վավերագրերում հիշվում է Պետրոս անունով մի հայ վաճառական, որի որդին՝ Միհրանը (Դնելա Վիրճինեն, ինչպես անվանել են նրան իտալացիները), Պիզայից 12 կիլոմետր հեռավորության վրա, Կալի կոչվող գյուղում, կառուցում է Կարդուչյան կոչվող նշանավոր տաճարը, որի գրատան մեջ մինչև այսօր պահվում է հայ բարերարի յուղանկար նկարը և կնիքը[1]:

1320 թվականի հիշատակարանում տեղեկություն կա այս գաղթօջախի Գրիգոր անունով հայ եպիսկոպոսի մասին, որը հիմք է տալիս ենթադրելու, որ Պիզայի հայ գաղթօջախը բավականին մեծ է եղել: Այս գաղթօջախում ընդօրինակվել են հայկական ձեռագրեր, որոնցից մեկի գրիչը, 1353 թ. հիշատակարանով, վեր հիշված Գրիգոր եպիսկոպոսն է հանդիսացել[2]: Մի այլ ձեռագիր, որն այժմ Վիեննայի կայսերական մատենադարանի սեփականությունն է, ունի այսպիսի հիշատակագրություն. «Օրինակեալ է ի նոյն ՌՅՄԴ (1354) թվին ի Թորոս աբեղայէ Ալվերցւոյ ի քաղաքն Պիզ ընդ հովանեաւ սրբոյն Անտոնի Հայաստան»[3]:

XIV դարի երկրորդ կեսից Պիզայի հայերին կաթոլիկացնելու հարկադրանքը սկսում է ուժեղանալ: Չնայած հայերը որոշ դիմադրություն ցույց են տալիս, սակայն վատիկանին հաջողվում է պարտադրել կաթոլիկությունը, և հայերը շատ չանցած ասիմիլյացիայի են ենթարկվում:

Իտալիայի հին և բնակչաշատ գաղթօջախներից է հանդիսացել Ճենովան: Այստեղ հայ գաղթականներ էին եկել ոչ միայն Կիլիկիայից, որի հետ սերտ հարաբերությունների մեջ էին գտնվում ձեռներեց Ճենովացի հայ վաճառականները, այլև Ղրիմի հայ գաղթօջախներից, ուր կողք-կողքի ապրում էին հայերը և Ճենովացիները, որպես «հավատարիմ և վստահելի դրացիներ»: XIII—XV դարերում, Կաֆայի բարգավաճման շրջանում, հայ և Ճենովացի վաճառականները, ինչպես ասել ենք, դաշնակցած իշխում էին ողջ Սև ծովի ջրերի վրա և իրենց ձեռքը պահում տարանցիկ առևտրի գլխավոր երասանակները: Այսպիսով, Ճենովան հարազատ և սիրելի կենտրոն էր հանդիսանում ոչ միայն տեղացիների, այլև

[1] Ուղուրլյան, Պատմութիւն հայ գաղթականութեան ի Լիվոռնոյ քաղաքի, էջ 235—236:

[2] F. Macler, Notes des manuscrits Arméniens (Տե՛ս Ալպոյաճյան, ՊՀԳ, II, էջ 600):

[3] ՀՊՄ, ձեռ. № 4065, թ. 201ա:

հայերի համար, ուր պատրաստվում և նորոգվում էին նաև հայ վաճառականների նավերը:

XIV դարի սկզբներից Ճենովայում հիշվում է «Հայոց տուն»: 1307 թվականին այստեղ հայերը կառուցում են իրենց եկեղեցին Ս. Բարթողեմեոսի անունով[1]: Մեզ է հասել Ճենովայի հայ գաղթօջախում գրված երկու ձեռագիր, որոնցից մեկը ընդօրինակված է 1351—1352 թվականին և այժմ գտնվում է Բավիայի համալսարանի մատենադարանում, իսկ մյուսը՝ XIV դարի գրչությամբ (թվական չունի), այժմ գտնվում է Միլանի Ամբրոսիոսյան մատենադարանում[2]:

Ճենովայի հայկական գաղթօջախը պահեց իր գոյությունը մինչև XV դարի կեսերը, այնուհետև՝ ասիմլյացիայի ենթարկվեց:

Իտալիայի հայաբնակ քաղաքներից է հանդիսացել նաև Ռիմինին, որը կոչվել է նաև Արմնի (հայ մատենագրության մեջ նա հիշատակվում է Ռիմ անունով): Ենթադրվում է, որ առաջին հայ փախստականներն այս քաղաքն են ապաստանել Պաղեստինից՝ Սալահէդդինի կողմից 1188 թվականին Երուսաղեմը գրավելուց հետո[3]: Հետագայում գաղթօջախը ստվարացել է Կիլիկիայից եկած նոր գաղթականներով: Տեղի «Հայոց տան» մասին տեղեկություն ունենք 1215 թվականից, կա նաև հիշատակություն, որ այն վերակառուցվել է 1296-ին: Մեզ է հասել վերաշինության արձանագրությունը հետևյալ բովանդակությամբ. «Ի թվ ՉԽԵ (1296). Ես Թովմա վարդապետ շինեցի զտունս»[4]:

XIII դարում այնքան մեծաթիվ հայ բնակչություն է կենտրոնացած եղել Ռիմինում, որ անհրաժեշտ է եղել երկրորդ եկեղեցին կառուցել: Հայ համայնքի մեծության մասին է վկայում գաղթօջախում ապրած Հովհաննես անունով հայ եպիսկոպոսի հիշատակությունը, որին հավանական է ենթարկվելիս են եղել նաև մոտիկ քաղաքների հայ հավատացյալ համայնքները: Վարդան գրիչը 1254 թվականին, «ի հայոց տունն», ընդօրինակել է «Յաճախապատում» մի ձեռագիր, որն այժմ Փարիզի Ազգային մատենադարանի սեփականությունն է[5]:

[1] Ալիշան, Սիսական, էջ 450:

[2] «Այսօր», 1952 թ., № 345:

[3] Ալիշան, Սիսական, էջ 454:

[4] Նույն տեղը, էջ 454:

[5] F. Macler, Catalogue des manuscrits arméniens et géorgiens de la Bibliothèque Nationale, Paris, 1908, № 112.

XIV դարի քառասնական թվականներին գաղթօջախը խամրում է և անհետանում։ Եվգենիոս IV պապը 1442 թ. հոկտեմբերի 5-ի իր հրովարտակով հայկական լքված կրոնական շենքերը հատկացնում է Հռոմի կաթոլիկ միաբանությանը»[1]։

Ֆլորենցիայի հնագույն հայ բնակչության մասին մենք խոսել ենք մեր աշխատության նախորդ գլուխներում։ Հայ գաղթօջախը տեղավորված է եղել քաղաքի բարձրադիր վայրում՝ Ս. Մինասի տաճարի թաղամասում[2]։ Գաղթօջախը մեծացել է հատկապես հայոց Լևոն թագավորի և Ֆլորենցիայի բանկիրական Բարդի և Պերուցցի տների ներկայացուցիչ Բալդուչչի Պիկոլոտտոյի միջև կնքված առևտրական հարաբերություններից հետո[3], երբ հայ առևտրականների նավերը հաճախ են սկսում երևալ Ֆլորենցիայի նավահանգստում։ Հնգույն այս գաղթօջախի բնակիչները գլխավորապես եղել են առևտրականներ, իսկ հետագայում Կիլիկիայից և այլ վայրերից եկել են սոցիալական այլ խավերի ներկայացուցիչներ ևս։ Ֆլորենցիայի հայ համայնքը XIII դարում ունեցել է իր «Ազգային տուն»-ը և եկեղեցին։

XIV դարից մեզ հասած վավերագրերից երևում է, որ կաթոլիկ կղերականներն արտակարգ անհանդուրժողական վերաբերմունք են ունեցել լուսավորչադավան հայերի նկատմամբ և բռնի միջոցներով ստիպել են նրանց կաթոլիկություն ընդունել[4]։ Եվ այսպես XV դարում ֆլորենցաբնակ հայությունը կաթոլիկություն ընդունելով արագ ասիմիլյացիայի է ենթարկվել։ 1491 թվականին անտերունչ վիճակում գտնվող հայ վանքը իր գույքով հանձնվում է կաթոլիկ միաբանությանն[5]։

Հայկական ստվար գաղթօջախ է գտնվել Պերուժ կամ Բերուխճա քաղաքում։ 1273 թ. այստեղ հիշվում է հայկական երկու եկեղեցի՝ Ս. Աստվածածին և Ս. Մատթեոս ավետարանչի անուններով։ Պերուժը, ամենայն հավանականությամբ, Ուրբիայի հայ գաղթավայրի կենտրոնն է եղել. 1349 թվականին այնտեղ է թաղվել Թովմաս եպիսկոպոսը, որը հիշվում է որպես առաջնորդ «Իտալիոյ Հայոց»[6]։

1 «Այսօր», 1952 թ., № 313։
2 ՀԳՊ, II, էջ 600։
3 Г. Г. Микаелян, История Киликийского армянского государства, էջ 353։
4 «Այսօր», 1952 թ., նո. 320։
5 Ուղուրլյան, Պատմ. հայոց գաղթականության... էջ 244—246)։
6 Ալիշան, Հայապատում, էջ 346։

Պերուժի հայ համայնքին ձեռագիր ունի նվիրված Կիլիկիայի հայոց Լևոն III թագավորը։ Նվիրատվական հիշատակարանում ասված է. «Լևոն... թագաւոր ամենայն Հայոց, որդին հանգուցեալ արքային Հեթմոյ, վասն խնդրոյ Յովհաննէս քահանայի, պարգևեցաք ժամագիրքս զայս իւր եկեղեցւոյն Ս. Մատթէոս աւետարանչի, որ է ի Փերուժ քաղաք՝ յիշատակ մեր և նախնեաց մերուց ի թուականութեանս Հայոց ՌՃԻՀ (1279)»[1]։

Գաղթօջախի «Հայոց տուն»-ը հիշատակվում է հայկական մի ձեռագրում, որը գրվել է 1301 թվականին՝ «ի մայրաքաղաքիս Փերուժ»։ Նշված ձեռագրի գրիչը խնդրում է հիշել «Հայոց տան» երկու կառավարիչներին՝ Հակոբ քահանային և Գրիգոր Պոկոտինին[2]։ 1309 թվականին Պերուժում գրված մի այլ ձեռագրում Հովհաննես գրիչը խնդրում է հիշել Ստեփաննոս փիլիսոփային և Հովհաննես Շամքորեցուն, որոնք իր ուսուցիչներն են եղել[3]։

Պերուժի հայ գաղթօջախն իր գոյությունը պահպանել է մինչև XV դարի կեսերը, այնուհետև լուծարքի է ենթարկվել և «Հայկական տուն»-ը վեր է ածվել հիվանդանոցի[4]։

Հայաբնակ քաղաք է հանդիսացել նաև Բատուա քաղաքը։ Ենթադրվում է, որ այնտեղ հայկական համայնք է եղել դեռևս IV—V դարերում և այն ցրվել է 601 թ. Աճիլուլֆայի կողմից Բատուան գրավելուց հետո։ Բատուայի ուշ շրջանի հայ գաղթօջախի մասին տեղեկություն ունենք XV դարի սկզբներից։ Տեղեկություն կա, որ 1308 թվականին տեղի հայերը, Դավիթ վարդապետ Կիլիկեցու նախաձեռնությամբ կառուցել են եկեղեցի։ Այդ մասին է վկայում 1420 թվականին այնտեղ հայոց սեփական առաջնորդի գոյությունը, որի մասին հիշատակություն է պահպանվել մատենագրության մեջ։ Հայ գաղթօջախը ասիմիլյացիայի է ենթարկվել XV դարի կեսերին։

XIII դարից ոչսած հայկական գաղթօջախ է գոյություն ունեցել Անգոնայում։ Հայ համայնք այստեղ ապրել է քաղաքի պարսպից դուրս։ Այստեղի հայերը 1206 թ. վատիկանից թույլտվություն են ունեցել եկեղեցի կառուցելու համար։ Ըստ մեզ հասած տեղեկությունների, Անգոնայում XV դարում. գտնվել է 150 հայ ընտանիք։ Գաղթօջախը խամրել է XV դարում. 1464 թ. Պողոս II պապի

1 Ուղուրլյան, նշված աշխատությունը, էջ 243։
2 Լ. Խաչիկյան, ԾԴ դ. Հիշատակարաններ, էջ 3։
3 Գ. Ջարբհանալյան, Պատմ. հայ դպրության, II, էջ 311։
4 «Այսօր», 1952 թ., նո. 346։

կարգադրությամբ հայոց լքված եկեղեցին հանձնվել է տեղի իտալական կաթոլիկ միաբանությանը։

Հայկական փոքրիկ մի գաղթօջախ գտնվել է Սիցիլիայում։ Սիցիլիա կղզու հետ հայերը ծանոթ էին շատ վաղուց։ Տեղեկություններ կան, որ VII դարի կեսերին բյուզանդական կոնստանս կայսրը, Սիցիլիայի Սիրակուզ քաղաքում գտնված ժամանակ, ինչպես ասել ենք վերևում, իր հետ ունեցել է հայկական մի զորամաս Մժեժ Գնունու գլխավորությամբ։

VIII դարի 80-ական թվականներին Սիցիլիայի կառավարիչ է եղել Ալեքս-Մուշեղ Մամիկոնյանը։ Նա իր շրջապատում ունեցել է բավականին թվով հայ պաշտոնյաներ և զինվորականներ։ Մուշեղը հանդիսացել է նաև Սիցիլիայում տեղադրված բյուզանդական բանակի հրամանատարը։ Նա հրաշալի կարողացել է կազմակերպել կղզու պաշտպանությունը արաբական հարձակումներից, որի համար արքունիքից ստացել է իր ժամանակի ամենապատվավոր տիտղոսները՝ «Պատրիկ», «Հյուպատոս» և վերջում՝ «Կեսար»։ Ամուսնացել է Թեոֆիլ կայսեր աղջկա՝ Մարիամի հետ[1]։

Սիցիլիա կղզին բյուզանդական տիրապետության շրջանում հայերի համար հանդիսացել է յուրատեսակ աքսորավայր. կայսրության դեմ ապստամբած և կամ կասկածելի հայ մարդկանց արքունիքն աքսորել է այս կղզին։ Հայտնի է, օրինակ, որ 793 թվականին, երբ ապստամբվեցին հայկական բանակաթեմի զինվորները Իրինա կայսրուհու դեմ և արքունիքին հաջողվեց մեծ դժվարությամբ ճնշել այդ ապստամբությունը, հազարավոր հայ զինվորներ 794 թվականին աքսորվեցին Սիցիլիա[2]։ Ըստ տեղեկությունների, Սիցիլիա են աքսորվել մեծ թվով նաև հայ պավլիկյաններ։ Բյուզանդական արքունիքը ցանկանալով կայսրությունը վնասազերծել սոցիալական այդ վտանգավոր շարժումից, հայ պավլիկյաններին խումբ-խումբ աքսորել է Սիցիլիա[3]։

X—XI դարերում սակավաթիվ հայեր են հիշվում Սիցիլիայում։ Հայերի երթևեկը Սիցիլիա նորից աշխուժանում է XIV դարում, երբ առևտրական պայմանագիր է կնքվում Կիլիկյան հայ արքունիքի և Սիցիլիայի միջև և առևտրական գործուն հարաբերություններ են

[1] Bussell, The Roman Empire, էջ 406։
[2] Theophanes, էջ 724—725։
[3] «Հայկարան» ժողովածու, էջ 50։

սկսում։ XIV դարում Սիցիլիայի մայրաքաղաք Մեսսինայում հիշվում է «Հայոց տուն»[1]։

Պատմական աղբյուրներում տեղեկություններ են պահպանվել նաև Իտալիայի հետևյալ գաղթօջախների մասին.

Սիենայում—գաղթօջախ է հիշվում 1270 թվականից, տեղավորված է եղել Կումոլյան դռան մոտ, ունեցել է հայկական երեք եկեղեցի՝ Ս. Աստվածածին, Ս. Սիմեոն, Ս. Թադեոս։

Միլանում—XIV դարում հայկական գաղթօջախն ունեցել է երկու եկեղեցի՝ Ս. Կոզմաս և Ս. Դամիանոս։

Բոլոնիայում (Կամ Պոլոնիայում)—1303 թ. հիշվում է երեք եկեղեցի՝ Ս. Աստվածածին, Ս. Հովհ. Մկրտիչ, Ս. Հոգի։ Պողոս գրիչը 1381 թ. ձեռագիր է ընդօրինակել «ի գաւառիս իտալացւոց, ի մայրաքաղաքիս, որ կոչի Պօլօն»։

Նեապոլում—հիշվում են հայկական եկեղեցի 1328 թ. Ս. Հոգի անունով և «Հայոց տուն»՝ 1356 թ.։

Ֆաբորիանոում—հայկական եկեղեցի է հիշվում 1319 թ. Ս. Հոգի անունով։ Այս գաղթօջախում գրվել են ձեռագրեր։

Օրիվիեդոյում—«Հայոց տուն» և հայկական եկեղեցի է հիշվում 1288 թվականից։

Մանտուայում—Հայկական եկեղեցի է հիշվում 1335 թվականից։ Այստեղ նույնպես գրվել են ձեռագրեր։

Ֆուլիոլիյում (Ներկայիս Մանֆրիտոնիա քաղաքի մոտ)—Հայկական եկեղեցի է հիշվում 1313—1314 թվականներից։

Ջիրվիդա-Վեգգայում (Հռոմի նավահանգիստը)— «Հայոց տուն» և եկեղեցի են հիշվում 1340 թվականից։

Լուկկայում—հայկական եկեղեցի (Ս. Պողոս) հիշվում է 1319 թվականից։

XIV—XV դարերում հայկական համայնքներ են հիշվում նաև՝ Բենվենդում, Պոզիայում, Ֆորլիում, Իմոլիայում, Պեզարոյում, Պատավիոնում, Ֆաբորիանոում, Ֆորիցայում, Գաբբիոյում, Վիետրեում և Ամալֆիյում։

Այս, ինչպես և վերևում հիշված գրեթե բոլոր գաղթօջախները XV—XVI դարերում խամրում են, իսկ հայ բնակչությունը ասիմիլյացիայի է ենթարկվում։

Ասիմիլյացիոն այդ պրոցեսը ակնհայտ երևում է Ալիշանի վեհետիկի XVI դարի գրանցման մատյաններից՝ հանած տեղաբնակ հայերի ամուսնության տվյալները. XVI դարի կեսերում նրա մատ-

[1] Ալիշան, «Սիսուան», էջ 363։

նացույց արած 260 ամոսանութիւններից 120-ը հայ տղաներն ամուսնանում են իտալացի աղջիկների հետ, իսկ 100-ը հայ աղջիկներ ամուսնանում են իտալացի տղաների հետ և մնացած միայն 40-ն է, որ հայ երիտասարդը ամոսանանում է հայ աղջկա հետ[1]։

Կարելի է ասել, որ ոչ մի տեղ, հայկական ոչ մի գաղթավայրում հայկական բնակչութիւնն այնքան արագ ձուլման չի ենթարկվել, որքան Իտալիայում։ Ինչո՞վ բացատրել այդ։

Իտալիայի հայ բնակչութեան արագ ասիմիլյացիայի պատճառը, ամենից առաջ, Իտալիայի բարձր զարգացման մեջ պետք է փնտրել։ Հայկական բնակչութիւնը սովորաբար ուշ է ձուլման ենթարկվում այնտեղ, որտեղ բնիկները գտնվում են զարգացման ավելի ցածր աստիճանի վրա, քան հայերը։ Իսկ Իտալիան XIV—XVI դարերում իր զարգացման աստիճանով ո՛չ միայն իտալահայ գաղթականներից ցածր չէր, այլև քայլում էր ռենեսանսի ճանապարհի վրա կանգնած եվրոպական ժողովուրդների առջևից։ Իտալիա ընկած հայ գաղթականը, բնական է, պիտի հրապուրվեր իտալական իրականութիւնամբ, պիտի հարմարվեր և մերվեր նրա հետ։

Իտալահայութեան արագ ասիմիլյացիայի մյուս պատճառը այդ նրա ցրվածութիւնն էր։ Վերևում մենք նշեցինք երեսունից ավելի գաղթօջախներ, որոնք ցրված են եղել Իտալիայի տարբեր քաղաքներում։ Քիչ չեն եղել նաև հայ գաղթականներ, որոնք տեղավորված են եղել գյուղերում։ Այսպիսի ցրվածութեան պայմաններում, երբ մանավանդ փորձեր չեն արվել ազգային ընդհանուր միութիւն ստեղծելու և միջոցներ փնտրելու ասիմիլյացիայի առջևն առնելու համար, հայ բնակչութիւնը, հասկանալի է, ավելի արագ էր ձուլվում տեղաբնիկների հետ։

Եվ, վերջապես, իտալիայի հայ բնակչութեան ձուլման հարցում բացասական դեր են ունեցել կաթոլիկ կղերականութիւնը՝ Վատիկանը։ Համառոտակի ծանոթանանք Վատիկանի՝ իտալահայութեան նկատմամբ վարած քաղաքականութեան հետ։

Մինչև 1375 թվականը, այսինքն՝ Կիլիկիայի հայ պետականութեան անկումը, Վատիկանը, որի հոգևոր իշխանութիւնը տարածվում էր ամբողջ Իտալիայի վրա, հանդուրժողական վերաբերմունք է ցուցաբերում իտալական քաղաքներում հաստատված հայ լուսավորչականների նկատմամբ. նա ո՛չ միայն ազատ թույլ է տալիս նրանց պաշտամունք կատարել, այլև իր կոնդակներով հորդորում էր կաթոլիկներին նյութապես օգնութիւն ցույց տալու հայ համայնքներին՝ եկեղեցիներ և վանքեր կառուցելու համար։ Հայտնի է, օրինակ, որ Կղեմես V պապը 1307 թ. հոմիսի 10-ին իր կոնդակով հանձնարարել է ճենովացիներին օգնել Կիլիկիայի Սև լեռից եկած մի խումբ հայ միաբանների՝ վանք կառուցելու համար[1]։ Վատիկանը միշտ իր համաձայնութիւններով հովանավորել է հայ համայնքներին ցանկացած վայրում վանք և եկեղեցի կառուցելու համար։ Վատիկանի՝ իտալահայութեան նկատմամբ ցուցաբերած այս բարյացակամ վերաբերմունքը բխում էր նրա Կիլիկյան Հայաստանի նկատմամբ վարած սիրաշահման քաղաքականութիւնից։ Նա անվերջ խոստումներ էր տալիս Կիլիկիայի քաղաքական շրջաններին՝ զինական օգնութիւն ցույց տալ ընդդեմ մամլուկների այն պայմանով միայն, որ հայերը կաթոլիկութիւն ընդունեն։ Ահա այս իրադրութեան մեջ Վատիկանը ցանկանում է փափկանկատ լինել և նպատակահարմար չի համարում դավանաբանական խորականութիւն սկսել իտալահայ շրջանում։

Դրութիւնը հիմնովին փոխվեց Կիլիկյան հայ պետականութեան անկումից հետո. Վատիկանն այլևս կաշկանդված չէր Կիլիկիայի հետ վարվող երկդիմի քաղաքականութեամբ, պատճառ չուներ կեղծորեն ժպտալու իտալահայութեան երեսին, ուստի նա սկսում է դրսևորել իր իսկական դեմքը. իտալահայութեան նկատմամբ ըստ կրսում է կիրառել կաթոլիկացման բռնի քաղաքականութիւնը։ Հարկադրում է իտալահայ հոգևորականներին կաթոլիկութիւն ընդունել, թույլ է տալիս եկեղեցի կառուցել միայն հայ այն համայնքներին, որոնք կաթոլիկութիւն էին ընդունում, պարտադրում է իտալահայ հոգևոր իշխանութիւններին ենթարկվել կաթոլիկ թեմական առաջնորդներին և այլն։

Հայ առաջին տպագրութիւնները Իտալիայում։

Իտալիայի գաղթավայրի պատմութեան հետ կապված ամենից նշանակալից երևույթը այդ հայ տպագրութեան ստեղծումն է։ Վենետիկի՝ Ադրիատիկի այդ չքնաղ թագուհու հայ գաղթօջախումն է, որ ծնունդ է առել և մարմնավորվել հայ տպագիր գրքի առաջնեկը։ XV դարում Հայաստանի մոտյլ իրականութեան մեջ, պետք է ասել, որ հնարավորութիւններ չկային իրացնելու Հովհաննես Գուտենբերգի գյուտի հրաշալի արդյունքները, որովհետև հայ ժողովրդի հոգու և մտքի վրա այնպիսի ծանրութեամբ էին նստել օտարերկրյա նվաճողները, որ նա զրկված էր խիզախ նախաձեռնութիւն ցուցա-

[1] Ալիշան, Հայ-Վենետ, էջ 175—176։

[1] Ա. Ալպոյաճյան, ՊՀԳ, հ. II, էջ 591։

բերելու որևէ հնարավորությունից։ Այլ էին պայմանները հայկական գաղթավայրերում, մասնավորապես Իտալիայում։

Հայկական առաջին գիրքը լույս է տեսել Վենետիկում 1512 թվականին։ Նա տոմարագիտական բովանդակություն ունի և կոչվում է «Պարզատումար»։ Այդ գիրքը անարժեք աշխատություն չէ և ոչ էլ «ձախ ձեռքի շնորհած գիշերվա ծնունդ», այլ գիտական լուրջ աշխատություն է։ Հաջորդ 1513 թվականին լույս է տեսել հայերեն չորս գիրք ևս. «Տաղարան» (ժողովրդական աննման տաղերով), «Բժշկարան և հաքիմարան լատոյգ և զարմանալի մեծին Ճալիանոսի (Գալիանոսի) հաքիմին արարեալ...», «Ուրբաթգիրք» և «Պատարագամատոյց»։ Վերջին գիրքն ունի տպագրիչի հետևյալ հիշատակարանը. «Տպագրեցաւ սուրբ տառս ի ՋԿԲ (1513) ի աստուածապահ քաղաքս ի Վէնետիկ, որ է Վենետիկ, Ֆռանկաստեան, ձեռամբ մեղապարտ Յակոբին, որք կարդայք, մեղաց թողութիւն խնդրեցէք Աստուծոյ»[1]։

Անկարելի է մշակույթի բնագավառում մատնացույց անել ավելի նշանակալից երևույթ, քան տպագրությունը։ Տպագրությունը ոչ միայն գիրքը դուրս հանեց վանական նեղ խուցերից և ժողովրդի սեփականությունը դարձրեց, այլև նա մեծաքանակ հրատարակություններով կարողացավ իրար կապել հեռու և մոտ ժողովուրդներին և մեծապես խթանեց որոնող մարդկության գիտական մտքի ծավալմանը և ընդհանրացմանը։ Բոլոր ժողովուրդները երախտագիտական ակնածանքով են հիշում ու մեծարում իրենց առաջին տպագրիչներին։ Ո՞վ է եղել հայ առաջին տպագրիչը, որի նկատմամբ ևս պետք է դրվատական անուշ խոսքեր ասել։

Հակոբ Մեղապարտի՝ տպագրության երախայրիքը հայ ժողովուրդին շնորհող այս մեծ մարդու մասին, դժբախտաբար, վերևբերված հիշատակարանից ավելի տեղեկություն մեզ հայտնի չէ։ Պատմությունը հաճախ աղաղակող անարդարություններ ունի. փոքր մարդկանց մասին անհարկի մանրամասնություններ են պահպանվում և, հակառակը, մեծ գործի նախաձեռնողներին անթափանց խավարով ծածկում։ Հայ առաջին պանդուխտ տպագրիչը պատկանում է համեստ մեր այն մատենագիրների խմբին, որոնք գալիս են մեծ գործերով, բայց պատմության բեմից անցնում են լուռ, անաղմուկ, իսկ հաճախ՝ անանուն։

Պատմական տեղեկությունների այս աղքատությունն է պատճառը, որ հայ տպագրիչի մասին հայագիտության մեջ անհիմն մի շարք ենթադրություններ են արվել։ Նպատակ չունենալով այստեղ քանասիրական վեճ սկսել քաղաքացիություն ունեցող անընդունելի որոշ կարծիքների շուրջը, նպատակահարմար ենք համարում հայտնել միայն մեր կարծիքը մի քանի կարևոր հարցերի մասին։

ա) Բոլորովին անընդունելի է կղերական պատմաբաններից ոմանց հայտնած այն կարծիքը, որ իբր թե Հակոբը կաթոլիկ հոգևորական է եղել։ Անկարելի է այդ, որովհետև միջնադարյան հայ հոգևորականի համար մեծագույն անպատվություն էր անվան կողքին չդնել նաև իր հոգևոր կոչումը, իսկ Հակոբի հիշատակարանում ոչ մի կոչում չկա։ Բացի այդ, հոգևորականները, երբ գրում են իրենց հիշատակարանները, եթե նրանք լուսավորչական են, հիշում են կաթողիկոսի անունը, իսկ կաթոլիկները՝ Պապի անունը։ Սակայն մեզ հասած հիշատակարանում չկա ո՛չ պապի և ո՛չ կաթողիկոսի հիշատակությունը։

բ) Անհիմն է այն պնդումը, որ Հակոբը առևտրական է եղել։ Այդ անհավանական է, որովհետև առևտրական մարդը հազիվ թե ցանկանար տպագրական նման հոգեմաշ աշխատանքի մեջ մխրճվել և ապա՝ անկարելի է, որ Իտալիայում վաճառականություն անող մեկը գրական, մատենագրական այնպիսի խորը իմացություն ունենար, կարողանար այնքան անթերի սրբագրություն կատարել և փ վիճակի գտնվեր այնքան ճաշակով ընտրել հայ գործածական տառանիշների տեսակը։ Առևտրականները, սովորաբար, պատվիրատուներ են լինում, իսկ պատվիրատուների մասին ասվում է՝ «արդեամբ և ծախիւք»։

գ) Փաստազուրկ են այն պնդումները, որ Հակոբը իբրև թե Կեսարացի է (Վարդանյան) կամ Ջուղայեցի է (Գ. Լևոնյան)։ Մեր կարծիքով, նա Վենետիկի հայկական գաղթօջախից է, երկար ապրել է այնտեղ, տիրապետել է տեղական լեզվին, ծանոթացել է տպագրության գործին և իր անձնական նախաձեռնությամբ կազմակերպել հայ տպագրության գործը։

դ) Ոչնչով չի ապացուցված այն կարծիքը, թե Հակոբը սեփական տպարան չի ունեցել, այլ իր գրքերը տպագրել է իտալական տպարանում։ Այդ վարկածով, փաստորեն, Հակոբը զրկվում է ինքնուրույնությունից, և հայ տպագրության առաջնությունը տրվում է իտալական տպարանատիրոջը։

Հակոբի սեփական տպարան ունենալու օգտին է խոսում, ամենից առաջ, տպարանի դրոշմը, որը դրված է բոլոր հինգ գրքի վրա, որոնք, ինչպես պարզված է, չկան Վենետիկում այդ ժամա-

1 Ալիշան, Հայ-Վենետ, էջ 208։

նակ հրատարակված ոչ մի գրքի վրա։ Երկրորդ՝ անկարելի է օտարի տպարանում այդքան կարճ ժամանակում հինգ գիրք հրատարակել և այն էլ այն ժամանակվա հետամնաց տեխնիկայով։ Եվ, վերջապես, հնարավոր չէր օտարականի տպարանում նման գրագիտությամբ այդպիսի անթերի աշխատություններ հրատարակել։

ե) Չի կարելի համաձայնել նաև քաղաքացիություն ունեցող այն կարծիքների հետ ևս, ըստ որի հայկական տպագրության կազմակերպության շարժառիթը տպագրիչի նյութական շահադիտակամությունն է հանդիսացել։ Հակոբը, ինչպես երևում է, մեծահարուստ մեկը չի եղել և իր կազմակերպած ձեռնարկությունից նյութական ակնկալություններ, բնական է, ունեցել է։ Այդ երևում է թեկուզ հրատարակվող գրքերի ընտրությունից։ Սակայն միայն նյութական շահագրգռվածությամբ բացատրել հայ առաջին տպագրության սկզբնավորությունը, անարդարություն կլինի։ Տպագրիչի հիմնական նպատակը եղել է ժողովրդին ծառայելը, նրան օգտակար լինելը։ Այն դաժան ժամանակներում, երբ Հայրենի երկրում մոլեգնում էր թշնամին, իսկ գաղթավայրերում՝ ասիմիլյացիայի սարսափը, բազմատիրաժ գրքերի ստեղծումով հայ տպագրիչն օբյեկտիվորեն արթնացրել է տգիտության խավարում խարխափող ժողովրդի ինքնագիտակցությունը և կամք ու կորով ներշնչել նրան՝ դիմագրավելու հայ ժողովրդին սպառնացող վտանգներին։ Մեր կարծիքով, հայ առաջին տպագրիչը ունեցել է ճիշտ այն դերը, ինչ դեր ունեցել է Մաշտոցի հայրենասեր խումբը V դարում։

Իտալիայում, սակայն, տեղի ունեցավ ոչ միայն առաջին հայ գրքի տպագրությունը, այլև այնտեղ հիմնավորվեց հայ տպագրական գործը և ավելի զարգացավ։

Հակոբի տպագրական գործի առաջին շարունակողներից մեկը հանդիսացավ Աբգար Թոխաթեցին, որը հայտնի է նաև Աբգար դպիր անունով։ Նա 1565 թվականին առաջին տպագրությունից 54 տարի հետո Հռոմում լույս ընծայեց տոմարական մի աշխատություն՝ «Խառնայփնթուր տումարի գեղեցիկ և պիտանի» վերնագրով։ Նույն տարին հրատարակեց նաև «Փոքրիկ մեկնիչ Սաղմոսաց» գրքույկը։ Աբգար դպրի՝ Հռոմում գտնված ժամանակ, պետք է ասել, որ պայմանները այնքան էլ նպաստավոր չէին։ Վատիկանում պապական գահի վրա բազմել էր մեծ ինկվիզիտոր Պիոս V-ը, որն աշխատում էր ճզմել ամեն մի առողջ միտք ու ձեռնարկ։ Պայմանների դժվարությունը նկատի ունենալով, Աբգար Թոխաթեցին

տեղափոխվում է Պոլիս և այնտեղ շարունակում է իր տպագրական գործը։

Իտալիայում ժամանակագրական կարգով երրորդ հայ տպագրիչը Հովհաննես Տերզնեցին է։ Նա Հռոմում 1584 թվականին Դոմինիչի Բազայի տպարանում, հրատարակել է «Տումար Գրիգորեան»-ը։ Վատիկանը սակայն կասկածանքով է նայել նրա վրա և նույնիսկ ձերբակալել։ Ազատվելով բանտարկությունից, Տերզնեցին տեղափոխվել է Վենետիկ և Ջվան Ալբերթի տպարանում 1587 թվականին լույս ընծայել «Սաղմոսարան»։

Իտալիայում աշխատող հայ աչքի ընկնող տպագրիչներից է հանդիսացել Հովհաննես Անկյուրեցին՝ հայ գրական և իտալերեն լեզուները լավ տիրապետող հայրենասեր մի անձնավորություն։ Նա Իտալիա է եկել Պոլսից՝ Գրիգոր Կեսարացու հանձնարարությամբ՝ էջմիածնի տպագրության գործը կազմակերպելու նպատակով։ Չորս տարի մնացել է Իտալիայում։ Առաջին գիրքը տպագրել է տվել 1642 թվականին Վենետիկում Սալիգաթաուի տպարանում։ Այնուհետև տպագրել է այլ գրքեր ևս։ Հայ տպագիր գրքի հրատարակման գործում մեծ գործ են կատարել նաև իտալացիները։ Դեռևս 1621 թ. Միլանում, Ամբրոսյան վարժարանի տպարանում լույս է տեսել իր ժամանակի հայտնի լեզվաբան Ֆրանցիսկո Ռիվոլայի հայերեն-լատիներեն բառարանը, Հռոմի Ուրբանյան դպրոցի տպարանից 1645 թ. լույս է տեսել Կղեմես Գալանոսի հայոց լեզվի քերականությունը, իսկ 1650 թ. նույն հեղինակի՝ «Միաբանութիւն հայոց Ս. եկեղեցւոյն ընդ մեծին եկեղեցւոյն Հռովմայ» և այլ աշխատություններ։

Համեմատաբար ավելի աշխարհիկ բովանդակությամբ գրքեր են հրատարակվել Լիվորնոյում։ Նրանցից կարելի է մասնավորապես մատնացույց անել «Քերականութիւն» Խաչատուր վարդապետի (1691 թ.), «Պատմութիւն կոյսի Փանֆիանոսի» (1696 թ.), «Բառգիրք հայոց» Երեմիայ վարդապետի (1698 թ.), «Աշխարհացոյց Մովսիսի Խորենացւոյ» (1698 թ.) և այլ աշխատություններ։

Հայ գրքի տպագրության գործում գործուն դեր է կատարել Վենետիկը։ Անտոն Բարտոլիի տպարանից՝ սկսած 1695 թվականից մինչև 1777 թվականը. լույս են տեսել հարյուրից ավելի հայկական գրքեր։

Նշված իտալական տպարաններից «Հաւատոյ տարածման ասւրբ ժողովոյն» տպարանում լույս տեսած գրքերը որոշակի ունեն կաթոլիկ պրոպագանդիստական բնույթ. նրանց նպատակն է եղել

հայ ժողովրդին հավաքել կաթոլիկ «փարախը»։ Իսկ մյուս քաղաքների իտալական տպարանատերերը, հայ գրքի հրատարակությամբ, բացահայտ շահադիտական նպատակներ են հետապնդել։

Իտալական տպարանների գործունեությունը սկսում է սահմանափակվել XVII դ. վերջերից, երբ հանդես են գալիս Վենետիկի Մխիթարյանները և կազմակերպում իրենց սեփական տպագրությունը։

Իտալիայի գաղթավայրը XV—XVIII դարերում։

Հայ բնակչության նոր հոսանք դեպի Իտալիա սկսում է XVI դարի երկրորդ կիսում։ Պարսկա-թուրքական արյունոտ պատերազմները, որոնք մեծ մասամբ տեղի էին ունենում Հայաստանի տերիտորիայի վրա, երկրի անապահով վիճակը, տնտեսական կյանքի լճացումը, կողոպուտն ու գերեվարությունը—ստիպում են հազարավոր հայ բնակիչների թողնել իրենց հայրենի երկիրը և գաղթել ապահով վայրեր։ Այս պայմաններում գաղթականության խոշոր մի հատված գալիս և հասնում է Իտալիա։

Գաղթականության այս նոր հոսանքը զգալիորեն տարբերվել է նախորդ՝ XIII—XIV դարերում Կիլիկիայից Իտալիա եկող գաղթականությունից. այժմ գաղթականության մեջ ճնշող մեծամասնությունը կազմել են առևտրականները և արհեստավորները, այսինքն՝ այն մարդիկ, որոնք գործունեության ազատ ասպարեզ փնտրելու համար ի վիճակի էին գալ և հասնել մինչև հեռավոր Իտալիա։

Թուրքերի Պոլիսը վերցնելուց հետո Իտալիայի՝ Սև ծովի վրայով Արևելքի հետ կապող ուղին լիովին խափանվեց։ Իտալացիները զրկվեցին Թանայի կամ Տրապիզոնի վրայով Հնդկաստանի և Չինաստանի հետ կապվելու հնարավորությունից[1]։ Բայց նրանք բոլորովին չկտրվեցին Արևելքի հետ առևտուր անելու հնարավորությունից. այժմ, ճիշտ է, որոշ ընդհատումներով, գործել սկսեց Պարսկաստանի և Եգիպտոսի վրայով անցնող տարանցիկ ուղին։ Եթե հյուսիսային ուղու երթևեկության ժամանակ հայերը վենետիկի և ճենովական առևտրականների գործակցի դերով էին միայն հանդես գալիս, ապա այժմ հարավային ուղու գործարկման ժամանակ հայ վաճառականները նրա բացարձակ մենատերերը դարձան։ Այդ՝ առանձնապես նկատելի է XVII դարում։ Ըստ որում, մենք հայ վաճառականներ ասելով նկատի ունենք ո՛չ միայն Հայաստանից, այլև

[1] Всемирная история, т. III, էջ 105։

Պարսկաստանի, Սիրիայի և Եգիպտոսի հայկական գաղթավայրերից եկող առևտրականներին։

Մինչև XVI դարի ութսունական թվականները իտալական քաղաքներում բնակվող սակավաթիվ հայ անունների ենք հանդիպում։ Հայ առևտրականների նավերն արևելյան ապրանքներով, մասնավորապես մետաքսով ծանրաբեռնված, սկսում են հաճախ երևալ XVI դ. վերջերին և XVII դարի սկզբներին։ Այս աշխուժացումը մասամբ կապված էր Շահաբասի վարած տնտեսական քաղաքականության հետ, որը մեծ ու գործուն ջանքեր է գործադրել՝ Պարսկաստանի և Իտալական քաղաքների միջև տեղի ունեցող առևտրական և քաղաքական հարաբերությունները բարելավելու ուղղությամբ։ Այդ նպատակով նա 1582 թվականին Պարսկաստանից ուղղություն է ուղարկել հայ վաճառական Հյուպատոսի պաշտոնով Լիվորնո՝ Կիրակոս Մերմանին[1]։

Առևտրական հարաբերությունները իտալական քաղաքների հետ կարգավորելու նպատակով, Շահաբասը հատուկ պատգամավորություն է ուղարկել նաև 1600 և 1603 թվականներին, սակայն Թուրքիայի հետ տեղի ունեցող պատերազմի պատճառով, պատգամավորությունները հաջողություն չեն ունեցել։ 1607 թվականին Շահաբասը Վենետիկ է ուղարկել մի նոր պատգամավորություն՝ Շիոշ անունով հայ վաճառականի գլխավորությամբ։ Շիոշը Իտալիայում պետք է բանակցություններ վարեր և արքունիքի համար անհրաժեշտ գնումներ կատարեր։ Շահաբասի՝ պատգամավորության միջոցով Վենետիկի դուքսին ուղղված գրության մեջ ասված էր. «Առաքեմ զպատուականն ի հաւատարս և ի նմանիս իւր զիօջայ Շիօշ վաճառական քրիստոնեայ Ջուղայեցի ի նշանակ բարեկամութեան, այլև առ ի հայթայթել այդր ինչ ինչ կարատի և վաճառս պիտանիս արքունի դրան մերում, վասն որոյ փափագեմք և յանձն առնեմք»[2]։

1610 թվականին Շահաբասը Վենետիկ է ուղարկում մի այլ պատվիրակի՝ Ջուղայեցի հայ խոջա Սաֆարին, խոջա Եղիգարի որդուն։ Խոջա Սաֆարի առաքելությունը, ինչպես երևում է, ունեցել է երկու նպատակ. կնքել ինչպես առևտրական, այնպես և փոխօգնության պայմանագրեր։ Խոջա Սաֆարն իր հետ ունեցել է նաև գրություններ «առ Պապ և առ այլ պետս վասն խնդրոյ պա-

[1] Ուղուրլյան, նշված աշխատությունը, էջ 44։

[2] Ալիշան, Սիսական, էջ 442։

տերազմի թուրքաց և ևս թուղթս ի պարսից և ի Հայոց»[1]։ Շահաբասի պատվիրակը եղել է Վենետիկում, Հռոմում, Ֆլորենցիայում, բանակցություններ վարել և պատասխան գրություններով վերադարձել։ Շահաբասին ամենից շատ հետաքրքրողը՝ Պարսկաստանի մետաքսն էր, որի արտահանությունից նա նյութական մեծ եկամուտներ էր ստանում։ Նա մետաքսի արտահանության մենաշնորհը հանձնել էր հայ վաճառականներին, որոնք պարտավորվել էին վճարել արքունի մաքսը։ Ըստ ժամանակակից Հիսուսյան մի քարոզչի տեղեկության, Գիլանից 5 միլիոն լիրայի մետաքս էր արտահանվում, որից զգալի մասը գնում էր Վենետիկ և Լիվորնո։

Իտալական քաղաքները սիրահոժար ընդառաջել են Շահաբասին և մեծ առանձնաշնորհումներ տվել Պարսկաստանից մետաքս ներմուծող վաճառականներին, որոնց մեծ մասը հայեր էին։

1576 թ. օգոստոսի 19-ին, երբ առաջին անգամ սկսել են երևալ ջուղայեցիները, Վենետիկի սենատը որոշել է զեղչել բերվող մետաքսի մաքսը։ Հետագայում այդպիսի որոշումներ կայացվել են 1789 թ. դեկտ. 29-ին և 1614 թ. մարտի 5-ին, մայիսի 2-ին և հուլիսի 10-ին։

Պարսկաստանի, այդ թվում նաև հայ առևտրականներին առանձնաշնորհումներ տվող նման որոշումներ են կայացրել Իտալիայի մյուս քաղաքների պետական ղեկավար մարմինները ևս։ Այսպես, օրինակ, Լիվորնոյի ավագ դուքսը, իր 1593 թվականի հունիսի 10-ի արտոնագրով, թույլ է տվել բոլոր ազգի առևտրականներին «գալ և յաճախել զիւրեանց առուտուրս և զվաճառս ի մէջ անձկալի քաղաքին մերում Բիզայու և ի նաւահանգիստն Լիվոռնոյ, դադարելով և բնակելով հանդերձ ընտանեօք ձերովք և կամ առանձին»՝ խոստանալով կրօնական բացարձակապէս ազատութիւն, ի քաղաքական տրոց ապահովութիւն, ազատական առևտուր և «ապահովութիւն շահել գումարաց վճարման...»[2]։ Եվ ահա սկսում է հայ վաճառականների հոսանքը դեպի Իտալիա։ Նրանք իտալական քաղաքների սովորական հյուրերն են դառնում։ «Յայնժամ բազմացան վաճառականք,— գրում է Ալիշանը,—և կարաւանք Հայոց՝ յարևելից Ասիոյ և ի Կիլանայ, ի Նուխոյ, ի Գանձակայ, և այլն, բառնալ մթերս անբաւ զուտ և անզուտ մետաքսի այլ և այլ որակաւ և տեսակաւ»[3]։ Ի դեպ, հայ վաճառականները միայն մետաքս չէ, որ վաճառքի էին բերում Իտալիա. նրանք այստեղ էին բերում նաև դվոտի (դրֆտիկ), դամասկոսյան դիպակներ, գոհարեղեն, տեսակ-տեսակ համեմունքներ, մոմ և այլ ապրանքներ։ Իտալիա երթևեկող ահա այս վաճառականների մի մասը բնակություն է հաստատում իտալական քաղաքներում։

XVI—XVII դարերում հայկական խոշոր գաղթօջախներից մեկը դառնում է նորից Վենետիկը։ Հայերը Վենետիկում բնակություն են հաստատում Ս. Մարիամ Ֆորմոզայի եկեղեցուն կից փողոցի վրա, որը ջուղայեցիների անունով մինչև վերջին ժամանակները, կոչվում էր Ջուղայի փողոց։ Վենետիկում են հաստատված եղել հայ մեծահարուստ մի շարք տներ՝ Գիրաք Միրմանները (1588—1750), Շահումյանները (1650—1757), Շահրիմանյանները (1697—1800), Պետրոս Սինանյանները (1667—1712), Մարտիրոսյանները (1690—1737), Ջանդ Աղամիրը (1690—1713), Վանեցի Ստեփան Դավթյանները (1670—1742,) Ղափանցի Նահապետյանները (1690—1713), Շոռոթեցի Առաքել Քարաձվենցյանները (1718—1738), Նորատունկյանները (1717—1757), Պոլսեցի Ալեքսանյանները (1742—1800) և բազմաթիվ այլ տներ։ Վենետիկում իրենց ներկայացուցիչներն են ունեցել Լեհաստանի, Ֆրանսիայի, Ռուսաստանի, Պարսկաստանի և այլ երկրներում գործող հայ աչքի ընկնող վաճառականական տների ներկայացուցիչները։ Վենետիկի հայոց հին տունը, որը 1253 թվականին հայերին էր հատկացրել իտալացի բարերար Մարկոս Միանին, չի կարողացել բավարարել մեծացող հայ գաղթօջախի կարիքները։ Վենետիկի հայ գաղթօջախի ղեկավար ներկայացուցիչների 1579 թ. կազմած մի ժողովի արձանագրությունից, որին իրենք «Սահմանադրություն» են անվանել, երեվում է, որ նախկին «Հայոց տուն»-ը հատկացրել են «Հայրենակից աղքատներին», իսկ այնտեղ ապրող հայերին տեղափոխել մասնավոր տներ։ Սիմեոն Լեհացին 1612 թվականին իր ուղեգրության մեջ Վենետիկում հիշում է հայկական քարաշեն եկեղեցի՝ իր հյուրանոցներով, ճաշարաններով և հարակից այլ շենքերով[1]։

Ալիշանը արքունական դիվանների վավերագրերի հիման վրա կազմել է Վենետիկում գործարքներ կատարող հայ մարդկանց ցանկը. պարզվում է, որ XVI—XVIII դարերում այնտեղ գրանցված անունների թվացանկը 2000-ից անցնում է։

XVI—XVIII դարերում Իտալիայի հայ աչքի ընկնող գաղթօջախներից են հանդիսացել Վենետիկը, Միլանը, Անքոնան, Սիե-

[1] Ալիշան, Սիսական, էջ 443։
[2] Ուղուրլյան, նշված աշխատ., էջ 254—255։
[3] Ալիշան, Սիսական, էջ 455։

[1] Սիմէոն Լեհացի, Ուղեգրութիւն, էջ 54։

նան, Ֆլորենցիան, Պիզան, Պիստոյան, Լուկկան, Հռոմը, Վիտերբոն, Տորլին, Ֆերրարան, Պիրուժը և ուրիշներ։ Նրանց մեծ մասը, իհարկե, փոքրաթիվ օջախներ են եղել։ Թվարկված գաղթօջախներից իրենց խոշորությամբ աչքի են ընկել առանձնապես Վենետիկը, Ճենովան և Լիվորնոն։

Այնքան շատ ջուղայեցիներ են բնակություն հաստատած եղել Վենետիկ, Ճենովա և Լիվորնո քաղաքներում, որ Ստեփանոս արքեպիսկոպոս Ջուղայեցին իր 1688 թ. մի գրությունը վերնագրել է հետևյալ ձևով. «Գիր օրհնութեան աստուածաշէն քաղաքացն Վենետիկ, Ալեկոռնոյ և Ջենվայ եղեալ քրիստոսասէր և բարեպաշտօն ջուղայեցի վաճառականաց, սիրելի և հարազատ եղբարց»[1]։

Իտալիա եկող և բնակություն հաստատողները միայն ջուղայեցիներ չեն եղել։ Այստեղ են եկել և բնակվել մեծ թվով հայեր նաև Արևմտյան Հայաստանից։

Գաղթօջախների հայ բնակչության թվի մասին ճշտված տվյալներ չկան։ Ըստ Ուղուրլյանի տեղեկության, Անքոնայում ապրելիս են եղել մինչև 150 ընտանիք, Լիվորնոյում՝ 120 հոգի։ Վենետիկից բացի, մյուս գաղթօջախները հավանական է, դրանից ավելի շատ բնակչություն չեն ունեցել։ Մենք նկատի ունենք մշտական բնակություն հաստատածներին, այլապես առևտրական նպատակով եկողգնացող հայերի թիվը շատ մեծ է եղել։

Հայաստանից դեպի Իտալիա գաղթող բնակչության, մասնավորապես հայ առևտրականների իտալական քաղաքները փոխադրվելու և Հայաստանը գործարար բնակչությունից դատարկվելու այս վիճակը շատ հաջող պատկերված է մի բանաստեղծության մեջ, որը բերում է Ուղուրլյանը.

«Ի հայրենեաց մըղեալ արտաքս
Առուտուրաւ շահավաստակ
Ի Վենետիկ և ի Գենուա,
Եւ ի սահմանս առին ըզկայ
Ի Դիրենեան և ի յԱտրիակ.
Միմեանց հանդէպ ծովուց իշխանք.
ՅԱլիկուռնա ւ Անքոն քաղաք
Երամ երամ պանդխտականք,
Բիւր ատ բիւր անդ թափառական
Կործանեցին ըզՀայաստան
Եւ զՕրգոմն իմ և Ազքանազ
Վերածեցին ի թիւ նուազ...»[2]։

[1] Ա. Ալպոյաճյան, ՊՀԳ հ. II, էջ 450։

[2] Ուղուրլյան, էջ 220։

Ինչպես բոլոր երկրներում, այնպես և Իտալիայում, հայ բնակչությունը իր համեստ բաժինն է ունեցել երկրի տնտեսական, հասարակական և մշակութային կյանքի զարգացման գնագավառնեում։ Իտալահայ գաղթականությունը Իտալիան համարել է իր երկրորդ հայրենիքը, երախտագիտորեն է գնահատել իտալացի աշխատավորության իր նկատմամբ ցուցաբերած բարյացակամ վերաբերմունքը և շատ արագ ու սերտ հարաբերություններ է մշակել նրա հետ։ Եվ եթե կա մի խավ Իտալիայում, որից անչափ դժգոհ է եղել իտալահայությունը, այդ կաթոլիկ կղերականությունն է և նրա հոգևոր կենտրոն Վատիկանը։ Պապական իշխանությունները ոչ միայն խեղդել են ամեն մի ազատ մտածողություն, այլև ճիզվիտական խորամանկ ձևերով նստել են իտալահայ բնակչության հոգու վրա և, վերջին հաշվով, նրա կործանման պատճառը դարձել։

Իտալիայի քաղաքական իշխանությունները իրենց բազմաթիվ որոշումներում նշել են հայ բնակչության մատուցած մեծագույն ծառայությունները Իտալիային։ Ալիշանը «Սիսուան»-ում բերել է այդ որոշումներից բազմաթիվ նմուշներ հայերեն թարգմանությամբ։ Հայերն այնտեղ անվանված են «երախտավոր ազգ (Nazione Benemerita), «բազմերախտ», «բարյացապարտ», «սիրելագոյն», «շահավոր» և այլն։ Ըստ որում, հայերը միայն առևտրի մեջ չէ, որ աչքի են ընկել և օգտակար եղել Իտալիայում։ Իտալական նավատորմիղում ծառայել են ոչ քիչ թվով հայ նավաստիներ, նավավարներ, նավակառուցման վարպետներ, թնդանոթաձիգներ և այլն։ 1395 թվականին Վենետիկում կտակ ունի գրած հայ նավաստի Անտոնը, Բարսղի որդին։ XVI դարի վերջերում և XVII-ի սկզբներում հիշվում է եղիա անունով մեկը, որի չորս որդիները աշխատելիս են եղել նավարանում (Գևորգ, Հովհան, Մկրտիչ, Նիկողայոս), իսկ մեկն էլ՝ Պետրոս անունով նավապետ է եղել։ XVIII դարում տեղեկություններ կան Վենետիկի նավատորմիղում աշխատող Մկրտիչ Ռոստոմի, Պետրոս Բալասանի, Հակոբ Աթաջանի և ուրիշների մասին։ Հետաքրքիր տեղեկություններ են պահպանվել XVI դարի երկրորդ կեսին նավաշինության հայ աչքի ընկնող վարպետ Անտոնի մասին, որ միաժամանակ եղել է նաև խոշոր գյուտարար. նա իր սեփական նավաշինարանում պատրաստել է այնպիսի մի սարքավորում, որով կարողացել է ծովի տակից բարձրացնել խորտակված նավերը, որի համար և բազմիցս պարգևատրվել է Վենետիկի սենատի կողմից։

Վերջապես, հայերն իրենց համեստ մասնակցությունը ունե-

ցել են նաև իտալական մատենագրության բնագավառում։ Իտալական V դարի թարգմանական գրականության մեջ մեծ անուն ունի Խաչատուր Դավրիժեցին, որը պարսկերենից իտալերեն է թարգմանել «Պանդխտության կամ ուղևորության (Սումատրա) կղզու թագավորի երեք որդիների», որը առաջին անգամ տպագրվել է 1557 թ. և հետո արժանացել բազմաթիվ անգամների։ Այդ աշխատությունը հետագայում իտալերենից թարգմանվել է ֆրանսերեն, անգլերեն, գերմաներեն, իռլանդերեն և դանիերեն։ Եղել են թարգմանական գործում աշխատող այլ հեղինակներ ևս։

Հայ-իտալական մշակույթի բնագավառում մեծագույն ծառայություն ունեցել են մասնավորապես Վենետիկի Մխիթարյանները։

Վենետիկի Մխիթարյանները։

Անկարելի է հայ գաղթավայրի պատմության մեջ մատնացույց անել մշակութային մի այլ օջախ, որն իր գրական, մատենագիտական անհատնում վաստակով այնքան խոշոր դեր կատարած լինի հայ ժողովրդի պատմության մեջ, որքան Մխիթարյանների վենետիկյան օջախը։ Իտալիայի հայ գաղթավայրի պատմության մեջ Մխիթարյաններն ունեն իրենց պատվավոր տեղը։

Վենետիկյան միաբանությունը հիմնվել է 1701 թ. սեպտեմբերի 8-ին Պոլսում։ Հիմնադիրն է հանդիսացել Մխիթար Սեբաստացին (1676—1749), որի անունով էլ միաբանությունը կոչվել է Մխիթարյան։ Մխիթարյանները սկզբում եղել են ընդամենը տասը հոգի, իսկ հետո աստիճանաբար ակսել է նրանց թիվը մեծանալ։ Միջդավանական կատաղի պայքարում նրանք ենթարկվել են հալածանքի Պոլսի հայոց պատրիարքի կողմից և հարկադրված եղել 1702 թվականին փոխադրվել և բնակություն հաստատել Մորեայի (Հունաստանում) Մեթոն ծովահայաց բերդաքաղաքում, որն այդ ժամանակ գտնվում էր Վենետիկի գերիշխանության տակ։ Այստեղ նրանք մենաստան են հիմնում, կառուցում եկեղեցի և միաբանության պահպանման համար ձեռք բերում պարտեզ և ձիթաստան[1]։ 1705 թ. Հռոմ ուղարկվող իրենց երկու ներկայացուցչի միջոցով նրանք պաշտոնապես պապին են ներկայացնում իրենց կանոնադրությունը և խնդրում հաստատել։ Սակայն Հռոմում գտնվող հայ կաթոլիկների՝ Մխիթարյանների նկատմամբ տարածած չարախոսությունների պատճառով, կասկածամիտ պապը

[1] Հ. Թորոսյան, Վարք Մխիթարայ աբբայի Սեբաստացւոյ, Վենետիկ, 1932, էջ 24։

քավականին ձգձգում է և երկար «ուսումնասիրությունից» հետո միայն հաստատում է կանոնադրությունը 1712 թվականին[1]։

Մխիթարյաններին չի հաջողվում երկարատև ապրել Մորեայում։ 1715 թ. Թուրքիան կռիվ է հայտարարում Վենետիկի հանրապետությանը։ Օսմանյան զորքերը շարժվում են դեպի Հունաստան։ Մխիթարյանները այդ պատճառով հեռանում են Հունաստանից և ապաստանում Վենետիկում։ Թուրքերը գրավում են Մորեան և Մեթոնի դղյակը քարուքանդ անում։ Այսպիսով, Մխիթարյանների 12 տարիների աշխատանքը ոչնչանում է։ Վենետիկի սենատի հատուկ որոշումով քաղաքամերձ Ս. Ղազար կղզին հատկացվում է հայ միաբաններին։

1717 թ. սեպտեմբերի 8-ին Մխիթարյանները պաշտոնապես հաստատվում են այստեղ։ Կղզում անհրաժեշտ կառուցումներ և վերակառուցումներ կատարելուց հետո, Մխիթարը և իր միաբանակիցները ծավալում են բեղմնավոր գրական աշխատանք։ Վենետիկում հաստատվելուց հետո, կազմվում է չորս հոգուց բաղկացած գրական մի շրջան՝ Մխիթար Սեբաստացի, Պետրոս Թիֆլիսեցի, Խաչատուր Էրզրումցի և Սարգիս եպ. Սարաֆյան, որոնք գրում են ինքնուրույն աշխատություններ, կատարում թարգմանություններ, հրատարակում բնագրեր և կատարում գրական այլ աշխատանք։ Չի կարելի ասել, որ Մխիթարյաններն իրենց գրական, մատենագիտական աշխատանքներն սկսել են իր ժամանակի Վենետիկի առաջադեմ մշակույթի ավանդությամբ։ Մխիթարի, ինչպես և իր աշակերտների առաջին աշխատությունների վրա որոշակի նկատվում է կրոնա-դավանաբանական սխոլաստիկ մտածողության կնիքը։ Լուսավորության դարում Մխիթարյանները թարգմանում էին Ալբերտի աստվածաբանությունը, Թովմա Ակվինացու աշխատությունների մեկնությունները, Ճիզվիտ կրոնավորների խրատները և կաթոլիկ սխոլաստիկ այլ աշխատություններ։ Հայ մտավորական շրջանները և Հայաստանում, և գաղթավայրերում, հաճույքով չընդունեցին Մխիթարյանների այս առաջին անօգուտ հրատարակությունները։ Սակայն շուտով Մխիթարյանները, մոտիկից շփվելով Վենետիկի զարգացած իրականության հետ, կրոնական թեմատիկային զուգընթաց, սկսեցին ուշադրություն դարձնել նաև աշխարհիկ գրականության և գիտական բնագավառների վրա։ Այդ գործում առաջին օրինակը, պետք է ասել, տվեց ինքը Մխիթար Սե-

[1] Համառոտութիւն վարուց Մխիթարայ մեծի Աբբայի (տե՛ս «Հանդէս ամսօրեայ», 1949 թ., նո. 4—12, էջ 351)։

բաստացին։ Նրա աշխատություններից հայագիտական ուշագրավ գործեր են առանձնապես չորսը՝ «Դուռն քերականության աշխարհաբար լեզուին Հայոց», լույս է տեսել Վենետիկում 1727 թ., «Քերականություն գրաբար լեզուի հայկական սեռի», լույս է տեսել Վենետիկում 1730 թ., «Տօմար կարճառօտ», լույս է տեսել Վենետիկում 1733 թ., «Բառգիրք հայկազեան լեզուի», լույս է տեսել Վենետիկում 1769 թ. և այլն։

Մխիթար Սեբաստացու գործունեությանը հայագիտության մեջ տարբեր գնահատականներ են տրվել։ Ոմանք գտնում են, որ նա նեղմիտ, միստիկ կրոնավոր է, կտրված հայ իրականությունից, նրա գրական ստեղծագործությունների նպատակը կաթոլիկ պրոպագանդան է եղել և այլն։ Հայագետների մի այլ խումբ գտնում է, որ Մխիթար Սեբաստացին մի արտակարգ հայրենասեր անձնավորություն է, որն իր ժողովրդի համար օգտակար գործ կատարելու նպատակով միաբանություն է ստեղծել, տեղափոխել է Իտալիա և այնտեղ ծավալել իր գրական բեղմնավոր գործունեությունը։ Նա տեղական պայմաններին հարմարվելու նպատակով է կաթոլիկ սքեմ հագել, բայց միշտ հոգով մնացել է որպես ջերմ հայրենասեր։ Մեր կարծիքով երկու տեսակետներն էլ չափազանցված են։ Ինքը՝ Մխիթար Սեբաստացին, իր որդեգրած ուղղության մասին՝ տպագրած Աստվածաշնչի հիշատակարանում, հետևյալն է գրել. «Թեպէտ սիրում եմ իմ ազգը և նրա օգտի համար աշխատելը, բայց դրանով իմ սիրտը Հռոմի սուրբ եկեղեցու ուղղափառ հավատի դավանությունից չի թուլանում»[1]։ Մխիթարը եղել է կաթոլիկ այն հոգևորականներից, որոնք հայրենասեր են։ Մեկը մյուսին չի ժխտում։ Ներկայումս արտատահմանում քիչ չեն հայ կաթոլիկ հոգևորականներ, որոնք անխարդախ սիրում են իրենց հայրենիքը։

Մեր կարծիքով Մխիթար Սեբաստացու մեծությունը ոչ թե իր անձնական գրական վաստակների մեջ պետք է փնտրել միայն, այլ նրա ստեղծած դպրոցի։ Հակառակ Հայաստանում և գաղթավայրերում գոյություն ունեցող բազմաթիվ միաբանությունների, որոնք ապրում են պորտաբույծ կյանքով, ստանում են ժողովրդից և ոչինչ չեն տալիս նրան, Մխիթարը ստեղծեց այնպիսի աշխատասեր միաբանություն, որը կատարեց գրական, մատենագիտական մեծ աշխատանք։ Ճիշտ է, Մխիթարյանները, որպես կղերականներ, իրենց գրական ստեղծագործությունների մեջ շեշտը դրել են կրոնական հարցերի վրա, ճիշտ է, անհարկի շատ են տուրք տվել վատիկանին, բայց դրա հետ միասին չպետք է ժխտել, որ նրանք օգտակար մեծ աշխատանք են կատարել։ Մխիթարյանների գործունեության արդարամիտ գնահատողներից է եղել Մ. Նալբանդյանը, որը նշում է նրանց աշխատանքի և դրական, և բացասական կողմերը։ «Մխիթարը,— գրում է նա,— պապականությունը դրեց յուր երեսին որպես դիմակ, նորա ապագայքը ծնանում են արդեն դիմակով, բայց հայկական դիմակով։ Մխիթարի արտաքինը—պապականությունը դառնում է նորա համար ներքին, Մխիթարի ներքինը—հայությունը, դառնում է արտաքին, մի լոկ դիմակ, որով երևում են միմիայն հայոց ազգի առջև»[1]։

Խոսելով Մխիթարյանների դրական գործունեության մասին, ամենից առաջ պետք է ասել, որ նրանք մեծ աշխատանք են կատարել Հայաստանում և գաղթավայրերում ցրված հայկական ձեռագիր մատյանները հավաքելու և նրանք կորստից փրկելու գործում։ Եվ այժմ Մխիթարյանների մատենադարանը, հայ ձեռագիր մատյանների քանակով, երկրորդ խոշոր ժողովածուն է աշխարհում։ Մխիթարյանների մոտ են կենտրոնացել բազմաթիվ մատենագրական ունիկումները։ Մխիթարյանները հսկայական գործ են կատարել հայ մատենագիրները հրատարակելու գործում. հայ պատմիչների, տաղերգուների և այլ հեղինակների մեծ մասի աշխատությունները լույս են տեսել Մխիթարյանների հրատարակությամբ։ Կարելի է ասել, որ հայ մատենագրերի հրատարակության գործում նրանք ավելի են արել, քան հայ մյուս բոլոր հրատարակությունները միասին վերցրած։ Ակադեմիկոս Հ. Աճառյանի հաշվումներով, Մխիթարյանների հրատարակած գրքերը հազար հատորից անցնում են[2]։

Մխիթարյանները խոշոր գործ են կատարել նաև անցյալի հարուստ հայ գրականությունն ու գիտությունը եվրոպական գիտությանը ներկայացնելու և, հակառակը, եվրոպական մշակույթը՝ հայերին ներկայացնելու ուղղությամբ։ Նրանց ենք մենք պարտական անտիկ մի շարք հեղինակների ստեղծագործությունները հունարենից կամ լատիներենից հայերեն թարգմանելու և հայ թարգմանական մատենագրության մեջ պահված անտիկ գիտնականների եզակի աշխատությունները եվրոպացիներին ներկայացնելու գործում։ Նրանք, կարելի է ասել, թարգմանել են օտար հին և նոր

[1] Ա. Երիցյան, Վենետիկի Մխիթարեանք, Թիֆլիս, 1883, էջ 40։

[1] Մ. Նալբանդյան, Մխիթար Սեբաստացի և Մխիթարյանք (տե՛ս «Երկերի լիակատար ժողովածու», III հ., էջ 224)։

[2] Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. Գ, էջ 390։

կլասիկների կարևոր գործերը՝ Հոմերոսի Իլիականից և Ոդիսականից սկսած մինչև Ֆենելոն, Դանտե և Բայրոն[1]։

Մխիթար Սեբաստացու մահվանից հետո, XVII դարի երկրորդ կեսին և XIX դարի առաջին քառորդում Մխիթարյան աշքի ընկնող գործիչներ են հանդիսացել Հ. Գ. Ավետիքյանը, Հ. Խ. Սուրմելյանը, Հ. Ղ. Ինճիճյանը, Հ. Մ. Ավգերյանը, Հ. Հ. Ավգերյանը, Հ. Գ. Ագոնցը, Հ. Վ. Ալեքսանյանը և ուրիշներ[2]։

Հայագիտության և ճշգրիտ գիտությունների մի քանի բնագավառների հիմնադիրները հայ իրականության մեջ, փաստորեն, Մխիթարյաններն են եղել։ Սուքիաս Աղամալյանի հեղինակությամբ 1781 թվականին լույս է տեսել թվաբանության ժամանակակից առաջին լուրջ ձեռնարկը, Հ. Ս. Պարոնյանի հեղինակությամբ՝ 1794 թ. «Երկրաչափության» դասագիրքը, Հ. Ի. Խաչատրյանի և Հ. Ե. Էրազյանի քարտեզները և այլն։ Եվ, վերջապես, Մխիթարյանները մեծ գործ կատարեցին հայ ժողովրդի քաղաքական պատմության ուսումնասիրության ուղղությամբ։

XVIII դարի հայ խոշոր պատմաբաններից մեկն է հանդիսացել Մխիթարյան միաբանության անդամ Մ. Չամչյանը։ Նա հայ իրականության մեջ առաջինն է, որն իր «Հայոց պատմության» մեջ (հրատարակվել է 1784—1786 թվականներին) կառչած չմնաց հայկական պատմիչների տեղեկություններին, այլ օգտագործեց նաև հիշատակարաններ, հիշատակագրություններ, ինչպես և հունական, լատինական, արաբական և օտար այլ աղբյուրներ։ Չամչյանն իր հավաքած նյութերը քննադատորեն համադրել է հայկական աղբյուրների տվյալների հետ և կազմել հայոց պատմության ընդարձակածավալ ու գիտական դասընթացը երեք հատորով, որն ընդգրկում է հնագույն ժամանակներից մինչև XVIII դարի ութսունական թվականները։ Թեև Չամչյանի պատմագիտական հայացքները մեզ համար այժմ ընդունելի չեն, որովհետև նրանք միջնադարյան ավատական պատմագրությունից շատ վեր չեն բարձրանում, սակայն նյութն այնքան հարուստ է և նրա արծարծած հարցերն այնքան բազմատեսակ, որ այն եղել ու մնում է որպես բարձրարժեք մի աշխատություն, որը շրջանցել հնարավոր չի։

Մխիթարյանների գրական, մատենագիտական լավագույն աշխատությունները լույս են տեսել XIX դարում, այս մասին խոսք կլինի հաջորդ հատորի մեջ։

[1] Տե՛ս Բ. Սարգիսյան, Մխիթարյան միաբանություն, երկուհարյուրամյա գրական գործունեությունն ու նշանավոր գործերը, Վենետիկ, 1905 թ.։

[2] Լեո, Հայոց պատմություն, հ. III, էջ 1009։

ԲՈՒԼՂԱՐԻԱՅԻ ՀԱՅ ԳԱՂԹԱՎԱՅՐԸ

Գաղթավայրի պատմության սկզբնաղբյուրները և ուսումնասիրությունները։

Բուլղարիայի հայ գաղթավայրի հին շրջանի մասին մեզ հասած տեղեկությունները կցկտուր են և դիպվածային։ Կան գաղթավայրի պատմության հետ կապված այնպիսի շրջաններ, որոնց մասին բացարձակ ոչինչ չգիտենք։ Այսպես, օրինակ, բյուզանդական և հայկական պատմիչների ու ժամանակագիրների տեղեկություններից հաստատապես հայտնի է, որ IX—XIII դարերում տասնյակ հազարավոր հայ գաղթականություն է տեղափոխվել Բուլղարիա, հայկական ստվար գաղթօջախներ են ստեղծվել այնտեղ և զգալի դեր կատարել երկրի քաղաքական, հասարակական և կուլտուրական կյանքում, բայց XIV դարում նրանց մասին եղած պատմական տեղեկություններն ընդհատվում են։ Ինչո՞վ բացատրել այդ. արդյոք հայկական գաղթօջախները կազմալուծվել և անհետացե՞լ են. իսկ եթե այո, ապա ի՞նչ գործոններ են նպաստել նրանց կազմալուծմանը և այլն, այդ բոլորի մասին աղբյուրները համառորեն լռում են և պատասխան չեն տալիս։

Բուլղարահայ գաղթօջախների մասին շատ ու քիչ բավարար տեղեկություններ պահպանվել են XVI դարից սկսած։ Այժմ հայ և բուլղար պատմիչները հաճախ են անդրադառնում Բուլղարիայի հայ գաղթօջախներին։ Այդ ժամանակներից մասամբ տեղեկություններ են սկսում հաղորդել նաև եվրոպական ճանապարհորդները։ Եվ, վերջապես, XVII—XVIII դարերից մեզ են հասել հայկական որոշ հուշարձաններ, ձեռագրական հիշատակարաններ և պաշտոնական վավերագրեր։ Բայց այդ նյութերի հիման վրա

դարձյալ անկարելի է սպառիչ խոսք ասել գաղթավայրի ներքին կյանքի ու նրա աչքառու գործիչների մասին։

Բուլղարահայերի մասին եղած այս աղքատիկ տեղեկությունները, դժբախտաբար, մինչև այժմ չի հավաքված, ժամանակագրական կարգով չի դասավորված և չի հրատարակված ամբողջական ժողովածուների մեջ։ Դրանք զետեղված են գլխավորապես առանձին ուսումնասիրություններում կամ նրանց հավելվածում, հայկական թերթերում, ամսագրերում ու տարեգրքերում։ Այս հրատարակություններից կարելի է մատնացույց անել «Փառnu» ժողովածուն, որը հրատարակվել է Սոֆիայում 1926 թվականին, «Պուլղարահայ տարեցոյց»-ը, որը հրատարակվել է 1929 թվականին, «Հայկարան» ժողովածուն, որը հրատարակվել է 1931 թվականին Սոֆիայում, «Մասիս» տարեգիրքը, որը հրատարակվել է 1934 և 1935 թվականներին, «Հայ մամուլը», որը հրատարակվել է 1937 թվականին, «Հայրենի Տարեցոյց»-ը, որը հրատարակվել է Պլովդիվում 1938 թվականին և այլն։ Մի շարք արժեքավոր նյութեր են հրատարակված նաև «Սիոն», «Բազմավէպ» և «Հանդէս ամսօրեայ» ամսագրերում։

Բուլղարահայ գաղթօջախի մասին պատմական փաստերը հավաքելու և այն գիտական շրջանառության մեջ դնելու գործում առանձնապես գովելի նախաձեռնություն է ցուցաբերել Սոֆիայում հրատարակվող «Երևան» թերթը, որն իր էջերում պարբերաբար զետեղել և զետեղում է պատմական արժեքավոր նյութեր և ուսումնասիրություններ՝ նվիրված Բուլղարիայի մարած կամ գործող գաղթօջախներին։

Բուլղարիայի հայ գաղթօջախների պատմությամբ զբաղվող առաջին հայագետներից է հանդիսացել հանգուցյալ Ա. Ալպոյաճյանը։ Նա 1912 թվականին Վառնա քաղաքում լույս է ընծայել իր «Պուլկարիոյ պատմութիւնը» խորագրով աշխատությունը, որի մեջ մասամբ տեղ է հատկացրել նաև բուլղարահայ գաղթօջախներին։ Այնուհետև բուլղարահայ գաղթավայրի պատմությանը նա անդրադարձել է իր «Պատմություն հայ գաղթականության» աշխատության երկրորդ հատորում։

Բուլղարիայի հայ գաղթօջախների պատմությամբ զբաղվող մեղվաջան պատմաբաններից է հանդիսացել Ն. Գասապյանը, որը երկար տարիներ ապրելով Բուլղարիայում, ուշադիր ուսումնասիրել է ինչպես հայկական, այնպես և բյուզանդական ու բուլղարական աղբյուրները և վեր հանել ու լուսաբանել բուլղարահայության

պատմության բազմաթիվ մութ դրվագներ։ Նրա ուսումնասիրությունների մեծ մասը լույս է տեսել հայկական պարբերական մամուլում, որոնց վրա մենք առիթ կունենանք կանգ առնելու։

Բուլղարիայի հայ գաղթօջախների պատմությանը նվիրված աշխատություններից արժեքավոր են նաև Գ. Մեսրոպի հոդվածները, որոնք լույս են տեսել «Մասիս» ժողովածուում 1934 թվականին։

Բուլղարահայերի, Բուլղարիայի թուրքական տիրապետության շրջանի պատմության ուսումնասիրությամբ զբաղվել են և արժեքավոր հոդվածներ հրատարակել բուլղարահայ պատմաբաններ Ս. Փաշաճյանը և Արա Մարկոսը։ Նրանց հոդվածները տպագրվել են գլխավորապես Սոֆիայի «Երևան» թերթում։

Բուլղարիայի թուրքական տիրապետության շրջանում Բուլղարահայ գաղթօջախների պատմության ուսումնասիրությամբ զբաղվել են նաև բուլղար պատմաբանները, որոնցից անհրաժեշտ է մասնավորապես նշել պրոֆ. Իորդան Իվանովին, որը բուլղարահայ գաղթավայրի պատմությանը զգալի տեղ է հատկացրել իր «Богомилски книги и легенды» խորագրով արժեքավոր ուսումնասիրության մեջ, որը լույս է տեսել Սոֆիայում 1925 թվականին։

Բուլղար մյուս պատմաբանների աշխատություններից ուշադրության արժանի է նաև Աթանաս Գրայֆի «Հայերը և պուլկարները» վերնագրով հոդվածը, որը լույս է տեսել 1928 թվականին «Պուլկարահայ տարեցոյց»-ի մեջ։

Հայ և բուլղար ժողովուրդների հարաբերությունների պատմության ուսումնասիրությամբ զբաղվել է բուլղարացի պատմաբան պրոֆ. Քացարովը, որը 1927 թվականին Ֆիլիպեում հանդես է եկել «Բուլղարիայի և Հայաստանի պատմական կապերը» հատուկ զեկուցումով, որը տպագրվել է «Մասիս», տարեգրքում 1934 թ.։ Բուլղարահայ գաղթավայրի վերաբերյալ լույս են տեսել փոքրիկ այլ հոդվածներ և ուսումնասիրություններ ևս, որոնց վրա մենք հնարավորություն չունենք կանգ առնելու։ Թվարկված ուսումնասիրությունները, փաստական հարուստ նյութ պարունակելով հանդերձ, պետք է ասել, որ շատ հեռու են սպառիչ լինելուց. գաղթավայրի պատմությունը սպիտակ էջեր շատ ունի և բազմաթիվ դրույթներ կան, որոնք գիտական նոր տեսանկյունով պետք է վերանայվեն։ Անհրաժեշտ է մասնավորապես գիտական շրջանառության մեջ դնել չհրապարակված պատմական այն նյութերը, ո-

բոնք ցույց են տալիս հայ և բուլղար ժողովուրդների դարավոր բարեկամությունը և նրանց միջև գոյություն ունեցող տնտեսական և քաղաքական սերտ հարաբերությունները։

Հայ-բուլղարական հնագույն հարաբերությունները և հայերի գաղթը դեպի Բուլղարիա։

Հայ գաղթօջախները Բուլղարիայում հիմնվել և գոյություն են ունեցել քաղաքական տարբեր իրադրությունների մեջ երեք տարբեր ժամանակաշրջաններում՝ բուլղարական առաջին և երկրորդ թագավորությունների ու բյուզանդական տիրապետության շրջանում VII—XIV դդ., Բուլղարիայի թուրքական տիրապետության տակ ընկած շրջանում (XVI—XIX դդ.) և հայկական կոտորածների ու Համաշխարհային առաջին պատերազմի տարիներին։

Հայերը բարեկամ բուլղար ժողովրդին ճանաչել և նրա հետ տնտեսական ու քաղաքական հարաբերությունների մեջ են գտնվել հայ գաղթօջախները Բուլղարիայում ստեղծվելուց էլ դեռ շատ առաջ։

Հայ և բուլղար ժողովուրդների հարաբերությունների պատմությունը ուշագրավ է այն տեսակետից, որ ի տարբերություն մեր մյուս գաղթավայրերի պատմության, սկիզբ է առնում ոչ թե հայ գաղթականության հոսանքով դեպի Բուլղարիա, այլ հակառակը, բուլղար բնակչության գաղթով դեպի Հայաստան։

Պատմահայր Մովսես Խորենացու հաղորդած մի տեղեկությունից հայտնի է, որ հայկական Արշակ թագավորի ժամանակ Հյուսիսային Կովկասում ապրող բուլղար գաղթականության ստվար մի խումբ, ներքին գժտությունների հետևանքով, բաժանվելով մայր հատվածից, Վունդ զորավարի գլխավորությամբ, գաղթել և բնակություն է հաստատել Հայաստանի Վանանդ գավառում. «ի սորա աւուրս) (այսինքն՝ Արշակ թագավորի ժամանակ—Ա. Ա.),—գրում է Խորենացին,—աղմուկ մեծ լեալ ի գօտիս մեծի լերինն Կաւկասու յաշխարհին Բուլղարաց, և բազումք ի նոցանէ հատուածեալք եկին յաշխարհս մեր և բնակեցան ի ներքոյ կողայ՝ յարգաւանդահող և ի հացաւէտ տեղիս»[1]։ Խորենացին, բուլղար այս գաղթականության մասին խոսելիս, տեղանունները ստուգաբանելու իր յուրահատուկ եղանակով, Վանանդ անունը փորձել է կապել այդ գավառում բնակություն հաստատած բուլղար գաղթականության առաջնորդ Վունդի հետ՝ «Վունդ-Վանանդ»[2]։

[1] Մովսէս Խորենացի, Պատմութիւն Հայոց, էջ 119։
[2] Նույնը, էջ 109։

Բուլղարական նշված գաղթականության Հայաստան գալու ժամանակի մասին պատմագիտության մեջ տարբեր կարծիքներ են հայտնվել. ոմանք ենթադրում են, որ այդ տեղի պետք է ունեցած լինի երկրորդ դարում մեր թվականությունից առաջ, ոմանք՝ մեր թվականության չորրորդ դարում և այլն։ Սակայն նորագույն ուսումնասիրությունները պարզել են, որ Արշակը Հայաստանում թագավորել է մեր թվականության երկրորդ դարում, ուստի բուլղարական այդ գաղթը տեղի պետք է ունեցած լինի հենց այդ ժամանակ։ Խորենացու այս տեղեկությունը կարևոր է ոչ միայն հայ-բուլղարական հարաբերությունների պատմության, այլև բուլղարագիտության համար ընդհանրապես, որովհետև այն, որքան մեզ հայտնի է, բուլղար ժողովրդի մասին մեզ հասած ամենահնագույն հիշատակություններից մեկն է։

Պատմական աղբյուրներում տեղեկություններ կան բուլղարական մի այլ գաղթի մասին դեպի Հայաստան (XI դարում)։ Բյուզանդական կեդրենոս պատմիչը հայտնում է, որ Վասիլ II Բուլղարասպան կայսրը 1015 թվականին պաշարելով Մակեդոնիայի Մոգլենա գավառի Եդեսիա քաղաքը և գրավելով այն, անձնատուր եղող զինվորականներին և քաղաքում զենք վերցնելու ընդունակ բազմաթիվ բնակիչների աքսորեց Ասպրականիա[1]։ Կեդրենոսը, ինչպես պարզված է, Ասպրականիա է անվանում Վասպուրականը։

Բուլղարական այդ գաղթի մասին հայկական պատմիչներից վկայություն ունի Արիստակես Լաստիվերտցին. նա հայտնում է, որ Վասիլ կայսրը հաղթելով բուլղարական Սամուել թագավորին և նվաճելով Բուլղարիան, բուլղարական զորքին «խաբկանօք ի մի վայր ժողովէ, որպէս թէ պարգեւս տայ նոցա և գրով զհամարս նոցա կալեալ, առաքէ զնոսա յԱրեւելս անդառնալի եկիւք»[2]։

Հայ և բուլղար ժողովուրդների հնագույն և երկարատև շփումները տեղի են ունեցել Թրակիայում և Մակեդոնիայում՝ կայսրության հյուսիսային սահմանի վրա։ Բյուզանդիան, ինչպես հայտնի է, երկար ժամանակ հայ ժողովրդի նկատմամբ վարել է գաղթեցման քաղաքականություն դեպի Բալկաններ. նա անընդմեջ հայ գաղթականություն է տեղափոխել Թրակիա և Մակեդոնիա՝ ցանկանալով մի կողմից ճնշել, կազմալուծել Հայաստանում ծայր առած ազատագրական և սոցիալական շարժումները, իսկ մյուս կողմից՝ տեղափոխված բնակչությանը օգտագործել ավարական, գո-

[1] Տե՛ս Georgii Cedreni II, էջ 462։
[2] Արիստակես Լաստիվերտցի, Պատմութիւն, էջ 24։

քական և սլավոնական հարձակումներից պաշտպանվելու համար։ Այսպիսով, Հայ գաղթօջախները Բալկաններում առաջին անգամ հանդես են եկել որպես զինվորական օջախներ։ Բյուզանդական իշխանությունները հայկական զորամասերից պահակախմբեր են ստեղծել և պարբերաբար համալրել այն՝ կամովին եկած կամ բռնի քշված հայ գաղթականներով։ Հայաստանից Բալկաններ բերված հայ գաղթականների մասին բազմաթիվ հիշատակություններ կան ինչպես բյուզանդական, այնպես և հայկական աղբյուրներում։ Նշենք նրանցից մի քանիսը միայն։

Մեզ հասած պատմական տեղեկությունը՝ դեպի Բալկաններ հայ բնակչության առաջին գաղթի մասին, վերաբերում է հինգերորդ դարին։ 451 թվականին, Ավարայրի ճակատամարտից հետո, երբ Հայաստանում ստեղծվում է անբարենպաստ իրադրություն, Արտավան և Գազրիկ իշխանները, իրենց հետևող զինվորներով, անցնում են Բյուզանդիա։ Լևոն 1-ին կայսրը (457—474) քաղաքական այս փախստականներին բնակավայր է հատկացնում Մակեդոնիայի Նիկիա (Ներկայիս Նիշ քաղաքը)[1]։ Պրոկոպիոս պատմիչը հաղորդում է, որ 542 թվականին պարսկա-բյուզանդական պատերազմի ընթացքում զգալի թվով հայեր են անցնում բյուզանդացիների կողմը, որոնց բոլորին էլ Հուստինիոսը ընդունում և տեղավորում է Պոլսում, Թրակիայում և Մակեդոնիայում[2]։ Հուստինիոս Առաջինին հաջորդող կայսրներից հայ բնակչությանը՝ Հայաստանից Թրակիա և Մակեդոնիա տեղափոխելու քաղաքականության մոլի հետևողներից է եղել մասնավորապես Մորիկ կայսրը (582—602)։ Տեղեկություն կա այն մասին, որ Մորիկի ժամանակ Հայաստանից Բյուզանդիա է տեղափոխվում հայ իշխան Ադոդ Խորխոռունին իր զորամասով, որին Մորիկը ուղարկում է Թրակիա՝ «գումարէ ի Թրակիա»[3]։

Մորիկը սակայն չի գոհացել Հայաստանից տարերայնորեն Բյուզանդիա եկող և Թրակիա գնալ ցանկացող հայ գաղթականներով։ Նա կազմել է հայերին Հայաստանից տեղափոխելու դժոխային մի ծրագիր, ըստ որի Արևմտյան Հայաստանի ողջ բնակչությանը պետք է հարկադրաբար տեղափոխեին Թրակիա և բնակեցնեին Բյուզանդիայի հյուսիսային սահմաններում։ Ժամանակակից Սեբեոս պատմիչը բերել է Մորիկ կայսեր մի նամակը՝ պարսից

[1] Մ. Չամչյան, Պատմութիւն Հայոց, II, էջ 148։
[2] Прокопий, История войн с ванадалами, II, էջ 24։
[3] Սեբեոս, Պատմութիւն Հայոց, էջ 49։

խոսրով Թագավորին՝ հայ բնակչության տեղահանության մասին։ Նամակում ասված է. «Ազգ մի խոտոր և անհնազանդ կան ի միջի մերում և պղտորեն (ակնարկել է հայ ժողովրդին—Ա. Ա.)։ Բայց եկ՝ ասէ, ես զիմս ժողովեմ և ի Թրակէ գումարեմ, և դու զքոյդ ժողովէ և հրամայէ յԱրևելս տանել։ Զի եթէ մեռանին՝ ինձ մեռանին. և եթէ սպանեն՝ զինձնամիս սպանեն, և մեք կեցցուք խաղաղութեամբ։ Զի եթէ դոքա (այսինքն՝ հայերը—Ա. Ա.) յերկրի իւրեանց լինիցին, մեզ հանգչել ոչ լինի»[1]։

Մորիկը սակայն ոչ միայն ծրագրել, այլ փորձել է այն իրագործել կյանքում։ Նա 589 թվականին հրամայել է երկու հեծյալ գունդ կազմել Հայաստանում և տեղափոխել Թրակիա։ Կայսեր հրամանի համաձայն Հայաստանում կազմվում է այդ երկու գունդը։ Նրանցից մեկի հրամանատարն է նշանակվում Սահակ Մամիկոնյանը, իսկ մյուսինը՝ Սմբատ Բագրատունին։ Սահակ Մամիկոնյանն իր գունդը տանում է Կոստանդնուպոլիս, իսկ Սմբատ Բագրատունու գունդը, Բյուզանդիա տեղափոխվելու ժամանակ ապրստամբում է և հրաժարվում գնալ, այն պատճառաբանությամբ, թե լավ է մեզ մնալ և «մեռանել ի վերայ աշխարհին Հայոց», քան գնալ օտարություն և մեռնել օտար երկրում[2]։

Կայսրը լսելով ապստամբության լուրը զայրանում է և կարգադրում հազար հոգու փոխարեն հավաքել 30,000 հոգի և «անցուցանել զամենեսին ընդ Սով և գումարել ի կողմանս Թրակացւոց ընդդէմ թշնամոյն»[3]։ Սակայն, ինչպես ժողովուրդն է ասում, ուրքաքն ավելի շուտ է վրա հասնում, քան շաբաքը. 602 թվականին Մորիկը գահընկեց է լինում և սպանվում, իսկ նրա ոճրագործ ծրագիրն էլ այդպես մնում է անկատար։

Մորիկին հաջորդող կայսրներից հայ գաղթականներ է տեղափոխել Թրակիա Կոստանդին Կոպրոնիմոսը։ 751 թվականին արշավելով Արևելք, նա Թեոդոսուպոլսից (Էրզրումից) մեծ թվով հայ և ասորի գաղթականներ է տեղափոխել Թրակիա։ Բյուզանդական Գեննեզիոս պատմիչը խոսելով այդ գաղթի մասին, հետևյալ տեղեկությունն է հաղորդում. «Սրանից հետո (այսինքն՝ 751 թվականին պատկերամարտության առթիվ հրավիրված ժողովից հետո—Ա. Ա.) Նա (այսինքն՝ Կոստանդին 5-րդը) հավաքեց իր զորքը և անցավ

[1] Սեբեոս, Պատմութիւն Հայոց, էջ 49։
[2] Նույն տեղը, էջ 56։
[3] Նույն տեղը, էջ 54։

հայկական Մելիտինեն և նրա մոտիկ շրջանները։ Տեղի հայերին և ասորիներին, որոնք գտնվում էին արաբական գերիշխանության տակ, (կայսրը) տարավ իր հետ՝ ասելով. «Թող մեզ հետ լինեն որպես եղբայրներ և որդիներ»[1]։ Կայսրը խաբված այս գաղթականներին հետագայում տեղափոխեց Թրակիա։

Հայ բնակչության բռնագաղթը Թրակիա և Մակեդոնիա առանձնապես զանգվածային բնույթ է կրել IX—X դարերում։ Այդ ժամանակ գաղթել են գլխավորապես պավլիկյանները։ Որպես սոցիալական վտանգավոր տարրեր, նրանց քշում, բերում էին Փոքր Ասիայի զանազան վայրերից։

Պավլիկյանների առաջին խումբը Թրակիա է բերել Լևոն V կայսրը՝ 817 թվականին պավլիկյանների հետ ունեցած ընդհարումների ժամանակ[2]։ Մեծ թվով պավլիկյաններ է բերել Թրակիա մանավանդ Թեոդորա կայսրուհին։ Ըստ Թեոֆանի շարունակող պատմիչի տեղեկության, 843 թվականին, Մավրոպոտամուում բյուզանդական և պավլիկյան բանակի միջև տեղի ունեցող ճակատամարտի ժամանակ, երբ պավլիկյանները պարտություն կրեցին, Թեոդորայի հրամանով գերի վերցված տասնյակ հազարավոր պավլիկյաններ աքսորվեցին Բալկաններ[3]։

Հետագայում պավլիկյան ռազմագերիների մի մեծ խումբ Բալկաններ է աքսորել Բարսեղ առաջինը 872 թվականին։ Եվ վերջապես, Հովհաննես Ձմշկիկ կայսրը 969 թվականին, Անտիոքի Թեոդորոս պատրիարքի թելադրմամբ, Կարինում և Մելիտինեում գրտնվող պավլիկյանների մնացորդներին ամբողջապես տեղափոխեց Թրակիա։ Թրակիա և Մակեդոնիա տեղափոխված հայ գաղթականությունն, որ մոտիկից շփման մեջ մտնելով բուլղար ժողովրդի հետ և աստիճանաբար թափանցելով Բուլղարիայի հարավային և հարավ-արևմտյան շրջանները, ստեղծում է բուլղարական առաջին գաղթօջախները։

Թրակիայի և Մակեդոնիայի հայ գաղթականությունը Բուլղարիա էր անցնում մեծ մասամբ կամովին, նախասիրության թելադրանքով։ Բայց եղել են դեպքեր, երբ բուլղար-բյուզանդական կռիվների ժամանակ հաղթանակող կողմերն իրենց գրաված շրջաններից գերեվարել են տեղի բնակչությանը, իսկ քանի որ հայկական խոշոր գաղթօջախները հաստատված էին Թրակիայում և Մակեդոնիայում, ուր և մեծ մասամբ տեղի էին ունենում կռիվները, ուստի հայ բնակչությունը ևս ենթարկվել է գերեվարության։ Հայտնի է, օրինակ, որ բուլղարական Քրում իշխանը 813 թվականին իր ռազմական արշավանքի ժամանակ Ադրիանապոլսից 12,000 գերի տարավ, որոնց մի մասը հայեր էին։

Հայ-բուլղարական ռազմական դաշնակցությունն ընդդեմ Բյուզանդիայի։

Կայսրության՝ հայ բնակչության Բալկաններ տեղափոխելու այս քաղաքականությունը, պետք է ասել, ամենևին չարդարացրեց Բյուզանդական կայսրության հույսերը, մանավանդ՝ պավլիկյանների տեղափոխությունը։ Աշխատավոր խավերի այս ներկայացուցիչները ոչ միայն հնազանդ գործիք չդարձան Բյուզանդիայի ձեռքում և չկռվեցին բուլղար ժողովրդի դեմ, այլ, հակառակը, զինակցեցին բուլղարների հետ և իրենց ղենքը դարձրին կայսրության դեմ։ Հայ գաղթականության բուլղար ժողովրդի հետ զինակցելն ուներ, իհարկե, իր պատճառը. երկու ժողովուրդներն էլ հարստահարվում էին բյուզանդական կայսրության կողմից, երկուսն էլ ձգտում էին ազատության, ուստի բնական է, որ նրանք պետք է զինակցեին ու միասնաբար պայքարեին ընդհանուր թշնամու դեմ։ Անհրաժեշտ է նշել, որ բուլղար ժողովուրդը սիրալիր ընդունելություն է ցույց տվել իրենց մոտ ապաստան գտած հայ գաղթականներին։ Բուլղարական իշխանությունները թույլ են տվել հայերին ապրելու այնտեղ, ուր կամենում են, և նրանց իրավունքները որպես օտարականների չեն սահմանափակել։ Բուլղարական իշխանությունները պավլիկյանների նկատմամբ թշնամական դիրք չբռնեցին ոչ այն պատճառով, որ նրանց քարոզած գաղափարախոսությունը դուր էր գալիս իրենց, այլ որ Բյուզանդական կայսրության դեմ բուլղար ժողովրդի մղած ազատագրական պայքարում պավլիկյանները հանդիսանում էին իրենց վստահելի դաշնակիցները։ Իրավացի է բուլղար պատմաբան պրոֆ. Իորդան Իվանովը, երբ խոսելով բուլղարների և պավլիկյանների հարաբերությունների մասին, գտնում է, որ «Պավլիկյանները շատ պարագաների մեջ ընթացել են բուլղար մեծամասնության հետ»[1]։ Պատմական աղբյուրներում տեղեկություններ կան այն մասին, որ Բուլղարիայի թագավոր Բորիս 1-ինի ժամանակ (852—888), երբ քրիստոնեությունը նոր էր մուտք գործում Բուլղարիա՝ և քրիստո-

[1] Genesii Regum, էջ 122։

[2] И. Иванов, Богомилски книги и легенды, София, 1925, էջ 4։

[3] Տե՛ս «Сборник документов по соц.-экономической истории Византии», էջ 123։

[1] Иордан Иванов, Богомилски книги и легенды, էջ 16։

նեական քարոզիչները մրցում էին իրար հետ՝ իրենց դավանանքը Բուլղարիայում հաստատելու և իշխող դիրք գրավելու համար, պավլիկյանները ցանկացել են իրենց պաշտոնական քարոզիչներն ուղարկել Բուլղարիա։ Այդ մասին մեզ տեղեկություն է հաղորդում Պետրոս Սիցիլացին։ Հայ գաղթականները, մասնավորապես պավլիկյանները, իրենց դիրքորոշումը բուլղար-բյուզանդական պայքարում ցույց էին տվել 813 թվականին բուլղարական Քրում թագավորի Բյուզանդիայի դեմ վարվող պատերազմներում։ Քրումին հաջողվել էր առանց պատերազմի վերցնել Թրակիան, որովհետև նրան աջակցել էին պավլիկյանները։ Այդ արշավանքի ժամանակ Կ. Պոլսի պավլիկյանները ապստամբվել էին կայսրության և ուղղափառ եկեղեցու դեմ և դրանով աջակցել բուլղարների առաջխաղացմանը։ Դրա համար էլ Լևոն կայսրը, Քրումին հաղթելուց հետո, Պոլսի պավլիկյաններին արտաքսեց Թրակիա։ Կաթոլիկ և ուղղափառ եկեղեցիների բարձրաստիճան հոգևորականները, ինչպես երևում է, շատ են անհանգստացած եղել պավլիկյանների գործունեությամբ Բուլղարիայում։ Պրոֆ. Ի. Իվանովը գտնում է, որ IX դարի վաթսունական թվականներին պավլիկյանները խմորել էին տեղացի բուլղար բնակչությունը և պատկառելի ուժ էին ներկայացնում[1]։ Նիկողայոս պապը 866 թվականին Բուլղարիայի Բորիս թագավորին գրած իր նամակում զգուշացնում է պավլիկյաններից. «Զգուշացեք,—գրում է նա,—այդ աղանդավորների քարոզչությունից, որովհետև նրանք բռնկվող կրակի են նման»[2]։ Նման զգուշացնող նամակ էր ուղարկել բուլղարական Սիմեոն թագավորին Պոլսի հունական պատրիարք Հովհաննեսը (823—927)։ Նա կտրականապես պահանջել է «Զարհուրելի աղանդի տարածման առաջն առնել»։

Սիմեոն ցարը, սակայն, ոչ միայն չի սահմանափակել պավլիկյանների գործունեությունը և նրանց դեմ միջոցներ ձեռք չի առել, այլև նախապայմաններ է ստեղծել նրանց գործունեության համար, որովհետև պավլիկյանները որպես կայսրության օպոզիցիոն ուժեր, բուլղարների հետ դաշնակցած, կռվում էին Բյուզանդիայի դեմ։ Հայտնի է, որ 914 թվականին, երբ Սիմեոն թագավորը արշավում էր դեպի Բյուզանդիա, Ադրիանապոլիս քաղաքը կարողացավ վերցնել տեղի պահակախմբի հայ հրամանատարի գործուն աջակցությամբ[3]։

[1] Иордан Иванов, Богомилски книги и легенды, էջ 16։

[2] Ա. Գրայֆ («Պուլկարահայ տարեցույց», 1928, էջ 27)։

[3] G. Songeon, Histoire de la Bulgarie, էջ 109։

Հայ-բուլղարական զինական դաշնակցությունը նկատելիորեն սերտացավ բուլղարական Սամուելի թագավորության ժամանակ X—XI դդ. որին հայկական ծագում է վերագրվում։ Ըստ Ստեփանոս Ասողիկի տեղեկության, Սամուելը Հայաստանի Դերջան գավառից էր։ Սկզբում նա, իր եղբոր հետ միասին ծառայում էր Բյուզանդիայի հայկական մի զորամասում, որը Բարսեղ կայսրի հրամանով տեղափոխվում է Թրակիա՝ բուլղարների դեմ կռվելու համար։ Սամուելը և իր եղբայրը բուլղար-բյուզանդական զորքերի ընդհարումներից մեկի ժամանակ, ապստամբվում են Բյուզանդիայի դեմ և անցնում բուլղարների կողմը։ Սամուելն այնուհետև երկար ծառայելով բուլղարական բանակում և աչքի ընկնելով իր քաջությամբ և նվիրվածությամբ, շահում է տեղացիների վստահությունը և դառնում Բուլղարիայի թագավոր։ Ի դեպ, Մակեդոնիայի Բրեստա շրջանի Կերման գյուղում գտնվել է Սամուելի գերեզմանաքարը, որի վրա եղած հունարեն արձանագրությունից երևում է, որ նրա հոր անունը Նիկողայոս է եղել, մորը՝ Հռիփսիմե, իսկ եղբորը՝ Դավիթ, անուններ, որոնցից ոչ մեկը բուլղարական չէ և գալիս են փաստելու Ասողիկի տեղեկության հավաստիությունը։ Սամուելի հայ ծագում ունենալու մասին ուշագրավ է բուլղար պատմաբան պրոֆ. Կ. Քացարովի ոտումնասիրությունը[1]։ Սամուելը, ինչպես ասացինք, միակ անձնավորությունը չէր, որ փախել և անցել էր բուլղարների կողմը։ Բուլղարահայ պատմաբան Ն. Գասապյանն իրավացիորեն գտնում է, որ Սամուելի գրեթե ամբողջ սպայակուտն ու զինվորականները մեծ մասամբ հայեր էին, որոնք ո՛չ թե օգնել են բյուզանդացիներին, այլ ապստամբել բյուզանդացիների դեմ[2]։ Սամուելի թագավորության ժամանակ Բյուզանդիայից բազմաթիվ մարդիկ են ապաստանում Բուլղարիայում, այդ թվում նաև հայ ազնվականներն իրենց ընտանիքներով[3]։ Ըստ տեղեկությունների, Սամուելի գահակալության տարիներին բուլղարական բանակում հայկական զորամաս է ստեղծվում, որը բուլղարների հետ ձեռք-ձեռքի տված կռվում է Բյուզանդիայի դեմ։ Հայտնի է, որ 1002 թվականին Սամուելը հայ-բուլղարական զորքերից կազմված բանակով հարձակվել է և գրավել Ադրիանապո-

[1] Կ. Քացարով, Պատմական կապեր Պուլկարիո և Հայաստանի միջև («Մասիս» տարեգիրք, 1934 թ., էջ 243)։

[2] Ն. Գասապյան, Պուլկարահայ հիշատակարաններ («Հայրենի տարեցույց» 1938 թ., էջ 53)։

[3] «История Болгарии, М., 1954, էջ 96։

լիսը[1]։ Պատմական տեղեկություններ կան այն մասին, որ Սամուելը բյուզանդացիների հետ տեղի ունեցած կռիվների ժամանակ իր վերցրած հայ զինվորներին ազատություն է տվել և նրանց օգտագործել բանակում ու վարչական ապարատում։ Նման ռազմագերիներից է հանդիսացել Աշոտը, Գրիգոր Տարոնեցու որդին, մի գեղեցիկ երիտասարդ, որին նա զինվորական բարձր պաշտոն է տվել և սմուսնացրել իր աղջկա հետ[2]։

Բուլղարահայերը մասնակցել են նաև Սամուելի թոռան՝ Պետրու Դիլյանոսի ղեկավարած ապստամբությանը, որը բուլղար ժողովրդի՝ Բյուզանդիայի դեմ վարած ազատագրական շարժումների պատմության փայլուն էջերից մեկն է։ 1020 թվականին, ինչպես հայտնի է, Բյուզանդիային հաջողվել էր նվաճել Բուլղարիան և ծանր հարկի տակ դնել այն։ Բուլղար ժողովուրդը չհանդուրժելով բյուզանդական լուծը, Պետրուի ղեկավարությամբ ապստամբվում է և հերոսաբար կռվում Բյուզանդիայի դեմ։ Պավլիկյանները գործուն մասնակցություն են ունեցել ազատագրական այդ պայքարին։ 1040 թվականին բուլղար հայրենասերների ազատագրական շարժումը ճնշելուց հետո, բուլղարացիների հետ մասնակցած հայերին, գլխավորապես պավլիկյաններին, տեղափոխել են Իտալիա։

Բյուզանդական պատմիչ Աննա Կոմնինը ուշագրավ տեղեկություն է հաղորդում XI դարի 80—90-ական թվականներին Ֆիլիպպոպոլսի հայ պավլիկյանների՝ բուլղար ժողովրդի մղած ազատագրական շարժումներին ցուցաբերած ակտիվ մասնակցության մասին, որը կրել է նաև սոցիալական բնույթ[3]։ Աննա Կոմնինը, որը Ալեքսեյ 1-ինի աղջիկն է, հասկանալի պատճառով, զայրույթով է խոսում Ֆիլիպպոպոլսի հայերի մասին։ «Հայերը, այսպես կոչված բոգոմիլները,— գրում է նա,— և աստվածուրաց պավլիկյանները, Ֆիլիպպոպոլսի քաղաքը բաժանել էին իրար մեջ»։ «Նրանք,— շարունակում է նա,— դոգմատիկ հարցերում չնայած տարբերվում են իրարից, բայց ապստամբության մյուս բոլոր հարցերում համաձայն են մանիքեանների հետ»[4]։

Ֆիլիպպոպոլսի հայ և բուլղար աշխատավորության պայքարը ընդդեմ Բյուզանդիայի բավականին երկար է տևում։ Այդ պայքարը ուշագրավ է այն տեսակետից, որ Ֆիլիպպոպոլսի հայերը, տեղի աշխատավորության հետ միասին ձեռք-ձեռքի տված, պայքարում են բյուզանդական հարստահարիչների դեմ։

Բուլղար ժողովրդի կողմն անցնող հայկական մի այլ խմբի մասին տեղեկություններ կան XII դարի սկզբներում։ Ալեքս Կոմնենոս կայսրը (1081—1118) հայեր է բերում և բնակեցնում Ռոդոպի բարձունքների վրա և Բալկանյան լեռներում, որպեսզի նրանք պաշտպանեն հյուսիսային սահմանները։ Սակայն բերված այս գաղթականությունն անցնում է բուլղարների կողմը, միանում նրանց և կռվում բյուզանդացիների դեմ։ Ալեքս կայսրը փորձում է վրեժխնդիր լինել, սակայն, ըստ պատմիչների տեղեկությունների, հայ-բուլղարական զորքերը ստրատեգիական հարմար դիրքեր են գրավում, և բյուզանդացիները անօգուտ համարելով հարձակումը, քաղցնում և ետ են նահանջում[1]։

Հայ կարևոր գաղթօջախները Բուլղարիայում։

Բուլղարահայ գաղթականությունը կենտրոնացված չի եղել մի վայրում։ Նա ցրված է եղել երկրով մեկ։ Կանգ առնենք բուլղարահայ կարևոր գաղթօջախների վրա։

Հայկական հնագույն գաղթօջախներից մեկը հաստատվել է Բուրգաս քաղաքում։ Նրա մասին հիշատակություններ կան IX դարից։ Ըստ տեղեկությունների, այստեղ բավականին ուժեղ հայություն է ապրել և ունեցել է իր ներքին ինքնավարությունը[2]։

Հայ բնակչության մի խոշոր հատված, ինչպես տեսանք, կենտրոնացված է եղել Ֆիլիպպոպոլիս (ներկայիս՝ Պլովդիվ) քաղաքում։ Բյուզանդական պատմիչ Աննա Կոմնինը հայտնում է, որ Ֆիլիպպոպոլիսի բնակչության մեծամասնությունը հայեր էին։

XII դարի պատմիչներից Նիկիտա Խոնիատան խոսելով խաչակրաց արշավանքի մասին, հայտնում է, որ երբ Ֆրիդրիկ Բարբարոսան 1189 թվականին վերցնում է Ֆիլիպպոպոլիսը, քաղաքի բնակչության որոշ մասը վախենալով նրանից, խույս է տալիս և փախչում, իսկ հայերը մնում են քաղաքում և գնում ընդառաջ նվաճողներին, բարեկամաբար ընդունում և ամեն տեսակի աջակցություն ցույց տալիս նրան[3]։ Պատմիչի այս տեղեկությունը հաստատում է նույն արշավանքի մասնակից ավստրիացի խաչակիր Անբերթը իր թողած հիշատակագրություններում մեջ։ Նա հայտնում է, որ հայերը Ֆրիդրիկին ո՛չ միայն սիրալիր ընդունեցին, այլև խոստա-

[1] Ա. Ալպոյաճյան, պՀԳ, II, էջ 560։

[2] «Հայրենի տարեցոյց», էջ 53։

[3] Г. Г. Литаврин, Болгария и Византия в XI—XII вв., М., 1960. էջ 410—427։

[4] Anna Comnena, Alexiadis, հ. II, էջ 257։

[1] Ա. Ալպոյաճյան, պՀԳ, II հ., էջ 562։

[2] Նույն տեղը հ. I էջ 558։

[3] Niketas Choniatis, De Isaacio-Angelo, հ. II, §13, էջ 527։

ցան պարենավորել նրա բանակը՝ խնդրելով միայն ապահովություն «իրենց գյուղերի համար»[1]։ Այս տեղեկությունից երևում է, որ Ֆիլիպոպոլիսում և նրա շրջակայքում բավականին թվով հայկական գյուղեր են եղել, այնքան շատ, որ կարող էին ապահովել խաչակիրների հսկա բանակի պարենավորումը։

Ֆիլիպոպոլիսը XII—XVII դարերում Բուլղարիայի առևտրաշատ կենտրոններից մեկն էր, նա գտնվում էր Պոլսից դեպի Բուլղարիա և արևմտյան Եվրոպա ձգվող տարանցիկ ճանապարհի վրա[2], ուստի պետք է ենթադրել, որ այնտեղ գտնվել են որոշ թվով նաև հայ արհեստավորներ և առևտրականներ։

XII դարում հայկական գաղթօջախ է եղել նաև Սոֆիայում, Մգլենում, Դիվոլում և Բիթոլյայում։ Մեզ են հասել Օխրիտայի Թեոֆիլակ եպիսկոպոսի նամակները՝ հասցեագրված Սոֆիայի եպիսկոպոսներին և Մըգլենի Թևան անունով մի հայ ազնվականի, որոնցից երևում է, որ հայերը նշված վայրերում գաղթօջախներ են ունեցել, որոնք զգալի հասարակական կշիռ են ներկայացրել[3]։

Բուլղարիայի հայկական հնագույն գաղթօջախներից է Թռնովոն։ Բանասեր Ն. Գասապյանը իր «Բուլղարահայ անհետացած գաղութներու մասին» խորագրով հոդվածում փաստեր է մատնանշում այն մասին, որ XIII դարի կեսերից սկսած Թռնովոն մեծաթիվ հայ բնակչություն է ունեցել[4]։ Ըստ հայկական մի հին ձեռագրում եղած հիշատակության, հայոց եկեղեցու բարձր իշխանությունները Թռնովոյի հայ համայնքի համար Առաքել անունով մեկին քահանա են ձեռնադրել։ Թռնովոյի հայ բնակչության որոշ մասը, ըստ երևույթին, հարել է պավլիկյան շարժմանը։ Այդ երևում է տեղի պատրիարք Եվթիմիոսի (XIII դարի վերջերը և XIV դարի սկզբները) նամակներում Թռնովոյի հայերի նկատմամբ արտահայտած դժգոհությունը, որ նրանք «պավլիկյան աղանդի հետևողներ են»[5]։

Բյուզանդագետ Գ. Միյեն, որն զբաղվել է Բալկաններում գտնվող հայկական գաղթօջախների պատմության ուսումնասիրությամբ, գտնում է, որ Բուլղարիայում մեծ թվով հայ բնակչություն է եղել ոչ միայն XI—XII, այլև XIII—XIV դարերում։ Բացի վերև

[1] Historie de Expeditione Fredricl Imperatoris, Berlin, 1928, էջ 45։

[2] История Болгарии, էջ 132։

[3] И. Иванов, Богомилский книги и легенды, էջ 19։

[4] «Երևան» Սոֆիայի, 1958 դեկտ. 19։

[5] «Հանդէս ամսօրեայ», 1925, էջ 581։

հիշվածներից, նա գաղթօջախներ է մատնացույց անում Օխրիտայում և Ստրումիցայում[1]։

Հայ գաղթականության հնագույն բնակավայրերիցն է հանդիսացել Ադրիանապոլիսը։ Թե որքան մեծ թիվ է կազմել Ադրիանապոլսի հայ բնակչությունը, այդ երևում է նրանից, որ 1261 թվականին, երբ Հենրիկոսի գլխավորած խաչակիրները բյուզանդիայից հետ էին վերադառնում՝ Բյուզանդիայից Արևմտյան Եվրոպա վերադառնալու համար, Ադրիանապոլսից 20,000 հայեր միացան նրանց և շարժվեցին հյուսիս[2]։

Եվ, վերջապես, հայկական մի գաղթօջախ գտնվել է Վառնա քաղաքում։ Հայ գաղթականները այստեղ են եկել Ղրիմից XIV—XV դարերում։ Նրանց մեծ մասը եղել է առևտրական։ Ղրիմահայերը հաստատվելով Վառնայում, իրենց առևտրական կայաններն են հիմնել նաև Ռուշչուկում և Բուրգասում։

Անհրաժեշտ է նշել, որ բուլղարահայ գաղթականությունը միայն քաղաքատիպ վայրերում չէ, որ տեղավորվել է. մեծ թվով հայեր են ապրել նաև գյուղերում։ Բուլղարական պատմաբան պրոֆ. Իորդան Իվանովը, ուսումնասիրելով Բուլղարիայի պատմական տեղանունները, մատնացույց է անում մի շարք գյուղանուններ, որոնք հայկական ծագում ունեն։ Միջնադարյան հիշատակարանները և մատենագիրները Բուլղարիայի տարբեր վայրերում հիշում են բազմաթիվ գյուղեր հայկական անուններով. «Արմենոր» («Արմենխոր») և «Արմենակո» գյուղերը՝ Լերինի շրջանում, «Արմենոխոր» գյուղը՝ Բիթոլիայի շրջանում, «Արմենիթե» գյուղը՝ Դոբրովոյի շրջանում, «Արմենիցա» գյուղը՝ Ռիվիայի մոտերում։ «Արմենովո», «Էրմենլուի»՝ Նիկոպոլսի մոտ, «Արմյանկովիցի» և այլ գյուղեր[3]։

Հայկական որոշ բնակավայրերի անուններ կապված են նաև պավլիկյանների հետ։ Այդպիսի անուններ են համարվում «Պավլիկենի» ավանի անունը՝ Թրնովոյի շրջանում, «Գորնո Պավլիկենի» և «Տոլնո Պավլիկինի»՝ Լովեչի շրջանում, Թորոս և Կալինիկ անուններով ավանները և այլն։

XIII—XIV դարերում մեծաթիվ հայ բնակչության կենտրոնացումը Բուլղարիայում անհրաժեշտություն է առաջացնում Բուլղարիայում ստեղծելու թեմական իշխանություն, որի կենտրոնը դար-

[1] «Երևան» Սոֆիայի, 1958 թ., դեկտ. 19։

[2] Տե՛ս G. Millet, L' Ancien Art sorbe les eglises, Paris, 1912, էջ 15։

[3] «Երևան», Սոֆիայի, 1959, մայիսի 29։

ձավ Ֆիլիպոպոլիս քաղաքը։ Հավաստի տեղեկություններ կան այն մասին, որ Ֆիլիպոպոլսում գոյություն է ունեցել հայկական վանք և միաբանություն, որի վանահայրը՝ Հովհաննես Ութմանը թարգմանիչի պաշտոնով ընկերակցել է Մանվել կայսեր ներկայացուցիչ՝ հույն ատտալիատաբան Թեորիանոս Մայեստին, և 1170 թվականին մեկնել է Հռոմկլա՝ մասնակցելու Ներսես Շնորհալու հետ վարվող դավանաբանական բանակցություններին։ Հովհաննես Ութմանը այդ բանակցությունների ընթացքում, ինչպես երևում է, բռնել է Շնորհալու կողմը։ Վերջինս նրան կոչում է «համազդի մեր և համակրող»[1]։ Ֆիլիպոպոլսի հայկական վանքի մի այլ վանահայր՝ Գրիգոր եպիսկոպոսը, որը թեմի առաջնորդն է եղել, Գրիգոր կաթողիկոսի հանձնարարությամբ 1184 թվականին մեկնել է Լուկիանոս պապի մոտ՝ պարզելու Վատիկանի դիրքը հայոց եկեղեցու նկատմամբ։ Ֆիլիպոպոլիսը Բուլղարիայի հայկական թեմական առաջնորդի կենտրոն է համարվել մինչև XV դարը՝ մինչև թուրքական նվաճումները։ Տեղեկություններ կան այն մասին, որ Պլովդիվի հոգևոր առաջնորդ Հովակիմ եպիսկոպոսը 1453 թվականին փոխադրվել է Կ. Պոլիս և ստանձնել Պոլսի հայոց պատրիարքի պաշտոնը։

Անհրաժեշտ է նշել, որ բուլղարահայերը իրենց ապաստանած երկրին տվել են հասարակական և քաղաքական մի շարք գործիչներ։ Հիշենք նրանցից միայն մեկին։

Յար Պիտերի թագավորության ժամանակ (927—969) բուլղարական արքունիքում աշխատող աչքառու գործիչներից է հանդիսացել իշխան Գրիգորը, Սիմեոն թագավորի կնոջ՝ Ռաբնայի եղբայրը, Պիտերի քեռին։ Գրիգորը Բյուզանդիայից Բուլղարիա եկած հայ իշխաններից է եղել և զգալի դեր կատարել Բուլղարիայում՝ մասնավորապես դիվանագիտության բնագավառում։ Նա փաստորեն հանդիսացել է Պետր թագավորի խնամակալը։ Հայ այս իշխանի անվան հետ է կապված մի պայմանագիր, որը նա կնքել է Բյուզանդիայի հետ Բուլղարիայի համար բացառիկ նպաստավոր պայմաններով։ Ըստ այդ պայմանագրի, Բյուզանդիան պաշտոնապես ճանաչել է Պետրի գահակալությունը, թույլ է տվել բուլղարներին սեփական պատրիարքություն ունենալ և վճարել սահմանված չափով ռազմատուգանք։ Բյուզանդ-բուլղարական այդ պայմանագիրն ավելի հաստատուն դարձնելու նպատակով

[1] Ն. Շնորհալի, Թուղթ ընդհանրական, Երուսաղեմ, 1871, էջ 144—145։

[2] Մ. Օրմանյան, Ազգապատում, հ. I, էջ 1483—1485։

Պետրին ամուսնացրել են բյուզանդական կայսր Ռոմանոսի թոռան՝ Մարիայի հետ։

XIII դարից սկսած մեր տեղեկությունները բուլղարահայ գաղթօջախների մասին. սկսում են պակասել, իսկ XIV—XV դարերում՝ բոլորովին ընդհատվել։ Չի կարելի համաձայնվել պատմագիտության մեջ արտահայտված այն տեսակետի հետ, որ իբրև թե բուլղարահայերը գաղթականական նոր հոսանք չընդունելու հետևանքով, ապազգայնացան և ասիմիլյացիայի ենթարկվեցին։ Ճիշտ չէ այդ տեսակետը, որովհետև նշված ժամանակաշրջանում Բուլղարիան հայկական գաղթականություն ընդունել է։ Մեզ հայտնի է, օրինակ, հայ գաղթականության որոշ խմբեր եկել են 1239 թվականին՝ մոնղոլների նվաճումների ժամանակ, 1336 թվականին՝ Անիի երկրաշարժից հետո, 1375 թվականին՝ Կիլիկիայի անկումից հետո, 1475 թվականին՝ Ղրիմը թուրքերի կողմից գրավելուց հետո և այլն։ Սակայն այս գաղթականական հոսանքներից ոչ մեկը ի վիճակի չի եղել կանգնեցնել բուլղարահայերի ասիմիլյացիան։

Եվ այսպես, XIII—XIV դարերում բուլղարահայության մի մասը ասիմիլյացիայի է ենթարկվում բուլղար ժողովրդի մեջ, իսկ մյուս մասը չհանդուրժելով թուրքական տիրապետությունը, շարժվում է դեպի հյուսիս և բնակություն հաստատում Մոլդավիայում, Գալիցիայում, Լեհաստանում և Հունգարիայում՝ ստվարացնելով այդ երկրներում գտնվող հայ գաղթօջախները։

Բուլղարիայի գաղթօջախները թուրքական տիրապետության շրջանում։

1363—1693 թվականներին, ինչպես հայտնի է, Բուլղարիան նվաճվեց թուրքերի կողմից։ Թուրք զավթիչները 1363 թվականին վերցրին Ադրիանապոլիսը, 1364 թ.՝ Ֆիլիպոպոլիսը (Պլովդիվը), 1382-ին՝ Սոֆիան, 1388-ին՝ Շումենը, Սիլիստրան, իսկ 1393 թվականին՝ բուլղարական երկրորդ թագավորության մայրաքաղաք Թրնովոն։

Բուլղարահայերը տեղացիների հետ հավասարապես բաժանեցին թուրք նվաճողների անարգ լուծը։ Գերեվարություն, ավարառություն, հարկերի ծանրացում, բռնություններ—մի խոսքով այն բոլոր հարստահարությունները, որոնք հատուկ են եղել թուրք նվաճողներին՝ իրենց գրաված երկրներում։

Թուրքերը՝ Բուլղարիան նվաճելուց հետո, երկրի տնտեսական կյանքը մղեցին դեպի լճացում, քաղաքները կորցրին իրենց նախկին նշանակությունը և վեր ածվեցին ավանների։ Յուցանշական

է հատկապես Ֆիլիպոպոլսի վիճակը։ Եվրոպացի ճանապարհորդ Ռամբերտին 1534 թ. իր Ուղեգրության մեջ խոսելով թուրքական ավերածությունների մասին Ֆիլիպոպոլսում, հետևյալն է գրում. «Ֆիլիպոպոլիսն այժմ ավերված է և ըստ թուրքական սովորության, վեր է ածվել գյուղի՝ կառուցված ծղոտից, տախտակից և ցեխից»։

Ինչպես բոլոր երկրներում, այնպես և Բուլղարիայում, թուրքերը կիրառեցին բնակչությանը տեղահանելու քաղաքականություն. տեղացիներին առանձին խմբերով քշում էին այլ երկրներ, իսկ նրանց փոխարեն, այլ երկրներից, բերում էին և բնակեցնում օտար բնակիչների։ Ամեն կերպ աշխատում էին բնակչության մեջ ուժեղացնել մահմեդական տարրերին՝ ցանկանալով իրենց նվաճած երկրներում վստահելի հենարաններ ստեղծել։

Բալկաններում գտնվող հայ գաղթականությունը ևս ենթակա է եղել տեղահանությունների։ Հայտնի է, օրինակ, սուլթան Բայազիդ 2-րդը 1484 թվականին, երբ գրավեց Մոլդավիայի Ակկերման քաղաքը, տեղի հայ բնակչությանը ստիպեց գաղթել Բուլղարիա և Պոլիս։ 1673 թվականին սուլթան Մուհամեդ 3-րդը գրավելով Լեհաստանի Կամենեց քաղաքը, տեղի բնակչությանը ստիպեց գաղթել Բուլղարիա։ Կամենեցի բնակիչները Բուլղարիա գաղթեցին Սև ծովի վրայով. նրանք ճանապարհ ընկան երեք նավով, որոնցից մեկը ճանապարհին փոթորկի ժամանակ խորտակվեց, իսկ երկուսը տեղ հասան. հայ գաղթականները տեղավորվեցին Բուլղարիայի Սոֆիա, Շումեն և Ռուշչուկ քաղաքներում։ Թուրքական տիրապետության շրջանում հայ գաղթականության մի քանի հոսանքներ են եկել Հայաստանից և Ղրիմի ու փոքրասիական գաղթօջախներից։ Մատնացույց աննենք նրանցից կարևորները։

1549 թ. հայ գաղթականության մի հոսանք եկել է Բուլղարիա Նախիջևանից, Շուռթից և Կարբիից ու բնակություն հաստատել Շումենում։

1551 թվականին հայ գաղթականության մի այլ խումբ եկել է Ռումինիայից և հաստատվել Կոստանցայում և Հաջիօղլու-բազարում։

1606—1607 թվականներին հայկական մեծ գաղթականություն է եկել Բուլղարիա՝ Շահաբասի Պարսկաստան տարված գաղթականներից։

XVII դարի սկզբներում մեծ թվով գաղթականություն է եկել Արևմտյան Հայաստանի զանազան քաղաքներից ջալալիների խըժդըժություններից հետևանքով և բնակություն հաստատել Մալկատայում, Էդիրնեում, Ֆիլիպեում, Յամպոլում և այլ վայրերում։

Եվ, վերջապես, XVII դարի սկզբներին սովի պատճառով Կաֆայից մեծ թվով հայ գաղթականություն է տեղափոխվել Բուլղարիա։

Անհրաժեշտ ենք համարում առանձին-առանձին կանգ առնել Բուլղարիայի մի քանի հայ գաղթօջախների վրա թուրքական տիրապետության շրջանում և համառոտակի տեղեկություններ տալ նրանց մասին։

Թրնովոյի հայ գաղթօջախը։—Հիմնվել է բուլղարական երկրորդ թագավորության շրջանում։ Այն հայ գաղթականության նոր հոսանքներ ընդունեց XVII դարում։ Թուրքական աղբյուրները քաղաքում հիշում են հայկական թաղամաս։ Հայ գաղթականության մեծ մասը զբաղվել է արհեստագործությամբ։ Հիշվում են որոշ թվով նաև հայ առևտրականներ։ Գաղթօջախը պահպանել է իր գոյությունը մինչև XIX դարը, այնուհետև հայ գաղթականների մի մասը հեռացել է, իսկ մյուսը՝ ասիմիլյացիայի ենթարկվել բուլղար ժողովրդի մեջ։

Վառնայի հայ գաղթօջախը։—Հիմնվել է 1605 թվականին Կաֆայից եկած գաղթականներից։ 1656 թվականին թուրք ճանապարհորդ Էվլիա Չելեբին «Հայկական թաղամաս» է հիշում այս քաղաքում։ Մարտիրոս Ղրիմեցին, որն այցելել է այս գաղթօջախը 1674 թվականին, մեծ թվով հայ գաղթականություն է տեսել այստեղ[1]։

Ռազգրադի հայ գաղթօջախը։—Ռազգրադը Բուլղարիայի կարևոր կենտրոններից մեկն էր XVI դարում։ XVII դարում թուրքական պաշտոնական գրությունների մեջ հիշվում են այնտեղ «էրմանի սոքաքի» (Հայկական փողոց), քաղաքի շուրջը՝ «էրմանի պաղլարի» (Հայկական այգիներ), «էրմանի մեզարլիք» (Հայկական գերեզմանոց) և այլն։ Կաթոլիկ միսիոներ Բակշիշը, որը 1640 թվականին այցելել է Ռազգրադ, հետևյալ տեղեկությունն է հաղորդում տեղի հայերի մասին։ «Ռազգրադում ապրում են 70 հայ ընտանիք, թվով ավելի քան 460 հոգի, որոնք եկեղեցի չունեն, բոլորն էլ արհեստավորներ են՝ ատաղձագործներ, հյուսներ և այլն»։ XVIII դարում Ռազգրադի հայ գաղթօջախը փոքրանում է։ 1765 թվականին

[1] Ն. Գասապյան, Բուլղարահայոց անցյալին շուրջը («Երևան» Սոֆիայի, 19 հունիսի 1959 թ.)։ Համմս. Ա. Մարկոս, «Վառնայի հայ գաղութը» («Երևան» Սոֆիայի, 2-ը դեկտ. 1960 թ.)։

Ռազգրադ այցելող դանիացի ճանապարհորդ Կարստեն Նիբուրը այնտեղ գտնում է միայն 50—60 հոգի հայ բնակչություն։ Ավելի ուշ, 1802 թվականին, Բժշկյանն այնտեղ տեսել է միայն 20 տուն հայեր։ Հայերի վերջնական ցրումն այս քաղաքից տեղի է ունեցել 1811 թվականին ռուս-թուրքական պատերազմի ժամանակ[1]։

Կոլաոովգրադի կամ Շումենի հայ գաղթօջախը։—Հիմնվել է XVII դարի սկզբներին։ Տեղեկություններ կան այն մասին, որ հայ գաղթականներ են եկել այստեղ 1600 թվականին։ Բետր Բոգդանը 1640 թվականին այստեղ հիշում է ընդամենը 19 տուն հայ գաղթականություն՝ բաղկացած մոտ 40 հոգուց։ Կոլարովգրադի հայ գաղթականների մի մասը եկել է Ղրիմից, իսկ մյուսը՝ Նախիջևանից և Երևանից։ Պարապելիս են եղել գլխավորապես արհեստագործությամբ, մասնավորապես ամանեղեններ պատրաստելով, որի պղինձը ստացել են Պոլսից։

Ֆիլիպոպոլսի հայ գաղթօջախը։— Հայկական հնագույն գաղթօջախներից մեկն է Բուլղարիայում։ Նա իր գոյությունը պահպանել է նաև թուրքական տիրապետության շրջանում։ Սիմեոն Լեհացին 1611 թվականին այդ քաղաքն այցելած ժամանակ հայկական գաղթօջախը գտել է բարեկեցիկ վիճակում. նա այնտեղ տեսել է հարյուր տուն հայություն։ Գաղթօջախը XVIII դարում զգալիորեն նոսրացել է, չնայած որ նա իր մեջ ընդունել է կամեներից եկած հայ նոր գաղթականություն[2]։

Պրովադիայի հայ գաղթօջախը։—Հիմնվել է XVI դարի վերջերում։ Հայ նոր գաղթականությամբ նա ստվարացել է 1605 թվականին՝ կաֆայից սովի պատճառով այստեղ եկած գաղթականներով։ 1608 թվականին Սիմեոն Լեհացին այս քաղաքն այցելած ժամանակ այստեղ տեսել է «յոլով հայք տնով... երկու երէց և մեկ աբեղայ»։ Գաղթօջախը նոսրացել և ցրվել է XIX դարի առաջին քառորդում՝ ստեղծված տնտեսական և քաղաքական ծանր պայմանների հետևանքով[3]։

[1] Տես «Երևան» Սոֆիայի, 1959 թ. 16 հունվարի (հմմտ «Հանդէս ամսօրեայ», 1926 թ., էջ 432)։

[2] Ն. Գասապյան, Ֆիլիպեի շրջանի հին հայկական եկեղեցիները և վանքերը։

[3] Ա. Մարկոս, Աղբյուրներ Պրովադիայի անհետացած հայ գաղութի մասին («Երևան» Սոֆիայի, 1960, 17 հունիսի)։ Հմմտ Ս. Փաչաճյան, Պրովադիայի անհետացած հայ գաղութի մասին («Երևան» Սոֆիայի, 1958 թ., սեպ. 5)։

Սոֆիայի հայ գաղթօջախը։—Սոֆիայի հայկական գաղթօջախի մասին թուրքական շրջանում մեզ հաղորդում են եվրոպացի ճանապարհորդներ Հանս Դեննվամբը 1553 թ. և Վոլֆրանգը 1559 թ.։ XVII դարում թուրքական աղբյուրները Սոֆիայում հիշում են «էրմանի թայվասը վե հեմսաքը»։ Սոֆիայի գաղթականները գլխավորապես եկել են Նախիջևանից։ 1640 թվականին Պետր Բոգդանը Սոֆիայում հիշում է 200 ընտանիք։ Սոֆիայի հայերը զբաղվել են գլխավորապես արհեստագործությամբ։ Աղբյուրներում հիշվում են ոսկերիչներ, երկաթագործներ, հացթուխներ և այլ արհեստով զբաղվողներ։ Քաղաքի լևսկի փողոցն անցյալում կոչվել է «Հայկականը»[1]։

Ռուսչուկի հայ գաղթօջախը։—Հնագույն տեղեկությունները վերաբերում են XVI դարի սկզբներին։ 1640 թվականին Պետր Բոգդանն այդտեղ հիշում է 200 ընտանիք՝ ավելի քան 1000 շունչ բնակչությամբ։ Գաղթօջախը պահպանել է իր գոյությունը նաև XIX դարում։ Նշված դարի 70-ական թվականներին Ռուսեի նահանգում ապրող հայերի թիվը հաշվվել է 2000, որոնց մեծ մասն ապրել են Ռուսեում[2]։

Բուլղարիայում մեծ ու փոքր խմբերով հայեր են ապրել այլ քաղաքներում և գյուղերում, որոնց վրա կանգ առնելու հնարավորություն չունենք։ Բավական է հիշել Սիմեոն Լեհացու հաղորդած այն տեղեկությունը, որ Բալկաններում իր կատարած ճանապարհորդության ժամանակ չի եղել մի քաղաք կամ շրջան, ուր նա հանդիպած չլինի հայերի։

Բուլղարահայ մշակույթը։ Բուլղարահայերն իրենց համեստ մուծումներն ունեն Բուլղարիայի մշակույթի և գաղափարախոսության տարբեր բնագավառներում։

Հայ-բուլղարական կուլտուրայի առնչումների ամենից նշանակալից երևույթը այդ պավլիկյան գաղափարախոսությունն է, որը, ինչպես հայտնի է, նպաստավոր հող է գտել և բոգոմիլյան տարբերակով տարածվել ամբողջ Բուլղարիայում։ Այստեղ ևս պավլիկյան գաղափարախոսությանը հարել են գլխավորապես ընշազուրկ տարրերը։

[1] Տե՛ս Ա. Մարկոս, Սոֆիայի հայ գաղութը Թրքական տիրապետության օրոք («Երևան» Սոֆիայի, 1960, 16 սեպ.)։

[2] Ա. Մարկոս, XVIII—XIX դդ. մնացած տապանաքարերը Ռուսեի մեջ («Երևան» Սոֆիայի, 1958, 12-ը և 19-ը սեպ.)։

«Պավլիկյանների և մեսալյանականների հայացքները,— գրում է պատմաբան Անգելովը,—իրենց արտահայտությունները են գտել Բոգոմիլյան ուսմունքի բոլոր կողմերի, բուլղար քահանա—բարեփոխիչ Բոգոմիլի կրոնափիլիսոփայական և աստվածաբանական ողջ սիստեմի վրա»[1]:

Բուլղարահայերը հնագույն շրջանից սկսած ակտիվ մասնակցություն են ունեցել երկրի շինարարության գործին: Ստեփանոս Ասողիկը հայտնում է, որ Բարսեղ Բուլղարասպան կայսրը Բուլղարիայում կատարած ավերածություններից հետո, հայ շինարարների մի մեծ խումբ է տեղափոխել Բուլղարիա՝ քանդված երկիրը կառուցելու համար[2]: Հայ շինարարների, ճարտարապետների մասին տեղեկություններ կան հետագա դարերում ևս: Բուլղարիայում աշխատող հայ շինարարները չէին կարող իրենց հետ չտանել իրենց արվեստը: Պատահական չէ, որ ճարտարապետության պատմության մասնագետները որոշակի նմանություններ են տեսնում հայ և բուլղար որոշ ճարտարապետական կոթողների միջև: Պրոֆ. Քացարովը հայ ճարտարապետական ազդեցությունը կրող բուլղարական հուշարձաններից մատնացույց է անում Բերոշթիցա քաղաքի մոտ գտնվող բուլղարական եկեղեցին: Խոսելով այս հուշարձանի մասին, նա գտնում է, որ «Պուլղար եկեղեցիներու վրա հայ ճարտարապետության ազդեցությունը ակներև է»:

Բուլղարիայի հնագույն հուշարձաններից մեկն է հանդիսանում Բաչկովոյի վանքը, որը հիմնվել է 1084 թվականին հայ իշխան Բակուրյանի և իր եղբայր Աբաս Բակուրյանի կողմից: Գրիգոր Բակուրյանը Տայքից է, Ալեքս Կոմնենոսի ժամանակ ծառայելով բյուզանդական բանակում և արքունիքում, հասնում է պետական բարձր պաշտոնի: Երկար ժամանակ պաշտոնավարելով Բուլղարիայում, բարի հիշատակ թողնելու ցանկությամբ, նա կառուցում է Բաչկովոյի վանքը: Նա, որպես քաղկեդոնական եկեղեցու հետևող, իր վանքում հիմնած միաբանության մեջ մեծ տեղ է հատկացրել վրաց միաբնակ եկեղեցու հետևողներին: Վանքի միաբանության համար նա կազմել է տվել մի կանոնադրություն, որը մեզ է հասել երեք լեզվով՝ հայերեն, հունարեն և վրացերեն:

Բուլղարիայի հայկական գաղթավայրում տարբեր ժամանակներում, գործել են հայկական գրչության մի քանի օջախներ, ուր գրվել, ընդօրինակվել են ձեռագրեր:

Հնագույն ձեռագիրը, որը մեզ է հասել Բուլղարիայի հայկական գրչության օջախներից, այդ Կիրակոս երեցի Ադրիանոպոլսում 1007 թ. ընդօրինակած ձեռագիրն է, որն այժմ Վենետիկի Մխիթարյանների սեփականությունն է: Ձեռագրի պատվիրատուն է հանդիսացել Հովհաննես իշխանը: Նշված ձեռագիրն արժեքավոր է ոչ միայն որպես հին հայկական գրչության նմուշ բալկանյան երկրներում, այլև իր մանրանկարչությամբ[1]:

Բուլղարիայում գրված հաջորդ ձեռագիրը հայ նշանավոր բժիշկ Ամիրդովլաթի ինքնագիր ձեռագիրն է, որը գրված է 1469 թվականին Ֆիլիպոպոլիս քաղաքում: Ձեռագիրը պարունակում է անվանի բժշկապետի «Օգուտ բժշկութեան» աշխատությունը:

Ձեռագրեր են գրվել Բուլղարիայի մյուս վայրերում ևս՝ Ֆիլիպոպոլսում, Սոֆիայում, Ֆոկշանում և այլ վայրերում:

XVI—XVIII դարերում հայ արվեստի ազդեցությունը որոշակի նկատելի է ոսկերչության, գորգագործության, հյուսվածքեղենի, մետաքսագործության և այլ արհեստների բնագավառում:

---

[1] Д. Ангелов, Богомильство в Болгарии, էջ 54:

[2] Ստեփանոս Ասողիկ, Պատմութիւն Տարօնոյ, էջ 201:

[1] «Բազմավէպ», 1935 թ., էջ 430—431:

ՌՈՒՄԻՆԻԱՅԻ ՀԱՅ ԳԱՂԹԱՎԱՅՐԸ

Աղբյուրները և գրականությունը: *Ինչպես հայկական մյուս գաղթավայրերի, այնպես և Ռումինիայի հայ գաղթավայրի պատմության աղբյուրները աղքատիկ են և կցկտուր։ Մեզ հայտնի չէ հայկական, ռումինական կամ օտար ոչ մի պատմիչ կամ ժամանակագիր, որը նպատակ դրած լիներ շարադրելու ռումինահայերի որևէ ժամանակաշրջանի պատմությունը։ Ռումինահայերի համառոտ պատմությունը հնարավոր է լինում կազմել միայն վիմագիր արձանագրությունների, հիշատակագրությունների, ինչպես նաև՝ հայ և օտար պատմիչների, ուղեգիրների ու ժամանակագիրների հաղորդած միջանկյալ տեղեկությունների հիման վրա։ Ավելի մոտիկ ժամանակաշրջանի պատմության համար արժեքավոր նյութեր գտնում ենք պատմական վավերագրերում, որոնք բաժանելով գաղթավայրի թափառիկ ճակատագիրը, ցրված են Ռումինիայի մեծ ու փոքր արխիվներում։ Ըստ տեղեկությունների, միայն Բուխարեստի արխիվներում ռումինահայ գաղթավայրերին վերաբերող վավերագրերի թիվը հասնում է 50 հազարի։*

Ռումինիայի հայ գաղթավայրի պատմության այդ ցրված նյութերը ի մի հավաքելու ու նրանցից ամբողջական ժողովածուներ կազմելու ուղղությամբ հայագիտության մեջ բավականաչափ աշխատանք կատարվել է։ Այդ ուղղությամբ առանձնապես շնորհակալ նախաձեռնություն է ցուցաբերել Ղ. Ալիշանը իր «Կամենեց. տարեգիրք Հայոց Լեհաստանի և Ռումենիոյ» *խորագրով աշխատության մեջ, որը լույս է տեսել 1896 թվականին Վենետիկում։ Նշված ժողովածուի մեջ զետեղված են հայերեն և հայատառ ղփչաղերեն ժամանակագրություններ, ինչպես և հայկական հիշատակարաններ, կաթողիկոսական կոնդակներ և այլ այնպիսի նյութեր, որոնք վերաբերում են Լեհաստանի և Ռումինիայի հայկական գաղթօջախների պատմությանը։*

Գաղթավայրի պատմության մասին փաստական հարուստ նյութ է հավաքել Մ. Բժշկյանը իր «Ճանապարհորդութիւն ի Լեհաստան» *վերնագրով աշխատության մեջ, որը լույս է տեսել Վենետիկում 1836 թվականին։ Բժշկյանն անձամբ շրջագայել է Ռումինիայի մի շարք վայրերում և նյութեր հավաքել ոչ միայն ժամանակակից հայ գաղթօջախների, այլև նրանց անցյալի մասին։*

Ռումինիայի, մասնավորապես Տրանսիլվանիայի հայ գաղթավայրի պատմության համար փաստական արժեքավոր նյութեր են պարունակում Հ. Գ. Գովրիկյանի երկու աշխատությունները՝ «Դրանսիլվանիո հայոց մետրապոլիսը կամ նկարագիր Կեռլա քաղաքի ի գիր և ի պատկեր», *որը հրատարակվել է Վիեննայում 1896 թվականին և* «Հայք ի յՕղիսաբեթուպոլիս Դրանսիլվանիո»՝ *երկու հատորից, որից առաջինը լույս է տեսել 1893 թվականին, իսկ երկրորդը՝ 1899 թվականին, երկուսն էլ՝ Վիեննայում։*

Տրանսիլվանիայի գաղթավայրի պատմության համար ուշագրավ նյութեր են հրատարակված նույն հեղինակի մի այլ աշխատության մեջ՝ «Հայ արձագանք կամ հիշատակարաններ հին և նոր Եղիսաբեթուպոլսո Հայաքաղքին», *որը լույս է տեսել 1904 թվականին։ Նշված չորս աշխատությունների մեջ զետեղված են Տրանսիլվանիայի իշխանների և ավստրիական կայսրերի հրովարտակները, պաշտոնական գրագրությունը և այլ նյութեր, որոնք անմիջապես վերաբերում են Տրանսիլվանիայի հայ գաղթօջախներին։*

Ռումինիայի հայ գաղթավայրի պատմության արժեքավոր սկզբնաղբյուրներից է Մինաս Թոխաթեցու «Ողբ ի վերայ օլախաց երկրի հայերուն», *ուր հեղինակը, որպես ականատես անձնավորություն, չափածո նկարագրել է Մոլդավիայի Ստեփան Ռարեշ վոյեվոդի 1551 թվականին հայերի դեմ սկսած հալածանքը։ Այս տաղը հրատարակվել է մի քանի անգամ։ Նա թարգմանվել է նաև ռումիներեն և գերմաներեն լեզուներով։*

Մոլդավիայի հայ գաղթավայրի մասին արժեքավոր տեղեկություններ է հաղորդում Սիմեոն Լեհացին, որը 1608—1616 թվականներին ճանապարհորդել է Բալկաններում և Մերձավոր Արևելքում և գրի առել իր տպավորությունները։ Լեհացու «Ուղեգրութիւն»-ը հրատարակել է Հ. Ն. Ակինյանը Վիեննայում 1936 թվականին։

Ռումինիայի հայ գաղթօջախների վերաբերյալ կան տեղեկություններ հայկական և ռումինական մեծ ու փոքր այլ աղբյուրներում ևս։ Սակայն ցավով պետք է ասենք, որ նշված աղբյուրներում Ռումինիայի հայ գաղթավայրի մասին եղած տեղեկությունները միջանկյալ տեղեկություններ են և ամբողջական պատկերացում չեն տալիս ո՛չ գաղթավայրի ներքին կյանքի և ո՛չ էլ հայ համայնքի խաղացած հասարակական-քաղաքական դերի մասին միջնադարյան Ռումինիայում։

Ռումինիայի հայ գաղթավայրի պատմությունը բավականաչափ ուսումնասիրված է։ Մեծ աշխատանք է կատարվել ինչպես հայ, այնպես և ռումինացի պատմաբանների կողմից։ Գաղթավայրի պատմությանը նվիրված մի քանի տասնյակ ուսումնասիրություններ են հրատարակվել ռումիներեն, հայերեն և գերմաներեն լեզուներով։

Ռումինահայության պատմության առաջին ուսումնասիրողներից է հանդիսացել մաճառ-հայկական պատմաբան Քրիստոֆ Լուկաչը, որը 1859 թվականին, ավելի քան հարյուր տարի առաջ, լույս է ընծայել մի ուսումնասիրություն լատիներեն լեզվով՝ «Պատմություն Տրանսիլվանիայի հայության» («Historia Armenorum Transilvaniae») վերնագրով։ Լուկաչից հետո գաղթավայրի պատմությամբ զբաղվող լուրջ գիտնականներից է հանդիսացել Դիմիտրիոս Տանը, որը պատմական սկզբնաղբյուրների հիման վրա գրել է Բուկովինիայի հայ գաղթավայրի պատմությունը «Արեվելյան Հայք ի Պուքովինիա» վերնագրով (գերմաներեն լեզվով) և հրատարակել 1890 թվականին Չերնովեց քաղաքում։ Այդ աշխատությունը հայերեն է թարգմանել Գ. վ. Գալեմքերյանը և հրատարակել Վիեննայում 1891 թվականին։

Ռումինիայի հայ գաղթավայրի ուսումնասիրության բնագավառում զգալի աշխատանք է կատարել ռումինացի նշանավոր պատմաբան պրոֆ. Ռ. Հաժդեուն (1836—1907), որն իր մի շարք աշխատությունների մեջ ընդարձակ էջեր է հատկացրել նաև ռումինահայությանը և դրվատական խոսքեր ասել նրա մասին։

Ռումինահայության պատմությամբ զբաղվող գիտնականներից բացառիկ մեծ է պրոֆ. Նիկոլայ Յորգայի (1871—1940) մասնագիտացած վաստակը։ Նա իր մի քանի աշխատությունների մեջ, որոնք նվիրված են Ռումինիայի քաղաքական պատմությանը, տնտեսությանը, եկեղեցուն, արվեստին և այլն, զգալի տեղ է հատկացրել նաև ռումինահայության պատմությանը։ Պրոֆ. Յորգան բացառիկ նախանձախնդրություն է ցուցաբերել ռումինահայերի՝ երկրին մատուցած ծառայությունը, նրա ստեղծած արժեքները վեր հանելու և գնահատելու գործում։ Ռումինիայի հայ գաղթօջախներին նվիրված նրա լավագույն աշխատություններից կարելի է մատնացույց անել «Հայերը և ռումինացիները. պատմական զուգակշիռ», որը լույս է տեսել Բուխարեստում 1914 թվականին։

Ռումինիայի հայ գաղթավայրի պատմությամբ զբաղվող հեղինակներից զգալի աշխատանք է կատարել Գ. Կոյլավը, որը մի շարք ուսումնասիրություններ է հրատարակել ռումիներեն լեզվով՝ «Հայերը իբրև fաղաfների հիմնադիր Եվրոպայի արևելյան մասերուն մեջ» (1909 թ.), «Ռումինիայի հայ եկեղեցիները» (1912 թ.), «Պոթոշանի, Եաշի, Ռոմանի երիտասարդական միության կանոնադրությունը» (1896 թ.) և այլն։

Ռումինահայության պատմությանը նվիրված համառոտ ուրվագծեր են հրատարակել Ա. Մ. Ալթունյանը՝ «Տեղեկություն հայոց գաղթականության, որ ի Մոլդովալաfիա, Հունգարիա և ի Լեհաստան», որը հրատարակվել է 1877 թվականին Ցոկշանում, Պ. քահ. Մամիկոնյանը՝ «Ռումինահայոց ներկայն և ապագայն», որը հրատարակել է Գալացում 1895 թվականին և Լ. Բաբայանը՝ «Հայերը Մոլդավիայում և Բուքովինիայում», որը հրատարակվել է Թբիլիսիում 1911 թվականին։

Հայ-ռումինական ժողովուրդների հարաբերությունների և Ռումինիայի հայ գաղթօջախների պատմության ուսումնասիրությամբ զբաղվող ժամանակակից գիտնականներից մեղվաջան աշխատանք է կատարել անվանի գիտնական, Բուխարեստի համալսարանի հայագիտական ամբիոնի վարիչ պրոֆ. Վլադ Բենեդիանուն։ Նա Ռումինիայի հայ գաղթավայրի պատմությանը նվիրված մի քանի աշխատություններ է հրատարակել։ Գիտական բացառիկ արժեք է ներկայացնում մասնավորապես նրա «Ռումինիայի հայկական գաղութները ըստ ռումինական տեղաանունների տվյալների» հոդվածը, որը լույս տեսավ ռուսերեն լեզվով «Պատմա-բանասիրական հանդեսի» 1962 թ. առաջին համարում։

Ռումինիայի հայ գաղթավայրի պատմությամբ երկար ժամանակ է, որ զբաղվում է պատմաբան Հ. Սիրունին։ Նա մի շարք արժեքավոր ուսումնասիրություններ է հրատարակել պարբերական մամուլում։

Սովետահայ պատմաբաններից Ռումինիայի հայ գաղթավայրի

պատմության ուսումնասիրությամբ զբաղվում է Մաշտենադարանի ավագ գիտական աշխատող Ս. Քոլանջյանը։ Նրա ուսումնասիրություններից մեկը՝ «Բուխարեստի հայոց անցյալն ու ներկան», լույս է տեսել «Էջմիածին» ամսագրի 1949—1951 թվականների համարներում։

Թվարկված հեղինակների ուսումնասիրությունները, պատմական արժեքավոր նյութեր պարունակելով հանդերձ, ունեն այն ընդհանուր թերությունը, որ նրանցում համեմատաբար քիչ են հրապարակված սոցիալական ներքին կյանքին վերաբերող նյութերը։ Որոշ աշխատություններում չափից ավելի է շեշտադրված հայ առևտրականների գործունեությունը և առանձին անհատների դերը։

Գաղթօջախների հիմնումը և հայերի գաղթը դեպի Ռումինիա։

Ռումինիայի պետական սահմանները միջին դարերում փոփոխվել են. եղել են ժամանակներ, երբ նրանք լայնացել են՝ իրենց մեջ ընդգրկելով հարևան երկրներից որոշ գավառներ և, հակառակը, եղել է, որ նրանք զգալի չափով նեղացել են։ Մինչև XIX դարի երկրորդ կեսը Ռումինիան բաժանված է եղել վարչական մի քանի իրարից անկախ երկրամասերի։ Նրա հիմնական մասն է կազմել Մունթենիան կամ Վալախիան, որը գտնվում է Ռումինիայի հարավային մասում։ Հնագույն շրջանում նա կոչվել է նաև Յարա Ռումրնեասկը (Ռումինական երկիր)։ Որոշ դարերում Վալախիայի մասն է կազմել իրենից արևմուտք գտնվող Օլտենիա նահանգը։ Հայ մատենագրության մեջ Մունթենիան անվանված է Մունքանաց կամ Օլախաց երկիր։ Կան նաև հայ մատենագիրներ, որոնք Օլախաց երկիր են անվանում նաև Մոլդավիան։

Ռումինիայի տերիտորիայի մեջ մտել և նրա վարչական խոշոր երկրամասերից է հանդիսացել Մոլդավիան, որը գտնվում է Ռումինիայի արևելյան մասում։ Այն կոչվել է նաև Բոգդանիա, որը հայ մատենագրության մեջ հիշվում է Բուղդանաց երկիր անունով։ Պատմական Ռումինիայի մեջ մտել են նաև Բուկովինիան՝ Ռումինիայի հյուսիս-արևելքում, Դոբրուջան՝ Ռումինիայի հարավ-արևելքում, Մոլդավիայի և Սև ծովի միջև և Տրանսլիվանիան՝ Ռումինիայի հյուսիսում։

Հայ գաղթականները Ռումինիա են մտել տարբեր ժամանակներում մի քանի հոսանքներով։ Նրանք այստեղ միջին դարերում մի քանի անգամ գաղթօջախներ են հիմնել, դարեր շարունակ վառ լույսով փայլել ռումինական երկնակամարի վրա և ասուպի նման

արագ մարել՝ իրենց հետևից թողնելով միայն կցկտուր պատմական հիշատակություններ։

Առաջին գաղթականությունը Ռումինիա է եկել X—XI դարերում[1]։ Այս գաղթականության մասին, դժբախտաբար, շատ քիչ բան գիտենք։ Ռումինիայի հայկական առաջին գաղթօջախների մասին հավաստի տեղեկություններ սկսում են երևալ միայն XIV դարից։ Այս դարաշրջանից պահվել են տեղեկություններ ինչպես հայկական, այնպես էլ ռումինական աղբյուրներում։

Վալախիայում հաստատված հայկական գաղթօջախների մասին մեզ հասած տեղեկությունները վերաբերում են XIV դարի կեսին։ Հունգարական տարեգրություններում տեղեկություններ կան «բազմաթիվ բարեկեցիկ հայերի» մասին Տրգովիշտեում։

Վալախիայում հաստատված հայ առաջին գաղթօջախները, ինչպես երևում է, երկար կյանք չեն ունեցել. բնակություն հաստատելով մեծ մասամբ գյուղական վայրերում, և գաղթականական նոր հոսանք չընդունելով իրենց հայրենակիցներից, արագ ասիմիլյացիայի են ենթարկվել ռումին ժողովրդի մեջ և անհետացել պատմության ասպարեզից։ Անհետացող այդ գաղթօջախներից մնացել են միայն հայկական մի շարք բնակավայրերի անուններ։

Վալախիայում նոր գաղթօջախներ են սկսում ստեղծվել XV դարում։ Բանասեր Հ. Անդրեասյանը պատմական տեղեկություններ է բերել այն մասին, որ 1400—1435 թվականներին Մունթենիայում բազմաթիվ լուսավորչական և կաթոլիկ դավանանքին պատկանող հայեր էին ապրում[2]։

Ավելի ուշ, 1506 թվականի վերաբերյալ, Բուխարեստի պատմիչ Յոնեսկու-Ջիոն տեղեկություններ է հաղորդում Բուխարեստում, Տրգովիշտում և Ռըմնիկում ապրող հայ բնակչության մասին[3]։

Ռումինահայերի մոտ հյուսված ավանդություն կա, որ իբրև թե Բուխարեստ քաղաքի առաջին հիմնադիրը հանդիսացել է Հաբեթ Բակուրի անունով մի հայ։ Ըստ այդ առասպելի, Հաբեթ Բակուրը առասպելական հարստություն ունեցող անձնավորություն է եղել, ապրել է Բուլղարիայի վառնա քաղաքում։ Նա ունեցել է մի աղջիկ, որը ցանկացել է ամուսնանալ իր ծառաներից մեկի հետ։ Հայրը դեմ է եղել այդ ամուսնությանը։ Աղջիկն իր սիրահարի հետ փախել է Ռումինիա և Դրմբովիցա գետի ափին, գեղատեսիլ մի

[1] Դ. Տան, Արևելյան Հայք ի Պուքովինիա, էջ 5։

[2] Տե՛ս «Aurara», 1906, № 10, էջ 12 (վերցրված է Ս. Քոլանջյանից)։

[3] Ս. Քոլանջյան, Բուխարեստի հայոց անցյալն ու ներկան (տե՛ս «Էջմիածին», 1950 թ., № 1, էջ 58)։

վայրում, բնակություն հաստատել։ Հայրը երկար փնտրել է իր աղջկան և գտնելուց հետո հաշտվել է նրա հետ ու նրա ապրած վայրում գեղեցիկ շենքեր է կառուցել, որը և հիմք է հանդիսացել Բուխարեստ քաղաքի հիմնադրման[1]։ Այս ավանդությունը չնայած պատմական ոչ մի հիմք չունի, նույնիսկ ենթադրվում է, որ Հաբեթ Բակուրը շփոթված է Գրիգոր Բակուրյանի հետ, սակայն այդ առասպելը կարևոր է այն տեսակետից, որ նրա հեղինակները ցանկացել են Բուխարեստի կառուցումների մեջ հայ մարդկանց մասնակցությունը տեսնել։

XIV դարում են հիմնվել հայկական գաղթօջախները նաև Մոլդավիայում՝ այն տարբերությամբ միայն, որ այստեղ հաստատված հայ գաղթօջախները ավելի երկար են կյանք ունեցել և հասարակական, քաղաքական և մշակութային ավելի գործուն դեր կատարել։

Ըստ տեղեկությունների, հայ գաղթականության առաջին խումբը Մոլդավիա է եկել Ղրիմից։ Նրանք եղել են Հայաստանից դուրս եկած այն գաղթականներից, որոնք հյուսիսային երկրներն էին եկել Ջարմաղանի վայրագությունների և Անիում տեղի ունեցած երկրաշարժի ավերումների հետևանքով։ Մոլդավիայի հայերի մոտ մինչև ուշ ժամանակները պահված է եղել վաղեմի մի ավանդություն, ըստ որի իրենց նախահայրերը Հայաստանի մայրաքաղաք Անիի երբեմնի բնակիչներն են հանդիսացել[2]։

Ղրիմից Մոլդավիա եկող հայ գաղթականության առաջին հիմնակետը Ակկերման նավահանգստային քաղաքն է հանդիսացել, որը հին ժամանակ կոչվել է նաև Մանքաստրա։ Ակկերմանը փաստորեն Մոլդավիա եկող հայ գաղթականության համար մուտքի դարբաս է հանդիսացել[3]։

Ղրիմի և Կիլիկիայի հայ վաճառականները Ակկերման քաղաքը ճանաչում էին շատ վաղուց. XIII դարից սկսած նրանք հաճախ էին գալիս այնտեղ առևտուր անելու ուր և, հավանական է, ունեին իրենց մշտական ներկայացուցիչները։ Այդտեղ գտնվել են Կիլիկյան հայ թագավորների դրամներ, որոնք ապացուցում են հայ-մոլդավական ժողովուրդների միջև գոյություն ունեցող հնագույն հարաբերությունների մասին։

[1] «Մուրճ» ամսագիր, 1903 թ., № 7, էջ 118—126։

[2] Դ. Տան, Արևելյան Հայք ի Պուքովինա, էջ 5։

[3] Меликсет-Бек, Армянские древности в Аккермане, Тифлис, 1911, էջ 4։

Ակկերմանը XV դարում, ինչպես պարզվում է, ունեցել է հայ գրչության օջախ։ Մեզ է հասել «Ճաշոց» մի ձեռագիր, որը գրվել է այնտեղ Նիկողայոս եպիսկոպոսի կողմից և նվիրվել Յաշի Ս. Աստվածածնի եկեղեցուն։ Ձեռագրի գրչության թվականն է 1460[1]։

Սբ կաթողիկոս Թեոդորոսը (1382—1392) Հովհաննես արքեպիսկոպոսին հաստատելով Լեհաստանի հոգևոր առաջնորդ, 1383 թվականին նրա տված կոնդակում թեմին ենթակա հայաշատ գաղթաօջախներից հիշում է Լվովը, Լուցկը և Մանկաստրան[2]։ Ռումինիայի հայ գաղթավայրի պատմության ուսումնասիրողները սովորաբար Մանկաստրա ասելով հասկանում էին Ակկերմանը։ Սակայն վերջերս պատմական գիտությունների դոկտոր Լ. Խաչիկյանը, հայ-ուկրաինական պատմական կապերին նվիրված գիտական սեսիայում կարդացած իր զեկուցման մեջ, փորձեց ցույց տալ, որ Մանքերմանը Կիև քաղաքն է[3]։ Խաչիկյանի այս եզրակացության հետ չի կարելի համաձայնվել, որովհետև նրա մատնացույց արած փաստերը բոնածիգ բնույթ ունեին։ Նրա եզրակացության համար իսկ հիմք ծառայած պատմական սկզբնաղբյուրում՝ «Կամենեցում», Մանքերմանը հիշված է Վլախաց երկրում. «Մանքերման ի Վլախաց երկիրն»։ Վլախաց երկիր հայերն անվանել են Վալախիային՝ Ռումինիայի հարավային երկրամասին, իսկ Կիևը երբեք Ռումինիայի սահմանի մեջ չի գտնվել։ Մանքերմանը՝ իտալական աղբյուրներում հիշված Մանկաստրան է։ («Կաստրա» նշանակում է «բերդ»)։ Նույն իմաստն ունի նաև «կերմանը» ղիփչաղերենում, ուստի զարմանալի չէ, որ նույն քաղաքը իտալացիների մոտ կարող էր հիշվել Մանկաստրա անունով, իսկ ղիփչաղների մոտ՝ Մանքերման։ Խաչիկյանի այն փաստարկը, որ XVII դարի վավերագրերում Լվովի թեմի ենթակա քաղաքների շարքում հիշված Կիևը Մանքերմանն է, ընդունելի չէ, որովհետև այդ տեղեկությունը բոլորովին տարբեր ժամանակաշրջանին է վերաբերում։ XVI—XVII դարերում ռումինական թեմը բաժանվել էր լեհական թեմից և, բնական է, Ակկերմանը հիշվել չէր կարող։ Մեր կարծիքով, ստուգելի է նաև Ռաշիդ-էդդինի տեղեկությունը՝ մոնղոլների կողմից Մանքերմանը գրավելու մասին, որովհետև հեղինակի բնագրում հիշված է ոչ թե Մանքերմանը, այլ Մանքերքան։

[1] ՀՊՄ, ձեռ. № 9485, թ.264ա։

[2] Ալիշան, Կամենեց, էջ 221։

[3] Л. Хачикян, Новые материалы о древней армянской колонии Киева («Исторические связи...», էջ 110—120)։

Պրոֆ. Վ. Բենեշևիանուի կարծիքով, XIV—XV դարերում հայկական գաղթօջախներ են եղել Մոլդավիայի գրեթե բոլոր աշքի ընկնող առևտրաշատ քաղաքներում՝ Սուչավայում, Յաշում, Բոդոշանում, Դորոհոյում, Ֆոկշանում, Սիրեթում, Ռոմանում, Գալացում, Վասլույում, Տիրգո-Օկնայում, Բաքեուում, Բիրլադում և ներկայիս Մոլդավիայի Խոտին, Քիլի և Բենդեր քաղաքներում[1]: Ըստ որում, պրոֆ. Բենեշևիանուն գտնում է, որ Մոլդավիա եկող հայ բնակչության զգալի հատվածը հաստատվել է գյուղական վայրերում: Նա դրա անհերքելի ապացույցն է համարում մոլդովական մի շարք գյուղերի և ավանների անունների հայկական ծագումը: Մոլդավիայում հայկական տեղանուններից նա մատնացույց է անում «Արմանուլ» անունով երեք գյուղերը՝ Բոտոշանի, Դարաբանի և Հըրլեուի շրջաններում, «Արմյանկա» գյուղը՝ Բոտոշանի շրջանում, «Արյանուլույ» գյուղը՝ Մոյնիշտի շրջանում, «Գուրա Արմենլուի»՝ Միչինի շրջանում[2]: Պրոֆ. Բենեշևիանուն հայկական ծագում է վերագրում Տրանսիլվանիայի «Արմենի» գյուղին՝ Սիբիուի շրջանում, «Արմենիշ» ավանին՝ Կարանսեբեշի շրջանում, «Դեյալուլ Արմանուլույ»՝ Սին Ջորջու դե Պիդուրեի շրջանում և այլն[3]:

Մոլդավիայի հայկական ամենից խոշոր գաղթօջախները XIV—XV դարերում գտնվել են Ակկերմանում, Սուչավայում և Սերեթում: Մեզ է հասել էջմիածնի Թեոդոս կաթողիկոսի 1388 թվականի օգոստոսի 18-ի կոնդակը, որով Լեհաստանի թեմի առաջնորդի իշխանության տակ գտնվող մոլդավական քաղաքներից հիշվում են Սերաթը (Սիրեթը), Չիչովը (Սուչավան) և Մանքերմանը (Ակկերմանը)[4]:

Ռումինական պատմական աղբյուրներում տեղեկություններ կան, որ Մոլդավիայի պետության հիմնադիր Տրակոշ Վոտայի ժամանակ (1352—1353) բազմաթիվ հայեր էին ապրում Մոլդավիայում: Ըստ այդ աղբյուրներում եղած հավաստիացումների, հայերը ճանաչված էին որպես լավ քաղաքացիներ Մոլդավիայում և վայելում էին պետության հովանավորությունը:

Մոլդավիայում հայ բնակչության մասին են վկայում հայկական մի շարք եկեղեցիների կառուցումները: Այսպես, օրինակ, Բոթոշանի հայկական եկեղեցին կառուցվել է 1350 թվականին, Չեթաթեա Ալբայինը (Ակկերմանինը)՝ 1380 թվականին, Յաշինը՝ 1395 թվականին, Ռոմանի, Սիրեթի և Խոտինի եկեղեցիները՝ 1551 թվականից առաջ և այլն[1]: Ուշագրավ է այն, որ այդ եկեղեցիներից մի քանիսի կառուցողները հանդիսացել են Արևելյան Հայաստանից եկած գաղթականներ: Այսպես, օրինակ, Յաշի եկեղեցու կառուցման առթիվ գրած վիմագիր արձանագրության մեջ կարդում ենք. «...հիմնարկեցաւ Եաշու Ս. Աստուածածնայ եկեղեցին ձեռամբ եկեղեցական խաչգրին և Սիսեանցի տէր Յակոբին, Ջուղայեցի մահտեսի Մարգարին և մահտեսի Գրիգորին. թուին Հայոց ՊԽԴ (844+551=1395)»[2]:

XV—XVI դարերում Մոլդավիան հայ գաղթականություն է ընդունել հարավից և արևելքից: Հարավից եկող գաղթականները Թուրքիայի տիրապետությունից փախած հայերն են հանդիսացել, որոնք թուրքական նվաճումների սպառնալիքի տակ, ալիք առ ալիք շարժվելով հյուսիս, եկել և հասել են Մոլդավիա: Իսկ գաղթականության արևելյան խումբը եկել է Ղրիմից՝ երբ թուրքերը 1475 թվականին գրավեցին Ղրիմի թերակղզին ու իրենց տիրապետությունը հաստատեցին այնտեղ:

Հայ գաղթականության հոսանքը դեպի Մոլդավիա չի դադարում նաև XVI—XVII դարերում: Մեծ թվով գաղթականություն է եկել Ռումինիա 16-րդ դարի վերջերում՝ Թուրքիայում ջալալիների կատարած վայրագությունների հետևանքով: Գաղթականներ են եկել գլխավորապես Երզնկայից, Ակնից, Տևրիկից և Արևմտյան Հայաստանի այլ վայրերից: Սիմեոն Լեհացին իր ուղևորության ընթացքում 1605 թվականին Պոլսում եղած ժամանակ հայ գաղթականների հսկայական բազմություն է տեսել այնտեղ, որոնք փախել էին ջալալիներից: Սիմեոն Լեհացին միայն Պոլսում գտնվող գաղթականության թիվը հաշվում է 40000 տուն[3]: Շուտով Ռումինիա հասան նաև Շահաբասի՝ 1605 թվականի բռնագաղթի ժամանակ քշված գաղթականների այն խմբերը, որոնք չէին ցանկացել մնալ Պարսկաստանում: Եվ, վերջապես, գաղթականական մի այլ հոսանք նորից եկել է Ղրիմից՝ այնտեղ տիրող սովի պատճառով:

Լեհահայ պանդուխտ գրիչներից մեկը՝ Հակոբ Երեցը, իր

[1] Բենեշևիանու վերև հիշված հոդվածը (տե՛ս «ՊԲՀ», 1962, 1, էջ 172):
[2] Նույն տեղը, էջ 178—179:
[3] Ալիշան, Կամենից, էջ 9:
[4] Haşdeu, Istoria Toleranţei Religioase, 1868, էջ 62—64:

[1] Վ. Բենեշևիանու, Հին հայկական վկայություններ Մոլոտովայի քաղաքներ մասին («Նոր կյանք» թերթ, 1956 թ., № 6, 10 փետր.):
[2] Պ. քահ. Մամիկոնյան, Ռումինահայոց ներկայն և ապագայն, էջ 119:
[3] Սիմէոն Լեհացի, Ուղեգրութիւն, էջ 8:

1608 թ. թողած հիշատակարաններում, խոսելով հայ բնակչության հայրենի երկրից արտագաղթելու մասին, դառնությամբ նշում է. «.. եղկելի եղեն ամենայն ազգն Հայոց, զի ցրուեցան ամենեքեան ընդ երեսս երկրի, որպէս փոշի հոսեալ ի հողմոյ ծագաց ի ծագս, բաժանեալք ի սիրելեաց, հեռացեալք ի հայրենեաց, որոշեալք ի յ(ը)նտանեաց, անջատեալք ամենայն բարութեանց, շրջէին, պանդխտէին նշդեհացեալք ի մէջ այլասեռն ազգաց, այլախօս լեզուաց և անընդել աշխարհաց, որպէս զոչխար, որոց ոչ իցէ հովիւ, անտերունչ մնացեալ։ Ողորմելի և աւաղելի եղև մեծանուն ազգն Հայոց մեծաց»[1]։

Սիմեոն Լեհացին, որ իր բազմամյա ճանապարհորդությունների ընթացքում տեսել է հայ բնակչության ցրվածությունը տարբեր երկրներում, նրանց կրած տառապանքները, գրում է. «Եւ թէ հաշուես ի Պուղտանայ մինչև Ստամպօլ, պուիուն Ռումէլին մինչև մեծն Վանատիկ, նա չկայ քաղաք, գեղ կամ չֆտլիկ (ագարակ— Ա. Ա.), որ հայ չկենայ. որ վասն ծովացեալ մեղաց մերոց ցիրուցան եղեալ եմք ի վերայ երկրի որպէս զփոշի»[2]։

Ռումինիան հայ գաղթականություն է ընդունել նաև Հարևան Լեհաստանից։ XVII դարի 30—40-ական թվականներին, երբ Լեհաստանում սկսեց մոլեգնել Նիկոլ Թորոսովիչի կաթոլիկ ռեակցիան, շատ լեհահայեր թողեցին Լեհաստանը և գաղթեցին Ռումինիա։

Գաղթավայրի ներքին կյանքը։ Ինչպես հայկական մյուս գաղթավայրերում, այնպես և Ռումինիայում հայ գաղթավայրի բնակչությունը միատարր չի եղել։ Նրա բնակչության կազմում մենք տեսնում ենք գյուղացիների, արհեստավորների, առևտրականների, կալվածատերերի և սոցիալական այլ խավերի ներկայացուցիչներ։ Գաղթավայրի պատմությամբ զբաղվողների մեծ մասը, դժբախտաբար, իր ուշադրությունը դարձրել է հայ առևտրականների վրա, որի հետևանքով պատմագրության մեջ այն սխալ կարծիքն է ստեղծվել, որ կարծես ռումինահայ բնակչությունը կազմված է եղել միայն վաճառականներից, բոլոր ռումինահայերն էլ կարծես մեծահարուստ մարդիկ են եղել։ Այս սխալ տեսակետը վերջերս իրավացի քննադատության ենթարկեց պրոֆ. Վլադ Բենեցիանուն։ Նա իր «Ռումինիայի հայ գաղութը ըստ ռումինական տեղանունների տվյալների» խորագրով արժեքավոր ուսումնասիրության մեջ ցույց տվեց, որ ռումինահայերի զգալի մասն

1 Ալիշան, Կամենից, էջ 169։
2 Սիմէոն Լեհացի, Ուղեգրութիւն, էջ 8։

ապրելիս են եղել գյուղերում և զբաղվել հողագործությամբ և անասնապահությամբ։ Պարզաբանելով ռումինական մի շարք տեղանուններ, նա գտնում է, որ ռումինական շուրջ հարյուր տեղանուններ, գյուղական վայրերում, հայկական ծագում ունեն. «Այս աշխարհագրական անունները ապացուցում են,— եզրակացրել է նա,—որ հայերը հանդիսացել են ո՛չ միայն քաղաքների, արհեստների և առևտրի կազմակերպիչները, որոնք զարգացել են շնորհիվ նրանց գործունեության, այլև հայերը բնակություն են հաստատել նաև գյուղերում։ Մենք գտնում ենք, որ սկզբում գյուղերում հաստատված հայերը չնայած մեծաթիվ էին, սակայն կազմված էին փոքր խմբերից, որոնք և ձուլվեցին ռումին ժողովրդի մեջ»[1]։

Թե սոցիալական ինչպիսի շերտավորում է գոյություն ունեցել Ռումինիայի հայ համայնքներում, այդ պարզ կարելի է տեսնել կաթողիկոսների այդ համայնքներին ուղարկած կոնդակներից, որոնց մեջ սովորություն է եղել նշել հասցեատեր համայնքների սոցիալական բոլոր խավերին, իհարկե, աշխատավորությանը հիշելով ցանկի վերջին տեղում։ Ռումինիա ուղարկած կաթողիկոսական այդ կոնդակներում հիշված են հետևյալ խավերը.

«Պատուական և սրբասէր քահանաները»,
«Աստուածասէր և գովելի պարոնները և աւագները»,
«Փառասէր խոճաները և պուրճիները»,
«Հարկևոր և բարեպաշտ տանուտէրները»,
«Իմաստուն և փառաւոր վաճառականները»,
«Զեռնահմուտ արուեստագետները»,
«Աշխատասէր հողագործները»[2]։

Ռումինիայի հայ բնակչության ամենից զգալի հատվածը գյուղացիությունն է հանդիսացել, որի վիճակի մասին դժբախտաբար ոչինչ չգիտենք։

XVII դարում Ռումինիայի հայ գյուղացիության զգալի մասը ճորտացված է եղել։ Ըստ որում, հայ գյուղացիները գտնվել են գլխավորապես հայ կալվածատերերի իրավասության տակ, որոնք պակաս չեն կեղեքել իրենց ազգակիցներին, քան այդ անում էին այլազգի կալվածատերերը։ Բանասեր Լ. Բաբայանը, որը ուսումնասիրել է Բուկովինայի հայ կալվածատերերի գործունեությունը, գտնում է, որ «Բուքովինիայի հայ կալվածատերերը քիչ բաներով են տարբերվում ռումինացի և հրեա կալվածատերերից, որոնք

1 ՊԲՀ, 1962, № 1, էջ 178։
2 Ղ. Ալիշան, Կամենից, էջ 9, 217, 221, 225։

անխնայորեն շահագործում են իրենց գյուղերի հողերը մշակող խեղճ գյուղացիներին»[1]։

Հայ բնակչությունը ուշ դարերում մեծ թիվ է կազմել քաղաքատիպ վայրերում և զգալի դեր կատարել Ռումինիայի արդյունաբերության և արհեստագործության զարգացման բնագավառում։ Այդ առանձնապես նկատելի է Մոլդավիայում։ 14—15-րդ դարերում Մոլդավիայից էին անցնում առևտրական երկու ուղիներ, որոնք Արևմտյան եվրոպական երկրները կապում էին Արևելքի հարավի հետ։ Այդ ուղիներից մեկը, որը կոչվում էր Մոլդավական առևտրական ուղի, Կրակովը և Լվովը կապում էր Սև ծովի հետ՝ անցնելով Չեռատի Ալբիայից, Սուչավայից, Սիրեթից և Բրլադից։ Մյուսը, որ կոչվում էր Թաթարական առևտրական ուղի, անցնում էր Լուկկի և Վլադիմիրի վրայով դեպի Ղրիմի նավահանգստային քաղաքները[2]։ Մոլդավիայի հայ գաղթականությունը տեղավորված էր գլխավորապես առևտրական այս ուղիների վրա։

Հայ վաճառականները արտակարգ նպաստավոր հող գտան իրենց գործունեության համար Մոլդավիայում և գործուն մասնակցություն ունեցան երկրի ինչպես ներքին, այնպես էլ արտաքին առևտրի ասպարեզում։ Մոլդավական իշխանները, որոնք շահագրգռված էին զարկ տալու տնտեսության զարգացմանը, ամեն կերպ աշխատել են հովանավորել հայ վաճառականներին։ Հայտնի է, օրինակ, որ Ալեքսանդր Բարի մականունով վոյեվոդը (1400—1432) լեհաստանից Մոլդավիա հրավիրեց հայ և գերմանացի վաճառականների։ Նա 1407 թվականի հոկտեմբերի 8-ի հրովարտակով ազատեց մաքսից առևտրականներին և մի շարք արտոնություններ շնորհեց նրանց[3]։ Հայ վաճառականներին թույլ տրվեց բնակություն հաստատելու Մոլդավիայում մի պայմանով, որ նրանք «պանդոկ չպահեն, գարեջուր և մեղրաջուր չպատրաստեն, մսի կրպակ և ճաշարան բաց չանեն և հաց չվաճառեն»[4]։ Ըստ տեղեկությունների, Ալեքսանդր Բարու հրավերով Մոլդավիա եկավ 3000 տուն հայ գաղթականություն՝ ավելի քան 15000 հոգի, որոնք բնակություն հաստատեցին Մոլդավիայի քաղաքներում[5]։ Միայն Սուչավան 15-րդ դարում ուներ երեք հազար հայ բնակչություն։

1 Լ. Բաբայան, Հայերը Մոլդավիայում և Բուքովինիայում, էջ 160։
2 ՊԲՀ, 1962, № 1, էջ 174։
3 Լ. Բաբայան, Հայերը Մոլդավիայում և Բուքովինիայում, էջ 45։
4 История Молдавии, т. I, Кишинев, 1951, էջ 117։
5 Դ. Տան, Արևելյան հայք ի Պուքովինիա, էջ 10։

Ալեքսանդր Բարուց հետո, մոլդավական իշխաններից հայ առևտրականներին մեծ արտոնություն շնորհեց և հովանավորություն ցույց տվեց Շտեֆան Միմը (1475—1504)։ Նրա օրոք հայ բնակչությունն ավելի բազմացավ Մոլդավիայում։ Հայերը, որպես Մոլդավիայի օգտակար քաղաքացիներ, հովանավորվեցին մոլդավական իշխաններ Բոգդան 3-րդի (1504—1517), Պետրու Ռարեշի (1527—1538, 1541—1546) և ուրիշների կողմից։

Հայ վաճառականների խաղացած դերը Ռումինիայում միջին դարերում նշված է ռումինացի մի շարք պատմաբանների և տնտեսագետների կողմից։ Այսպես, տնտեսագետ պրոֆ. Ե. Անջելեսկոն իր «Ռումինացիների տնտեսության պատմությունը» խրեստոմատիայի մեջ, խոսելով հայերի ունեցած դերի մասին Ռումինիայի տնտեսական կյանքի զարգացման բնագավառում, գրում է. «Եթե ռումինացիներին հաջողվեց իրենց հին առևտրական ծաղկման շրջանում ճանաչել Սև ծովի բոլոր եզերքները, անգամ թափանցել Միջերկրականը՝ նեղուցների ճանապարհով, ապա այդ չպետք է վերագրել իտալացիներին, այլ Արևելքը լավ ճանաչող ուրիշ առևտրականների՝ հայերի։ Նրանք մեծ դեր խաղացին ռումինական առևտրի սկզբնավորման և քաղաքային բնակչության կազմության մեջ»[1]։

Մոլդավիայի հայ գաղթավայրերում զգալի թիվ են կազմել նաև հայ արհեստավորները՝ ոսկերիչները, կերպասագործները, երկաթագործները, որմնադիրները և այլն. նրանք, ինչպես պարզվում է, ունեցել են արհեստակցական միություններ։ Մեզ է հասել Սուչավայի հայ արհեստավորության ցեխային կազմակերպության կանոնադրությունը 1673 թվականի ընդօրինակությամբ, որն այժմ պահվում է Բուխարեստում Ռումինական ակադեմիայի գրադարանում[2]։

Հայ արհեստակցական այդ միությունները, կամ ինչպես նրանք կոչվում էին Ռումինիայում՝ «բրեսլա»-ները, համախմբում էին իրենց մեջ բոլոր հայ արհեստավորներին։ Անկարելի էր որևէ արհեստավորի խանութ բաց անել կամ որևէ արհեստով զբաղվել, եթե նա կազմակերպության անդամ չէր։ Ըստ որում, «բրեսլա»-ների մեջ մտնում էին նաև առևտրականները[3]։ «Բրես-

1 Անջելեսկու, Ռումիններու տնտեսական պատմությունը (օգտվել ենք Պիրունու աշխատությունից)։
2 Վ. Բենեշիանու, ՊԲՀ, 1962, № 1։
3 Ս. Քոլանջյան, Բուխարեստի հայոց անցյալն ու ներկան (տե՛ս «Էջմիածին», 1950 թ., № 7—8, էջ 61—64)։

լա»-ները ունեին նաև հասարակական պարտականություն. նրանք նյութական օգնություն էին ցույց տալիս համայնքին, եթե դրա կարիքը զգացվում էր։

Ռումինիայի հայաշատ գաղթօջախներն ունեցել են նաև զինված ջոկատներ, որոնք պաշտպանել են իրենց համայնքի շահերը և, հարկավոր դեպքում, նաև միացել ռումինացիներին՝ կռվելու թուրքական հարստահարիչների դեմ։ Ռումինիայի հայկական զինված այդ ջոկատների մասին թանկարժեք մի տեղեկություն հաղորդում է մեզ Սիմեոն Լեհացին։ Իր «Ուղեգրության» մեջ խոսելով Մանքերմանի (Ակկերմանի) հայ գաղթօջախի երբեմնի ունեցած փառավոր անցյալի մասին, այդ կապակցությամբ նշում է, որ «Եւ մեծն Մանքէրման ասեն թէ յորժամ սէֆէր (պատերազմ— Ա. Ա.) լինէր, հինգ հարիւր հոգի կելէր Հայոց ի պատերազմ, եարար պահատուրնի (սրտոտ քաջեր— Ա. Ա.)»[1]։

Մոլդավիայի հայ գաղթականական մի քանի օջախներ՝ Սուչավան, Սիրեթը, Վասլույը և Բերլադը ունեցել են իրենց սեփական ինքնավարությունը՝ սեփական թաղապետությունը, դատարանը և այլ կազմակերպություններ։ Ըստ ռումինական աղբյուրների տեղեկության, նշված քաղաքների հայ համայնքներին այդ ինքնավարության իրավունքը շնորհել է Ալեքսանդր Բարի վոեվոդը 15-րդ դարի սկզբներում։ Հայերը նշված քաղաքներում ունեցել են իրենց սեփական քաղաքապետական խորհուրդը՝ «Պըրգարը» (părgari), կազմված 12 հոգուց բաղկացած երդվյալներից, որոնց ընտրում էր ժողովուրդը։ Քաղաքային խորհուրդը ղեկավարում էր քաղաքապետը, որը կոչվում էր «Շոլտուզ» (scholtus)[2]։ Դատավորները կոչվում էին «վույթ»։ 15-րդ դարի մի քանի վավերագրերում տեղեկություն կա Սուչավայի Սերգիս (այսինքն՝ Սարգիս) անունով վույթի մասին։ 16-րդ դարում վույթի հիշատակություն ունի Մինաս Թոխաթեցին իր «Ողբ»-ի մեջ։ Նա պատմում է, որ մոլդավական Ստեփան վոյեվոդը, երբ ցանկացավ ազդարարել իր հրամանը՝ հայերին հունադավանության ընդունելու համար, կարգադրեց.

«...Զհայոց ազգը ժողովեսցին
Զվույթ, փըրկար, զերիցանի»[3],

[1] Սիմէոն Լեհացի, Ուղեգրութիւն, էջ 347։
[2] Դ. Տան, Արեւելյան հայք ի Պուքովինիա, էջ 13։
[3] Մինաս Թոխաթեցի, Ողբ (տե՛ս «Պ. քահ. Մամիկոնյանի «Ռումինահայ ներկայն և ապագայն», էջ 59)։

Այստեղ «երիցանի» բառը կարող է ունենալ նաև արհեստագործական միության ղեկավարի նշանակություն։ Մոլդավիայի տնտեսական կյանքին նվիրված փաստաթղթերի մի ժողովածուում, որը հրատարակվել է Քիշնևում 1961 թ. գետեղված է Խոտինի Նիկիտա վոյեվոդի 1615 թվականի հուլիսի 3-ին իր աղջկանն ու փեսային տված կալվածագիրը, որի մեջ անուններով հիշված 12 պըրգարներից երկուսը հայեր են[1]։ Ավելի ուշ վավերագրերում տեղեկություն կա Սուչավայի հայ քաղաքագլուխ Կյուրեղի մասին։

Մոլդավիայի այն քաղաքներում, ուր հայ բնակչությունը թվով փոքր էր և ինքնավարության իրավունք ստանալ չէր կարող, ապա այդ քաղաքի հայերն ընտրում էին իրենց ներկայացուցիչները տվյալ քաղաքի քաղաքապետության և դատարանի մեջ։

Ռումինիայի հայ աշխատավորությունը անհոգ և անկարոտ կյանք չի ունեցել. նա տեղացի աշխատավորության հետ հավասար չափով բաժանել է տեղի ֆեոդալական իշխող խավերի ծանր լուծը։ Մոլդավական վասալ իշխանները թուրքական սուվերեն իշխանավորների անհագուրդ կամայականությունները բավարարելու համար ծանրացնում էին ժողովրդի վրա դրված հարկային լուծը։ Ժողովրդից պահանջվող հարկը առանձնապես ծանրացավ XVII դարում։ Ռումինիայի հոգևոր առաջնորդ Ղազար վարդապետը 1624 թվականին իր գրած ձեռագիր հիշատակարանում գանգատվում է, տան առ մեզ կու գային, չունէաք խաղաղութիւն»[2]։

Ռումինահայ բնակչությունը, սակայն, տուժել է ոչ միայն ֆեոդալական ներքին ճնշումներից, այլև թուրք կողոպտիչների ասպատակություններից։ Այսպես, օրինակ, Սրապիոն գրիչը պատմում է, որ թուրք զինվորները երբ 1630 թվականին պարտություն կրեցին Վիեննայի տակ լեհական բանակի կողմից և ետ նահանջելով անցնում էին Մոլդավիայով, գազազած «բազում քաղաքս և գեօղս տապալեցին, և զբազումս գերեցուցին»[3]։

Մոլդավիայի բնակչությունը, այդ թվում նաև այնտեղ ապրող հայ բնակչությունը սակայն տուժել է լեհ-թուրքական ընդհարումների հետևանքով։ Մինաս Թոխաթեցին 1676 թվականին գրած իր հիշատակարանում գանգատվում է, որ «Տաճիկն լեհաց երկիրն կաւերէր ամառն, ձմեռն լեհն գայր Պուղտանաց երկիրն

[1] «Молдавия в эпоху феодализма», т. I, Кишинев, 1961, էջ 286, 287։
[2] Ալիշան, Կամենից, էջ 177։
[3] Նույն տեղը, էջ 182։

կաւերէր[1]։ Թոխաթեցին ինքը երկու անգամ ենթարկվել է կողոպուտի, և վերջին կողոպուտից հետո, պատմում է նա. «մերկիկ գլխիբաց մորթի մի քամակս կապեալ, փախեա ելա երկիրս Մաճառաց»[2]։

Մոլդավիայի հայերն ունեին կրոնական լիակատար ազատություն։ XIV դարում Ռումինիայի հայ լուսավորչական համայնքները ենթարկվում էին Լվովի թեմական առաջնորդին։ Ըստ Ստեփանոս Ռոշքայի տեղեկության, Լեոպոլսի Հովհաննես եպիսկոպոսը հանդիսացել է ո՛չ միայն Լեհաստանի, այլև Մոլդավիայի հոգևոր առաջնորդը։ Այդ առթիվ նա մատնացույց է անում Կամենեց քաղաքի Ս. Նիկողայոս եկեղեցու կառուցման առթիվ 1396 թվականին տրված կոնդակը, որը նա ունեցել է ձեռքի տակ։ Այդ վավերագրում Հովհաննես եպիսկոպոսը հիշված է եղել որպես «արքեպիսկոպոս Ռուզաց և Օլախաց»[2], այսինքն՝ Ռուսաստանի և Մոլդավիայի։

XV դարում երբ հայ գաղթօջախները Մոլդավիայում այնքան մեծացան, որ դժվար էր Լվովի եպիսկոպոսության համար այդքան ընդարձակածավալ մի թեմ ղեկավարել, Ռումինիայի թեմը բաժանեցին Լեհաստանի թեմից և ինքնուրույն թեմ ստեղծեցին։ Ռումինիայի հոգևոր թեմի կենտրոնը սկզբում գտնվում էր Սուչավայում, իսկ հետագայում, 1565 թվականից, երբ Յաշը դարձավ Մոլդավիայի մայրաքաղաք, տեղափոխվեց Յաշ։ Սուչավայում և Յաշում գրված մի քանի ձեռագրեր են հասել մեզ, որոնց հիշատակարաններում հիշվում է տեղի առաջնորդի անունը։ Օրինակ, ձեռագրերից մեկի հիշատակարանում կարդում ենք. «Գրեցաւ յերկիրս Պուղտանաց ի քաղաքս Սիջով... յառաջնորդութեանն յայսմ նահանգիս տէր Մինաս Վարդապետի»[3]։ Մի այլ ձեռագրի հիշատակարանում գրիչը հայտնում է, որ ձեռագիրը գրված է «ի թուականութեանս Հայկազան սեռիս տումարի ՈՂԲ-ին... առաջնորդութեանն տէր Անդրեաս արհեպիսկոպոսին Պուղտանաց երկրի և թագաւորութեան Վասիլ Բարեպաշտ վոյևոտին մայրաքաղաքն Եաշ»[4]։

Սիմեոն Լեհացին, որ իր ճանապարհորդության ընթացքում կանգ է առել Սուչավայում, հետևյալ ուշագրավ տեղեկություններն է հաղորդում տեղի հայ գաղթօջախի և Ռումինիայի հայոց հոգևոր առաջնորդի մասին. «Սէչով, որ է թախտ պուղտանաց պարոնաց և աթոռ Հայրապետի Հայոց և Օլախաց... Եւ կայր յայս քաղաքս երեք չորս հարիւր տուն հայի. երեք քարաշէն եկեղեցի և երկու վանք վիմաշէն քաղաքէն ի դուրս, յոյժ գեղեցիկ և պատուական... Եւ էր անդ եպիսկոպոս մի երկրցի՝ Յովհաննէս անուն, և վարդապետ Հիզանցի՝ Մկրտիչ անուն, և վարդապետ մի այլ Մեսրոբ անուն։ Եւ ժողովուրդ քաղաքին էր խիստ հիւրասէր, երկիւղածք աստուածոյ և մարդասէրք»[1]։ Լեհացին նաշում հիշում է 200 տուն հայ բնակչություն[2]։

Մոլդավիա եկող հայ գաղթականները մեծ չափով հովանավորվում էին տեղական իշխանությունների կողմից։ Մեզ հայտնի են մի շարք հրովարտակներ, որոնք տրվել են հայերին այս կամ այն Մոլդավիայի վոյեվոդի կողմից՝ արտոնություն շնորհելու մասին։ Հայերի նկատմամբ առանձնապես բարյացակամ դիրք է ունեցել Ալեքսանդր Բարին, որի մասին մենք առջևում խոսել ենք։ Մոլդավիայի հետագա իշխանությունների օրոք ևս հայերը, որպես օգտակար տարր, հովանավորվել են։ Ստեղծված այս պայմանները նպաստել են հայկական նոր գաղթականության համախմբվելուն Մոլդավիայում։ 16-րդ դարում հայ գաղթականությունն այստեղ բավականին մեծ թիվ է կազմել։ Մինաս Թոխաթեցին խոսելով 1551 թվականից առաջ Մոլդավիայում գոյություն ունեցող հայության մասին, հետևյալ տեղեկությունն է հաղորդում.

«Հիւսիսական կողմ աշխարհի,
Փոքրիկ երկիր կայ Օլախի,
Բազում հայք կար իւրեանց միջի,
Լաւ քրիստոնեայք և անուանի»[3]։

Ռումինիայի հայության համար, սակայն, արեգակը միշտ չէ, որ փայլել է. նրանք ունեցել են իրենց դժվարությունները և տառապանքները։ Ռումինահայերը մի քանի անգամ ենթարկվել են հալածանքների և ճնշումների։ Արդարամիտ լինելու համար պետք է ասել, որ նրանց հալածողները եղել են ոչ թե ռումինացի ժողովուրդը, այլ ռումինական հոգևոր և աշխարհիկ իշխանությունները։

Հայտնի է, օրինակ, որ 1526 թվականին Ստեփան Անագոյան իշխանը, երբ Վալախիայից ետ էր վերադառնում ավարով,

[1] Ալիշան, Կամենեց, էջ 197։
[2] Նույն տեղը։
[3] Պ. քահ. Մամիկոնյան, Հայերը Մոլդավիայում և Պուքովինայում, էջ 40։
[4] Նույն տեղը, էջ 41։

[1] Սիմէոն Լեհացի, Ուղեգրութիւն, էջ 4։
[2] Նույն տեղը, էջ 5։
[3] Ն. վ. Ակինյան, Հինգ պանդուխտ տաղասացներ, էջ 86։

Հունադավան բարձրաստիճան հոգևորականների սադրանքով քանդեց Վասլուի հայոց եկեղեցին և տեղի հայերին հալածեց։

Մոլդավիայի հայերի դեմ առանձնապես կատաղի հալածանք է սկսել Ստեփան Ռարեշը (1551—1552)։ Այդ հալածանքի մասին է գրել Մինաս Թոխաթեցին իր նշանավոր «Ողբ»-ում։ Ըստ Թոխաթեցու տեղեկության, 1551 թվականի օգոստոսի 16-ին վոյեվոդն իր «պարոնների» հետ, որոնց սրտում ըստ հայ տաղերգուի, «շատոնց ոխ կայր», հավաքվում են ի միասին և որոշում հայերին ստիպել հունադավանություն ընդունել։ Նրանք կանչում են Սուչավիր «պարոնների» հետ, որոնց սրտում ըստ հայ տաղերգուի, «շատերի և հայտարարում թե՝

«Այդ ի՞նչ հաւատ է որ կու պաշտէք,
Ամէն ազգէ դուք ի դուրս էք,
Եկէք ամենքդ Օլախ եղէք»[1]։

Հայերը հրաժարվում են։ Վոյեվոդը զայրանում է և՝

«Չար հըրաման արար կըրկին,
Բերել եւտուր զթօփեր բերդին,
Սեչով քաղքին զեկեղեցին,
Մեծ մեծ թօփով աւերեցին»[2]։

Այս հալածանքի հետևանքով որոշ թվով հայեր թողնում են Ռումինիան և տեղափոխվում հարևան այլ երկրներ.

«Երկրոց երկիր շատոք անկան,
Քահանայք և աշխարհական,
Բազում եղբարք բաժանեցան,
Ղարիպութիւն վըտարեցան»[3]։

Երեմիա Չելեբին պատմելով Մոլդավիայում տեղի ունեցող դավանափոխության բռնությունները՝ նաչատուր անունով մեկի լեզուն, քիթը, ձեռքերը կտրելը և աչքերը հանելը, Պալքո անունով մի ուրիշի ճակատի մորթին քերելը և այլ վայրագություններ, նշում է, որ այդ անող դահիճները մոլդավական «չեպիսկոպոսն» էր և «Պիղծ թագաւոր Ստեփանոսը»[4]։

Ստեփանոսի սպանությունից հետո հայերի դրությունը փոքրինչ լավացավ, հալածանքը դադարեց։ Սակայն այդ վիճակը երկար չտևեց. մոլդավահայերի նկատմամբ նոր հալածանք սկսվեց 1560 թվականին։ Հովհաննես Ավագերեցն իր Տարեգրքի մեջ շարադրելով տվյալ թվականին տեղի ունեցող պատմական իրադարձությունները, գանգատվում է ժամանակակից մոլդավական վոյեվոդ Պետր Ալեքսանդրից. «Սա,— գրում է նա,— հայ ազգին գլուխն քաղում փորձանս չարոյց, զոր ոչ է արժան խօսել և կամ լսել ումեք»[1]։

Եվ, վերջապես, ռումինահայերը մի նոր հալածանքի ենթարկվեցին Գեորգե Դուքա վոյեվոդի կողմից (1668—1684)։ Վերջինս ազգությամբ ալբանացի էր, բռնակալ, արյունռուշտ մի անձնավորություն։ Գեորգե Դուքայի հալածանքի հետևանքով էր, որ հայերը աջակցություն ցույց տվեցին Հնքուլ բոյարի ապստամբությանը, որին հայկական ծագում է վերագրվում։ Այս ապստամբությունը սակայն ձախողվեց և հայերի դեմ հալածանքն այնպիսի սոսկալի չափերի հասավ, որ 1672 թվականին ռումինահայ մի մեծ զանգված, թեմի առաջնորդ Մինաս վարդապետի առաջնորդությամբ, հարկադրված եղավ գաղթել Ռումինիայից։ Հարևան Լեհաստանում այդ ժամանակ մոլեգնում էր վատանուն Նիկոլ Թորոսովիչի կաթոլիկ ռեակցիան, ուստի գաղթականները նախընտրեցին Ռումինիայից անցնել Տրանսիլվանիա և հաստատվել այնտեղ։ Այս մասին կխոսվի հաջորդ էջերում։

Ռումինահայերի դրությունը չբարելավվեց նաև XVIII—XIX դարերում, երբ Ռումինիայի վոյեվոդության իրավունքն անցնում է Պոլսի հույն Ֆեներցի վաճառականների ձեռքը, որոնք Թուրքիայից կապալով գնում էին Ռումինիայի վոյեվոդության իրավունքը։ Հայ առևտրականները մրցման մեջ էին գտնվում հունական առևտրականների հետ, ուստի բնական է, որ վարչական իշխանության տեր դառնալով, նրանք պետք է աշխատեին և աշխատել են ոչընչացնել, հրապարակից դուրս անել իրենց հայ մրցակիցներին։

Ֆեներցի այս վոյեվոդները 1785 թվականին արգելեցին հայերին հողեր գնել և հողեր ունենալ։ Մոլդավիայի հայերը, ինչպես տեսանք, մեծ չափով կապված էին հողի հետ և զբաղվում էին երկրագործությամբ և անասնապահությամբ։ Այդ որոշումով նրանք զրկվում են իրենց հիմնական զբաղմունքից։ Այդ մեծ հարված էր նաև հայ վաճառականներին, որովհետև մոլդավահայ առևտրականների վաճառքի հանվող ապրանքներից մեկը արջառի առուվաճառքն էր. նրանք գնում էին արջառներ, իրենց ոմեցած արոտա-

[1] Ն. Վ. Ակինյան, Հինգ պանդուխտ տաղասացներ, էջ 91։
[2] Նույն տեղը, էջ 88։
[3] Նույն տեղը, էջ 99։
[4] Ալիշան, Կամենից, էջ 18—19։

[1] Ալիշան, Կամենից, էջ 20։

վայրերում պահում, գիրացնում, ապա նախիրներով վաճառքի հանում։ Հող ունենալու իրավունքից զրկվելով, հայ վաճառականները, բնական է, որ զրկվում էին այդ շահաբեր ապրանքի վաճառքի իրավասությունից։

Անհրաժեշտ է նշել, որ ռումինահայերը գործուն մասնակցություն են ունեցել նաև Ռումինիայի՝ իրենց երկրորդ հայրենիքի հասարակական-քաղաքական կյանքում։ Հայտնի է, որ մոլդավական իշխանական աթոռին նստել են մի քանի հայ ներկայացուցիչներ։

Հայ կնոջ զավակ է եղել Իոն-Չել Քումփլիքը՝ Հովհաննես Անգուե մականունով վոյեվոդը, որը ռումինական մատենագրության մեջ հայտնի է նաև Իոն Արմեանուլ (Հովհաննես Հայ) մականունով։ Նա երկիրը կառավարել է երեք տարի (1572—1574) քաղաքական խառնակ մի շրջանում։ Հովհաննեսը «անգուե» մականունն է ստացել այն պատճառով, որ նա գլխատել է մի շարք ըմբոստ բոյարների, որոնք խանգարելիս են եղել իր ձեռնարկումները՝ կազմակերպելու ռումինացի հայրենասեր շրջանների պայքարը ընդդեմ թուրքական հարստահարիչների։ Թուրքիան Հովհաննեսից, որպես իր վասալ իշխանավորի, պահանջել էր կրկնապատկել ժողովրդից գանձվող հարկերը, Հովհաննեսը հրաժարվել էր այդ անել և կոչ էր արել բնակչությանը համախմբվելու՝ թուրքական արյունոտ լուծը դեն նետելու համար։ Ռումինացի պատմիչները բացառիկ գովեստով են խոսում Հովհաննես Արմեանուլի մասին՝ որպես ազատագրական շարժումների կազմակերպչի և գլխավորողի[1]։ Թուրքական կառավարությունը իր կամքը ռումինացիներին թելադրելու համար կռիվ է հայտարարել և զորք մտցրել Ռումինիա։ Արմեանուլը փոքրաթիվ և անկազմակերպ զորաբանակով փորձել է դիմադրել թուրքերին։ Ռումինական զինվորները կռվել են արտակարգ հերոսությամբ։ Այդ վճռական պահին ռումինացի հայրենասերներին օգնության են եկել Զապորոժեի կազակները, բայց թուրքական մեծաթիվ և լավ զինված բանակի առջև ռումինացիները հարկադրված են եղել տեղի տալ, և Հովհաննես Արմեանուլը գերի է ընկել։ Թուրք հրամանատարությունը անգթաբար է վարվել Հովհաննես Արմեանուլի հետ. նրան նախ գլխատել են, իսկ հետո մարմինը կապելով երկու ուղտի պոչերից՝ քշել են տարբեր ուղղություններով և դիակը կտոր-կտոր արել։

[1] Քսենոփոլ Istoria Bamanilor, IV, էջ 124—126 (օգտվե՝ ենք Սիրունուց)։

Հովհաննես Արմեանուլից հետո, կարճ ժամանակով, Վալախիայի վոյեվոդ է եղել նրա եղբայր Կարապետը, իսկ նրանից հետո՝ մյուս երկու եղբայրները՝ Կոստանդինը և Ալեքսանդրը ու վերջինիս որդի Պետրոսը (1582—1591)[1]։

XVII դարում մոլդավական գահի վրա բազմել են երկու հայ վոյեվոդներ ևս՝ Գասպարը և Ահարոնը։ Այդ մասին Ինճիճյանը հետևյալ տեղեկությունն է տալիս մեզ. «Յառաջին պէչս անդ նըստաւ և երկու ամանք յաղգէս Հայոց, յորոց մին կոչի Գասպար, որ նստաւ ի Պուղտան (Մոլդավիա)։ Կին նորա շինեաց զԱստուածածին եկեղեցին, որ ի Եաշ, երկրորդն կոչի Ահրոն, որ և հռոմեացաւ (այսինքն՝ հռոմեադավան դարձավ— Ա. Ա.)։ Սա շինեաց զվանս Յունաց»[2]։

Ռումինահայերը գործուն մասնակցություն են ունեցել նաև ռումինական արքունիքի դիվանագիտության մեջ։ XV դարի վերջերին Վալախիայի Վետզաուլ իշխանի մոտ դիվանագետի պաշտոնով աշխատել է Պետր Գրիգորիչը կամ ռումինական մատենագրության մեջ ավելի ծանոթ՝ Արմեն Պետրը, որը եղել է իր ժամանակի ճանաչված գիտնականներից։ Նրանից մնացել են մի շարք նամակներ։ Ըստ տեղեկությունների, Արմեն Պետրը կազմել է նաև ժամանակագրություն, որը դժբախտաբար կորել է. այդ ժամանակագրությունից օգտվել է մի հունգարացի պատմիչ, որից և հնարավոր է լինում օգտվել։

Մոլդավիայում Պետրու Ռարեշի ժամանակ (1527—1564)՝ ընդմիջումով, աչքի ընկնող դիվանագետներից է հանդիսացել Վարդիկ անունով մի հայ, որը բարձրացել է մինչև բոյարության աստիճանի։ Նա մոլդավական արքունիքում աշխատել է թարգմանիչի պաշտոնով։ Նրա մահվանից հետո այդ պաշտոնը զբաղեցրել է նրա որդին՝ Յուրաշկո Վարդիկովիչը։

Եվ, վերջապես, Ռումինիայում խոշոր դիվանագետներից է հանդիսացել Մանուկ բեյը, որը աչքի ընկնող դեր է ունեցել ռումին-թուրքական և ռումին-ռուսական հարաբերությունների ժամանակ։ Այս մասին կխոսենք մյուս՝ հայ գաղթավայրերի պատմության նոր շրջանի հատորում։

[1] Ս. Քոլանջյան, Բուխարեստի հայոց անցյալն ու ներկան («Էջմիածին», 1950 թ., № 1, էջ 59)։

[2] Ղ. Ինճիճյան, Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի, VI, էջ 192։

ՀԱՅԵՐԸ ՀՈՒՆԳԱՐԻԱՅՈՒՄ

Տրանսիլվանիան անցյալում տարբեր պետությունների սահմանների մեջ է մտել։ Սկսած Հունգարական Ստեփանոս թագավորի ժամանակից (1001—1038) մինչև 1526 թվականը նա Հունգարիայի մասն է կազմել, 1526 թվականից մինչև 1848 թվականը՝ ինքնավար պետություն է դարձել, 1848 թվականից մինչև 1921 թվականը՝ նորից կցվել է Հունգարիային, իսկ 1921 թվականին՝ Տրիանոնի խաղաղության դաշինքով, հանձնվել է Ռումինիային։

Հայ գաղթականությունը Հունգարիա է եկել շատ վաղուց, ավելի վաղ, քան Ռումինիայի որևէ վայրում։ Հունգար ժամանակագիրներ Տորուչինի և Սիմոնի մոտ տեղեկություններ կան այն մասին, որ Կեյզա դուքսի (972—995), Ստեփանոս թագավորի (1001—1038) և նրան հաջորդող թագավորների օրոք բավականին թվով հայեր էին ապրում Հունգարիայում[1]։ Ենթադրվում է, որ հայ գաղթականությունը Տրանսիլվանիա պետք է եկած լինի բուզղար բնակչության հյուսիս շարժվող մի հոսանքի հետ, որի մի թևը հաստատվել է հյուսիսային Մունթենիայում, Կարպատյան լեռնաշղթայի փեշերին, իսկ մյուսն անցել և բնակություն է հաստատել Տրանսիլվանիայում։

Ռումին պատմաբան Վլադ Բենեցիանուն գտնում է, որ հայ գաղթականության այդ առաջնակը Տրանսիլվանիա պետք է շարժված լինի Բարաշովայի առևտրական ճանապարհով, որը միացնում էր Բարաշովը Ջուրջովայի հետ՝ անցնելով Տիրգովիշտից, ուր ժամանակին հայկական գաղթօջախ է եղել։

Տրանսիլվանիայի հայկական այս հնագույն գաղթականության ճակատագրի մասին դժբախտաբար շատ քիչ բան գիտենք։ Հունգար ժամանակագիրների տեղեկություններից գիտենք միայն, որ Ատրիգոնիա (Հունգարական Esrtergom) քաղաքի մոտ հաստատված վայրը կոչվել է «Հայկական բնակավայր» («terra Armenorum»)։

[1] Ch. Lukacsi, Historia Armenorum Transilvaniae, Viennae, 1859, էջ 52։

Հունգարական իշխանությունները լավ կարծիք ունենալով հայերի մասին, սիրով են ընդունել և ապաստան տվել հայ գաղթականներին։ Բերենք մի օրինակ. 1217 թվականին ձեռնարկած խաչակրաց անհաջող արշավանքից հետո, երբ Անդրեաս թագավորը եղավ Կիլիկիայում, մոտիկից ծանոթացավ այնտեղի հայության հետ։ Նա ցանկացավ բարեկամություն հաստատել հայկական արքունիքի հետ. նա իր որդուն նշանեց Լևոնի աղջկա՝ Զաբելի հետ, և Օնորիոս պապն էլ օրհնեց այս նշանադրությունը, սակայն այդ ամուսնությունը չկայացավ, որովհետև Լևոնը մահացավ և հայ ազնվականները հայկական գահը թափուր չթողնելու համար Զաբելին ամուսնացրին Անտիոքի իշխան Ֆիլիպի հետ[1]։

Հունգարական աղբյուրները տեղեկություններ են հաղորդում հունգարական իշխանությունների՝ հայ գաղթականությանը տված մի շարք առանձնաշնորհումների մասին։ Այդպիսի առանձնաշնորհում Հունգարիայի հայ գաղթականությանը տվել է, օրինակ, Բելա թագավորը 1243 թվականին։

Ինչպես երևում է, Տրանսիլվանիա եկած հայ գաղթականության այս առաջին խումբը շատ մեծ չի եղել, ուստի հայրենակիցներից թարմ, նոր հոսանք չգալու պատճառով չի կարողացել պահել իր գոյությունը և ասիմիլյացիայի է ենթարկվել տեղացիների հետ։ Հունգար ժամանակագիրները հայտնում են, որ XIII դարի վերջում հայ գաղթականները «այլ և այլ ամուսնությունների հետևանքով, խառնվեցին հունգարացիների հետ»[2]։ Հայտնի է, որ հունգարական Լատիսլավ IV թագավորը հայ բնակչության ձուլումից հետո, 1281 թվականին «Հայկական բնակավայր»-ը նվիրել է Գրանի Ս. Աննայի Ավգուստինյան միաբանությանը[3]։

Պրոֆ. Բենեցիանուն հայկական անհետացող այդ առաջին գաղթականության հետ է կապում Տրանսիլվանիայի մի շարք տեղանունների առաջացումը. օրինակ, «Արմենի» գյուղը՝ Սիբիուի շրջանում, «Արմենիշ» գյուղը՝ Կարանսեբեշի շրջանում, «Արմենիշ» գյուղը՝ Սեն Ջորջի շրջանում, «Դյալու Արմենուլույ» գյուղը՝ Տոպլիցիայի շրջանում, «Օրմենիյաշ» (Ormenyés) գյուղը՝ Ռուպեայի և Սիրգիշոարայի շրջաններում և այլն[4]։

[1] Ա. Ալպոյաճյան, Պատմություն հայ գաղթականության, հ. II, էջ 276։
[2] Ch. Lukacsi, Historia Armenorum Transilvaniae, էջ 12։
[3] Լ. Բարայան, Հայերը Մոլդավիայում և Բուքովինիայում, էջ 31։
[4] В. Бэнэциану, Армянские колонии в Румынии (ՊՔՀ, 1962, № 1, էջ 179)։

Սակայն այս ձուլումից հետո ևս, XIV դարում, հայ գաղթականության որոշ բեկորներ դեռևս պահպանել էին իրենց գոյությունը։ Հունգարական աղբյուրներում Թալմաչի գավառում 1355 թվականին հիշվում է հայ կաթոլիկ եպիսկոպոս, որը բավականին մեծ համայնք է ունեցել[1]։ Պատմական տեղեկություններ կան, որ այդ նույն դարում փոքրաթիվ հայ համայնքներ են եղել Բրաշով և Սիբիու քաղաքներում[2]։ 1453 թվականին Միկուշ անունով մի կաթոլիկ հոգևորականի կոնդակում հիշվում է հայ եպիսկոպոսի մասին, որի հայատառ կնիքը գտնվել է և այժմ պահվում է Հունգարական թանգարանում[3]։ Եվ վերջապես, տեղեկություններ կան Ալմենուս եկեղեցուս անունով հայ թաղապետի, Ստեփան անունով հայ պալատական դատավորի մասին և այլն։ Այս հիշատակությունների մեծ մասը, իհարկե, առանձին անհատներին է վերաբերում և ոչ ամբողջական գաղթօջախների։

Հայ գաղթականության ամենամեծ խումբը Տրանսիլվանիա է եկել հարևան Մոլդավիայից։ Մոլդավիայի աշխարհիկ և հոգևոր իշխանությունները, ինչպես տեսանք, առաջնորդվելով շահադիտական նեղ հաշիվներով փորձել են ստիպել իրենց երկրում ապրող հայերին հունադավանություն ընդունել, ահա այդ պատճառով մոլդավահայերի ստվար մի հատված գաղթել է Տրանսիլվանիա և բնակություն հաստատել այստեղ։

Հայ գաղթականության ստվար մի խումբ Մոլդավիայից Տրանսիլվանիա է գաղթել 1654 թվականին։ Այս գաղթականությունը բնակություն է հաստատել գլխավորապես Ջուրջովում և Ջիք Սիբվիզում։ Այս խմբի ղեկավարներ են հիշվում Մարտիրոս Գանդրան և իր եղբայր Ազբեյը։

Գաղթականության մյուս ավելի մեծ խումբը Տրանսիլվանիա է եկել 1672 թվականին Միքայել Աբաֆ 1-ին իշխանի օրոք Մոլդավիայի թեմի հոգևոր առաջնորդ Մինաս եպիսկոպոսի գլխավորությամբ, որը հալածանքներից ազատվելու համար, կաթոլիկություն է ընդունել[4]։ Հայ գաղթականությունը հաստատվել է Կերլայում, Կեյկեյոյում, Պաշտպալովում, Սեբվիզում, Բիստրիցում, Ջիք-Շոմլեոյում, Կանդայում, Բեղլեում և այլ վայրերում[5]։

Հունգարիայում հայ գաղթականության դրությունը սկզբնա-

[1] Դ. Տան, Արևելյան Հայք ի Պուքովինիա, էջ 5։

[2] Ֆելիքս Ավետիք, Հայերը Հունգարիո մէջ («Բազմավէպ», 1947 թ., էջ 236)։

[3] Հ. Ս. Ռշտունի, Ակնարկ մը Հունգարիո հայոց անցյալի վրա («Արևմուտք», 1947 թ., մարտի 23)։

[4] Լ. Բաբայան, Հայերը Մոլդավիայում և Բուքովինիայում, էջ 81։

[5] Ch. Lukacsi, Hist. Armenorum Transilvaniae, էջ 18։

կան շրջանում ինչպես երևում է, շատ գովական չի եղել, մանավանդ՝ առևտրականների, որոնք դեռ լավ չէին տիրապետում հունգարական լեզվին ու սովորություններին։ Այդ երևում է Աբաֆի իշխանի 1689 թվականի սեպտեմբերի մեկի հրովարտակից, որով դատապարտում է բոլոր նրանց, ովքեր անիրավաբար պարտք չուննեցող հայերին պարտատու են դարձնում, դրամ շորթում նրանցից, իսկ հակառակվելու դեպքում՝ պատժում, բանտարկում։ Հրովարտակում ասված է, որ՝ «ոչ ոք չհամարձակվի այսուհետև հայոց ազգի մեկն ու մեկին դիպչել՝ ո՛չ անձնավորությանը և ո՛չ ստացվածքին, բացառությամբ նրանցից, ովքեր իրապես պարտական են։ Ոչ ոք իրավունք չունի բռնել, բռնել տալ կամ բանտարկել։ Ոչ ոք ամենևին չհանդգնի նրանց որևէ կերպով անհանգստացնել և իրենց անձին վնաս հասցնել»[1]։ (Բերում ենք արևելահայերենով)։

Տրանսիլվանիայի հայերի նկատմամբ Աբաֆ 1-ինի սիրաշահող քաղաքականությունը շարունակեց նաև Աբաֆ 2-րդը, որն իր 1696 թվականի փետրվարի 7-ի հրովարտակով լիակատար ազատություն շնորհեց Պաշտպալովում ապրող հայությանը։ Նրա հրովարտակը, որ բաղկացած է քսան կետերից, կարևոր են հետևյալները։

Ա. Հայ գաղթականությունը Պաշտպալովի կալվածքներում ազատապես կարող է ապրել։

Բ. Հայերն իրավունք ունեն իրենց միջից ընտրել իրենց դատավորը, ունենալ իրենց տեղական իշխանությունը, վճիռներ կայացնել և կարգադրություններ անել։

Գ. Հայ գաղթականներն օգտվում են կրոնական կատարյալ ազատությամբ, կարող են հետևել այն դավանանքին, որին նրանք ցանկանում են։

Դ. Աբաֆ 1-ինը հավաստիացնում է հայերին, որ «եթե վրշտացում ունենան և կամ եթե մեկը բռնություն ուզենա անել արգարացի բանների մեջ, մենք միշտ իրենց հետ ենք, իրենց մեր պաշտոնյաներով կպաշտպանենք և պաշտպանել կտանք»[2]։

Աբաֆ 2-րդից հետո, ինչպես հայտնի է, Տրանսիլվանիան ընկավ Ավստրիական Հաբսբուրգների կայսրության իշխանության տակ։ Հայերի ժամանակավոր ստեղծված բարեկեցիկ կյանքը նորից խախտվեց։ Հայ գաղթականները պատշաճ ձևով գնահատելով հունգար ժողովրդի իրենց ցույց տված բարյացակամ վերաբեր-

[1] Գ. վ. Գովրիկյան, Հայք յեղիսաբեթուպոլիս Տրանսիլվանիո, էջ 8։

[2] Նույն տեղը, էջ 12։

մունքը, միացան հունգարներին և պայքարեցին Հաբսբուրգյան կայսրության ճնշումների դեմ։

Հայերի իրավական վիճակը բավականին փոխվեց Տրանսիլվանիայում. Հաբսբուրգյան իշխանությունները հայերի նկատմամբ վարեցին նրանց իրավունքները սահմանափակելու քաղաքականություն։ Նրանք աշխատեցին նաև ճնշումներ գործադրել հայերի նկատմամբ և պարտադրել կաթոլիկ դավանանքը։ Եվ, վերջապես, նրանք աշխատեցին Տրանսիլվանիայի հայերին հավաքել մի վայրում։

Հայկական գաղթավայրը փորձեց ընդդիմանալ Հաբսբուրգյան իշխանությունների վարած այս քաղաքականությանը՝ սպառնալով հեռանալ Տրանսիլվանիայից։ Տրանսիլվանացի իշխանությունները հաշվի առնելով, որ հայերը զգալի դեր են կատարում ինչպես արդյունագործության, այնպես և արհեստագործության մեջ, հարկադրված եղան փոքր-ինչ զիջումներ անել։

Տրանսիլվանիայի հայ կաթոլիկների հոգևոր առաջնորդ Ավքսենտիոս Վրզրյան եպիսկոպոսը ցանկանալով հայերի վիճակը բարելավել, դիմում է Լեոպոլդ կայսրին և 1700 թվականին թույլտվություն ստանում Կեղևյի մոտերքում հայկական քաղաք կառուցելու և այնտեղ հավաքել Տրանսիլվանիայի հայությանը։ Ավստրիական իշխանությունները համաձայնվում են։ Հայերն իրենց նորահիմն քաղաքի վայրն են ընտրում Սամոշ գետի արևելյան կողմի դաշտավայրը։ Այստեղ են գալիս և հավաքվում հայերը Տրանսիլվանիայի բոլոր մասերից։ Ալեքսա անունով երկրաչափի գծված նախագծով սկսվում է քաղաքի կառուցումը։

Նորահիմն այս քաղաքը կոչվում է Արմենոպոլիս կամ Արմենիերշտատ (Հայաքաղաք)։ Ժամանակակից օտար հիշատակագիրներից մեկը, որը ականատես է եղել քաղաքի կառուցմանը, հետևյալ տեղեկությունն է հաղորդում. «Այնտեղ հավաքված հայ բնակիչները հաճոյարար այս տեղն այնպես բաժանեցին իրար մեջ, որ կանոնավորյալ և լավ կարգավորված քաղաքը, իր ընտիր և գեղեցիկ շենքերով, քառակուսի հրապարակով, ուղիղ փողոցներով բոլոր իշխանության նախանձը գրգռեց»[1]։

Հայ բնակչությունը քաղաքի կառավարչությունը կանոնավորելու նպատակով 1714 թվականի դեկտեմբերի 14-ին ընտրում է իր այսպես կոչված՝ «ծերերի խորհուրդը» և դատավորը։ Դատավոր է ընտրվում Խաչիկ Աբոկոբշան։ Հայաքաղաքի ինքնավարու-

[1] Գ. Վ. Գովրիկյան, Դրանսիլվանիո Հայոց մետրոպոլիսը կամ նկարագիր Կերլա Հայաքաղաքի, էջ 13։

թյան իրավունքը հաստատում է Եդայվիլ կոմսը իր 1715 թվականի փետրվարի 14-ի հրամանագրով[1]։

Հայաքաղաքում մեծ թիվ էին կազմում հայ արհեստավորները, մասնավորապես կաշեգործ արհեստավորները, որոնք ունեին իրենց արհեստագործական կազմակերպությունը, որի կանոնադրությունը հաստատվել է ավստրիական իշխանությունների կողմից 1706 թվականի մայիսի 24-ին[2]։

XVIII դարում զգալի թվով հայեր են ֆենտրոնանում Տրանսիլվանիայում։ Նրանք դիմում են Կարլոս IV կայսրին և խնդրում թույլ տալ Եղիսաբեթուպոլիսը դարձնել հայկական ազատ քաղաք։ Կայսրը, իր 1733 թվականի օգոստոսի 11-ին տված հրովարտակով, ընդառաջում է հայերի խնդրանքին և թույլ տալիս նրանց ստեղծելու հայկական երկրորդ խոշոր օջախը Տրանսիլվանիայում։ Ըստ այդ հրովարտակի, հայերին է տրվում Եղիսաբեթուպոլիսը և նրա շրջապատի դաշտավայրը, որպեսզի հայերը ինքնիշխան կառավարություն ունեցող քաղաք հիմնեն[3]։ Ըստ այդ նույն հրովարտակի, նշված վայրում ապրող օտարազգի բնակիչները պետք է դուրս հանվեն այնտեղից։ Հայերն ազատվում էին բոլոր տեսակի տուրքերից և պետական ծառայություններ կատարելու պարտավորություններից։ Հայերին թույլ էր տրվում շինարարության համար անտառներից կտրել իրենց անհրաժեշտ շինափայտը։ Նորահիմն քաղաքի ողջ իշխանությունը հանձնվում էր հայերին, որոնք իրավունք ունեին ընտրելու իրենց քաղաքի դատավորը, 12 խորհրդականները ու դատարանի քարտուղարը։ Հայկական ընտրությունները կազմակերպելու համար արքունի վերատեսչությունը իրավասու էր հսկողություն սահմանելու, սակայն մի պայմանով, որ նա իրավասություն չունենա «ազատ ընտրությունը» սահմանափակելու[4]։ Հայերը Եղիսաբեթուպոլսի բնակավայրի համար, որպես կալվածագին, արքունի գանձարանին վճարել են 4000 հունգարական ֆլորին դրամ։

Ավստրիական իշխանությունների կողմից հետագայում փորձեր են արվում Հայաքաղաքի իրավունքները սահմանափակելու, այդ պատճառով մեծ դժգոհություններ են առաջանում։ Մարիա Թերեզա թագուհին հաշվի առնելով հայերի բողոքները, իր 1758 թվականի

[1] Գ. Վ. Գովրիկյան, Դրանսիլվանիո հայոց մետրոպոլիսը կամ նկարագիր Կերլա Հայաքաղաքի, էջ 20։

[2] Նույն տեղը, էջ 34։

[3] Գ. Վ. Գովրիկյան, Հայք Եղիսաբեթուպոլիս, էջ 79։

[4] Նույն տեղը։

նոյեմբերի հրովարտակով, նորից վերականգնում է նրանց նախկին իրավունքը՝ մի վերապահությամբ միայն, որ սահմանված իրավունքից օգտվելու իրավունք ունեն միայն կաթոլիկ դավանանքին պատկանող հայերը։ Հայաքաղաքների կառավարչության հայեցողությանն էր թողնվում հայկական նոր գաղթականների ընդունել-չընդունելու իրավունքը։

Եվ ահա այսպիսով Եղիսաբեթուպոլսի հայերը երկար ժամանակ պահեցին իրենց ինքնավարության իրավունքը։ Հայտնի է, որ 1727 թվականից մինչև 1916 թվականը, Եղիսաբեթուպոլսում ընտրված 61 քաղաքապետները հայեր են եղել։

Եղիսաբեթուպոլսի հայերը 1729 թվականին բաց են արել առաջին հայկական վարժարանը։ 1744 թվականին այդ վարժարանի համար Պետրոս Փաթայանի նվիրատվությամբ կառուցվել է դպրոցի ընդարձակ շենք։ 1730 թվականին բաց է արվել նոր դպրոց նաև աղջիկների համար[1]։

Հունգարիայի հայ բնակչությունը օգտվելով տեղացիների՝ իրենց նկատմամբ ցուցաբերած բարյացակամ վերաբերմունքից, գործուն մասնակցություն է ցուցաբերել բախտակից հունգար ժողովրդի մղած ազատագրական շարժումներին։ Յուցանշական է օրինակ այն փաստը, որ 1848 թվականին հունգար ժողովրդի՝ ավստրիական նվաճողների դեմ մղած ազատագրական պատերազմներում, հայերը տվել են մեծ թվով զինվորականներ, այդ թվում՝ երեք գեներալ, որոնցից երկուսը՝ էրնեստ Քիչ (Պզտիկյան) և Կոզիելմոս Լազար (Ղազարյան), բռնվեցին ավստրացիների կողմից և գլխատվեցին որպես հունգար ժողովրդի ազատագրական շարժումների գործուն մասնակիցներ և ղեկավարներ, իսկ երրորդ գեներալը՝ Յեանոս Յից (Յեցյան), փախավ Արգենտինա (Բուենոս-Այրես), ուր նա հիմնեց զինվորական դպրոց և նրա առաջին հրամանատարը եղավ[2]։

XVIII դարի վերջում ներկայիս Ռումինիայի տերիտորիայի վրա գտնված երկրամասերից ամենից շատ հայ բնակչություն ապրելիս է եղել Տրանսիլվանիայում։ Ըստ Բժշկյանի վիճակագրության, XIX դարի սկզբում Տրանսիլվանիայի չորս գաղթօջախներում ապրող հայերի թիվը եղել է.

1. Եղիսաբեթուպոլսում	. . .	2100 շունչ
2. Կեռլայում	. . . . .	3600 »
3. Սինդ Միգլոշում	. . . . .	700 »
4. Սիբվիզում	. . . . .	214 »

Ամբողջ Տրանսիլվանիայում, XIX դարի սկզբում, ապրել է մոտավորապես 10 000 շունչ հայություն։

Ռումինահայ մշակույթը: Ռումինիայի հայ գաղթավայրը իր ավելի քան հազարամյա երկարաձիգ պատմության ընթացքում ստեղծագործական եռուն կյանք է ունեցել և հայ մշակույթի ընտիր սերմեր ցանել բարեկամ ռումին հողի վրա, որը համարել է իր երկրորդ հայրենիքը։

Մենք այժմ ի վիճակի չենք ռումինահայ մշակույթը քննել և արժեքավորել ամբողջությամբ առած, որովհետև նրանից շատ քիչ բան է հասել մեզ։ Ռումինահայ հուշարձաններից մի մասը քանդել է ժամանակի ավերիչ ձեռքը, իսկ մյուսը կործանվել է տեղի ընչաքաղց և քմահաճ իշխանների ու վոյեվոդների կողմից, որոնք հայկական հուշարձանների կործանումը միջոց են համարել դավանական միության և ասիմիլյացիայի։ Ըստ Մինաս Թոխաթեցու վկայության, Ստեփան Ռարեշ վոյեվոդը 1551 թվականին կործանել է տվել Մոլդավիայում գտնվող հայկական բոլոր խոշոր գաղթօջախների հայկական եկեղեցիները։ Վոյեվոդի հրամանով, ասում է Մինաս Թոխաթեցին.

«Ջնկեղեցի զինչ կայր հայի,
Խօթին, Սերաթ, Նաշպազարի,
Վասլով, Պուշան, Ուտոմանի,
Ամենեքեան հիմն քակի»[1]։

Նույն վոյեվոդի կարգադրությամբ բերել են տվել Սուչավա քաղաքի պարսպի խոշոր քնդանոթները և ամբակոծելով տեղի հայկական եկեղեցին հիմնահատակ կործանել[2]։

Այսպիսի ավերածությունից հետո, բնական է, որ ռումինահայ հնագույն կոթողները պահպանվել չէին կարող։ Ռումինահայ ամենից հին պատմական հուշարձանները մնացել են միայն XIV դարից։ Դրանք եկեղեցիներ են, որոնցից մեզ հայտնի է միայն երեքը՝ Բոթոշանի եկեղեցին՝ 1350 թվականից, Չեթատե-Ալբայի (Ակկերմանի) եկեղեցին՝ 1380 թվականից և Յաշի եկեղեցին՝ 1395 թվականից։ Վերջինս ունի հետևյալ ուշագրավ արձանագրությունը. «Շնորհօք և ողորմութեամբն Աստուծոյ հիմնարկեցաւ եաշու սուրբ Աստուածածնայ եկեղեցին ձեռամբ եկեղեցական խաչգօին և

1 Գ. Վ. Գովրիկյան, Հայք յեղիսաբեթուպոլիս, էջ 57։
2 Ֆ. Ավետիք, Հայերը Հունգարիո մեջ («Բազմավէպ», 1947, էջ 236)։

1 Ն. Վ. Ակինյան, Հինգ պանդուխտ տաղասացներ, էջ 95։
2 Նույն տեղը, էջ 88։

Սիսիանցի տէր Յակորին, Ջուղայեցի մահտեսի Մարգարին և մահտեսի Գրիգորին քվին Հայոց ՊԽԴ (1395)[1]։

Ռումինահայ մյուս հուշարձանները XVI—XVIII դարերից են։ Այդ հուշարձանների մի մեծ խումբը գտնվում է Սուչավայում։ Նրանցից կարևոր են Սուչավայի Ս. Խաչ եկեղեցին, որը կառուցված է 1521 թվականին Խաչիկ Հանգո կոչվող մի բարերարի կողմից, Ս. Սիմեոն եկեղեցին, որը կառուցված է դարձյալ XVI դարում (կառուցման ճիշտ թվականը հայտնի չէ), Ս. Համկատար վանքը, որը գտնվում է քաղաքից դուրս, կառուցված է 1512 թվականին անասնավաճառ Դրական Տոնավագի ծախսով։ Սուչավայից դուրս գտնվում է հայկական Ջամքա կամ Ս. Օգսենտ կոչվող տաճարը, որը կառուցված է XVI դարի առաջին կեսին (Ջամքան երկար ժամանակ ռումինահայ թեմի առաջնորդական կենտրոնն է եղել)։ Վանքի կառուցողն է հանդիսացել Ակոբշին, որի գերեզմանաքարի վրա փորագրված է հետևյալ արձանագրությունը.

«Այս է տապան Ակոբշին,
Որ է որդի Ամիրային,
Սա է շինող սուրբ տաճարին,
Արևելեան հայոց Ռ. թվին (1551 թ.)»[2]։

Սուչավայում գտնվող հայկական հուշարձաններից իր յուրատեսակությամբ աչքի է ընկնում ջրհոր աղբյուրը, որի կառուցման վերաբերյալ կա հետևյալ արձանագրությունը. «Յիշատակ է այս ջէշմէն (աղբյուրը) Գաբրիանց կայսերապատիւ Ֆրայհեր պարոն Գէորգն և ընկերոջն պարոնուհի Մայրեամին Ֆոն Մըրըցկէյ. 1793 թ.»[3]։

Ճարտարապետական արժեք ներկայացնող մյուս ռումինահայ եկեղեցիները XVII—XVIII դարերից են. Ռոմանինը՝ 1609 թվականից, Չերնովիցինը՝ 1740 թվականից, Ֆոկշանինը՝ 1778 թվականից և այլն։

Դյուրին չի եղել նաև ռումինահայ մատենագրության ուղին։ Տեղեկություններ ունենք, որ Ռումինիայի մի շարք քաղաքներում գոյություն են ունեցել հայկական գրչության օջախներ, ուր գրվել կամ ընդօրինակվել են բազմաթիվ ձեռագրեր, որոնցից սակայն փշրանքներ են միայն մեզ հասել։ Հայ ձեռագրերի մեծ մասը ոչնչացել է միջնադարյան սխոլաստիկ միջդավանաբանական վնասա-

1 Դ. Տան, Արևելյան Հայք ի Պուքովինա, էջ 7—8։
2 Լ. Բաբայան, Հայերը Մոլդավիայում և Բուքովինիայում, էջ 184։
3 Նույն տեղը, էջ 177։

կար վեճերի ժամանակ. կաթոլիկ և պրոտեստանտ եկեղեցու նեղմիտ հոգևորականները հայերին համարել են աղանդավորներ և նրանց ձեռագրերը ենթարկել ոչնչացման։ Մինաս Թոխաթեցին հայտնում է, որ Ստեփան Ռարեշ վոյեվոդը մորդավ բարձրաստիճան եկեղեցականների թելադրանքով հավաքում է հայկական ձեռագրերը, շարդում նրանք կացնով և ապա քաղաքի հրապարակի վրա շեղջ կազմած այրում։ Վոյեվոդը, գրում է նա.

«Այլ շար հրաման արար կրկին
Զինչ որ գրեանք կայր ի վեստեին (պանձատանը)՝
Զարծաթապատ աւետարանին,
Զանգին գրեանք Հայոց ազգին։

Հանին ի դուռն վեստեին
Եւ փայտի պէս կտրտեցին
Այն անօրէն պիղծ օլախնին
Զամէն գրեանքըն այրեցին»[1]։

Ռումինիայի հետ կապված հնագույն հայկական ձեռագիրը՝ 1376 թվականից է, որը Հայկական ՍՍՌ Մատենադարանի սեփականություն է և գրանցված է 8029-ի տակ։ Հիշատակարանից երևում է, որ այս ձեռագիրը Յաշ քաղաքում գնել է կաֆայեցի դերձակ Ասլանը՝ Մաճարստան (Հունգարիա) ուղևորվելու ժամանակ.

«Դերձակ Ասլան Կաֆացի
Որ ի Գոռել Մաճար գնացի,
Զաս Վարդանգիրքս գնեցի
Թվին ՊԻԲ. (1376)[2]»։

Հիշատակարանում չի երևում, թե այս ձեռագիրը Յաշում է գրված, թե մի այլ վայրում. կարող է և այն վաճառքի բերված լինի մի այլ քաղաքից կամ նույնիսկ՝ մի այլ երկրից։

Ռումինական հողի վրա գրված և մեզ հասած հնագույն ձեռագիրը, որքան մեզ հայտնի է, Ակկերմանի նշանավոր Ճաշոցն է, որն այժմ գտնվում է Հայկ. ՍՍՌ Մատենադարանում։ Նա գրված է 1460 թվականին Նիկողայոս գրչի կողմից՝ Յաշ քաղաքի տանուտեր Կյուրեղի պատվերով։ Գրչի չափածո հիշատակարանում կարդում ենք.

1 Հ. Ն. Ակինյան, Հինգ պանգուխտ տաղասացներ, էջ 89։
2 ՀՊՄ, ձեռ. № 8029, թ. 34ա։

«Արդ ես գործով կրտսեր յեսին
Եւ վերջացեալ առ ի բարին,
Ըզգիրքս եառու Աստուածածնին
Գեղաքաղաքս, որ Աս կոչին,

Նիկողայոս գրիչ տորին
Եւ գրեցի բաղձմամբ սրտին,
Տարտամ գրչաւ ի քարտիսին
Եւ անտեղեակ ի յարհեստին...

Իսկ աւարտում եղև սրմին,
Առ ի կողմունս հիւսիսային
Յերկրի Ստեփան վոյեվոտայն
Եւ յԱխքերման քաղաք նորին»[1]։

Ռումինիայում գրված մի շարք ձեռագրեր են հասել մեզ XVI—XVII դարերից։ Այսպես, Սուչավայում գրված ձեռագրերից մեզ են հասել Սիմեոն եպիսկոպոսի գրածը 1507 թվական, Սիմեոն գրչինը՝ 1632 թվական, Անտոն գրչինը՝ 1639 թվական, Խաչատուր գրչինը՝ 1649 թվական, Հովհաննես քահանայինը՝ 1649 թվական և այլն։

Մեզ է հասել «Գիրք ճակատամարտութեան» վերնագրով մի աշխատություն, որը 1808 թ. մոլդավերենից հայերեն է թարգմանել Յաշում Ներսես քահանան։ Այդ աշխատության թարգմանության հիշատակարանում կարդում ենք. «Գիրք ճակատամարտութեան կամ ընտրողութեան... թարգմանեալ եղև ի մօլտուվանու լեզուէ ի հայ բարբառ աշխատութեամբ տէր Ներսէս քահանայի յամի տեառն 1808 մայիս 30 ի քաղաքն Նաշ»[2]։

Հայ բնակչությունը երկար ապրելով ռումինացիների հետ կողք-կողքի և գործուն մասնակցություն ունենալով երկրի արհեստագործության մեջ, հասկանալի է, որ չէր կարող իր լուման չմուծել Ռումինիայի մշակութային կյանքում. հայ որմնադիրը, ոսկերիչը կամ ճարտարապետը չէր կարող իր ստեղծագործություններ մեջ չմտցնել իր հայրենի արվեստն ու ճաշակը։ Ռումինական արվեստի ճարտարապետության մի շարք մասնագետներ այդ առթիվ ասել են իրենց հեղինակավոր խոսքը։ Այսպես, օրինակ, Ռումինիայի նշանավոր ճարտարապետ Գիկա-Բուդեշտը, խոսելով հայ-ռումինական մշակույթների փոխազդեցությունների մասին, հետևյալն է գրում. «Գաղթած հայ արվեստագետները իսկապես

[1] ՀՊՄ, ձեռ. № 9485, թ. 484ա—484բ։

[2] ՀՊՄ, ձեռ. № 9819, թ. 2բ։

իրենց ճանապարհին Վալախիայի մեջ չհանդիպեցին գոթական դպրոցի ընկերակցության, որոնք տարածված էին Մոլդավիայում, այնպես որ նրանք անխափան կիրառեցին իրենց արվեստը XIV—XVII դարերում»[1]։

Ռումինիայում մատնացույց են արվում մի շարք հուշարձաններ, որոնք կրում են հայ ճարտարապետության ազդեցությունը։ Նման եկեղեցիներից են Տիսմանայի եկեղեցին XIV դարում, Արճեշի գեղեցկաշեն եկեղեցին 1515—1518 թվականներին և այլն։

Պրոֆ. Վլադ Բենեցիանուն իր մի ուսումնասիրության մեջ հանգամանորեն քննության առնելով Արճեշի եկեղեցու ճարտարապետական աղերսը հայկականի հետ, հնարավոր է համարել, որ նրա՝ ճարտարապետ Մանուի անունը, որի մասին, տեղեկություն է պահված հունական աղբյուրներում, լինի աղավաղումը հայկական Մանուել անվան։

Պրոֆ. Բենեցիանուն փաստեր է բերում այն մասին, որ հայ ճարտարապետները Ռումինիայում մասնակցել են շինարարական աշխատանքներին XVII դարում ևս։ Նա, օրինակ, մատնացույց է անում Տրեյերարխ տաճարի վերակառուցումը, որը կատարել է Պոլսից հրավիրված Ենաքի անունով հայ ճարտարապետը 1639 թվականին։

Հայերը, ինչպես մյուս գաղթավայրերում, այնպես և Ռումինիայում իրենց համեստ մասնակցությունն են ունեցել երկրի արդյունագործության, արհեստագործության և կուլտուրայի բնագավառներում՝ կատարելով իրենց քաղաքացիական պարտքը բարեկամ ռումին ժողովրդի հանդեպ, որը իր դժբախտ օրերին դռները միշտ բաց է պահել տարագիր հայ գաղթականության առջև։

---

[1] Ս. Քոլանջյան, Բուխարեստի հայոց անցյալն ու ներկան («Էջմիածին», 1949 թ., III—IV, էջ 73)։

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԳԱՂԹՕՋԱԽՆԵՐԸ XV—XVIII ԴԱՐԵՐՈՒՄ

Աղբյուրները և գրականությունը

Ռուսաստանի հայ գաղթավայրի պատմության աղբյուրները, ըստ բովանդակության և պարունակած նյութերի տեսակի, երկու հիմնական խմբի կարելի է բաժանել՝ XV—XVI և XVII—XVIII դարերի աղբյուրներ։

Գաղթավայրի պատմության աղբյուրները մինչև XVII դարը, պետք է ասել, աղքատիկ են. գոյություն չունի ոչ մի սկզբնաղբյուր, որը պարունակի Ռուսաստանի հայ գաղթավայրի որևէ շրջանի ամբողջական պատմությունը։ Նրածը՝ միջանկյալ տեղեկություններ են՝ պահպանված գլխավորապես տարեգրությունների և ուղեգրությունների մեջ, որոնք սակայն անչափ կցկտուր են և դժվարությամբ է լինում կողք-կողքի բերել՝ գաղթավայրի մասին ադոտ պատկերացում կազմելու համար։

Դրությունը հիմնովին փոխվում է XVII դարից սկսած, երբ հիմնվում են ռուսական արխիվային հաստատությունները և սկսում են հավաքել ու պահպանել պատմական կարևոր արժեք ունեցող վավերագրերը։ Այդ ժամանակից սկսած բազմաթիվ վավերագրեր են հասել մեզ։

Ռուսահայ գաղթօջախների պատմությանը վերաբերվող վավերագրերի մեծ մասը ներկայումս կենտրոնացված են Մոսկվայի երեք խոշոր արխիվներում՝ Ռուսաստանի արտաքին քաղաքականության արխիվում (АВПР), Հին վավերագրերի պետական կենտրոնական արխիվում (ЦГАДА) և Ռազմա-պատմական արխիվում (ВИА)։ Հայ համայնքներին և հայ-ռուսական հարաբերություններին վերաբերվող վավերագրերը նշված արխիվներում գրու-

նըվում են գլխավորապես «Ռուսաստանի հարաբերությունները Հայաստանի հետ» կոչվող հատուկ ֆոնդում։ Արժեքավոր վավերագրեր կան նաև Լենինգրադի, Աստրախանի և Թբիլիսիի արխիվներում։ XVIII դարի երկրորդ կեսից արխիվային նյութեր են պահպանվել նաև Էջմիածնի կաթողիկոսական դիվանում։

XVII—XVIII դարերի սկզբնաղբյուրների այսպիսի առատության պայմաններում, թվում է, թե բավականաչափ ուսումնասիրված և լուսաբանված պետք է լիներ ռուսահայ գաղթավայրի պատմությունը։ Իրականությունը սակայն այնքան էլ մխիթարական չէ. եթե չհաշվենք որոշ բացառություններ, ապա հրատարակված աղբյուրների և ուսումնասիրությունների մեծ մասը վերաբերում է ո՛չ թե ռուսահայ գաղթօջախներին, այլ հայ-ռուսական հարաբերությունների պատմությանը։ Թվարկենք նրանցից կարևորները.

Հայ-ռուսական հարաբերությունների պատմության վավերագրերի առաջին և ամենահարուստ ժողովածուն՝ Ս. Մ. Գլինկայի նախաձեռնությամբ հրատարակված «Собрание актов, относящихся к обозрению истории армянского народа» աշխատությունն է, որը բաղկացած է երեք մասից և հրատարակվել է Մոսկվայում 1833—1838 թվականներին։ (Այսուհետև այս աշխատությունը մատնանշելու ենք «Собрание актов» ձևով)։

Հաջորդ ժողովածուն հրատարակել է Կ. Եզյանը իր «Сношения Петра Великого с армянским народом» վերնագրով։ Այս է տեսել Պետերբուրգում 1898 թվականին։ Ժողովածուի մեջ մտել են գլխավորապես Պետրոս I-ի ժամանակների և նրանից հետո մինչև 1736 թվականի վավերագրերը։ (Այս աշխատությունը բերելու ենք «Сношения» կարճ ձևով)։

Նշված ժողովածուները կազմող հեղինակները հանդիսանալով ռուսական արքունիքի պետական պաշտոնյաներ, նպատակ են ունեցել ցույց տալ ռուս ցարերի «բարձր ողորմածությունը» հայ ժողովրդի նկատմամբ, և վավերագիրն ընտրել ու մեկնաբանել են այս տեսանկյունով։

Պատմագիտության սովետական շրջանում հայ-ռուսական հարաբերությունների պատմության վավերագրերի հրատարակության առաջին նախաձեռնողն է հանդիսացել Հայկ. ՍՍՌ ակադեմիայի իսկական անդամ Ա. Գ. Հովհաննիսյանը, որը 1921 թվականին իր «Հայ-ռուս օրիենտացիայի ծագման խնդիրը» աշխատության հավելվածում զետեղել է մի քանի արժեքավոր վավերագրեր։

Հետագայում Հայկական ՍՍՌ ԳԱ պատմության ինստիտուտի մի խումբ պատմաբաններ, պրոֆ. Վ. Ա. Պարսամյանի ղեկավարությամբ, կազմել և հրատարակել են XVII դարի հայ-ռուսական հարաբերությունների պատմության մի ժողովածու՝ «Армяно-русские отношения в XVII веке» վերնագրով։ Ժողովածուն լույս է տեսել Երևանում 1953 թվականին։

Նույն տարին մենք ևս մեր «Մի էջ Անդրկովկասի ժողովուրդների և հայ-ռուսական հարաբերությունների պատմությունից» խորագրով աշխատության հավելվածում հրատարակել ենք 79 վավերագիր։

Բացի նշված ժողովածուներից, արժեքավոր վավերագրեր են հրատարակվել նաև առանձին մենագրությունների մեջ կամ նրանց հավելվածներում։ Մենք նկատի ունենք մեծավաստակ Լեոյի «Հայոց պատմության» III հատորը, որը հրատարակվել է Երևանում 1941 թվականին, Հայկ. ՍՍՌ ԳԱ ակադ. իսկական անդամ Մ. Ներսիսյանի «Из истории русско-армянских отношений» աշխատության առաջին գիրքը, որը հրատարակվել է Երևանում 1956 թվականին, Հայկ. ՍՍՌ ակադ. իսկական անդամ Ա. Ռ. Հովհաննիսյանը «Иосиф Эмин» և «Россия и армянское освободительное движение в 80-х годов XVIII столетия» աշխատությունները, որոնցից առաջինը լույս է տեսել 1945 թվականին, իսկ երկրորդը՝ 1947-ին և ուրիշներ։

Հայ-ռուսական հարաբերությունների պատմությամբ զբաղվող ուսումնասիրողներից շատերն են կանգ առել Ռուսաստանի հայ գաղթօջախների պատմության վրա։ Այդ կարգի աշխատությունների թիվը տասից ավելի է։ Նրանցից կարելի է մատնացույց անել պրոֆ. Լ. Մելիքսեթ-Բեկի «Древняя Русь и армяне» (լույս է տեսել Երևանում 1946 թվականին) և «Из истории русско-армянских отношений» հոդվածը (լույս է տեսել Հայկ. ՍՍՌ ԳԱ «Տեղեկագրի» 1958 թ. № 4-ում), Հայկ. ՍՍՌ ակադեմիայի իսկական անդամ Ա. Գ. Հովհաննիսյանի «Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության» գիրքը (լույս է տեսել Երևանում 1949 թվականին), պրոֆ. Վ. Ա. Պարսամյանի «Հայ-ռուսական հարաբերությունների պատմությունից» (լույս է տեսել Հայկ. ՍՍՌ ԳԱ «Տեղեկագրի» 1952 թ. № 7-ում), պատմական գիտությունների թեկնածու Վ. Կ. Ոսկանյանի երկու հոդվածները՝ «Հայ-ռուսական հարաբերությունները XVII դարում» (տե՛ս Հայկ. ՍՍՌ ԳԱ «Տեղեկագրի», 1948 թ., № 1), «Նոր առևտրական ուստավն ու պայմանագիրը առևտրական կոմպանիայի հետ» (տե՛ս Հայկ.

ՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր», 1947 թ., № 6), և «Древняя Русь и Украина в судьбах армян» (տե՛ս «Исторические связи и дружба армянского и украинского народов» Երևան, 1961 թ.), մեր «Մոսկվան և ռուս ժողովուրդը միջնադարյան հայ մատենագրության մեջ» (տե՛ս «Երևանի պետական համալսարանի «Գիտական աշխատություններ»-ի № 27 հատորում), պատմական գիտությունների դոկտոր Զ. Տ. Գրիգորյանի «Հայ և ռուս ժողովուրդների դարավոր բարեկամությունը» (լույս է տեսել Երևանում, 1960 թ.) և այլ աշխատություններ, որոնց մասին կարելի է սպառիչ տեղեկություններ ստանալ հրատարակված բիբլիոգրաֆիաներում։

Նշված պատմաբանների մեծ մասն օգտվել է արխիվային վավերագրերից և այս կամ այն չափով անդրադարձել նաև Ռուսաստանի գաղթօջախների պատմությանը։

Անհրաժեշտ է նկատել, որ սովետահայ պատմաբանների ջանքերում Ռուսաստանի հայ գաղթօջախների պատմության հարցերում սկզբունքային տարաձայնություններ չկան։ Վեճեր եղել են և շարունակում են մնալ հայ-ռուսական օրիենտացիայի առաջացման ժամանակի և մի քանի այլ հարցերի շուրջը։

Հայ-ռուսական հարաբերությունների և հայկական գաղթօջախների գրականության մասին խոսելիս չի կարելի լռությամբ անցնել և քննադատական խոսք չասել պատմական գիտությունների դոկտոր Պ. Հարությունյանի «Освободительное движение армянского народа в первой четверти XVIII века» աշխատության մասին, ուր հեղինակը անարդարացի կերպով քննադատում է հին ու նոր ժամանակների համարյա բոլոր այն ուսումնասիրողներին, որոնք անդրադարձել են հայ-ռուսական հարաբերությունների հարցին։

Ռուսահայ գաղթավայրերի պատմության մասին վերջերս լույս տեսած ուսումնասիրություններից կարևոր են նաև պատմական գիտությունների թեկնածու Ա. Ի. Յուխտի մի շարք հոդվածները, որոնք ամփոփված են նրա «Աստրախանի հայկական գաղութը XVIII դարի առաջին կիսում» (ռուսերեն լեզվով) դիսերտացիոն աշխատության մեջ, որը պաշտպանության է ներկայացված Հայկ. ՍՍՌ ԳԱ պատմության ինստիտուտի գիտական խորհրդում։

Հայ գաղթավայրերին բավականին տեղ է հատկացրել նաև դրականագետ Կամսար Գրիգորյանն իր «Ռուս-հայկական մշակութային կապերի պատմությունից» հոդվածում (ռուսերեն), որը զետեղված է «Труды отдела древнерусской литературы» IX հատորում, 1953 թ.։

Հայ-ռուսական հարաբերությունները և հայ գաղթօջախները XV—XVIII դարերում:

Առջևում մենք ծանոթացանք Կիևի հայկական հնագույն գաղթօջախի հետ: Նա պահպանել է իր գոյությունը հետագայում ևս: Մեզ հասած պաշտոնական վավերագրերից երևում է, ինչպես այդ ցույց է տվել ուկրաինացի պատմաբան Դ. Ի. Միշկոն, Կիևում ապրող հայերն ունեցել են իրենց տները, այգիները, արհեստանոցները, խանութները, հողամասերը և սեփական հիվանդանոցը: XV դարի կեսերին նրանք իրավունք են ստացել տեղական իշխանություններից՝ կառուցելու իրենց եկեղեցին: Ըստ որում, հայկական եկեղեցին ունեցել է իր կալվածքները, վարելահողերը, այգիները, ջրաղացը և արհեստական լիճը:

Կիևի հայ բնակչության հիմնական զբաղմունքներն են հանդիսացել արհեստագործությունը և առևտուրը: Նրանցից ոմանք զբաղվել են նաև այգեգործությամբ, մասնավորապես՝ խաղողի մշակությամբ:

Հայ բնակչությունը Կիևում հավասար իրավունքներ չի ունեցել. մեծահարուստ վաճառականներն օգտվել են այսպես կոչված մագդեբուրգյան արտոնյալ իրավունքից, իսկ աշխատավորները դասվել են տեղացի հասարակ քաղաքացիների շարքը և գտնվել են իրավազուրկ վիճակում: Նրանք պարտավոր են եղել վճարելու սահմանված հարկը, կատարելու պահանջվող կոռային աշխատանքները, զինվորական ծառայությունը և այլ պարտավորություններ:

Պատմաբան Միշկոն հանգամանորեն ուսումնասիրելով Կիևի հայ համայնքի պատմությունը XV—XVI դարերում և նրա փոխհարաբերությունները տեղական բնակչության հետ, եկել է հետևյալ եզրակացության. «Հայերի մեջ եղել են լավ արհեստավորներ, որոնք իրենց աշխատանքով դրական ազդեցություն են գործել արհեստագործության, շինարարական տեխնիկայի և արվեստի զարգացման վրա: Հայերն ակտիվ մասնակցություն են ունեցել Կիևի բնակիչների՝ գերմանական ֆեոդալների և թուրք-թաթարական զավթիչների դեմ ուղղված ռազմական արշավանքներին: Թաթար-ավազակային հորդաների՝ Կիևի վրա հարձակվելու պահին, շատ անգամ են նրանք գտնվել քաղաքի պաշտպանների շարքերում»[1]:

Կիևի հայ օջախը խամրել է XVI դարի վերջերին: XVII դարի սկզբում այնտեղ հիշվում է միայն ինը հայ ընտանիք:

[1] Д. И. Мышко, Некоторые сведения о жизни армян в Киеве XV—XVIвв. (Тезисы «Научная сессия, посвященная историческим связям и братской дружбе украинского и армянского народов, тезисы докладов, Киев, 1962, стр. 26—28).

Ռակե Հորդայի Մերձվոլգյան երկրամասում հաստատվելուց հետո, Վոլգայի գետաբերանը փակվեց Անդրկովկասի ժողովուրդների առջև: 1400 թվականին գրված հայկական մի ձեռագրի հիշատակարանում որոշակի ասվում է, որ Ալանաց դուռը, այսինքն՝ Անդրկովկասը Հյուսիսային Կովկասի հետ միացնող Դարիալի նշանավոր լեռնանցքը, «Փակեալ է վաղուց»[1]:

Նոր իրադրության մեջ հայերը, մասնավորապես հայ վաճառականները, Ռուսաստան մուտք գործելու համար ընտրեցին նոր ուղի՝ Ղրիմի թերակղզու վրայով, ուր իրենց ազգակիցները, ճենովացիների և թաթարների հարևանության մեջ, ստվար գաղթավայրեր էին ստեղծել: Այժմ հայ վաճառականները հաճախ սկսեցին երևալ նոր բարձրացող Մոսկովյան պետության մեջ: Հայ վաճառականները Մոսկվայի սովորական հյուրերը դարձան. նրանք բերում էին թանկարժեք քարեր, մետաքս, անուշահոտ նյութեր, համեմունք և այլ ապրանքներ:

Ռուսական տարեգրության մեջ արձանագրված է այն մասին, որ 1390 թ. Մոսկվայում առաջացած հրդեհի ժամանակ այրվել է մի հայի տուն[2]: Նա, անշուշտ, Մոսկվայում ապրող միակ հայը չի եղել: Մոսկվա քաղաքի պատմության լավատեղյակ պատմաբան պրոֆ. Մ. Ն. Տիխոմիրովի կարծիքով՝ «կարելի է անկասկածելի համարել, որ XV դարի սկզբում Մոսկվայում գոյություն է ունեցել հայկական շատ ու քիչ հաստատուն գաղթօջախ»: Հիմնվելով պատմական փաստերի վրա, նա գալիս է այն եզրակացության, որ «Հայկական տարրը Մոսկվայի հասարակության մեջ նկատելի է եղել»[3]:

Մոսկվայի հնագույն հայ համայնքը բաղկացած է եղել գլխավորապես առևտրականներից և արհեստավորներից (ոսկերիչներ, կաշեգործներ և այլն): Հավանական է նրանք եկել էին ո՛չ թե Հայաստանից, այլ Ղրիմի հայ գաղթավայրից:

Ռակե Հորդայի գրված երկրամասերում ևս գտնվել է որոշ թվով հայ բնակչություն: Տեղեկություններ կան մասնավորապես Կազանի հայերի մասին: Ռուսական մի տարեգրության մեջ արձանագրված է այն մասին, որ 1552 թ. Իվան Ահեղը, երբ պաշարել է Կազանը, այնտեղ գտնվել են 5000 հայեր, բուխարացիներ և շա-

[1] ՀՊՄ, ձեռ. № 346, թ. 555բ:

[2] М. Н. Тихомиров, Средневековая Москва в XIV—XV веках, М-ва, 1957, стр. 215.

[3] Там же, стр. 216.

մախեցիներ[1]։ Ենթադրվում է, որ Կազանի այդ հայերը փոխադրված լինեն Բուլղար քաղաքից, ուր հայ բնակչություն էր ապրում XIV դարում, իսկ այդ ժամանակ գտնվում էր ավերակ վիճակում։

Ուշագրավ է ռուսական տարեգրության հաղորդած այն տեղեկությունը, որ վերաբերում է հայ բնակչության՝ Կազանը պաշարող ռուսական զորքերի նկատմամբ բռնած դիրքին։ Թաթարները, պատմում է ռուս տարեգիրը, կռվի ժամանակ օտարերկրացիներին թույլ չէին տալիս քաղաքից դուրս գալու և օգտագործում էին նրանց ուժերը կռվում։ Հայերի մեջ կային մեծ թվով ենդանոթաձիգներ, որոնք չէին ցանկանում կրակել ռուսների վրա։ Թաթարները նրանց երկաթե շղթայով կապել էին ենդանոթներին՝ յուրաքանչյուրի մոտ կանգնեցնելով մերկացրած սրերով զինվորներ, որոնք ստիպում էին հայ ենդանոթաձիգներին կրակել։ Սակայն այդ բռնությունը ևս, շարունակում է ռուս տարեգիրը, օգուտ չէր տալիս, որովհետև հայերն այնպես էին նշան բռնում, որ արկը կամ տեղ չէր հասնում, կամ անցնում էր ռուս զինվորների գլխի վրայով։ Իվան Ահեղը, քաղաքը վերցնելուց հետո, գնահատելով հայ ենդանոթաձիգների նվիրվածությունը, ըստ տարեգրի, «մեծ ողորմածություն» է ցուցաբերում նրանց նկատմամբ. բոլորին բաց է թողնում, որ գնան իրենց հայրենիքը[2]։

Հայ-ռուսական հարաբերություններն ավելի գործարար բնույթ ստացան Իվան Ահեղ ցարի կողմից Կազանը 1552 թ. և Աստրախանը 1556 թ. գրավելուց հետո, երբ հրապարակ է իջնում ռուսական հզոր պետությունը և բացվում է Վոլգայից Կասպից ծովը տանող երթուղին։ Հայ վաճառականները նորից սկսում են երթևեկել ավելի մոտիկ և հարմար ճանապարհով։

Ի դեպ, Կազանի և Աստրախանի գրավումից հետո ստեղծված Հյուսիսային պետության ասպարեզ իջնելը, որպես դրական երևույթ, նշում են ժամանակակից հայ մատենագիրները ևս։ Այսպես օրինակ, Կարապետ Բաղիշեցին 1500 թվականին գրած իր չափածո «Աշխարհագրութեան» մեջ հետևյալ ձևով է ներկայացրել ընդարձակածավալ Մեծ Ռուսաստանը.

Ի սառնամանիք հիւսիս է
Ըռուս ազգն բնական։
Աշխարհ նոցա Մոսկով՝
Մինչև ծովն Կասքիական։

[1] ПСРЛ, т. XIX, История о казанском царстве (Казанский летописец), СПБ, 1903, стр. 103.

[2] Там же, стр. 109.

Եւ ազգն նոցա գերող է
Թաթարըն նետողական։
Լայն ու արձակ անկեալ է նա՝
Որ հասնի մինչև ի Կաֆայն»[1]։

Վոլգայի գետուղին բացվելուց հետո Շամախուց հատուկ պատգամավորություն է գալիս Մոսկվա՝ խնդրելով թույլ տալ վերսկսելու առևտուրը Ռուսաստանի հետ Աստրախանի վրայով[2]։ Այժմ Ռուսաստան են գալիս հայ վաճառականները ո՛չ միայն Անդրկովկասից, այլև Հնդկաստանի, Թուրքիայի, Հոլանդիայի, Իտալիայի և այլ երկրների հայկական գաղթօջախներից։

Վենետիկի մի ճանապարհորդ, որը 1557 թվականին եղել է Ռուսաստանում, իր զեկուցագրում հայտնում է, որ Աստրախան, Կազան, Նովգորոդ և Մոսկվա քաղաքներում տեսել է հայ և պարսիկ վաճառականների, որոնք առևտուր անելու էին եկել արևելյան ապրանքներով։ Նշված վաճառականները, գրում է նա, «քերչին մետաքս, ակունս, համեմունս, և մանաւանդ ընտիր զէնս և զարմանալի ևս ձկունս անտխեղծս (այսինքն՝ անարատ—Ա. Ա.) ի Կասքից ծովէ ի Մոսկուա»[3]։

XVI դարում փոքրաթիվ հայ բնակչություն է գտնվել Ռուսաստանի խոշոր այլ քաղաքներում ևս՝ Նիժնի-Նովգորոդում, Արխանգելսկում, Սմոլենսկում և այլ վայրերում։

Ջափազանցությունների մեջ չընկնելու համար սակայն պետք է նշել, որ այս շրջանի ռուսահայ գաղթօջախներն իրենց բնույթով շատ ավելի նմանվել են առևտրական ֆակտորիաների, քան գաղթօջախների բառիս իսկական նշանակությամբ. Պարսկաստանի և Անդրկովկասի տարբեր վայրերից հայ գաղթականները մեծ խմբերով գալիս էին Ռուսաստան, որոշ ժամանակով մնում էին այնտեղ և իրենց գործարքները վերջացնելուց հետո ետ վերադառնում։

Մնայուն գաղթօջախները շատ փոքրաթիվ են եղել ո՛չ միայն այս դարերում, այլև հետագայում ևս։ Ըստ որում, հայ առևտրականները դատարկ ձեռքով չէին գալիս Մոսկվա. նրանք իրենց հետ ռուսական ցարին բերում էին թանկարժեք նվերներ։ 1663 թվականին Մոսկվա եկած հնդկահայ առևտրականներն Ալեքսեյ Միխայլովիչ ցարին նվեր են բերել թանկագին քարերով զարդարված մանյակներ, մատանիներ և ասեղնագործ կերպասներ՝ 20,000

[1] ՀՊՄ, ձեռ. № 1677, թ. 62բ։

[2] Собрание актов, ч. II, стр. 71.

[3] Ղ. Ալիշան, Սիսական, էջ 464։

ռուբլի արժեքով[1]։ Պարսկահայ վաճառական Սահրադյան Զաքարը Ալեքսեյ Միխայլովիչ ցարին նվեր է բերել Մոսկվայի Կրեմլի պինապալատի թանգարանի զարդերից մեկը՝ ադամանդյա նշանավոր գահը, որն իր ժամանակ գնահատվել է 22,589 ռուբլի[2] և այլն։

Ռուսաստանի հայ գաղթավայրերի բնույթը հիմնովին փոխվում է XVII դարի վերջին քառորդից սկսած. այժմ հայ առևտրականները՝ Անդրկովկասում, Պարսկաստանում և Թուրքիայում ըստեղծված ծանր պայմանների հետևանքով, գերադասում են տեղափոխվել և մշտական բնակություն հաստատել Ռուսաստանում։ Նրանք իրենց հետ բերում են նաև մեծ թվով հայ արհեստավորներ՝ իրենց իսկ հիմնած արհեստագործական և արդյունագործական ձեռնարկություններում աշխատելու համար։

Ռուսական իշխանությունները հայ գաղթականության նկատմամբ ցուցաբերել են բարյացակամ վերաբերմունք։ Այդ բացատրվում է երկու պատճառով. նախ՝ նրանք չեն ցանկացել, որ իսլամի ժողովրդի հավատը որպես հովանավորող պետության և ապա՝ նկատի է առնվել հայ բնակչության օգտակարությունը Ռուսաստանի առևտրի և արհեստագործության զարգացման գործում։

Հայերը Ռուսաստան են եկել տարբեր վայրերից՝ Հայաստանից, Ադրբեջանից, Վրաստանի ու Պարսկաստանի հայկական մյուս գաղթօջախներից։ Մեզ է հասել և այժմ Հայկական ՍՍՌ Մատենադարանի սեփականությունն է Աստրախանի հայ գաղթօջախի ձեռագիր դատաստանագիրքը, որի կազմողները, գրքի ներածության մեջ, անհրաժեշտ են համարել նշել, թե որ վայրերից են հայերը գաղթել Ռուսաստան և ինչ զբաղմունքի տեր մարդիկ են եղել։ «Ելեալ հայք,— կարդում ենք այստեղ,— ի յերկրէն Արարատայ... յերկրէն Ալանաց, յարքայանիստ Շօշայ, այսինքն՝ Ասպահանայ... ի քաղաքէն Մազանդարանայ, Համադանայ, Ղազուինէ, Թաբրիզէ և այլ ուստիքէ եկեալ ի կողմանս Հիւսիսոյ... ի նաւահանգիստ Աստրախան, ի Ղզլար... ոմանք վաճառականք, ոմանք արհեստաւորք, ոմանք հողագործք և այգեգործք»[3]։

Հայ գաղթականության զանգվածային ամենամեծ հոսանքը Ռուսաստան է եկել XVIII դարի 30—40 թվականներին։ Դրա պատճառն այն էր, որ Ռուսաստանից սպասվող օգնությունը չըստացվեց, Հայաստանում ծայր առած ազատագրական շարժումները ճնշվեցին և պարսկական իշխանությունները, վրեժխնդրության ցասումով լցված, սկսեցին կատաղի հալածանքներ հայերի դեմ, ուստի որոշ թվով հայ ընտանիքներ հարկադրված եղան թողնել հայրենի երկիրը և ապաստան փնտրել Ռուսաստանում։

Պարսկական անհաջող արշավանքից հետո, հայ բնակչությանը հուսադրելու նպատակով, Պետրոս I-ը 1723 թ. հատուկ հրովարտակով թույլ է տալիս հայերին գալ և բնակվել ռուսական տիրապետության տակ անցած Գիլան, Մազանդարան, Բաքու և Դերբենտ քաղաքներում։ 1736 թ. ռուսական իշխանությունների մի նոր հրամանով ռուսական բանակում ծառայող հայերին թույլատրվում է բնակություն հաստատել սահմանամերձ Ղզլար քաղաքում։

Պատկերացնելու համար հայ բնակչության մասսայական գաղթը, բավական է նշել, որ XVIII դարի կեսերին, նույն դարի սկզբի համեմատությամբ, միայն Աստրախանի բնակչության թիվը ավելացել է մոտ 8 անգամ։ Այդ թվի մեջ մենք չենք հաշվում հայ այն գաղթականներին, որոնք Հայաստանից գալիս ժամանակավորապես կանգ էին առնում Աստրախանում, որպես ռուսահայ առաջին կայանի, ապա տեղափոխվում Ռուսաստանի այլ և այլ քաղաքները։

XVIII դարում Ռուսաստանում այնքան հայ բնակչություն է կենտրոնանում, որ անհրաժեշտ է լինում հոգևոր թեմ ստեղծել։ Դեռևս Սիմեոն կաթողիկոսի ժամանակ բանակցություններ են վարվում այդ հարցի շուրջ և ռուսական արքունիքից թույլտվություն ստանում թեմ ստեղծելու վերաբերյալ։ Ռուսաստանի, կամ ինչպես սովորություն է եղել ասել՝ «Հյուսիսային» թեմի աշքի ընկնող առաջնորդներից է եղել Հովսեփ արքեպ. Արղությանը, որը Ռուսաստան է եկել պաշտոնավարության 1773 թվականին։

Ռուսահայ գաղթօջախները XVII—XVIII դդ-ում:

Վոլգայի գետուղին գործելուց հետո Ռուսաստանի հայկական հին օջախներից ժամանակավորապես աշխուժանում է Կազանի հայ գաղթավայրը։ XVI դարում հայերն այստեղ ունեցել են եկեղեցի, հոգևոր հովիվ և գերեզմանատուն։ XVII դարում գալիս և բնակություն են հաստատում հայ նոր գաղթականներ։ Կազանում հայ բնակչության գոյության մասին է վկայում այնտեղ 1642 թ. գրված Վասիլ գրչի ձեռագրի հիշատակարանի այն արտահայտությունը, որ ձեռագիրը գրել է իբրև «մնայուն հիշատակ Կազանի

[1] Русско-индийские отношения, М-ва, 1958, стр. 141—142.
[2] Армяно-русские отношения в XVII веке, стр. 21—33.
[3] ՀՊՄ, ձեռ. № 7383, թ. 4բ։

ժողովրդեանն»[1]։ «Խազանի ժողովուրդ» ասելով գրիչն այստեղ, անշուշտ, նկատի է ունեցել Կազանի հայ բնակչությանը, որովհետև դավանական նկատառումներով սովորություն չի եղել հայկական ձեռագրեր գրել և նվիրաբերել այլ ազգի համայնքներին։

Վասիլ գրիչն իր հիշատակարանում խնդրում է հիշել խոջա Պետրոսին, որը ձեռագրի թուղթը բերած է եղել Աստրախանից, ապա՝ խոճա Միքայելին, Մելքոնին, Ղազարին, Գասպարին, Բաղդասարին և վերջում ավելացնում՝ «Կազանի ամենայն ժողովրդին մեծ և փոքր»[2]։ Այստեղ ևս «ժողովուրդ» բառի գործածությունը ապացույց է, որ Կազանում այդ ժամանակ ապրել է ստվարաթիվ հայ բնակչություն։

Կազանի հայկական համայնքը, ինչպես երևում է, երկարատև կյանք չի ունեցել և արագ խամրել է։ Համենայն դեպս, Արղությանի 1785 թ. կազմած Ռուսաստանի հայ բնակչության վիճակագրության մեջ հայ բնակչություն այլևս չի հիշվում այնտեղ։

Ռուսաստանի գործուն գաղթօջախներից է հանդիսացել Աստրախանը, որը հայ մատենագրության մեջ հայտնի է նաև Հաջի Թարխան կամ Հաշթարխան անուններով։ Սկսած 1556 թ., երբ Իվան Ահեղը վերցրեց Աստրախանը և բացվեց Վոլգայի փակված մայր ուղին, քաղաքը փաստորեն դարձավ արևելյան ժողովուրդների մուտքի դարպասը դեպի Ռուսաստան և տարանցիկ առևտրի ամենախոշոր կենտրոններից մեկը։ Հնդկաստանից, Պարսկաստանից, Եվրոպայից և այլ երկրներից եկած վաճառականները այստեղ էին հանդիպում տեղացի ռուս վաճառականների հետ և կատարում իրենց առևտրական գործարքները։

Աստրախանի հայկական գաղթօջախի սկզբնավորության մասին հավաստի տեղեկություններ չկան։ Հովսեփ եպիսկ. Արղությանը Աստրախանի հայ գաղութի վերաբերյալ հայկական հնագույն մի ձեռագրի սպիտակ էջի վրա թողել է հետևյալ հիշատակությունը. «ՌՃՀ (1331) թուին Հայոց մեր ազգն, յԱնուոյ թագավորական քաղաքէն մերմէ ելեալք՝ բռնութեամբ թաթարաց, եկեալ են ի Հաշտարխան և անտի՝ ի Ղրիմ»[3]։

Արղությանի մատնացույց արած թվականը սխալ է. 1331 թվականին հայերը ո՛չ թե եկել են Աստրախան և Մերձվոլգյան երկրները, այլ հեռացել են այնտեղից։ Աստրախանում հայկական գաղթօջախ է եղել նշված թվականից շատ առաջ, իսկ հետո խամրել է։ Աստրախանի հայկական նոր գաղթօջախը հիմնվել է XVI դարի վերջերին։ Նա ունեցել է փոքրաթիվ բնակչություն։ Ըստ տեղեկությունների, 1616 թ. Աստրախանի հայ գաղթօջախը բաղկացած է եղել ընդամենը 11 ընտանիքից, որից 7-ը բնակվելիս են եղել Գիլանի իշխանատանը, իսկ 4-ը՝ արվարձաններում[1]։

Ռուսական տարեգրության մեջ արձանագրված մի տեղեկությունից երևում է, որ 1625 թ. նախկին հայկական, պարսկական և հնդկական փայտյա իշխանատների (гостинный двор) ու խանութաշարքերի փոխարեն կառուցվել են նորերը՝ քարից[2]։ 1630 թ. կառուցվել է նաև հայկական փայտաշեն եկեղեցին։

Աստրախանի գաղթօջախը առանձնապես մեծ չի եղել նաև XVII դարի վերջերում։ Ըստ հոլանդացի ճանապարհորդ Դե Բրուինի տեղեկության, Աստրախանում XVIII դարի սկզբում ապրում էր «մոտ 40 հայ ընտանիք»[3]։

Աստրախանում հայ բնակչության թվի մեծանալու հետևանքով նախկին փայտաշեն եկեղեցին չի բավարարել տեղի հայությանը, ուստի նրանք դիմել են ռուսական իշխանություններին և նրանց թույլտվությունը ստանալուց հետո, 1706 թ. քանդել են հին եկեղեցին և նրա տեղը քարե պատերով նորը կառուցել։ XVIII դարի 40-ական թվականներին, երբ Աստրախանի հայ բնակչությունն ավելի է շատացել, կառուցել են նաև երկրորդ եկեղեցին։

1747 թ., պետական-պաշտոնական վիճակագրական տվյալներով, Աստրախանում մշտապես ապրող հայերի թիվը հասել է 1512 հոգուն։ 1730—1740-ական թվականներին Աստրախան բնակության են եկել հետևյալ վայրերից՝ Շամախուց՝ 40 հոգի, Փառակայից և Ագուլիսից՝ 30 հոգի, Գանձակից՝ 18, Երևանից՝ 15, Նոր-Ջուղայից՝ 24, Թավրիզից՝ 8, Արդավիլից՝ 11 և Ղազվինից՝ 7 հոգի[4]։

Ըստ Արղությանի վիճակագրական տվյալների, 1781 թվականին Աստրախանում գտնվելիս է եղել 865 տուն՝ 3500 շունչ հայ բնակչությամբ։ Հետագայում հայերի թիվն ավելացել է՝ XVIII դարի վերջերում Անդրկովկասից եկած նոր գաղթականներով։ Բժշկյանը, որ 1820 թ. եղել է Աստրախանում, այնտեղ հիշում է 1200 տուն հայ բնակչություն և միաժամանակ նշում, որ «յառա-

1 ՀԳՄ, ձեռ. № 3004, թ. 236ա—236բ։
2 Նույն տեղում։
3 Մանր ժամանակագրություններ XIII—XVIII դդ., հ. II, էջ 529։

1 Н. И. Веселовский, Памятники, т. III, стр. 110—111, 123—124.
2 Ключевская летопись, Астрахань, 1887, стр. 19.
3 Տե՛ս «Астраханский сборник», вып. I, Астрахань, 1896, стр. 186.
4 ГААО, ф. 394, оп. I, под. д. 76 л. 54—67 (օգտվել ենք Ժուխից)։

չագոյն բազումք էին ասա, բայց բազում չոգան (այսինքն՝ գնացին—Ա.Ա.) ի Մասքութ՝ 12 ժամու հեռի»[1]։

Ռուսաստանի հայկական խոշոր գաղթօջախներից է հանդիսացել Նոր Նախիջևանի հայ գաղթօջախը, որը հիմնվել է Ղրիմից Ռուսաստան գաղթած հայ բնակչության կողմից, որի մասին խոսք եղել է Ղրիմի հայ գաղթավայրը գլխում։

Ղրիմահայության գաղթը դեպի Ռուսաստան տեղի է ունեցել քաղաքական հետևյալ իրադրության մեջ։ 1768—1774 թթ. ռուս թուրքական պատերազմից հետո, երբ 1774 թ. հուլիս ամսին կնքվեց Քուչուկ-Կայնարջիի խաղաղության պայմանագիրը[2], Ռուսաստանին անցավ Ազովը, Կերչը, Ենիկալեն և Կինբուրնը։ Ղրիմի խանությունը, որն անցյալում վասալական կախվածության մեջ էր գտնվում Թուրքիայից, այժմ անկախ հայտարարվեց։ Ռուսաստանը ձգտում էր նվաճել Ղրիմը և ազատ ելք ունենալ Սև ծով։ Սակայն դիվանագիտական բարդություններ չստեղծելու համար, նա գիմում է շատ նուրբ քաղաքականության. Ղրիմի տնտեսական կյանքը կազմալուծելու և ծունկի բերելու նպատակով որոշում է Ղրիմի հայ և հույն բնակչությանը, որոնց ձեռքում էր հիմնականում արհեստագործությունը և առևտուրը, գաղթեցնել դեպի Ռուսաստան։ Պատասխանատու այդ գործը հանձնարարվում է գեներալ Ա. Վ. Սուվորովին[3]։

Չի կարելի ասել, որ Ղրիմի հայերը սիրահոժար հանձն են առել թողնելու իրենց տունն ու հարմարությունները և անորոշության մեջ գաղթելու մի այլ բնակավայր։ Սակայն թուրք գործակալների՝ թաթարների նկատմամբ հրահրած թշնամանքը, մյուս կողմից՝ ցարական իշխանությունների հրապուրիչ խոստումները և այլն, վերջ ի վերջո ղրիմահայությանը կանգնեցնում են գաղթականության ճանապարհի վրա։

Ղրիմահայության զանգվածային գաղթը դեպի Ռուսաստան տեղի է ունեցել 1778 թ. օգոստոս և սեպտեմբեր ամիսներին։ Հայ գաղթականության ընդհանուր թիվը, ըստ պաշտոնական տվյալների, եղել է 12,500 հոգի[4]։

Ազովը Ղրիմից եկած հայ գաղթականության համար անծանոթ մի երկիր չէր։ Այդտեղ փոքրաթիվ հայ բնակչություն ապրում

1 Մ. Բժշկյան, Ճանապարհորդություն ի Լեհաստան, էջ 401։

2 История дипломатии, т. I, М-ва, 1959, стр. 365.

3 М. Г. Нерсисян, Из истории русско-армянских отношений, кн. I, Ереван, 1956, стр. 99—100:

4 Եր. Շահազիզ, Նոր-Նախիջևանը և Նոր-Նախիջևանցիք, Թիֆլիս, 1903, էջ 37։

էր դեռ շատ վաղուց։ Հայտնի է, որ 1736 թ., երբ Ազովը գրավվեց ռուսական զորքերի կողմից, այնտեղ ապրելիս են եղել 63 հայ և հույն բնտանիք[1]։

Ղրիմահայությունը շատ սառը ընդունելության է արժանանում ռուսական տեղական իշխանությունների կողմից։ Ո՛չ միայն չեն իրագործվում տրված խոստումները, այլև որոշ անբարյացակամություն է ցուցաբերվում նրա նկատմամբ։ Թույլ չի տրվում նրանց բնակություն հաստատել նախապես որոշված վայրում։ Ազովի նահանգապետ Գարսևանովը հայ գաղթականներին ստիպում է տներ շինել և բնակություն հաստատել Օրիոլ գետի մոտերքում. հրաժարվողներից ոմանց բանտարկում ու շղթաների մեջ առած պարտադրում աշխատելու ջրանցքների վրա։ Գաղթականներին ստիպում են հարկ վճարել։ Շուտով վրա է հասնում ձմեռը։ Ղրիմի տաք կլիմային սովոր հայ գաղթականությունը, առանց օթևանի և տաք հագուստի, կանգնում է Ազովի դաժան ձմռան առաջ։ Հայ գաղթականության մեջ սկսվում են մեծ դժգոհություններ. արքունիք են ուղարկվում բազմաթիվ բողոքներ։

Մեծ դժվարություններով անցկացնելով ձմեռը, հաջորդ տարին հայ գաղթականությունն իր լիազորներին ուղարկում է Պետերբուրգ բողոքելու արքունիքին։ Հովհաննես Լազարյանի և Հովսեփ արքեպ. Արղությանի միջնորդությամբ կայսրուհին ընդունում է հայ գաղթականության լիազորներին և 1779 թվականի նոյեմբերի 14-ի իր հրովարտակով վերջնականապես սահմանում է նրանց բնակավայրը և տալիս որոշ առանձնաշնորհումներ։

Ըստ տրված այդ առանձնաշնորհումների, հայերն ազատվում էին բոլոր տեսակի հարկեր ու տուրքեր վճարելուց՝ տասը տարի ժամանակով։ Նրանք իրավունք են ստանում ռուսահպատակ քաղաքացու բոլոր իրավունքներով առևտուր անելու ինչպես երկրի ներսում, այնպես էլ դրսում։

Հայերը բնակություն են հաստատում Տագանրոգի գավառի Դմիտրի-Ռոստովյան կոչվող ամրության շրջանում (ներկայիս Դոնի Ռոստովում)։ Այստեղ նրանք հիմնում են իրենց քաղաքը և անվանում Նոր Նախիջևան։ Քաղաքի հիմնադրմանը մասնակցել է անձամբ Արղությանը, որը հին հայկական մի ձեռագրի սպիտակ էջերից մեկի վրա թողել է հետևյալ հիշատակագրությունը. «Թիւն փրկչին 1781 ապրիլի ԻԱ (21) արկաք հիմունս քաղաքիս Նախի-

1 Խ. Փորքշյան, Նոր-Նախիջևանի հայկական գաղութի պատմությունից Հայկ. ՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր», 1957 թ., № 10, էջ 53—62)։

ջևանայ... կարօտի այլոց պատմագրաց (պատմելոյ). մեք զքիւս զայս նշանակեցաք վասն տեղեկութեան ապագայիցդ...»[1]։

Նոր Նախիջևանի շուրջը հայ գաղթականությունը հիմնում է նաև հինգ հայաբնակ գյուղեր՝ Ջալտիր, Մեծ Սալա, Փոքր Սալա, Թոպեի և Նիսեվտա։ Հայ գաղթականներն իրենց նոր բնակավայրերում ո՛չ միայն կարողանում են արագ իրենց համար նոր տուն ու տեղ ստեղծել, այլ կարճ ժամանակում նոր Նախիջևանը դարձնում են Ազովի նահանգի խոշոր առևտրական և արհեստագործական կենտրոն։ 1780 թվականին Նոր Նախիջևանում արդեն գործել էին մի քանի ֆաբրիկաներ և գործարաններ[2]։ Նախիջևանի առևտրականները Ռուսաստանում աշխույժ առևտրական գործունեություն են ծավալում։

Արղությանի՝ Շահամիրյանին 1787 թվականին գրած նամակից երևում է, որ Նոր Նախիջևանի շինարարական աշխատանքները տարվել է բացառիկ արագ թափով, այնպես որ՝ քաղաքի հիմնադրությունից ինը տարի անց, նա գտնվել է բավականին բարեկարգ վիճակում. «Հասարակութիւնը քաղաքիս...—գրում է Արղությանը,— հետևին շինարարութեան և օրըստօրէ քաղաքն մեր պայծառանայ, մինչ զի ամենայն ռուստաց... տեսեալ զփողոցսն և զամենայն բարեկարգութիւնս, զարմանան՝ թե զիա՞րդ ի սուտ միջոցի այսպես պայծառացան»։ Արղությանն իր նամակում այնուհետև զրիմահայերին համեմատության մեջ է դնում Ղրիմից Դոնի նահանգը գաղթեցված հույների հետ, որոնք, նրա ասելով, ոչ մի բարեկարգության չեն հետևում, գյուղատիպ տներ են կառուցել, անմիաբան են, ուստի ռուսական իշխանությունները տեսնելով այս «ի վերայ նոցա (կառավարիչ) նշանակեցին ի ռուսաց ազգէն»։ Վերջում ավելացնում է, որ այդ բոլորը նրա համար է գրում, որ «քոյդ ազգիդ բարձրագլուխ գոլն գիտացեալ, ուրախասցես»[3]։

Ըստ Արղությանի վիճակագրության, 1781 թ. Նոր Նախիջևանում և նրա շրջակայքում ապրելիս են եղել շուրջ 3000 տուն 12,000 շունչ բնակչությամբ։ XVIII դարի վերջերում Նոր Նախիջևանի գաղթօջախը մեծ թվով հայ բնակչություն է ընդունել 1795—1796 թվականներին։

XVIII դարի 30-ական թթ. Ռուսաստանում նոր հիմնված

[1] Մանր ժամանակագրություններ XIII—XVIII դդ., հ. II, էջ 529։

[2] Տե՛ս «Записки Одесского общества истории древностей», т. VIII, стр. 209—210, 274—276.

[3] ՀՊՄ, ձեռ. № 2699, թ. 131բ։

գաղթօջախներից է հանդիսացել Մոզդոկը։ Սկզբում նա խառը բնակչություն է ունեցել։ Սակայն XVIII դարում այնքան հայեր են բնակություն հաստատում այնտեղ, որ 1763 թ. քաղաքի բնակչության հիմնական մասը հայերն են դառնում, և 1785 թ. ցարական հատուկ հրամանով Մոզդոկը պաշտոնապես հայտարարվում է հայաբնակ քաղաք։ Նա 1781 թվականին ունեցել է 130 տուն՝ 700 շունչ հայ բնակչություն։

XVIII դարում հիմնված գաղթօջախներից է հանդիսացել հայաբնակ Ղզլար քաղաքը՝ իր շրջակայքի մի քանի հայկական գյուղերով, որոնք պաշտոնապես հիմնվել են 1736 թ. գլխավորապես ռուսական բանակում ծառայող հայ պաշտոնաթող զինվորականներից[1]։ Հայ գաղթականները Ղզլարում արագ զարգացրել են խաղողագործությունը։ Ըստ պաշտոնական տեղեկությունների, Ղզլարի և նրա շրջակայքի հայ բնակչությունը XVIII դ. վաճառքի էր հանում ավելի քան 60 հազար դույլ գինի, 12 հազար դույլ օղի և հսկայական եկամուտ ստանում դրանից։ Հայ վաճառական Վասիլ Մակարյանը XVIII դարի 40-ական թվականներին Ղզլարում հիմնում է մետաքսագործության ֆաբրիկա, որն աշխատում է տեղական հումքի վրա։ Հայ վաճառականները Ղզլարում հիմնում են նաև գինու և սպիրտի գործարաններ։

Արղությանը 1785 թ. Ղզլարում հիշում է 360 տուն 2200 շունչ հայ բնակչությամբ։ Դարի վերջերում Ղզլարի հայ բնակչության թիվը գրեթե եռապատկվում է նոր եկած գաղթականներով։ Բժշկյանը 1820 թվականին հաշվում է «Տունք հայոց աւելի են քան զհազար»[2]։

Համեմատաբար հայկական երիտասարդ գաղթօջախ է Լենինգրադը՝ նախկին Պետերբուրգը։ Գրականագետ Կ. Գրիգորյանը, որը հանգամանորեն ուսումնասիրել է Պետերբուրգի հայ համայնքի պատմությունը, գտնում է, որ հայ գաղութը «առաջացել է քաղաքի հիմնադրումից գրեթե անմիջապես հետո»[3]։ Պետրոս Առաջինը խրախուսել է հայ առևտրականների և արդյունաբերողների գործունեությունը։ Քաղաքի հիմնադրումից յոթ տարի անց, 1710 թ. արդեն տեղեկություն կա փոքրաթիվ հայ գաղթօջախի մասին։

Պետերբուրգի հայ գաղթօջախի առաջին ներկայացուցիչները

[1] П. Г. Бутков, Материалы для новой истории Кавказа, 1869, ч. I стр. 155.

[2] Մ. Բժշկեան, Ճանապարհորդութիւն ի Լեհաստան, էջ 404։

[3] Կ. Գրիգորյան, «Հայկական մշակութային դաղութը Պետերբուրգում» (տե՛ս «Էջմիածին», 1959 թ., X էջ 54—56)։

գլխավորապես առևտրականներ և արդյունաբերողներ են եղել։ Հիշվում են նաև առանձին հայ ծառայողներ և զինվորականներ։ Հայ գաղթօջախը փոքր-ինչ մեծացել է XVIII դարի 30-ական թվականներին։)

Պետերբուրգի հայ գաղթօջախի բնակչության ճիշտ թիվը չնայած մեզ հայտնի չէ, բայց այն փաստը, որ 1730 թ. Պետերբուրգի հայ գաղթօջախն ունեցել է իր ծխատեր քահանան (Հովհաննես Շերիստանովը), վկայում է ձևավորված հայ համայնքի գոյությունը։ XVIII դարի երեսնական թվականներին արդեն Պետերբուրգում գոյություն է ունեցել «Հայկական» անունով փողոց։ Մեզ է հասել հայկական մի ձեռագիր, որն ընդօրինակել է Հովհաննես քահանան 1738 թ. «ի արքայանիստ քաղաքն Սանկտ Պետրոս բուրխ»[1]։

Ռուսաստանի հայկական նոր գաղթօջախներից է հանդիսացել Գրիգորիոպոլիս հայաքաղաքը։ Նրա հիմնադրման պատմությունը հետևյալն է. 1787—1791 թթ. ռուս-թուրքական երկրորդ պատերազմի ժամանակ, ինչպես հայտնի է, ռուսական բանակը, գեներալ Ա. Վ. Սուվորովի հրամանատարությամբ, փայլուն հաղթանակներ է տանում թուրքերի դեմ և վերցնում Ֆոկշանը, Յասը, Բենդերը, Իզմայիլը և այլ քաղաքներ ու բնակավայրեր։ Նշված վայրերում ապրելիս են եղել ոչ քիչ թվով հայեր։ Հովսեփ Արղությանը, որ գտնվել է Բալկաններն արշավող զորաբանակի մեջ և մոտիկ փոխհարաբերությունների մեջ գտնվել գեներալ Սուվորովի հետ, ամեն միջոց գործ է դրել հայերի վիճակը բարելավելու համար։ Նա իր նամակներից մեկում օրինակ, հայտնում է, որ Իզմայիլ քաղաքը վերցնելուց հետո, Սուվորովի հանձնարարությամբ, նրա ենթակա հայ գնդապետներից մեկը՝ Եկիմ Խաստատովը, մի շարք միջոցներ է ձեռնարկել թեթևացնելու Իզմայիլի հայ բնակչության դրությունը։

Պատերազմի վերջանալուց հետո, երբ Յասում կնքվում է ռուս-թուրքական խաղաղության պայմանագիրը, Ռուսաստանը Թուրքիային է վերադարձնում իր գրաված Իզմայիլ, Ակկերման, Բանդեր և այլ քաղաքներ, թույլ է տրվում նշված քաղաքների հայ այն բնակիչներին, որոնք չեն ցանկանում ապրել թուրքական տիրապետության տակ, գաղթել և բնակություն հաստատել ռուսական տերիտորիայում։ 4000 հոգի հայ բնակչություն է գաղթում, որոնց ցարական իշխանությունները բնակավայր են հատկացնում Դուրաաբ քաղաքը, որի մոտ, Դնեստր գետի հովտում, հայերը հիմնում են Գրիգորիոպոլիս հայկական քաղաքը և նրա մոտիկ հայաբնակ գյուղերը։

Ռուսական իշխանությունները Գրիգորիոպոլիսի հայերին ցույց են տալիս նաև նյութական օժանդակություն՝ բնակարաններ և այլ հասարակական շենքեր կառուցելու համար։ Ռուսական արքունիքի 1794 թ. հոկտեմբերի 12-ի որոշմամբ, 46,780 ռ. հատկացվում է շենքեր, 10,000 ռ.՝ արհեստանոցներ և իջևանատներ, 37,000 ռ.՝ եկեղեցիներ, 15,000՝ կոնսիստորիայի և դպրոցի, 4,000 ռ. քաղաքապետարանի շենքեր կառուցելու և այլն։

XVII—XVIII դարում փոքրաթիվ հայ բնակչություն է ապրել նաև Ուկրաինայում։ Այստեղ ապրող հայերից ոմանք մտել են Ուկրաինայի կազակական զորքերի շարքերը և կռվել թուրք հափշտակիչների դեմ։ Եղել են հայ զինվորականներ, որոնք ղեկավարել են կազակական գնդեր։ XVII դ. 60-ական թվականներին իր քաջագործություններով աչքի է ընկել հատկապես «հայ գնդապետ» Իվան Ֆեոդորովը[1]։ Տեղեկություններ կան նաև հայ զինվորականների մասին Զապորոժցիների Սեչում։ Հայերն այստեղ են եկել գլխավորապես Թուրքիայից և Ղրիմից՝ փախչելով թուրքական գերությունից։

Ռուսաստանի հնագույն գաղթօջախներից էր, ինչպես տեսանք, Մոսկվան։ Հետագայում, երբ նա դարձավ միջազգային նշանակություն ունեցող քաղաքական և առևտրական խոշոր կենտրոն, տեղի հայ բնակչության թիվը մասամբ ավելացավ։ Այս շրջանում Մոսկվայում բնակություն են հաստատում գլխավորապես մեծահարուստ հայ վաճառականներ, ռուսական բանակում ծառայող զինվորականներ և մետաքսի ու մահուդի ֆաբրիկաներում աշխատող վարպետներ և բանվորներ։

Ըստ տեղեկությունների, 1552 թ. Իվան Ահեղը Կազանը վերցնելուց հետո, երբ հաղթականորեն վերադառնում էր Մոսկվա, քաղաքում նրան դիմավորող օտարերկրացիների մեջ հիշվում են նաև հայ առևտրականներ։

Մոսկվայի հայ գաղթօջախը տեղավորված է եղել Կիտայգորոդ թաղամասում՝ Իլինկայի և Վատկայի միջև, ուր գտնվել են հայ վաճառականների խանութները և հայկական իջևանատունը (Армянский гостинный двор)[1]։

[1] ՀՊՄ ձեռ. № 3807, թ. 15բ։

[1] Ф. П. Шевченко, Армяне в украинском казачьем войске (Տե՛ս «Научная сесия...» (վերև հիշված թերթը, էջ 20)։

[2] Н. М. Карамзин, История государства Российского, т. X, стр. 155.

Մինչև XVIII դարի վերջերը Մոսկվայում մշտապես ապրող հայ բնակչության թիվն այնքան էլ մեծ չի եղել։ Ըստ Արղությանի 1754 թվականի վիճակագրության, Մոսկվայում ապրելիս են եղել ընդամենը 22 տուն՝ 150 շունչ բնակչությամբ[1]։ Անհավանական չէ, որ Արղությանի վիճակագրության մեջ բաց թողնված լինեն Մոսկվայի քաղաքամերձ վայրերում աշխատող հայ բնակչությունը, բայց, այնուամենայնիվ, պատմական գրականության մեջ քաղաքացիություն ստացած այն կարծիքը, որ իբր XVII դարի վերջերին Մոսկվայում ապրող զենք կրելու ընդունակ հայերի թիվը 2000 մարդուց անցնում էր, անհիմն է։ Շատ են եղել Մոսկվա երթևեկող հայ վաճառականները։ Սկսած 1626 թվականից հայ վաճառականները հաճախ են հիշվում վավերագրերում։

2 Ռուսահայ գաղթօջախների ներքին կյանքը:

Չնայած Մոսկվայի գաղթօջախը շատ մեծ չի եղել, սակայն նա, ինչպես և Պետերբուրգը, անչափ խոշոր դեր են կատարել հայ-ռուսական հարաբերությունների զարգացման և Հայաստանի ազատագրության գործի կազմակերպման ասպարեզում։

Ինչպես հայկական մյուս գաղթավայրերում, այնպես և Ռուսաստանում հայ բնակչությունը միատարր չի հանդիսացել. մեծահարուստ հայ խոջայի կողքին մենք տեսնում ենք նաև հայ արհեստավորին, գյուղացուն, ծառայողին, օրավարձով ապրող բանվորին և այլ խավերի ներկայացուցիչներին։

Պատմական գիտությունների թեկնածու Ա. Ի. Յուխտը շատ հակակալ ուսումնասիրություն է կատարել՝ 1724 և 1747 թվականների նյութերի հիման վրա պարզելու Աստրախանի հայ բնակչության սոցիալական կազմը։ Ըստ նրա հրապարակած տվյալների, Աստրախանի հայ համայնքը հետևյալ խավերից է բաղկացած եղել. 1724 թ. Աստրախանում ապրող հայ 176 ընտանիքներից 43-ը եղել են առևտրականներ, 19-ը՝ առևտրական գործակալներ, 22-ը՝ արհեստավորներ, 24-ը՝ վարձու բանվորներ, 28-ը՝ տնային ծառայողներ և 40-ը՝ այգեգործներ, հոգևորականներ, նվագողներ և ծառայողներ[2]։

1747 թ. մեծացել է Աստրախանի հայ բնակչության թիվը և մասամբ փոխվել է նրա կազմը։ Նշված թվականում Աստրախանում ապրող 453 հայ ընտանիքներից 116-ը առևտրականներ են եղել, 25-ը՝ առևտրական գործակալներ, 148-ը՝ արհեստավորներ, 79-ը վարձու բանվորներ, 49-ը՝ տնային ծառայողներ, 19-ը՝ մուրացկաններ և 17-ը՝ այլ խավի մարդիկ[1]։

Աստրախանի հայ բնակչության սոցիալական կազմի և հայ արհեստավորության մասին հրապարակված այս տեղեկությունը արժեքավոր է ո՛չ միայն Աստրախանի հայ գաղթօջախի, այլև Ռուսաստանի և այլ երկրների գաղթավայրերի պատմության համար. մյուս գաղթօջախների հայ բնակչության սոցիալական կազմն առանձնապես չի տարբերվել Աստրախանի գաղթօջախից։

Ռուսաստանի հայ բնակչության մեջ ամենից գործուն խավը հայ վաճառականներն են հանդիսացել։ Նրանց, ըստ իրենց ունեցած հարստության և գործունեության ասպարեզի, կարելի է երկու հիմնական խմբի բաժանել՝ մանր և խոշոր։ Մեծամասնությունը մանր առևտրականներ են եղել, ունեցել են փոքր դրամագլուխներ և կապված են եղել գլխավորապես ներքին շուկայի հետ։

Բոլորովին այլ է եղել հայ խոշոր վաճառականների՝ խոջանեդի միջոցները և գործունեության ասպարեզը։ Նրանց թիվը թեպետ շատ մեծ չի եղել, բայց խոշոր դրամագլուխներ են ունեցել և գործել են գլխավորապես տարանցիկ առևտրի ասպարեզում։ Նրանցից ոմանք իրենց ներկայացուցիչներն են ունեցել այլ երկրներում։ Նման խոջաների դրամագլխի մեծությունը պատկերացնելու համար բավական է հիշել մի գործարք, որը կնքվել է Պետերբուրգում խոջա Սաֆրասովի և իշխան Արլովի միջև. վերջինս նկատեց կայսրուհուն նվիրելու համար Սաֆրասովից գնել է մի բրիլիանտ՝ վճարելով 400 000 ռուբլի[2], որն այն ժամանակվա դրամական արժեքով հեքիաթային մի գումար է։

Յուխտն ուսումնասիրելով տարանցիկ առևտրի բնագավառում հայ վաճառականի ունեցած դերը, հանգել է հետևյալ եզրակացության. «(Ջուղայի) հայկական կոմպանիան և ռուսահայերը տարանցիկ առևտրի բնագավառում գրեթե մոնոպոլ դեր ունեին. Ռուսաստանի շրջանառության ընդհանուր գումարի 75—80%-ը պատկանում էր նրանց»[3]։

Խոշոր է եղել առանձնապես հայ խոջաների դերը մետաքսի առևտրի ասպարեզում։ Պարզված է, որ Ռուսաստան ներմուծվող մետաքսի 10%-ը բերում էին ռուս վաճառականները, 9%-ը՝ անգլիացիները, իսկ մնացած 81 %-ը՝ հայ խոջաները։

Հայ խոջաների գործունեությունը սակայն չի սահմանափակ-

[1] ՀՊՄ, Կաթողիկոսական արխիվ, թղ. V, վավ. 26, էջ 7բ։

[2] «Աստրախանի հայկական գաղութի բնակչության սոցիալական կազմը XVIII դարի առաջին կիսում» (Հայկ. ՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր», 1957 թ., № 7, էջ 38)։

[1] Նշված աշխատությունը, էջ 54։

[2] Собрание актов, ч. II, стр. 301.

[3] А. И. Юхт, Армянская колония в Астрахане, стр. 15.

վել միայն Ռուսաստանի սահմաններով. նրանք, ռուսական արքունիքից թուլտվություն ստանալով, Նարվայի և Պետերբուրգի վրայով, ապրանքներ էին տեղափոխում Արևմտյան Եվրոպա։

Խոջաներն ապրանքներ տեղափոխելու համար ունեցել են իրենց սեփական ծովային նավերը։ Այսպիսի նավեր ունենալու համար նրանք նախապես թուլտվություն էին ստացել ցարական արքունիքից։ Պետական ենեատը 1769 թվականի նոյեմբերի 17-ին որոշել է. «Թույլ տալ Աստրախանի հայերին կառուցելու ծովային նավեր՝ Կասպից ծովի վրայով ապրանքներ փոխադրելու համար»[1]։

Ռուսաստանի հայ վաճառականներից ոմանք իրենց դրամագլուխները ներդրել են Ռուսաստանում մետաքսի արդյունագործության մեջ՝ հիմնելով մետաքսի ֆաբրիկաներ Մոսկվայում, Պետերբուրգում, Աստրախանում և Ղզլարում։ Մետաքսի ֆաբրիկաներ են ունեցել Իգնատ Շահրիմանյանը՝ Մոսկվայում, Մակարովները, Շիրվանովները և եղբայր Բունիաթովները՝ Աստրախանում և Ղզլարում, Մանվելովը, Հախվերդովը և եղբայր Մանուչարյանները՝ Պետերբուրգում և ուրիշներ։

Ցարական արքունիքն ամեն կերպ աշխատել է քաջալերել հայ առևտրականների գործունեությունը Ռուսաստանում, որովհետև նրանցից հսկայական մաքսային եկամուտներ է ստացել։ Միայն 1737—1744 թվականներին Աստրախանի մաքսային գրասենյակը ռուս-պարսկական տարանցիկ առևտրից գանձել է ավելի քան կես միլիոն ռուբլի մաքս։ Իզուր չէ, որ Պետրոս I-ը 1711 թ. մարտի 3-ի հրամանով կարգադրել էր. «Զարգացնել պարսկական առևտուրը և հայերին, որքան կարելի է, փաղաքշել»[2]։

Ռուսահայ համայնքների սոցիալական կազմում մյուս ըստ վարձիվ խավը արհեստավորությունն է հանդիսացել, որը տեղավորված է եղել գլխավորապես քաղաքներում, կապված է եղել առևտրականների հետ և կատարել նրանց պատվերները։

Ի դեպ, հայ արհեստավորության ներգաղթով շահագրգռված է եղել նաև ռուսական պետությունը. նա մի շարք անգամներ հայ արհեստավորներ է հրավիրել Անդրկովկասից և Հայաստանից՝ Մոսկվայում աշխատելու համար։ 1659 թ. խոճա Զաքարը Մոսկվայում գտնված ժամանակ Պոսոլսկի պրիկազում նրան խնդրել են Մոսկվա ուղարկել վարպետ ոսկերիչների, նկարիչների, արծաթագործների և այլ արվեստագետների[3]։

[1] Собрание актов, ч. I, стр. 27.

[2] Собрание актов, ч. II, стр. 290.

[3] Исторические описания древнего русского музея, ч. I, стр. 123.

Հայ արհեստավորության մասնագիտությունները պարզելու տեսակետից ցուցանշական է Աստրախանի հայ արհեստավորության պատկերը, որը բավականաչափ ուսումնասիրված է։ 1747 թվականին Աստրախանում աշխատող 148 արհեստավորներից 48-ը եղել են ջուլհակներ, 10-ը՝ ոսկերիչներ, 17-ը՝ դերձակներ, 16-ը՝ կոշկակարներ, 14-ը՝ մուշտակագործներ, 8-ը՝ ներկարարներ, 4-ը՝ գլխարկ կարողներ, 5-ը՝ սափրիչներ, 2-ը՝ երկաթագործներ, 3-ը՝ մսագործներ, 4-ը՝ կառապաններ, 2-ը՝ հացթուխներ, իսկ մյուսներն այլ մասնագիտության տեր մարդիկ[1]։

Վերև բերված Աստրախանի արհեստավորության թիվը վերաբերում է 1747 թվականին։ Շատ չանցած, 1759 թվականին, հայ արհեստավորությունը այդ քաղաքում եռակի անգամ ավելացել է՝ 148-ից բարձրանալով 493-ի։ Աստրախանի հայ ջուլհակները կազմել են տեղի ջուլհակների 91,5 %-ը և նրանց արտադրած կտորը, ըստ տեղեկությունների, վաճառքի է հանվել Ռուսաստանի 37 քաղաքներում և տոնավաճառներում։

Յուխտը համեմատության մեջ դնելով Աստրախանի հայ արհեստավորության տեսակարար կշիռը, գտնում է, որ «հայկական արհեստավորները արտադրության որոշ ճյուղերում մոնոպոլ դիրք էին գրավում, իսկ ամբողջությամբ վերցրած, նրանք շատ կարևոր դեր են խաղացել Աստրախանի մանր արդյունագործության զարգացման մեջ»[2]։

Նոր Նախիջևանի հայ արհեստավորներն ունեցել են իրենց համքարությունը (էսնաֆը) և էսնաֆ-բաշին, որն ընտրվել է իրենց կողմից[3]։ Նախիջևանի հայ արհեստավորների արտադրանքը բավարարել է ո՛չ միայն տեղի, այլև շրջակա քաղաքների և գյուղերի պահանջները։

Ռուսաստանի հայ արհեստավորության մասին ուշագրավ է մի տեղեկություն, որը հաղորդել է Շահամիրյանին Արղությանը 1787 թվականի հունվարի 3-ին գրած իր նամակում։ Հայտնելով նրան այն մասին, որ առաջիկայում սպասվում է կայսրուհու ժամանումը Նոր Նախիջևան և տեղեկացնելով նրան այդ կապակցությամբ հայ համայնքում տարվող նախապատրաստական աշխատանքի մասին, գրում է. «Այլ գոն ի քաղաքումս 30 տեսակ արհեստաւորութիւն։

[1] А. И. Юхт, Армянские ремесленники в Астрахани в первой половине XVIII в. *(Տե՛ս Հայկ. ՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր», 1958 թ., № 1, էջ 38)*։

[2] Նույն տեղում, էջ 54։

[3] Սյուզուկ (Ռ. Պատկանյան), Նոր Նախիջևանի հիմնարկության պատմությունը, Թիֆլիս, 1879, էջ 49։

Ղումաշեղէն և ճօթեղինօք դրօշակս եմ կազմեալ և իւրաքանչիւր արհեստն դեղագործութեամբ նկարեալ ի դրօշակս կամ ի քայրաղ, որ ի շնորհալի գալստեանն կայսրուհույն իւրաքանչիւր արհեստաւորք դասք դասք յառաջ ելանեն դրօշակօք իւրեանց»[1]: Նոր Նախիջևանի հայ արհեստավորն ուրեմն դուրս պիտի գային իրենց համքարական խմբերով և դրոշակներով:

Ռուսահայ բնակչության զգալի մասը կապված է եղել գյուղատնտեսության, մասնավորապես շերամապահության և խաղողագործության հետ: Ռուսական արքունիքը խրախուսելով հայ բնակչության ներգաղթը Ռուսաստան, խնդիր է ունեցել ո՛չ միայն կարգացնել արդյունագործությունը և առևտուրը, այլև նպաստել նոր կուլտուրաների՝ շերամապահության և խաղողաբուծության արմատավորելուն երկրում: Իսրայել Օրին Պարսկաստան մեկնելիս ցարական արքունիքը հատուկ հանձնարարություն էր տվել նրան՝ շերամապահության վարպետներ բերել իր հետ: Եվ Օրին 1709 թ. վերադառնալիս զեկուցել է արքունիքին, որ իր հետ 12 մետաքսի վարպետներ է բերել իրենց գործիքներով, «որպեսզի նրանք՝ իր Մոսկվա բերած մետաքսի հումքից ամեն տեսակի ապրանքներ գործեն»[2]:

1718 թվականին ֆաբրիկանտ Միլյուտինը հաղորդել է արքունիքին, որ ինքը մետաքսի մաքրման, մանելու և ներկելու արվեստը սովորեցնելու համար հրավիրել է մի հայ վարպետի՝ վճարելով 300 ռուբլի: Վարպետին նա տվել է 6 աշակերտ, որոնցից չորսն արդեն սոխորել և մասնագիտացել են[3]:

Կառավարական սենատը 1752 թ. նոյեմբերի 27-ի որոշումով ընդարձակ հողամասեր է հատկացրել Ղուկաս Շիրվանովին և Վասիլ Մակարովին՝ «թթենիներ տնկելու և շերամապահությունը զարգացնելու համար»[4]: 1763 թ. սեպտեմբերի 25-ի մի այլ որոշումով սենատը հողամաս է հատկացրել Մովսես Սարաֆովին «այգիներ տնկելու և այգեգործությունը զարգացնելու համար» և այլն:

Ամհիմն չէ «Собрание актов» ժողովածուն կազմող հեղինակ Գլինկան խոսելով հայ բնակչության ներգաղթելու մասին Ռուսաստան, գտնում է, որ նրանք իրենց հետ «Ռուսաստանի հարավային երկրամաս բերեցին շերամապահությունը և գինեգործությունը»: Պետք է ասել, որ ռուսական իշխանությունները շերամապահությունից և գինեգործությունից մի քանի միլիոն ռուբլոս հասնող հարկային եկամուտներ էին ստանում:

Նոր Նախիջևանի հայ գյուղացիությունը զբաղվել է ցորենի մշակությամբ և կաթնատնտեսությամբ: Նա ցորեն, յուղ և բուրդ է վաճառահանել նույնիսկ արտաքին շուկա:

Ռուսահայ համայնքներում գտնվել են ոչ քիչ թվով ընչազուրկ, աղքատ մարդիկ: Միայն Աստրախանում, ըստ տեղական իշխանությունների պաշտոնական տվյալների, եղել են 19 հայ մուրացկաններ: Այնպես որ սխալ է պատմաբաններից ոմանց հայտնած այն կարծիքը, որ ռուսահայ բնակչության բոլոր խավերը գտնվել են բարեկեցիկ վիճակում:

Արղությանը Հնդկաստանի իր նվիրակին 1790 թվականի հունվարի 4-ին գրած նամակում հայտնել է, որ տեղի աղքատները շատ են և նեղում են իրեն, և ինքը առանց արտասուքի հաց անգամ չի կարողանում ուտել: Նա հայտնել է նաև, որ աղքատներին օգնելու նպատակով նվիրատվություն է կազմակերպել. հատուկ մատյաններ է դրել եկեղեցիներում՝ հանգանակության գումարները գրանցելու համար: Նա այդ մատյաններն անվանել է «Դեֆտէր աղքատաց»[1]:

Մեզ է հասել ուշագրավ մի պայմանագիր, որը կնքվել է Մոսկվայում հայ աղայի՝ ավագ քահանայի և ծառայի՝ Մկրտչի միջև: Այդ պայմանագիրը պարզ պատկերացում է տալիս՝ թե ի՞նչ ստորացուցիչ պայմաններում է հայ նոքարը պարտավորվել ծառայելու հայ աղայի մոտ: Տարեկան մոտ երկու և կես թուման աշխատավարձի դիմաց աղան պահանջել է ծառայից, որ «նոքար Մկրտիչը... միշտ, ամենայն ժամ, իմ հոգևոր կամքն կատարի, իմ հրամանէն և իմ յօրդնէն (իմ կամքիցս) դուրս բան չառի, իւր հալովն կայ, սուտ չտայ և մեկն խօսի, ճշմարտութեամբ շարժի, խմելիք չխմի, լեզու չտայ, բերանն, ձեռն, ոտն յիստակ պահի, իմ տանս սրտն (տան գաղտնիքը) և ամենայն կողմանէ յանցանքն դուրս չտանի, վադախլաֆ (ժամանակից շուտ) դուրս չըգնայ, չարութիւն և խայնինութիւն, մատնութիւն չառի, սրտացաւի և հաւատարմութիւն առի տանէս յիքմին, ապրանք և ամանեղէն. չկորցնի և գողանալ չտայ, լէվ տերութիւն առի, տանէս և դռներէս զգոյշ կենայ, ահրն սրտէն չգցի, իմ սիրելոյն սիրելի և իմ ատեցողին ատելի լինի, իմ բարեկամն և իմ թշնամին ինձ ծանուցանի, շնութիւն, պոռնկութիւն, ագահութիւն և վերաքաշութիւն չառի, և ամենայն բանիս ճշմարտութեամբ կենայ: Եթե մեկն կենայ, իւր հախն իւրն արժանի լինի և

[1] ՀՊՄ ձեռ. № 2699, թ. 131ա:
[2] Эзов, Сношения, стр. 293.
[3] Собрание актов, ч. I, стр. 9.
[4] Նույն տեղում, էջ 20:

[1] ՀՊՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. VI, վավ. 21, էջ 6:

օրհնութիւն Աստուծոյ առցէ։ Եթէ չարութիւն և թշնամութիւն առի, վրէժխնդիր Տէր լիցի, և պատիժ ի տեառնէ առցէ...»[1]։ Հայ հոգևոր ական աղան, ինչպես տեսնում ենք, պակաս անխղճությամբ չի շահագործել իր ազգակից ծառային, քան ուրիշները։

Ռուսաստանի հայ գաղթօջախների մասին խոսելիս անհրաժեշտ է պարզել մի հարց ևս. ի՞նչ իրավական վիճակում է գտնվել ռուսահայ բնակչությունը։ Խոսքը մեծահարուստ վաճառականներին կամ պետական ու զինվորական բարձր պաշտոններ գրավող հայ մարդկանց մասին չէ, որոնց մի մասը ազնվականի կոչումներ էին ստացել և օգտվում էին ազնվականական բոլոր իրավունքներով և արտոնություններով, այլ գաղթօջախների մասին՝ ամբողջությամբ առած։

Ռուսաստանի հայ գաղթօջախներից մի քանիսն ունեցել են ինքնավարության իրավունք։ Ռուսաստանում առաջին անգամ ինքնավարության իրավունք է ստացել Աստրախանի հայ համայնքը։ Ռուսական իշխանությունները ցանկանալով խրախուսել Աստրախանում բնակություն հաստատած օտարերկրացիներին, թույլ են տվել նրանց հավաքական ներքին ինքնավարություն ունենալ, որը կոչվում է ռոտգաուզ (ротгауз)։ Հայերին հաջողվել է չմտնել հավաքական այդ ինքնավարության մեջ, այլ ունենալ իրենց սեփական ինքնավարությունը։ Աստրախանի հայկական դատաստանագրքում այդ մասին հետևյալն է ասված. «1746 հօքտեմբերի ի կառավարութենէ Սենաթին, ըստ խնդրոյ ազգին Հայոց, հրամայեալ եղև հաստատել ի քաղաքին Աստրախան յատուկ իրաւարան՝ վասն Հայոց ազգին և հռոմայեցւոց կրօնիւքն կաթոլիկաց՝ ի յիւրեանց դատաւորք ընտրեսցեն ի հասարակութենէ նոցին և արասցեն իրաւունս ըստ Հայոց կանոնաց և որպէս հաստատեալ եղև և կայ մինչ ցայժմ»[2]։

Ըստ սահմանված կարգի, Աստրախանը հայ համայնքն ընտրել է իր դատավորներին երեք հոգուց՝ երեք հայրենակցական միությունների առաջադրած թեկնածուներից։ Նրանց պարտականությունն է եղել վարել տեղի հայ համայնքի դատերը, ժողովրդի վրա բաշխել և հավաքել սահմանված պետական հարկերը և հայ համայնքի հետ կապված բոլոր հարցերի մասին պատասխանատու լինել իշխանությունների առջև։ Ընտրված դատավորները անմիջապես հաստատվել են նահանգական գրասենյակին[3]։

[1] Երևանի պետական համալսարանի «Գիտական տեղեկագիր», հ.86, էջ 75։
[2] ՀՊՄ, ձեռ. № 7383, թ. 4բ։
[3] Տես Ա. Ի. Յուխտ, վերը նշված դիսերտացիայի թեզերը, էջ 19—20։

Դատավորներ ընտրվել են միայն մեծահարուստ վաճառականներից, որոնք, բնական է, պաշտպանում էին իրենց խավերի շահերը։ Առաջին տարիներին, ըստ երևույթին, ձեռքի տակ դեռ չեն ունեցել դատաստանագիրք և դատերը վարվել են ըստ ավանդական սովորության։ Տեղի են ունեցել չարաշահումներ և այդ հողի վրա առաջացել են բողոքներ։ Պետական իշխանությունները միջամտել և պահանջել են հայերից՝ ունենալու դատաստանագիրք։ Կառավարության այդ պահանջը կատարելու համար հայերը շտապ թարգմանել, մշակել և տեղական պայմաններին հարմարեցրել են Հուստինիանոսի դատաստանագիրքը, որը կազմված է 52 գլուխներից՝ պարունակելով 1135 հոդված։ Չնայած դատաստանագրքի առաջաբանում կազմող հեղինակներն ընդունում են, որ «Եթէ ոք արասցէ զիրաւունս առանց դատաստանական մատենից, նման լինի առն չիմարի, որ ի մթին գիշերի շրջի առանց լուսոյ ճրագի», բայց իրականում դատաստանագրքի ստեղծումից հետո չարաշահումները ո՛չ թե պակասում, այլ ավելանում են և հիմնավորվում դատաստանագրքով։ Բոլոր դեպքերում տուժողները հանդիսացել են աշխատավորները, որոնցից մեծ թվով բողոքներ են ստացել պետական վերադաս իշխանությունները։

Արղությանը իր 1752 թ. հոկտեմբերի 10-ին Մոսկվա ներսեսին գրած իր նամակում խոսելով Նոր Նախիջևանի դատավորների չարաշահումների մասին, գրում է. «Շատ ափսոսացի, որ մեր Նախիջևանայ դատաւորքն անիրաւաբար վարին ընդ աղքատացն»[1]։

XVIII դարի 80-ական թվականներին Աստրախանի հայ աշխատավորությունը պայքարել է դատավորների միակողմանի որոշումների, հարկերի անարդարացի բաշխումների դեմ և այլն։ Աշխատավորության պայքարը վարել են հայ արհեստավորները, որոնց ղեկավարներն են հանդիսացել Մ. Մուրատովը, Գ. Նիկիտինը և Օ. Գրիգորևը։ Աստրախանի հայ աշխատավորները կառավարության ներկայացրած իրենց դիմումներից մեկի մեջ բողոքել են, որ իրենց աղաները այնպես են իշխում իրենց վրա, որ կարծես իրենք նրանց ճորտերը լինեն[2]։ Աստրախանի հայ աշխատավորության այս պայքարը վերջանում է նրանով, որ ցարական իշխանությունները դատաստան են տեսնում ընդվզող հայ աշխատավորության

[1] ՀՊՄ, ձեռ. № 2699, էջ 106։
[2] Տես Ա. Ի. Յուխտ վերև հիշված դիսերտացիոն աշխատության թեզերը, էջ 20։

ղեկավարների հետ։ Նրանցից 24 հոգու ենթարկում են ծեծի և պատվիրում հլու հնազանդ կատարել իրենց աղաների հրամանները[1]։

Աստրախանի հայերի տեղական անկախությունը պահպանվում է բավականին երկար՝ մինչև 1840 թվականը։

Եկատերինա կայսրուհու 1779 թվականի հրամանով ինքնավարության իրավունք է տրվել Նոր Նախիջևանի հայ համայնքին։ Արղությանի Շահամիրյանին գրած մի նամակից երևում է, որ Նոր Նախիջևանի ինքնավարության ղեկավար մարմինը փոքր-ինչ տարբերվել է Աստրախանի և մյուս վայրերի ինքնավար մարմիններից. դատավորներին առընթեր գոյություն է ունեցել 20 հոգուց բաղկացած մի խորհուրդ. «Բացի ի հնգեքին դատավորացն,— գրում է Արղությանը,— նաև քսան խոհական անձինք, զորս և հոգաբարձուս անուանիմք, որ սոքա ի յամենայն ուրբաթու աւուրս գան ի մագիսթրատն և խոկան շահաւետութեան քաղաքիս՝ վաճառականութեան և արհեստաւորացն, նաև՝ բարեկարգութենէ քաղաքիս»[2]։

Ավելի ուշ՝ 1794 թ. հոկտեմբերի 12-ին, Եկատերինա կայսրուհու հրամանով ինքնավարության իրավունք է տրվել նաև Գրիգորիոպոլիս քաղաքի հայ համայնքին։ Այստեղ հայերն իրավունք են ստացել սեփական քաղաքապետարան (магистрат) ունենալ և դատավարությունը վարել ըստ հայկական օրենքների։

Արղությանը հայ բնակչություն է հիշում Սարաֆանում՝ 44 տուն, 250 շունչ և Բարաղանում (Թերեքի արևելյան ափին) 30 տուն, 250 շունչ։ Ըստ Արղությանի վիճակագրության, 1781 թվականին ողջ Ռուսաստանում ապրելիս են եղել 4341 տուն, 19 180 շունչ հայ բնակչություն։ Այս թվի մեջ չի մտնում չերքեզաբնակ հայությունը, որը նույնպես մտնում էր Ռուսաստանի թեմի մեջ։ Արղությանը չերքեզահայության թիվը չի հիշել այն պատճառաբանությամբ, որ «Լեռնաբնակ չերքէզացն մերազնէից որք ոչ են մեզ»։ XVIII դարի վերջում Ռուսաստանում ապրող հայ բնակչության թիվը կրկնապատկվում է ռուս-թուրքական պատերազմից հետո՝ Բալկաններից, 1795 թվականին՝ Վրաստանից և 1796 թվականին՝ ռուսական բանակի Անդրկովկասից նահանջի հետևանքով Ղարաբաղից եկած հայերից։

[1] Տե՛ս Ա. Ի. Յուխտի վերև հիշված դիսերտացիոն աշխատության թեզերը էջ 20։

[2] ՀՊՄ, ձեռ. № 2699, թ. 131 բ։

Ռուսահայ գաղթավայրի դերը հայ ժողովրդի ազատագրական շարժումների մեջ։

Ռուսահայ գաղթավայրը խոշոր դեր է ունեցել հայ-ռուսական հարաբերությունների զարգացման և սերտացման գործում։ Մոսկվայում, Պետերբուրգում և Աստրախանում հանդես են եկել ականավոր հայ հասարակական մի շարք գործիչներ, որոնք մեղվաջան աշխատանք են կատարել հայկական հարցի արծարծման և նրա լուծմանը հետամուտ լինելու ուղղությամբ։

Այս խնդրի վերաբերյալ չնայած բազմաթիվ ուսումնասիրություններ են լույս տեսել, և հարուստ գրականություն գոյություն ունի, բայց խնդրին անծանոթ ընթերցողին՝ նրա մասին, գաղթավայրի պատմության կապակցությամբ որոշ պատկերացում տալու նպատակով, անհրաժեշտ ենք համարում կանգ առնել մի քանի կարևոր դրվագների վրա, որոնք բախտորոշ նշանակություն են ունեցել հայ ժողովրդի կյանքում։

Մեզ հասած և հայտնի հնագույն վավերագրերը, որոնք հայերի կողմից քաղաքական նկատառումներով ներկայացվել են ռուսական արքունիքին, դրանք XVII դարի 70-ական թվականներին Էջմիածնի Հակոբ Ջուղայեցի և Գանձասարի Պետրոս կաթողիկոսների դիմումներն են Ալեքսեյ Միխայլովիչ ցարին։ Հակոբ կաթողիկոսը դիմել է ցարին, որ նա դիվանագիտական ճանապարհով ներազդի կառավարության վրա, որ վերջինս «առաջիկայում չլռունակի չարչարել» հայ ժողովրդին։ Իսկ Պետրոս կաթողիկոսը խնդրել է ռուսական արքունիքից, որ նա պաշտպան հանդիսանա հայ ժողովրդին և չթողնի «առանց ապաքինման»[2]։

Որոշակի քաղաքական բնույթ են ունեցել նոր Ջուղայի առևտրական ընկերության ներկայացուցիչ Գրիգոր Լուսիկովի 1672—1673 թվականներին Մոսկվայում վարած բանակցությունները։ Լուսիկովը, ինչպես հայտնի է, պարսկական շահի կողմից հանձնարարություն է ունեցել բանակցելու ցարական արքունիքի հետ՝ հակաթուրքական կոալիցիա ստեղծելու հարցով, որին միանալու շահագրգռված էր Պարսկաստանը։ Օգտվելով առիթից, ինչպես երևում է, նա գաղտնի բանակցություններ է վարել նաև հայ ժողովրդի ազատագրության հարցի վերաբերյալ, որը խնդրել է գաղտնի պահել պարսկական շահից[3]։

Հայ-ռուսական քաղաքական հարաբերություններն ավելի

[1] Армяно-русские отношения в XVII веке, стр. 257.

[2] Там же, стр. 92.

[3] Վ. Պարսամյան, Հայ-ռուսական հարաբերությունների պատմությունից (առանձնատիպ), Երևան, 1952, էջ 83։

գործարար բնույթ են ստանում XVIII դարի սկզբներին, երբ Մոսկվա է ժամանում մեծ հայրենասեր, հայ ժողովրդի ազատագրության գործի նվիրված վետերան Իսրայել Օրին։ Հայ ժողովրդի ազատագրության երազանքով տարված, նա երկար թափառումների մեջ է գտնվել Արևմտյան Եվրոպայում, դիմումներ է կատարել մի շարք երկրների քաղաքական ղեկավարներին և վերջ ի վերջո եկել է այն համոզման, որ միակ երկիրը, որ կարող է գործնական օգնություն ցույց տալ հայ ժողովրդին, հանդիսանում է մեծ Ռուսաստանը։ Կենսափորձով իմաստավորված, նա 1701 թվականին հաստատվում է Մոսկվայում և սկսում իր բանակցությունները ռուսական արքունիքի հետ՝ աշխատելով շահագրգռել նրան՝ օգնելու հայ ժողովրդի ազատագրության գործին։ Պետրոս I-ը՝ քաղաքական այդ ականավոր գործիչը, ելնելով իր երկրի շահերից, որոշակի խոստում է տվել օգնելու հայ ժողովրդի ազատագրությանը։ Դժբախտաբար, Պետրոս I-ի խոստման իրագործումը ձգձգվում է Ռուսաստանի՝ Շվեդիայի դեմ մղած երկարատև պատերազմի հետևանքով։ Եվ Օրին իր սկսած գործի վախճանը չտեսած, մահանում է 1711 թվականին Աստրախանում։

Հյուսիսային պատերազմը վերջանալուց հետո Պետրոս I-ը ձեռնարկում է իր նշանավոր պարսկական արշավանքը, որը վերջանում է անհաջողությամբ. միջազգային լարված իրադրության մեջ նա հարկադրված է լինում դադարեցնել բանակի առաջխաղացումը դեպի Անդրկովկաս և ետ վերադառնալ Դերբենդից։ Սակայն ազատագրության սպասող հայ ժողովրդին հուսախաբ չանելու համար նա Անդրկովկաս է ուղարկում Մոսկվայի հայ բնակիչ Իվան-Կարապետին հատուկ հրովարտակով և հուսադրում հայերին՝ խոստանալով առաջիկայում, նպաստավոր իրադրություն ստեղծելու պարագային, օգնության ձեռք մեկնել։

Պետրոս I-ի մահը սառը ջուր է լցնում հայ ազատագրական շրջանների վրա։ Մեզ է հասել Օրու գործակից Մինաս վարդապետի Եկատերինա I-ին ներկայացրած մի դիմումը, որը կարևոր է ինչպես հայ-ռուսական քաղաքական հարաբերությունների սկզբնավորման հարցի, այնպես և պարսկական արշավանքից հետո Անդրկովկասում ստեղծված նոր իրադրության առնչությամբ։

«Եւ այլ թվին 1701...,—գրում է նա—եկինք մեծ իմփեռայթօրի դուլուղումն։ Մեծ իմպեռայթօռն զմեզ ընդունեց և իւր բարի շաղավաթօվն պահեց մինչ այսօր»։ Այսքան ժամանակվա ընթացքում, շարունակում է նա, հայ ժողովուրդը «մեծ իմպեռայթօրի ուխտին և հրամանին հնազանդեալ նեղութիւն քաշում են»։ Նա

հայտնում է, որ եթե այդ պայմանադրությունը սկզբում գաղտնի էր թուրքերից և պարսիկներից, ապա այժմ հայտնի է դարձել և սկսել են նեղել հայ և վրաց ժողովուրդներին։ Հայերը և վրացիները, գրում է նա, սկսել են հուսահատվել, անհրաժեշտ է «ջանք դնէք, որ այս երկու ազգն՝ վրացի և հայք, որ ձերում թագաւորութեան ծառայութեան պահէք», այլապես «եթէ այն երկու ազգն ձեռաց գնան, այլ յետոյ հնարք չէ՝ տնչութիւն լինի»[1]։

Հայ-ռուսական հարաբերությունները նոր փուլ են թևակոխում XVIII դարի երկրորդ կեսում։ Հակոբ Շամախեցի կաթողիկոսը 1760 թվականին վրաց Թեհմուրազ թագավորի միջոցով ռուսական արքունիք է ներկայացրել մի դիմում, որով խնդրել է ռուսական կառավարությունից, որ նա ինչպես հոգս է տանում իր «Օրհնեալ և բարգաւաճեալ ազգն», այնպես էլ հոգա «զազգն մեր ողորմելի և զազգս Վրաց»[2]։

1762 թվականին Ռուսաստան է գալիս Հովսեփ էմինը։ Նա Պետերբուրգում գտնված ժամանակ բանակցություններ է վարում կանցլեր իշխան Վորոնցովի հետ և հայտնում իր մտադրությունը՝ Վրաստան մեկնել՝ հայ ժողովրդի ազատագրական շարժումները ղեկավարելու նպատակով։ Կանցլերը հավանություն է տալիս նրա ծրագրին և հանձնարարական նամակ ուղարկում Հերակլին՝ էմինին աջակցելու համար։

Էմինը Վրաստան գնալիս Աստրախանում հայ երիտասարդներից կազմակերպում է երեսուն հոգուց բաղկացած զինվորական մի ջոկատ՝ «իրենց զենքով ու ձիաններով» և տանում իր հետ։ Թե ինչպիսի մեծ ոգևորություն է գոյություն ունեցել այն ժամանակ ռուսահայ համայնքներում հայ ժողովրդի ազատագրության գործի նկատմամբ, այդ երևում է այն փաստից, որ երբ էմինը գնում է Ղզլար, քաղաքից շատ հեռու նրան դիմավորելու են գալիս տեղացի հարյուրավոր հայեր[3]։

1768—1774 թվականների ռուս-թուրքական պատերազմը ռուսական արքունիքի օրակարգի մեջ է մտցնում հայկական հարցը։ Հնարավոր է համարվում ռազմական գործողությունների նոր ճակատ բաց անել Կովկասում։ Այդ հեռանկարը ոտքի է հանում ռուսահայ գաղթօջախի հասարակական շրջանները։ Եվ ահա 1769 թ. հունիսի 8-ին Մովսես Սարաֆովի անունից, ռուսական արքունի-

---

1 «Էջմիածին», 1950 թ., XI—XII, էջ 74—75։

2 Լեո, Հայոց պատմություն, հ III, էջ 769։

3 А. Р. Иоаннисян, Иосиф Эмин, стр. 95—96.

քին է ներկայացվում մի ծրագիր՝ Հայաստանի ազատության և հայ պետության վերականգնման վերաբերյալ։

Մովսես Սարաֆովը Աստրախանի հայ բնակիչ էր, մետաքսի ֆաբրիկայի տեր, կասպից ծովի վրա ծովային նավեր կառուցելու իրավունք ունեցող մեծահարուստ վաճառական։ Ակադ. Աբ. Հովհաննիսյանը, որ առաջին անգամ հրապարակել է նշված ծրագիրը, իրավացիորեն գտնում է, որ այդ ծրագիրը կազմելու գործում մասնակցել են նաև Պետերբուրգում Հայաստանի ճակատագրով զբաղվող մի քանի այլ անձնավորություններ ևս՝ Հովհաննես Լազարյանը, Գրիգոր Կապանյանը, Մխիթար Նազարյանը, Հակոբ ուզբաշին, Մակար Մանուչարյանը, Հովհաննես քահանան և ուրիշներ[1]։

Ըստ այդ ծրագրի, Աստրախանի, Մոսկվայի, Մոզդոկի և Ղրղլարի հայ բնակչությունից պետք է կազմակերպվեր հայ կամավորական մի զորամաս և մտներ ռուսական էքսպեդիցիոն բանակի կազմում։ Կովկաս մտնող զորաբանակի ծախսերը հոգալու համար ռուսահայ վաճառականներին պետք է տրվեր պետական վարկ՝ տեղում ապրանքներ գնելու և շահույթով Պարսկաստանում վաճառելու համար՝ իրացված գումարը տրամադրելով էքսպեդիցիոն բանակի հրամանատարությանը։ Անհրաժեշտ դեպքում հանձնարարվում էր ծախսերը հոգալու համար վաճառքի հանել հայոց եկեղեցիների արծաթյա և ոսկյա անոթները։ Կովկաս մրտնող ռուսական բանակին պետք է միանային ղարաբաղցիների և վրաց Հերակլ և Սոլոմոն թագավորների զորքերը։ Առաջին հերթին պետք է վերցվեր Երևանը և ապա այն հենակետ դարձնելով հայկական և դաշնակից բանակները պետք է արշավեին դեպի Վան ու այլ վայրեր և ազատագրեին ողջ Հայաստանը։ Ազատագրված Հայաստանը լինելու էր ինքնավար և ունենալու էր իր թագավորը։ Ռուսաստանը հովանավորելու էր հայկական թագավորությանը և հարկավոր դեպքում ցույց էր տալու զինական օգնություն։

Սարաֆյանի և ընկերների ներկայացրած այս ծրագիրը, պետք է ասել, որ առանձին ուշադրության չարժանացավ, որովհետև ցարական արքունիքին իրապես հետաքրքրում էր ո՛չ թե հայ պետականության վերականգնումը, այլ հայերի օգտագործումը ռազմական գործողությունների ժամանակ։

Ռուս-թուրքական 1768—1774 թվականի պատերազմը վերջանալուց հետո. Ռուսաստանի համար առաջնահերթ հարց դարձավ Անդրկովկասի գրավումը։ Եվ այս կապակցությամբ հայկական հարցը նորից մեջտեղ եկավ։ Ցարիզմը նորից «ազատագրող»-ի դիմակ հագավ։

Այս ժամանակաշրջանում, որպեն հայ ժողովրդի լիազոր ներկայացուցիչներ՝ ռուսական արքունիքի հետ բանակցելու համար հանդես են գալիս Ռուսաստանի հայոց հոգևոր ներկայացուցիչ Հովսեփ արքեպ. Արղությանը և Պետերբուրգի մեծահարուստ, ռուսական պետական բարձր շրջանների հետ կապված Հովհաննես Լազարյանը։ Արղությանը լիազորված է եղել Ղարաբաղի մելիքների կողմից։ Այդ երևում է Արղությանի 1783 թ. սեպտեմբերին Լազարյանին ուղարկած հետևյալ տեղեկությունից. «Ի մելիքաց Ղարաբաղու և Հովհաննէս կաթողիկոսէն միաբանութեան թուղթ է եկեալ, յորում զմեզ վեքիլ էին արարեալ ի կողմանէ իւրեանց՝ թէ զոր ինչ Յովսէփ արքեպիսկոպոսն արասցէ ի կողմանէ մերմէ, մեզ ընդունելի է»[1]։ Էջմիածնի կաթողիկոսը լիազորած է եղել Հովհաննես Լազարյանին։ Ղուկաս կաթողիկոսը 1784 թ. փետրվարի 17-ին հետևյալն է գրել Լազարյանին. «Այժմ զայս գրեմ ազնիւ սիրելոյդ իմոյ, զի այսօր մեք զքեզ ունիմք իբր հոգաբարձու և բարեխնդիր իմոյ, զի այսօր մեք զքեզ ունիմք իբր հոգաբարձու և բարեխնդիր իմոյ դրանաս աստուածապսակեալ կայսրուհւոյ և բազմագութ խնամակալին մերոյ գերապատիւ և պայծառափայլ Պօտէմկինին վասն ազգիս խղճալւոյ և սրբոյ աթոռոյս»[2]։

Քաղաքական ահա այս նոր իրադրության մեջ Լազարյանը և Արղությանը 1780 թ. հունվարի 10-ին բանակցություններ են մտնում արքունիքի պաշտոնական ներկայացուցիչներ իշխան Պոտյոմկինի և գեներալ Սուվորովի հետ։ Արղությանը, Ստեփանոս Դավիդովին 1796 թվականին գրել է. «Ես ի սկզբան 1780 թուին և ի յունվարի մէջն նա էր (այսինքն՝ Սուվորովը—Ա. Ա.) կարին և ի յունվարի մէջն նա էր (այսինքն՝ Սուվորովը—Ա. Ա.) կարգեալ ի վերայ այսմ գործոց. նա եկն առիս և գրեաց զամենայն ինչ ի տանն Թուրչինովին... և յառաջ ունէր կամք լինել յայն (այսինքն՝ Անդրկովկասի—Ա. Ա.) կողմունս»[3]։

1780 թ., ռուսական արքունիքի հետ հայկական հարցի շուրջ տեղի ունեցող ահա այս բանակցությունների ընթացքում, Լազարյանը, Արղությանի գործակցությամբ, ներկայացնում է հայ ժողովրդի ազատագրության և հայ պետականության վերականգնման մի ծրագիր, որն իր բովանդակությամբ մեծ տարբերություն չունի Սարաֆյանի ներկայացրածից։ Նրա մեջ արծարծված

[1] А. Р. Иоаннисян, Иосиф Эмин, стр. 266—278:

[1] ՀՊՄ, ձեռ. № 4496, թ. 173։
[2] ՀՊՄ, ձեռ. № 2803, թ. 383ա։
[3] ՀՊՄ, ձեռ. № 2951, թ. 82ա։

են հետևյալ հարցերը. երկու տարվա ընթացքում Ռուսաստանում, հայ զորավարի հրամանատարության տակ, պետք է կազմակերպվի երկու կամ երեք հազարանոց մի բանակ՝ խնդիր ունենալով գրավել Շամախին և Գանձակը։ Կովկաս արշավող հայկական այդ բանակին պիտի միանան Ղարաբաղի հայ մելիքների զորքերը։ Միացյալ այս ուժերը նախ պիտի ազատագրեն Արարատյան նահանգը, ապա՝ հայկական մյուս գավառները։ Սկզբնական շրջանում նախատեսվում էր ռուսական օգնությունը՝ հետևակ և թնդանոթաձիգ զորքերով, մինչև որ Հայաստանի նորաստեղծ պետությունը կկանոնավորի իր ֆինանսները և կստեղծի կադրային բանակ։ Այս բոլորի համար Հայաստանը պարտավոր էր, պետք եղած դեպքում, Ռուսաստանին տրամադրել այնքան զորք, որքան կարող է և «միշտ երախտապարտ կմնար Ռուսաստանին՝ իր փրկության և վերածնման համար»[1]։

Ռուսական արքունիքը, հայկական հարցի այս հրատապ շրջանում, ինչպես հայտնի է, լազարյանի և Արղությանի միջոցով հրավիրել է Հովսեփ Էմինին՝ ցանկանալով, անշուշտ, հայկական զորամասեր կազմակերպել։ Բայց ինչո՞վ բացատրել, որ Արղությանը և Լազարյանը, որ այնքան եռանդով կպել էին հայկական հարցի լուծմանը, չեն հրավիրում Էմինին։ Այս հարցին պատասխանում է Արղությանը՝ Շահամիրյանին 1785 թվականի սեպտեմբերի 10-ի նամակում, որը դժբախտաբար, վրիպել է այս հարցով զբաղվող մեր պատմաբանների ուշադրությունից։ «Էմին աղայն,— գրում է նա,— եթէ յայսմ միջոցի աստ դիմէր, բարի առնէր և հարկ ազգի մերում, զի այդպէս առն շրջէին, և խնդիր ևս եդին դմա, որպէս յառաջ գրած եմք, բայց աստ հռչակեցաւ, որպէս թէ վախճանեալ իցէ»[2]։

Հայ-ռուսական քաղաքական հարաբերությունների պատմության ամենանշանակալից փաստերից մեկը հայ-ռուսական դաշնադրությունն է, որի վերաբերյալ ժամանակին հայերի կողմից կազմված է եղել երկու նախագիծ, որոնցից մեկի կազմողներն են հանդիսացել Մադրասի հնդկահայ գործիչները՝ Շահամիր Շահամիրյանի գլխավորությամբ, իսկ մյուսը՝ Արղությանը և Լազարյանը։ Այս նախագծերը հանգամանորեն քննվել է հայագիտության մեջ և ցույց տրվել գաղափարական այն տարբերությունը, որ գոյություն ունեն նրանց մեջ։ Ապացուցված է, որ առաջին նախագիծը արտահայտել է հայ ավատական շրջանների, իսկ երկրորդը՝

[1] Собрание актов, ч. II, стр. 68—70.

[2] ՀՊՄ, ձեռ. № 2699, թ. 43ա։

նոր ասպարեզ իջած առաջավոր բուրժուազիայի գաղափարախոսությունը[1]։

Շահամիրյանի նախագծով ազատագրված Հայաստանը պետք է դառնար ինքնուրույն, ամկախ պետություն։ Պետական վերջնական կարգը լինելու էր սահմանադրական հանրապետություն։ Պետության գլուխ էր կանգնելու ժողովրդից ընտրված նախագահը։ Վերանալու էին ճորտությունը և ավատական արտադրական եղանակին հատուկ մյուս բոլոր ինստիտուտները։ Կնքվելու էր մշտական դաշինք ազատ առևտրի իրավունքով[2]։

Ըստ Արղությանի նախագծի, Հայաստանը դառնալու էր Ռուսաստանի հպատակ երկիր։ Որպես վասալական երկիր, վճարելու էր հարկ և պահանջված դեպքում տրամադրելու էր իր զորքը և ստանալու էր օգնություն։ Հայաստանի վարչական կարգը լինելու էր ֆեոդալական միապետություն։ Թագավորի թեկնածուն առաջադրելու էր ռուսական արքունիքը, որը կարող է լինել հայ կամ ռուս։ Հայաստանում չպիտի լինեին ճորտեր և ստրուկներ։

Հայագիտության մեջ քաղաքագիտություն ունի այն հաստատուն կարծիքը, որ ռուսական արքունիքին նախ ներկայացվել է Շահամիրյանի նախագիծը, երբ նա մերժվել է, մշակվել և ներկայացվել է երկրորդը, որն իր արծարծած հարցերով ավելի դուր կարող էր գալ արքունիքին։

Այս կարծիքը մեզ թվում է անհամոզեցուցիչ։ Այդ երևում է մի շարք փաստերից։

Արղությանը 1783 թ. Ստեփանոս Դավիդովին գրած նամակում հանձնարարում է նրան՝ թե «մեք զաշնադրության տեսակ և նիւթ ինչ արարեալ էաք»։ Եթե այդ լիներ Շահամիրյանի նախագիծը, հազիվ թե Արղությանն իրեն վերագրեր[3]։

Արղությանը 1786 թ. Շահամիրյանին գրած նամակում հայտնել է նրանց, որ «մեք զքանի գլուխս դաշանց յառաջադիմութիւնս արարաք և թարգմանել ետուք ի ցոյց»։ Այստեղ ևս Շահամիրյանը որոշակի հայտնում է, որ ներկայացված նախագիծը իրենց կազմածն է եղել և ոչ մի խոսք՝ Շահամիրյանի նախագծի ներկայացման մասին։

Ղուկաս կաթողիկոսի 1783 թ. սեպ. 5-ին Արղությանին ուղարկված նամակից երևում է, որ դաշնադրության այս նախագիծը

[1] Թ. Ավդալբեկյան, Հայ ազատագրական շարժման երկու հոսանք XVIII դարի վերջում (տե՛ս «Նորք», 1922 թ., Երևան, էջ 159—160)։

[2] ՀՊՄ, № 4496, թ. 229։

[3] ՀՊՄ, № 2699, թ. 102ա։

ուղարկված է եղել էջմիածին ծանոթանալու և հավանություն տալու համար։ Ղուկաս կաթողիկոսը գրում է. «Բայց յաղագս դաշանց զոր գրես... առանց գիտության ազգին մերոյ ո՞րպես կարեմք զդաշնագիրս գրել առ նոսա։ Եթէ ասիցես թէ՝ հարց ցազգն. սիրելիդ իմ, որո՞ց հարցանեմ, ոչ ապաքէն բազումք և գլխաւորք են ընդ իշխանութեամբ այլազգեաց»[1]։

Մեզ թվում է, որ Ղուկաս կաթողիկոսը Արղությանից ստացած այս նախագիծը, ավելի ճիշտ՝ նախագծերը, ծանոթանալուց է ուղարկել Պոլսի հայ պատրիարքարանին, և այդ ճանապարհով է նրա մի պատճենը ընկել Ներսես պատրիարքի արխիվը։

Արղությանի ներկայացրած դաշնադրություն նախագիծը չի արժանացել ռուսական արքունիքի հավանությանը։ Այդ երևում է Արղությանի 1786 թ. սեպտեմբերի 3-ին Շահամիրյանին գրած նամակից։ Խոսելով վերականգնվող Հայաստանում հանրապետական կարգերի հաստատման մասին և իրավացի համարելով նրա դիտողությունը՝ «զգույշ լինել ի դաշնադրութեան շինելն» և պաշտպանել «ծերակուտական» կարգերը որպես երջանիկ կողմանցն եւրոպացւոց» տեսակետը, գանգատվում է՝ թե կաթողիկոսը և նրան շրջապատող մարդիկ չեն հասկանում, թե ի՞նչ առավելություններ ունի «ծերակուտական իշխանութիւնը»։ Նա հայտնում է, որ հայոց կողմից բանակցելու համար լիազորված էր Հովհաննես Լազարյանը և կարող էր «զբաղձանս քո լցուցանել, բայց երբ մենք դաշնադրության նախագիծը թարգմանեցինք և ցույց տվեցինք ռուսական արքունիքի ղեկավար մարդկանց, պատասխանեցին՝ թէ թագաւորք ընդ թագաւորաց կարեն դնել զդաշինս, ազգի ձերում ո՞վ է թագաւոր, որ համարձակիցի զդաշինս խնդրել»[2]։

Այս նույն նամակում Արղությանը մեղադրում է կաթողիկոսին «միայն հայցեն թէ՝ զմեզ փրկեցէք» և չեն հասկանում, «երբ փրկեն սրով, ըստ օրինի թագաւորաց, հարկաւորին ծառայ առնել իւրեանց»[3]։

Արղությանը 1783 թ. հայկական հարցում հանդես է եկել արտակարգ եռանդով։ Նա նամակներ է ուղարկել Ղարաբաղ և էջմիածին, պահանջել է դիմումներ գրել, պատգամավորներ ու նվերներ ուղարկել և այլն։ Եվ այդ արել է այն աստիճանի անվերապահ և անղգույշ, որ արժանացել է կաթողիկոսի նկատողությանը։ «Գիտես,— գրում է Ղուկաս կաթողիկոսը 1783 թ. ապրիլի 25-ի

[1] ՀՊՄ, ձեռ. № 2803, թ. 127ա։
[2] ՀՊՄ, ձեռ. № 2699, թ. 108ա։
[3] Նույն տեղում։

գրությամբ,— զոր ինչ գրել ես, չեն լոկ ասութիւնք լեզուի՝ ցնդեալք ընդ օդս, այլ գրութիւն», որոնց օրինակներն «մնան աստին», ուստի պետք է արտակարգ զգույշ լինել[1]։

Նման զգուշացում՝ քաղաքավարի ձևով արված է նաև Լազարյանին։ Կաթողիկոսն իր 1783 թ. սեպտեմբերի 5-ին Լազարյանին գրած նամակում բացատրել է նրան, որ իրենք վատ տեղում և վտանգավոր ժամանակներում են ապրում, ուստի պետք է «շրջահայեաց և զգոյշ լինիլ» և պետք չէ ամենայն ինչ «ի թուղթս արձանացուցանել»[2]։

Արղությանի խորհրդով 1784 թ. երկու պատգամավորություն է ուղարկվել Մոսկվա՝ մեկը Ղարաբաղի մելիքներից, իսկ մյուսը՝ «Արարատեան նահանգ»-ից։ Երկրորդ պատգամավորությունը գլխավորել է Ստեփանոս Դավիդովը՝ մեր ազգային հերոս Դավիթ-Բեկի թոռը, որը Պետերբուրգ է ժամանել 1784 թ. սեպտեմբերի վերջին։ Երկու պատգամավորությունն էլ գործել են Արղությանի և Լազարյանի հրահանգների համաձայն։

Ուշագրավ է այն ցուցումը, որ տվել է Արղությանը Ստեփանոսին իր 1784 թ. հոկտեմբերի 24-ին գրած նամակում (բերում ենք թարգմանաբար). «Իմ հոգևոր որդի. Դու միայն պատգամավոր, այսինքն՝ դեսպան և կամ միջնորդ չես երևանի, այլ՝ ողջ հայոց ազգի և ողորմելի Ղարաբաղի մելիքների, որ մինչև այսօր իրենց աղաղակով խլացրել են մեր և սրանց (այսինքն՝ ռուսների—Ա. Ա.) ականջը։ Մեր բոլոր փաստաթղթերի թարգմանությունը, ինչպես վարդանը գիտի, դրանց (այսինքն՝ ռուսների—Ա. Ա.) մոտ է։ Ուրեմն նրանց (իրագործման) համար պարտավոր ես բողոքել։ Ահա հասել է այն ժամը, երբ կա՛մ պետք է փառավորվի մեր ազգը, կա՛մ ծերունու նման վայր ընկնի և գլորվի։ Ուրեմն ամրապնդիր քո մեջքը քաջ ոգով... Եթե քո այդ ձեռնարկած գործդ նրպաստավոր ձևով վերջանա, դու քո անձիդ, ընտանիքիդ և ողջ ազգիդ կթողնես բարի անուն և կհիշվես դարեդար, իսկ եթե անկատար մնա, դու կմնաս իբրև մեր հասարակության վշտակից անդամներից մեկը»[3]։

Հայ ազատագրական շարժումների ռուսահայ գործիչները ցարական արքունիքի հայկական հարցի նկատմամբ ցուցաբերած անտարբերությունը տեսնելով, որոշ հիասթափություն են ապրել։ Այդ երևում է Արղությանի՝ Լազարյանին 1785 թ. հոկտեմբերի

[1] ՀՊՄ, ձեռ. № 2803, թ. 92ա։
[2] Նույն ձեռագիրը, թ. 122բ։
[3] ՀՊՄ, ձեռ. № 4496, էջ 338։

8-ին գրած ցավակցական նամակի հետևյալ տողերից (բերում ենք թարգմանաբար). «Մենք հավատացինք ո՛չ թե զորապետի, այլ վեհապետի բոլոր խոսքերին, ինչպես դուք հաստատապես հավատացել էիք, թեպետ բոլորն ապարդյուն են անցնում և մեր ողորմելի ազգը գտնվում է մեծագույն վտանգի դեգերման մեջ այն բանի համար, որ նա հոժարաբար ընդունել է կանչողների հրավերը. ավա՛ղ աղետների համար. այստեղ լռում եմ...»[1]։

Էջմիածնի կաթողիկոսարանի պասսիվ դիրքը հայ ազատագրական շարժումների նկատմամբ դատապարտության է արժանանում ինչպես ռուսահայ, այնպես և հնդկահայ հասարակական գործիչների կողմից։ Ղուկաս կաթողիկոսը ցանկանալով արդարանալ, փորձել է բացատրել զգուշավորությամբ։ 1789 թ. սեպտեմբերի 11-ին Շահամիրյանին գրած պատասխան նամակում անարդարացի համարելով նրա այն դիտողությունը՝ թե «Հաճիք ընդ ծառայութիւն այլազգեաց և ոչ սիրէք զազատութիւն»։ Մի՛թե անխելք ենք,—գրում է նա,—որ տառապանքներից չուզենանք ազատվել։ Ձկներն անգամ, որոնք ընկնում են ցանցը, կամ թռչունները՝ երբ բռնվում են, ազատության են ձգտում, ո՞ւր մնաց բնական արարածները։ Էջմիածնի վերապահությունը նա բացատրում է շրջահայեցողությամբ. թշնամին շատ ուժեղ է, գրում է նա, նոքա «իբրև զաւազ ծովու են և մեք սակաւք»։ Ինչ վերաբերում է Ռուսաստանի օգնությանը, նա գտնում է, որ «Ոչ ի հիւսիսական տերութենէ և ոչ յայլոց մեջ այցելութիւն կարէ լինիլ»[2]։

Ռուսահայ գործիչները, մասնավորապես Արղությանը և Լազարյանը, գաղափարական ինչ-որ հակադրության մեջ չեն գտնվել Շահամիրյանի և նրան հարող մադրասահայ առաջավոր հայացքներ ունեցող մյուս անձանց հետ, ինչպես կարծում են ոմանք[3]։ Հայտնի է, որ Արղությանը և Լազարյանը, երբ ստանում են Շահամիրյանից «Յորդորակ»-ի տպագրված օրինակը՝ բարձր գնահատականով, այն ներկայացնում իշխան Պոտյոմկինի ուշադրությանը։ Վերջինս կարգադրում է այդ գիրքը շտապ թարգմանել ռուսերեն և հրատարակել[4]։ Նկատի պետք է ունենալ, որ այս այն աշխատությունն է, որը Սիմեոն կաթողիկոսի հրամանով

[1] ՀՊՄ, ձեռ. № 4501, թ. 262ա—262բ։

[2] Նույն տեղում։

[3] Այս մասին ուշագրավ է Ա. Մնացականյանի «18-րդ դարում գրված հայ-ռուսական դաշնագրի հարցի շուրջը» հոդվածը (Տե՛ս «Բանբեր Մատենադարանի», № 4, էջ 139—160)։

[4] Նույն տեղում, թ. 151ա։

պետք է այրվեր որպես «խելառական գիրք», իսկ այն լույս ընծայող տպարանը «խափանվեր», այսինքն՝ փակվեր։ Եվ ահա այս աշխատությունը Արղությանի և Լազարյանի հանձնարարությամբ լույս է տեսնում ռուսերեն։ Արղությանը 1787 թ. հունվարի 3-ի նամակում հայտնել է Շահամիրյանին, որ «Յորդորակ»-ն արդեն լույս է տեսել 2000 տպաքանակով և բոլոր «սիրահար ըղձիւ առնուն»։ Այս փաստը կարևոր է Ռուսաստանի հայ հասարակական գործիչների գաղափարական ուղղությունը որոշելու համար։

Ի դեպ, Արղությանը նեղմիտ դիրք չի ունեցել նաև Մովսես Բաղրամյանի նկատմամբ, որը բանադրված է եղել Սիմեոն կաթողիկոսի կողմից, և նրա հետ փոխհարաբերություն ունեցողները ենթակա էին անգամ «անեծքի և դատապարտութեան»։ Արղությանը Շահամիրյանին ուղարկած իր նամակներում միշտ հիշել է Բաղրամյանին և անվանել նրան Շահամիրյանի որդիների «գերիմաստ հրահանգիչ»։

Շահամիրյանի և մյուսների դժգոհությունը հաշվի առնելով, Սիմեոն կաթողիկոսը հարկադրված է եղել 1780 թ. վերացնել Մովսես Բաղրամյանի բանադրանքը։ Այդ երևում է Ղուկաս կաթողիկոսի 1781 թ. մարտի 15-ին Հնդկաստանի նվիրակ Գրիգոր վարդապետին տված մի հանձնարարությունից։ Շահամիրյանը գրել է նրան. «Վասն Մովսէսի արձակման գիր էր խնդրեալ, լուսահոգին (այսինքն՝ Սիմէոն կաթողիկոսը—Ա. Ա.) զայն ետ գրեալ յղեաց անցեալ ամին, որպէս ահա տեսանելոց ես ի յօրինակն գրոց լուսահոգւոյն, զոր այժմ առ քեզ յղեցաք։ Ուրեմն շատ լաւ ես արարեալ, զայն մեղադրական թուղթն առնուլդ, զոր և բերիցես ընդ քեզ»[1]։

Ռուսահայ շրջանում ոգևորության նոր ալիք է բարձրանում 1796 թ., երբ ռուսական բանակը պատրաստվում է արշավելու դեպի Անդրկովկաս։ Արղությանը Ստեփանոս Դավիդովին գրած իր նամակում ցանկալի է համարում, որ արշավող բանակի հրամանատար նշանակվի գեներալ Սուվորովը. եթե նա լինի, գրում է Արղությանը, «բանն ի լաւ կողմն իսկույն վերջանալոց է»։

Ռուսական բանակը, երբ շարժվեց Կովկաս, հայերն ամենուրեք արտակարգ ոգևորությամբ ընդունեցին նրան։ Արղությանի մի նամակում առանձնապես նշված է Մսկուրի հայերի ցույց տված քաջությունը։ Այդ կապակցությամբ նա նամակ է գրել Գրիգորիո-

[1] ՀՊՄ, ձեռ. № 4481, թ. 481բ։

պոլիս՝ Պողոսի վրա, և խնդրել նրան՝ այդ առթիվ տեղեկություն հաղորդել Սուվորովին[1]։

Ռուսաստանի հայ հասարակական գործիչները արտակարգ մտերմություն են ունեցել ռուս հանճարեղ զորավար Սուվորովի հետ և հայկական հարցի հետ կապված խնդրով հաճախ են դիմել նրան։ Ռուսահայ շրջաններին այնքան մոտիկ և այնքան հարազատ են համարել իրենց Սուվորովին, որ պարծեցել են նրա ռազմական հաջողություններով։ Արդուբյանը 1799 թ. սեպտեմբերի 1-ին Վրաստանի Գեորգի թագավորին գրած իր նամակում արտակարգ հրճվանքով գրել է. «Զօրավարն մեր՝ գրաֆ Սուվօրօվն, բոլոր Իտալիոյ ազատեաց ի լծոյ անհաւատ ֆրանսուսացն»[2]։

Հայերի այդ ուրախությունը սակայն կարճատև եղավ. Եկատերինա Երկրորդի մահվանից հետո ռուսական արքունիքը որոշեց ետ քաշել իր զորքերը Անդրկովկասից։ Սկսվեց մի նոր ողբերգություն. հայերից նրանք, ովքեր արդեն ցույց էին տվել իրենց ռուսասիրությունը, վախենալով թուրք-պարսկական դրածո խաների վրեժխնդրությունից, գաղթեցին Ռուսաստան։

Ղուկաս կաթողիկոսը 1798 թ. հունիսի 13-ին Շահամիրյանին ուղարկած նամակում նկարագրելով 1796 թ. ռուսական բանակի արշավանքը և վերադարձը, հայտնում է, որ «դառնաշունչ վիշապը... առաւել ևս կատաղեցաւ», այդ պատճառով Ղարաբաղի մելիքներից ոմանք, իրենց ընտանիքներով և համախոհներով, տեղափոխվեցին Ռուսաստան։ Ըստ նրա տեղեկության, Ռուսաստան են գաղթել նաև Մոկուրի 500 տուն հայ բնակչությունը[3]։

6 Ռուսաստանի հայ գաղթավայրի մշակույթը: Հայ-ռուսական կուլտուրական կապերի մասին խոսվել է առջևում։ Նրանք, պետք է ասել, ավելի սերտ բնույթ են ստանում մասնավորապես XVII—XVIII դարերում։ Այս այն ժամանակաշրջանն է, երբ ռուսահայերն ավելի մոտից են սկսում ծանոթանալ ռուսական մշակույթին՝ նախապատրաստելով XIX դարի ռուսահայ մշակույթի փայլուն շրջանը։

Ռուսահայ մշակույթի բնագավառում նշանակալից դեր են ունեցել, ամենից առաջ, հայ նկարիչները։ «Собрание актов» աշխատության մեջ արձանագրված է այն մասին, որ 1671 թ. Մոսկվայում գործել են հայազգի մի շարք նկարիչներ, որոնցից մեկի

[1] ՀՊՄ, ձեռ. № 2951, թ. 104բ։
[2] Նույն տեղը, թ. 293բ։
[3] ՀՊՄ, ձեռ. № 4481, թ. 418բ։

անունը մեջ է բերված[1]։ Ի՞նչ են նկարել այդ նկարիչները, ո՛ր թանգարանի ո՛ր նկարը նրանց ստեղծագործությունն է, ոչինչ ասել չենք կարող։ Սովորություն է եղել այդ ժամանակ, հայկական անունները, տեղացիներին դյուրահաս դարձնելու նպատակով, փոխել, ուստի դժվար է նրանց ճանաչել՝ տեղացի և օտարազգի նկարիչների բազմության մեջ։

XVII դարում Մոսկվայում կիրառական արվեստի աշքի ընկնող գործիչներից է հանդիսացել Ջուղայի հայ նկարիչ Բոգդան Սալթանովը, որը Նոր Ջուղայից 1666 թ. հրավիրվել է Միխայիլ Ալեքսեևիչ ցարի կողմից, նշանակվել աշխատանքի զինապալատում։ Սալթանովը Մոսկվայում մնացել և աշխատել է ավելի քան 35 տարի։ Նրա մասին ռուս գիտնական Ուսպենսկին հետևյալն է գրել. «Սալթանովը հսկայական օգուտ բերեց ռուսական արվեստին նրանով, որ նրա մեջ մտցրեց նոր, կենարար, թարմ շունչ։ Նա բոլորից շատ և բոլորից երկար աշխատեց զինապալատում և բազմաթիվ ռուս մարդկանց սովորեցրեց նկարչություն։ Եղել է ժամանակ, երբ մեր ռուսական պալատներում, ի թիվս այլ թանկագին զարդերի, կային նաև Սալթանովի նկարները»[2]։

Պետերբուրգի հայ գաղթօջախի հետ կապված ամենախոշոր երևույթը, այդ Գրիգոր Խալդարյանի տպարանի գոյությունն է, որը հիմնվել է 1781 թ.։ Խալդարյանը հնդկահայ էր, երկար ժամանակ ապրել է Լոնդոնում և իր տպարանը կազմակերպել այնտեղ։ Սակայն շուտով նա համոզվել էր, որ հայ իրականությունից և շրջապատից կտրված, չի կարող ծավալել իր գործունեությունը, ուստի տպարանը փոխադրել էր Պետերբուրգ։

Խալդարյանի տպագրական գործը քաջալերել և նրան նյութական օգնություն են ցույց տվել Պետերբուրգի, Մոսկվայի, Աստրախանի և Մողդոկի հայերը։ Այս ձեռնարկը մեծ չափով հովանավորել է մասնավորապես Հովսեփ արքեպ. Արղությանը։

Խալդարյան տպարանը Պետերբուրգում գործել է 1781—1790 թթ.։ Հրատարակել է 14 անուն գիրք, որոնցից առանձնապես կարևոր են՝ «Այբբենարանը» (1781 թ.), Եղիշեի «Պատմութիւնը» (1787 թ.), Կլեոպատրա Սարաֆյանի «Գիրք, որ կոչի քանալի գիտութեան» (1788 թ.) (ռուսերեն լեզվի առաջին ինքնուսույց ձեռնարկը հայերի համար)։ «Շաւիղ լեզուագիտութեան» (1788) և այլ աշխատություններ։

[1] Собрание актов, ч. II, стр. 288.
[2] Успенский, Словарь, стр. 245.

Հալդարյանի տպարանը Նոր Նախիջևանում գործել է 1790—1796 թվականներին: Լույս են տեսել Ստեփանոս Օրբելյանի «Ողբք և հառաչանք» (1790 թ.), «Պատմութիւն Թէլեմաքի որդւոյ Յոսիփանոսի» (երկու հատորով, 1793 թ.), «Տետրակ համառօտ քառատրանի» (1794 թ.), բժիշկ Պետրոս Քալանթարյանի «Համառօտ բժժըշկարանը» (1793 թ.) և այլ աշխատություններ: 1797 թ. տպարանը տեղափոխվել է Աստրախան և այստեղ շարունակել հայ գրքի տպագրության շնորհակալ գործը:

XVII—XVIII դարերում հայկական խոշոր դպրոցներ Ռուսաստանում չեն եղել: Սակայն առաջին քայլերն արվել են՝ նրանք հիմնելու ուղղությամբ: Նոր Նախիջևանում XVIII դարի իննսունական թվականներին, հնդկահայ մեծահարուստ Հոհաննջան Գիրաքյանի տրամադրած միջոցներով, բացվել է հայկական դպրոց, ծրագրվել է հետագայում այն վեր ածել հայկական համալսարանի: Վաճառականները ևս ծրագրել են 200.000 ռուբլի դրամ հատկացնել հայկական դպրոց կառուցելու համար: Հայկական փոքրիկ դպրոցներ եղել են նաև Մոսկվայում, Պետերբուրգում, Մոզդոկում, Ղրղլարում և Գրիգորիոպոլսում:

XVII—XVIII դարերում հայկական գրչության օջախներ են եղել Ռուսաստանի մի քանի քաղաքներում: Նրանցից ամենից հինը գտնվել է Կազանում: Շատ ձեռագրեր գրվել են Աստրախանում: Ձեռագրեր են գրվել նաև Պետերբուրգում և Մոսկվայում:

ՀԱՅԵՐԸ ՀՈԼԱՆԴԻԱՅՈՒՄ ԵՎ ԲԵԼԳԻԱՅՈՒՄ

Հայերը Հոլանդիայում և Ֆլանդրիայում:

Հնում Հոլանդիան և Ֆլանդրիան մտնում էին պատմական Նիդեռլանդիայի մեջ և 15 այլ քաղաքական մանր միավորումների հետ միասին զբաղեցնում մոտավորապես այն տերիտորիան, որի վրա այժմ գտնվում են Հոլանդիան, Բելգիան, Լյուքսեմբուրգը և Ֆրանսիայի հյուսիսային մի քանի շրջաններ[1]:

Հայերը Նիդեռլանդիայի՝ հեռավոր հյուսիսում գտնվող այս երկրին, մասնավորապես Ֆլանդրիայի հետ ծանոթ են եղել վաղուց: Եթե հավատալու լինենք վարքագրական աղբյուրներում պահված որոշ տեղեկությունների, ապա հայերը այս երկիրը ել և մուտք ունեին դեռևս XI դարում: Ըստ այդ տեղեկություններից մեկի, 1001 թվականին Բելգիայի Գանտ քաղաքն է եկել և հաստատվել Մակար անունով մի հայ եպիսկոպոս, որը այստեղ էլ մահացել է համաճարակից: Այս հայ հոգևորականը, ինչպես երևում է, իր շուրջը մեծ հեղինակություն է ստեղծել: Մեզ է հասել նրա վարքագրությունը լատիներեն լեզվով, ուր հեղինակը նրան համարում է «ծաղիկ Հայաստանի», «փառք Ֆրանսիայի» և «զարդ Գանդիայի»[2]:

Հայ-նիդեռլանդական հարաբերությունների և հայ առևտրականների նիդեռլանդիա գալու մասին պատմական հավաստի տեղեկությունները վերաբերվում են XIV դարին: Արդեն XIII դարի վերջերում հոլանդական առևտրականները ել ու մուտ ունեին Կիլիկիայում, և ահա հայ առևտրական նավերը սկսում են երևալ Ֆլանդրիայի նավահանգիստներում:

[1] Տե՛ս Всемирная история, հ. IV, էջ 279:

[2] Acta Sanctorum, I, Aprilis (1675), էջ 891 (տե՛ս ՊՀԻ I էջ 339):

Ըստ տեղեկությունների, հայ վաճառականները Ֆլանդրիա էին ներմուծում բամբակ, գորգեր, համեմունք, ներկեր և այլ արեվելյան ապրանքներ։ Այս դարաշրջանում միջազգային առևտրի խոշոր կենտրոն էր հանդիսանում Բրյուժ քաղաքը, որտեղ հայ վաճառականները կատարում էին իրենց առևտրական հիմնական գործարքները։ Նրանք Բրյուժում գնում էին բելգիական գեղեցիկ չուխաներ, բրդյա կտորներ, սպանական յուղեր, ռուսական մորթեղեն և այլ ապրանքներ, որոնք բերվում էին այստեղ տարբեր երկրներից։ Պեկոլոտտո պատմիչի տեղեկությունների համաձայն, հայ առևտրականներն իրենց բերած ապրանքները Բրյուժ քաղաքում վաճառքի էին հանում Ս. Դոնատ եկեղեցու հրապարակում[1]։

XIV—XV դարերում հայ առևտրականներից բացի, Ֆլանդրիայում երևում են նաև հայ քաղաքական փախստականներ, որոնց համար Բրյուժում կառուցված է եղել հատուկ ապաստարան և կատարվել է հանգանակություն հօգուտ այս «քրիստոնյա պանդուխտների»-ի[2]։

XV դարում Բրյուժում նստակյաց հայ բնակչությունը գլխավորապես առևտրականներից էր բաղկացած։ Նրանք 1478 թվականին, ժան դը Վալուա Թագավորի ժամանակ, կառուցել են գոթական ոճով հրաշալի մի պանդոկ[3], որը ծառայել է որպես «Ազգային տուն» տեղի և տարբեր երկրներից այստեղ եկած հայերի համար։

XV դ. վերջերում, երբ Բրյուժը կորցնում է իր առևտրական նշանակությունը և նրա փոխարեն բարձրանում է Ամստերդամը, հայ առևտրականները սկսում են երևալ նաև Ամստերդամում։

Հոլանդական աղբյուրները Ամստերդամ եկած հայ առևտրականների մասին տեղեկություն են հաղորդում 1560—1565 թվականներից։ Առաջին անգամ հիշվում են մի խումբ հայ վաճառականներ, որոնք Ամստերդամի շուկայում վաճառելիս են եղել մարգարիտ և ադամանդներ[4]։

Հայ առևտրականները Ամստերդամում սկսում են հաճախակի երևալ հատկապես XVII դարում։ Շահհաբասի բռնագաղթից հետո որոշ թվով հայեր գալիս և հաստատվում են Ամստերդամում։ Տեղացի պատմիչներից Van Emdre-ը հետևյալ տեղեկությունն է հա-

1 Ալիշան, Սիսական, էջ 461։

2 Սարուխան, Հոլանդիան և հայերը XVI—XIX դարերում (տե՛ս «Հանդէս ամսօրեայ», 1926 թ., էջ 570)։

3 Ալիշան, Սիսական, էջ 461։

4 Սարուխան, նշված հոդվածը (Տե՛ս «Հանդէս ամսօրեայ», 1926 թ., էջ 571)։

գորդում. «XVII դարում հայոց երկրի մի մասը հարձակման և ավերման ենթարկվելով, հայերը ստիպված են եղել այնտեղից գաղթել։ Նրանցից ոմանք եկել և հիմնավորվել են Ամստերդամում»[1]։

Հայ-հոլանդական առևտրական հարաբերություններն ավելի են աշխուժանում 1612 թվականին՝ թուրք-հոլանդական առևտրական պայմանագիրը կնքելուց հետո, որը հնարավորություն է տալիս երկու երկրների առևտրականներին ազատ առևտուր անելու։ Հոլանդական նավերն իրավունք են ստանում սեփական դրոշներով նավարկել թուրքական ջրերում և կանգ առնել թուրքիայի նավահանգստներում[2]։

Թուրքիայում առևտրական այդ պայմանագրից ամենից շատ օգտվում են հայ և հույն առևտրականները, որոնց ձեռքում էր գտնվում այդ ժամանակ Թուրքիայի ներքին և արտաքին ողջ առևտուրը։ Թուրքիայի նավահանգիստներից միջազգային փոխանակության խոշոր կենտրոն է դառնում Զմյուռնիան, ուր գալիս և բնակություն են հաստատում բազմաթիվ հայ առևտրականներ և առևտրական տների ներկայացուցիչներ։ Զմյուռնիան XVII դարում, փաստորեն, դառնում է հայկական քաղաք։ Այստեղից և Պոլսից հայ առևտրականներն իրենց ապրանքներն արտահանում են դեպի Եվրոպա։

Հայ առևտրականների Հոլանդիա վաճառքի տարած ապրանքներից առաջին տեղը գրավում էր մետաքսը կամ մետաքսի կտորեղենը։ Հայ վաճառականները պարսկական մետաքսը մեծ հակերով տեղափոխում էին եվրոպական շուկաները, այդ թվում, նաև Ամստերդամ։ Պետք է ասել, որ 1700—1765 թվականներին պարսկական մետաքսի վաճառահանության մենաշնորհությունը Եվրոպայում գտնվում էր հայ վաճառականների ձեռքին։

Հայ-հոլանդական առևտրի այս գործուն հարաբերությունների շրջանում մեծանում է Ամստերդամի հայ գաղթօջախը։ Ըստ De Roevar-ի տեղեկության, XVII դ. կեսերին Ամստերդամում ապրում էր ավելի քան 70 հայ ընտանիք՝ մեծ մասամբ առևտրականներ կամ տարբեր երկրների հայ առևտրական տների ներկայացուցիչներ[3]։

Ըստ տեղեկությունների, Ամստերդամի հայ բնակիչները ապրելիս են եղել քաղաքի արևելյան մասում հետևյալ փողոցների վրա՝ Monnikenstraat (Կրոնավորների փողոց), Dykstraat (Բլրի

1 Սարուխան, նշված հոդվածը (տե՛ս «Հանդէս ամսօրեայ», 1926 թ., էջ 571)։

2 Նույն տեղը, էջ 572։

3 Սուրախան, նշված հոդվածը, էջ 574։

փողոց), Keizerstraat (Կայսերական փողոց), Boomsloot (Բոմի ջրափ)[1]։ Հայ վաճառականներն ունեցել են իրենց հատուկ շուկան, որը կոչվել է Qoster market (Արևելյան շուկա)։

Գաղթօջախի հայ համայնքը իր միջոցներով 1713 թվականին կառուցել է հայկական եկեղեցի և էջմիածնից թույլտվություն ստացել հոգևոր հովվություն ունենալու։

XVIII դարի 40—50-ական թվականներին Ամստերդամում ընդօրինակվել են հայկական մի քանի ձեռագրեր, որոնց մեծ մասի գրիչը Հովհաննես Ամասացին է[2]։ Նրա հիշատակարաններից մեկում Ամստերդամն անվանված է «Գերահռչակ քաղաք»։ Ամստերդամում Սիմեոն Կեսարացու կողմից ընդօրինակված է նաև Զենոբ Գլակի «Պատմութիւն Տարօնոյ» աշխատությունը[3]։

Ամստերդամում են բնակություն հաստատել և մեծ հարստություն ձեռք բերել բազմաթիվ հայ վաճառականներ, որոնց անունները հիշված են Ալիշանի «Սիսական»-ում և լրացված Սարուխանի ուսումնասիրության մեջ, որոնց վրա ավելորդ ենք համարում կանգ առնել։

Ամստերդամահայ այդ առևտրականներից ոմանք ունեցել են իրենց սեփական նավերը, որոնք նավարկել են Հոլանդական դրոշակներով։ Հոլանդական աղբյուրներում պահվել է հետևյալ ուշագրավ տեղեկությունը. 1653 թվականի ապրիլի 21-ին Ամստերդամից դեպի Ջմյուռնիա են ճանապարհվում հինգ առևտրական նավ։ Այս նավերին ուղեկցում են յոթ մարտանավեր՝ ծովահեններից պաշտպանելու համար։ Այս հինգ նավերից երկուսը հայկական են եղել, որոնցից մեկը կոչվել է Coopman van Armenien («Հայկական վաճառական»), իսկ մյուսը՝ Coopman van Persien («Պարսկական վաճառական»)[4]։ Պարսկական վաճառականի անունը սովորաբար կրում էին պարսկահայ խոջաները։

Ամստերդամի հայ գաղթօջախն անկում է ապրում XVIII դարի վերջերին, XIX դարի սկզբներին, երբ սկսում են Նապոլեոնյան կռիվները, Ամստերդամը գրավվում է ֆրանսիացիներից և միջազգային առևտուրը զգալիորեն խափանվում։ Այս տարիներին Ամստերդամի հայ գաղթօջախը դադարում է գոյություն ունենալուց։

[1] Սարուխան, նշված հոդվածը, էջ 575։

[2] ՀՊՄ, ձեռագիր № 6026 (1743 թ.), № 2529 (1755թ.), № 9245 (1756 թ.), № 4598 (1759 թ.) և այլն։

[3] ՀՊՄ, ձեռագիր № 3403 (1758 թ.)։

[4] Սուրախան, նշված հոդվածը («Հանդէս ամսօրեայ», 1926 թ., էջ 578)։

1826 թվականին Ամստերդամի երբեմնի եռուն գաղթօջախից հիշվում է միայն երեք հայ բնակիչ։

Ամստերդամի հայ գաղթօջախի հետ կապված պատմական նշանակալից երևույթը այդ նրա խաղացած բացառիկ կարևոր դերն է հայ տպագրության գործում, որի վրա անհրաժեշտ ենք համարում համառոտակի կանգ առնել։

1512 թվականի առաջին հայ տպագրությունից հետո, ինչպես դիտենք, հայ գրասեր շրջանները շատ անգամներ փորձեր կատարեցին կազմակերպելու հայկական տպագրությունը նաև Եվրոպայի այլ մասերում, սակայն նրանք ամենուրեք հանդիպում էին Կաթոլիկ կղերականների համառ դիմադրությանը և խափանումներին։ Հեռավոր Հոլանդիայի Ամստերդամ քաղաքն էր, որը դուրս գտնվելով Վատիկանի ազդեցությունից, հնարավորություն տվեց հայկական տպարան հիմնելու՝ տպագրության գործը զարգացնելու համար։

Առաջին հայկական տպարանն Ամստերդամում հիմնել է Մատթեոս Օարեցին 1660 թվականին։ Օարեցին էջմիածնի Ղուկաս կաթողիկոսի գրագիրն էր։ Նա Եվրոպա էր ուղարկվել էջմիածնի կողմից՝ հայկական տպագրության գործը կազմակերպելու նպատակով։ Ամստերդամ գալուց առաջ, էջմիածնի այս ներկայացուցիչը եղել էր Վենետիկում և Հռոմում, փորձել էր այստեղ կազմակերպել հայ գրքի տպագրությունը, սակայն կաթոլիկ կղերականներն արտադրքի տպագրությունը էին վերաբերվել նրա ձեռնարկությանը, չցանկանալով այս արհեստը տալ հայերի ձեռքը։ Նույնիսկ կարգադրություն է արվել տեղի արհեստավորներին՝ չընդունել հայկական տառերի փորագրությունն՝ սպառնալով «ոչ ոք իշխեսցէ հանել զայս արհեստս և տալ ի ձեռս Հայոց, և որք յանդգնեալ արացեն զայս գործ, ծածուկ և կամ յայտնի, պատիժս սաստիկ կրեսցեն»[1]։

Եվ այսպես, Իտալիայում իր գործի համար նպաստավոր հող չգտնելով, Օարեցին շարունակում է իր ճանապարհը և հասնում Ամստերդամ։ Այստեղ նա պայմանագիր է կնքում հունգարացի մի Ճարտար փորագրիչի հետ, որի անունն էր Քրիստոֆ Ֆան Դիք՝ հայկական մի քանի տառատեսակներ ձուլելու համար։ Տառերի առաջին խումբն ստանալուն պես, 1660 թ. Օարեցին սկսում է շարել Շնորհալու «Յիսուս որդին»։

Գտնվելով նյութական անձուկ պայմաններում, Օարեցին դիմում է երևանցի վաճառական Ավետիս Ղլչինցին՝ օգնելու իրեն և

[1] Գ. Լևոնյան, Հայ գիրքը և տպագրության արվեստը, Երևան, 1945, էջ 102։

վճարելու տպարանի պարտքերը։ Վերջինս համաձայնվում է մի պայմանով, որ տպարանից դուրս եկած վաճառվող գրքերի շահի կեսը հատկացվի էջմիածնին, իսկ կեսը՝ Ս. Սարգիս վանքին, որի վանահայրն էր իր եղբայր Ոսկան վարդապետը։

Նորահիմն տպարանի առաջին գիրքը դեռ լույս չտեսած, մահանում է Մարեցին, իսկ նրա տպարանն ամբողջությամբ անցնում է Ավետիս Ղլջինցի հոգացողությանը։

Ավետիս Ղլջինցը ընկնում է ծանր վիճակի մեջ. նախ սպառվել էին նրա նյութական միջոցները և ապա, Մարեցու մահանալուց հետո, չկար գրագետ մեկը, որ հետևեր սրբագրությանը։ Շուտով սակայն դժվարությունները հաղթահարվում են. Ամստերդամում գտնվող երեք հայ առևտրական բարերարներ նյութական օգնություն են ցույց տալիս Ղլջինցին, իսկ տեղի հայ համայնքի հոգևոր առաջնորդ Կարապետ վարդապետ Ադրիանեցին հանձն է առնում հետևելու սրբագրությանը։ Եվ այսպես, Ամստերդամի հայկական տպագրության գործն անխափան շարունակվում է։ 1661—1662 թվականին մեծ տպաքանակով լույս են ընծայում երեք գիրք՝ «Յիսուս որդի», «Ժամագիրք» և «Սաղմոս», որոնք ուղարկվում են վաճառելու Հայաստանում և հայ գաղթավայրերում։

1662 թ. էջմիածինը Ամստերդամի տպարանին տեր դառնալու համար շտապ Ամստերդամ է ուղարկում իր միաբանության անդամ Ոսկան վարդապետ Երևանցուն, Ավետիս Ղլջենցի եղբորը։

Ոսկանը հասնում է Ամստերդամ և գլխավորում հայոց տպագրության գործը։ 1666—1669 թվականների ընթացքում նա հրատարակում է 16 անուն գիրք, որոնցից կարելի է հիշել՝ «Գիրք այբուբենից» (1666 թ.), «Քերականութիւն» (1666 թ.), «Աստուածաշունչ» (1666 թ.), «Աղուէսագիրք» (1668 թ.), «Տոմար» (1668 թ.), «Առաքել Դավրիժեցու պատմութիւնը» (1669 թ.) և այլն։

Հրատարակված գրքերը վաճառքի էին հանվում, որոնք, սակայն, սպասած արդյունքը չէին տալիս։ Հայ բնակչաշատ գաղթավայրերին ավելի մոտիկ գտնվելու և տպագրության գործն ավելի ծավալելու սխալ հաշիվներով, Ոսկանը դիմում է ֆրանսիական կառավարությանը և թույլտվություն ստանալուց հետո, տպարանը 1672 թվականին տեղափոխում Ֆրանսիայի Մարսել քաղաքը։ Բայց այստեղ նա ընկնում է կաթոլիկ կղերականների աննկարագրելի դավերի և խարդավանքների ցանցի մեջ և առողջությունը վերջնականապես քայքայելով, մահանում է 1674 թվականին։

Ոսկանի մահվանից հետո, նրա ժառանգ Սողոմոն Լևոնյանին մեծ դժվարությամբ հաջողվում է տպարանը դուրս կորզել նրան

տիրանալ ցանկացող բախտախնդիր մարդկանց ձեռքից, և Մարսելում մի քանի գրքեր հրատարակելուց հետո, տեղափոխել նորից Հոլանդիայի Ամստերդամ քաղաքը։

1695 թվականից սկսում է Ամստերդամի հայկական տպագրության երրորդ շրջանը։ Այս անգամ գործի գլուխ են կանգնում չորս վանականեցիներ՝ Թովմա վարդապետ Նուրիջանյանը, նրա քեռու որդի Մատթեոսը և եղբոր որդիներ Ղուկասը և Միքայելը, որոնց լեռն «տպագրական մեծ ընտանիք» անունն է տալիս։ Նուրիջանյանն ինքը հանդիսանում է տպագրության համար նյութական միջոցներ հայթայթող տնտես ղեկավարը, Մատթեոսը՝ տպարանի հոգին՝ գրաշարապետը, իսկ Ղուկասը և Միքայելը՝ խմբագրում, սրբագրում են հրատարակվող գրքերը։

Վանանդեցիները իրենց տպագրական գործը սկսում են «Համատարած աշխարհացոյց»-ից, որը հրատարակում են 1695 թվականին։ Այս՝ երկու կիսագնդերի, հայերենով առաջին անգամ լույս տեսնող քարտեզներ են, որոնք կատարված են իր ժամանակի բարձրագույն արվեստով։ Նույն տարին հայրենասեր վանանդեցիները հրատարակում են նաև Մովսես Խորենացու «Հայոց պատմութիւնը»։

Ղուկաս Վանանդեցին, որը տիրապետում էր լատիներենին և մի շարք արևելյան լեզուների, կատարում է մի շարք գրքերի թարգմանություններ, ինչպես և գրում ինքնուրույն աշխատություններ։ Նրա լավագույն աշխատություններից երկուսը լույս է տեսել 1699 թվականին. նրանցից մեկը՝ «Դուռն իմաստութեան», դասագիրք է հայերեն նոր սովորող սկսնակի համար, իսկ մյուսը՝ «Գանձ չափուց, կշռոց, թուոց և դրամից բոլոր աշխարհի»՝ ուղեցույց-տեղեկատու՝ աշխարհում գործածական կարևոր չափերի, կշիռների և դրամական միավորների վերաբերյալ։

Ղուկաս Վանանդեցու օգնությամբ և նրա տված հայերեն տառերի օգտագործությամբ գերմանացի նշանավոր լեզվաբան Շրոդերը Ամստերդամում 1711 թ. հրատարակեց իր մեծարժեք «Գանձ Արամյան լեզվի» վերնագրով ուսումնասիրությունը։ Նա առաջին եվրոպացի գիտնականն էր, որ ուշադրություն դարձրեց հայոց լեզվի վրա։

Ղուկաս Վանանդեցին ճանաչում էր գտել եվրոպացի գիտնականների շրջանում։ Նա մոտիկ փոխհարաբերությունների մեջ էր գտնվում Ամստերդամի հռչակավոր փիլիսոփա Լայբնիցի հետ։ Ղուկաս Վանանդեցին Ամստերդամում, ինչպես երևում է, զբաղվել

է աստղագիտությամբ։ Նա է Ամստերդամում առաջին անգամ պատրաստել հայերեն «Աստրոլաբիա» կոչվող աստղագիտական գործիքը՝ հայերեն տառեր դրոշմելով նրա վրա։

XVIII դարում Վանանդեցի տպագրիչները նախկին եռանդով շարունակում են հայ գրքի տպագրությունը։ Մինչև 1717 թվականը նրանք հրատարակում են 14 անուն գիրք։ Սակայն գրքերի վաճառքը շատ վատ է կազմակերպվում։ Վանանդեցիները ոչ միայն չեն կարողանում իրենց ձեռնարկից շահ ստանալ, այլև պարտքերի տակ են ընկնում։ Ի վերջո պարտքատերը փակել է տալիս տպարանը և Վանանդեցիներին դուրս նետում փողոց։ Դրանով վերջանում է Ամստերդամի հայ տպագրության երրորդ և փայլուն շրջանը։

Հոլանդիայի Լեյդի քաղաքի համալսարանի պատմության հետ է կապված հայ խոշոր արևելագետներից մեկի՝ Շահին Կանդիի գործունեությունը։ Նա հալեպցի էր, հրաշալի տիրապետել է պարսկերեն, արաբերեն և թուրքերեն լեզուներին և պաշտոնի հրավիրվելով Լեյդիի համալսարանը, զբաղվել է թարգմանություններով և արևելյան ձեռագրերի մշակմամբ։ Լաուրենս անունով ուսումնասեր մի հոլանդացու հանձնարարությամբ նա առաջին անգամ թուրքերեն է թարգմանել Աստվածաշունչը[1]։

Հայկական շատ և շատ հիշատակներ կան կապված Ամստերդամ քաղաքի հետ։ Ինչպես ասացինք, Ամստերդամի տպագրական կնիքն են կրում հայկական աշխարհագրական առաջին քարտեզը, Խորենացու «Հայոց պատմութեան» առաջին հրատարակությունը, Շրեոդերի՝ «Արամյան լեզվի գանձը» և մի շարք արժեքավոր տպագիր գրքեր։ Ղուկաս Վանանդեցին այստեղ է պատրաստել հայկական առաջին «Աստրոլաբիան»։ Այս ամենի համար մենք, անշուշտ, պարտական ենք հոլանդական փոքրիկ, բայց մեծ և ազատամիտ հոգի ունեցող ժողովրդի բարեսիրությանը։

Ամստերդամի գաղթօջախում ապրող հայ ժողովրդի երախտաշետ զավակները, իրենց հանրօգուտ աշխատանքով ձգտել են վարձահատույց լինել հոլանդական հյուրասեր ժողովրդի այս բարյացակամությունը։ Անհիմն չէ հոլանդական «Ամստերդամ» շաբաթաթերթի 1887 թ. օգոստոսի 14-ի համարում հայ գաղթօջախին տրված հետևյալ գնահատականը. «Հայ համայնքի պատմությունը մի ոսկյա էջ է Ամստերդամ քաղաքի հուշամատյանում»[2]։

[1] Սարուխան, Հոլանդիան և հայերը (տե՛ս «Հանդէս» ամսօրեայ», 1927 թ., էջ 263—266)։

[2] Նույն տեղը, 1926, էջ 582։

ԿԻՊՐՈՍԻ ՀԱՅ ԳԱՂԹՕՋԱԽՆԵՐԸ

Գրականությունը:

Կիպրոսի հայ գաղթօջախը բավականին ուսանելի պատմություն ունի։ Այդ կղզին գտնվելով մոտիկ հարևանության մեջ Կիլիկյան Հայաստանի հետ, տնտեսական և քաղաքական սերտ փոխհարաբերության մեջ է եղել նրա հետ։ Նա մեկ անգամ չէ, որ անցյալի պատմության փոթորկոտ օրերին բաց է արել իր դռները տարագիր հայ գաղթականության առջև։

Կիպրոսի հայ գաղթավայրի պատմությունն ուշագրավ է նաև մի այլ տեսակետից։ Բոլորելով մոտ տասն և երեք դարերի երկարաձիգ մի ժամանակաշրջանի պատմության, նա իր մեջ անընդմեջ հայ նոր գաղթականություն է ընդունել, անօրինակ համառությամբ կարողացել է պահել իր ինքնուրույնությունը, չի տարալուծվել, պահպանել է իր գոյությունն առ այսօր և շարունակում է ապրել ազգային-հասարակական աշխույժ կյանքով։

Կիպրոսի հայ գաղթավայրերի մասին մասնագիտական մի քանի աշխատություններ են լույս տեսել։ Նրանցից առաջին ուսումնասիրությունը պատկանում է Բակուրանի (Վահան Ս. Քուրքչյանի) հեղինակությանը։ Այն վերնագրված է «Կիպրոսի կղզի»։ Լույս է տեսել Նիկոսիայում, 1903 թվականին։ Աշխատության առաջին մասը նվիրված է կղզու աշխարհագրական և պատմական տեսությանը, իսկ երկրորդը՝ հայ գաղթավայրին։

Կիպրոսի հայ գաղթավայրին նվիրված լավագույն ուսումնասիրություններից է Ա. Ալպոյաճյանի «Կիպրոսի կղզին իր անցյալն ու ներկան» խորագրով աշխատությունը, որը լույս է տեսել Թեոդիկի «Ամենուն տարեցույց»-ի 1927 ժողովածուի մեջ (էջ 192—254)։ Հեղինակը հայ և օտար աղբյուրներից քաղած տեղեկություն-

ների հիման վրա կազմել է տվյալ գաղթավայրի համառոտ պատմություն։

Կիպրոսի հայ գաղթավայրի վերաբերյալ ընդարձակ ուսումնասիրություն ունի ԲԱԿԸ (Բաբկեն կաթ. Կյուլեսերյանը)։ Այն վերնագրված է «Հայ Կիպրոս, հայ գաղութը և Ս. Մակար» (լույս է տեսել Անթիլիասում 1936 թ.)։ Կյուլեսերյանի այս աշխատությունը գիտական արժեք չունի, նա կարևոր է որպես պատմական նյութերի հավաքածու։

Գաղթավայրին նվիրված փոքրիկ ուսումնասիրություն ունի Հ. Ն. Ակինյանը «Հայ-Կիպրոս» վերնագրով, որը հրատարակվել է 1937 թվականին «Հանդէս ամսօրեայ»-ի մեջ։ Հեղինակը նպատակ չի դրել տալ տվյալ գաղթավայրի ամբողջական պատմությունը, այլ միայն մատնացույց անել պատմական մանր ու մեծ այն նյութերը, որոնք վրիպել են Կյուլեսերյանի և Ալպոյաճյանի ուշադրություններից։

Կիպրոսահայ գաղթօջախները հին և միջին դարերում։

Պատմական սկզբնաղբյուրներում Կիպրոսում ապրող հայերի մասին հիշատակություններ կան մեր թվականության IV—V դարերից։ Սակայն այդ հիշատակությունները վերաբերում են առանձին անհատների՝ հայ առևտրականների, բյուզանդական արքունիքի կողմից աքսորված հայ պաշտոնյաների և զինվորականների։ Առաջին զանգվածային գաղթը դեպի Կիպրոս կողին տեղի է ունեցել 578 թվականին՝ կապված է վատահամբավ Մորիկի անվան հետ։ Կայսր դառնալուց առաջ, երբ Մորիկը գտնվում էր Արևելքում որպես զորահրամանատար, հայ ժողովրդի մեջ ծայր առած ազատագրական շարժումները ճնշելու նպատակով, Աղձնիքից և Բփրատից շրջապատի գավառներից, մեծ քանակությամբ հայ գաղթականություն տեղափոխեց Կիպրոս[1]։

Կիպրոս քշված հայ բնակչությունից ստեղծված առաջին այս գաղթօջախը սկսում է խամրել Արաբական խալիֆայության տիրապետության տարիներին (648—958 թվականներին)։ Կիպրոսահայերը որոշ աշխուժացում են ապրել 868—874 թվականներին, երբ բյուզանդական զորաբանակը, Ալեքսիոս հայ զորավարի հրամանատարությամբ նվաճում է կղզին։ Այնուհետև Ալեքսիոսը յոթ տարի կառավարում է Կիպրոսը։ Նա իր հրամանատարության տակ ունեցել է նաև հայ զորամասեր։ Կիպրոսահայերի այս աշխուժացումը շատ էպիզոդիկ բնույթ է կրել, որովհետև արաբական զորքերը նորից նվաճել են կղզին ու նորից կղզու հայությունը ծանր վիճակի մեջ է ընկել։

Հայ գաղթօջախի գոյավիճակը հիմնովին փոխվել է 958 թվականին, երբ Բյուզանդիան վերագրավել է Կիպրոսը։ Դրանից հետո, Բյուզանդիան, Կիպրոսից հեռացած մահմեդական բնակչության փոխարեն, այստեղ է բերում բավականին թվով հույն, ասորի և հայ բնակչություն։

Ըստ տեղեկությունների, տասներորդ դարում Կիպրոսի մի քանի կառավարիչներ հայեր են եղել։ Այսպես, 958 թվականից կղզու կառավարիչ է նշանակվել կղզու նվաճումը ղեկավարող բյուզանդական զորահրամանատար Վասիլ Հայկազը։ 965 թվականին կղզու կառավարիչ է հիշվում Վահրամը (Վրախամեան), որը կառավարել է «Դուքս»-ի կոչումով։ Մեկ դար հետո որպես կղզու կառավարիչ հիշվում է Վահրամ անունով մի այլ հայ ևս[1]։

XII դարում բավականին թվով հայեր են կենտրոնացել Կիպրոսում։ Նրանք այնքան ստվար հատված են կազմել, որ անհրաժեշտ է եղել Կիպրոսում առանձին թեմ ստեղծել։ Տեղեկություններ կան, որ թեմի պաշտոնական ներկայացուցիչը՝ Թադեոս եպիսկոպոսը, մասնակցել է 1179 թ. Հռոմկլայի եկեղեցական ժողովին[2]։

Կիպրոսի և Կիլիկյան Հայաստանի մեջ տնտեսական և քաղաքական սերտ հարաբերություններ են ստեղծվել կղզում հաստատված Լուսինյանների տիրապետության շրջանում։ Կիպրոսի Լուսինյանների և Կիլիկիայի թագավորների միջև ստեղծվել են խնամեական կապեր, որոնք նպաստել են երկու թագավորության միջև գոյություն ունեցող քաղաքական և տնտեսական կապերի ամրացմանը։ Հայտնի է, օրինակ, որ Լևոն II-ը ամուսնացել էր Ամորի Լուսինյանի աղջկա հետ։ Լևոն III-ի աղջիկը ամուսնացել էր Հենրի II-ի եղբոր՝ Ամուրիի հետ և այլն։ Հայտնի են նաև փաստեր, որ Կիպրոսի Լուսինյաններից ոմանք գահակալեցին Կիլիկյան Հայաստանում (Գվիդոն, Լևոն Լուսինյան, Պետրոս 1-ին և ուրիշներ)[3]։

Կիպրոսի և Կիլիկիայի թագավորությունների միջև գոյություն ունեցող բարեկամական այս հարաբերությունները բավականին դրականորեն են ազդում հայ գաղթավայրի բարգավաճման վրա։ Ըստ Մաս Լատրիի վկայության, հայերը Կիպրոսի բնիկների մեջ ամենից ավելի հարգված բնակիչներն էին։

---

[1] Theophylactus Simocatta, *Բոննի հրատ., 1877, էջ 148 (համմ. Հովհ. Եփեսացի, 2, 34)։*

[1] *Ա. Ալպոյաճյան, ՊՀԳ, II, էջ 551։*

[2] *Մ. Օրմանյան, Ազգապատում (հ. I, էջ 1468)։*

[3] Г. Г. Микаелян, История киликийского армянского государства, *էջ 459։*

Մաս-Լատրիի խոսքն, անշուշտ, վերաբերվում է Կիպրոսի հայ ունևոր ազնվականական խավերին, իսկ տեղի հայ աշխատավորությունը, ինչպես երևում է, գտնվել է ճորտացված վիճակում։ Ըստ Վիլբռան դը Ոլդենբուրի, հույն և հայ աշխատավորներն այդ ժամանակ ճորտացված են եղել ֆրանսիացիների կողմից. «Հույները և հայերը,— գրում է Վիլբռանը,— նրանց (այսինքն՝ ֆրանսիացիներին — Ա. Ա.) հնազանդվում են իբրև հողագործ մշակներ, ամենքն էլ ենթարկված են ճորտության և հարկ են վճարում»[1]։

Հայերը ցրված էին ամբողջ կղզու վրա։ Առևտրական և արհեստավորական խավերն ապրում էին գլխավորապես քաղաքներում՝ Բաֆոս, Լիմասոլ, Նիկոսիա, Ֆամակոստա և այլն, իսկ գյուղացիները տեղավորված էին Մեսսուրի դաշտավայրում և Կերենիայա լեռների ստորոտներում։

Սկսած XII դարի վերջերից հայերը, հույների հետ միասին, կազմում էին կղզու հիմնական բնակչությունը։

XII դարի վերջին քառորդից մինչև XIV դարի վերջերը Կիպրոսի հայ գաղթօջախն ապրում էր իր բարգավաճման շրջանը։ Պատմական աղբյուրներում այդ ժամանակաշրջանից հիշվում են հայկական գյուղեր և ավաններ, քաղաքներում՝ հայկական անուններ կրող փողոցներ, հուշարձաններ և այլն։ Քաղաքական և զինվորական բարձր պաշտոններում գտնվել են բազմաթիվ հայեր[2]։ Ժամանակագիրներից մեկի վկայության համաձայն, երբ Ճենովացիները 1369 թվականին ռազմական գործողություններ են ծավալում Կիպրոսի դեմ, Կիպրոսի բանակում գտնվելիս է եղել նաև հայկական զորամաս, որը տեղացիների հետ ձեռք-ձեռքի տված կռվել է թշնամու դեմ. հայկական զորամասերը պաշտպանում էին կղզու «Հայոց դռներ» կոչվող մասը[3]։

XIV դարի սկզբներից Կիպրոսը պապական եկեղեցու պրոպագանդայի հենարան է դառնում՝ կաթոլիկությունը Կիլիկյան Հայաստանում տարածելու համար։

Հայրապետ գրիչը 1309 թվականին գրած իր հիշատակարանում գանգատվում է, որ Օշին թագավորը և Կոստանդին կաթողիկոսը իրենց աքսորել են Կիպրոս «... վասն ոչ հնազանդելոյ աւանդից Քաղկեդոնի»։

---

1 Բակուրանի, Կիպրոսի կղզի, էջ 51։

2 Թեոդիկի «Ամենուն տարեցույցը», 1927, էջ 214—215։

3 Բակուրանի, Կիպրոսի կղզի, էջ 58։

XIV դարում Կիլիկիայի հայկական պետության համար ըստեղծվում է անկայուն մի շրջան, երբ նա միայնակ է մնում Եգիպտոսի հզոր սուլթանության առաջ։ Արևմտյան կաթոլիկ աշխարհը նորից առուծախի առարկա է դարձնում հավատքի հարցը։

Կիլիկիայի հայերը փորձում են զիջման ճանապարհ վերցնել, սակայն Վատիկանը առաջնորդվում է «խոստանում և ոչ կատարեմ» իր սիրած սկզբունքով։ Եգիպտական սուլթանությունը սկսում է նեղել Կիլիկիային։ Անպաշտպան հայությունը սկսում է Կիլիկիայից արտագաղթի ճանապարհը բռնել։

1335 թվականին, երբ եգիպտական սուլթանի զորքերը մտնում են Կիլիկիա, հայկական մի ստվար հատված գաղթում է Կիպրոս և հաստատվում Ֆամագոստա քաղաքում։ Ըստ ժամանակակից պատմիչ Հովհաննես Վերոնացու տեղեկության, հայ գաղթականության վիճակը «սրտաճմլիկ տեսարան» էր ներկայացնում։ 1346 թվականին Կիլիկիայից Կիպրոս են փոխադրվել 1500 հայեր։ Այս մասին տեղեկություն է հաղորդում Հակոբ Պիրենացին, որը եղել էր Կիպրոսում և աչքով տեսել հայ գաղթականության ծանր դրությունը։ 1375 թվականին Կիլիկիայի հայկական թագավորության անկումից հետո, հայ գաղթականության հոսանքը դեպի Կիպրոս ավելի է ուժեղանում։ Գնացող գաղթականության մի մասը Կիպրոսից անցնում են ուրիշ երկրներ։

Հայկական մի մեծ գաղթականություն դեպի Կիպրոս է տեղափոխվել 1404 թվականին։ Գաղթի պատճառը Կիլիկիան նվաճողների կատարած վայրագություններն են եղել։ Գաղթականության թիվը ցույց է տրվում 30.000 հոգի, որն անշուշտ չափազանցված է։ Գաղթականության ղեկավարներն են հիշվում Կարապետ «Թոռն Կոստանդին թագավորին» և «պարոն Ասլիբէկն»։ Գաղթելու հնարավորություն չեն ունենում չքավորները. և «Ոչ յետ երթալոյն իշխանացն և մեծատանցն, ի Սիս մնացեալ աղքատ և չքաւորք, որ ոչ ունէին զկարողութիւն փախչելոյն»[1]։

Սրան հետևում է երկրորդ խոշոր արտագաղթը Կիլիկիայից դեպի Կիպրոս, որը տեղի է ունենում 1423—1424 թվականներին։ Ըստ պատմական տեղեկության, Կոստանդինը Կիլիկիայում 48 տարի թագավորելուց հետո, իր հետ ունենալով «Բազում իշխանք՝ իւրաքանչիւր տոհմականաւք հանդերձ», ի վիճակի չգտնվելով դիմադրելու եգիպտական սուլթան Մուսաֆերին, 30,000 տուն գաղթականությամբ անցել է «յայնկոյս ծովուն»՝ այսինքն Կիպրոս։

---

1 Ալիշան, Սիսուան, էջ 542—543։

Ուշադրության արժանի է այն, որ Կիպրոսի թագավորները Կիլիկիայի հայ պետականության անկումից հետո, իրենց վրա են վերցնում հայկական թագավորության ժառանգական իրավունքը և հիշվում որպես «թագաւոր Հայոց»: Այդպիսիներից են եղել Կիպրոսի Յանուս թագավորը, որը Ֆամագոստայում նույնիսկ օծվել է հայկական ծեսով իբրև «թագաւոր Հայոց»: Հայ գրիչներից մեկը՝ Եսային, իր 1394 թ. թողած հիշատակարանում հետևյալն է գրել. «Գրեցաւ ձեռագիրս... ի թագաւորութեան Կիպրոսի Ճագերի, որ և ի վերայ Հայոց այլ օրհնեցաւ և անուանեցաւ թագաւոր»[1]: Այդպիսին է համարվել նաև Կիպրոսի Պետրոս I թագավորը:

Կիպրոսում հաստատված հայերի համար ևս բախտը չի ժպտացել: 1426 թվականին կղզին ենթարկվում է Հարճակման եգիպտական սուլթանների զորքերի կողմից, որոնք վերցնում են կղզին և մեծ ավերածություն ու կոտորած սարքում այնտեղ: Ժամանակակից ականատես հայ հիշատակագրերից մեկը հետևյալն է գրում. «Ի յայս ժամանակի ի թվականութեանս ՊՀԵ (1426), ի վարդավառին կիրակի, Մսրայ սուլթանն Կիպրոս էառ և զբազում քրիստոնեայս գերի էառ, որ էին ոգիք Ր (5000) զկոտորեալսն ո՞ թուէ, ոհ, վայ է զիս»[2]: Եգիպտական այս արշավանքի ժամանակ սպանվել են ոչ քիչ թվով հայեր: Հավանական է, այս արշավանքից հետո ևս Կիպրոսի հայերից շատերը տեղափոխվել են այլ երկրներ:

1489 թվականին, երբ վենետիկցիները հաստատվեցին կղզում, նրանք ճանաչեցին այնտեղ ապրող հայերի իրավունքը. Վենետիկի սենատը նույնիսկ հատուկ որոշումով պարտավորվել է վճարել Կիպրոսում ծառայող հայերին նախկինում սահմանված ռոճիկը[3]:

Վենետիկյան տիրապետության 80-ամյա շրջանում բավականին հայեր դեռ ապրում էին Կիպրոս կղզում: Ըստ Մարտին Կրյուզ հույն հեղինակի (1526—1607 թթ.) տեղեկության, Կիպրոսում խոսում են հինգ լեզվով՝ հունարեն, ասորերեն, հայերեն, ալբաներեն և իտալերեն[4]: Նույն տեղեկությունը կրկնում է նաև ժամանակակից մատենագիր Ստեփան Լուսինյանը (1537—1590 թթ.): Ըստ նույն պատմիչի տեղեկության, Կիպրոսի հայ համայնքն այդ ժամանակ ունեցել է երկու եպիսկոպոս, որոնցից մեկը նստել է Նիկոսիայում, իսկ մյուսը՝ Ֆամագոստայում:

1 ՀՊՄ, ձեռագիր № 3503, թ. 384ա—384բ:
2 ՀՊՄ, ձեռագիր № 6262, թ. 176ա:
3 «Ամենուն տարեցույցը», 1927 թ., էջ 217:
4 Նույն տեղը, էջ 217:

1570 թվականին Կիպրոս կղզին գրավել են թուրքերը: Այդ առթիվ հայ տաղերգուներից մեկը՝ Նիկողայոս Ստամբուլցին, գրել է չափածո մի տաղ՝ «Ողբ Ղպրկօզի (Կիպրոս) կղզոյն ասացեալ է» վերնագրով, ուր պատմվում է՝ մեծ նավատորմիղով թուրքական բանակի Կիպրոս գալը, տեղացիների հերոսական պաշտպանությունը («քառասուն օր կռիւ արին»), թուրքերի կղզին վերցնելը և նրանց կատարած վայրագությունները[1]:

Թուրքերը, սկզբնական շրջանում, աշխատում են սիրաշահել կղզու հայերին, բայց հետո սկսում իրենց սովորական ճնշումները, որի պատճառով Կիպրոսի հայ գաղութը սկսում է ցրվել. բնակիչներից շատերը հեռանում են կղզուց ավելի ապահով վայրեր:

Թուրքական տիրապետության շրջանում ծանր է եղել, ըստ երևույթին, նաև Կիպրոսի հայ առևտրականների վիճակը: Վենետիկի դիվանատունը պահվում է 30 հայ վաճառականների մի բողոքագիրը, որը գրված է 1665 թվականին, հայ առևտրականները գանգատվում են թուրքական իշխանությունների իրենց նկատմամբ գործադրած ճնշումների վերաբերյալ[2]:

Կիպրոս կղզու հայկական ճարտարապետական աշքառու կոթողներից է Ս. Մակարի տաճարը (Կապույտ վանքը), որը գտնվում է Նիկոսիայից հյուսիս-արևմուտք: Նա կառուցված է 560 թվականին:

Կիպրոսը հանդիսացել է հայ գրչության կարևոր օջախ: Այնտեղ են գրվել մի շարք արժեքավոր ձեռագրեր[3]:

Կիպրոսի Լուսինյանների տան «Պատմությունը» 14-րդ դարում թարգմանվել է հայերեն, որը հրատարակել է Ֆինկը Հայկ. ՍՍՌ Մատենադարանի № 1898 ձեռագրից:

1 «Անահիտ», 1931, № 5—6, էջ 69—72:
2 Տե՛ս Ալիշան, Հայ Վենետ, էջ 305:
3 Տե՛ս Գ. Գովրիկյան, Դրանսիլուանիոյ հայոց Մետրոպոլիսը, էջ 342—346:

ՀԱՅ ԳԱՂԹՕՋԱԽՆԵՐԸ ՖՐԱՆՍԻԱՅՈՒՄ

Հայերը Ֆրանսիայի՝ պատմական Գալիայի վրա, ոտք են դրել շատ վաղուց: Տեղեկություններ կան այն մասին, որ հայ առևտրականները ապրանքափոխանակություն են կատարել Գալիայում VI—VII դարերում[1]: Անանիա Շիրակացին իր «Աշխարհացոյց»-ի մեջ ծանոթ է և նկարագրել է Գալիան՝ հիշելով նրա մեջ «Հզոր ֆրանկներ»-ին («Ֆրանկս Հզորս»)[2]:

IX—X դարերից մեզ է հասել հայ-լատիներեն մի զրուցատուփություն՝ կցված Հերմոնիոսի նամակին[3], որը ցույց է տալիս, որ ֆրանսիական շրջաններում հայկական լեզվի նկատմամբ այնքան մեծ հետաքրքրություն կար, որ անհրաժեշտ էին համարում նման ձեռնարկ կազմել:

Հայ-ֆրանսիական վաղեմի կապերը չեն սահմանափակվել միայն առևտրական հարաբերություններով. ճարտարապետության պատմության մասնագետները նկատում են ֆրանսիական ճարտարապետության որոշ հուշարձանների նմանությունը հայկական ճարտարապետությանը: Ստրիժիգովսկին գտնում է, որ Ֆրանսիայի Օռլեան քաղաքի մոտ գտնվող Սեն Ժերմենի Դեֆրե եկեղեցին կառուցված է հայկական ոճով (եկեղեցին կառուցվել է 806 թվականին)[4]:

Պատմական գրականության մեջ հիշատակություններ կան հայ դիվանագետների այցելության մասին Ֆրանսիա IX—X դարերում: Ըստ տեղեկությունների, արաբական խալիֆ Հարուն-ալ-Ռաշիդի՝ Կարլոս մեծի մոտ 807 թ. ուղարկված պատգամավորության մեջ եղել են և հայեր[1]: Բյուզանդական արքունիքից 840 թ. Ֆրանսիա ուղարկված պատգամավորության ղեկավարն էր հայ իշխան Թեոդոս Բաբուցիկը[2]:

IX դարում պավլիկյան շարժման կողմնակիցները, Դալմացիայի և Իտալիայի ճանապարհով, թափանցել են Ֆրանսիա:

XI դարում, Անիի կործանումից հետո, բավականին թվով հայեր են գաղթել Հայաստանից Եվրոպա: Գաղթականության այդ հոսանքի որոշ բեկորներ հասել են Ֆրանսիա: Յորդան-Իվանովը կարծում է, որ հենց այդ դարաշրջանում են հիմնվել Ֆրանսահայ առաջին գաղթօջախները[3]:

Մինչև խաչակրությունը, պետք է ասել, որ հայ-ֆրանսիական շփումները էպիզոդիկ բնույթ են կրել: Այդ երկու ժողովուրդները, աշխարհագրորեն, հեռու են գտնվել և հանդիպման քիչ առիթներ են ունեցել: Սակայն երբ Ֆրանսիայի խաչակիրները ոտք են դնում Կիլիկյան Հայաստան և սկսում են մոտիկ ծանոթություն հաստատել հայերի հետ, սկսվում են սերտ և բարեկամական հարաբերություններ: Խաչակիրներին հետևում են Ֆրանսիացի վաճառականները, որոնք առևտրական գործուն հարաբերությունների մեջ են մտնում Կիլիկյան Հայաստանի վաճառականների հետ: Հայ-ֆրանսիական քաղաքական բարձր շրջանների միջև ստեղծվում են խնամիական կապեր, կնքվում է զինական դաշնակցություն և այլն: Այդ ամենը զգալի չափով նպաստում է երկու ժողովուրդների ճանաչմանը և դներ բացում հայ գաղթականության համար դեպի Ֆրանսիա:

13—14-րդ դարերում ֆրանսիական առևտրական նավերը հաճախ են կանգ առնում Այասում, Տարսոնում, Ադանայում և Սիսում, իսկ հայ առևտրականների նավերը՝ հարավային Ֆրանսիայի նավահանգիստներում: Ֆրանսիացիները Կիլիկիա էին բերում գլխավորապես արդյունագործական ապրանքներ՝ ածելի, հայելի, փարիզյան գոտի, օճառ, մեղրամոմ և այլ ապրանքներ: XII—XIV դարերում հայ առևտրականներին մենք հաճախ ենք հանդիպում Պրովանսում, Մարսել, Մոնֆել, Նարբոն, Նիմ և այլ

[1] Cambridge Medieval History, IV, 24, էջ 762:
[2] Անանիա Շիրակացու մատենագրությունը, էջ 341:
[3] Macler, La France et l' Arménie, Paris, 1917, էջ 10—11:
[4] Գ. Խանամիրյանի հոդվածը («Պայքար»-ի բացառիկ, 1951, էջ 9):

[1] Ալիշան, Սիսուան, էջ 456 (հմմ. Macler, էջ 10, Հրանտ Սամվել, «Ֆրանսահայ տարեգիրք», 1927, էջ 51):
[2] Ալպոյաճյան, ՊՀԳ, II, էջ 609:
[3] «Հայկարան», էջ 50:

նավահանգստային քաղաքներում։ Հայ առևտրականները Ֆրանսիա էին բերում մետաքս և արևելյան համեմունքներ։

Փարիզի ազգային մատենադարանի մի ձեռագրում հիշատակություն կա այն մասին, որ «Հայաստանի թագավորությունից Ֆլանդրիա է ներմուծվում բամբակ և ամեն տեսակ համեմներ»[1]։ Տեղեկություններ կան անգամ Ֆրանսիայում գործող հայ առևտրական կոմպանիաների մասին։

Կիլիկիայի հայ թագավորները ֆրանսիացիներին էին ղիջել Պրովանսալ կղզին (ներկայիս Դանա Աւտասը), որը այսուհետև դառնում է ֆրանսիացիների նավատորմիղի կարևոր կայանը[2]։

Կիլիկիայի հայկական արքունիքի տված առանձնաշնորհումներով, ֆրանսացի առևտրականներն ավելի պակաս գումարով էին մուծում մաքսը, քան մյուս ազգության պատկանող առևտրականները։ Մինչև այժմ Ֆրանսիայի Մոնպֆիլիե քաղաքի դիվանատունը պահվում է Օշին թագավորի մոնֆիլեցի վաճառականներին 1314 թ. հունվարի 7-ին տված արտոնագիրը՝ նրանցից միայն երկու տոկոս մաքս գանձելու վերաբերյալ[3]։

XIII—XIV դարերում Ֆրանսիա եկած հայ վաճառականների միջև այնքան շատ առևտրական գործարքներ էին կնքվում, որ Շարավային Ֆրանսիայի Մոնպֆիլիե քաղաքի համալսարանի դռները փակցնում էին հայկական և ֆրանսիական դրամների փոխարժեքը ցույց տվող սակացանկեր նրանով առաջնորդվելու համար[4]։

Ռոն գետի մեկ վտակը, որն այժմ չորացել է, հնում ունեցել է «Հայկական» անունը[5]։ Այդ վտակի շրջապատում ապրելիս են եղել հայերը, նրա մոտիկ վայրում կազմակերպված տոնավաճառներում հայերն ակտիվ մասնակցություն են ունեցել, ուստի իրենց անունը տվել են վտակին, որը չորացել, անհետացել է՝ բաժանելով անհետացած հայ գաղթօջախի ճակատագիրը։

Շարավային Ֆրանսիայի Տարասկոն քաղաքի եկեղեցում գտնվել է 1226 թվականի հայերեն արձանագրություն[6], որն անհերքելիորեն ապացուցում է, որ այնտեղ հայ բնակչություն է գոյություն ունեցել դեռևս XIII դարում։ Հայ գաղթականության նոր

[1] Հրանտ Արմեն, Ֆրանսահայ տարեգիրք, 1927, էջ 54։

[2] Ալպոյաճյան, ՊՀԳ, II, էջ 613։

[3] Ed. Dulaurier, Recherches sur la chronologie Arménienne էջ 180 (հմմ. Հրանտ Սամվել, Ֆրանսահայ տարեգիրք, 1927, էջ 52—53)։

[4] «Հայկաշէն», Փարիզ, 1943, էջ 74։

[5] «Բազմավէպ», 1919 թ., էջ 144—149։

[6] Ալպոյաճյան, ՊՀԳ, II, էջ 612 (հմմ. «Բազմավէպ», 1919, էջ 145—146)։

հոսանք Ֆրանսիա է եկել Կիլիկիայի հայկական պետականության անկումից հետո։ Այստեղ են եկել ու ապաստանել գլխավորապես Կիլիկիայի արքունիքի ազնվականական ներկայացուցիչներն ու մեծահարուստ հայ վաճառականները։ Տեղեկություններ կան այն մասին, որ պապի ռեզիդենցիան (նստավայրը) Ֆրանսիայի Ավինիոն քաղաքում գտնված ժամանակ, Կղեմես պապին է ներկայացել հայոց Հեթում պատմիչը և նրան նվիրել «Ծաղիկ արևելքի պատմության» վերնագրով իր աշխատությունը[1]։ Եգիպտական գերությունից ազատվելով, 1384 թվականին Ֆրանսիայում է ապաստանել Լևոն վերջին հայոց թագավորը, որին Ֆրանսիայում ընդունել են բացառիկ սիրալիրությամբ, հատկացրել են դղյակ, նշանակել են կենսաթոշակ։ Ի դեպ, Լևոն թագավորը Ֆրանսիայում եղած ժամանակ, ցանկանալով վերջ դնել Անգլիայի և Ֆրանսիայի միջև ծագած հարյուրամյա պատերազմին և միացյալ ճակատ կազմել ընդդեմ Արևելքից սպառնացող թուրքական վտանգի, գնացել է Անգլիա և բանակցություններ վարել Անգլիայի քաղաքական գործավար շրջանների հետ, բայց որոշակի արդյունքի չի հասել։ Լևոն Լուսինյանը մահացել է Փարիզում 1393 թվականի նոյեմբերի 29-ին և թաղվել է Փարիզում։

Ֆրանսիայում գտնվող հայ գաղթականների մեջ առևտրականներից բացի տեղեկություններ կան հայ արհեստավորների մասին։ Հայտնի է, այսպես, որ Փիլիպոս Հանդուքն Ֆրանսիական թագավորի դղյակի շինարարությանը մասնակցել են հայ արհեստավորները[2]։

Հայ գաղթականության մի նոր հոսանք Ֆրանսիա է եկել Պոլսից՝ 1453 թվականին, երբ քաղաքը գրավվեց թուրքերի կողմից։ Հաջորդ դարերում Ֆրանսիայի հայ գաղթօջախներից առանձնապես մեծանում են Փարիզի և Մարսելի գաղթօջախները։

XVI դարի վերջերից սկսած ֆրանսիական շովինիզմը արտակարգ հաջողությամբ սկսում են գործել հայ խոջաները, որոնց ձեռքին էր գտնվում, կարելի է ասել, Արևելյան ապրանքները Եվրոպայում վաճառքի հանելու մենատիրությունը։ Նրանց գործունեությանը նպաստում է Ռիշելյեի, Մազարինի և Կոլբերների քաղաքականությունը, որոնք ցանկանալով զարկ տալ առևտրի և արդյունաբերության զարգացմանը, լայնորեն բաց են անում Ֆրանսիայի դռները օտարերկրյա առևտրականների առջև։ Մարսելը դառնում

[1] «Բազմավէպ», 1913 էջ 148։

[2] Ալպոյաճյան, ՊՀԳ, II, էջ 618։

է միջազգային առևտրի խոշոր կենտրոն, ուր անարգել իրենց գործունեությունն են ծավալում ի թիվս այլ առևտրականների՝ նաև հայերը։ Շուտով, սակայն, հայ առևտրականները մրցության մեջ մտնելով տեղացի առևտրականների հետ, առաջացնում են մասսայական դժգոհություն տեղացի, մանավանդ՝ Մարսելի առևտրականների շրջանում։ Ֆրանսիական կառավարությունը փոխում է իր վերաբերմունքը հայ առևտրականների նկատմամբ և աշխատում սահմանափակել նրանց գործունեությունը։ 1622 թվականին հանձնարարվում է ֆրանսիացի նավապետներին հրաժարվել իրենց նավերի վրա վերցնելու և փոխադրելու հայ առևտրականների ապրանքները։ Ֆրանսիական կառավարությունը միաժամանակ պարտավորեցնում է հայ վաճառականներին՝ իրենց վաճառած մետաքսի փոխարեն տեղական ապրանքներ գնել։ Խստիվ արգելվում է ոսկու և արծաթի արտահանությունը երկրից, և այլն։

Ֆրանսիական կառավարության՝ հայ առևտրականների նկատմամբ գործադրած այս խստություններից դժգոհ, Նոր Ջուղայի հայ առևտրականները դիմում են Շահաբասին, որը 1629 թվականին բողոքագիր է ներկայացնում ֆրանսիական կառավարությանը՝ իր քաղաքացիների իրավունքների սահմանափակման համար։ Ֆրանսիական կառավարությունը, այդ բողոքագրից հետո, փոքրինչ դյուրացնում է հայ վաճառականների գործունեությունը Ֆրանսիայում։

XVII—XVIII դարերում հայկական փոքրիկ գաղթօջախներ են գոյություն ունեցել Մարսելում, Տուլոնում, Նիցցայում և արդյունաբերական խոշոր այլ քաղաքներում։ Երկրի ներսում գտնվող հայկական գաղթօջախներից ավելի են խոշորանում առանձնապես Փարիզի և Լիոնի գաղթօջախները։ Ըստ տեղեկությունների, Ֆրանսիայում հայ գաղթականներ են եղել ոչ միայն քաղաքներում, այլև գյուղերում։

XVIII դարի ֆրանսահայ գաղթօջախների հետ է կապված եղել հայ հնատիպ գրքերի տպագրությունը։ Ֆրանսիայում հայ գրքի տպագրության գործում առաջին նախաձեռնությունը պատկանել է պետական ղեկավար շրջանին։ Ֆրանսիայի պետական և կաթոլիկ կղերականության բարձր ղեկավարությունն առանձին ջանասիրություն է ցուցաբերել հայերին կաթոլիկ դարձնելու գործում, և այդ նպատակն իրագործելու համար, գործի են դրվել պրոպագանդիստական ողջ ապարատը, այդ թվում՝ նաև տպագրությունը։ Լուի XIII հաճությամբ և կարդինալ Ռիշելյեի նախաձեռնությամբ, 1630-ական թվականներին Փարիզում հրատարակվել է Միլանի

կրոնավոր Ֆրանչեսկո Ռեվոլոյի «Բառգիրք հայոց» (հայ-լատին բառարան), Պողոս-Պետրոս հայ քահանայի «Ահռաւել պարզաբանութիւն», «Լատին քրիստոնեական»-ի հայերենը և այլ աշխատություններ։

XVII դարի 70-ական թվականներին ֆրանսիական կառավարությունը վերանայել է հայ վաճառականների նկատմամբ վարած սահմանափակող քաղաքականությունը և որոշել դյուրություններ տալ նրանց առևտրական գործունեության համար։ Մարսելի ֆրանսիական առևտրական գրասենյակը փորձել է բողոքարկել կառավարության այդ որոշման դեմ։ Մեզ է հասել Լյուդովիկոս XIV նախարար Կոլբերի մի գրությունը՝ ուղղված Մարսելի գերագույն դատարանի նախագահին՝ հայ առևտրականների մասին։ Գրության մեջ ասված է. «Խնդրում եմ հայերին ցույց տալ բոլոր տեսակի պաշտպանություն, որը պատշաճում է ձեր պաշտոնին և հեղինակությանը, ինչպես և ապահովել նրանց ձեր քաղաքի բնակիչների բոլոր տեսակի հարձակումներից, որովհետև տեղացիները չեն հասկանում, թե ինչումն է կայանում իրենց շահը»։

Ֆրանսիայում հայ գրքի տպագրության կարևոր օջախներից է հանդիսացել Մարսելը։ Ոսկան վարդապետը Ամստերդամում մի քանի գրքեր հրատարակելուց հետո, երբ անհաջողության հանդիպեց, ինչպես հայտնի է, 1669 թվականին տեղափոխվեց Իտալիայի Լիվոռնո քաղաքը և այնտեղ շարունակեց իր գործունեությունը։ Սակայն այստեղ ևս նեղվելով պապական գրախոսությունից, եկավ Ֆրանսիա և թույլտվություն ստացավ 1673 թվականին Մարսելում տպարան հիմնելու։ Այն անվանվում էր «Տպարան Ս. Էջմիածնի և Ս. Սարգիսի զորավարի»։ Սակայն Ոսկանը կաթոլիկ կղերականության կողմից այստեղ ևս հետապնդվեց։ Նա մահացավ 1674 թվականին։ Նրա հիմնած տպարանը սակայն շարունակեց իր գոյությունը մինչև 1710 թվականը։ Ոսկանի այդ տպարանի դրոշմով հրատարակվել են 30-ից ավելի հայերեն գրքեր։

Ֆրանսիական ժողովուրդը, պետք է ասել, որ երախտամոռ չի գտնվել երկրի տնտեսության, կուլտուրայի և ռևոլյուցիոն շարժման բնագավառներում բացառիկ ծառայություն մատուցած հայ գործիչների հիշատակը հավերժացնելու համար։ Հայտնի է, որ Մարսելի մոտիկ Ավինիոն քաղաքում կանգնեցված է հայ գյուղատնտես Ժան Ալբենի արձանը։

Ժան Ալբենը, որի հայկական հիշատ անունն է Հովհաննես Ալբունյան, պարսկահայ է։ Թափառիկ ճակատագիրը նրան նետել է Ֆրանսիա, այստեղ նա ամուսնացել է և հաստատվել է Ավինիոն

քաղաքում։ Ցանկանալով զարգացնել տորոնի մշակութիյունը Ֆրանսիայում, նա Հայաստանից բերել է տվել տորոն բույսի սերմը և մշակել։ Իր գործադրած ջանքերը թեպետ նյութական մեծ օգուտ չեն բերել և նա մահացել է չքավորութիյան մեջ, սակայն հետագայում տորոնի մշակութիյը լայնորեն տարածվել է Ֆրանսիայի մի քանի նահանգներում և շահաբեր աղբյուր հանդիսացել տեղի բնակչութիյան համար։ Եվ Վոքլյուզ քաղաքի բնակիչները, պատշաճ գնահատելով հայ գյուղատնտեսի վաստակը, արձան են կանգնեցրել ի պատիվ Հովհաննես Ալթունյանի, հետևյալ մակագրութիյամբ՝ «Տորոնի ներմուծող ժան Ալթընին երախտագետ վոքըլյուզցիներից»։

Ֆրանսիայի հայ գաղթավայրը ստվարացել և հասարակական եռուն կյանք է ունեցել նոր շրջանում, որի մասին հանգամանորեն կխոսվի հաջորդ հատորում։

ՍԻՐԻԱՅԻ ԵՎ ՄԻՋԱԳԵՏՔԻ ՀԱՅ ԳԱՂԹՕՋԱԽՆԵՐԸ

Սկզբնաղբյուրները և գրականությունը։

Սիրիայի և Միջագետքի հայ գաղթօջախների պատմութիյան հիմնական սկզբնաղբյուրները՝ հայկական ձեռագրերի հիշատակարանները և հիշատակագրութիյուններն են, հատկապես այն ձեռագրերի հիշատակարանները, որոնք գրվել են մեզ հետաքրքրող գաղթօջախներում։ Անտիոքում, Եդեսիայում, Բաղդադում, Հալեպում և այլ քաղաքներում հայ գրչութիյան գործուն օջախներ են եղել և մեր բազմերախտ գրիչներն իրենց ընդօրինակած ձեռագրերի հիշատակարաններում հաճախ պարտք են համարել կանգ առնել ոչ միայն իրենց շուրջը ծավալվող քաղաքական իրադարձութիյունների, այլև հայ գաղթօջախների գործունեութիյան վրա։

Հայ, արաբ և հույն պատմիչների մոտ ևս մենք հանդիպում ենք ուշագրավ տեղեկութիյունների հայ գաղթօջախների վերաբերյալ, սակայն նրանք դիպվածային են և կցկտուր։ Մեզ հայտնի չէ որևէ հայ կամ օտար պատմիչ, որ նպատակ դրած լինի հայ որևէ գաղթօջախի, թեկուզ կարճ մի ժամանակաշրջանի, պատմութիյունը գրել։ Գաղթավայրերի հայ համայնքին նրանք անդրադառնում են միջանկյալ ձևով՝ այս կամ այն միջադեպի նկարագրութիյան կապակցութիյամբ։ Իսկ այդ բավականաչափ դժվարացնում է ուսումնասիրութիյան գործը։ Հաճախ ստվարածավալ պատմական մի աշխատութիյան մեջ հազիվ կարելի է լինում մեկ-երկու պարբերութիյուն գտնել հայ գաղթավայրերի մասին։ Աղբյուրների աղքատիկ այս վիճակում հնարավորութիյուն չենք ունեցել կանգ առնելու Միջագետքի և Սիրիայի հայ գաղթօջախների ներքին կյանքի վրա։

Հայկական պատմական աղբյուրներից մեզ հետաքրքրող

գաղթօջախների մասին արժեքավոր և հավաստի տեղեկություններ ենք գտնում Մատթեոս Ուռհայեցու «ժամանակագրության» մեջ։ Մատթեոսը լինելով Միջագետքի Եդեսիա (Ուռհա) քաղաքի հայ գաղթավայրից, իր աշխատության մեջ բավականին տեղ է հատկացրել պատմական այն իրադարձություններին, որոնք տեղի են ունեցել իր ծննդավայրում և Միջագետքի ու Սիրիայի հայկական մյուս գաղթօջախներում։ Հայ գաղթավայրերի վրա իր «ժամանակագրության» մեջ փոքր-ինչ կանգ է առնում 12-րդ դարի պատմիչ Սմբատ Սպարապետը։ Սմբատը եղել է Կիլիկյան Հայաստանի զորաբանակի հրամանատարը, ինքն անձամբ գտնվել է Սիրիայում և Հյուսիսային Միջագետքում, ղեկավարել է ռազմական գործողությունները, ուստի նրա հաղորդած տեղեկությունները հավաստի են և պատմական մեծ արժեք ունեն։

Ավելի ուշ շրջանի հայ հեղինակների աշխատություններից, Սիրիայի և Միջագետքի հայ գաղթօջախների մասին, պատմական հարուստ նյութ է պարունակում Սիմեոն Լեհացու «Ուղեգրությունը»։ Մեր հեղինակը 17-րդ դարի առաջին քառորդում ուղևորություն է կատարել Մերձավոր Արևելքում և գրի առել իր տպավորությունները։ Ճանապարհորդության ընթացքում նա գտնվել է Սիրիայում և շատ հետաքրքիր տեղեկություններ է հաղորդում տեղի հայ գաղթօջախների մասին։

Ուշագրավ որոշ նյութեր մենք հանդիպում ենք նաև ասորական և արաբական աղբյուրներում, որոնք սակայն այնքան աղքատիկ են, որ ավելորդ ենք համարում կանգ առնել նրանց վրա։

Վատ վիճակում չի մեզ հետաքրքրող գաղթավայրերի պատմության ուսումնասիրությունը։ Պատմական այն երկրամասի վրա, ուր հանդես են եկել Միջագետքի և Ասորիքի հայ գաղթօջախները, փաստորեն ներկայումս գտնվում են քաղաքական անկախ երեք պետություններ՝ Սիրիան, Լիբանանը և Իրաքը։ Մենք չենք խոսում Պաղեստինի մասին, որի վրա կանգ ենք առել առանձին։ Մինչև այժմ հայ գաղթավայրերի պատմությանը նվիրված ուսումնասիրությունները կատարվել են ըստ նշված առանձին երկրների, չնայած երբեմն այդ երկրների պատմությունն այնքան սերտորեն է կապված եղել իրար հետ, որ ուսումնասիրողները պատմական նույն փաստերը հաճախ օգտագործել են բոլոր երկրների համար։ Սիրիայի հայ գաղթօջախի պատմության ուսումնասիրության բնագավառում քրտնաջան աշխատանք է կատարել Արտավազդ եպ. Սյուրմեյանը, որն իր ուսումնասիրության արդյունքները ամփոփել է «Պատմութիւն Հալէպի Հայոց» երեք ստվար հատորների մեջ

(հրատարակվել է Փարիզում 1950 թվականին)։ Նշված հատորներում նա զետեղել է պատմական այն բոլոր նյութերը, որոնք վերաբերում են Հալեպի հայ համայնքին՝ սկսած հնագույն շրջանից մինչև մեր օրերը։ Սկզբնաղբյուրներից հավաքած և մատուցած նյութերը մեծ արժեք ունեն, որոնցից և օգտվել ենք, սակայն հնդինակի եզրակացությունների հետ ոչ բոլոր դեպքերում հնարավոր է եղել համաձայնվել։

Սյուրմեյանի հրատարակած նշված աշխատության երրորդ հատորին անդրադարձել է Հ. Ն. Ակինյանը իր «Հայ կյանքը Հալեպի մեջ» խորագրով հոդվածում, որը տպագրվել է «Հանգէս ամսօրեայ»-ի 1933 թվականի մարտ-հունիս համարում (էջ 305—333)։ Նա մատնացույց է արել պատմական արժեքավոր այն նյութերը, որոնք վրիպել են մեր հեղինակի ուշադրությունից։

Ա. Սյուրմեյանը հրատարակել է մի այլ աշխատություն ևս «Սյուրիա» վերնագրով, ուր նա կանգ է առել ոչ միայն Հալեպի, այլև Սիրիայի մյուս այն բոլոր քաղաքների վրա, ուր ապրել ու գործել են հայերը։

Սիրիայի հայ գաղթօջախներին անդրադարձել է պատմաբան Ե. Ս. Քասունին իր «Փիլարտոս Հայը» (Հալեպ, 1930) և «Պատմություն Անթափի հայոց» աշխատությունների մեջ։

Լիբանանի հայ գաղթօջախների վերաբերյալ կան մի շարք ուսումնասիրություններ, որոնցից փաստական նյութի հարստությամբ և գիտականությամբ արժեքավոր է. Ս. Վարժապետյանի «Հայերը Լիբանանի մեջ» ստվար հատորը, որը լույս է տեսել Բեյրութում 1951 թվականին։ Հեղինակը պատմական սկզբնաղբյուրներից քաղել է այն բոլոր տեղեկությունները, որոնք վերաբերում են Լիբանանի հայ գաղթօջախներին, մանրակրկիտ ուսումնասիրել է նրանք և կազմել լիբանահայության ամբողջական պատմությունը հնագույն շրջանից մինչև մեր օրերը։

Համեմատաբար, ավելի թույլ է ուսումնասիրված Իրաքի հայ գաղթօջախների պատմությունը։ Եղած ուսումնասիրություններից լավագույնը Վ. Մելքոնյանի «Իրաքի հայ գաղթավայրի» պատմությունն է, որը հրատարակվել է անգլերեն լեզվով։

Իրաքի, Սիրիայի և Լիբանանի հայ գաղթօջախների վերաբերյալ կան գիտական արժեք ներկայացնող առանձին հոդվածներ և հաղորդումներ, որոնց վրա մենք կանգ առնելու հնարավորություն չունենք։

Սիրիայի և Լիբանանի հայկական հնագույն գաղթօջախները:

Սիրիան և Միջագետքը պատմական Հայաստանի հարևան այն երկրներն են, ուր հայերը տարբեր ժամանակներում այս կամ այն պատճառով. հարկադրված են եղել ապաստան փնտրել հյուրասեր այդ երկրներում և թողել են այնտեղ պատմական բազմաթիվ հիշատակներ: Ընդհանրապես Սիրիայում և Միջագետքում հաստատված հայ գաղթականներն օտարականի վիճակ չեն ունեցել, սուր արտահայտված խորթություն չեն զգացել: Հայ գաղթականները Սիրիան և Միջագետքը համարել են իրենց երկրորդ հայրենիքը և ջանք ու եռանդ չեն խնայել նրանց զարգացման և բարգավաճման համար: Ներկայումս էլ Սիրիայի և Լիբանանի հայկական գաղթօջախներում ապրում են մեծ թվով հայեր: Ահա թե ինչու նշված գաղթավայրերի պատմության ուսումնասիրությունն ունի առաջնահերթ և կարևոր նշանակություն:

Հայ ժողովրդի հարաբերությունները իր հարավային հարևանների հետ խորը հնություն ունի: Հայաստանի և Միջագետքի միջև տեղի ունեցող առևտրական հարաբերությունների մասին հիշատակություններ կան դեռևս Հերոդոտի մոտ (V դար մ.թ.ա.): Ըստ այդ տեղեկության, առևտրականները իրենց ապրանքները Հայաստանից Բաբելոն են տեղափոխել նավով. ծառի ճյուղերից գործված կլոր նավակները մարդիկ պատել են կաշվով, բարձել ապրանքներով և գետի հոսանքով իջել Բաբելոն: Այնտեղ վաճառել են իրենց ապրանքները, և քանի որ հնարավոր չի եղել գետի հոսանքին հակառակ նավարկել, քանդել են իրենց նավերը, ուռի ճյուղերը թողել այնտեղ, իսկ նավը պատած կաշին բարձել գրաստներին և ետ վերադարձել[1]:

Հայաստանի և Սիրիայի փոխհարաբերություններն ավելի գործուն բնույթ ստացան հայոց Տիգրան II-ի (95—55) ժամանակ: Տիգրանը, ինչպես հայտնի է, 82—64 թվականներին նվաճեց Սիրիան և Անտիոքը դարձրեց իր նստավայրը: Տիգրանի տիրապետության այս շրջանում հայերը եկել են և բնակություն են հաստատել այնտեղ: Ենթադրվում է, որ Անտիոքի լեռնային շրջաններում և Ջեբել Մուսայում բնակություն հաստատած հայության նախնիները այստեղ են Տիգրանի ժամանակից:

Սիրիան և Լիբանանը հռոմեական գերիշխանության տակ ընկնելուց հետո, հայերի հարաբերությունները Միջագետքի հետ չխզվեցին: Հայ վաճառականները շարունակեցին իրենց միջնորդի դերը

[1] Տե՛ս Геродот, I, 194.

տարանցիկ առևտրում: Հայ-սիրիական հարաբերություններն ավելի սերտ բնույթ ստացան մեր թվականության IV դարից սկսած, երբ ասորիները և հայերը ընդունեցին քրիստոնեություն:

IV դարում Սիրիայի Անտիոք, Եդեսիա և Ամիդ քաղաքներում հիմնված են եղել, իր ժամանակ մեծ հռչակ վայելող, բարձրագույն դպրոցներ, որտեղ սովորում էին նաև մեծ թվով հայ ուսանողներ: Հայտնի է նաև, որ 405 թ. Մեսրոպ Մաշտոցն իր աշակերտների հետ, հայկական գիրը ստեղծելու նպատակով, Միջագետքում գտնված ժամանակ գործնական խորհուրդներ է ստացել ասորի գիտնականներից: Հայկական նոր գիրը ստեղծվելուց հետո վաղ քրիստոնեական շրջանի առաջին թարգմանությունները կատարվել են ասորերենից: Հայերը և ասորիները միասին են հանդես եկել բյուզանդական պաշտոնական եկեղեցու դեմ հակաքաղկեդոնական պայքարում, որը որոշակի հետապնդել է քաղաքական նպատակներ:

Առաջին հավաստի տեղեկությունը հայ բնակչության գաղթի մասին դեպի Սիրիա վերաբերում է VI դարին: Տեղեկություններ կան այն մասին, որ պարսից Խոսրով թագավորը 539/40 և 544 թվականներին հարձակվել է Բյուզանդիայի վրա, գրավել Անտիոքն ու Եդեսիան և մեծ թվով քրիստոնյա գաղթականություն տեղափոխել այնտեղ: Այս գաղթականության մեջ փոքր չի եղել հայերի թիվը[1]: Հետագայում Սիրիա են անցել և իրենց գաղթական հայրենակիցներին միացել բյուզանդական քաղաքականությունից դժգոհ հայ մի շարք գործիչներ իրենց հետևողների հետ միասին:

VI դարում Սիրիայում հայ գաղթօջախներն սկսում են ստվարանալ: Այդ երևում է ժամանակակից Քրիստափոր Տիրուիջցի կաթողիկոսի (539—545) Ասորիքի հայ համայնքներին գրած նամակից, ուր նա զգուշացնում է տեղի հայ համայնքին չհարել նեստորական աղանդավորներին: Հետագայում կաթողիկոսն ինքն անձամբ այցելել է Սիրիայի հայ համայնքներին և հաղորդել նրանց հավատարիմ մնալ հայկական ավանդույթներին[2]:

Արաբական խալիֆայության տիրապետության շրջանում, երբ Դամասկոսը դարձավ խալիֆայության կենտրոնը, հայերը ընկնելով արաբների գերիշխանության տակ, դիվանագիտական գործուն փոխհարաբերությունների մեջ մտան Սիրիայի հետ:

Ռազմագերու դժբախտ ճակատագիրը բաժանող հայ անձնա-

[1] Ե. Տեր-Մինասյանց, Հայոց եկեղեցու հարաբերությունները ասորվոց եկեղեցու հետ, էջմիածին, 1908, էջ 122:

[2] Մ. Օրմանյան, Ազգապատում, մասն. Ա, էջ 530—532:

վորությունները ուշագրավ է Վահան Գողթնեցու պատմությունը, որի դամբարանը գտնվում է Հոմս քաղաքի մոտ, և արաբ ժողովուրդը մեծարում է նրա հիշատակը որպես սրբի։

Ընդհանրապես պետք է ասել, որ խալիֆաթի գերիշխանության շրջանում Սիրիայում և Միջագետքում հայկական նոր գաղթօջախներ չստեղծվեցին, իսկ եղածներն էլ ցրվեցին ու ոչնչացան։

IX—XI դարերում, ինչպես հայտնի է, Սիրիայի հյուսիսային շրջանները գրավեցին բյուզանդացիները։ Նահանջող խալիֆայության բանակի հետ գաղթեցին մեծ թվով մահմեդական բնակիչներ։ Բյուզանդական արքունիքը դատարկված այդ տարածությունն աշխատեց լցնել քրիստոնյա բնակչությամբ։ Այդ շրջանները տարված գաղթականության մեջ կային մեծ թվով հայեր[1]։

X դարում այնքան շատ հայ բնակչություն է ապրելիս եղել Սիրիայում, որ անհրաժեշտ է եղել այնտեղ Հայկական թեմ կազմել և թեմակալ եպիսկոպոս ունենալ։ Ստեփանոս Ասողիկն այդ մասին հետևյալն է գրում. «Իսկ յաւուր տեառն Խաչիկ հայրապետին հայոց, սփռեալ տարածեցաւ ազգս Հայոց զկողմամբքն Արևմտից, մինչև ձեռադրել նման եպիսկոպոսունս յԱնտիոք Ասորւոց և ի Տարսոն Կիլիկեցւոց և ի Սուլընդայ և յամենայն գաւառս յայնոսիկ»[2]։

Բագրատունյաց անկումից հետո, երբ սելջուկները մտան Հայաստան և կյանքը երկրում անտանելի դարձավ, զգալի թվով հայություն գաղթեց դեպի Կապադովկիա, Կիլիկիա և Սիրիա։

Սիրիայում հայ բնակչության թիվն այնքան մեծացավ, որ հյուսիսային Սիրիան վերածվեց համատարած հայկական շրջանի։ Այնտեղ ստեղծվեց հայ մշակույթի այնպիսի հռչակավոր կենտրոն, ինչպիսին Շղուրի Կարմիր վանքն է (Անտիոքից հարավ, լաթաքիայից հյուսիս)։ Ի դեպ, հայկական այդ հատվածի երբեմնի բեկորներից են համարվում Յաղուպիայի և Ղրնեմիեի շրջաններում ներկայումս ապրող արաբախոս հայերը[3]։ Աշխարհագրագետ Աբուլ-Ֆարաջը վկայում է, որ հայերը տեր էին Շղուրի ողջ շրջակայքին՝ մինչև Տարտուսի ծովեզերքը։ Նշված ժամանակաշրջանում Սիրիայում հաստատված հայկական համայնքի սերնդից են լաթաքիայի մոտիկ լեռնային շրջաններում հաստատված Քեսաբի, Կարատուտանի և Սուետիայի հայերը, որոնք անաղարտ պահել են իրենց մայրենի լեզուն և կենցաղը։

XII դարում Սիրիայում ապրող հայության ստվար լինելու մասին վկայում է այն փաստը, որ Հռոմկլայի 1179 թվականի եկեղեցական ժողովին Սիրիայի հայությունը մասնակցել է իր 6 ներկայացուցիչներով։

Հայկական հոսանքը դեպի Սիրիա շարունակվեց հատկապես խաչակիրների շրջանում։ Հայերն իրենց զինվորական ջոկատներով աջակցեցին խաչակիրների մղած կռիվներին՝ Հոմսից մինչև Սիրատի ափերը։ Եվ երբ Անտիոքում և Տրիպոլիում ստեղծվեցին քրիստոնյա իշխանություններ, խաչակիրներին դաշնակցած հայերը հաստատվեցին այդ տերիտորիայի վրա։

Դժվար է մեզ թվարկել XII—XIV դարերի հայկական մեծ և փոքր այն բոլոր գաղթօջախները, որոնց մասին մատենագրության մեջ տեղեկություններ են պահվել, սակայն ընդհանուր պատկերացում տալու համար անհրաժեշտ ենք համարում կարևորներից մի քանիսի վրա կանգ առնել։

Հյուսիսային Միջագետքում ստվարաթիվ հայկական մի գաղթօջախ գտնվել է Ուռհա (Եդեսիա) քաղաքում։ IV դարի հայ պատմիչ Փավստոս Բուզանդը, հիմք ունենալով ժողովրդական մի ավանդություն, աշխատում է ապացուցել, որ իբրև թե Ուռհա քաղաքի հիմնադիրը հայերն են եղել[1]։ Մատթեոս Ուռհայեցու տեղեկություններից երևում է, որ 1079—1080 թվականներին՝ Փոքր Ասիայում առաջացած սովի տարիներին, մեծ թվով հայ գաղթականություն է եկել և բնակություն հաստատել Եդեսիայում և նրա մոտիկ շրջաններում[2], ուր կյանքը, ինչպես երևում է, տանելի է եղել։ Ուռհայում XI դարում մեծ թվով հայ բնակչության գոյության օգտին է խոսում նաև այն իրողությունը, որ Գրիգոր Վկայասեր կաթողիկոսը անհրաժեշտ է համարել Ծոռազատկի մասին 1081 թ. հատուկ գրություն ուղարկել Եդեսիայի քահանաներին և ժողովրդին[3]։

XII դարում Ուռհան ունեցել է իր թեմական առաջնորդները, որոնցից մեկը՝ Անանիա եպիսկոպոսը, 1444 թվականին գերեվարվել և վաճառքի է հանվել Հալեպ քաղաքում[4]։ Տեղեկություններ

[1] Michel le Syrien, III, էջ 198։
[2] Ստեփանոս Ասողիկ, էջ 258։
[3] «Հասկ», 1941 թ., էջ 20։

[1] Փավստոս Բուզանդ, էջ 235։
[2] Ուռհայեցի էջ 217—218։
[3] Տաշյան, Մայր ցուցակ, էջ 658։
[4] Հ. Քյուրդյան, Առաջին և երկրորդ խաչակրություններ ըստ Սյուրիացի անանուն ժամանակագրի մոտ, էջ 27, 36։

կան, ինչպես ասացինք, որ 1179 թվականին Հռոմկլայում հրավիրված ժողովին մասնակցել է Եդեսիայի Ստեփանոս եպիսկոպոսը[1]։

Հայկական մի այլ գաղթավայր հանդիսացել է Եդեսիայի մոտիկ Թլկուրանի գավառը։ XII դարի կեսերին այդ գավառի Թլկուրան բերդաքաղաքի իշխանը եղել է Առյուծը, որի հետ նամակագրություն է ունեցել Ներսես Շնորհալին։ Վերջինիս մեզ հասած նամակներից մեկը վերնագրված է. «Ի խնդրոյ ուրումն աստուածասիրի Առիւծ կոչեցեալ իշխանի Թլկուրան աւանի»[2]։ Ամենայն հավանականությամբ Թլկուրանի հայ բնակչությունը բնաջնջվեց ու ցիր ու ցան եղավ Ջհանշահի կողմից 1452 թվի արշավանքի ժամանակ։ Ժամանակակից հայ գրիչներից մեկը հայտնում է, որ Ջհան շահը իր զորավարներից Թրխան օղլուն ուղարկեց Թլկուրան, որը եկավ և «գերեաց զԹլկուրան և աւերեաց զնա»[3]։

Ռընո Կրոսեն ուսումնասիրելով պատմական սկզբնաղբյուրները, եկել է այն եզրակացության, որ XI դարում Անտիոքի «տիրող տարրը բաղկացած էր հույներից և հայերից»[4]։ XI դարում Անտիոքի մի քանի կուսակալներ հայեր են եղել՝ Աբլնա հայ իշխանը՝ 1059—1060 թթ., Խաչատուր Անեցին՝ 1068—1071 թթ., Վասակ Պահլավունին՝ Գրիգոր Մագիստրոսի որդին՝ 1071—1078 թթ. և ուրիշներ։ Անտիոքում XI դարում, ըստ երևույթին, դավանական հողի վրա մեծ գժտություն է առաջացել. հույները ցանկացել են հայերին պարտադրել հունադավանություն, իսկ հայերը համառությամբ հրաժարվել և հակադրվել են[5]։ Հայերը, սակայն, բնակվել են ո՛չ միայն Անտիոք քաղաքում, այլև այդ դքսության այլևայլ վայրերում։ Հայ գյուղացիությունը տեղավորված է եղել, իհարկե, գյուղական վայրերում։ Հետագայում Անտիոքի հայ գաղթօջախի անհետացումից հետո, Անտիոքի լեռնային վայրերում բնակություն հաստատած հայկական հինգ գյուղեր, իրենց առանձնահատուկ գավառաբարբառով պահել են իրենց գոյությունը. դրանք Սուետիայի Բիթիաս, Հաջի Հաբիբլի, Յողուն Օլուխ, Խըդըրբեկ և Քեբոսի գյուղերն են[6]։

[1] Մ. Չամչյան, Պատմութիւն Հայոց, հ. III, էջ 132։

[2] Ալպոյաճյան, ՊՀԳ, II, էջ 440։

[3] Երուսաղեմի Մատենադարան № 1198 (հմմտ. Ալպոյաճյան, ՊՀԳ, հ. II, էջ 441)։

[4] «Արև» օրաթերթ, 1939 թ., մարտի 3։

[5] Մ. Չամչյան, Պատմութիւն Հայոց, էջ 972։

[6] Ալպոյաճյան, ՊՀԳ, հ. II, էջ 450։

Հայ գաղթօջախներ են եղել Ալեքսանդրետում (Միջերկրական ծովի ափին), Հարիմում (Անտիոքի և Հալեպի միջև), Փայասում (Ճկերի կենտրոն) և այլ վայրերում։ Հայ բնակչության փոքրաթիվ խմբեր ապրել են նաև Հոմսում, Դամասկոսում, Տրիպոլսում, Բեյրութում, Սայդայում, Սուրում և Աքիայում։ Տեղեկություններ կան նաև Հերապոլսի հայկական գաղթօջախի մասին։

Թվարկված գաղթօջախները զգալի չափով նոսրացան, իսկ ոմանք ուղղակի դադարեցին գոյություն ունենալուց XV—XVI դարերում։

Համեմատաբար ավելի նոր ժամանակներում Սիրիայի հայկական գործուն գաղթօջախներից է հանդիսացել Հալեպը, որը հայկական աղբյուրներում հիշվում է նաև Տիբերիա կամ Բերիա անուններով։ Հալեպը, ինչպես հայտնի է, հանդես է եկել XIII դարում՝ Անտիոքի պատմության ասպարեզից դուրս գալուց հետո։ Սակայն նա առևտրական խոշոր կենտրոն և Սիրիայի մայրաքաղաք է դառնում XVI դարի վերջերից և XVII դարի սկզբներին։

Հալեպում հայկական փոքրիկ գաղթօջախ լինելու մասին մենք տեղեկություն ունենք XIV դարի առաջին քառորդից։ 1329 թվականին Հալեպում հայկական ձեռագիր է գրվել, որի գրիչը՝ Ստեփանոս Կրակցին, որոշակի հայտնում է. «Գրեցաւ ի Հալապ, որ է Բերիայ ի թվին ՉՀՀ (1329)»[1]։ Մի այլ ձեռագիր Հալեպում գրվել և ծաղկանկարվել է 1355 թվականին Հովհաննես գրչի կողմից[2]։ Հիմք կա ենթադրելու, որ Հալեպում XIV դարից սկսած հայ գրչության օջախ է գոյություն ունեցել։

Հալեպի հայ համայնքը XV դարի սկզբներում մեծանում է։ Վենետիկի Մխիթարյանների Մատենադարանի 1205 թ. գրված հայկական մի ձեռագրի մեջ պահված հիշատակագրությունից երևում է, որ տվյալ ձեռագիրը «գերության մեջ» է եղել «ի ձեռս տլայզգեաց» Այնթափ քաղաքում և այն 1400 թ. գնել ու «գերութիւն»-ից ազատել է Հալեպի տանուտերի թավաքալը[3]։ Հայ տանուտերի գոյությունը Հալեպում XV դարի սկզբում ապացույց է, որ այնտեղ, այն ժամանակ, բավականին թվով հայեր են ապրել։

XV դարի կեսերից Հալեպի հայերը ունեցել են երկու եկեղեցի՝ Ս. Աստվածածին և Ս. Քառասնից։ Հոգևոր առաջնորդ։ Տեղեկություն կա, որ Հալեպի Հովակիմ արքեպիսկոպոսը 1438 թ. մասնակցել է Ֆլորենցիայում Եվգենիոս պապի հրավիրած եկեղեցա-

[1] «Հանդէս ամսօրեայ», 1935 թ., էջ 442։

[2] Սյուրմեյան, Պատմություն Հալեպի հայոց, էջ 10։

[3] Նույն տեղը, էջ 21։

կան ժողովին։ Հալեպի հայկական թեմի և թեմական առաջնորդների մասին հավաստի տեղեկություններ կան հաջորդ դարում ևս, որոնց վրա հանգամանորեն կանգ է առել Ա. Սյուրմեյանը[1]։

Հալեպի հայ գաղթօջախն ավելի է ստվարանում XVII դարում, երբ դառնում է միջազգային առևտրի խոշոր կենտրոն Մերձավոր Արևելքում, երբ այնտեղ են սկսում հավաքվել եվրոպական մի շարք երկրներից առևտրական և դիվանագիտական ներկայացուցիչներ։ Հայաստանից և հայկական մյուս գաղթավայրերից Հալեպ են գալիս բազմաթիվ հայ վաճառականներ կամ առևտրական տների ներկայացուցիչներ։ Հալեպի հայոց գերեզմանատան տապանաքարերի արձանագրություններից երևում է, որ Հալեպ Նկողները գլխավորապես եղել են Մուշից, Բիթլիսից, Վանից և Ջուղայից[2]։

Հալեպի հայ գաղթօջախի մասին պատմական արժեքավոր տեղեկություն է հաղորդում Սիմեոն Լեհացին իր «Ուղեգրություն»-ում։ Նա Հալեպում է գտնվել 1616 թվականին՝ ուղեկցելով Հովհաննես Այնթապեցի կաթողիկոսին՝ Երուսաղեմից վերադարձի ճանապարհին։

Հալեպում, ըստ նրա տեղեկության, գտնվել է հայկական 300 տուն՝ մեծ մասամբ բաղկացած վաճառականներից, որոնք երթևեկում էին Հնդկաստան, Բաղդադ և Սպահան։ Այդ հայ վաճառականները, ըստ նրա ներկայացման, ջուղայեցիների և համթեցիներ նման «իմաստունք (են), փարթամք և գեղեցկատեսիլ»[3]։

Լեհացին, դժբախտաբար, ոչինչ չի խոսում գաղթավայրի աշխատավոր խավերի վիճակի մասին։ Բայց անդրադառնալով Հալեպի հայ բնակչությանն ամբողջությամբ առած, ցավով նշում է, որ նրանք հայախոս չեն, այլ արաբախոս, «որպէս լեհիք և ստամպոլցիք հայնակ չգիտեն»[4]։

Եղիա Մուշեղյանի «Նամականի»-ում մեզ հասած գրագրությունից երևում է, որ XVIII դարում հայ գաղթօջախը պահպանած է եղել իր գոյությունը։ Հալեպահայ առևտրականները շարունակել են ակտիվ դեր խաղալ միջազգային տարանցիկ առևտրի մեջ։

Հալեպի այդ հայության մեծ մասն ասիմիլյացիայի է ենթարկվել քրիստոնյա արաբների մեջ, և քիչ չեն այնպիսի մարիոնետ արաբներ, որոնք հիշում են, որ իրենց պապը կամ տատը պատմում էր, որ իրենք հայեր են և կամ հայերեն էր աղոթում։

Հայկական մի այլ խոշոր հատված գտնվել է մայրիներով հարուստ Լիբանանի լեռներում։ Այնտեղ XVIII դարում կառուցվել է Զմմառի կոչվող հայ կաթոլիկ վանքը։ Այստեղ պահված մի վավերագրում վկայություն կա այն մասին, որ Զմմառի մի շարք գյուղերում հայեր են հաստատված եղել. այդ գյուղերից հիշվում են Սուգ Միխայել, Ղազիր, Ճունի, Ջղորթա, Տեյր-էլ-Գամար և ուրիշներ։ Որոշ գյուղեր պահել են իրենց հայկական անունները՝ Պեյթ-Պիթար, Պեյթ-Ջուեյն, Պեյթ-Մուրատ, Պեյթ-Գեորգ և այլն[1]։ Ըստ նույն վավերագրի, Լիբանանի բազմամասդր Պեշարճի գյուղում ապրում էր հարյուր տուն հայություն։ Այդ գյուղը անցյալում կոչվել է Պեյթ-էրմենի, որը հետագայում աղավաղվել և դարձել է Պեյթ-էրմելի։ Զմմառի այդ հայկական շրջանում գոյություն է ունեցել երեք վանք, որոնց մեջ գտնվել են հայկական արձանագրություններ։ Այդ վանքերը հետագայում գրավել են մարիոնետները, որոնց ժամանակ և ջնջվել, ոչնչացվել են նաև հայկական արձանագրությունները։

Հայկական փոքրիկ գաղթօջախներ XVII—XVIII դարերում գոյություն են ունեցել նաև Դամասկոսում, Անտիոքում, Լաթաքիայում և Բեյրութում։ Սիմեոն Լեհացին Դամասկոսում հիշում է միայն 5—6 հայկական տուն[2]։

Լիբանանը Օսմանյան տիրապետության օրերին տվել է մի քանի հայ կառավարիչներ, որոնց մեջ հանրածանոթ անուններ են բանաստեղծ էդիպ Իսահակը և բժիշկ Հովհաննես վարդապետը, որոնցով առանձնապես պարծենալու պատճառ չունենք։ Մինչև այժմ Բեյրութում կա Հովհաննես վարդապետի անունով փողոց։

XVIII դարում Լիբանանի և Սիրիայի հայությունը բավականաչափ նոսրանում է։ Այդ հանգամանքը բացատրվում է գաղթականության նոր հոսանքների բացակայությամբ և թուրքերի վարած կեղեքիչ քաղաքականությամբ։

Սիրիայի և Լիբանանի հայ գաղթավայրի պատմության ուշագրավ շրջանը՝ նոր ժամանակաշրջանն է, որի վրա մենք հանգամանորեն կանգ կառնենք հաջորդ հատորում։

---

[1] Սյուրմեյան, Պատմություն Հալեպի հայոց, էջ 36—103։

[2] Ն. Ակինյան, Հայ կյանքը Հալեպի մեջ (տե՛ս «Հանդէս ամսօրեայ», 1933 թ., էջ 306))։

[3] Սիմէոն Լեհացի, Ուղեգրութիւն, էջ 319։

[4] Նույն տեղը, էջ 320։

[1] Ս. Վարժապետյան, Հայերը Լիբանանի մեջ, էջ 267—270։

[2] Սիմեոն Լեհացի, Ուղեգրութիւն, էջ 313։

ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ՀԱՅ ԳԱՂԹՕՋԱԽՆԵՐԸ[1]

Սկզբնաղբյուրները և գրականությունը: Հայ-հնդկական հարաբերությունների և հնդկահայ գաղթօջախների պատմության սկզբնաղբյուրները՝ ըստ պարունակած նյութի և ժամանակաշրջանի, երկու առանձնակի խումբ են կազմում: Առաջին խմբի մեջ մտնում են հայ և օտար պատմիչների ու ժամանակագիրների այն տեղեկությունները, որոնք գլխավորապես վերաբերում են հայ-հնդկական հարաբերություններին և ժամանակագրական տեսակետից ընդգրկում են համեմատաբար ավելի հին շրջանը, իսկ երկրորդը այն աղբյուրներն են, որոնք տեղեկություններ են պարունակում անմիջապես հնդկահայ գաղթօջախների մասին և գրված են մեզ ավելի մոտիկ ժամանակաշրջանում՝ XVII—XVIII դարերում:

Առաջին խմբի աղբյուրների տեղեկությունները, ճիշտ է, մեծ մասամբ ականատեսի վկայություններ չեն և միջանկյալ բնույթ ունեն, բայց նրանց արժեքն ակնառու է, քանի որ կոնկրետ փաստեր են պարունակում երկու ժողովուրդների հնամենի բարեկամական կապերի մասին: Այս խմբի աղբյուրներից կարելի է մատնացույց անել Քսենոֆոնի «Կիրոպեդիա», Զենոբ Գլակի «Պատմութիւն Տարօնոյ», Մովսես Խորենացու «Պատմութիւն Հայոց», Անանիա Շիրակացու «Աշխարհացոյց»-ը, Հեթում պատմիչի «Պատմութիւն Թաթարաց» և ուրիշներ:

Մեծարժեք և հարուստ բովանդակություն ունեն երկրորդ, այսինքն՝ անմիջապես հնդկահայ գաղթօջախների պատմությանը վերաբերող աղբյուրների խումբը: Սրանք գրված են Հնդկաստանի հայ գաղթօջախներում ապրող և կամ Հնդկաստան երթևեկող և նրա հետ ծանոթ ու լավատեղյակ անձնավորության կողմից: Այս խմբի կարևոր սկզբնաղբյուրներից մի քանիսի վրա անհրաժեշտ ենք համարում համառոտակի կանգ առնել:

XVI—XVII դարերի հնդկահայ գաղթօջախների տնտեսական վիճակի, ինչպես և հնդկահայերի առևտրական կապերի և միջազգային շուկաներում նրանց խաղացած դերի մասին անփոխարինելի սկզբնաղբյուր է հանդիսանում Կոստանդին վարժապետի «Առևտրական դասագիրք»-ը: Օգտվելով Հնդկաստանում ապրող և այնտեղ այցելող հայրենակիցների օրագրերից և հաշվեմատյաններից, նա կազմել է փաստական նյութերով հարուստ յուրատեսակ ուղեցույց-դասընթաց իր աշակերտներին առևտրական գործի հետ ծանոթացնելու համար: Այս բնագիրը մեզ է հասել երեք ձեռագիր ընդօրինակությամբ և ամբողջությամբ դեռ չի հրատարակված: Ձեռագրի համեմատական տեքստը ռուսերեն թարգմանությամբ և ծանոթագրություններով պատրաստել ենք հրատարակության:

Հնդկաստանի հայ գաղութների և հայ-հնդկական գործակցության ու համատեղ պայքարի պատմության համար արժեքավոր աղբյուր է Թովմաս Խոջամալյանի «Պատմութիւն Հնդկաց» աշխատությունը: Նավավար և խոշոր վաճառական Խոջամալյանն իր այդ աշխատությունը գրել է Շահ Ալեմի արքայական գրադարանի և դիվանատան պատմական փաստաթղթերի հիման վրա: «Պատմութիւն Հնդկաց»-ի հիմնական մասը նվիրված է Բենգալիայի 1757—1764 թվականների հնդիկ ժողովրդի պայքարին, որին ականատես է եղել մեր հեղինակը: Այս աշխատության երկրորդ մասը հրատարակված է Կալկաթայում, «Ազգասէր»-ի էջերում 1845 թվականին, իսկ երեք տարի հետո՝ վերահրատարակվել է առանձին գրքով:

Հնդկաստանի հայ գաղթօջախների ներքին կյանքի, հնդկահայ հասարակական գործիչների քաղաքական կողմնորոշման և ազատագրական ոգորումների ուսումնասիրության համար բազմաբովանդակ աղբյուրներ են հանդիսանում Հնդկաստանի Մադրաս քաղաքի հայ ազատագրական խմբակի նախաձեռնությամբ հրատարակված «Նոր տետրակ, որ կոչի յորդորակ» (1772 թ.), «Գիրք, անուանեալ որոգայթ փառաց» (1787 թ.), «Տետրակ, որ կոչի նշաւակ» (1773 թ.) և այլն:

[1] Այս գլուխը գրել է ՀՍՍՌ ԳԱ արևելագիտության սեկտորի գիտական աշխատող Ռաֆիկ Աբրահամյանը:

Հնդկահայ գաղթավայրի ներքին կյանքի մասին հարուստ փաստական նյութեր կան հնդկահայ պարբերականներում՝ «Ազդարար» (Մադրաս) 1794—1796, «Շտեմարան» (Կալկաթա) 1822, «Ազգասէր» (Կալկաթա) 1845—1848, «Ազգասէր Արարատեան» (Կալկաթա) 1848—1852, «Ուսումնասէր» 1849—1853, «Եղբայրասէր» (Կալկաթա) 1862—1863, անգլերեն հրատարակվող «Ara» (Կալկաթա) 1893—1895 և «Նոր Ազդարար»-ը (Կալկաթա) 1945—1955։

Հնդկաստանի հայ գաղթօջախների պատմության համար հավաստի սկզբնաղբյուրներ են Երևանի մատենադարանում, Մոսկվայի արտաքին գործերի արխիվում, Նոր Ջուղայի, Վենետիկի և Վիեննայի Մխիթարյանների մատենադարաններում պահվող հազարավոր արխիվային վավերագրերը, որոնց աննշան մասն է հրատարակված։ Հնդկահայ գաղթօջախներին վերաբերող առանձին վավերագրեր հրատարակել են Գ. Աղանյանը «Դիվան»-ում, Հ. Տեր-Հովհաննյանցը՝ «Պատմութիւն Նոր Ջուղայի» աշխատության մեջ, Ս. Վ. Տեր-Ավետիսյանը՝ «Նյութեր Հնդկաստանի հայ գաղութի պատմության համար» (Երևանի պետ. համալսարանի «Գիտ. աշխատություններ»-ի XVI հատորում), «Русско-индийские отношения в XVI в.» փաստաթղթերի ժողովածուում (լույս է տեսել Մոսկվայում 1958 թվականին) և այլն։

Հնդկահայ գաղթօջախների մասին պատմական որոշ նյութեր հրատարակվել են Արևմտյան հնդկական ընկերությունների զեկուցագրերի և օրագրությունների, անգլիական, հոլանդական և ֆրանսիական ճանապարհորդների ուղեգրությունների մեջ և այլն։

Պատմական ուշագրավ աղբյուրներ են հանդիսանում Հնդկաստանում ճանապարհորդած հայ հեղինակների ուղեգրությունները, որոնք արժեքավոր տեղեկություններ են պարունակում Հնդկաստանի հողի վրա հաստատված հայ համայնքների մասին։

Հնդկաստանի հայ գաղթօջախների մասին արժեքավոր տեղեկություններ են հրապարակված Ագոնցի և Ինճիճյանի «Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի» աշխատության առաջին մասի չորրորդ հատորում, Ղ. Ալիշանի «Սիսականում» և Թ. արքեպ. Գուշակյանի «Հնդկահայք»-ում (լույս է տեսել Երուսաղեմում 1941 թվականին), ակադ. Ա. Բ. Կարինյան «Ակնարկներ հայ պարբերական մամուլի պատմության») հ. I և այլ աշխատությունների մեջ։

Հնդկահայ գաղթօջախների ուսումնասիրությամբ ամենից հանգամանորեն զբաղվել է հնդկահայ պատմաբան Մեսրովպ Հակոբ

Սեթյանը։ Նրա «Armenias in India» խորագրով անգլերեն գրված ստվարածավալ աշխատությունը, որը լույս է տեսել Կալկաթայում 1935 թվականին, տասնյակ տարիների քրտնաջան աշխատանքի արդյունք է։ Սեթյանը շրջագայել է Հնդկաստանի այն բոլոր վայրերում, ուր երբեմն ապրելիս են եղել հայերը, մտել է պետական և մասնավոր արխիվներն ու բազմաթիվ նյութեր հավաքել և հրատարակել իր ուսումնասիրությունների մեջ։ Գրել է հնդկահայ գաղթօջախների մասին տասնյակ ուսումնասիրություններ և հաղորդումներ, որոնք տպագրվել են Ասիայի և Եվրոպայի հնագիտական ամսագրերում և պատմագիտական ժողովածուներում։

Բարձր գնահատելով Սեթյանի ուսումնասիրությունները, բայց պետք է ասել, որ այն հեռու է հնդկահայ գաղթօջախների ամբողջական պատմությունը լինելուց. նրանց մեջ գրեթե չի օգտագործված հայկական որևէ աղբյուր կամ ուսումնասիրություն։ Բացի այդ, հեղինակն իր ուսումնասիրության հիմնական շեշտը դրել է առանձին անհատների վրա, իսկ գաղթօջախները իրենց ամբողջությամբ առած, նրա տեսադաշտից դուրս են մնացել։ Սեթյանի մոտ նկատվում են նաև որոշ չափազանցություններ հայերի՝ Հնդկաստանում խաղացած դերի գնահատման հարցում։ Հաճախ նա առանձին հայ գործիչների ներկայացնում է այնպիսի դերով, որ կարծես թե նրանք են տնօրինել Հնդկաստանի տնտեսական և քաղաքական ողջ կյանքը։

Հնդկաստանի հայ գաղթօջախների պատմությանը նվիրված լավագույն ուսումնասիրություններից է պրոֆ. Լեոյի «Հայկական տպագրություն» աշխատության երկրորդ հատորը, որը լույս է տեսել Թբիլիսիում 1902 թվականին։ Այս աշխատության զգալի մասը նվիրված է հնդկահայ գաղթօջախներին և հայ տպագրությանը, հատկապես՝ հայ անդրանիկ պարբերականին՝ «Ազդարար»-ին։

Հնդկաստանի հարավային գաղթօջախներին նվիրված ուշագրավ ուսումնասիրություն է հանդիսանում բանասեր Ս. Տեր-Մ. Գրիգորյանի «Հայք ի հարավային Հնդկաստան» վերնագրով փոքրիկ, բայց արժեքավոր ուսումնասիրությունը, որը տպագրվել է «Բազմավէպ» ամսագրի 1922 թվականի մի քանի համարներում և հետո արտատպվել առանձին գրքույկով։ Հեղինակն առաջին անգամ հրապարակել է մի քանի նոր վավերագրեր Մալաբարի ծովափի հնդկական քաղաքների հայկական գաղթօջախների մասին։

Հնդկահայ առաջադեմ գործիչների արծարծած ազատագրա-

կան շարժումների գաղափարախոսությանն է նվիրված երկու ուսումնասիրություն՝ պրոֆ. Ա. Աբրահամյանի «Մադրասի դերը հայ ժողովրդի ազատագրական պայքարում», որը լույս է տեսել «Էջմիածին» ամսագրի 1947 թվականի 5—6 համարներում և փիլիսոփայական գիտությունների թեկնածու Գ. Հ. Գրիգորյանի «Հայ առաջավոր հասարակական-քաղաքական մտքի պատմությունից» մենագրությունը, որը տպագրվել է առանձին գրքով Երևանում 1957 թվականին:

Վերջին տարիներս հնդկահայ գաղթօջախներով զբաղվող հայագետներից է հանդիսացել Ա. Ալպոյաճյանը: Նա իր «Պատմություն հայ գաղթականության» աշխատության երրորդ հատորում ընդարձակ գլուխ է հատկացրել հնդկահայ համայնքին (էջ 294—428): Ալպոյաճյանի այս աշխատությունը ինչպես փաստական նյութով, այնպես և տեսական հարցադրմամբ առանձին նորություններ չի պարունակում: Հեղինակը հիմնականում օգտվել է Սեթյանից և Լեոյից ու կոնսպեկտավորել նրանց աշխատությունները:

Հնդկահայ պատմության նվիրված նորագույն ուսումնասիրությունների մեջ՝ հարցադրման նոր մոտեցմամբ և պատմական երևույթների խորը վերլուծությամբ, ուշագրավ աշխատություն է հանդիսանում ակադեմիկոս Ա. Կարինյանի «Ակնարկներ հայ պարբերական մամուլի պատմության» աշխատությունը, որի առաջին հատորը ամբողջությամբ նվիրված է հնդկահայ պարբերական մամուլին: Կարինյանը կանգ է առել նաև հնդկահայ գաղթօջախների պատմության վրա և մի շարք հարցերի տվել է նոր ու ինքնատիպ գիտական մեկնաբանություններ:

Հնդկահայ գաղթօջախների պատմության ուսումնասիրությամբ զբաղվել ենք նաև մենք: Այս հարցի շուրջը հրատարակել ենք մի շարք հոդվածներ և հաղորդումներ: Նրանցից կարելի է մատնացույց անել հետևյալները. «Из истории армяно-индийских взаимоотношений» (ՊԲՀ, 1958 թ., 2), «Հայկական աղբյուրները Հնդկաստանի մասին», («Սովետական Հայաստան» ամսագիր, 1957 թ., № 6), «Армянский путеводитель по Индии в XII в.)» «Բանբեր մատենադարանի», 1958 թ., № 4), «Ավետիս Կարբեցու «Պարսկա-հնդկական ուղեգրություն»-ը («Սովետական Հայաստան» ամսագիր, 1950, № 1), «Մադրասի հայրենասեր խմբակի մի ուշագրավ հրատարակության մասին», («Սովետական գրականություն», 1948 թ., № 12), «Հնդկաստանի աշխարհագրությունը հայկական հին և միջնադարյան աղբյուրներում» (Հայկ. ՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր», 1961 թ., № 5), «Հնդիկ ժողովրդի 1760—1763 թթ. ապստամբությունը և հայկական գաղութը» (ՊԲՀ, 1951 թ., № 4) և այլն:

Հայ-հնդկական հնագույն հարաբերությունները: Հնդկաստանը Արևելքի այն երկրներից մեկն է, ուր հայ մարգն առաջին անգամ ոտք է դրել ու հնդիկ ժողովրդի հետ փոխհարաբերությունների մեջ մտել, կարելի է ասել, իր պատմության արշալույսին: Աշխարհագրական իր տեղադրությամբ Հայաստանին վիճակվել է դարեր շարունակ միջնորդի օգտաշատ դերում հանդես գալ Հնդկաստանի և Արևմտյան Եվրոպայի միջև:

Հայ-հնդկական հարաբերությունների մասին հնագույն տեղեկություն մեզ հաղորդում է Քսենոֆոնը (430—355 թթ. մ. թ. ա) իր «Կիրոպեդիա» աշխատության մեջ: Ըստ հույն պատմիչի վկայության, Պարսկաստանի Կյուրոս թագավորը (558—550 մ. թ. ա.) նկատի ունենալով, որ արմենները հաճախ են լինում Հնդկաստանում և ծանոթ են Հնդկաստանի ճանապարհների հետ, խնդրում է նրանց ուղեկցել իր դեսպանին՝ հնդկաց թագավորի մոտ: Արմենները հանձն են առնում և միաժամանակ խոստանում միջնորդել հնդկական թագավորի առաջ՝ առևտրական հարաբերություններ հաստատելու Պարսկաստանի հետ[1]:

Քսենոֆոնի մի այլ տեղեկությունից երևում է, որ հայերը Հնդկաստան էին գնում ոչ միայն առևտուր անելու, այլև հնդկական բանակում ծառայելու համար: Նրանք Հնդկաստանում լավ ընդունելություն էին գտնում և բարձր վարձատրվում որպես քաջ ռազմիկների:

Հայ-հնդկական հարաբերություններն համեմատաբար գործոն բնույթ են ստանում IV դարի երեսնական թվականներին մ. թ. ա., երբ Ալեքսանդր Մակեդոնացին նվաճում է Արևելքը, փշրում արևվելքն արևմուտքից բաժանող սահմանագծերը և նպաստավոր պայմաններ ստեղծում տնտեսական աշխույժ փոխհարաբերությունների համար: Համաշխարհային առևտրի մեջ են ընդգրկվում Պարսկաստանը, Հնդկաստանը և Միջին Ասիան: Այդ ժամանակից էլ սկսած Հայաստանը մտնում է տարանցիկ առևտրի ցանցի մեջ: Հայ առևտրականները սկսում են աշխույժ գործունեություն: «Հայերը, այս ճարպիկ ճանապարհորդ վաճառականները,— գրում է առևտրի պատմության լավագույն ուսումնասիրողներից մեկը,— լաստանավով Տիգրիսի վրայով հնդկական ապրանքները և մետաք-

[1] Xenophont, III, 2, 27—28.

ար հասցնում էին մինչև հյուսիս։ Նրանց քարավանները հասնում էին մինչև Թանայիս (Դոն)»[1]։

Սելևկյան և Արտաշեսյան թագավորությունների ժամանակաշրջանում Հայաստանը փաստորեն վեր է ածվում արևելքն արևմուտքին միացնող մի կամրջի։ Հնդկաստանից դեպի արևմուտք գնացող միջազգային առևտրական մայրուղին անցնում էր Հայաստանի տերիտորիայի վրայով՝ կտրում էր ողջ Փոքր Հայքը, մտնում Արարատյան դաշտավայրը և Պարսկաստանի վրայով գնում դեպի Հնդկաստան[2]։

Առաջին դարից հայ-հնդկական հարաբերությունների մասին ուշագրավ մի տեղեկություն է պահել Ջենոբ Գլակին վերագրվող «Պատմութիւն Տարօնոյ» աշխատության մեջ։ Այստեղ պատմվում է, թե ինչպես երկու հնդիկ իշխաններ՝ Թեմեարեն և Գիսաննեսը, գժտվելով իրենց թագավորի հետ, իրենց ցեղախմբերով գալիս և բնակություն են հաստատում Հայաստանի Տարոն գավառում։ (Այդ դեպքը, ըստ պատմիչի տեղեկության, տեղի է ունեցել Հայոց Վաղարշակ թագավորի ժամանակ, այսինքն՝ մեր թվականության II դարի առաջին կիսում)։

Ըստ նույն պատմիչի տեղեկության, Հայաստանում հաստատված հնդիկ համայնքը ավաններ է կառուցել և վայելել է հայ արքունիքի հովանավորությունը։ Մեր թվականի IV դարի սկզբում քրիստոնեությունը Հայաստանում պաշտոնական ճանաչվելուց հետո, հնդկական համայնքները, հայ հեթանոսների հետ միասին, քրմապետ Մամգունի ղեկավարությամբ, կատաղի դիմադրություն են ցույց տվել Տրդատի պետական բանակին[3]։ Հետագայում ընդունելով քրիստոնեությունը, հնդիկները ձուլվում են հայ ժողովրդի էթնիկական կազմի մեջ։

Հայ-հնդկական առևտրական հարաբերությունների մասին միջնակյալ տեղեկություններ է հաղորդում Ագաթանգեղոսը։ Պրճնասեր հայ թագավորները, գրում է նա, Հնդկաստանից բերված թանկագին քարերով են զարդարում իրենց թագավորական խույրերը՝ հաշվի չառնելով, թե ինչ տաժանալից աշխատանքով են ձեռք բերվում նրանք և ինչ հեռավոր ճանապարհներով են տեղ հասնում[4]։

Փավստոս Բուզանդի և Մովսես Կաղանկատվացու վկայությունների երևում է, որ հայ թագավորները սիրելիս են եղել ոչ միայն իրենց թագերը զարդարել Հնդկաստանից բերված թանկագին քարերով, այլև իրենց պալատներում կառուցել են հնդկական ոճով հատուկ դահլիճներ[1]։

Հայաստանի հնագույն մի քանի քաղաքներ, հարյուրամյակներ շարունակ, ծառայել են իբրև Հնդկաստանի հետ կատարվող ապրանքափոխանակության կենտրոններ։ Երկար ժամանակ նման կենտրոններ են հանդիսացել Արտաշատը և Դվինը։ VII դարում Դվինից դուրս էին գալիս առևտրական հինգ խոշոր մայրուղիներ, որոնցից երկուսը գնում էին դեպի Հնդկաստան և Չինաստան[2]։

Տնտեսական այս աշխույժ հարաբերություններին երկուստեք մասնակցում էին ինչպես հայ, այնպես էլ հնդիկ վաճառականներ։ Ղ. Ալիշանը օգտվելով մեզ անծանոթ ֆրանսիական աղբյուրից, բերում է հետաքրքիր մի տեղեկություն այն մասին, որ չինացի հռչակավոր ճանապարհորդ Հի-Ու-են (Սյուան Ցզին—Ռ. Ա.) 620 թ. հյուսիսային Հնդկաստանում հանդիպել է հայ վաճառականների[3] և գործարք կատարել նրանց հետ։

Հնդկաստանից Հայաստան էին ներմուծվում գլխավորապես թանկագին քարեր, բազմատեսակ դեղանյութեր, որոնց անունների հիշատակություններին հաճախ կարելի է հանդիպել հայկական հին և միջնադարյան բժշկարաններում։ Հայերը Հնդկաստան էին արտահանում հատկապես գունավոր կաշիներ և զանազան ներկեր։ Ամբողջ Հնդկաստանում մեծ հռչակ էին վայելում հայկական մուգ կարմիր և որդան կարմիր ներկերը։

Հայ-հնդկական առևտրական հարաբերությունները ավելի աշխույժ բնույթ են ստանում մեր թվարկության V—VII դարերում։ VI դարի հույն հեղինակ Պրոկոպիոսը խոսելով Հայաստանի Դվին քաղաքի մասին որպես վաճառաշահ կենտրոնի, տարբեր երկրներից այստեղ առևտրի եկող վաճառականներից առաջին հերթին հիշում է հնդիկներին[4]։

Թե որքան մեծ նշանակություն է տրվել հայ գրականության մեջ Հնդկաստանին, կարելի է տեսնել հայ ականավոր գիտնական Անանիա Շիրակացու «Աշխարհացոյց»-ում, ուր ընդարձակ տեղ է տրված Հնդկաստանի աշխարհագրությանը։ Ըստ նրա նկարագրության, Հնդկաստանը սահմանակից է Պարսկաստանին և Չինաստա-

[1] W. Heyd, Histoire du Commerce... էջ 52—53։
[2] Я. А. Манандян, О торговле и городах Армении, էջ 23—25։
[3] Հովհան Մամիկոնյան, Պատմութիւն Տարօնոյ, էջ 107—112։
[4] Ագաթանգեղոս, Պատմութիւն Հայոց, էջ 6—7։

[1] Մովսես Կաղանկատուացի, Պատմութիւն Հայոց, էջ 257։
[2] Ալիշան, Սիսական, էջ 434։
[3] Նույն տեղում, էջ 434։
[4] Прокопий Кессарийский, История войн римлян с персами, էջ 181—182։

նին։ Գանգես գետով նա բաժանվում է երկու մասի՝ արևելյան Հնդկաստան և արևմտյան Հնդկաստան։ Հնդկաստանի արևմուտքում, Ինդոսի հովտում, ապրում են 58, իսկ արևելյան մասում՝ 72 ազգեր։ Այնուհետև Շիրակացին նկարագրում է Հնդկաստանի էկզոտիկան, նրա հարուստ բնությունը և կենդանական աշխարհը։ Նա նշում է Հնդկաստանի մեծ հարստությունը և թվարկում է այն ապրանքները, որոնք կարելի է գնել այնտեղ. «լինի անդ ոսկի, և արծաթ, և պղինձ, և անագ, և մարգարիտ, և ակն ամենագոհար։ Լինի պղպեղ... բազում դեղք բժշկականք»[1]։ Վերջում նա թվարկում է Հնդկաստանից գնվող գոհարների զանազան տեսակները և նրանց արժեքը։

Հայ-հնդկական հարաբերությունների պատմության տեսանկյունով ուշագրավ է VIII դարում Թովմա Գան անունով մի հայ առևտրականի այցելությունը Հնդկաստան, որի շուրջը բավականին գրականություն է ստեղծվել։ 1956 թվականին Դեյլիում հնդկական դիվանագիտական մի պարբերականում հատուկ հաղորդագրություն տպագրվեց այն մասին, որ VIII դարում Թովմաս Գանա անունով մի հայ վաճառական, ցամաքային ճանապարհով հասել է Հնդկաստանի Մալաբարի ծովափը։ Նա կարճ ժամանակում ստեղծել է բարեկամների լայն շրջանակ հնդիկների մեջ։ Շնորհիվ իր ունեցած կապերի, նրան հաջողվել է Գոլկոնդի կառավարիչ Շիո Ռամից պատանալ ազատ առևտրի իրավունք Մալաբարի ծովափնյա շրջաններում[2]։

Եթե հավատալու լինենք վերև հիշված տեղեկությանը, իսկ չհավատալու ոչ մի հիմք չունենք, ապա կարելի է ենթադրել, որ Հնդկաստանի Մալաբարի ծովափին ստեղծված է եղել եթե ոչ առաջին, ապա հնագույն գաղթականություններից մեկը, որի շուրջը հետագայում ստեղծվում է հայկական ամենից ծաղկուն գաղթօջախը՝ Մադրասի հայ գաղթօջախը։

Հայ-հնդկական առևտրական սերտ հարաբերությունը շարունակվել է հետագա դարերում ևս։ Հայտնի է, օրինակ, որ Սմբատ Բագրատունին Անիի հուշակավոր Մայր եկեղեցու համար Հնդկաստանում պատրաստել է տվել և բերել մի բյուրեղյա ջահ[3]։

Հայ-հնդկական հարաբերությունների մասին մեծարժեք հուշարձան է յոթ ընդօրինակություններով մեզ հասած աշխարհագրական մի ուղեգրություն՝ «Անուանք քաղաքաց Հնդկաց և Պարսից» վերնագրով։ Այս բնագրի հնագույն ձեռագրի ժամանակը XIII դարից է[1]։

Ուղեգրության հեղինակը իր նկարագրությունը սկսել է Հընդկաստանի հյուսիսից՝ Պանհան, Պուրշայուր, Լահոր, ապա իջել Քաշմիր, Բենգալիա, Մոլթան, Նահրաուալա, Մալաբար և վերջացրել Հնդկաստանի ամենից հարավային կետի՝ Ոսկե հովտի և Ցեյլոն կղզու նկարագրությամբ։ Նա մանրամասն նշել է քաղաքները տանող ուղիները, նրանց հեռավորությունն իրարից, քաղաքների որ վարչական բաժանման մեջ գտնվելը, նրա բնակիչները և գործածական լեզուն։ Մեր հեղինակը տեղ-տեղ տվել է նաև հնդիկ այս կամ այն հատվածի կենցաղային սովորությունների համառոտ նկարագրությունը։

Հետագա դարերում Հնդկաստանի և հնդիկ ժողովրդի մասին հայ մատենագիրներից, համեմատաբար, ավելի ընդարձակ է խոսում Հեթում պատմիչը։ Նա աշխատության մի գլուխն ամբողջությամբ նվիրել է Հնդկաստանի նկարագրությանը։ Խոսում է Հնդկաստանի տեղադրության, հնդիկ ժողովրդի կենցաղի, հավատալիքների, գյուղատնտեսության և արդյունագործության մասին և այլն։

Հայտնի է, որ Հեթումը Հնդկաստանում չի եղել, մնում է ենթադրել, որ նա օգտվել է իր արքայական գրադարանի հայկական ձեռագրերից կամ Կիլիկիայի հայ վաճառականների պատմածներից։

Հայերի հաճախակի այցելությունները Հնդկաստան, բնականաբար, հնարավորություն էին տալիս նրանց մոտիկից ծանոթանալու Հնդկաստանի հետ, նրա աշխատավոր և բարի ժողովրդի, նրա սոցիալ-տնտեսական և քաղաքական կյանքի հետ և այլն։ Սկսած XVI դարից, Հնդկաստանի զանազան վայրերում, հատկապես ծովափնյա քաղաքներում, սկսում են հանդես գալ առաջին հայ գաղթօջախները։

Հնդկահայ առաջին համայնքները մեծ չեն եղել՝ նրանք բաղկացած են եղել մի քանի մարդուց, մի քանի ընտանիքներից, որոնց շուրջը հետագայում կամաց-կամաց սկսում են հավաքվել իրենց հայրենակիցները։

Հնդկաստանում հաստատված առաջին հայերը եղել են առևտրականներ և պետական ու զինվորական ծառայության մտած

---

1 Անանիա Շիրակացու մատենագրությունը, էջ 353։

2 «Ջարթոնք» օրաթերթ, 1956 թ., № 133։

3 Մատթէոս Ուռհայեցի, ժամանակագրութիւն, էջ 149։

1 Տես Р. А. Абраамян, Армянский путеводитель по Индии в XII веке («Բանբեր Մատենադարանի», № 4, էջ 317—328)։

մարդիկ։ Հետագայում, երբ հայ ժողովրդի կյանքում տեղի են ունենում ցնցող այնպիսի իրադարձություններ, երբ հայ մարդու և իր ընտանիքի ֆիզիկական գոյությունը դրվում է հարցականի տակ, ապա բազմաթիվ հայեր սկսում են փնտրել խաղաղ մի անկյուն։ Գանգեսի սրբազան երկիրն է դառնում այն բնակավայրերից մեկը, որը փրկության հանգրվան է դառնում հազարավոր հայերի համար։

§31 Հայ գաղթօջախների հիմնադրումը

Հայկական առաջին գաղթօջախները Հնդկաստանում փաստորեն սկսում են երևան գալ XVI դարում՝ մեծ մողոլական թագավորության շրջանում։ Հայ բնակչությունը Հնդկաստան է գալիս գլխավորապես Պարսկաստանի հայկական գաղթօջախներից երկու ճանապարհով՝ ցամաքային և ծովային։ Ծովային ճանապարհը՝ այդ արևելքը արևմուտքին կապող, հայ շատաշրջիկ առևտրականներին ծանոթ և տրորված միակ մայրուղին էր Վասկո դե Գամայի Հնդկաստանի ծովային ուղին հայտնաբերելուց առաջ։ Առևտրական այդ մայրուղին Հնդկաստան էր մտնում Քաշմիրի վրայով և Գանգեսի հովտով իջնում դեպի հարավ՝ դեպի Դաքքա։ Այս ուղու մի ուրիշ ճյուղը բաժանվում էր Լահորից, գնում դեպի հարավ-արևմուտք՝ Մոլթանի ուղղությամբ և Հինդոս գետի հովտով իջնում դեպի ավելի հարավ։ Իսկ ծովային ճանապարհով՝ հայ գաղթականությունը նավ էր նստում Բասրայում և կամ Բանդար Աբասում և իջնում Սուրաթ կամ Ջինո Փաթան նավահանգստներում, այնտեղից՝ ցրվում Հնդկաստանի տարբեր քաղաքները։

Հնդկահայ առաջին գաղթօջախներն այնքան էլ մեծ չեն եղել. նրանք կազմված են եղել փոքրաթիվ հայ վաճառականներից, որոնք առևտրի էին գալիս Հնդկաստան և հաջող գործունեության պարագային հաստատվում այս կամ այն քաղաքում։ Կոստանդին վարժապետի Նոր Ջուղայի հայկական դպրոցի աշակերտների համար կազմած առևտրական ձեռնարկի մեջ Հնդկաստանում մատնացույց են արված հետևյալ առևտրական կենտրոնները, որոնք, անշուշտ, ծանոթ էին հայ խոջաներին և ուր բնակություն են հաստատել հնդկահայերը. «Որ յարևելից գնամք ի յարևմուտս, կալցուք յառաջ Մլթան, 2. Լահոր, 3. Սարհնդն, 4. Ջահանապատ, 5. Աքպարապ, 6. Խուռջայ և Հնդուան, 7. Բանկալայ, 8. Բիար-Փաթնայ, 9. Բնարիս, 10. Մով, 11. Ղազիուր, 12. Ջալալիուր, 13. Շահզադափուր, 14. Խէրապատ, 15. Դարեապատ, 16. Դովլաթապատ, 17. Սրընջ..., 18. Բերանփուրն, 19. Սուրաթն, 20. Գուջրաթ, 21. Օվ-

ռանկապատ, 22. Շագառն, որ էստոնք տախլ ի Դաքանայ, 23. Հեյտարապատ, 24. Մուշլի պանտարն, 25. Փեկու...»[1]։

Հնդկահայ գաղթօջախների ստեղծմանը և բարգավաճմանը զգալի չափով նպաստել է մոնղոլ կայսրության ազատամիտ գահակալներից մեկի՝ Աքբար թագավորի (1566—1605) քաղաքականությունը. ցանկանալով զարգացնել երկրի արհեստագործությունը և ծավալել առևտուրը, նա իր թագավորության սահմաններում ելումուտքի ազատ իրավունք է տալիս ձեռներեց հայ վաճառականներին։ Մողոլ թագավորի հրամանով հայ առևտրականներն արտոնված են եղել առանց մաքսի ցանկացած ապրանքն արտահանել և ներմուծել, մտնել կայսրության այնպիսի շրջաններ, ուր արգելված է եղել օտարականների մուտքը, իրավունք ստանալ ապրանքները փոխադրել առաջին հերթին և այլն։

Հնդկահայ հնագույն և բնակչաշատ գաղթօջախներից մեկը գտնվել է Ագրայում, որը կոչվել է Աքբարաբատ։ Աքբարը Ագրայում հաստատված հայ բնակչությանը հողամաս է հատկացրել և ստեղծել անհրաժեշտ բոլոր պայմանները նրանց անկաշկանդ գործունեության համար։ Թե ինչպիսի սիրալիրություն է ցուցաբերել Աքբարը հայերի նկատմամբ, կարելի է դատել այն փաստից, որ Ագրայում ապրող հայերի համար պետական ծախսերով եկեղեցի է կառուցվել 1562 թվականին[2]։

Եկեղեցու կառուցումը, անշուշտ, ապացույց է մնայուն հայ համայնքի գոյության Ագրայում, այլապես Աքբարի այս ձեռնարկն աննպատակ կլիներ։

Աքբարն այնքան մեծ վստահություն է ունեցել հնդկահայերի նկատմամբ, որ իր պետության մի քանի կարևոր պաշտոններ վստահել է նրանց։ Հայտնի է, որ Աքբարի պետության ~~բարձրագույն~~ դատավորը հայ է եղել՝ Միր Ադըլը, արքունիքի պալատական բժշկուհին Հուլիանան՝ հայուհի էր, արտաքին գործերի նախարարության մեջ աշխատող թարգմանիչները և դիվանագետները հայեր են եղել և այլն։ Ի դեպ, Աքբարի թագուհիներից մեկը ևս հայուհի է եղել՝ Մարիամ Զագանի Բեկում անունով[3]։

Ագրայի XVI դարի հայ համայնքի բարգավաճ վիճակի մասին

---

[1] ՀՊՄ, ձեռ. № 5994, թ. 3ա—3բ։

[2] Mesrovb Seth. An Armenian Grandee of the Mogul Court (Տե՛ս նույն հեղինակի ուսումնասիրությունների ժողովածուն «Armenians in India from the earliest times to the present day», Calcutta, 1935, էջ 2։ Այսուհետև մեջբերում ենք անելու կրճատ «Al» ձևով։

[3] Լեո, Հայ տոպագրության պատմություն, հ. II, էջ 451։

հետաքրքիր փաստական տվյալներ է հաղորդում Պորտուգալիայի ծովագնաց Խերոմ Կասվեն, որն անձամբ եղել է Ագրայում։

Ագրայի հայ գաղթօջախի 1624—1643 թվականների պատմության համար հետաքրքիր սկզբնաղբյուր է հանդիսանում Մոնրիկեի ուղեգրությունը։ Նրա վկայության համաձայն, այս շրջանում Ագրայի հայկական համայնքի կյանքը հասել էր իր զարգացման գագաթնակետին։ Նա հատկապես նշում է Ագրայի հայկական քարվանսարայի մասին, ուր հայերը քննարկում էին իրենց համայնքի ներքին կյանքին վերաբերող հարցերը և կնքում գործարքներ և պայմանագրեր հայերի և եվրոպացիների միջև։ Ըստ որում, ըստ ուղեգրի տեղեկության, այս քարվանսարան հայտնի էր ոչ միայն Հնդկաստանում, այլև Եվրոպայում։ Ագրա եկած բազմաթիվ օտարականներ գործարար խորհուրդներ էին ստանում այնտեղ։

Ագրայի հայ համայնքն այնքան մեծ հեղինակություն ուներ, որ նրան էին այցելում հնդիկ արքաները։ XVII դարի սկզբներին Հնդկաստան այցելած ճանապարհորդ Տավերնիեն իր ուղեգրության մեջ նշել է նման մի այցելության մասին Շահ Ջհանի կողմից։

Ագրայի հայ գաղթօջախի մարդաշատության և հարստության մասին է խոսում այն փաստը, որ XVII դարի սկզբում էջմիածինը Զաքարիա անունով մի վարդապետի հատուկ նվիրակ է ուղարկել Ագրա։

Ագրայի հայկական գաղթօջախն ավելի է մեծանում Շահ Աբբասի բռնագաղթից հետո, մանավանդ՝ XVIII դարում։ Հայաստանից տեղահան արված բավականին մեծ թվով գաղթականներ են գալիս և բնակություն հաստատում Հնդկաստանի գաղթօջախներում, այդ թվում նաև՝ Ագրայում։

Հնդկաստանի մողոլ կայսրության շրջանում փոքրիկ գաղթօջախ է հիմնված եղել Մուշիդաբադում՝ Բենգալիայի մողոլ փոխարքաների մայրաքաղաքում։ Այստեղ հայ գաղթօջախը տեղավորված է եղել քաղաքի Սեյիդաբադ կոչվող արվարձանում։ Ըստ տեղեկությունների, մողոլ կայսր Աուրենգզեբը (1658—1707), հետևելով Աքբարի քաղաքականությանը, աշխատել է խրախուսել հայ բնակչության ներգաղթը Հնդկաստան։ 1665 թվականին Սեյիդաբադում հողամաս է հատկացրել հայերին շենքեր կառուցելու համար և մի շարք արտոնություններ շնորհել նրանց։ Հետագայում Հնդկաստանի տիրակալներից մեկը ևս կայսերական հրովարտակով նորից հաստատել է իր նախորդների կողմից հնդկահայերին տված ա-

ռանձնաշնորհումները և միաժամանակ արտոնել՝ մահացած հայ մարդկանց շարժական ու անշարժ գույքի իրավասությունը հայերին պատկանելու մասին և առևտրականներից գանձվող 5% մաքսը իջեցրել է 3%[1]։

Հայերին Սեյիդաբադում տրված այդ արտոնության մասին վկայություն ունի XVIII դարի երկրորդ կեսում Հնդկաստանում Արևելյան ընկերության վարչության մեջ աշխատող և լավագիտակ անգլիացիներից մեկը՝ Բոլտսը։ Նա այդ առթիվ գրում է. «Հայերը, որոնք մեծ հաջողություն են ունեցել Հնդկաստանում, մնայուն գաղութներ են ունեցել նաև Բենգալիայում, մասնավորապես՝ Սեյիդաբադում։ Իրենց վաճառականությունը նույնպես հաստատված է եղել մողոլական ֆերմանով, որով իրենց երկու գլխավոր ապրանքների վրա՝ մանուֆակտուրայի և հում մետաքսի, մաքս է որոշված եղել հարյուրից 3,5 տոկոսը»[2]։

Հնդկահայ գաղթօջախների մյուս խումբը ստեղծվել է XVII—XVIII դարերում ծովային ճանապարհով՝ Պարսկաստանից Հնդկաստան եկած հայ գաղթականներից՝ գլխավորապես նավահանգստային քաղաքներում։ Ըստ որում, հայ բնակչության այս գաղթվածական բնույթ չի ունեցել, այլ շարունակվել է անընդմեջ, որքան ծանրացել է հայ բնակչության դրությունը Պարսկաստանի գաղթօջախներում, այնքան ավելի է ուժեղացել պարսկահայերի գաղթը դեպի Հնդկաստան։

Ծովային ճանապարհի վրա հայկական գաղթականության առաջին հանգրվանն է հանդիսացել Սուրաթ քաղաքը, որը Հնդկաստանի ամենից նշանավոր նավահանգիստն է հանդիսացել Հնդկաստանի թերակղզու արևելյան ափին՝ Բասրայից և կամ Բենդեր Աբբասից եկող առևտրական նավերի համար։

Հայ բնակչության Սուրաթում գտնվելու մասին տեղեկություններ ունենք XVI դարից։ Գտնվել է այնտեղ հայերեն արձանագրություն ունեցող տապանաքար 1579 թվականից[3]։ Հայկական գաղթօջախն այդ ժամանակ, իհարկե, փոքր է եղել։ Սուրաթում մնայուն և բազմամարդ գաղթօջախը փաստորեն ստեղծվում է XVII դարում։ Տեղեկություններ կան, որ Սուրաթի հայկական գաղթօջախն այդ ժամանակ ունեցել է երկու եկեղեցի։

XVII դարում Սուրաթում հայ մնայուն գաղթօջախի մասին է վկայում 1678 թվականին գրված հայկական մի ձեռագիր, որն

[1] «Ազգասէր», 1846, № 40։
[2] M. Seth, Armenians at Saidabad («AI», էջ 325)։
[3] M. Seth, Armenians at Surat («AI», էջ 225)։

այժմ Լենինգրադի Սալտիկով-Շչեդրինի անվան գրադարանի սեփականությունն է։ Ձեռագիրը գրված է Աստվածատուրի որդի Գրիգորի կողմից «...ի թագաւորութեանն Հնդկաց երկրին Օվրանկ շահին։ Արդ՝ գրվեցաւ տետրակս երկիրն Հնդկաց և քաղաքն Սուրաթ բանդար կոչեցեալ...»[1]։

Սուրաթի գաղթօջախի ամենից բարգավաճ շրջանն է հանդիսացել XVIII դարի երկրորդ կեսը։ Սուրաթի հայ համայնքի բոլոր սոցիալական խավերի մեջ գործոն դեր են ունեցել հայ վաճառականները, որոնք սեփական օվկիանոսային նավեր են ունեցել և խոշոր դեր կատարել տարանցիկ առևտրի բնագավառում[2]։

Սուրաթում ապրելիս են եղել մեծ թվով հայ ձեռնարկատերեր, գլխավորապես կերպասի գործվածքով զբաղվող անձինք, որոնք խոջաներից վարկ ստանալով, կազմակերպել են բամբակի հայթայթումը, նրանից թել մանելը, կտոր գործելը և տրամադրելը խոջաներին՝ շուկա հանելու համար[3]։

Հնդկաստանի արևելյան նավահանգիստներից աչքի ընկնող գաղթօջախ է հանդիսացել Մադրասը, որը խոշոր դեր է կատարել հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժումների գաղափարախոսության մշակման և արծարծման ուղղությամբ։

Մադրասը՝ 1504 թվականից սկսած, առևտրական կայան է հանդիսացել պորտուգալացիների համար, իսկ 1620 թվականին այն գրավել են անգլիացիները և դարձրել իրենց գաղութը։ Քաղաքի նոր տիրակալները Ս. Գեորգ բերդի շրջակայքում հիմնել են Մադրասի նոր քաղաքամասը, ուր տեղափոխված է եղել հայկական գաղթօջախը։

Հայերը Մադրասի հետ, ինչպես ասել ենք, ծանոթ են եղել VIII դարից, երբ այստեղ է եկել և քարոզչությամբ զբաղվել Թովմա Գանա անունով մի հայ վաճառական։ (Բանասերներից ոմանք «Թովմա Գանա» անունն ուղում են կարդալ «Թովմա քահանա» ձևով)։ Հայ վաճառականության Մադրասում (Չինի Փաթնանում) գտնվելու մասին տեղեկություններ կան XVI դարից։ Սակայն նրանք անհատ անձնավորություններ են հանդիսացել և Հնդկաստան են եկել ո՛չ թե մշտապես այնտեղ մնալու, այլ առևտրական գործարքներ կատարելու նպատակով, որը վերջացնելուց հետո, նորից ետ են վերադարձել։

[1] Լենինգրադի Սալտիկով-Շչեդրինի գրադարանի ձեռագիր ժողովածու, հայկական ֆոնդ, ձեռ. № 36։

[2] M. Seth, The last days of the armenians at Surat («AI», էջ 267)։

[3] Նոյն, Հայկական տպագրություն, հ. II, էջ 451։

Մադրասի գաղթօջախը որպես մնայուն, հաստատուն համայնք, հիմնվել է XVI դարի կեսերից։ Դրա անհերքելի ապացույցը՝ Մադրասից ոչ շատ հեռու գտնվող Ս. Թովմայի բլրի վրա հայկական եկեղեցու կառուցումն է։ Հայկական հնագույն այդ կոթողը հնդկական հողի վրա, ճիշտ է, չի մնացել, բայց պահպանվել է եկեղեցու կառուցման 1547 թվականի արձանագրությունը, որը միակ խոսուն ապացույցն է հայկական անհետացած գաղթօջախի[1]։

Հնդկաստանի պատմության հեղինակավոր ֆրանսիացի մասնագետներից մեկը՝ Ֆրանսուա Մարտինը, Սեն Թովմայի հայկական գաղթօջախի մասին խոսելիս գրում է. «Հավաստյոք հաստատված է, որ Սեն Թոմայի ի բնե սկզբնավորությունն շատ մը հայերի գործ էր, որք այստեղ յուրյանց բնակություններն հաստատած էին»[2]։

1517 թվականի ճանապարհորդ Լովյեն վկայում է, որ պորտուգալական ճանապարհորդներ Դիագո և Բաստեաս Ֆերենդասները Պուլեկատիում՝ (17 մղոն Մալաբարից հյուսիս գտնվող ավան) հայ համայնքից են տեղեկություններ ստանում Մադրասի շրջապատի մասին[3]։

Ֆրանսիական ընկերության աչքի ընկնող դեմքերից մեկը՝ Ֆրանսուա Մարտենը, որ երկար ժամանակ ապրել է Մալաբարում և ուսումնասիրել նրա շրջապատը, գրում է. «Հայերը Ս. Թովմայում են նրա հիմնադրման ժամանակից սկսած և զբաղվում են առևտրով... պորտուգալացիների գալուց հետո, հայերը եկվորների հետ միասին, կառուցեցին հոյակապ այս քաղաքը... Հավատացնում եմ, որ այստեղ կան հայ ընտանիքներ, որոնց ունեցվածքի արժեքը հասնում է միլիոններին»։

Այս շրջանում հնդկահայ համայնքի աչքի ընկնող դեմքերից է նավավար Մարգար Ավանչեցը (Ավանջանը), որը բարեկամական կապերի մեջ էր և մեծ հեղինակություն էր վայելում հոլանդացիների մոտ։ Այս նշանավոր նավավարը օգտվելով իր կապերից, Գոլկոնդի տիրակալներից կարողացավ ստանալ Մուչիլբանդարում հայկական առևտրական ֆակտորիա կառուցելու իրավունք։

Մեսրոպ Սեթին հայտնի է եղել 1790 թվականին ընդօրինակված մի ձեռագիր, որի գրիչը՝ Հովհաննես Սարգիսը, իր հիշատա-

[1] Գուշակյան, Հնդկահայք, էջ 44։

[2] Ս. Գրիգորյան, Հայք ի հարավային Հնդկաստան, Վենետիկ, 1922, էջ 34։

[3] H. D. Lovie, Vestiges of old Madras, vol. I, էջ 285:

կարանում հայտնել է, որ հայ համայնքը Մադրասում մասսայաբար սկսել է հաստատվել 1666 թվականին[1]։

XVII դարի վերջին քաղորդում Մադրասում հայկական մնայուն գաղթօջախի գոյության մասին է վկայում 1688 թվականին այնտեղ գրված մի ձեռագիր՝ «Ոսկեփորիկ», որն այժմ Բրիտանական թանգարանի սեփականությունն է։ Ձեռագրի հիշատակարանում Մադրասը հիշված է իր հին՝ Չինա Փաթնա անունով. «Արդ՝ գրեցաւ ի փոքր քաղաքս, որ կոչի Չինի Փաթան»[2]։

Ուշագրավ է այն, որ նշված հիշատակարանում ևս Ղուկաս Ըռադը հիշված է որպես իր ժամանակի քաղաքական ականավոր անձնավորություն. «Ես է իշխող, և իշխան քրիստոսասէր զպարոն Ղոգազն, և հռչակ մեծամեծաց, և խոսակից թագաւորաց և ի պարծանս քրիստոսասիրաց»[3]։

Մադրասում «Ոսկեփորիկ»-ից ավելի հին հայկական հուշարձաններից մեկը՝ Խոջա Մարկոսի տապանաքարի արձանագրությունն է 1663 թվականից, որը հրատարակել է Մեսրոպ Սեթը»[4]։

Մադրասի հայ գաղթօջախն ավելի է մեծացել և աչքի ընկնող դեր կատարել հատկապես XVIII դարում։ Նա տեղավորված է եղել նոր քաղաքի կենտրոնական մասում, նրա գլխավոր մայրուղու վրա և կոչվել է «Armenian Street» («Հայկական փողոց»)։ (Փողոցն իր այդ անունը պահել է մինչև մեր օրերը)։

Երբ գաղութային շահագործումը դարձավ անտանելի, տեղացիներն ապստամբվեցին գաղութարարների դեմ, ապստամբները Աբդուլլա Կուտաբի զորքերի օգնությամբ պորտուգալացիներին դուրս շպրտեցին այս շրջաններից։ Գաղութային ավերածություններից տուժած երկրի վիճակը բարելավելու համար հարկավոր էր շատ ձեռներեց և գործունյա մեկը։ Տեղի հնդիկ և հայ բնակչությունը 1662 թվականին երկրի կառավարիչ է ընտրում հայազգի Մարկոս Ռագազին։ Թե ինչքան է կառավարում հայ կառավարիչը Մալաբարը, չգիտենք, հայտնի է միայն որ 1698 թվականին նա դեռ գտնվում էր հնդկական այս մեծ մարզի կառավարչի պաշտոնում։ Այդ մասին հաղորդվում է հենց Մալաբարում գրված հայկական մի ձեռագիր հիշատակարանում, ուր հայազգի կառավարիչը որպես

[1] M. Seth, Armenians at Madras («AI», էջ 579)։

[2] F. C. Conybeare, A catalogue of the Armenian manuscripts in the British Museum, էջ 218։

[3] Նույն տեղը։

[4] M. Seth, «AI», էջ 687։

«խոսակից թագաւորաց և հպարտութիւն քրիստոնէից» հիշում է հիշատակարանի հայ հեղինակը։

Բնականաբար, հասկանալի է, հիշյալ շրջանում հայկական գաղթավայրը պետք է որ բավականին ստվար լիներ, մեծ սեր և հարգանք վայելեր ո՛չ միայն տեղի իշխանների, այլև տեղական բնակչության մեջ, որ կարելի լիներ հայ մարդուն վստահել մի ամբողջ երկրամասի տնտեսական և քաղաքական կառավարումը։

Այս գաղթօջախի մարդաշատության և բարեկեցության մասին են խոսում իրարից ոչ հեռու կառուցված հայկական երեք եկեղեցիները՝ 1707, 1712 և 1729 թթ.։

Ս. Թովմայի եկեղեցու պատերին եղած հայերեն արձանագրությունները վկայում են այն մասին, որ հայերը երախտապարտ չեն մնացել դեպի տեղի հնդիկ բնակչությունը։

Մադրասի տնտեսական վերելքից հետո Մալաբարի գրեթե բոլոր շրջաններում հայկական գաղթօջախները սկսեցին անկում ապրել. հայերը գրեթե ամբողջապես տեղափոխվեցին և կենտրոնացան Մադրասում։ Եվ որովհետև նրանք նախկին աղքատ գաղթականները չէին, ուստի կարողացան իրենց ձեռքը վերցնել քաղաքի տնտեսական կյանքի որոշ ճյուղեր։ Շուտով Մադրասը, Բոմբեյի հետ միասին, դարձավ ամենից խոշոր գաղթօջախը Հնդկաստանում, որը հետագայում մեծ դեր խաղաց թե՛ կուլտուրական կյանքում, և թե՛ ազգային ազատագրական պայքարի գաղափարախոսության սկզբնավորման և զարգացման գործում։

Մադրասի հայ բնակչության հիմնական մասը հանդիսացել են արհեստավորները և մանր առևտրականները։ Սակայն այստեղ արտակարգ հաջողություն են ունեցել հայ մեծահարուստ առևտրականները և արդյունաբերողները, որոնք հեքիաթային հարստություն են դիզել։ Նրանք իրենց ձեռքում են կենտրոնացրել բանկային քարերի, համեմունքի, հնդկական կերպասների և այլ ապրանքների առուծախը։

Հնդկահայ խոշոր գաղթօջախներից է հանդիսացել Բոմբեյ քաղաքը, որը սկզբում եղել է պորտուգալական առևտրական կայան, իսկ 1661 թվականից անցել է անգլիացիների ձեռքը։

Հայերը Բոմբեյ են եկել և հաստատվել գլխավորապես Սուրաթից։ Ցանկանալով Բոմբեյը դարձնել վաճառաշահ մի քաղաք, անգլիացիներն այստեղ են հրավիրել Սուրաթի հայերին՝ տրամադրելով նրանց հողամաս և վարկ՝ տներ կառուցելու համար։ Այստեղ է ժամանակին գործել Հնդկաստանի հայ խոշոր վաճառական-

ներից մեկը՝ Խոջա Մինասը, որը սեփական օվկիանոսային նավեր է ունեցել «Օքսենտ», «Յուլս» և այլ անուններով։

Հայերը Բոմբեյում կենտրոնացած են եղել մի թաղամասում, որը կոչվել է «Armenian line», («Հայկական թաղամաս»)։ Այդ թաղամասը կտրող փողոցը կոչվել է «Armenian street». («Հայկական փողոց»)։ Հայ համայնքն իր համար եկեղեցի է կառուցել, որը կանգուն է մինչև այսօր։ Մեզ են հասել Բոմբեյում գըրված մի շարք ձեռագրեր։

Բենգալիայի հայկական հնագույն գաղթօջախներից է Չիչրան կամ Չենսուրահը։ Չիչրա սկզբում հոլանդական առևտրական կայան է հանդիսացել, իսկ հետո անցել է անգլիացիներին։

Չենսուրահում հայերն սկսել են հավաքվել և գաղթօջախ ստեղծել 1645 թվականից։ Հետագայում հայկական այս գաղթօջախը զգալիորեն բարգավաճել է։ Հայ համայնքն այստեղ ևս կառուցել է իր եկեղեցին 1697 թվականին[1]։ Հայկական այս գաղթօջախը պահպանել է իր գոյությունը մինչև անցյալ դարի կեսերը։

Բենգալիան նույնպես հանդիսացել է Հնդկաստանի այն վայրերից մեկը, որի հետ հայերը ծանոթ են եղել հին ժամանակներից սկսած։ Արդեն ասացինք, որ Սեյիդաբադում, Չենսուրահում, Մուրշիդաբադում և այլ վայրերում գոյություն ունեին հայկական գաղթօջախներ։ Աուրենգզիբի հատուկ ֆերմանով 1665 թվականին հայերին թույլ է տրվել հիմնելու առաջին առևտրական կայանը Բենգալիայում։ Բենգալիայի Չենսուրահ քաղաքում այնքան հայ բնակչություն է հավաքվում, որ 1652 թվականին այստեղ անհրաժեշտ է լինում հայկական եկեղեցի կառուցել։ Բենգալիայի հայերը մեծ հեղինակություն են վայելել տեղացիների մոտ։ Եվրոպացիները փորձել են օգտվել նրանց հեղինակությունից։ Մեզ հայտնի են եվրոպական մի շարք պատվիրակություններ, որոնց ղեկավարել են Բենգալիայի հայերը։ Մեծ է եղել առանձնապես բենգալահայ խոջա Սահրադի դերը, որի ղեկավարած միսիայի շնորհիվ 1651 թվականին անգլիացիները կարողացել են Շահ Ջհանից իրավունք ստանալ առևտրական ֆակտորիաներ հիմնելու Բենգալիայում։

Հայտնի է, որ Կալկաթան հիմնվել է 1690 թվականին։ Հնագետներին հաջողվել է հայկական 1630 թ. գերեզմանաքար հայտնաբերել Կալկաթայում։ Սկզբում այս հայտնաբերմանը գիտնականները թերահավատությամբ էին վերաբերում, բայց հետագայում հայտնի դարձավ, որ այն վայրում, ուր Կալկաթան է հիմնվել,

[1] M. Seth, Armenians at Chinsurah («AI», էջ 303)։

ևրեք գյուղերից մեկը եղել է հայկական։ Կալկաթայի հին հայկական բնակչության մասին հետաքրքիր է պրոֆ. Ա. Վիլսոնի «Հայերը Կալկաթայի հիմնադիրներ» հոդվածը, որը հրատարակվել է բազմաթիվ անգամներ։

1724 թվականին Կալկաթայում կառուցվել է հայկական եկեղեցի, որը նույնպես ապացույց է այն բանի, որ այստեղ հայկական բավականին ստվարաթիվ համայնք է գոյություն ունեցել։

Մեզ հայտնի է Կալկաթայում 1742 թվականին ընդօրինակված մի ձեռագիր, որը պարունակում է «Գիրք պորտահամարից» վերնագրով մի աշխատություն, որը թարգմանված է անգլերենից Փեդրի Ղալանդարյանի կողմից[1]։

Հայկական գաղթօջախներ են հաստատված եղել Հնդկաստանի այլ քաղաքներում ևս։ XVIII դարում էջմիածնի կաթողիկոսական դիվանում կազմված է եղել Սփյուռքի հայկական գաղթօջախների, այդ թվում նաև հնդկահայ գաղթավայրերի ցանկը, որը մատյատախանում է Սիմեոն Երևանցու «Ջամբռռ»-ում կազմած ցանկին[2] և Ղուկաս կաթողիկոսի 1785 թվականին հնդկահայերին ուղարկված շրջաբերականում հիշված հնդկահայ համայնքների հիշած վայրերի անուններին[3]։

Արխիվային փաստաթղթերը, ձեռագրական հիշատակարանները, վիմագիր արձանագրությունները և բազմաթիվ այլ փաստերը, վիմագիր արձանագրությունները խոսում են այն մասին, որ XVIII դարում հայկական գաղթօջախներ կային նաև Ագռնիո, Արկաղ, Բանգալոր, Բեհար, Դակկա, Դելհի, Վոչին, Սուրաթ, Տանջար, Հայդարաբադ, Հուգլի, Մունկեր, Չիտագանգ և այլ քաղաքներում։

Թվական կոնկրետ տվյալներ հնդկահայ համայնքների մասին չեն պահպանվել։ Դոլորյեն նրանց թիվը հաշվում է 25000, Ղ. Ալիշանը՝ 5000, Կ. Շահնազարյանը՝ 1500։ Մատենադարանում պահվող մի վավերագրում հնդկահայ բնակչության թիվը հաշվում է 2000։ Մեր մոտավոր հաշվումներով, չափազանցություն է և՛ 25000-ը, և՛ 2000-ը։ Հնդկահայ գաղթօջախներում տասը հազարից պակաս բնակչություն լինել չէր կարող։ Դեռ մենք չենք հաշվում այն հայերին, որոնք առևտրի և այլ աշխատանքների համար ժամանակավորապես գալիս էին Հնդկաստան և ապա ետ վերադառնում։

[1] ՀՊՄ, ձեռ. № 4486, թ. 31ա—31բ։

[2] Դիւան Հայոց պատմութեան, հ. III, էջ 802, Սիմէոն Երևանցի, Ջամբռ, Վաղարշապատ, 1873, էջ 48։

[3] ՀՊՄ, ձեռ. № 4501, թ. 3բ—4ա։

Ինչպիսի շերտավորում է գոյություն ունեցել հնդկահայ համայնքներում: Ժամանակակիցներից մեկը թվարկել է հնդկահայ համայնքների ներսում գոյություն ունեցող հետևյալ սոցիալական խավերը՝ խոշոր վաճառականներ, որոնց մի մասն ունեցել է նաև պլանտացիաներ, մանր վաճառականներ, արհեստավորներ, ծառայողներ, բանվորներ և մանր գործավորներ:

Մեսրոպ Սեթյանն, ուսումնասիրելով Ագրայում գտնվող հայկական գերեզմանատունը, շիրմաքարերի վրա եղած վիմագիր արձանագրությունների հիման վրա, ուր հաճախ գրված է լինում մահացածի զբաղմունքը, պարզել է, թե ինչ սոցիալական խավի պատկանող մարդիկ են ապրել Ագրայում: Պարզում է, որ այնտեղ ապրող հայերի մեջ եղել են պետական պաշտոնյաներ, զորավարներ, ռազմիկներ, թնդանոթաձիգներ, զինագործներ, վաճառականներ, արհեստավորներ, ճարտարապետներ և այլ մասնագիտության տեր մարդիկ:

Սոցիալական այդ տարբեր խավերի և տարբեր մասնագիտություն ունեցող մարդկանց պատկերը հատուկ է եղել հնդկահայ մյուս բոլոր գաղթօջախներին:

Հնդկահայ բնակչության մեծաթիվ շերտը կազմում էին հայ արհեստավորները: Սրանք նույնպես հիմնականում գործում էին առանձին-առանձին: Բայց լինում էին դեպքեր, երբ միանում էին և կազմում համքարություններ՝ ունենալով իրենց ցեխային կոմիտեն և ավագը: Նման համքարությունները հիմնականում կատարում էին վաճառականների պատվերները՝ կապված շուկայի պահանջների հետ: Հնդկաստանի և այլ երկրների թանգարաններում կարելի է տեսնել հնդկահայ արհեստավորների պատրաստած ցուցանյութեր: «Ազգասէր» պարբերականը խոսելով հնդկահայ արհեստավորների մասին, գրում է, որ նրանք զբաղվում էին ասեղնագործությամբ, դարբնությամբ, ոսկերչությամբ, դերձակությամբ և այլն: Այս ցանկի վրա պետք է ավելացնել նաև քարակոփությունը: Հնդկաստանում հայտնի էին հայ ներկարարները, որոնց ներկած կտավը և կաշին հռչակված էին Արևելքում:

Շերերի վկայությամբ, հնդկահայերը տեղական բնակչությունից գնում էին բամբակ, հանձնում ջուլհակներին: Ջուլհակներից ստացած ապրանքը հնդկահայ վաճառականները տանում էին Բենդեր Աբասի վրայով դեպի Պարսկաստանի, Թուրքիայի, նույնիսկ եվրոպական շուկաները:

Հնդկահայ արհեստավորությունը, ինչպես երևում է, գործոն մասնակցություն է ունեցել տեղական զենքի արտադրությանը:

Հայտնի է, օրինակ, որ թնդանոթ ձուլող ամենից լավ մասնագետը հայ է եղել՝ Հովնաջան Ջուղայեցին, որն իր պատրաստած թնդանոթների վրա թողել է իր անունը հնդկերեն, պարսկերեն և հայերեն լեզուներով:

Հնդկահայ գաղթավայրի հիմնական մասը, իհարկե, բաղկացած էր մանր վաճառականներից, խանութպաններից, ծառայողներից, քարավաններին ուղեկցող զինվորականներից և բանվորներից:

Փոքր թիվ չէին կազմում օրավարձով ապրող բանվորները: Հետագայում ընչազուրկ այս խավի թիվն այնքան ավելացավ, որ անհրաժեշտություն առաջացավ հիմնելու բարեգործական տներ, հյուրանոցներ և այլն:

Հնդկաստանի հայ համայնքների սոցիալական այս խայտաբղետ կազմին անծանոթ պատմաբանները քաղաքացիություն են տվել այն սխալ կարծիքին, որ իբրև թե հնդկահայերը բոլորը մեծահարուստ առևտրականներ են եղել և վայելել են հեքիաթային երկրի բոլոր բարիքները:

Ոչ բոլոր հայերի համար է, որ Հնդկաստանը գթառատ մայր է հանդիսացել: Բազմաթիվ անգամներ աշխատավոր շատ հայեր գալով Հնդկաստան, կորցնում էին իրենց առողջությունը և հաշմանդամ վերադառնում, իսկ շատերն էլ մահանում և թաղվում էին թափառումների ճանապարհներին:

Հնդկաստանի տնտեսական-առևտրական կյանքում զգալի դեր էին խաղում խոշոր վաճառականները: Նրանք մեծ մասամբ գործում էին առանձին-առանձին, բայց երբեմն էլ միանում և կազմում էին «Կոմպանի»՝ ընկերություններ, ուր մեծ մասամբ մտնում էին հարուստները: Նման ընկերություններն ունենում էին իրենց գրասենյակները:

Անգլիական առևտրական ընկերությունները կառավարության հատուկ հանձնարարությամբ 1688 թվականին պայմանագիր են կնքել հայ առևտրականների ներկայացուցիչ խոջա Փանոս Քալանթարի հետ: Այդ պայմանագրով հայերը ստացել են անգլիացու ազատ քաղաքացու բոլոր իրավունքները: Հայերն ազատ առևտրի և ելումուտի իրավունքներ ունեին անգլիական բոլոր առևտրական կայաններում: Հայերի առևտրական բեռները առանց մաքսի տեղափոխվում էին անգլիական նավերով: Խորամանկ անգլիացիները այս պայմանագրով հայերին սիրաշահելու նպատակով պայմանավորվեցին նրանց համար կառուցելու անգամ եկեղեցիներ: Անգլիական քաղաքականությունն այս դեպքում ուներ միայն և միայն մի նպատակ, որին ոչ մի դեպքում չի համապատասխանում «բա-

քի» կամ «քրիստոնյա» վարագուրող պիտակները։ Անգլիացիները շատ լավ էին հասկանում, որ մրցակից հայերը անգլիական ֆակտորիաներում վաղ թե ուշ ղրկվելու են գործելու ինքնուրույնությունից և կտրվելու իրենց նախկին ինքնուրույն համայնքներից։

Այս պայմանագիրն ուներ երկրորդ սուր կողմ ևս, որն ուղղված էր հայ առևտրականների այն խմբի դեմ, որը հրաժարվում էր գնալ խոջա Փանոս Քալանթարի ետևից և անգիտակ դառնալու անգլիական առևտրական ընկերության կցորդը։

Չգիտես թե ինչու այս պայմանագրի մասին խոսող գիտնականներից ո՛չ մեկը ուշադրություն չի դարձրել հետաքրքիր մի փաստի վրա։ Պայմանագրի հետ կապված անգլիական ընկերության և խոջա Փանոս Քալանթարի գրություններից երևում է, որ անգլիացիները փորձել են համոզել հայերին՝ ծառայության մեջ մտնելու անգլիական հնդկական գաղութային բանակում։ Հայերին շահագրգռելու համար խոստացել են մեծ պարգևներ, վճարել ճանապարհի և մնացած ծախսերը։ Սակայն ո՛չ անգլիական սիրաշահումները, ո՛չ էլ խոստումները ոչ մի արդյունք չեն տվել. ո՛չ մի հայ, չնայած առաջարկվող գայթակղիչ պայմաններին, չի գնացել ծառայելու անգլիական գաղութային բանակում։

Եվրոպական անուն կրող հայկական փոքրիկ «Կոմպանիա»— ընկերություններն իրենց բուն ասիական, նույնիսկ նահապետական առևտրական եղանակներով, շատ քիչ բանով էին հիշեցնում եվրոպական հզոր ընկերություններին, բայց շնորհիվ գործի լավատեղյակության, Հնդկաստանի գրեթե բոլոր անկյունների ծանոթության, կարողանում էին գործն այնպես կազմակերպել, որ կարճ ժամանակամիջոցում ձեռք էին բերում մեծ եկամուտներ, երբեմն նույնիսկ լուրջ մրցակից դառնում եվրոպական ընկերություններին։

Եվրոպական ներխուժումների տարիներին և դեռ դրանից հետո էլ, երկար ժամանակ հայկական վաճառականությունը Հընդկաստանում հասել էր զարգացման այն աստիճանին, երբ առևտրական բուրժուազիան իրեն էր ենթարկում արդյունաբերությունը։

Հայերը այս շրջանում որոշ դեր էին խաղում ոչ միայն տնտեսական, այլ նաև քաղաքական կյանքում։ Լավ իմանալով այդ կապերի և դիրքերի մասին եվրոպացիները ամեն կերպ աշխատում էին օգտվել դրանից։

Հայերի մասնակցությունը հնդիկ ժողովրդի ազատագրական պայքարին։

XVII—XVIII դարերում, եվրոպացիների Հնդկաստան ներխուժելուց և այնտեղ հաստատվելուց հետո, ինչպես հայտնի է, ծավալվեց կատաղի պայքար հնդիկ ժողովրդի

և գաղութարարների միջև։ Ազատասեր հնդիկ ժողովուրդը զենք վերցրեց՝ երկրից դուրս վտարելու անկոչ հյուրերին, որոնք սկսել էին կեղեքել երկիրը։ Հնդիկ ժողովրդի համար ճակատագրական այս ծանր օրերին ինչպիսի՞ դիրք վերցրին իրենց երկրորդ հայրենիքը գտած հնդկահայերը։ Լավ բարեկամին,— ասում է ժողովուրդը,— փորձության մեջ կարելի է ճանաչել։ Մեզ հասած պատմական վկայությունները ցույց են տալիս, որ հնդկահայերն անվերապահ կանգնած են եղել հնդիկ ժողովրդի կողքին և նրանց հետ ձեռք-ձեռքի տված պայքարել են գաղութարարների դեմ։

Նախքան ազատագրական շարժումների մասին խոսելը, անհրաժեշտ ենք համարում լուսաբանել հնդկահայերի քաղաքական դիրքորոշման շարժառիթները. ինչո՞վ բացատրել, որ հնդկահայության մեծամասնությունն անտարբեր վերաբերմունք չի ունեցել հընդիկ ժողովրդի ազատագրական պայքարի նկատմամբ և հաստատակամ կանգնել է հնդիկ հայրենասերների կողքին։

Եվրոպացիները Հնդկաստան թափանցելուց առաջ, ինչպես տեսանք, հայերը ճանաչված էին Հնդկաստանի բոլոր անկյուններում։ Օգտվելով հնդիկ ժողովրդի և տեղական իշխանությունների բարյացակամ վերաբերմունքից, նրանք ծավալել էին լայն գործունեություն արհեստագործության և առևտրի բնագավառներում։ Հայերի ձեռքումն էր գտնվում, հիմնականում, Եգիպտոսի, Ռուսաստանի, Լիվորնոյի, Վենետիկի և եվրոպական այլ երկրների ու քաղաքների հետ կատարվող առևտուրը։ Հայերի կողմից վարձված արաբական և եվրոպական նավերն ակոսում էին Հնդկական օվկիանոսը և մուտք գործում Սումատրա, Ֆիլիպիններ, Չինաստան և արևելյան այլ երկրներ։ Առևտրի համար ստեղծված բարենպաստ պայմանները հնարավորություն էին տալիս հայ արհեստավորներին և նրանց հետ կապված հայ բնակչության մյուս խավերին ազատ և շահաբեր գործունեություն։

Եվրոպացիները երբ սկսեցին մուտք գործել Հնդկաստան, հնդկահայ առևտրականների նկատմամբ ցուցաբերեցին բարյացակամ վերաբերմունք։ Նրանք բոլոր միջոցները գործադրեցին սիրաշահելու հայ վաճառականներին, որպես Հնդկաստանին լավ ծանոթ, հնդկական իշխանությունների մոտ մեծ հեղինակություն ստեղծած, արևելյան լեզուները և սովորությունները լավ գիտցող անձնավորություններ։ Ե՛վ անգլիական, և՛ ֆրանսիական, և՛ հոլանդական արևելյան հնդկական ընկերություններն իրենց գործունեության առաջին շրջանում գործակիցներ էին փնտրում հայ վա-

ճառականների շրջանում։ Հնդկական իշխանությունների հետ բանակցությունների ժամանակ եվրոպացիների համար միջնորդի դերում հնդկահայ խոջաներն են հանդես գալիս։

Արևելյան-հնդկական ընկերությունների հայ վաճառականներին սիրաշահելու մյուս պատճառը, այդ հսկայական այն շահույթն էր, որ նրանք ստանում էին նրանցից ապրանքներ տեղափոխելու համար։ Սկզբնական շրջանում հայերը սեփական նավեր չունեին, ուստի Եվրոպայից՝ Հնդկաստան և Հնդկաստանից՝ Եվրոպա ապրանքներ տեղափոխելիս միշտ վարձում էին եվրոպական նավեր և հսկայական փոխադրավարձ տալիս։

Հնդկաստանում եվրոպացիների գործունեության առաջին շրջանում հայ առևտրականների նկատմամբ ցուցաբերած սիրաշահող քաղաքականության ցուցանշական փաստը՝ այդ առևտրական այն պայմանագիրն է, որը 1688 թվականին կնքվել է Անգլիայի Արևելյան հնդկական ընկերության և հնդկահայ վաճառականների ներկայացուցիչ խոջա Փանոս Քալանթարյանի միջև։ Ըստ այդ պայմանագրի, հայ վաճառականներն ստանում էին անգլիական ազդեցության տակ գտնված բոլոր երկրներում անգլիացուն հավասար իրավունք, կարող էին երթևեկել ցանկացած վայրերը, բնակություն հաստատել այնտեղ, ուր ուզում են, կալվածքներ ունենալ, պաշտոններ վարել և այլն։ Անգլիական արևելյան ընկերությունը նույնիսկ հանձն էր առնում Հնդկաստանում իր ծախսով հայկական եկեղեցիներ կառուցել հայերի համար այն վայրերում, ուր կան հայ համայնքներ, բայց չունեն եկեղեցի[1]։

Սակայն այս միայն առաջին շրջանում։ Եվրոպացիների Հնդկաստանում շատ ու քիչ հաստատվելուց հետո, սկսվեց մեծ մրցություն նախ իրենց՝ եվրոպացիների, ապա՝ եվրոպացիների և հայ վաճառականների միջև։ Հայ վաճառականությունն այս մրցակցության ընթացքում ստացավ ծանր հարված և սկսեց դուրս մղվել առևտրական շուկաներից։ Առանձին-առանձին և կամ փոքր «կոմպանիա»-ներով առևտուր անող հայերը և կամ նրանց հետ կապված մյուս խավերը, ինչքան էլ հմուտ և ճկուն լինեին իրենց գործում, բնականաբար, չէին կարող լուրջ դիմադրություն ցույց տալ հզոր բանակ և նավատորմիղ ունեցող արևելահնդկական ընկերությանը, որը շատ հաճախ իր գործարքները կատարում էր արյունահեղ արշավանքներով և բռնի ուժով։

---

[1] «Ազգասէր», 1846 թ., № 39 (Մայիսի 9)։

Ծովային ճանապարհների հայտնաբերումը, Պարսկաստանի
վրայով գնացող ցամաքային ճանապարհի անապահովությունը XVII
դարում նպաստեցին ծովային առևտրի զարգացմանը։ Հնդկահայե-
րը, որոնք մրցակցությունն սկսելիս սեփական նավեր չունեին,
ստիպված հանձնվում էին եվրոպական և ասիական նավավարների
ողորմածությանը, որից մեծ վնասներ էին կրում, մեծ փոխադրա-
վարձ էին վճարում, բացի դրանից, վերջիններս նպատակադրված
ձևով ձգձգում էին նրանց ապրանքների փոխադրությունը և այլն։
Կարճ ժամանակում հայ վաճառականները կա՛մ գնեցին և կա՛մ
կառուցել տվեցին սեփական նավեր, որոնց ղեկերի մոտ կանգնած
էին հայ ծովային կապիտաններ։ Հայկական այդ նավերը շրջում
էին «Հայկական» կոչվող կարմիր-նարնջագույն դրոշակով։ Ասիա-
յի և Եվրոպայի բոլոր նավահանգիստները բաց էին նրանց առջև։
Չնայած նրանք փոքրաթիվ էին, սակայն մրցակցում էին եվրոպա-
կանի հետ։ Թե՛ անգլիացիները, թե՛ ֆրանսիացիները, բնականա-
բար, բարի աչքով չէին կարող նայել խաղաղ այս մրցակցությանը։
Դրանով պետք է բացատրել եվրոպական գաղութարարների այն
մեծ ուշադրությունը, որ սկսում են դարձնել դեպի հայկական նա-
վերի վրա հնդկական ջրերում և ամեն կերպ աշխատում նրանց
դուրս հանել շարքից։ Այսպես, Հնդկաստանից Նոր Ջուղա ուղարկ-
ված մի նամակից իմանում ենք հայկական մի նավի բռնագրավ-
ման մասին անգլիացիների կողմից։ Այդ նամակում ասված է, որ
Չինաստանից Հնդկաստան եկող հայկական մի նավ բռնագրավվել
է, որից «տուժել են 250000 ռուփի»։ Մի այլ նամակում խոսվում
է հայկական «Արշակ» անունով նավի բռնագրավման մասին և
այլն։

Այս ամենից, բնականաբար, տուժում էր ոչ միայն հնդկահայ
առևտրական խավը, այլև՝ հնդկահայ մանր ձեռնարկատերերը և
արհեստավորները, որոնք հայ գաղթօջախների բնակչության հիմ-
նական մասն էին կազմում։ Նրանց տնտեսական, քաղաքական
ծանր վիճակը դառնում էր անտանելի։

Կարճ ժամանակում հնդկական հողի վրա եղած հայկական
համայնքներից նրանք, որոնք փոքր թվով բնակչություն ունեին և
թույլ էին, սկսում են քայքայվել, իսկ որոշ տեղերում դադարում են
գոյություն ունենալուց։

Ստեղծված այս պայմաններում հայերը կամաց-կամաց մեծ
կամ փոքր խմբերով. թողնում են անգլիացիների և մյուս եվրոպա-
ցիների գրաված երկրամասերը և տեղափոխվում գաղութայնա-
ցումից ազատ շրջաններ։

Հնդկահայության հիմնական մասը աշխատավորություն էր՝ արհեստավորները, ծառայողները, մանր զբաղմունքի տեր մարդիկ և օրավարձով ապրող բանվորներ։ Հայկական այս խավի միջոցով է, որ հնդիկները ճանաչում էին հայությանը։ Եվ եթե հայ առևտրականների, մեծահարուստների մեջ կային մարդիկ, որոնք իրենց շահերով կապված էին անգլիացիների հետ և գնում էին նրանց հետևից, ապա հայ աշխատավոր հատվածը, որն ապրում էր հնդիկ ժողովրդի հետ կողք-կողքի, քաղաքական և տնտեսական միևնույն պայմաններում, որի հետ հավասար չափով բաժանում էր գաղութարարների ստեղծած ծանր վիճակը, նրա հետ էր։

Հնդկահայ համայնքները մեծապես տուժում էին նաև եվրոպացիների իրար մեջ Հնդկաստանը գաղութայնացման համար մղվող պատերազմից։ Հայազգի մի վաճառական Նոր Ջուղա ուղարկած նամակում իր բարեկամին հետևյալն է գրել. «Այս բոլոր դժբախտությունները գլխավորաբար ֆրանսիացվոց, անգլիացվոց և այլ եվրոպական տերությանց միջև մղված պատերազմներին պատճառով են, որուն հետևանոք մենք, ինչպես նաև ուրիշ ազգի վաճառականները շատ ծանր կորուստներ կրեցին այս մեկ քանի տարիներուն մեջ»։

Նման պայմաններում շուտով սկսում են երևան գալ հայկական գաղթօջախների քայքայման առաջին նախանշանները։

Այս ժամանակից սկսած անգլիացիները ոչ միայն սկսում են հայերին դուրս մղել առևտրական շուկաներից, արգելքներ ստեղծել արհեստագործության զարգացման համար, այլև անցնում են բացահայտ հալածանքների. ապօրինի դատական գործեր են հարուցում նրանց դեմ, խլում ապրանքները, բանտ նետում և այլն։

Նման պայմաններում հայ գաղթօջախներն ընկնում են տնտեսական կախման մեջ անգլիացիներից։ Շուտով անգլիացիները դիմում են ավելի ազդու միջոցների. նրանք հնդկահայերի վրա սկսում են նայել որպես թշնամիների։ Հայտնի է, օրինակ, այսպիսի փաստ. 1746 թվականին Մադրասի մոտ անգլիական ծովակալ Գրիֆֆը ապօրինաբար բռնագրվում է բենգալական հայերի մի առևտրանավ։ Անգլիական դատարանը, որին հանձնարարված է եղել այս գործի քննությունը, իր որոշման մեջ արդարացնում է ծովակալ Գրիֆֆի արարքը, քանի որ բռնագրված նավը, նրա որակմամբ, հանդիսանում է «թշնամական սեփականություն»։

Ահա թե ինչով պետք է բացատրել հնդկահայ բնակչության որդեգրած քաղաքական կողմնորոշումը։ Հնդկահայ համայնքի բոլոր խավերն էլ, հիմնականում, ունեին հակագաղութային տրամադրություն, իհարկե, յուրաքանչյուրը ելնելով իր շահերից։ Համատեղ պայքարի ելնելով անգլիացիների դեմ, հայերը պաշտպանում էին ոչ միայն իրենց երկրորդ հայրենիքի շահերը, այլև իրենց անձնական շահերը։

Ի դեպ, պետք է ասել, որ հնդկահայերը հնդիկ ժողովրդի ազատագրական պայքարին մասնակցել են տարբեր ձևերով՝ հնդկական իշխանությունների կողմից հովանավորված և արտոնված հայ վաճառականները հնդիկներին օգնել են՝ ֆինանսական միջոցներ տրամադրելով նրանց, հայ զինագործներն օգնել են զենք պատրաստելով, իսկ հայ զինվորականները՝ մտել են հնդկական բանակը և հնդիկ ժողովրդի հետ ուս-ուսի կռվել գաղութարարների դեմ և թափել իրենց արյունը Հնդկաստանի ազատագրության համար։

Հնդկահայ բարձրաստիճան զինվորականների առաջին ներկայացուցիչներից է հանդիսացել Ղազարի որդի Մաթեոսը, որը երկար տարիներ ծառայել է Բենգալիայի նավաբ Ալի-Վարդի խանի օրոք և մահացել 1753 թվականին։ Նրա գերեզմանաքարը գտնվում է Ջանտերնագոր քաղաքում։ Տապանաքարի վրա հայերեն արձանագրված է անունը, մահվան թվականը և «Հրամանատար» հանդիսանալը[1]։

Հետագայի տեղեկությունները՝ հնդկահայերի մասնակցության մասին հնդիկ ժողովրդի ազատագրական պայքարին վերաբերում է 1662 թվականին, երբ պորտուգալական գաղութարարները փորձել են տիրել Մալաբարին և տապալել տեղական հնդիկ իշխանությունը։ Տեղի հայ բնակչությունն ակտիվությամբ է մասնակցել պորտուգալացիների դեմ հնդիկների պայքարին և հնդկական իշխանությունները և գաղութարարների խռովությունը ճնշելուց հետո Մալաբարի կառավարիչ են նշանակել հայազգի Մարկոս անունով մեկին։

Հնդկահայերը հետագայում մասնակցել են Բենգալիայի նավաբ Սիրաջ-ուդ-Դոուլեյի անգլիացիների դեմ մղած կռիվներին։ Հայ առևտրականներից ոմանք օգնել են հնդիկներին նյութապես, իսկ հնդկահայ աշխատավորներից ոմանք զենք վերցրած կռվել են հնդիկների հետ միասին։ Տեղեկություններ կան, որ Հնդկաստանի բենգալական այն բանակում, որը ջախջախեց Կասումբազարի անգլիական կայազորը և գրոհով վերցրեց Կալկաթան, «կային հայ կամավորներ»։

[1] M. Seth, Armenians at Chandernagore («AI», էջ 314)։

Հայ-հնդկական զինակից դաշնակցության և գաղութարարների դեմ մղած ազատագրական պայքարի ամենից ակնառու փաստը, այդ 1760—1764 թվականներին Բենգալիայում հնդիկ ժողովրդի մղած ազատագրական կռիվներում հնդկահայերի ցուցաբերած արտակարգ նվիրվածությունը և անձնազոհությունն է, որի վրա անհրաժեշտ ենք համարում փոքր-ինչ կանգ առնել։

1760 թվականի հուլիսի 20-ին, ինչպես հայտնի է, Հնդկաստանի անգլիական իշխանությունները՝ խոշոր գումարի հարկ պահանջելու և մեծ արտոնություն ստանալու պայմանով, Բենգալիայի նավաբ են նշանակում Միր Ջաֆարի փեսա Միր Կասիմին։

Միր Կասիմը Հնդկաստանի պատմության մեջ ճանաչված է որպես հայրենասեր անձնավորություն։ Հակառակ անգլիացիների ակնկալություններին՝ դարձնելու նրան անգլիական պաշտոնյա նավաբի տիտղոսով, նա ձգտում է Բենգալիան դուրս հանել գաղութային տիրապետությունից, վերականգնել նրա քաղաքական անկախությունը և անձնիշխան կառավարել։

Իր գահակալության առաջին իսկ օրից, նա իրեն շրջապատում է հակաանգլիական կողմնորոշում ունեցող մարդկանցով և պատրաստվում ազատագրական պայքարի։ Ցանկանալով անգլիացի գաղութարարներին դուրս վտարել Հնդկաստանի արևելյան ափերից, նա նպատակ է դնում կազմակերպել հզոր և լավ զինված բանակ։ Իր այդ մտադրությունն իրագործելու համար բանակի հրամանատար է նշանակում մի խելոք, կազմակերպչական մեծ ընդունակություններով օժտված հայ զինվորականի՝ Գրիգոր Հարությունյանին, որը հնդկական աղբյուրներում հայտնի է Գեորգին Խան անունով[1]։

Գեորգին Խանը վայելելով Միր Կասիմի բացարձակ վստահությունը, կազմակերպում է Բենգալիայի բանակը հնդիկ և հայ զինվորներից։ Ստեղծում է 12 գունդ՝ հրամանատարներ նշանակելով հայ և հնդիկ փորձված զինվորականների։ Նա տեղում կազմակերպում է զենքի և զինամթերքի արտադրությունը։ «Գեորգին Խանը,— գրում է Թովմաս Խոջամալյանը,— ինքնին հնարեաց, թափեաց և պատրաստեաց զամենայն հրազէնս պատերազմաց, աւելեօք և ոչ պակաս, քան զևրոպացւոցն»[2]։

Հրացանների պատրաստման և թնդանոթների ձուլման գործում ակտիվ մասնակցություն են ունեցել հայ զինագործները,

[1] M. Seth, Chojah Gregory, Alias Gorgin chan («AI», էջ 383—418)։

[2] Թովմաս Խոջամալեան, Պատմութիւն Հնդկաց, Կալկաթա, 1849, էջ 860։

որոնց զեկավարն է հանդիսացել Շահնազարը, որի 1761 թվականին ձուլած «զամ-զամա» կոչվող հրետանին այժմ ցուցանյութ է հանդիսանում Հնդկաստանի Լահոր քաղաքի թանգարանում։

Երկրի տնտեսական վիճակը բարելավելու և առևտուրն աշխուժացնելու համար Միր Կասիմը հատուկ հրովարտակով վերացնում է բոլոր տեսակի առևտրական հարկերը։ Նավաբի հրամանում ասված է. «Թող ստանայցեն զայս շնորհս՝ և եկեալ գնեսցէն և վաճառեսցէն ի քաղաքիս մերում ձրիապէս, զի շինութիւն և առատութիւն լինեսցի աշխարհիս»[1]։

Բենգալիայի աշխուժացող այս կյանքում ակտիվ դեր են սկրսում խաղալ հայերը. «Ազգն հայոց,— գրում է Խոջամալյանը,— հոխանալով, քաջանալով, և ամենեցուն բարութիւնս առնելով ի շինութիւնս աշխարհին Հնդկաց, լինէին զամս երեք, մինչև ոչ ոք ի չարեաց կամ ի թշնամեաց անտի գլուխ ի վեր անբառնալով իշխէր, քանզի լսելով անուն ազգին Հայոց միայն՝ բիւրք ի թշնամեացն սարսեալք դողային և անխօսս լեալք հնազանդութիւն խոստովանէին։ Տեսեալ զայս արիութիւնն, քաղաքավարութիւն և աշխարհշինութիւնս Հայոց՝ մեծամեծք յայլազգեաց քրիստոնէիցն՝ զարմանային, և ի սրտէ նախանձակիր լինէին յոյժ»[2]։

Այդ օրերին Գեորգին Խանի պահակազորի զինվորները ձերբակալում են անգլիական հետախույզների, որոնց մոտ գտնում են ծածկագիր նամակներ, որոնցից հայտնի է դառնում, որ կարգադրված է Փաթանայի մոտիկ գտնվող անգլիական զորահրամանատարին հարձակում սկսել Փաթանայի ամրոցի վրա։

Մինչ այդ, Գեորգին Խանը կանխազգալով անգլիացիների հնարավոր հարձակումը Փաթանայի վրա, ամրոցը պաշտպանելու նպատակով, այնտեղ է ուղարկել մի զորաբանակ։ Բենգալական բանակի այս զորամասի հրամանատարների շարքում էին հայ հազարապետներ Մարգար Հարությունյանը և Ղազար Հակոբյանը։ Մինչև բենգալական զորքերի Փաթանա հասնելը, անգլիացիները գրավել էին այն։ Հնդկական բանակը ճանապարհին լսելով Փաթանայի գրավման մասին, արագացնում է իր երթը և պաշարում թշնամու գրաված ամրոցը։ Ըստ Խոջամալյանի տեղեկության, Փաթանայի արևելյան դարբասի ուղղությամբ գրոհող հնդկական զորքերի գումարտակը զեկավարելիս է եղել հազարապետ Մարգարը հայկական ջոկատով։ Հնդկական զորքերին հաջողվում է գրավել Փաթանան և մեծ թվով գերիներ վերցնել անգլիացիներից։

[1] Թ. Խոջամալյան, էջ 86։

[2] Նույն տեղում, էջ 85—86։

Անգլիացիների դեմ տարած այս առաջին հաղթանակից հետո հազարապետ Մարգար Հարությունյանը արժանանում է Բենգալիայի նավարի բարձր պարգևին. նրան նվիրում են «Փիղ մի՝ հանդերձ բազում ընծայիւք: Եւ յաւել ևս տալ նմա զտիտղոսական անունդ Շամսփարխան, որ է մագիստրական իշխանութիւն»[1]: Հընդկաստանի պատմության լավագիտակ մասնագետներ Սինխան և Բաներջին գտնում են, որ «Փաթանայի դեպքերը ունեցան վճռական շրջադարձ, որի ժամանակ էլիսը ջախջախվեց»[2]:

Փաթանայի այս կռվից հետո, այլևս անհնար էր կանգնեցնել դեպքերի ընթացքը: Միր Կասիմը սկսում է բացահայտ գործողություններ՝ գաղութարարների լծից ազատագրվելու համար: Դեպի ապստամբական բանակն են սկսում հոսել գյուղական մասսաները, գալիս և միանում են նրանց արհեստավորները: Միր Կասիմին դրամական օգնություն են ցույց տալիս հնդիկ և հայ վաճառականները:

Շուտով հնդկական բանակին է միանում Ղազիփուրի ռաջա Ջանդրան իր հեծելազորով: Շտապ կարգով անգլիացիների դեմ է ուղարկվում Գրիգոր Այվազյանի ղեկավարած զորագունդը: Միացյալ այս զորաբանակը գլխավորում է Մարկոս հազարապետը և սկսում է ռազմական գործողություններ անգլիացիների դեմ: Վերջիններս նահանջելով, փորձեր են անում ամրանալու նահանջի ճանապարհին գտնվող ամրություններում, բայց հաջողություն չեն ունենում:

Բենգալական բանակի գլխավոր հրամանատար Գեորգին Խանը թշնամու ճանապարհը փակելու համար, նրանց դեմ է շարժում մի ուրիշ զորախումբ: Հնդկական կռվող զորամասերում, ըստ տեղեկությունների, գտնվել են հայկական երեք հարյուրապետ Մկրտիչ-Զաքարիան՝ Նոր Ջուղայեցի, Մելքում Աստրախանցին և Նիկողայոս Երևանցին: Շրջապատման մեջ ընկած անգլիական զորամասերը ջախջախվում են: Միայն գերի ընկած անգլիացիների թիվն անցել է 600-ից, չհաշված գեռ սիփահիներին, որոնց գերի վերցնելուց հետո, Միր Կասիմի հրամանով, զինաթափ են անում և ազատ արձակում:

Այս փայլուն հաղթանակից հետո, Միր Կասիմը հատուկ հրաման է հրապարակում, որով անգլիական բոլոր քաղաքացիներին, որոնք գործում են Բենգալիայում, համարում են Հնդկաստանի

[1] Խոջամալյան, էջ 96:

[2] Н. К. Синха и А. Ч. Банерджи, История Индии, М., էջ 309:

թշնամիներ և հրամայում հանդիպած անգլիացիներին ձերբակալել և հանձնել պետության ձեռքը:

Անգլիացիները պարտություն կրելով բաց ճակատում, սկսում են պատակտում սերմանել Միր Կասիմի հետևորդների շարքերում: Միր Կասիմի առջև ամբաստանում են Գեորգին Խանին և մյուս հայ հրամանատարներին, սակայն նավաբը այս չարախոսությունը մերժում է, պատասխանելով. «Նոցա արարք և գործք են իմ արարք և գործք»:

Այնուհետև անգլիացիները փորձում են կաշառել Գեորգին Խանին: Մեծամեծ խոստումներ տալով առաջարկում են անցնել անգլիացիների կողմը: Սակայն ազնիվ հայը մերժում է այդ ստոր առաջարկը և պատասխանում, որ մինչև իր մահը հավատարիմ է մնալու հնդիկներին: «Քաւ լիցի ինձ լինել տիրադրուժ, մանավանդ ղի՝ հեռի է յազգէս մերմէ այդպիսի տիրամատնութիւն, զի որոյ որ ծառայեն Հայք, միամտութեամբ սրտի մնան հաստատունք մինչև ի մահն իւրեանց»[1]:

Շատ չանցած անգլիացիները նոր ուժեր ստանալով, անցնում են հակագրոհների և կասեցնելով հնդիկների հարձակումը, ստիպում նահանջել: Չգալով մոտեցող վտանգը, Գեորգին Խանը կալկաթայից եկող ճանապարհների ուղղությամբ դասավորում է ապրսամարտ տալու համար:

Ռազմաճակատը ուժեղացնելու համար, նա երկրի մյուս մասերում պահվող զորամասերից մի քանի միավորումներ տեղափոխում է այստեղ: Տեղափոխված հնդկական զորամասերի թվում են գտնվելիս եղել նաև Մարգար Քալանթարյանի և Ղազար Հակոբյանի զորագնդերը: Հիմնական ճակատամարտը տեղի է ունենում Սանթադարիա կոչվող դաշտավայրում՝ Գանգեսի վտակներից մեկի վրա:

Դժբախտաբար, Միր Կասիմը ոչ ինքն է ղեկավարում այս վճռական ճակատամարտը և ոչ էլ թողնում, որ Գեորգինը ղեկավարի: Նա անգլիացիների դեմ ուղարկված 21 հազարանոց բանակի հրամանատար նշանակում է գերմանական ծագում ունեցող կասկածելի մի անձնավորության՝ Սմուրին, որը հնդկական գրականության մեջ ճանաչված է որպես «բախտախնդիր» անձնավորություն:

Այս ճակատամարտին հայ հրամանատարներից մասնակցել են Մարգար Քալանթարյանը, Հարություն Մարգարը և Ղազար

[1] Խոջամալյան, էջ 120:

Հակոբյանը իրենց զորամասերով։ Ճակատամարտը հնդիկների համար վերջանում է անհաջողությամբ։ Անգլիական լավ վարժված և զինված բանակին հաջողվում է ճեղքեր բաց անել հնդիկ հայրենասերների ռազմաշարքերում, անցնել նրանց թիկունքը և վտանգավոր դրություն ստեղծել։

Ապաշնորհ Սմուրը ճակատամարտը ղեկավարելու և ճեղքվածքը վերացնելու փոխարեն, փախչում է։ Մնալով առանց հրամանատարի, հնդկական զորքը սկսում է անկանոն նահանջել։ «Թեպէտ և հարիւրապետք Հայոց ջանացին քաջալերել զգունդս սպարապետին իւրեանց, բայց չեղև հնար»[1]։

Սմուրի զորամասի փախուստից հետո անգլիացիներն իրենց գրոհները դարձնում են դեպի հազարապետ Մարգարի դիրքերը. «Բայց արի և նախանձայոյզ հազարապետն Ղազար իրուք զգնդօք չօգաւ և միացաւ ընդ հազարապետին Մարգարայ, և արարին պատերազմ սաստիկ ընդ ինկլիզաց ժամս իբրև վեց, փախուցանելով զնոսա մինչև ի կամուրջ հեղեղատին, յորոց բազում յինկլիզաց և ի գարդի զօրաց նոցա՝ անկան ի հեղեղատն և մեռան»[2]։ Այստեղ անգլիացիները խայտառակ պարտություն են կրում։

Սանթադարիայի ճակատամարտից ամիս ու կես հետո անգլիացիներն իրենց զորամասերը համալրելուց, հանգստացնելուց հետո նորից շարժվում են հնդիկների վրա, նպատակ ունենալով չթողնել նրանց վերամիավորվել և նոր հարձակում պատրաստել։ Սակայն նոր հարձակումն էլ առանձին հաջողություն չի բերում անգլիացիներին։

Հնդիկ-անգլիական կռիվները շարունակվում են 1762—1763 թվականներին։ Ուշագրավ է այն փաստը, որ ամեն անգամ հընդկական բանակի գաղութարարների դեմ տարած հաղթանակի ժամանակ ըստ սովորության, երբ բարձրացնելիս են եղել հնդկական դրոշակը, հնդկականի հետ միասին բարձրացել են նաև հայկականը՝ որպես սիմվոլ հայ-հնդկական անխարդախ բարեկամության։

Գաղութարարները տեսնելով, որ չեն կարողանում հաղթել Բենգալիայի բանակը բաց ռազմադաշտում, դիմում են իրենց հատուկ դավադրության և այդ հաջողվում է նրանց։

Այս ոճրագործությանն ականատես Գեորգու թիկնապահ Ծատուր Առաքելյանը պատմում է, թե ինչպես է կատարվել այդ տմարդի սպանությունը։ Դավադիրները, ումն Ջանմահմադ Սաբրբեկի գլխավորությամբ, Գեորգին խանի բանակում կատարած պտույտի ժամանակ, մոտենում են նրան և պահանջում վճարել իրենց հասանելիք աշխատավարձը։ Հրամանատարը պատասխանում է, որ աշխատավարձը 20 օր առաջ է վճարվել և, եթե որոշ զողոքներ ունեն, թող դիմեն իրենց անմիջական հրամանատարներին և կարգադրում է անմիջապես հեռանալ ճանապարհից։ Սակայն դավադիրների ղեկավարը հարձակվում է Գեորգու վրա և դաշույնով հարվածում նրա կրծքին։ Գեորգու թիկնապահներից երկուսը սկսում են կռվել դավադիրների հետ, իսկ Առաքելյանը աշխատում է փախցնել վիրավոր հրամանատարին։ Սակայն դավադիրները արկանով վայր են գցում Գեորգու ձին և մի քանի նոր հարված հասցնում հրամանատարին։

Բարձրացած աղմուկի վրա զորքը արթնանում է և իմանալով գործի էությունը, շրջապատում է դավադիրներին և բոլորին սրախողխող անում, բացառությամբ Սաբրբեկի, որին հաջողվում է փախչել։ Ըստ Խոջամալյանի վկայության, Միր Կասիմը «արտասուալից աչօք ասաց. եղբա՛յր, զիա՞րդ ոչ լուար ինձ, քանիցս պատուիրեցի քեզ՝ թէ առանց պահպանաց աստ անդ մի շրջեր»[1]։

Բժիշկների օգնությունը ապարդյուն է անցնում։ 1763 թվականի օգոստոսի 11-ին Գեորգին վախճանվում է։ Հնդիկ և հայ զինվիցներն իրենց հրամանատարի դիակը մեծ պատվով թաղում են հայկական ծեսերով, որը Գեորգու ցանկությունն է եղել։ Միր Կասիմը անգլիացիների դավադրությունից զայրացած, իր հրամանատարի վրեժը առնելու համար կարգադրում է սպանել երկրի բանտերում պահվող գերի ընկած բոլոր անգլիացիներին։

Հնդիկ հայրենասերները կորցնելով իրենց սիրելի հրամանատարին, զենքը վայր չեն դնում, այլ շարունակում են իրենց հերոսական պայքարը անգլիացիների դեմ։ Սակայն այժմ Միր Կասիմը գտնվում էր ավելի ծանր դրության մեջ, քանի որ նրա դեմ էին գործում նաև կենտրոնախույս նավարների ուժերը։

Անգլիական ռազմական խոշոր ուժերը, որոնք անցել էին արդեն վճռական գործողությունների, խորանում են երկրի ներսը։ Նրանք գրավում են Բենգալիայի քաղաքներն ու ամրոցները և մի քանի արյունոտ ճակատամարտերից հետո. շրջապատում և վերցնում են Փաթնանան։ Շուտով ընկնում է նաև Բաքսարը։

Հետագա դեպքերը ծանր շրջադարձ ունեցան Բենգալիայի նավաբի համար, որոնք և նրան ստիպում են հեռանալ քաղաքական ասպարեզից։

[1] Խոջամալյան, էջ 105։
[2] Նույն տեղում, էջ 106։

[1] Խոջամալյան, էջ 119։

Հայ հրամանատարները չուզենալով վերադառնալ անգլիացիների գրաված Բենգալիան, սիրով հայտնում են իրենց համաձայնությունը՝ ծառայելու Շուջա-Դովլա բանակում։ Նրանք երկար ժամանակ և մեծ նվիրվածությամբ են ծառայում հնդկական բանակում և հերոսաբար կռվում անգլիական գաղութարարների դեմ, որի պատճառով Ռաջան «յոյժ սիրեաց զազգս մեր և բերեալ զպարոն Գրիգոր Այվազեան արար զնա սպարապետ ինքան և ետ ի ձեռս նորա զզօրս բազումս... Գրիգոր արար կրկին զմեծամեծ քաջութիւնս... և ժողովեաց յազգէս մերմէ արս իբրև վաթսուն՝ որք կան այժմ աշխարհին Աւօտ և ունին զանուն քաջութեան սփռեալ ընդ ամենայն Հնդկաստան»[1]։

1760—63 թվականների հնդիկ ժողովրդի Բենգալիայում մղած ազատագրական կռիվներում աչքի են ընկնում հնդկական բանակում ծառայող մի շարք հայ հրամանատարներ։ Պատմական աղբյուրներում պահպանվել են հետևյալ հայ զինվորականների անունները՝ գեներալ Մարգար-Հովհաննես Քալանթարյան՝ նորջուղայեցի, հազարապետներ՝ Հարություն Մարգարյան՝ նորջուղայեցի, Պետրոս Աստվածատրյան՝ Հայաստանի Աղձնիք գյուղից, Մարտիրոս Գրիգորյան՝ մարաղեցի, Ղազար Հակոբյան՝ մարաղեցի, Սուքիաս Ամետիշյան՝ Ատրպատականից և այլն։ Նավաբի թիկնապահ զորախմբի հրամանատարն է եղել Հովհաննես Նազարյանը։ Խոջամալյանը հիշում է նաև հնդկական բանակում ծառայող չորս հարյուրապետների անունները՝ Մկրտիչ Զաքարյանին, Մելքոն Աստրախանցուն, Նիկողայոս Ջուղայեցուն և Հակոբ Ջուղայեցուն։

Ապստամբությունը արյան մեջ խեղդելուց հետո անգլիացիները անցնում են ռեպրեսիաների։ Հարկային գիշատիչ քաղաքականության և կողոպուտի արդյունքը եղավ 1769—70 թթ. սարսափելի սովը, որ Բենգալիայում ոչնչացրեց հարուստ և մարդաշատ Բենգալիայի բնակչության 1/3-ը, այսինքն՝ մոտ 10 միլիոն մարդու կյանք։

Անգլիական գաղութարարները հնդիկ ժողովրդի ազգային-ազատագրական շարժումը Բենգալիայում ճնշելուց հետո, վրեժխնդիր գտնվեցին նաև հնդկահայերի նկատմամբ. անգլիական համայնքների պալատը հատուկ քննության առնելով հնդկահայերի բռնած դիրքը Բենգալիայի իրադարձությունների ժամանակ, նրանց վարմունքը որակեց իբրև «անշնորհակալական» ակտ և զրկեց հայերին արևելյան հնդկական ընկերության պայմանագրով նախկինում հայ վաճառականներին շնորհված բոլոր առանձնաշնորհումներից[1]։

[1] Խոջամալյան, էջ 140։

133 Մադրասահայ խմբակի ազատագրական ծրագրերը։

Մադրասի հայկական գաղթօջախը բացառիկ խոշոր դեր է ունեցել հայ ժողովրդի ազատագրական գաղափարախոսության ձևավորման բնագավառում։ Նա քաղաքական զարթոնքի մունետիկն է հանդիսացել հայ իրականության մեջ նոր ժամանակներում՝ տալով այնպիսի ականավոր ներկայացուցիչներ, ինչպիսին Շահամիր Շահամիրյանը, Մովսես Բաղրամյանը, Հարություն քահանա Շմավոնյանը, Հակոբ Շահամիրյանը և ուրիշներ։

Նախքան մադրասահայ ազատագրական խմբակի մասին ըստ էության խոսելը, անհրաժեշտ ենք համարում կանգ առնել այն հարցի վրա, թե ինչո՞ւ Հայաստանից շատ հեռու հնդկական հողում և այն էլ առևտրական միջավայրում, ծնունդ առավ և ձևավորվեց հայ ժողովրդի ազատագրության գաղափարախոսությունը։

Հնդկաստանը, ինչպես տեսանք, նպաստավոր այն միջավայրն էր, ուր վաղուց ի վեր հաստատվել ու առևտրական լայն գործունեություն էին ծավալել հայ վաճառականները։ Եվրոպացիների Հնդկաստան գալուց շատ առաջ հայ վաճառականներն իշխում էին հնդկական շուկայի վրա։ Սկզբում հայ և եվրոպական առևտրականների հարաբերությունները այնքան էլ վատ չէին, սակայն եվրոպացիների Հնդկաստանում հաստատվելուց հետո դրությունը փոխվեց՝ սկսվեց կատաղի պայքար եվրոպական այլևայլ ընկերությունների և հայ վաճառականների միջև։ Նյութական լայն հնարավորություններ և թիկունքում ռազմական մեծ ուժ ունեցող եվրոպացիների մրցմանը դիմանալու համար, ցրիվ գործող հայ առևտրականները հարկադրված եղան եվրոպացիների օրինակով միավորվել։

Հայ վաճառականների միավորվելու առաջին փորձերը կատարվեցին Մադրաս քաղաքում, ուր հայկական ստվար բնակչություն էր ապրում։ Մադրասը Հնդկական թերակղզու արևելյան ափի վրա գտնվող ամենից խոշոր և բանուկ նավահանգիստն էր։ Այստեղ էին կենտրոնացած ինչպես եվրոպական, այնպես էլ հայկական առևտրական մրցակցող գլխավոր ուժերը։

Փոքրաթիվ հայ վաճառականների այս համախմբումը, ինչպես գիտենք, առանձին օգուտ չտվեց. հայ վաճառականները բացահայտ պարտություն կրեցին։

[1] Հայկ. ՍՍՌ ԳԱ պատմության ինստիտուտի արխիվ, գործ № 148, էջ 21։

Պարտության պատճառը, իհարկե, հայ վաճառականների անշրջահայեցողությունը և կամ նախաձեռնության պակասը չէր, այլ այն, որ մրցության մեջ միջամտեց բռնի ուժը. անգլիական, հոլանդական և ֆրանսիական առևտրականների թիկունքում կանգնած էին իրենց պետությունները, որոնք ցանկացած միջոցառումները գործադրում էին անպաշտպան հայ վաճառականների նկատմամբ։ Այս անհավասար մրցության մեջ շատ ցայտուն դրսևորվեց հայ վաճառականների քաղաքական որբությունը և այդ ամենը ըստիպեց նրանց սթափվելու. երբեմնի անտարբեր հայ վաճառականն այժմ սկսեց մտածել հայ անկախ պետականություն ունենալու մասին։

Հնդկահայ վաճառականների շփումը և մրցությունը եվրոպական զարգացած և քաղաքական ու կուլտուրական մեծ փորձ ունեցող առևտրականների հետ, ուսուցողական խոշոր նշանակություն ունեցավ. նա հնարավորություն տվեց նրանց մոտիկից ծանոթանալու գոյություն ունեցող եվրոպական առաջադեմ գաղափարախոսությունների հետ և օգտագործելու դրանք իրենց ընթացիկ քաղաքական ծրագրի նախագծումների ժամանակ։

Ե՞րբ է կազմակերպվել մադրասահայ ազատագրական խմբակը և քանի՞ հոգի են եղել նրա կազմում, ստույգ ոչինչ հայտնի չէ։ Գիտենք միայն, որ խմբակի կենտրոնական դեմքը, նրան ուղղություն տվող անձնավորությունը Շահամիր Շահամիրյանն է հանդիսացել՝ նախկին պարսկահայ մի արհեստավոր, որ գալով ու հաստատվելով Մադրասում, վաճառականությամբ ձեռք էր բերել հսկայական հարստություն[1]։

Խմբակը 1771 թվականին հիմնում է իր տպարանը՝ նպատակ ունենալով հայերեն լեզվով հրատարակելու հայ ժողովրդի ինքնագիտակցությունն արթնացնող, ազատագրական շարժումները պրոպագանդող գրականություն։

Մադրասի հայկական այդ տպարանից առաջին անգամ 1772 թվականին Մովսես Բաղրամյանի հեղինակությամբ լույս է տեսնում «Նոր տետրակ, որ կոչի յորդորակ» վերնագրով գիրքը, որը փաստորեն Մադրասի հայրենասիրական խմբակի քաղաքական կոչն է հանդիսացել, զարթոնքի ազդարարը։ Գրքի տիտղոսաթերթում նշվում է, որ նա գրված է «Սակս սթափելոյ երիտասարդու-

1 Օգտվել ենք պրոֆ. Ա. Գ. Աբրահամյանի 1947 թվականի մարտ ամսում Կալկաթայում տեղի հայ համայնքի համար կարդացած դասախոսությունից, որի համառոտ աղագրությունը հրատարակվել է «Էջմիածին» ամսագրում (№5—6, էջ 33—54)։

թեան և մանկանց Հայկազեանց ի վեհերոտեալ և հեղգացեալ թուլութենէ քնոյ ծուլութենէն»[1]։ Գրքի սկզբում նախ տրվում է Հայաստանի համառոտ պատմությունը և աշխարհագրությունը, պատկերվում է այն ծանր վիճակը, որի մեջ գտնվում է Հայաստանը օտար լծի տակ. «Կարկաչահոս մեր գետերը արյան փոխվեցին, կաթնաբուխ և մեղրածորան մեր աղբյուրները լեղի դարձան»[2]։ Հեղինակը Մայր Հայաստանի անունից ողբում է նրա թշվառ վիճակը. «Երբեմնի ծիրանազգեաց մայր թագուհի էի չքնաղ, ամբողջ հայ ժողովրդի համար, իսկ այժմ ձորձ հագած անմխիթար, այրիացած եմ և լկված օտարի կողմից»[3]։

Բռնակալների, ասում է նա, երկրում կատարած կեղեքումները կարելի է չափել վերցրած հարկերով, իսկ «թե որքա՞ն ոսկի և արծաթ է տվել հայ ժողովուրդը օտարին, թվում է, թե չափ ու սահման չունի»[4]։ Նա կոչ է անում սթափվել, ազգային ինքնագիտակցության գալ։ «Եկե՛ք դուրս գանք թմրության քնից, եկե՛ք սթափվենք,— բացականչում է նա։— Եկե՛ք միասին մտածենք, մինչև ե՞րբ մեր արյուն-քրտինքը, վաստակը թողնենք հափշտակելու օտարին»[5]։

Հայ երիտասարդության հայրենասիրական զգացմունքները հրահրելու նպատակով նա դիմում է ընթերցողներին հայ աղջիկների անունից. «Առեք,— ասում է նա,— թշնամիներից մեր վրեժը, այդ են պահանջում գեղապաճուճ Արամյան աղջիկները»[6]։

Բաղրամյանը նշված աշխատության մեջ լրիվ հավատացած է աստվածային նախախնամությանը, նա գտնում է, որ ազատագրության համար պայքարող մարդկանց աստված անվարձահատույց չի թողնի. «Հայաստանի վրայից,— գրում է նա,— կանցնի մառախլապատ և խավարամած աղջամուղջը գիշերվա, դուրս կգա արեգակը, կանցնի դժնդակ ձմեռը և վրա կհասնի ծաղկածին մայիսը, նուշակաբեր գարունը, որով կզվարճանա Մայր Հայաստանը»[7]։ Բաղրամյանը կանգ է առել նաև հայոց պատմության փիլիսոփայության վրա և վերլուծել այն պատճառները, որոնք հայ պետականության կորստյան պատճառ են դարձել։ Այստեղ նա քննա-

1 M. Seth, Shaameer Soolthanoom (Տես «Al», էջ 587—592)։

2 Նոր տետրակ, որ կոչի յորդորակ, Մադրաս, 1772, էջ 19 (մեջբերումները բերում ենք աշխարհաբար)։

3 Նույն տեղում, էջ 12։

4 Նույն տեղում, էջ 19։

5 Նույն տեղում, էջ 14։

6 Նույն տեղում, էջ 16։

7 Նույն տեղում, էջ 36։

գատում է ավանդական այն սխալ կարծիքը, ըստ որի հայ ժողովրդի դժբախտության պատճառը նրա կրոնական օրինազանցությունների մեջ պետք է փնտրել։ Հայերը մեղք են գործել, դրա համար էլ աստված նրանց պատժում է։

«Յորդորակ»-ում մանրամասն քննված և բոլորովին նոր ձևով է բացատրված հայ պետականության անկման պատճառները։ Այստեղ Հայաստանի քաղաքական անկախության անկման առաջին հիմնական պատճառը՝ կառավարման միապետական ձևն է համարվում։ Մարդը սխալական է. եթե հասարակ մարդու սխալը անձնական վնասի պատճառ կարող է հանդիսանալ, ապա իշխանավորինը՝ ազգային ողբերգությունների տեղիք է տալիս. «...ամենայն, որ ի հասարակաց սխալի, կամ մեղանչէ՝ անձին և եթ վնաս բերէ, իսկ իշխանին սխալումն ո՛չ միայն վնասս, այլև երբեմն հարուածս մեծամեծս և աշխարհաւերութիւնս բերէ ի վերայ բոլոր ազգին ըստ այմ»[1]։

Հայ պետականության անկման մյուս պատճառն այն է, որ թշնամին մեզ հաղթել է ո՛չ թե բազկի զորությամբ, այլ՝ խորամանկությամբ. մեր երիտասարդները թշնամու դեմ կռվելու փոխարեն, իրար դեմ են կռվել, իսկ այդ մեծ չափով թուլացրել է հայ ժողովրդի պաշտպանական հզորությունը։

«Յորդորակ»-ի հեղինակը չի բավարարվում անցյալի թերությունները միայն մատնացույց անելով, նա միջոցներ է առաջարկում նրանց վերացնելու համար։ Նրա կարծիքով, հայ ժողովրդին իր ընկած վիճակից բարձրացնելու միակ միջոցը, նրան կրթություն տալը, դաստիարակելն է։ Նա առաջարկում է ամենուրեք բաց անել դպրոցներ և բարձրացնել հայ երիտասարդների ինքնագիտակցությունը։ Նա պահանջում է նաև հրատարակել հայ երիտասարդության սրտում հայրենասիրական զգացմունք արթնացնող գրականություն։

«Յորդորակ»-ի հրատարակումը ռումբի շառաչով է պայթում հայ իրականության մեջ։ Նրա հանդես գալը ազատամիտ շրջանները ողջունում են, իսկ պահպանողականները՝ սուր ճոճում։ Առանձնապես թշնամանքով է դիմավորում էջմիածինը. Սիմեոն կաթողիկոս Երևանցու բանադրում է Մովսես Բաղրամյանին և Շահամիրյանից պահանջում հավաքել լույս տեսած բոլոր գրքերը և այրել։ Նա «Յորդորակ»-ը համարում է «դիւաշունչ» գիրք, իսկ իրեն՝ Բաղրամյանին՝ «պակաս ի խելաց, առանց շրջահայեցողու-

[1] «Յորդորակ», էջ 159։

թեան և տղայաբարոյ»։ Նա հանդիմանում է նաև Շահամիրյանին այն բանի համար, որ նա տպարան է հիմնել և գրքեր է ուղում հրատարակել, որը չի պատշաճում նրան որպես «աղնուատոհմ իշխանի», քանի որ տպագրությունը «է գործ գռեհիկ և յետին աղքատի»[1]։

«Յորդորակ»-ի հեղինակը սակայն Բաղրամյանը չէր միայնակ. նա Մադրասի հայրենասեր խմբակի ծրագրին գրական ձև տվողն էր միայն։ Կաթողիկոսի սպառնալիքը ուղղված էր Շահամիրյանին և նրա գլխավորած խմբակին, իսկ նրանք այնքան էլ հեշտությամբ տրամադիր չէին իրենց որդեգրած սկզբունքից ետ կանգնել։ Այդ երևում է այն փաստից, որ 1773 թվականին, երբ Կալկաթայից Մադրաս է գալիս Հովսեփ Էմինը՝ Հայաստան ուղևորվելու համար՝ կազմակերպելու այնտեղ ազատագրական շարժումները, Շահամիրյանը և նրա համախոհները հավանություն են տալիս նրա ծրագրին և խոստանում նյութապես օժանդակել՝ տարեկան տրամադրելով նրան 12000 ռուպի դրամ։ Մադրասի հայ վաճառականներից մեկը՝ խոջա Գրիգորը, խոստանում է անգամ իր ողջ հարստությունը տրամադրել ազատագրության նպատակին։ Պայմանով, եթե ազատագրական այդ ծրագիրը հավանություն գտնի Սիմեոն կաթողիկոս Երևանցու կողմից։ Սակայն այդ խափանվում է, որովհետև Էմինը Մադրասում գտնված օրերին, այնտեղ ժամանած էջմիածնի նվիրակ Հովհաննես եպիսկոպոսը կտրականապես մերժում է այդ ծրագիրը[2]։

Ի դեպ, Էմինի Մադրասում գտնվելը և նրա վարած բանակցությունները մադրասահայ խմբակի ներկայացուցիչների հետ, ցույց է տալիս, թե ինչ ակտիվությամբ են գործել հնդկահայերն այդ ծրագիրն իրագործելու համար։ Հայտնի է, որ հնդկահայ վաճառականի որդի Հովսեփ Էմինը վաղուց թողել էր իր ծննդավայրը՝ Կալկաթան, մեկնել Լոնդոն, զինվորական կրթություն ստացել և երկար թափառել Ռուսաստանում ու Վրաստանում մի նպատակով միայն՝ տիրապետել ժամանակակից ռազմական արվեստին և գալ ու ծառայել իր ժողովրդի ազատագրության գործին։ Էմինը իր կենսագրության մեջ սրտի կսկիծով գրում է. «Մեր ժողովուրդը արյուն քրտինք է թափում մի կտոր հացի համար, և հենց որ շատ ու քիչ դրամ է հավաքում, անմիջապես կողոպուտի է ենթարկվում մե՛րթ փաշայի, մե՛րթ խանի, և մե՛րթ նավաբի կողմից հնարած

[1] «Դիւան Հայոց պատմութեան», գիրք VIII, II մաս, էջ 573—577։

[2] А. Р. Иоаннисян, Иосиф Эмин, Ереван, 1945, էջ 299—300։

ստահոդ և հիմար պատճառաբանություններով, որովհետև նա ձեռքին զենք չունի և աշխատում է իզուր»[1]։

1788—1789 թվականներին Մադրասի տպարանից լույս է տեսնում «Որոգայթ փառաց» աշխատությունը, որը պարունակում է ապագայում ստեղծվելիք ժողովրդական հանրապետության սահմանադրության նախագիծը։ Ուշագրավ են այն հարցերը, որոնք առաջ են քաշված ազատագրական խմբակի կողմից նրա մեջ։

Ամենից առաջ, հատկանշական է այն, որ Մադրասի հայ հայրենասերները որոշակի այն տեսակետն են պաշտպանում, որ Հայաստանի նոր պետությունը պետք է լինի ո՛չ թե միապետություն, այլ սահմանադրական հանրապետություն։ Կառավարությունը, ըստ այդ սահմանադրության, ընտրվում է ժողովրդի կողմից երեք տարի ժամանակով։ Գործադիր իշխանության գլուխ է կանգնում նախագահը։ Հայտարարվում է կրոնի և խղճի կատարյալ ազատություն։ Ստեղծվում են զանազան նախարարություններ։ Պետական բոլոր պաշտոնյաներն ընտրվում են։ Կազմակերպվում է 90000 հոգուց բաղկացած պետական մշտական բանակ։ Պետական գումարները գոյանում են զանազան տուրքերից ու հարկերից, որոնք հավաքվում են ժողովրդից ըստ ունեցվածքի՝ մեծ հարստություն ունեցողները շատ են տալիս, քիչ ունեցողները՝ քիչ[2]։

Մադրասի հայ հայրենասիրական խմբակը անցյալի հայ պետականության հիմնական սխալներից մեկը, որը նրա կործանման պատճառն է դարձել, այդ կառավարման միապետական ձևն է համարել։ Մարդն ինչքան էլ կատարյալ լինի, չի կարող զերծ լինել արատներից. «Դու,— ասված է «Որոգայթ փառաց»-ում,— մահվան երկյուղի պատճառով թուլացնում ես քո ազատությունը և հնազանդվում անօրենին... Անասուններն անգամ իրենց մեջ ինքնակամ և ինքնակալ հրամայող չունեն, ուրեմն որքա՜ն ամոթ է բանական մարդուն լինել հնազանդ մի մարդու, որն իր նմանությունն և բնությունն ունի»[3]։

«Որոգայթ փառաց»-ում ծանր խոսքեր կան հին հայկական կառավարող շրջանների հասցեին. «Նոքա (այսինքն՝ հայ թագավորները և իշխանները—Ռ. Ա.),— ասված է այնտեղ — անբարբշտանալով անիրաւացան և գոռոզութեամբ ու ինքնահաճութեամբ

[1] The life and adventures of Joseph Emin, Calcutta, 1918, էջ 58։

[2] Տվյալ հարցին նվիրված արժեքավոր ուսումնասիրություն է Գ. Հ. Գրիգորյանի «Հայ առաջավոր հասարակական-քաղաքական մտքի պատմությունից» ուսումնասիրութ., որը լույս է տեսել Երև. 1957 թ.

[3] «Որոգայթ փառաց», Մադրաս, 1773, էջ 32։

վարելով իշխանութիւնն իւրեանց ի վերոյ աշխարհին Հայոց՝ զըրկելով, կողոպտելով, լլկելով և ամենայն անասնական բնութեամբ շարժմամբ անցնելով ժամանակս կենաց իւրեանց, մինչ կորեան ինքեանք և կորուսին պատիւն մեր և մատնեցին սերունդն ազգին Հայոց ի գերութիւն և աշխարհն ժառանգութիւն այլազգեայց»[1]։

Մադրասի հայրենասերները որոշակի առաջ էին քաշում ավատական հիերարխիան վերացնելու և բոլոր քաղաքացիներին հավասար իրավունք շնորհելու հարցը։ Քաղաքացին պետք է գնահատվի ոչ թե ծագումով, այլ հասարակության համար կատարած օգտակար աշխատանքով. «Երբեմն—ասում են նրանք—հովիվ մի քաջ, որում ընդդիմանալ գայլոց և անձն իւր դնել ի վերայ ոչխարաց, բարեգոյն, ազատ և պատուելի մարդ կարէ լինիլ, քան թե իշխան մի երկչոտ, յոռի և ծոյլ»[2]։ Մադրասի հայրենասիրական խմբակն առաջ է քաշել ազատ մարդու գաղափարը,— չպետք է լինեն սուրուկներ և ճորտեր։ Շահամիրյանը 1787 թվականին Հերակլ թագավորին գրած իր նամակում խորհուրդ է տալիս. «... ջախջախեա լուծն ծառայական, զի մի երևեսցի ի վերայ պարանոցի ժողովրդեան քո, և արա նոցա ծառայ միայն օրինաց իւրեանց»[3]։

Մադրասի հայրենասերների կարծիքով նոր կարգերը հիմնված պետք է լինեն օրենքի վրա։ Օրենք չեղած տեղում չի կարող լինել ո՛չ արդարություն, ոչ հավասարություն և ո՛չ էլ ազատություն։ Ժողովուրդը, նրանց կարծիքով, պետք է լինի կառավարողը, իսկ թագավորը՝ օրենքն է։ Օրենքները, սակայն, պիտի համապատասխանեն ժողովրդի գոյավիճակին և պիտի սահմանվեն «ըստ կամաց և ըստ հաճոյից համահաւասար ժողովրդոց»[4]։ Մադրասի հայ հայրենասերներն առաջ են քաշել նաև եկեղեցին պետությունից բաժանելու հարցը։ Նրանք պահանջում են. «Աշխարհական մի խառնեսցի ի գործ եկեղեցւոյ, եկեղեցական մի՛ խառնեսցի ի գործ աշխարհականի»[5]։ Ուշադրության արժանի է այն, որ Մադրասի հայրենասերները ճիշտ են նշել հայ ժողովրդի ազատության ուղին։ Չնայած այս խմբակի անդամներից շատերը, այդ թվում նաև Շահամիրյանը, չեն եղել Հայաստանում, չեն տեսել իրենց երազած հայրենիքը, սակայն այնքան մանրամասն տեղեկություններ են հավաքել Անդրկովկասում ստեղծված քաղաքական իրադրու-

[1] «Որոգայթ փառաց», Մադրաս, 1773, էջ 34։

[2] Նույն տեղում, էջ 71։

[3] ՀՊՄ, ձեռ. № 2949, թ. 276բ։

[4] «Որոգայթ փառաց», էջ 21։

[5] «Նշաւակ», էջ 77։

թյունների վերաբերյալ, որ ճիշտ են ծրագրել թե ուժերի ինչ հա-մագործակցությամբ պետք է գործել։

Մադրասի հայրենասերներն այն տեսակետն են պաշտպանել, որ հայ և վրաց ժողովուրդները միասնական ձևով պետք է հան-դես գան, այլապես նրանք ո՛չ կարող են կատարյալ ազատություն ձեռք բերել և ո՛չ էլ ձեռք բերած ազատությունը կարող են պաշտ-պանել։ Նրանք մեծ ակնկալություններ են ունեցել հատկապես Վրաստանի Հերակլ թագավորից։ Շահամիրյանն իր նամակներից մեկում գրել է Հերակլին. «Կարգադրեսցի յօրէնս և ի օրինաց քոց փրկեա ազգն Հայոց և Վրաց ի ծառայութենէ բռնաւորաց... լեր նման Գեորգ V թագաւորի Իսպանացւոց և նման Պետրոս Ալեքսո-վիչի կայսեր Ռուսաց»[1]։ Ի դեպ, Հերակլ թագավորը Շահամիրյանի նկատմամբ հատուկ հարգանք է ունեցել. նա Շահամիրյանին շնոր-հել է իշխանի կոչում և հատուկ պատգամավորություն կազմել հայազգի Ռաֆայել Դանելբեգովի գլխավորությամբ իր հրովարտա-կը ուղարկել Հնդկաստան։ Մադրասի հայ հայրենասերների կար-ծիքով Հայաստանի ազատագրությունը լիարյուն և հաստատուն կարող է լինել միայն այն դեպքում, եթե մեծ Ռուսաստանն իր վրա վերցնի Հայաստանի հովանավորությունը։ Արղությանն իր մտե-րիմ Մինաս Դիլանյանին գրած նամակում խոսելով Շահամիրյանի այս տեսակետի մասին, հետևյալն է գրում. «Շահամիր աղայի թուղթը ռուսերեն թարգմանել տվի. կարելի է նա ուղղել տալ և հայերենի հետ միասին ներկայացնել նորին պայծառափայլությա-նը... Նա բոլոր ազգի փրկությունը ռուս կառավարությունից է սպասում և ամբողջ ազգի ուշադրությունը հրավիրում է այս կետի վրա»[2]։

Մադրասի խմբակն առաջադրելով Հերակլի աջակցության և Ռուսաստանի հովանավորության հարցերը, սակայն գտնում է, որ հայ ժողովուրդն իր հույսն իր վրա պետք է դնի, ինքը պետք է կո-փի իր ազատությունը, «եթե ոչ, ապա ո՞ւմ երբէք լինի փուլթ առ այն, որ մեք վասն մեր ոչ ջանամք»[3]։

Մադրասի խմբակը մեծ հույսեր էր կապում Ղարաբաղի մե-լիքների հետ, որոնք քաղաքական կիսանկախ վիճակում էին գտ-նվում, փոքրիկ զորամասեր ունեին և կարող էին հենակետ հան-դիսանալ ազատագրական շարժումներին։ Նրանք աշխատել են զի-նել ղարաբաղցիներին և վերացնել մելիքների միջև գոյություն

1 ՀՊՄ, ձեռ. № 2949, թ. 276բ։
2 «Փորձ», 1881, 2, էջ 24։
3 «Յորդորակ», էջ 10։

ունեցող անմիաբանությունը։ Արղությանը Շահամիրյանին գրած իր նամակում մելիքների մասին հետևյալ հանգամանացուցիչ տեղե-կությունն է հաղորդել. «...Մելիքքն ի ձեռս յարդարման մերոյ միաւորեցան ոխտիւք երդման և յամենայն զօրութենէ իւրեանց ջանալ հաճեցան կատարել զայն»[1]։

Հարց է առաջանում, որքա՞ն առարկայական էին Մադրասի հայրենասեր խմբակի առաջադրած լուսավորական գաղափարները և նրանց գծած ազատագրական ուղին։ Դեռևս իր ժամանակակիցնե-րը մեղադրել են Շահամիրյանին, որ նա ճիշտ չի ըմբռնում ժա-մանակը, ցանկանում է ժողովրդին բարձրացնել մարտի Թուրքիա-յի և Պարսկաստանի դեմ, առանց հաշվի առնելու հետևանքները։ Ղուկաս կաթողիկոսն իր 1789 թ. սեպտեմբերի 11-ին Շահամիր-յանին գրած նամակում ճիշտ չի համարում այն կարծիքը, որ իբր թե էջմիածինը չի ցանկանում հայ ժողովրդի ազատագրությունը. «...Մի՞թէ յիմար իցեմք, որ ի տառապանաց զերծանիլ չկարիցեմք. ձկունք, որսացեալք ի ցանցս, և Թռչունք ըմբռնեալք, ջանան զեր-ծանիլ, ապա որքա՞ն ևս առաւել բանականքս բաղձամք ազատու-թեան»[2]։ Նա բացատրում է, որ «նոքա (այսինքն՝ պարսիկները և Թուրքերը — Ռ. Ա.) իբրև զաւազ ծովու են և մենք սակաւաւորք, նոքա ըստ աշխարհային հանգամանաց զօրաւորք և մեք տկարք»։ Ապա շարունակելով գրում է. «Առ այս ասիցէ՝ թէ հաճիք ընդ ծա-ռայութիւն այլազգեաց և ոչ սիրէք զազատութիւն. բայց լինէր թէ դու... գայիր և շրջագայեիր ի Ջուղայու մինչ ցասր...»[3]։

XVIII դարի վերջին երկու տասնամյակներում, հայ հասարա-կական առաջադեմ շրջանների, այդ թվում նաև մադրասցիների ճնշման տակ, Արղությանի և Լազարյանների միջոցով դիվանագի-տական աշխատանք է ծավալվում ռուսական արքունիքում՝ աշխա-տելով արագացնելու ռուսական զորքերի մուտքը Հայաստան։ Եվ այդ արվում է այնպիսի եռանդով, որ Արղությանը Շահամիրյանին գրած իր նամակներից մեկում անհրաժեշտ է համարել էջմիածնի այդ շտապողականության համար դիտողություն անել։ «Անծանօթ է նոցա (այսինքն՝ էջմիածնականներին—Ռ. Ա.) իրն զօրութեան և բարութեան, որ ծածկեալ կայ ի ծերակուտական զօրութիւնն, այլ միայն հայցեն՝ զմեզ փրկեք. երբ փրկեն սրով ըստ օրինի թագա-ւորաց, հարկաւորին ծառայ առնել իւրեանց»[4]։

1 ՀՊՄ, ձեռ. № 2699, թ. 101ա—101բ։
2 ՀՊՄ, ձեռ. № 4501, թ. 262ա։
3 Նույն տեղը, թ. 262ա։
4 ՀՊՄ, ձեռ. № 2699, թ. 102ա։

Ի դեպ, ինքը Սիմեոն կաթողիկոսը հետագայում վերանայեց է Մովսես Բաղրամյանին տված իր բանադրանքը և արձակել նրան բանադրանքից։ Ղուկաս կաթողիկոսը Հնդկաստանի նվիրակ Գրիգոր վարդապետին 1781 թ. մարտի 15-ին գրած նամակում հայտնել է հետևյալը. «Լուսահոգին (այսինքն՝ Սիմեոն Երևանցին — Ռ. Ա.) քանիցս անգամ յետ այնորիկ (այսինքն՝ Բաղրամյանին բանադրելուց հետո — Ռ. Ա.) գրեաց զթուղթս օրհնութեան և միխթարութեան և շահեցողութեան առ պարոն Շահամիր ազայն և մանավանդ նա վասն Բաղրամեան Մովսեսին արձակման գիր էր խնդրեալ, լուսահոգին զայն ևս գրեալ յեղաց անցեալ ամին, որպես ահա տեսանելոց ես ի յօրինակն... ուրեմն՝ շատ լաւ ես արարեալ զայն մեղադրական թուղթն առնելդ»[1]։

(Մադրասի տպարանի հետագա հրատարակություններից ուշագրավ է 1783 թվականին լույս տեսած «Տետրակ, որ կոչի նշաւակ՝ վասն կառավարելոյ ինչս որբոց և առանց կտակ ննջեցելոց» խորագրով աշխատությունը)։ Նա որբերի խնամակալության ու անկարտակ մեռածների գույքի հոգաբարձություն չէ, այլ Մադրասի հայկական գաղթօջախի ինքնավարության կանոնադրությունը։

(Ի՞նչ նպատակ են ունեցել մադրասահայերը այս կանոնադրությունը կազմելիս։ Նրանց ընդհանուր խնդիրն է եղել նախ թույլ չտալ, որ նյութական ծանր պայմանների տակ սփյուռքի ցրված հայությունը ձուլվի, որպեսզի «...ոչ երբէք պակասի որդիք հայոց ոչ ի տանէ և ոչ ի տարր աշխարհէն» և ապա՝ ջանալ, որ հայկական կապիտալը ցրվի «իբրև փոշի առաջի հողմոյ», այլ մնա «ժառանգութիւն ազգին մերոյ»[2]։

(Մադրասցիները հիմնել են իրենց ընդհանուր դրամարկղը, որը կոչվել է «Սունդուկ որբոց»)։ Դրամարկղի գումարները հավաքվել են անդամների պարտադիր և կամավոր մուծումներից։ Հավաքված միջոցներն օգտագործել են դպրոցների, բարեգործության և ազգային այլ օգտակար նպատակների համար։ Թ. Ավդալբեգյանը, որը հանգամանորեն ուսումնասիրել է «Նշաւակ»-ը, գտնում է, որ «Մադրասի «անդուկ»-ը բարեգործական-ազգասիրական, բայց միաժամանակ առևտրային ձեռնարկություն է՝ կշռադատված և զուտ գործարար հիմունքներով»[3]։

[1] ՀՊՄ, ձեռ. № 4481, 78ա։

[2] Տետրակ, որ կոչի նշաւակ, Մադրաս, 1783, էջ 4։

[3] Թ. Ավդալբեգյան, Շահամիր Շահամիրյանն ու հնդկահայոց համայնական ինքնավարությունը XVIII դարում (տես «Տեղեկագիր ՀՍՍՌ Գիտությունների ակադեմիայի և տնտեսագիտության ինստիտուտի» № 4, էջ 49)։

Ինչքա՞ն ժամանակ է ուժի մեջ մնալու մադրասահայ ինքնավարությունը։ Նրա կազմողները այդ հարցին հետևյալ պատասխանն են տվել «Նշաւակ»-ի մեջ (բերում ենք աշխարհաբար). «Ինքնավարությունը պետք է պահպանի իր գոյությունը մինչև այն երջանիկ օրը, երբ աստված բավական համարի թափառական հայ ժողովրդի տառապանքները, դտնվի մեր երկրի կառավարիչը և հնարավոր կլինի հայ ժողովրդի օտարության մեջ թափծող մնացորդներին ցնծությամբ վերադառնալ իրենց մոր՝ գորովագութ Արարատյան աշխարհի գիրկը»[1]։

Մշակույթը

Հայ և հնդիկ ժողովուրդների միջև երկու հազար հինգ հարյուր տարուց ավելի գոյություն ունեցող փոխհարաբերությունները, լեզվի և մշակույթի ազգակցությունը, բնականաբար, պետք է որ թողնեին իրենց շոշափելի հետքերը երկու ազգակից կուլտուրաների մեջ։

Մեզ հասած պատմական բազմաթիվ փաստեր, պատմական և էթնոգրաֆիական նյութական կուլտուրայի հուշարձանները կամ նրանց առանձին քննողները խոսում են այն մասին, որ հնդկական հողի վրա ստեղծագործ հայ միտքը ստեղծում է կուլտուրական այնպիսի արժեքներ, որոնցից մի քանիսը դուրս են գալիս ազգային սահմաններից և մտնում հնդկական կուլտուրայի մեջ։

Հնդկական ճարտարապետական կուլտուրայի պատմության մեջ են մտել Մալաբարի շրջանում կատարած մի շարք շինարարություններ, որոնք հայ մտքի արգասիքներ են։ Հայտնի են հատկապես բազմանիստ երկհարկ կամուրջը, հոյակապ երկու քարե սանդուղքները 133 և 160 աստիճաններով և այլն։

Հնդկահայ կուլտուրայի մասին խոսելիս չպետք է մոռանալ Կալկաթայի «Հայկական» նավահանգիստը, հայ ճարտարապետների քաջ գծագրած և կառուցած հայկական եկեղեցիները, քարվանսարաները և զանազան այլ շինությունները, որոնց մեծ մասը հասել է մեզ և զարմանք են պատճառում իրենց ճարտարապետական գարմանալի կուլտուրայով։

Արտակարգ բարձր են եղել հատկապես հայ արհեստավորների ստեղծած կուլտուրական արժեքները։ Ռուսական Ալեքսեյ Միքայլովիչ ցարին ջուղայահայերի կողմից նվիրված նշանավոր գահի զարդերի մեծ մասը պատրաստել են հնդկահայ արհեստավորները։ Ամբողջ աշխարհին հայտնի են հայ վարպետների պատրաստած «Թաջ Մահալի» արծաթյա մակետները, ձեռագրերի կազմե-

[1] «Նշաւակ», էջ 53։

րը, որոնք իրենց արտակարգ նուրբ արվեստով հիացմունք են պատճառում նայողին։

Սակայն հնդկահայ կուլտուրայի ստեղծած բազմաթիվ արժեքների մեջ ամենից արժեքավորը՝ ո՛չ միայն հնդկահայ, այլ նաև ողջ հայ ժողովրդի կյանքում, այդ հայ պարբերական առաջնեկը՝ «Ազդարար»-ն է, որին բախտ է վիճակվել իր շուրջը համախմբելու հնդկահայ հասարակական, քաղաքական ու կուլտուրական կյանքը և նպաստելու հայ ազգային ազատագրական պայքարի գաղափարախոսության ձևավորմանը։ «Ազդարար»-ը տպվել է 1794—1796 թթ. Մադրասում Հարություն քահ. Շմավոնյանի կողմից։

Հայ հրապարակախոսը համարվում է նաև պարսկական տպագրության հայրը։ Առաջին անգամ Շմավոնյանն էր, որ ստանալով կառավարական թույլտվություն, իր համախոհ փորագրիչ Մատուր Զարիֆյանի օգնությամբ, 1795 թ. սկսում է իր տպարանում նաև պարսկերեն գրքեր տպել։

XVII—XVIII դարերում Հնդկաստանում գործել են հայկական գրչության օջախներ, ուր ընդօրինակվել են ձեռագրեր և կատարվել թարգմանություններ։ Հայկական ձեռագրեր են գրվել Սուրաթում, Կալկաթայում, Մադրասում, Բոմբեյում և այլ քաղաքներում։

Հնդկահայ համայնքները տվել են նաև իրենց ներկայացուցիչները գեղարվեստական գրականության բնագավառում։ Հնդկահայ ականավոր պոետներից է Զուլ-Ղառնայնը, որն իր խաղացած քաղաքական դիրքով, բարձրարժեք ստեղծագործությունով հայտնի է դարձել ողջ Հնդկաստանում։

Թող ընթերցողին չզարմացնի արտաքուստ տարօրինակ թվացող Զուլ-Ղառնայն անունը։ Ըստ տեղեկությունների, այդ անունը նրան մանուկ հասակում շնորհել է Աքբար Շահը (Զուլ-Ղառնայն՝ նշանակում է երկեղջյուր։ Այդպես են կոչել նաև Ալեքսանդր Մակեդոնացուն։ Այդ անունը խելքի և իմացության խորհրդանիշ է եղել և ոչ—«աստծու ծառա» կամ «Սուրբեն», հայկական անվան աղավաղում, ինչպես փորձել է մեկնաբանել Գ. Լևոնյանը)։

Զուլ-Ղառնայնի մասին մանրամասն, բայց արկածային պատումով, հաղորդում է Թ. Խոջամալյանը։ Ըստ այդ հաղորդման, նա եղել է Աքբարի որդեգիրը, դաստիարակվել է արքունիքում, իսկ Աքբարի մահից հետո, կառավարել է իրեն վստահած Զամբահարի երկրամասը և զանազան պատասխանատու պաշտոններ վարել Լահոռում, Բենգալիայում և Հնդկաստանի այլ վայրերում։ Կյանքի վերջում նա հեռացել է քաղաքական ասպարեզից և իրեն

նվիրել պոեզիային ու երաժշտությանը։ Այս բնագավառում նա այնքան է առաջ գնացել, որ նրա ստեղծագործությունների ընտիր մասերը մտել են հնդկական «Ռագամալներ»-ում։ («Ռագամալա»—երգարան, երգի և բանաստեղծության ժողովածու— Հնդկաստանում կոչվել են այն ժողովածուները, որոնց մեջ մտնում էին սիրված և հանրաճանաչ դարձած բանաստեղծությունները)։

Զուլ-Ղառնայը, ինչպես երևում է, ճանաչված է եղել ո՛չ միայն որպես պոետի, այլև խոշոր դրամատուրգի, երգերի և բանաստեղծությունների կատարողի։ Հնդկաստանի ահեղ տիրակալներից մեկը՝ շահ Ջհանգիրն իր հուշակավոր մեմուարներում գրում է. «Զուլ-Ղառնայնը Իսկանդարի՝ այն հայ մարդու երեխան է, որին բախտ վիճակվեց ծառայության մտնելու Աքբարի մոտ... Նա հանդիսանում է հնդկական երգերի վարպետ կատարող։ Նրա բանաստեղծությունների եղանակները խիստ ինքնատիպ են։ Այդ ստեղծագործությունները հաճախ կատարում էին ինձ համար՝ արժանանալով իմ հավանությանս»։

Սեթյանն իր գրքում բերել է հետաքրքիր տեղեկություններ Բրիտանական թանգարանի «Փադիշահ նամե» կոչվող մի ձեռագրից։ Այդ ձեռագրում խոսվում է Զուլ-Ղառնայնի մի պոեմի մասին, որը նվիրված է եղել Ջհանգիրի գահակալմանը։ Հնդկաստանի տիրակալն այնքան է հավանել հայ պոետի ստեղծագործությանը, որ նվիրել է նրան 4000 ռուպի։

Հայտնի է նաև Զուլ-Ղառնայնի մի ուրիշ պոեմը, որը նվիրված է Հնդկաստանի մայրաքաղաքը Ագրայից Շահջհանաբադ տեղափոխելուն։ Այս պոեմը ևս գրվել է շահ Ջհանգիրի անձնական պատվերով։ Հետաքրքիր է այն փոփոխությունը, որ կատարվել է այս պոեմում։ Զուլ-Ղառնայնը, հավանաբար ելնելով կրոնական նորմաներից, արքայի բոլոր հաջողությունները վերագրել է աստծուն։ Ջհանգիրը դժգոհ պոետի մեկնաբանությունից, ջնջել է տվել բոլոր տեղերում աստծու անունը և փոխարենն իրենը գրել։

Զուլ-Ղառնայնի բոլոր ստեղծագործությունները գրված են իր ժամանակի հնդկական բանաստեղծության գործածական պարսկերեն լեզվով։

Դժբախտաբար, մեզ ոչինչ հայտնի չէ նրա հայերեն ստեղծագործելու մասին։ Բայց ելնելով այն փաստից, որ նա ազգությամբ հայ է և կապված է եղել հնդկահայ շրջանների հետ, և մոր մահից հետո դաստիարակված է եղել Աքբարի հայազգի կնոջ մոտ, հավանական է ենթադրել, որ նա գրած պետք է լինի նաև հայերեն բանաստեղծություններ։

Հնդկահայ մշակույթն արժեքավորելիս, չի կարելի լռությամբ անցնել մեծանուն մի այլ պոետի կողքով, որի անունը հաճախ դրվում է Ֆիրդուսու, Սայադի, Հաֆզի և Խայյամի անունների կողքին։

Հնդկահայ այդ պոետը հայտնի է Սարմատ անվան տակ։ Նրա մասին հավաստի տեղեկություն հաղորդում է Հենրի Քիենը. «Սարմադը,—գրում է նա,—մի հայ վաճառականի պոետիկ կեղծանունն է, որը Հնդկաստան էր եկել դեռևս Շահ Ջհանի օրոք... Նա լավ պոետ էր, հիանալի տիրապետում էր բանաստեղծություններ հորինելու արվեստին պարսկերեն լեզվով»։

Գալով Հնդկաստան, որոշ ժամանակ անց նա հաստատվում է Դեյլի քաղաքում, թողնում է առևտուրը և ամբողջապես նվիրվում պոեզիային՝ ընդունելով հնդկական ֆակիրի դաժան կյանքի ուղին։ Նրա ֆակիրության հարելու կոնկրետ շարժառիթները մեզ հայտնի չեն։ Ժամանակակիցներն այդ մասին մեզ իրարամերժ բացատրություններ են տալիս։

Ջնայած մեզ են հասել Սարմատի ստեղծագործությունների մեծ մասը, բայց նրանցից շատ քիչ բան է հրատարակվել։ Լույս է տեսել խմորատիպ մի ժողովածու Հեղինակի նկարով Լահոռում, Դեյլիում և Բոմբեյում։ Դոկտոր Ռեսի մի տեղեկության համաձայն, Սարմատի բանաստեղծությունների ձեռագիր մի ժողովածուն գըտնըվում է Ռամպուրի ձեռագրատանը։

Սարմատի թողած գրական ժառանգությունը, դժբախտաբար, մենք այժմ արժեքավորելու հնարավորություն չունենք։ Մենք ձեռքի տակ ունենք միայն նրա առանձին քառյակների անգլերեն թարգմանությունը, որոնց հիման վրա դժվար է ամբողջական գաղափար կազմել բնագրի մասին։ Բայց այն հանգամանքը, որ ժամանակակիցները նրան դասել են արևելքի ականավոր բանաստեղծների շարքը, վկայում է նրա հանրաճանաչ մեծության մասին։

Սարմատը, ինչպես երևում է, ստեղծագործական սկզբունքով, հետևում էր Հաֆեզին և Խայյամին։ Իր քառյակներից մեկում նա գրել է.

«Ես գործ չունեմ մյուս պոետների մտքի ու ճաշակի հետ.
Գազելներ ստեղծելիս հետևել եմ Հաֆզին,
Ռուբայիներ գրելիս աշակերտել եմ Խայյամին,
Բայց նրա գինուց չեմ խմել և հարբել...»։

Սկզբնաղբյուրներում պահպանված տեղեկություններից երեվում է, որ լարված հարաբերություններ են սկսել Սարմատի և Հնդկաստանի ինքնակալ Աուրենգզեբի միջև, որը սրվելով հասել է այն աստիճանի, որ թագավորի հրամանով Սարմատը գլխատվել է։

Աուրենգզիբի կենսագիր Ալի-խան Ռազին, որը ներկա է եղել Սարմատի գլխատմանը, նկարագրել է, թե ինչպիսի արհամարհանքով է ընդունել մեծ պոետն իր մահը։ Գլխատվելուց առաջ նրա հորինած երկտողերից մի քանիսը գրի է առնվել։ Նրանցից վերջինը հետևյալն է.

«Խավար էր շուրջս, երբ բացի աչքերս իմ խորը քնից,
Տեսա խավար է պատում աշխարհը, աչքերս հոգնած փակում եմ նորից»։

Սարմատը գլխատվել է 1661 թվականին Դեյլիի աշխարհահռչակ Ջամմա մեջիդի մոտ և թաղված է այնտեղ։ Հնդիկ ժողովուրդը սրբացրել է նրա հիշատակը. հնդիկ հավատացյալները ուխտի են գալիս և ծաղիկներ դնում նրա գերեզմանի վրա։



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 5
Հնագույն տեղեկություններ Հայաստանից դուրս գտնված հայերի մասին 17
Բյուզանդիայի հայ գաղթավայրը 30
Հայ գաղթօջախները Վրաստանում 91
Հայերը Կիևյան Ռուսիայում և Մերձվոլգյան երկրներում 112
Եգիպտոսի հայ գաղթավայրը 126
Հայ-հաբեշական առընչումները 146
Ղրիմի հայ գաղթավայրը 157
Լեհաստանի հայ գաղթավայրը 187
Պարսկահայ գաղթավայրը 234
Երուսաղեմի միաբանական գաղթօջախը 264
Իտալիայի հայ գաղթավայրը 271
Բուլղարիայի հայ գաղթավայրը 305
Ռումինիայի հայ գաղթավայրը 323
Հայերը Հունգարիայում 350
Ռուսաստանի հայ գաղթօջախները XV—XVIII դարերում 362
Հայերը Հոլանդիայում և Բելգիայում 403
Կիպրոսի հայ գաղթօջախները 411
Հայ գաղթօջախները Ֆրանսիայում 418
Սիրիայի և Միջագետքի հայ գաղթօջախները 425
Հնդկաստանի հայ գաղթօջախները 436

ՀՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ԳՐԱԴԱՐԱՆ

Աշոտ Դարնգինի Աբրահամյան

Համառոտ ուրվագիծ
հայ գաղթավայրերի պատմության

Խմբագիր՝ Ստ. Մելիք-Բախշյան

Գեղ. խմբագիր՝ Մ. Բաղդասարյան
Տեխ. խմբագիր՝ է. Ճանճապանյան
Վերստուգող սրբագրիչներ՝ է. Պողոսյան
Ա. Մանվելյան

ՎՖ 09518 Պատվեր 2081 Տիրաժ 10000

Հանձնված է արտադրության 29/X 1963 թ.
Ստորագրված է տպագրության 18/III 1964 թ.
Թուղթ 60×92 1/16, տպագր. 30,5 մամ., հրատ. 25,5 մամ.
Գինը՝ 1 ռ. 23 կոպ.

Հայկ. ՍՍՌ Մինիստրների սովետի մամուլի պետական կոմիտեի
պոլիգրաֆ արդյունաբերության գլխավոր վարչության
Պոլիգրաֆկոմբինատ, Երևան, Տերյան 91։